BASIC MEDIA WRITING

FOURTH EDITION

Melvin Mencher
Columbia University

WCB Brown & Benchmark
PUBLISHERS
Madison, Wisconsin • Dubuque, Iowa • Indianapolis, Indiana
Melbourne, Australia • Oxford, England

ԼՐԱԳՐՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Թարգմանված է չորրորդ հրատարակությունից

Մելվին Մենչեր
Կոլումբիայի համալսարան

ԵՐԵՎԱՆԻ
ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Երեւան 2005

Մելվին Մենչերի «Լրագրության հիմունքներ»-ը վաղուց արդեն ամենից հայտնի եւ շատ օգտագործվող դասագիրքն է արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների ժուռնալիստիկայի ֆակուլտետներում եւ ժուռնալիստական դպրոցներում: Այն օգտակար կլինի ոչ միայն ուսանողների, այլեւ դասախոսների ու լրագրողների համար:

Ժողովածուն հրատարակվում է Երեւանի մամուլի ակումբի՝ «Ռեսուրսների զարգացումը ազատ եւ որակյալ լրատվամիջոցների համար» ծրագրի շրջանակներում:

Թարգմանությունը կատարված է Մելվին Մենչերի «Լրագրության հիմունքներ»-ի չորրորդ հրատարակությունից:

Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ:

Թարգմանիչ՝ **Կարինե Բաղդասարյան**
Խմբագիր՝ **Մեսրոպ Հարությունյան**
Համակարգչային ձեւավորում եւ էջադրում՝ **Նարա Մենդելյան, Արմինե Սուքիասյան** Ծրագրի ղեկավար՝ **Բորիս Նավասարդյան**

© Wm.C.Brown Communicatinny Inc. 1993 © **Երեւանի մամուլի ակումբ**
(թարգմանություն,
ձեւավորում, հրատարակություն)
2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս 1
Լրագրողներն աշխատանքի պահին 9

Գլուխ 1
Աշխատանքի մասին 11

Գլուխ 2
Լրագրողը 39

Մաս 2
Ինչպես գրել 79

Գլուխ 3
Հիմունքներ 80

Գլուխ 4
Ինչպես սկսել նյութը 109

Գլուխ 5
Ինչպես կառուցել նյութը 145

Գլուխ 6
Ինչպես ներդաշնակ դարձնել նյութը 172

Մաս 3
Թղթակցություն 211

Գլուխ 7
Տեղեկություններ գտնել եւ փաստեր հավաքել 213

Գլուխ 8
Նպատակաուղղված թղթակցություն 250

Գլուխ 9
Ինչպես որսալ կենդանի խոսքը 281

Գլուխ 10
Հոդվածի կարեւոր տարրերը 329

Մաս 4
Մասնագիտացում 371

Գլուխ 11
Հեռարձակվող նյութեր 373

Գլուխ 12
Տեսողական լրագրություն 383

Գլուխ 13
Գովազդ 400

Գլուխ 14
Հասարակական կապեր 418

Մաս 5
Օրենքներ եւ նորմեր 441

Գլուխ 15
Զրպարտություն, գաղտնիություն,
էթիկա եւ ճաշակ 443

Մաս 1

Լրագրողներն աշխատանքի պահին

Գլուխ 1
Աշխատանքի մասին

Մուտք

Հեղինակները ձգտում են տեղեկություններ տալ, զբաղեցնել ու համոզել: Հեղինակներն աշխատում են նաեւ հետաքրքիր, ճշգրիտ ու բազմակողմանի լինել: Այդ նպատակներին հասնելու համար նրանք օգտագործում են դիտելու, ուսումնասիրելու, հարցացրույց անցկացնելու եւ, վերջապես, գրի առնելու իրենց հմտություններն ու գիտելիքները: Լրատվամիջոցների համար գրողներն իրենց աշխատանքի ընթացքում ստիպված են հաճախ հաշվի առնել ժամկետների ճնշումը, իսկ երբեմն էլ՝ աշխատել վտանգավոր պայմաններում:

Կարեւոր լուր. դիմագրավել միայնակ

Հինգերորդ ավենյուի շքեղ խանութների լույսերը հանգած են, եւ Ռոքֆելերի կենտրոնի բարձրաբերձ շինություններն են իշխում ամայի փողոցների վրա: Մի թաղամաս հեռու՝ Վեցերորդ ավենյուի Ռադիո Սիթիի մյուզիք հոլի հաճախորդներն արդեն տուն են մեկնել: Նյու Յորքի կենտրոնում կեսգիշերն անց է:

Չնայած Ռոքֆելերի կենտրոնի գրասենյակներից մեկում լույսերը պայծառ վառվում են, սակայն այստեղ եւս անսովոր լռություն է տիրում: «Ասոշիեյթըդ Փրես» գործակալության լրագրողները, խմբագիրներն ու օպերատորները նույնպես արդեն տուն են գնացել: Գրասենյակը դատարկ է, միայն գրասեղաններից մեկի մոտ նստած է երիտասարդ մի կին:

Լինդի Ուոշբորնը աշխատում է «Ասոշիեյթըդ Փրես»-ի նյույորքյան բյուրոյի գիշերային հերթափոխում, երեկոյան 11:30-ից մինչեւ առավոտյան 8-ը: Նոր է ավարտել ժուռնալիստիկայի դպրոցը եւ այժմ փոխարինում է ամառային արձակուրդ գնացած աշխատակցին: Նա նոր մարդ է բյուրոյում, բայց արդեն սովորել է «հիմունքները». որ անհրաժեշտ է արագութուն, ճշգրտություն եւ քաջություն, գիտի, թե որ ալիքներով են ուղարկվում սպորտային, ռադիոյի, տեղական եւ ազգային նորությունները եւ թե ինչպես նյութերն ուղարկել, երբ օպերատորները տեղում չեն:

Ուոշբորնը Արեւելյան ափի մի մեծ հատվածի պատասխանատուն է եւ հերթափոխի մեծ մասը մենակ է լինելու: Սա նրա առաջին միայնակ գիշերային հերթափոխն է: Երբ հին աշխատողները տուն էին գնում, նրանցից մեկը կանգ առավ, որ աղջկան քաջալերի. «Կարծես հանգիստ գիշեր է սպասվում»:

Որոշ ժամանակ խաղաղ է: Հանկարծ, ժամը 1-ն անց 40-ին գրասենյակի լռությունը խախտում է հեռախոսի զանգը: «Դեյլի Նյուս»-ի գիշերային խմբագիրն է: Ուոշբորնը նրա ձայնում անհամբերություն է զգում:

«Մեզ լուրեր են հասել, որ Նյու Ջերսիում մեծ հրդեհ է,- ասում է նա, - Դուք որեւէ տեղեկություն ունե՞ք»: «Ոչ, չունենք», - պատասխանում է Լինդին եւ հարցնում, թե որտեղ է հրդեհը: «Բրեդլի Բիչում», - հետեւում է պատասխանը:

Ուոշբորնը նայում է քարտեզին: Բրեդլի Բիչը փոքր քաղաք է Ատլանտյան ափին՝ Ասբերի Փարք ավելի մեծ քաղաքի մոտ:

Նա զանգահարում է տեղեկատու եւ պարզում Բրեդլի Բիչի եւ Ասբերի Փարքի ոստիկանության եւ հրշեջ բաժանմունքների հեռախոսների համարները: Առաջինը զանգահարում է Բրեդլի Բիչի հրշեջ ծառայություն:

«Մենք զբաղված ենք, օրիո՛րդ»,- ասում է մի մարդ եւ լսափողը կախում: Ձայնը կարծես կատաղած է:

Հետո զանգահարում է Ասբերի Փարքի հրշեջ ծառայություն:

«Ի՞նչ է կատարվում Բրեդլի Բիչում,- հարցնում է նա: - Այնտեղի ծառայությունից հնարավոր չէ որեւէ բան իմանալ»:

«Հրդեհ է,- պատասխանում է դիսպետչերը: - Ամբողջ նահանգի հրշեջ ծառայություններն այնտեղ են: Կարծես մեծ հրդեհ է»:

«Մահվան դեպքեր կա՞ն»,- հարցնում է Ուոշբորնը:

«Վերջին անգամ, երբ պարզեցի՝ 20 դեպք էր: Հիմա հնարավոր է ավելի շատ լինի»:

Մրցելով ժամացույցի հետ

Ուոշբորնի սիրտն սկսեց արագ բաբախել: Սա ակնհայտորեն կարեւոր լուր է, մեկը նրանցից, որ երկրով մեկ արձագանք են ունենում: Նա գիտեր, որ այդ ժամին արեւմտյան ափի թերթերը պատրաստում են իրենց առաջին էջերը: Պետք է շտապել՝ նրանց հասնելու համար:

Նա դիսպետչերից պարզում է շենքի հասցեն, ինչ է այնտեղ տեղակայված, երբ է ստացվել առաջին ահազանգը: Ուզում է իմանալ, թե ինչից է կառուցված շենքը՝ փայտից, աղյուսից, թե

սվաղից: Դիսպետչերը պատասխանում է, որ այն փայտե հիմնամասերով շինություն է եւ կոչվում է Բրինլի Ինն: Ոչ, հրդեհի պատճառը նրան հայտնի չէ:

Երբ նա կախում էր լսափողը, մի ուրիշ հեռախոս է զնգում: Զանգողը Ասբերի Փարքի ռադիոկայանի լրագրող է: Նա զանգել էր AP-ի Նյուարքի բյուրո՝ ինֆորմացիա հաղորդելու համար: Պատասխանը եղել է, որ գրասենյակը գիշերը փակ է, եւ կարեւոր լուրերը պետք է հաղորդել Նյու Յորքի բյուրո:

«Դուք լսե՞լ եք հրդեհի մասին», - հարցնում է նա Ուոշբորնին: «Այո, - պատասխանում է նա, - մահվան քանի՞ դեպք կա»: Մահացածների թիվը նրա լրատվության հիմնական մասն է եւ այն պետք է ստուգել:

«Հիվանդանոցից հաղորդել են, որ 23», - պատասխանում է լրագրողը եւ հաստատում դիսպետչերի տված հասցեն:

Այնուհետեւ ռադիոյի աշխատակիցը Ուոշբորնի համար միացնում է դատական բժշկի հետ հրդեհի վայրում իր վարած հարցազրույցի ձայնագրությունը:

Ուոշբորնն արդեն ունի հաղորդագրության համար անհրաժեշտ համարյա ամեն ինչ: Հենց որ այն ուղարկի, պետք է AP-ի Նյու Ջերսիի աշխատակիցներին ոտքի հանի, որ նրանք սկսեն աշխատել եւ հրդեհի մասին նոր տեղեկություններ հաղորդել:

Նա աչքի է անցկացնում հեռախոսային խոսակցությունների ընթացքում իր մեքենագրած գրառումները: Մահվան հունձն, անկասկած, նրա պատմության հիմնական մասն է եւ կդրվի առաջին նախադասության՝ լիդի մեջ: Նա վերադասավորում է իր գրառումները՝ մտքում ունենալով լիդը եւ սկսում է գրել:

Լինդին գոհ է իր գրածից, չնայած հասկանում է, որ անհրաժեշտ է հավաքել լրացուցիչ տեղեկություններ: Ուոշբորնը մեքենագրում է հակիրճ հաղորդագրության կոդը եւ ուղարկում է լրատվությունը:

o364
B N ZYVVYXUIV
BNBX NRO7 NRO5
BNBX
BC- Հրդեհ Բրեդլի Բիչում

Բրեդլի Բիչ, Նյու Ջերսի - 23 մարդ է զոհվել Բրեդլի Բիչի մեծ հրդեհի հետեւանքով՝ ըստ հրշեջ ծառայության պաշտոնյաներից ստացված տվյալների:

Բրինլի Ինոնում բռնկված հրդեհը (Բրինլի պողոտա 200) սկսվել է երեկոյան 11:20-ին: Ըստ Բրեդլի Բիչի հրշեջ ծառայության ղեկավար Թեոդոր Ա. Բիանկիի հաղորդած տվյալների, այն հաջողվել է վերահսկողության տակ վերցնել կեսգիշերին:

«Հրդեհի պատճառը պարզված չէ»,- ասել է վերջինս:

Բրինլի հյուրանոցը երեք հարկանի փայտե հիմնամասերով շինություն է: Ստացված տեղեկությունների համաձայն՝ կրակը սկսվելու պահին այնտեղ եղել է 36 մարդ: Ըստ պաշտոնյաների տվյալների՝ զոհվածների մեջ շատ են ծերերն ու պատանիները:

Զոհվածներին ու վիրավորներին տեղափոխել են Ջերսիի առափնյա եւ Լոնգ Բրենչի բժշկական կենտրոնները:

Հաջորդելու է
ԱՓ-ՆՅ-07-27 0201EDT

Լրացում

Այս բոլորն արվեց մոտ 20 րոպեում, եւ Ուոշբորնը գոհ է, որ կարողացավ ճգնաժամային իրավիճակում արագ գործել (հետագայում նա իմացավ, որ մրցակից UPI-ից 35 րոպեով առաջ է անցել): Սակայն նա դեռ գոհ չէ իր գրածից: Կան մի քանի անհարթություններ:

Նա տեսնում է, որ ամսաթվի տողում պետք է կրճատ գրի Նյու Ջերսի բառը, եւ որ մեծ բառը լիդում անտեղի է հնչում, ինչպես նաեւ ըստ -ը պետք է փոխարինել հայտնել են-ով:

Ուոշբորնը վերսկսեց իր հետաքննությունը եւ պարզեց, որ Բրինլի Ինոնը ոչ թե երեք, այլ չորս հարկանի շինություն է՝ վարձով տրվող սենյակներով: Նոր մանրամասներ հավաքեց վիրավորների մասին եւ պարզեց, թե որտեղ են զոհվածները ծուղակի մեջ ընկել, ինչպես նաեւ՝ հրդեհը սկսվելու ճշգրիտ ժամանակը:

Նա սկսեց նոր լիդ գրել: Գլխավորը մնալու է նույն կարեւոր փաստը՝ մահվան 23 դեպք: Այնուհետեւ նա կօգտագործի վիրավորների մասին իր հավաքած նոր նյութը:

Նրա առաջին լրատվությունն ուղարկվեց գիշերվա ժամը 2:01-ին: Երկրորդ նյութը՝ գիշերվա ժամը 3:26-ին: Ահա լրացման սկիզբը, որը ճշտում էր նրա առաջին նյութը:

o365
B N ZYVVYXWYF
AM- Հրդեհ Բրեդլի Բիչում, Լրացում, 400

Eds: Կան փոփոխություններ. շինությունը դարձված է չորս հարկանի, երանգներ են ավելացված

Բրեդլի Բիչ, Ն. Ջ. /ԱՓ/-«Առնվազն 23 մարդ է զոհվել վարձով տրվող սենյակներով մի տան մեջ շաբաթ օրը այս ծովափնյա ամառանոցային քաղաքում բռնկված հրդեհի ժամանակ», - հայտնել են հիվանդանոցի աշխատակիցները:

Երկու հոգի ծխից թունավորվել են եւ տեղափոխվել Ջերսիի առափնյա բժշկական կենտրոն, ասել է հիվանդանոցի վարիչ Էրնսթ Կովաչը: Կովաչը հայտնել է, որ հիվանդանոցում զննվել է եւս 13 մարդ:

Առնվազն 36 մարդ կարող էր լինել Բրինլի Ինում, երբ գիշերվա 11:02-ին այստեղ հրդեհ բռնկվեց: Այն կեսգիշերին մոտ վերցվել է վերահսկողության տակ, հայտնել են պաշտոնյաները:

Վկաները նշել են, որ զոհերի մեծ մասը հնարավոր է ծերեր լինեն, որոնք ծուղակն են ընկել չորս հարկանի փայտե շենքի վերին հարկերում:

Հրդեհի պատճառը պարզված չէ, սակայն տեղեկություններ կան ինչ-որ պայթյունի մասին, ասել է հրշեջ ծառայության ղեկավար Թեոդոր Ա. Բիանկին...

Փամփուշտներ, տանկեր ու կտտանքներ

«Զինվորները հրապարակ մտան արեւմտյան կողմից, որը մեր տեսանելիությունից դուրս է, եւ մենք տեսնում էինք միայն, թե ինչպես են նրանք կրակում սարսափահար քաղաքացիների մեջքներին, երբ վերջիններս փորձում էին մագլցել հյուրանոցի ցանկապատը: Հետո ժամանեցին տանկերը, բազմաթիվ տանկեր, ընդամենը երեւի հարյուրը»:

«Պեկին» հյուրանոցի իր պատշգամբից Յան Վոնգը՝ Թորոնթոյի «Գլոուբ էնդ Մեյլ»-ի թղթակիցը, տեսնում էր, թե ինչպես է կերտվում պատմությունը: Նա վերեւից նայում էր Տյանանմեն հրապարակին. չինական իշխանությունները որոշել էին այդ հյուրանոցով վերջ տալ հազարավոր ուսանողների այն հույսերին, թե ժողովրդավարություն կլինի նաեւ իրենց երկրում: Համարյա մեկ ամիս ուսանողները հացադուլ էին անում՝ հայտարարելով. «Ես երդվում եմ նպաստել իմ երկրի ժողովրդավարությանն ու բարգավաճմանը: Ես իմ հայրենիքը բրնձից շատ եմ սիրում»:

Ուսանողները հրապարակում կանգնեցրել էին Ազատության

աստվածուհու արձանը, որը սարքված էր Ազատության արձանի նմանությամբ:

«Մենք տեսնում էինք ներքեւում տեղի ունեցող կոտորածը: Մի զույգ՝ փոքրիկ աղջնակի հետ, փամփուշտների տարափից փրկվելու համար կծկվել էր հյուրանոցի մեքենաների կայանատեղում: Անմիջապես իմ պատշգամբի տակ մեջքից վիրավորվեց մի հեծանվորդ, եւ մի քանի խիզախ անցորդներ նրան բարձրացնում էին ռիքշայի ծղոտե խսիրի վրա»:

Վոնգը դիտում էր, գրի առնում եւ ճեպագրերն ուղարկում իր թերթին: Ստանալով տնտեսական թեմաներով գրող լրագրողի կրթություն՝ նա եկել էր Չինաստան, որպեսզի լուսաբանի Չինաստանի ու Կանադայի միջեւ առեւտրական աճող հարաբերությունները եւ հանկարծ հայտնվել էր արյունալի հուզումների կենտրոնում: Տանկերն ու ծանր սպառազեն զինվորները կոտորում էին անզեն քաղաքացիներին: Դա, ինչպես ինքն ասաց, «ջարդ» էր:

Ուսանողներին հրապարակից դուրս մղելուց հետո՝ իշխանությունները անդուլ հետապնդում էին ղեկավարներին եւ բոլոր նրանց, ովքեր համարձակվել էին քննադատել իրենց: Ղեկավարների անունները պարզելու համար՝ այդ մարդկանց ձերբկալեցին, կտտանքների ենթարկեցին ու բանտարկեցին:

Չնայած ինքն էլ ոստիկանական հսկողության տակ էր՝ Վոնգը եւս փնտրում էր ալյախոհներին, իսկ նրանցից ոմանք էլ իրեն էին փնտրում, որպեսզի իրենց ձայնը լսելի դարձնեն: Նրանք ուզում էին աշխարհին իմանա, որ իրենք չեն նահանջի, չնայած ստիպված կլինեն որոշ ժամանակով ընդհատակ անցնել: Նրանք Վոնգին գտան՝ այդ հայտարարությունը տարածելու համար:

CBS-ի նորությունների երեկոյան թողարկումը

Նյու Յորքի Ուեսթ 57-րդ փողոցի վրա գտնվող CBS -ի լրատվական կենտրոնի փոքր նախասրահի պատի ժամացույցով երեկոյան ժամը 5:30-ն է: Նախասրահից դուրս՝ երկար միջանցքով դեպի ցած, երկփեղկ դռներ են բացվում դեպի երկհարկանի ստուդիան:

Մինչեւ CBS -ի նորությունների երեկոյան թողարկումը դեռ մեկ ժամ կա, եւ երկնագույն ստուդիայում լռություն է տիրում: Մի կողմում՝ մեծ ապակե փեղկերի հետեւում գործադիր պրոդյուսերի

սենյակն է: Դան Ռադերը, երեկոյան լուրերի հաղորդավարը, պրոդյուսերի հետ նորից նայում է ծրագիրը: Ժամանակ առ ժամանակ Ռադերը վեր է կենում եւ զրուցում հեղինակների հետ, որոնք նստած են ստուդիայի կենտրոնում, մեծ սեղանի շուրջը:

Հեղինակները

Հեղինակներն իրենց աշխատանքը սկսում են առավոտյան ժամը 10-ին: Նախ եւ առաջ նրանք կարդում են մի քանի լրագրեր՝ «Նյու Յորք Թայմս», «Վաշինգտոն Փոստ», «Ուոլ Սթրիթ Ջորնալ» եւ «Դեյլի Նյուս»: Հետո՝ ուսումնասիրում են լրատվական հաղորդագրությունները: Հեղինակներից յուրաքանչյուրը պատասխանատու է որոշակի ոլորտի համար. մեկը զբաղվում է ազգային լուրերով, մյուսը՝ արտասահմանյան, երրորդը՝ հոդվածներով, աղետներով ու դամբանականներով:

Հեղինակները փնտրում են նորություններ, որոնք կարելի է դարձնել հետաքրքիր հաղորդումներ եւ կարճ լուրեր: Նրանք ուշադրություն են դարձնում նաեւ պատմությունը պատկերներով ողեկցելու հնարավորություններին: Զուտ տեքստային հաղորդումը, երբ հաղորդավարը կարդում է տեքստը, այնքան հետաքրքիր չէ հեռուստադիտողների համար, որքան այն լուրը, որն ուղեկցվում է տեսահոլովակով:

Այդ պատճառով տեքստային հաղորդումները սեղմ են գրվում: Հեղինակը պատմության համար կարող է մի քանի հազար բառ հավաքել, իսկ հաղորդավարի համար՝ դարձնել 50 բառ: Տեսահոլովակով ուղեկցվող տեղեկատվությունը կարող է հինգ կամ վեց անգամ երկար լինել:

Ժամը վեցի մոտ ծրագիրն արդեն կազմված է: Լուրերն ընտրված են 22 րոպե եթերաժամի համար, եւ խմբագիրն ու գործադիր պրոդյուսերը քննարկում են, թե որքան ժամանակ հատկացնելն յուրաքանչյուրին:

Եթերաժամը մոտենում է:

Րոպեներ, որ պետք է անցնեն

5:58 - Ռադերը դուրս է գալիս գործադիր պրոդյուսերի սենյակից: Նրա ձեռքին թղթերի մի խուրձ կա, դրանք լուրերն են, որ նա կարդալու է երեկոյան թողարկման ժամանակ: Հաջողացնում է կրծել իր սիգարը՝ միաժամանակ բարձրաձայն կարդալով տեքստը: Նա կոկիկ ու եռանդուն տեսք ունի:

6:02 - Ռադերը դիմում է հեղինակներից մեկին՝ Ռիչարդ Նիքսոնի դեմ հարուցած դատական գործի մասին: «Ձեր կարծիքով, մենք սա պե՞տք է բացատրենք», - հարցնում է Ռադերը ծրագրի հեղինակներից մեկին: «Եթե այո, ապա մեզ պետք կլինի եւս 10 կամ 15 վայրկյան»: Հեղինակը մի քանի վայրկյան մտածում է, համաձայնում եւ սկսում գրել:

6:04 - Մի տեքստային հաղորդում՝ համար 22-ը, չի գոհացնում Ռադերին: Նա որոշ արտահայտություններ քննարկում է հեղինակի հետ: Նյութին հատկացված է 20 վայրկյան, այն կազմված է 50 բառից: Նրանք համաձայնության են գալիս նոր տեքստի շուրջ:

6:05 - «Տասը հանված է»,- բղավում է ինչ-որ մեկը, եւ 10 վայրկյան հանվում է, որ ժամանակ տրվի Նիքսոնին վերաբերող լրացուցիչ նյութի համար:

6:08 - Օպերատորները սկսում են տեղավորվել սենյակում, իսկ երկուսը, ովքեր աշխատեցնում են հուշարարական սարքերը, կարդում են սցենարը: Սարքերը ուղիղ Ռադերի դիմաց ցույց են տալիս մեծացված տեքստը, այնպես որ, չնայած դիտողներին թվում է, թե հաղորդավարն ուղիղ խցիկին է նայում, նա կարդում է իր առջեւ ցուցադրվող տեքստը:

6:10 - Ռադերը մի պահ կտրվում է նորությունների առաջին նյութը՝ «լիդ-օլը», խմբագրելուց եւ բարձրացնում գլուխը: «Շատ լավ լիդ է», - ասում է նա հեղինակին եւ վերսկսում ընթերցանությունը:

6:11 - Մի կին դուրս է սլանում գործադիր պրոդյուսերի սենյակից: «Շտապ դեպք է, -ասում է նա: -Արխիվից որոշ բաներ են պետք»: Պահոցից նկարահանված նյութ է պետք մի լուրի համար: Հնարավոր է, որ այն չօգտագործվի, սակայն պրոդյուսերն ուզում է, որ ձեռքի տակ լինի:

6:14 - Ռադերը մի անորոշ արտահայտություն է գտնում նյութերից մեկում եւ խնդրում է հեղինակին պարզեցնել այն:

6:15 - Միանգամից լռություն է իջնում ստուդիայում:

Ղեկավարման սենյակում յոթ մարդ խռնված է սեղանիկի մոտ, բոլորն էլ խոսում են: Առաջին շարքի կենտրոնում ռեժիսորն է: Նա ազդանշան է տալու խցիկներին, երբ նրանք Ռադերին ֆոկուսի մեջ վերցնեն եւ ազդանշաններ է տալու, որ էկրանի վրա հայտնվեն ու չքանան խոշոր պլանները, ֆոնը եւ տեսանյութերը:

Ղեկավարման սենյակում գտնվող աշխատակիցների նպատակը այնպիսի ծրագիր պատրաստելն է, որ ամեն ինչ իր տեղում լինի, որ Ռադերից հարթ անցում լինի վաշինգտոնյան թղթակցին՝

առանց դատարկ էկրանի եւ առանց Ռադերին ժամանակից շուտ անջատելու: Պետք է միաժամանակ ցուցադրել հետին խոշոր պլանները, երբ Ռադերը նկարագրում է Խաղաղ օկիանոսում գտնվող մի վայր (երեւում է քարտեզ), մոլորակ (նրա ձախ ուսի մոտ երեւում է Սատուրնի նկարը), արհմիություն (ցուցադրվում է խորհրդանշանը):

6:23 - Ռադերը նստած է փոքրիկ հայելու դիմաց, եւ նրան գրիմ են անում: Շրթներկը նա ինքն է քսում:

6:24 - Ռադերը գոռում է. «Սենդի, պետք է ձայնն ավելացնես»: Նորից լռություն:

6:25 - «Հինգ րոպե», - բացականչում է թողարկող մենեջերը:

6:29 - Ռադերը տեղավորվում է իր աթոռին՝ նորից կարդալով սցենարը: Այս անգամ նրա շուրթերն անշարժ են:

«Երեսուն վայրկյան»,- թավ ձայնը թնդում է ստուդիայով եւ բարձրախոսով հասնում ղեկավարման սենյակ, որտեղ ժխորը հանկարծակի դադարում է: Տարբեր վահանակների մոտ նստած մարդիկ նախապատրաստվում են կատարելու ժամանակի ետհաշվարկը, որպեսզի ազդանշան տան՝ ծանուցումները, Ռադերին, տեսամագնիտոֆոնը, թղթակիցներին եւ խոշոր պլանները միացնելու համար: «Տասը վայրկյան»:

Եթերում

Ռադերն իր կես ժամանոց ծրագիրը բացում է երեք կարեւորագույն լուրերը համառոտ ներկայացնելով.

«Նոր պատվաստանյութ, որը կօգնի մեղմելու ԴԱՎ-ի պատճառած վնասները»:

«Ֆիլիպիններում 30 000 մարդ պայքարում է կյանքի համար՝ մինչ զայրացած հրաբուխը ցույց է տալիս իր բնույթը»:

«Ինչպես նաեւ՝

համաձայն մի նոր հաղորդման, փոքր ավտոմեքենաները, հավանաբար, իզուր են գովելով երկինք հանվում»:

Կարճ երաժշտական ընդմիջում,
եւ Ռադերը նորից լուրեր է հաղորդում:

«Դուք դիտում եք CBS -ի երեկոյան լուրերը, ստուդիայում Դան Ռադերն է: Բարի երեկո:

Այսօր հուսադրող լուր է ստացվել ԴԱՎ-ի փորձնական պատվաստանյութի վերաբերյալ: Այն խոստումնալից է իմունային համակարգի վրա ԴԱՎ-ի ազդեցության հետեւանքները մեղմելու առումով: Կուզենայի շեշտել, որ պատվաստանյութը դեռեւս բուժման միջոց չէ եւ չի կարող կանխել ԴԱՎ-ը: CBS-ի առողջապահական հարցերի թղթակից Էդի Մագնուսը կներկայացնի, թե ինչ է նշանակում այս փորձնական պատվաստանյութը ԴԱՎ-ով հիվանդների համար»:

Մագնուսը հարցազրույց է անցկացնում ԴԱՎ-ով հիվանդի հետ՝ դրանով իր հաղորդում ներմուծելով մարդկային հետքրքրության պահը:

«Ոչ ոք այնքան հուսադրված չէ այսօր ստացված տեղեկությամբ, որքան զինվորական Միթչ Քանթրելը: Արդեն երկու տարի շարունակ նա ստանում է gp-160 կոչվող պատվաստանյութի ներարկումներ: Քանթրելը մեկն է այն 30 կամավորներից, որոնք հիվանդության վաղ շրջանում են...»:

10-րդ աստիճանի հրդեհ

CBS-ի նորությունների սենյակից մի քանի հարյուր մղոն հյուսիս՝ Լորեն Թիերին Բոստոնի WBZ-TV4-ի ղեկավարման գլխավոր սենյակում է: Նա դիտում է մոտակա Ռեւերում տեղի ունեցող ուժգին հրդեհի տեսաժապավենը: Լորենը պատրաստում է նորությունների թողարկումը, որն ինքն է վարելու:

«Ընդամենը երեք-չորս րոպե բոցերին նայելուց հետո, ինձ համար պարզ դարձավ, որ տեսաժապավենը կհաղորդի այդ ահավոր հրդեհի ամբողջ սարսափը, - ասում էր նա հետագայում: - Սակայն ես ուզում էի, որ բառերը եւս համոզիչ ինչեն, որ մարդիկ մոտենան հեռուտացույցներին եւ ձայնը մինչեւ վերջ բարձրացնեն»:

Թիերին գրում է իր լիդը:

«Ամենասարսափելի հրդեհն է իմ աշխատանքի 35 տարիների ընթացքում».- այսպես է նկարագրում Ռեւերի հրշեջներից մեկն այն դժոխային կրակը, որն այս ժամին, վերահսկողությունից դուրս գալով, ընդգրկել է չորս թաղամաս»:

Մինչ էկրանին երեւում է ուղղաթիռից նկարահանված հրդեհը, նա օգտագործում է հաշվետվության տեղեկությունները:

«Ռեւերի հրշեջ ծառայության տեսուչն ասում է, որ հրդեհն արդեն 10-րդ աստիճանի է... եւ նույնիսկ հեռավոր արեւմտյան Մասաչուսեթսի ու Նյու Հեմփշիրի հրշեջ խմբերը ճանապարհ են ընկել, որ օգնեն մարելու այս կրակը»:

Նորությունների սենյակում

Եթե թողարկումից մի քանի ժամ առաջ մտովի հայտնվենք 1600-ից ավելի օրաթերթերից մեկում, ապա մենք կտեսնենք զնգացող հեռախոսներ՝ լրագրողները զանգում են քաղաքային լուրերի խմբագրին իրենց նյութերի մասին հաղորդելու համար, կտեսնենք հեռատիպի մեքենաներ, որոնցից դուրս են գալիս AP-ի ու UPI-ի լուրերի տրցակներ: Մենք կարող ենք նաեւ տեսնել իրենց վահանակների մոտ նստած թողարկող խմբագիրներին, որոնք առաջին էջի՝ մահացու ելքով վթարի վերաբերյալ նյութի վերնագրում զգաց բառը փոխարինում են ասաց-ով:

Նորությունների խմբագիրը զրուցում է պատասխանատու խմբագրի հետ՝ Ֆլորիդայում եղանակի հետ կապված լրատվության մասին, լրագրողներն աշխատում են իրենց վահանակների մոտ՝ ժամանակ առ ժամանակ նայելով էկրանին՝ ստուգելու արդյոք լիդը ճի՞շտ է:

Ոստիկանական մեքենայի շչակը խզում է երեկոյի լռությունը փողոցում, եւ քիչ անց լսվում է շտապ օգնության մեքենայի ոռնոցը: Ոչ ոք ուշադրություն չի դարձնում:

Մահացու ելքով վթար

Քաղաքային լուրերի խմբագրի գրասեղանի հեռախոսը զնգում է: Ոստիկանական թեմաներով գրող ռեպորտյորը զանգահարում է ոստիկանական տեղամասից: «Ծանր վթար է շրջանցիկ ճանապարհի հատման մասում, -ասում է նա,- ես գնա՞մ այնտեղ, թե՞ շարունակեմ այստեղից: Տեղեկություններ կան, որ զոհվել է երկու մարդ»:

Քաղաքային լուրերի խմբագիրը կարգադրում է լրագրողին իր տեղում մնալ, քանի որ անձրեւից սայթաքուն դարձած ճանապարհների ու մառախուղի պատճառով կարող են լինել այլ վթարներ եւս: Խմբագիրը ցանկանում է, որ լրագրողը ոստիկանական տեղամասի հետ իր կապը որոշ ժամանակ չկտրի:

«Աշխատիր հաստատում ստանալ: Եթե վիճակը քո ասածի նման ծանր է, ապա կարծում եմ, ավելի լավ կլինի գնաս այնտեղ: Ամեն դեպքում ես լուսանկարիչ եմ ուղարկում»:

Հաջորդ կես ժամվա ընթացքում ոստիկանական լուրերի ռեպորտյորը հետեւում է ոստիկանական ռադիոհաղորդումներին: Միեւնույն ժամանակ նա աչքի է անցկացնում ոստիկանական հաղորդագրություններից իր կատարած նշումները: Ուշադրություն է դարձնում Առաջին բապտիստական եկեղեցում կատարված կողոպուտի վրա: Հիշում է, որ ինչ-որ տեղ նոթատետրում նշումներ ունի Մեյփլ Ավենյուի սինագոգից կրոնական գրքերի (փաթեթների) հափշտակման մասին: Որոշում է, որ այս երկու գողությունները կմիավորի մեկ նյութի մեջ: Մտքում նշում է, որ պետք է զանգել ոստիկանության լեյտենանտին եւ պարզել, արդյոք հնարավոր է, որ նույն մարդիկ մասնակից լինեն այս երկու կողոպուտներին:

Քաղաքապետարանում

Երեք թաղամաս այն կողմ մի ուրիշ թղթակից մտնում է քաղաքապետարան, քաղաքային խորհրդի գրասենյակը: Նա բարեւում է քարտուղարուհուն:

«Կարծում եմ, այսօր հետաքրքիր ժողով է լինելու, Ալի՛ս»,- ասում է վերջինս: «Հեյլսի հարցով բողոքը նրանց կստիպի խոսել: Շնորհակալ եմ, որ Դուք այդ մասին ինձ տեղեկություններ տվեցիք»:

Նա շրջվեց՝ զրուցելու Հեյլսի հանրախանութի մենեջերի հետ, որը սենյակ մտավ իրավաբանի հետ: Թղթակցին ավելի շատ տեղեկություններ էին պետք բնակելի թաղամասում մեծ խանութ կառուցելու Հեյլսի պլանների մասին:

Մահախոսական

Նորությունների սենյակում մի երիտասարդ լրագրող թեքվել է թղթերի կույտի վրա: Դրանք հայտարարությունների բաժնից ստացված մահախոսականների պատճեններն են: Մի ծանուցումը տեղի դպրոցի թոշակի անցած տնօրենի մահվան մասին է: Վերջինս 30 տարի դասավանդել է դպրոցում, որոնցից 13-ը տնօրեն է եղել: Այդ կինը, թերեւս, քաղաքում բազմաթիվ նախկին աշակերտներ ունի, մտածում է լրագրողն ու որոշում ավելի շատ տեղեկություններ հավաքել նրա մասին:

Հեռախոսի զանգը ընդհատում է նրա մտորումները: Զանգահարողը Յունայթեդ Ուեյզի նախագահն է: Նա հայտնում է հենց նոր ավարտված դրամահավաքի արդյունքները:

«Մենք ամբողջ օրն աշխատել ենք՝ տեղերից հավաքելով տվյալները, եւ ուրախությամբ հայտնում եմ, որ ռեկորդ է սահմանվել»,- ասում է նա: Լրագրողը հետաքրքրվում է, թե որքան գումար է հավաքվել, ինչն է նպաստել ռեկորդային նվիրատվություններին: Որեւէ կազմակերպությու՞ն, թե՞ իրադարձություն է հավաքել անսովոր մեծ գումար: Հարցերը շարունակվում են:

Սենյակի անկյունում նորությունների թողարկման խմբագիրը կարդում է հեռագրով ստացված նյութերը:

Փոթորիկ եւ թյուննոսի պահածո

«Ֆլորիդայում փոթորիկ է սպասվում, - ասում է նա պատասխանատու խմբագրին, - Մարդիկ տախտակներով փակում են դռներն ու լուսամուտները: Կարծում են, որ տասնամյակի ամենաաղետալի փոթորիկն է լինելու»: Պատասխանատու խմբագիրը նրան կարգադրում է միավորել AP-ի ու UPI-ի նյութերը: «Սա կարող է առաջին էջ գնալ», - ասում է նա: Քաղաքից շատերի ընկերները կամ ազգականները Ֆլորիդա են մեկնել:

«Ահա այս նյութը կհետաքրքրի բնության պահպանությամբ անհանգստացողներին: Սթար Քիսթը հայտարարում է, որ այլեւս թյուննոս (ձկնատեսակ է - խմբ.) չի գնելու այն ձկնորսներից, որոնց ուռկանների մեջ դելֆիններ են ընկնում»: Պատասխանատու խմբագիրը գլխով է անում: «Ըհը՛, մի քանի ամիս առաջ մենք նյութ էինք տպագրել տեղական դպրոցի աշակերտների՝ դելֆինների հետ կապված բողոքի նամակի մասին»:

Քաղաքային լուրերի խմբագիրը միանում է խոսակցությանը. «Մենք լավ գործ ենք արել: Ինձ մոտ է Սթար Քիսթի մամլո հաղորդագրությունը, ուր մեջբերում է արվում ընկերության նախագահի ասածից, որ դպրոցականների նամակները նպաստել են այդ որոշմանը: Եկե՛ք տեղայնացնենք այս պատմությունը»:

Վերջնաժամկետից առաջ

Հավաքված ոչ բոլոր տեղեկություններն ու նորությունները կօգտագործվեն: Ոստիկանական լուրերի թղթակիցը լուրեր ունի եւս երկու վթարի մասին, սակայն գիտի, որ ժամանակ չունի ման-

րամասն նկարագրելու մանր կողոպուտները, ներխուժումներն ու ձերբակալությունները: Գիտի, որ մինչեւ վերջնաժամկետ մնացած մի քանի ժամը պետք է տրամադրի վթարների մասին նյութին, դրանք միավորի մեկ պատմության մեջ, գուցե՝ առաջին էջի համար:

Մահախոսականներով զբաղվող լրագրողը պարզել է, որ դրամահավաքը կազմակերպվել է ի հիշատակ դպրոցի հենց նոր մահացած տնօրենի կրթաթոշակ սահմանելու համար: Կրթաթոշակը կոչվելու է Ռոուզ Հարիեթ Ալենի հիշատակի կրթաթոշակ, իսկ մի շարք ականավոր քաղաքացիներ՝ նրա նախկին աշակերտները, դրամահավաքը կազմակերպող հանձնաժողովի անդամներ են:

Լրագրողը նպատակ ունի հարցազրույց անցկացնել այդ մարդկանց հետ՝ ոչ միայն դրամահավաքի նրանց պլանների, այլեւ Ալենի դասարանում անցկացրած դպրոցական օրերի նրանց հիշողությունների մասին:

Նա նայում է մի քանի այլ մահախոսականների մասին արած իր նշումների կույտին: Ժամանակ չի ունենա պլանավորած զանգերի համար, որ լրացուցիչ տեղեկություններ պարզի: Նա գիտի, որ մահախոսականները լրագրի ամենից շատ կարդացվող նյութերից են, եւ ընթերցողները ցանկանում են ամենասպառիչ տեղեկություններ ստանալ հանգուցյալների մասին: Եթե հասցնի՝ Ալենի մասին նյութն ավարտելուց հետո ժամանակ կհատկացնի մնացած մահախոսականներին: Նա ստիպված է աշխատել իր սովորական տեմպից երկու անգամ արագ, որն արդեն երկու անգամ արագ է նրանից, որ քոլեջում սովորելիս պատկերացնում էր:

Միջին մեծության թերթի լրագրողների աշխատանքի այս խառնիճաղանջ պատկերից մենք հիմա կանցնենք ավելի մեծ օրաթերթի՝ «Դը Փրովիդենս Ջորնալի» նորությունների սենյակը:

28 տարի պարիսպների ետեւում

Բերքլի Հադսոնը պատմում է մի նյութի մասին, որը հենց նոր է ավարտել իր լրագրի համար: Պատմությունն, ասում է Հադսոնը, սկսվել է այս սենյակում: «Այդ մարդը ծլկել էր նահանգային հոգեբուժարանից, հաջողացրել էր ավտոբուս նստել, գալ խմբագրություն ու պատմել իր պատմությունը»:

Նա իր կնոջը սպանելու համար հինգ տարի անց էր կացրել նահանգային բանտում եւ 23 տարի՝ հոգեբուժարանում: Նման հաստատություններում հայտնված մարդկանց մեծ մասը համոզ-

ված է, որ իրենք անարդար են դատապարտված, սակայն որքան այդ մարդը խոսում էր, այնքան Հադսոնի համար պարզ էր դառնում, որ նրան դատապարտելն անարդար է եղել:

Հադսոնը որոշեց խորամուխ լինել Չեսթեր Ջեֆերդսի պատմության մեջ:

Բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ սոցիալական աշխատողների ու վարչակազմի հետ հարցազրույցներից Հադսոնը եզրակացրեց, որ, եթե Ջեֆերդսին շարունակեն պահել փակի տակ, ապա ո՛չ արդարությունը կշահի, ո՛չ էլ գթասրտությունը :

«Սա նրա տեղը չէ», - Հադսոնին ասել էր մի սոցիալական աշխատող: Հադսոնի նշումների մեջ այս մեջբերումն ընդգծված էր: Այն պատմության մեջ կարեւոր տեղ պետք է գրավի: Նա հիշեց, որ իր դասախոսը անդուլ ջանքեր էր գործադրում տեղ հասցնելու այն միտքը, որ «հաջող մեջբերումը պետք է վերեւում լինի»:

Վոնգի նման, Հադսոնին էլ զայրացրել էր այս պատմությունը, սակայն նա գիտեր, որ գրելու լավագույն ձեւն է՝ թողնել, որ պատմությունն ինքը զարգանա: Վրդովմունքը պետք է ծագի ընթերցողի մոտ: Հադսոնը կնկարագրի փաստերը, եւ թող ընթերցողներն իրենք հետեւություններ անեն: Աշխատանքը տեւեց երկու շաբաթ:

«Երբ ես հավաքեցի, իմ կարծիքով, բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոշեցի սկսել գրելը», - ասում է Հադսոնը: Ժամը 10-ին նա իր աշխատասենյակում էր, նորից ուշադիր նայեց իր նշումները եւ, ինչպես հաճախ է լինում, տեսավ, որ լրացուցիչ մանրամասների կարիք կա:

«Ժամը 2-ին ես ամփոփեցի իմ նշումները եւ պատրաստ էի նյութը գրելու»: Նա գրեց մինչեւ կեսգիշեր՝ մի քանի ընդմիջումներով: Եվս մի ժամ տեւեց քննարկումը կիրակնօրյա թողարկման խմբագրի հետ, որոշ փոփոխություններ արվեցին: Ահա այդ պատմությունը:

Նա ողջ է մնացել, այժմ ուզում է ազատ լինել

Բերքլի Հադսոն
ակնարկագիր

Քրենսթոն - Չեսթեր Գ. Ջեֆերդս կրտսերը, դատապարտված լինելով, կարողացել է 28 տարի ողջ մնալ: Նրա երեսին խոր, պարզորոշ գծագրված կնճիռներ են: Խաժ աչքերը մթամած են:

Նա հինգ տարի անց է կացրել նահանգային բանտում եւ եւս 23 տարի՝ նահանգի հոգեբուժարանում: Նա ականատես է եղել, թե ինչպես այլ բանտարկյալներ վերջ են տալիս իրենց կյանքին, իսկ երբեմն էլ՝ միմյանց: Նրա աշխարհը ծեծի ու բռնաբարության, զսպաշապիկների ու էլեկտրաշոկային բժշկության, բուժքույրերի ասեղների ու սանիտարների հաբերի աշխարհ էր:

Չեսթեր Ջեֆերդսը սովորել է, թե ինչպես խելագար պիտակավորված մարդը պետք է նորմալ մնա հոգեբուժական հաստատությունում: Պետք է սուսուփուս լինել: Պետք է մոռանալ, թե ինչու ես այստեղ հայտնվել: Չպետք է լսել շրջապատի տնքոցներն ու ճիչերը:

«Կրկնում ես այբուբենը՝ նորից ու նորից ասելով տառերը»,- պատմում է նա: «Կրկնում ես կոտորակային աղյուսակը. յոթը բաժանած 100-ի, ութը բաժանած 100-ի»:

Նրա բերանում մի ատամ է մնացել: Մնացածները կորցրել է կռիվների ժամանակ: Նրա ձայնը ճղճղան է:

«Այնտեղ դիմանալու միայն մի միջոց կա: Բերանդ պետք է փակ պահես»:

Ծանոթները նրան Ջեֆ են անվանում: 68 տարեկան է: 28 տարի է անցել, երբ կնոջը սպանելու համար նրան դատապարտեցին ցմահ բանտարկության: Այժմ նա իր ազատությունն է ուզում:

* * *

«Սա նրա տեղը չէ», - ասում է Դեյվիդ Ջ. Արոնը՝ Նահանգային հիվանդանոցի սոցիալական աշխատողը: - Բազմաթիվ ապացույցներ կան, որ Չեսթերն ինքը կարող է հոգ տանել իր մասին»:

1973 թվականից հոգեբույժները, սոցիալական աշխատողներն ու բուժքույրերը նույն բանն են ասում՝ Ջեֆերդսը հիվանդ չէ՝ ոչ հոգեպես, ոչ ֆիզիկապես:

Խնդիրն այն է, նշում է Արոնը, որ հիվանդանոցի 1400 հիվանդների մեջ Ջեֆերդսը եզակի է: Նա էլ, ուրիշների նման ծեր է, երկար տարիներ հիվանդանոցում է, սակայն նա այլեւս հիվանդ չէ: Տարբերությունն այն է, որ նա սպանության համար դատապարտված է ցմահ բանտարկության:

«Նա դեռ այստեղ է մնում, քանի որ եթե այստեղ չլիներ, ապա կլիներ բանտում», - ասում է Նահանգային հիվանդանոցի սոցիալական ծառայության ղեկավար Ֆրեդերիկ Յանգը: Յանգն ասում է, որ բանտը եւս Ջեֆերդսի տեղը չէ: Հոգեբուժության մասին օրենքներով պահանջվում է ազատ արձակել յուրաքանչյուրին, ով հիվանդ չէ, սակայն հիվանդանոցի ղեկավարության կարծիքով, եթե նրան հիվանդանոցից արձակեն, ապա նա պետք է բանտ վերադառնա:

«Եթե նա այս ամբողջ ժամանակ բանտում անցկացրած լիներ, գուցե այժմ ազատ լիներ»,- ասում է Յանգը...

Հադսոնի հոդվածի լույս տեսնելուց վեց շաբաթ անց Ներումների նահանգային խորհուրդը որոշում ընդունեց Ջեֆերդսին պայմանականորեն ազատ արձակել հոգեբուժարանից: Երեք ամսից նա ազատ մարդ է լինելու: Հադսոնը գնացել էր հիվանդանոց՝ տեսնելու, թե ինչպես է Ջեֆերդսը հավաքվում եւ նկարագրել է Ջեֆերդսին՝ իրերը հավաքելիս եւ դուրս գալիս:

Չեսթեր Ջեֆերդսը կանգնած էր իր ճամպրուկի մոտ: Բռնակի փոխարեն մի կտոր պարան էր: Նրա մի քանի իրերի հետ ճամպրուկի մեջ ընկերոջից ստացված բացիկ կար: Բացիկի վրա գրված էր. «հաջողություն քո նոր ձեռնարկմանը» ...

Վերջին չորս տարվա ընթացքում Ներումների խորհուրդը 10 անգամ քննարկել էր այս գործը: Մի անգամ, 1977 թվականի օգոստոսին, Խորհուրդը համաձայնություն էր տվել, որ նրան տեղափոխեն խելագար հանցագործների փակ պալատից, սակայն պահանջվում էր, որ նա շարունակի մնալ հոգեբուժական հաստատությունում ...

Կարծիք ձեւավորողները

Մինչ այժմ մենք հետեւում էինք այն լրագրողներին, ովքեր աշխատում են տեղեկատվության հետ առնչվող ընդարձակ ասպարեզի մի կողմում: Դրանք փաստ հավաքողներն են, տեղեկություններ մատակարարողները: Անաչառության նրանց վարքականոնը պարտադրում է, որ նրանք պատմեն առանց իրենց կարծիքն արտահայտելու: Ասպարեզի մյուս կողմում մի այլ՝ տեսակետներ ու կարծիքներ տարածողների խումբն է:

Կինոթատրոնում

Մի քանի ֆիլմ դիտելուց հետո Բարբարա Շուլգասերը նստած է իր համակարգչի դիմաց՝ «Սան Ֆրանցիսկո էքզամիների» նորությունների սենյակում: Ոչ մի ֆիլմն էլ նրա վրա տպավորություն չի թողել: Մեկը փաստագրական ֆիլմ էր Նյու Յորքի հետնախորշերի մասին: Գիշերային ակումբում մի ելույթ ունեցող ատամներով պոկում է սպիտակ մկների գլուխները: «Ասում են, որ նա ամեն ներկայացումից հետո փայտացման դեմ ներարկում է ստանում, - գրում է նա: - Էլեկտրաշոկն ավելի տեղին կլիներ»: Նա ֆիլմին դժկամությամբ մեկ միավոր է շնորհում՝ մեկից չորս բալանոց սանդղակում:

Մյուս ֆիլմը Շուլգասերին ավելի քիչ է դուր եկել, կես միավոր է տալիս: Գլխավոր հերոսուհին, գրում է նա «տենչում է նմանվել ռոք աստղերին, IQ-ն՝ ինտելեկտուալ գործակիցը, հավասար է այն սենյակի ջերմաստիճանին, որտեղ ձմռանը ջեռուցիչը չի աշխատում ...»:

Խաղահրապարակում

Չորս հարյուր մղոն հարավ՝ Ջիմ Մյուրեյը սյունակ է պատրաստում սպորտային ակումբներում առկա ռասայական խտրականության մասին: «Լոս Անջելես Թայմս»-ում Մյուրեյի սյունակները Պուլիտցերյան մրցանակ են շահել մեկնաբանությունների համար, մրցանակ, որը հազվադեպ է տրվում սպորտային մեկնաբաններին: Որպես կանոն, այն շնորհվում է ազգային եւ միջազգային թեմաներով գրող լրագրողներին:

Մյուրեյի ամենահայտնի հոդվածներից մեկի պատճառով, թերեւս, Ալաբամայի ֆուտբոլային թիմը դուրս է մնացել Վարդերի

գավաթից: Մյուրեյը գրել էր, թե այն թիմը, որտեղ սեւամորթ մարզիկներին խաղալ չի թույլատրվում, չպետք է հրավիրվի Կալիֆորնիայի համալսարանի խառը թիմի հետ խաղալու:

«Ալաբամայի թիմը ազգային չեմպիոն է,- գրում է նա: - Ինչի՞ ազգային չեմպիոնն է, Կոնֆեդերացիայի՞: Այս թիմը Ապոմատոքսի ճակատամարտի ժամանակներից ի վեր դուրս չի եկել Մեյսըն-Դիքսընի գծից այն կողմ»:

Կարծիք ձեւավորողները ոչ միայն ասում են մեզ, թե իրենք ինչ են մտածում, այլեւ փորձում են մեզ համոզել վարվելու իրենց կարծիքներին համապատասխան. մի՛ ծախսեք ձեր փողը այս գրքի, ալբոմի, ապուշ ֆիլմի վրա: Եկե՛ք ժողովրդավարությունը տարածենք խաղահրապարակներում: Կո՛ղմ քվեարկենք պարտատոմսերի թողարկմանը:

Երբեմն նրանք հաջողության են հասնում: Նույնքան հաճախ էլ մարդիկ անտեսում են նրանց հորդորներն ու առաջարկները:

Խմբագրի սյունակ

«Դը Թայմս Նյուսի» նորությունների սենյակի կողքի իր աշխատասենյակում Սթիվեն Հարթգենը նորից նայում է խմբագրականը, որը պետք է տպագրվի նախքան Այդահո նահանգի Թուին Ֆոլզ քաղաքի բնակիչները կքվեարկեն դպրոցական պարտատոմսերի խոշոր թողարկման համար: Հենց սկզբից էլ Հարթգենը՝ 22000 տպաքանակով օրաթերթի հրատարակիչը, գիտեր, որ ինքը ծանր ճակատամարտ է սկսում:

Հեշտ չի լինի մարդկանց համոզել ավելի բարձր հարկեր վճարել, որպեսզի 20 միլիոն դոլար հատկացվի միջնակարգ դպրոցին: Այնուամենայնիվ, Հարթգենը, որը դրա կողմնակիցներից էր, այս խնդրին հատկացնում էր զգալի տեղեկատվություն ու խմբագրականներ: Նա տպագրում էր խմբագրին ուղղված տասնյակ նամակներ: Ընթերցողներից ոմանք բողոքում էին, որ Հարթգենը, որպես հրատարակիչ, իրավունք չունի դպրոցական փոխառության նախապատրաստական կոմիտեի անդամ լինելու: Սակայն Հարթգենը իր խմբագրականներում ու համայնքում փոխառությունը պաշտպանելու համար ներողություն չէր խնդրում:

«Ես ինչպե՞ս կարող եմ քննադատել նրանց, ովքեր չեն մասնակցում քաղաքի գործերին, եթե ինքս չմասնակցեմ», -հարցնում էր նա:

Հարթգենը չէր խուսափում խմբագրի սյունակը տրամադրել վիճահարույց խնդիրների: «Քաղաքում սովոր են, որ մենք միշտ

մեր վերաբերմունքն ունենք այս կամ այն խնդրի նկատմամբ՝ խիստ ենք զենքի վերահսկման հարցում, հղիության ընդհատման հնարավորության կողմնակից ենք, կոշտ դիրքորոշում ունենք ուսուցիչների արհմիության նկատմամբ»:

Այս շիտակությունը զայրացնում էր շատերին: Օկրուգի կոնգրեսմենին քննադատող խմբագրականից հետո մի ընթերցող Հարթգենի սեղանին փաթեթ նետեց: «Սա,- ասաց նա հրատարակչին, - նույն բաղադրությունն ունի, ինչ որ Ձեր խմբագրականը»: Հարթգենը զգուշությամբ բացեց փաթեթը. կովի թրիք էր:

Մինչ լրագրող Քըրք Միթչելը շաբաթական երկու-երեք հոդված էր գրում դպրոցական փոխառության մասին (մեկում նոր դպրոցի արժեքը նշված էր 39 միլիոն դոլար, ըստ երեւույթին, փոխառության նկատմամբ հետաքրքրությունն ավելացնելու համար), Հարթգենն ու իր խմբագիրը խմբագրականներ էին նվիրում համայնքի ապագային: Բարելավված կրթական համակարգը «կտա շրջանավարտներ, որոնք ավելի լավ նախապատրաստված աշխատուժ են»: Նրանց, ովքեր կարծում էին, որ հարկերի 6.6%-ով բարձրացումը չափազանց շատ է, եւ նոր մեծ դպրոցի գինը պետք է պակասեցնել, լրագիրը պատասխանում էր. «նոր դպրոցը պետք է լինի երեխայի նոր վերարկուի նման՝ տնտեսող ծնողները գնում են այնպիսին, որը երեխան, աճելով անգամ, մի քանի տարի հագնի»:

Քվեարկությունից երկու օր առաջ խմբագրականում հայտարարվեց. «Այս ներդրումը ի նպաստ է ոչ միայն ձեր երեխաների, այլեւ համայնքի տնտեսական առողջությանը: Լավ կրթություն ստացած շրջանավարտները կենսական նշանակություն ունեն ամեն մի քաղաքի տնտեսական զարգացման համար...

Մենք կոչ ենք անում երեքշաբթի օրը կողմ քվեարկել»:

Մարդիկ այլ որոշում ընդունեցին: Առաջարկը մերժվեց 2 : 1 հարաբերությամբ:

Հարթգենն անկոտրում էր: Նա նախաձեռնեց դպրոցի գերծանրաբեռնվածության վերացմանն ուղղված աշխատանքներ եւ առաջարկեց, որ դպրոցական փոխառության հակառակորդները լինեն «դպրոցական խորհրդի հաջորդ ցուցակում»: Ահա, թե ինչպես է ավարտվում խմբագրականը.

«Մենք մեր կողմից երաշխավորում ենք, որ կաջակցենք այդ գործընթացին՝ ապահովելով քննարկումների մասին սպառիչ տեղեկատվություն եւ ժամանակ առ ժամանակ խմբագրականներում մեկ-երկու տող հատկացնելով:

Իսկ դու՞ք: Ո՞րն է լինելու ձեր ներդրումը»:

Գովազդ եւ հասարակության հետ կապեր

«Դը Թայմս Նյուսի» լուրերի եւ գովազդի բաժիններն իրարից բաժանող պատի մի կողմում Ջին Հերրիքը աշխատում է տնային կահ-կարասու տեղական խանութի գովազդի համակարգչային տարբերակի վրա: Հերրիքը լրագրի գովազդների բաժնի աշխատակիցն է, գովազդը քննարկել է խանութի գովազդային մենեջերի հետ եւ լավ պատկերացնում է, թե վերջինս ինչ է ուզում:

Այն տարբերակը, որ նա վերջացնում է, կոչվում է նմուշային, քանի որ դեռ պետք է գովազդը պատվիրողի հավանությունը ստանալ: Այն նաեւ սեւագիր է, քանի որ, ինչպես ասաց Հերրիքը, պետք է ցույց տրվի մենեջերին, եւ նա լրացումներ կանի, եթե ցանկանա:

Գովազդների բաժին

Վաճառքի մասնագետներն ու դիզայներներն աշխատում են այլ գովազդների վրա՝ բառերն ու նկարները զուգակցելով այնպես, որ ընթերցողներին եւ տեղեկացնեն, եւ համոզեն: «Ռադիո Շաք» էլեկտրական ապրանքների խանութների ցանցը գովազդում է. «Տնտեսեք 400 դոլար: 599,95 դոլար: Հին գինը 999,95 դոլար: Ամեն ամիս գների իջեցում 20 դոլարով»:

IGA-ը գրոհով գրավում է քաղցրասերներին. «M&M» եւ «Մարս» կոնֆետի սալիկների գինը «99 սենթ է երեք հատի համար»: Ուրիշ գովազդներ հարմար նվերների ընտրելու առաջարկներ են անում: Մոտենում է Մայրերի օրը, եւ Վենսոնի ոսկու խանութը խորհուրդ է տալիս «մարգարտաշար վզնոց»՝ մայրիկի համար, «կավե ափսե»՝ տատիկի համար եւ «Այդահոյի բլուզ»՝ մորաքրոջ համար:

Գովազդների բաժնի հեռավոր անկյունում մի խումբ աշխատում է լրագրի նոր ենթաբաժնի վրա: Դա թռուցիկի չափսի «Գյուղատնտեսական շաբաթ» ներդիրն է ֆերմերների, ռանչոների տերերի, մատակարարների եւ շրջանի գյուղատնտեսության հետ կապ ունեցող այլ անձանց համար:

«Մենք երբեք չենք ունեցել գյուղատնտեսական հարցերին նվիրված առանձին հրատարակություն», - ասում է Ժանեթ Լ. Թեյլորը՝ լրագրի գովազդների բաժնի մենեջերը: Մեծ հետազոտություն է կատարվել՝ պարզելու այդ գաղափարի հեռանկարները: Որոշվել են հնարավոր ընթերցողների եւ գովազդ պատվիրողների մեկ տասնյակ թիրախային խմբերը:

Եզրակացությունն այն է եղել, որ հրատարակությունը կարդարացնի (կհատուցվի), քանի որ հնարավոր կլինի ապահովել գովազդի բավարար քանակություն: Լույս է տեսել ազդօրինակը: Այն լավ ընդունելություն է գտել, «Գյուղատնտեսական շաբաթ»-ը գործարկվել ու հրատարակվում է:

ՀԿ (PR) գործակալությունում

Վերադառնանք Նյու Յորք, որտեղ Թերի Ուիլյամսը երաժիշտ Մայլս Դեյվիսին համոզում է՝ նկարվելու հագուստեղենի մի մեծ խանութի գովազդի համար: Ուիլյամսը, որը Դեյվիսի հանրային կապերի պատասխանատուն է, ասում է նրան, որ գովազդը կնպաստի վաճառքի ավելացմանը, քանի որ կհայտնվի Դեյվիսի նոր ալբոմի եւ գրքի հետ միաժամանակ:

«Քո մաշված բաճկոնի ու քրքրված կաշվե տաբատի վրայից բլուզ հագիր: Հոյակապ կլինի»:

Ուիլյամսը 60-րդ փողոցի եւ Բրոդվեյի վրա գտնվող Թերի Ուիլյամսի գործակալության հիմնադիրն է ու նախագահը եւ ունի, ինչպես ինքն է ասում, «հասարակության հետ կապերի բոլոր տեսակի ծառայություններ մատուցող գործակալություն»: Նա աշխատում է մարզիկների ու էստրադային արտիստների հետ, ինչպիսիք են Ուիլի Սթարգելը եւ Էդի Մերֆին:

Ուիլյամսը նվիրյալ է, եւ նրա նվիրվածությունը վարակիչ է: Նա աշխարհահռչակ շեփորահար Ուինթոն Մարսալիսին համոզել է նվագել Ավարտի մեղեդին 19 սեւամորթ զինվորների վերահուղարկավորության ժամանակ, չնայած երաժիշտը չէր համաձայնում՝ պատճառաբանելով, որ այդ կտորն իրեն նյարդայնացնում է:

«Ուինթոն, Ուինթոն, Ուինթոն: Դու դա կարող ես անել: Սա Քաղաքացիական պատերազմի ժամանակ զոհված քո նախապապերի հիշատակի համար է»:

Հիմքերի ամրապնդումը

Միացյալ Նահանգներում եւ Կանադայում առեւտրային լրատվամիջոցների եկամտի հիմնական աղբյուրը գովազդն է, լինի դա հազար դոլար արժեցող 30 վայրկյան տեւողությամբ մի կարճ գովազդ ABC-ի «Բարի լույս, Ամերիկա՛» հաղորդման ժամանակ, մեկ միլիոն դոլարից ավելի արժեցող գովազդ՝ Սուպեր գավաթի խաղարկության ժամանակ, «Գյուղատնտեսական շաբաթի» էջի 325

դոլարանոց 6,5 մատնաչափ գովազդ, թե՝ 120 000 դոլար՝ «Սփորթս Իլյուսթրեյթիդ»-ում մեկ էջ գնելու համար:

Երկրների մեծ մասում պետությունն աջակցություն է ցույց տալիս հիմնական լրատվամիջոցներին: Բազմաթիվ թերթեր ֆինանսավորվում են պետության, արհմիությունների կամ քաղաքական կուսակցությունների կողմից: Սակայն Միացյալ Նահանգներում գովազդը լիովին ծածկում է առեւտրային ռադիոյի ու հեռուստատեսության ծախսերը եւ կազմում է լրագրերի եկամտի չորս հինգերորդը՝ միեւնույն ժամանակ ապահովելով հանդեսների եկամտի կեսը:

Նույնիսկ համալսարանական հրատարակություններն ԱՄՆ-ում կախված են գովազդից ստացվող եկամուտներից: Քոլեջների ու համալսարանների լրագրերի մեկ երրորդն իրենց միջոցների կեսից ավելին ստանում են գովազդից: Գները մի մատնաչափ տեղի համար տատանվում են 1-ից 8 դոլարի սահմաններում: Մեկ երրորդն ունի ավելի քան 100 000 դոլար տարեկան եկամուտ, իսկ մի քանիսը՝ տարեկան մեկ միլիոն դոլարից ավելի:

Տեղեկատվական միջոցների աճող կախվածությունն ավելի շատ գովազդ տրամադրողներից, քան դրանք սպառողներից կամ հատուկ հետաքրքրություններից, որոշ դիտորդների կարծիքով, դրական միտում է: Սակայն, ուրիշների կարծիքով այս կախվածությունը լրատվամիջոցների որակի վատացման պատճառ է դարձել: Լեո Բոգարտը, որը նախկինում աշխատել է գովազդի ոլորտում, իսկ ներկայումս հասարակական կարծիքի մասնագետ է, ասում է, որ լրատվամիջոցների հիմնվելը գովազդի վրա «նշանակում է, որ մարդիկ, որոնք ղեկավարում են լրատվամիջոցների մեծ մասը, արդեն բազմաթիվ տարիներ իրենց հաճախորդներ են համարում ոչ թե հասարակությունը, այլ գովազդ պատվիրողներին... Տեղեկատվական համակարգի կառուցվածքի եւ բովանդակության վրա խորապես ազդում են, (եթե չասենք՝ դրանք ակտիվորեն վերահսկում են) գովազդ տրամադրողների կարծիքներն ու սահմանած կարգը, իսկ վերջիններիս հետաքրքրությունը լրատվամիջոցների նկատմամբ բացառապես գործնական է ու պրագմատիկ»:

Ռեպորտաժ

Ռեպորտաժն, ըստ գրող Թոմաս Վուլֆի «ամեն ինչի հիմքն է»: Տեղեկացնելը, զվարճացնելը կամ համոզելը՝ թղթակիցների, սյունակագիրների (քոլումնիստների), մեկնաբանների, նաեւ՝ գո-

վազդի հեղինակների կողմից, սկսվում է տեղեկություններ հավաքելով, փաստական նյութի կուտակմամբ:

«Ամեն մի ակնարկ սկսվում է հիմնավոր լրատվությամբ», - ասում է Բարբարա Շուլգասերը «Սան Ֆրանցիսքո Էքզամիներից»: - Քննադատը պետք է հիմնական տեղեկությունները՝ դերասանների, բեմադրողի, հեղինակի անունները եւ սյուժեի մանրամասները ճիշտ ստանա»:

«Արքանզաս Գազեթի» խմբագիր Ջերի Ֆ. Դհոնաուն ասում է. «Խմբագրականներ գրողները շատ նման են ռեպորտյորներին: Նրանք, ինչպես եւ ռեպորտյորները, հիմնվում են փաստերի ու փաստահավաքման վրա: Սակայն հետո նրանք մեկ կամ երկու քայլ առաջ են գնում, եւ հենց այս է նրանց տարբերությունը:

Խմբագրականի հեղինակի արտահայտած կարծիքը հարստացված է խնդրին վերաբերող նյութերի ընթերցանությամբ, ինչպես նաեւ իր փորձով, ինչը փաստերը դնում է հեռանկարի մեջ»:

Ապացուցեք ձեր ասածը

Չնայած իրենց նպատակների տարբերությանը, հասարակությանը տեղեկատվություն հրամցնողներն էլ հետեւում են նույն պատվիրանին. «Ապացուցի՛ր քո ասածը»:

Լրատվությունն, օրինակ, կազմված է երկու մասից. լիդը, որը դեպքի համառոտ ամփոփումն է եւ հիմնական մասը, որը փաստագրում ու հիմնավորում է լիդում ասածը:

Տեսության եւ խմբագրականի մեջ նույնպես ասելիքը պետք է ապացուցվի, դատողություններն ու կարծիքները՝ հիմնավորվեն: «Տեսությունը տեսակետ է ներկայացնում, - ասում է Շուլգասերը, - սակայն տեսության հեղինակը պետք է պաշտպանի իր տեսակետը, ապացուցի իր կարծիքը»:

Գովազդի հեղինակը, որն աշխատում է մեզ համոզել Ուիթիզ գնել, Յունայթիդ Ուեյին նվիրատվություն անել կամ քվեարկել սենատոր Թեդ Քենեդիի օգտին, մեզ ոգեւորում է փաստերով, այլ ոչ թե միայն խելոք բառերով: Ցույց տու՛ր, ասում է ընթերցողը: Ապացուցի՛ր քո տեսակետը, ասում է դիտողը:

Տեղեկություններ հավաքելը

Փաստահավաքման տեխնիկայի բազմաթիվ ձեւերը ռեպորտաժի բաղկացուցիչներն են: Ռեպորտաժի մեծ մասը հարցազ-

րույցի, դիտարկումների եւ հետաքննության միացություն է: Նախորդ օրվա բասկետբոլի խաղի մասին տեղեկատվությունը, օրինակ, ընդգրկում է խաղի դիտումը, հանդերձարանում կատարված հարցազրույցների ընթացքում խաղացողների մեկնաբանությունները եւ հաճախումների միջինի եւ կանգնած տեղերի քանակի ճշտումը:

Փաստահավաքման թերեւս ամենից հաճախ օգտագործվող գործիքը հարցազրույցն է: Նրանից օգտվում են բոլորը, սկսած «Դե Դես Մուա Ռեժիստի»՝ սկանդալները լուսաբանող լրագրողից, որը Փրինսի մասին ակնարկ է պատրաստում, մինչեւ Ջին Հերրիքը, որը Քեյնսի մենեջերի հետ քննարկում է հաջորդ շաբաթվա գովազդը:

Փաստահավաքման ընթացքում օգտագործվում են նաեւ քաղվածքներ, մեջբերումներ (օրինակ «Ով ով է Ամերիկայում» տեղեկատուից), փաստաթղթեր եւ տվյալների բազաներ: Այն, ինչ մարդիկ տեսնում են հեռուստատեսությամբ, թերթերում ու ամսագրերում՝ բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունք է:

«Լեւիսն» ու «Թաքո Բել»-ն, օրինակ, հետազոտությունների արդյունքների հիման վրա, որոշում ընդունեցին MTV-ի տիպի կարճ գովազդներից ու բարձր երաժշտությունից անցնել պատմություններ պատմելուն: Այդպես են անում նաեւ «Բադվայզերը», «Մարսը», «Փրոքթեր & Գեմբլ»-ը: Հետազոտությունները պարզեցին, որ մարդիկ ավելի շատ բան են հիշում, երբ նրանց որեւէ պատմություն են պատմում, քան ժխորից ու MTV-ի տիպի գովազդներից:

Փաստ հավաքելը ոչ միշտ է հեշտ գործ: Երբեմն նյութը թաքցված է, իսկ աղբյուրները դժկամությամբ են դրանք բացահայտում: Երբ Հայդի Էվանսը փորձեց պարզել, թե ինչ են եղել Նյու Յորքի առողջապահության դեպարտամենտի կողմից վերցված 2000 քսուկները պապուլաներից, նա դեմ առավ խուլ պատի: Իր համառության շնորհիվ նա պարզեց, որ մեկ տարուց ավելի է անալիզները անտեսված են, ինչը հարյուրավոր կանանց դնում է արգանդի վզիկի քաղցկեղով հիվանդանալու լուրջ վտանգի տակ: Էվանսի հաղորդումը հանգեցրեց պաշտոնաթողությունների ու բարեփոխումների: Այն նաեւ Էվանսին բերեց մի շարք մրցանակներ՝ խոր եւ հաստատակամ լրագրության համար:

Ճշմարտություն ասելը

Լրագրողներին երբեմն անվանում են ճշմարտություն ասող-

ներ: Նրանք չեն ընդունում աշխատանքային պարտականությունների այս նկարագրությունը, սակայն դեմ չեն լինի, եթե իրենց կոչեն ճշմարտություն փնտրողներ: Նրանք գիտակցում են, որ ճշմարտությունը միշտ իրենց հասանելիության սահմաններից դուրս է: Փաստորեն նրանց աշխատանքը կարելի ներկայացնել հետեւյալ բանաձեւով՝

Ճշմարտություն = Պատմություն + X

Պատմությունը երբեք ամբողջ ճշմարտությունը չէ: Միշտ կա մի X , մի պակասող բաղադրիչ: Իրականում դա մեկ X չէ, այլ մի ամբողջ շարք՝ x_1, x_2, x_3, x_4...

Ասենք, գոյություն ունի վերջնաժամկետ (x_1), որը ստիպում է, որ պատմությունն արագ գրվի, երբ դեռ ոչ բոլոր փաստերն են հայտնի: Ահա մի քանի այլ սահմանափակումներ, մի քանի այլ x -եր՝

Աղբյուրների մատչելիություն - Շատ հաճախ այն մարդը, որն ամենից անհրաժեշտն է լրագրողին, մատչելի չէ:

Լրատվամիջոցի բնույթը - Հեռուստատեսությունը նախապատվություն է տալիս գործողությանը, այլ ոչ խոսքին: Հոյակապ մտքեր կորչում են՝ իրենց տեղը զիջելով վառ նկարներին:

Լրագրողի սահմանափակումները - Լրագրության արվեստը բաղկացած է ճիշտ ժամանակին ճիշտ ուղղությամբ նայելուց, ըստ էության հարցեր տալու, պատմությունը հեռանկարի մեջ դնելու կարողությունից եւ հետո էլ՝ որոշելուց, թե ինչը դուրս թողնել՝ տեղի եւ ժամկետների սահմանափակումների պատճառով:

Լրագրողի առջեւ ծառացած այս ամենի պատճառով միայն տխմարը կպնդի, թե ժուռնալիստը կարող է պարզել ճշմարտությունը: Ինչեւէ, լրագրությունը մոտ է անցնող տեսարանի էությանը, ավելի մոտ, քան առկա որեւէ այլ ոլորտ: Լրագրության նկատմամբ վստահության մեծ մասը հիմնված է նրա անկախության վրա: Ավելի ճշգրիտ կարելի է ձեւակերպել այսպես. լրագրության կարողությունը՝ մոտենալու իրականության ամենախելամիտ տարբերակին, գալիս է լրագրողի անկախությունից, ով տեղեկատվությունը նենգափոխելու ոչ մի պարտավորություն չունի ո՛չ պետության, ո՛չ կուսակցությունների, ո՛չ էլ մասնավոր որեւէ շահերի նկատմամբ:

Լրագրություն

Մենք թաքուն հետեւում էինք մի քանիսին այն 250000-անոց բանակից, ովքեր աշխատում են 1600 օրաթերթերում ու 7000 շաբաթաթերթերում, 10000 ռադիո- ու հեռուստակայաններում եւ այլ կազմակերպություններում ու ձեռնարկություններում, որոնք կապ ունեն զանգվածային լրատվամիջոցներով մարդկանց տեղեկություններ հաղորդելու հետ:

Վետերաններ ու սկսնակներ, տեսաբաններ ու ռեպորտյորներ, գովազդ պատրաստողներ եւ հեռուստահաղորդավարներ՝ նրանք բոլորը հետեւում են նույն գործընթացին՝

Լրատվության հավաքում - Դիտարկումներ, հարցազրույցներ, հետաքննություններ:

Ճշտում - Ստուգում՝ պարզելու արդյո՞ք տեղեկատվությունը ճշգրիտ, լրիվ ու էական է:

Պլանավորում - Պատմության ուրվագծում, խմբագրական, տեսություն, գովազդ, նորությունների թողարկում, գովազդային ներդիր, շարադրանք:

Գրելը - Մասերն իրար հետ կապակցել մի ձեւով, որը լինի հետաքրքիր, պարզ ու համառոտ:

Արտադրություն - Ավարտուն աշխատանքը հարմարեցնել ամբողջին, որը կարող է լինել լրագիր, հաղորդում, տեսահոլովակ:

Կարճ ասած, գործընթացը ներառում է տեղեկությունների հավաքումը, տեղեկությունների մշակումը եւ տեղեկությունների տարածումը:

Ինչպես էլ գործընթացը նկարագրվի, ամեն ինչ, ի վերջո, կախված է այն մարդկանցից, ովքեր թղթի վրա բառեր են գրում:

Գրելն ապրուստ վաստակելու ամենադյուրին միջոցներից չէ: Ականավոր սպորտային մեկնաբան Ռեդ Սմիթը մի անգամ ասել է. «Իհարկե, գրելը հեշտ է: Պարզապես նստում ես գրամեքենայի առաջ, մինչեւ քո ճակատին արյան կաթիլներ են հայտնվում»:

Սա հոգեվարքն է: Սակայն գոյություն ունի էքստազը, երբ պատմում ես, որ վկա ես եղել այդ դեպքին, խոսել ես այն մարդկանց հետ, այսպիսի բան ես արել: Ամեն մեկն էլ ուզում է կարեւոր դառնալ, անհատականություն լինել: Ծառերի բներին ու այգիների նստարաններին փորագրվում են անվան ու ազգանվան սկզբնատառեր, քարանձավների պատերին նկարվում են պատկերներ, ցեմենտի մեջ դաջվում են ափերի հետքեր:

Գրելը նույնպես ուժի ցուցադրության մի ձեւ է, իսկ լրագրության մեջ այդ ուժը կարելի է օգտագործել բարի նպատակներով: Այս գլխում մենք տեսանք հասարակությանը ծառայող լրագրության օրինակներ: Լեզվին տիրապետելը լրագրողներին տալիս է ուժ գործադրելու հնարավորություն:

Մինչ մենք ավելի կխորանանք այն ուղիների ուսումնասիրության մեջ, որոնք հնարավոր են դարձնում, որ բառերը մեզ ծառայեն, եկեք ավելի մոտիկից ծանոթանանք լրագրողների հետ: Մենք կուսումնասիրենք նրանց ընդհանուր գծերը եւ այն հմտությունները, որ նրանք պետք է ունենան՝ այս ասպարեզում իրենց գործունեությունը սկսելու համար:

«Ավելի շատ լրագրողներ կործանվել են սեփական կարեւորության զգացումի, քան խմիչքի պատճառով»:

Վալտեր Լիպման

«Բարեկեցության հասնելը ոչինչ է: Դժվարը նպատակին հասնելն է, հասնելն է փոփոխության՝ բառերի միջոցով»:

Էլիզաբեթ Հարդուիք

Գլուխ 2
Լրագրողը

Մուտք

Լրագրողները պարտավոր են ճշգրիտ, ազնիվ, հավասարակշռված ու անկեղծ ձեւով ներկայացնել այն ամենը, ինչ իմացել են փաստեր հավաքելիս: Լրագրողները ձգտում են հնարավորության դեպքում իրենք ներկա լինել դեպքերին, ինքնուրույն կարծիք կազմել, այլ ոչ թե հիմնվել ուրիշներից ստացած տեղեկությունների վրա: Բոլոր լրագրողներին հատուկ հատկանիշներից են հետաքրքրասիրությունը, անկախությունը, ստեղծագործ մոտեցումը, սկեպտիցիզմը՝ թերահավատությունը, եւ ճշմարտացի տեղեկատվություն ապահովելու միջոցով մարդկանց օգնելուն նվիրվածությունը :

Լրագրողի հատկանիշները

Բոստոնի համալսարանի առաջին կուրսի ուսանող Նիք Գեյջին ցնցել էր ամերիկյան դրամատուրգ Յուջին Օ'Նիլի նոր լույս տեսած կենսագրության մի դրվագ: Օ'Նիլը մեռնում է եւ կնոջը հանձնարարում է իր անավարտ ձեռագրերն այրել Բոստոնի հյուրանոցի իրենց սենյակի բուխարիկում:

Գեյջը գիտեր, որ այն հյուրանոցը, որտեղ ապրել է Օ'Նիլը, դարձել է ուսանողական հանրակացարան: Դա Գեյջին հետաքրքրեց. տեսնես այն սենյակն այժմ ի՞նչ տեսք ունի: Եվ որոշեց հանրակացանով շրջել եւ գտնել այն:

«Ի զարմանս ինձ, - հիշում է նա հետագայում, -սենյակում բուխարիկի ոչ մի հետք չկար: Հետքրքրությունից դրդված՝ ես նայեցի շենքի շինարարական գծագրերը: Այնտեղ իսկապես երբեք բուխարի չի եղել»:

Գեյջը, որը թղթակցում էր քոլեջի թերթին, մի նյութ գրեց իր հայտնագործության մասին: Կենսագրության հեղինակները լսեցին Գեյջի հոդվածի մասին եւ կապվեցին նրա հետ: Այնուհետեւ նրանք զանգահարեցին Օ'Նիլի այրուն, որն էլ հիշեց, որ ձեռագրերը, կարծես թե, այրել է նկուղի վառարանում: Գրքի հաջորդ հրատարակության մեջ հեղինակներն ուղղեցին այդ սխալը:

Գեյջն ասում էր, որ իրեն կարծես «խայթել էր հետաքրքրության իշամեղուն»: Մի քանի թերթերում աշխատելուց հետ, նա եկավ «Նյու Յորք Թայմս», որպես հետաքննությունների թղթակից: Այն մարդը, որը նրա հետ հարցազրույց անցկացրեց եւ աշխատանքի ընդունեց, Արթուր Գելբն էր՝ «Թայմսի» այդ ժամանակվա մայրաքաղաքային լուրերի խմբագիրը եւ համահեղինակը (իր կնոջ հետ միասին) Օ'Նիլի կենսագրության, որը կարդացել էր Գեյջը:

Դուք կասեք, որ Գեյջին իսկական լրագրող դարձրեց հետաքրքրասիրությունը՝ գումարած այն ամենի զգացողությունը, ինչը նոր է, հետաքրքիր ու մյուսներից տարբեր, կարճ ասած՝ նորության զգացումը:

Միսիսիփի նահանգի Քոլումբուս քաղաքի «Քոմերշըլ դիսփաթչ»-ի չորս աշխատակիցներ մի օր նախաճաշի էին դուրս եկել, երբ տեսան, թե ինչպես հրշեջ մեքենան սլանում է քաղաքից դուրս: Բնականաբար, նրանք ցատկեցին իրենց մեքենայի մեջ եւ հետեւեցին հրշեջներին:

«Այրվում էր մի փոքրիկ փայտագործական արհեստանոց, իսկ մոտակայքում գտնվող բութան գազով երկու տարողություն վտանգավոր էին հրշեջների, ինչպես նաեւ հավաքվածների, այդ տարածքի բնակիչների եւ մամուլի ներկայացուցիչների կյանքի համար»,- պատմում էր թերթի աշխատակից Քեյթ Ուարենը:

Կրակը հասավ տարողություններին, եւ բոցերը 20-30 յարդ դեպի երկինք բարձրացան: Տարածքի բնակչությունը էվակուացվեց, սակայն թղթակիցներն ու լուսանկարիչները կարողացան մնալ հրշեջների հետ: Թերթի հաջորդ օրը լույս տեսած համարում Ուարենի գունավոր լուսանկարը առաջին էջում զբաղեցնում էր վեց սյունակ: Թերթը առաջինն էր այս լուրը հաղորդել:

Հետաքրքրասիրություն

Լրագրողները գիտեն, որ հետաքրքրասիրությունը հաճախ վարձատրվում է լավ նյութերով: Այն, ինչ հարուցում է թղթակիցների հետաքրքրությունը, սովորաբար հետաքրքրում է նաեւ ընթերցողներին եւ ունկնդիրներին:

Ոչ մի լավ թղթակից չի կարող անտարբեր անցնել ավտոտնակի պատին փակցրած այս հայտարարության կողքով՝

Կորել է շուն

50 դոլար պարգեւ գտնողին

Ունի երեք թաթ
Աջ ականջ չունի

Զախ աչքը կույր է
Պոչը կտրված է

Անունը Լաքի է

Արդյո՞ք տերը գտավ Լաքիին, եւ ինչպե՞ս կարող է մեկ շուն լինել այսքան բազմազան դժբախտությունների կրողը: Այս հարցերի պատասխաններից կարող է հետաքրքիր հոդված ծնվել:

Հոդվածագիրներն իրենց ընթերցողների հետ կիսում են նրանց հետաքրքրություններն ու հոգսերը: Նրանք երկուսն էլ ուզում են ստանալ նույն հարցերի պատասխանները: Անվանեք այդ հասարակության զարկերակի զգացում կամ պարզապես հետաքրքրությունների ընդհանրություն: Ինչպես էլ անվանենք, արդյունքը նույնն է՝ աշխատանք, որը հուզում է մարդկանց:

Արագ վարեք ձյունահավաք մեքենան: Ձյունը կուտակվում էր Վաշինգթոնում: Արլինգթոնի կոմսության կոմունալ ծառայության հասարակական կապերի բաժնի աշխատակից Քերոլ Նեյշընը որոշեց պարզել, թե ինչպե՞ս են հաղթահարվում ձյունամրրիկի հետեւանքները: Լուսանկարներով ուղեկցվող պատմությունը շատ բովանդակալից կլիներ: Նա որոշեց դուրս գալ ձյունահավաք մեքենայով:

«Մենք ընդամենը մի քանի յարդ էինք հեռացել կայանից, երբ Քոլամբիա Փայք բանուկ փողոցի վրա խցանման մեջ ընկանք, - պատմում է Քերոլը,- այնքան ձյունաթաղ, խրված ու շրջված մեքենաներ կային, որ մենք մեկ ժամից ավելի կանգնած մնացինք այդ ճանապարհի վրա: Չէինք կարողանում դուրս գալ, որ սկսենք փողոցները մաքրել, քանի որ շրջապատված էինք այլ մեքենաներով: Դրությունը նույնն էր ամբողջ շրջանում»:

Նեյշընի մոտ անմիջապես միտք ծագեց փոքրածավալ տեղեկատուի մասին, որը պետք է տպագրել եւ բաժանել բնակիչներին: Այն, ինչ որ պետք է հաղորդվեր, շատ պարզ էր՝ ձյունի ժամանակ մնացեք ձեր տներում, որպեսզի ձյունահավաք մեքենաները հնարավորություն ունենան կատարելու իրենց աշխատանքը:

Ակնհայտ է թվում: Այնքան ակնհայտ, որ ոչ մի կոմունալ ծառայություն այդ մասին չէր մտածել: Սակայն այն բանից հետո, երբ Նեյշընի գրքույկը տպագրվել ու բաժանվել էր, այն ամբողջ ԱՄՆ-ում եւ Կանադայում տեղեկատվական նման գրքույկներ հրատարակելու նախատիպ դարձավ:

Դեպքի վայրում: Ուշադրություն դարձրեք, որ Օ'Նիլի կենսագրության մեջ Գեյջի գտած սխալը, ինչպես նաեւ Նեյշընի զանգվածային տպաքանակով բազմացված գրքույկը ուղղակի դիտարկումների արդյունք են: Գեյջը եւ Նեյշընը ամեն ինչ տեսել էին իրենց աչքով:

Վիետնամական պատերազմի ժամանակ մի երիտասարդ թղթակից նյութ պատրաստեց, որը հիմնված էր բանակի մամլո հաղորդագրության վրա: ԱՄՆ-ի բանակի հաջող գործողությունների մասին այդ նյութը տպագրվեց «Նյու Յորք Թայմս»-ի առաջին էջում՝ հարուցելով լրագրի Վիետնամի թղթակից Հոմեր Բիգարթի դժգոհությունը:

Բիգարթը տեղյակ էր իրական վիճակին: Նա գիտեր, որ հաղորդագրությունը ծայրից ծայր սուտ է: Բիգարթը երիտասարդին տարավ ռազմաճակատային գիծ ու ցույց տվեց ամեն ինչ: «Ահա՝ այս էի ուզում. ինքներդ տեսնեիք, որ այդպիսի բան չի եղել»:

Պարսից ծոցի պատերազմի ժամանակ լրագրողներին ճակատային գծից հեռու էին պահում: Այն մի քանիսը, որոնց թույլ էին տալիս այնտեղ գնալ, ուղեւորվում էին խմբերով եւ զինվորականների ուղեկցությամբ: Տեղեկատվության նկատմամբ սահմանված այս խիստ վերահսկողությունը հանգեցրեց մամուլի բողոքներին, թե հասարակությունը պատերազմի վերաբերյալ տեղեկատվության անկախ աղբյուր չունի: Սրանից ենթադրություն արվեց, եւ անկասկած ճիշտ, որ զինված ուժերը անկախ մամուլին դեռեւս մեղադրում են այն բացահայտումների համար, որոնք հանգեցրին Վիետնամից ԱՄՆ-ի հեռանալուն: Կառավարությունն այս անգամ ոչ մի միջամտություն չի հանդուրժի, եզրակացրեց մամուլը:

Անկախություն

Հասարակությունն, ի վերջո, հիմնվում է մամուլի վրա, որպես ուժի հակակշռի, այդ ուժը պետությունը լինի, թե բիզնեսը: Մամուլի հավասարակշռող դերն են ի նկատի ունեցել Անկախության հռչակագրի հեղինակները եւ նրանք, ովքեր ԱՄՆ-ի Սահմանադրության Առաջին ուղղումով հաստատել են մամուլի ազատությունը: Նրանք համոզված են եղել, որ ազատ մամուլը կխոսի հասարակության անունից եւ դեմ կլինի իշխանության կենտրոնացումներին:

Ստանալով այս ժառանգությունը՝ լրագրողները գիտակցում են, որ իրենք ամենից լավ ծառայում են, երբ ներկայացնում են իրենց ընթերցողներին եւ ունկնդիրներին: Այն փոխճնշմանը, որ Ա-

ռաջին ուղղումը միտումնավոր հաստատում է իշխանության եւ մամուլի միջեւ, կարելի է նայել այն տեսանկյունով, որ մամուլն ունի իր սեփական նպատակը՝ օրակարգը, հասարակության օրակարգը, որը տարբեր է նրանց նպատակներից, ում մասին մամուլը գրում է:

Մամուլի ասուլիսի ժամանակ խոսնակը ներկայացնում է իր օրակարգի հարցերը: Այնուհետեւ լրագրողները հարցեր են տալիս իրենց օրակարգերից, որոնք ստեղծվել են այն հարցերից, որոնք իրենք են կարեւոր համարում:

Քաղաքագլխի նորությունը դպրոցի նոր տնօրեն նշանակելն է եւ կենցաղային թափոնների վերամշակման ծրագիր սկսելու վերաբերյալ իր որոշումը: Շատ լավ է, ասում են լրագրողները՝ խնամքով նշումներ անելով: Այնուհետեւ նրանք հարցեր են տալիս այն մասին, թե ինչ է նախատեսվում ձեռնարկել քաղաքի փողոցներում անօթեւան մարդկանց քանակի աճի մասին եւ նահանգապետի այն պնդման մասին, թե քաղաքի բյուջեն հավասարակշված չի լինի, քանի դեռ ծախսերը 20 %-ով չեն կրճատվել:

Մամուլի եւ իշխանությունների միջեւ հարաբերություններում հատկանշական է մամուլի թերահավատությունը, համոզվածությունը, որ պաշտոնյաները երբեմն չեն ցանկանում անկեղծ լինել հասարակության հետ, որ նրանք ձգտում են հնարավորինս լավ գույներով ներկայացնել իրենց գործերն ու մտադրությունները:

Մարդկային առաջընթացը կարելի է ներկայացնել որպես իշխանության եւ թերահավատության՝ սկեպտիցիզմի փոխազդեցության արդյունք: Կոլումբոսն ու Մագելանը, Կոպեռնիկոսը, Նյուտոնն ու Էյնշտեյնը, Բեթհովենն ու Ռեմբրանդտը, Ֆրեդերիք Դագլասը, Սյուզան Բ. Անթոնին եւ Մարթին Լյութեր Քինգը համարձակվել են անկախ առաջ գնալ՝ թերահավատ լինելով ընդունված կարգերի նկատմամբ, եւ յուրաքանչյուրը դժվարությունների միջով բաց է արել նոր ուղիներ:

Թերահավատություն

Մի առիթով Լինդոն Ջոնսոնը, որն ամենեւին էլ մամուլի սիրելին չի եղել, ասել է, որ եթե ինքը մի օր քայլելով անցնի Փոթոմաքի ջրերը, թերթերն իրենց առաջին էջերում կգրեն. «Նախագահը լողալ չգիտե»:

Երբ Ջերալդ Ֆորդը Ուոթերգեյթի սկանդալից հետո հայտնվեց նախագահական աթոռին, վաշինգթոնյան լրագրողները անհան-

գստացած էին, արդյո՞ք նրա մտավոր կարողությունները բավարար են այդ պաշտոնն զբաղեցնելու համար: Երբ նրանց անհանգստությունը հայտարարությունների ձեւ ստացավ, Ֆորդը չհամաձայնեց նրանց հետ, թե ինքը նախագահ լինելու համար չափազանց տխմար է: Նա հայտարարեց, որ ինքը կուրսում լավագույն եռյակի մեջ է եղել: Որից հետո լրագրողները խնդրեցին իրենց ցույց տալ քոլեջի գնահատականների թերթիկը:

Աշխարհներից լավագույնում բոլորը շիտակ են, ազնիվ եւ ուղղամիտ: Սակայն քաղաքականության մեջ եւ շուկայում խաղագումարներն այնքան բարձր են, մրցանակներն այնքան մեծ, որ սուտն ու խաբեբայությունը սովորական ընթացակարգ են պաշտոնյաների ու բիզնեսմենների համար:

Երբ Քրայսլեր ընկերությանը մեղադրեցին, որ իրենց պաշտոնյաների օգտագործած մեքենաները վաճառվում են որպես նոր, կորպորացիայի նախագահ Լի Յաքոքան հրապարակավ ժխտեց այդ մեղադրանքը: Լրագրերն ու ռադիոկայանները տարածեցին այս կրքոտ հերքումը: Մի քանի օր անց Քրայսլերը խոստովանեց, որ այդ մեքենաների հաշվիչները ետ են պտտեցվել:

Լրագրողները սովորում են հավատալ ֆիզիկական աղբյուրներին՝ իրենց դիտարկումներին եւ իրենց հայթայթած փաստաթղթերին ու տեղեկագրերին: Նրանք սովորում են զգուշությամբ վերաբերվել մարդկային աղբյուրներին, սակայն հաճախ ստիպված են դրանք օգտագործել՝ ստուգելու եւ վավերացնելու համար, քանի որ աշխատանքային վազքի ընթացքում ժամանակը, սովորաբար, չի բավականացնում: Լրագրողներն իրենց պաշտպանում են հղումներ անելով, սակայն նրանք լավ գիտեն, որ ընթերցողներն ու ունկնդիրները հակված են ընդունելու իրենց տեսածն ու լսածը առանց տարբերակելու հղումն ու լրագրողի հաղորդած ճշմարտությունը:

Որպես կանոն լրագրողները ուշադրության չեն արժանացնում այն նյութերը, որոնց մասին գիտեն, որ ճիշտ չեն կամ էլ պահում են, միչեւ որ հաստատվի: Գոյություն ունեն նյութեր, որոնք երբեք չեն կարող ստուգվել՝ գրանցումները փակի տակ են կամ գոյություն չունեն, իսկ տեղյակ մարդիկ մեկնաբանություններ չեն անում: Այս պարագայում սկսում է գործել լրագրողի զգացողությունը, որ այստեղ ինչ-որ բան այնպես չէ:

Լրագրողները խոսում են այն զգացողության մասին, թե ինչ-որ բան սխալ է, անհիմն, ոչ ճշգրիտ: Վեցերորդ զգայարանը նրանց ասում է, որ պետք է ստուգել, հարցեր տալ եւ նորից ուսումնասիրել տեղեկությունները:

Երբ լրագրողի ունեցած տեղեկությունը ստույգ չէ, սովորական կարգն այն է, որ նա դիմում է սկզբնաղբյուրին՝ ճշտումների նպատակով: Եթե դա հնարավոր չէ, լրագրողն իր հոդվածում այդպես էլ նշում է:

Առողջ դատողություն

Բազմաթիվ լրագրողների կարծիքով, հիմնականը, որ պահանջվում է լրագրողի կարիերայի մասին մտածող երիտասարդ կանանցից եւ տղամարդկանցից, առողջ դատողությունն է: Նրանք ի նկատի ունեն գիտելիքների ու փորձի, թերահավատության ու դատողության համադրումը: Ընդամենը այսքանը, որն արդեն քիչ չէ:

Գիտելիքներ: Քանի որ լրագրությունը դեպքերի ու գաղափարների բացատրություն է, լրագրողը պետք է հասկանա նյութը, նախքան այն դառնա հոդված, ակնարկ, հաղորդագրություն կամ հայտարարություն: Երբ քաղաքային խորհրդի անդամն ասում է, թե առաջարկվող հարկը նվազական է՝ ռեգրեսիվ, լրագրողին անմիջապես պարզ է դառնում, որ այն արդարացի չէ ցածր եւ միջին եկամուտներ ունեցողների համար:

Եթե ուսումնական հաստատության անվտանգության ծառայության ղեկավարը հրաժարվում է տեղեկություններ տալ տեղի ունեցած հանցագործության կամ հաղորդել նախորդ տարվա հանցագործությունների տվյալները, ապա լրագրողը գիտե, որ նա չի կարող թաքցնել այդ տվյալները, որ նա խախտում է օրենքը: Ուսումնական թեմաներով գրող լրագրողը նաեւ տեղյակ է, որ դաշնային օգնություն ստացող ամեն մի ուսումնական հաստատություն օրենքով պարտավոր է ներկայացնել ավարտական թվանշանները:

Գովազդողին, որն ուզում է ասել, թե իջեցրել է լոլիկի կամ սպանախի պահածոյի գինը, պետք է հարցնել, արդյոք տուփի քաշը նո՞ւյնն է մնացել: Խելացի լրագրողները գիտեն, որ գների իջեցման սովորական պրակտիկան ենթադրում է տուփի կամ փաթեթի պարունակության նվազեցում, մինչդեռ գինը մնում է նույնը կամ նվազում է:

Հաշվարկենք սպանախի պահածոյի օրինակով:

Հին տուփ - 13 ունցիա, գինը՝ 79 սենթ:
Նոր տուփ - 11 ունցիա, գինը՝ 75 սենթ:

Գովազդողը կարող էր ասել. «Խնայեք 4 սենթ ամեն մի տուփի մեջ» եւ ճիշտ կլինի: Սակայն գովազդային ճարպիկ գործակալը լավ գիտե, որ քաղաքային թերթի խելամիտ թղթակիցը պարզապես կհարձակվի այս փաստի վրա: Այնպես, որ գործակալն ասում է գովազդողին. «Տեսե՛ք, եթե 13 ունցիայի գինը 79 սենթ է, ապա գնորդի վրա մեկ ունցիան կնստի 6,08 սենթ (եթե 79 սենթը բաժանենք 13 ունցիայի վրա եւ ստացված թիվը կլորացնենք): Նոր գինը 75 սենթ է բաժանած 11 ունցիայի վրա, այսինքն մեկ ունցիայի գինը 8,18 սենթ է: Գնորդը ավելի շատ է վճարում, այլ ոչ թե ավելի քիչ»:

Այժմ բոլորն էլ գոհ են: Գովազդողը, որովհետեւ փրկվեց ստորացումից, եւ գովազդային գործակալը, քանի որ նա ամրապնդեց իր կապերը գովազդողի հետ: Սակայն, բանն այն է, որ լրագրողը լավ հոդվածի հնարավորությունից զրկվեց, քանի որ գովազդային գործակալը խելամիտ դուրս եկավ:

Փորձվածները: Կինն աղիողորմ լաց էր լինում: « Իմ երեխան անհետացել է նախորդ օրը»,- հայտնեց նա երեկոյան հեռուսատեսային լուրերի ժամանակ: Երեխան կորել էր, երբ մայրը եւ նրա ընկերը հանրախանութից գնումներ էին կատարում: Դեպքը դրամատիկ էր: Չափազանց դրամատիկ՝ «Նյու Յորք թայմս»-ի լրագրող Մարսիա Չեմբերսի համար : Այդ կինը չափազանց հանգիստ էր, չափազանց պատրաստակամ էր պատմում իր պատմությունը: Չեմբերսը այցելեց ոստիկանական այն տեղամասը, որտեղ հետաքննվում էր այս դեպքը եւ հարցրեց գործով զբաղվող խուզարկուին. «Կնոջ ընկերը կասկածվու՞մ է»: Լռություն տիրեց: Խուզարկուն զարմացել էր, թե ով կարող էր այդ մասին ակնարկած լինել լրագրողին: Նա պատասխանեց, որ երեխայի այրվածքներով մարմինը գտել են տանից ոչ հեռու, եւ կնոջ ընկերը կասկածի տակ է:

Ոչ մեկն ակնարկ չէր արել: Լրագրողն էր փորձված:

Թերահավատություն: Լրագրողի հաշվարկների մեջ մտնում է նաեւ թերահավատությունը: Հարկ է ցավով նշել, որ լրագրողների մոտ զարգացել է մարդկանց մեջ ամենավատը տեսնելու բնազդը:

Դատողություն: Դժվար է սպասել, որ 22-ամյա սկսնակն ունենա վետերանի խորաթափանցությունը: Այնուամենայնիվ, առանց խոր գնահատականներ տալու ունակության եւ առանց

սուր մտքի եւ ինտուիցիայի, որ լրագրողները պետք է ունենան մեծ քանակներով, լրագրողը չի կարողանա տարբերել կարեւորն աննշանից, զեղծարարին հասարակությանը ծառայողից, կեղծն իսկականից:

Ազնվություն

Լրագրողները հավատարիմ են մնում փաստերին, ինչպիսին էլ որ լինեն հետեւանքները: Երբ Դան Ռադերը CBS հեռուստակայանով հաղորդումներ էր վարում Նիքսոնի ադմինիստրացիայի մասին, նա ահռելի ճնշումների էր ենթարկվում, որպեսզի մեղմացնի նախագահի մասին իր կամակոր ելույթները:

Հետագայում նա ասում էր, որ Սպիտակ տունն ունի «լրագրողների դեմ պայքարի մի հիանալի ջոկատ», որը ճնշում է գործադրում այն լրագրողների վրա, ովքեր հալած յուղի տեղ չեն ընդունում այն ամենը, ինչ հաղորդվում է նախագահի գրասենյակից:

Մի առիթով նա ասել է. «Եթե վաղը ես ընկնեմ բեռնատարի տակ, ինչը ես իսկապես կուզեմ, որ ասեն իմ երեխաներին, այն է, որ նրանց հայրը երբեք ոչ մեկի առաջ տեղի չի տվել, ոչ Լինդոն Ջոնսոնի, ոչ էլ Ռիչարդ Նիքսոնի»:

Պարսից ծոցի պատերազմին անմիջապես հաջորդած շիիթների ապստամբության ժամանակ Իրաքում AP թղթակից Սալահ Նասրավին մի հոդված էր պատրաստել շիիթների սուրբ քաղաք Կարբալայի ավերածությունների մասին: Նա նշել էր, որ վնասները հասցրել են իրաքյան հրետանին եւ տանկերը: Իրաքյան գրաքննությունը պահանջեց, որ նա փոխի իր գրածը՝ ավերածությունները վերագրելով դաշնակիցների ռմբակոծումներին պատերազմի ժամանակ:

Լրագրողը հրաժարվեց, իսկ Իրաքի իշխանությունները չեղյալ համարեցին նրա լիազորագրերը, փակեցին AP-ի գրասենյակը եւ առգրավեցին AP-ի արբանյակային հեռախոսը:

Լրագրողի ազնվությունը ձգվում է մինչեւ հոդվածների լեզուն: Նորությունների մասին հաղորդումները չպետք է բուն դեպքից ավելի հետաքրքիր դարձնել՝ բառերի հետ ձեռնածություններ անելով: Լրագրողը հարմարեցնում է լեզուն դեպքին: Եթե քաղաքային խորհրդի նիստը ընթացիկ հարցեր է քննարկել, ապա լրագրողը չպետք է նրան դրամատիկ երանգներ հաղորդի՝ օգտագործելով վերամբարձ արձակի միջոցները:

Հաճախ լրագրողները գործ են ունենում այնպիսի մարդկանց հետ, ովքեր սովոր չեն հարցազրույցներ տալու, ովքեր տեղյակ չեն որոշ լրագրողների կողմից օգտագործվող նենգ ձեւերին: Շերիլ Ջեյմսը «Սենթ Փիթերսբուրգ Թայմս»-ից հոդվածաշար էր պատրաստում մի լքված երեխայի մասին եւ հարցազրույցներից մեկի ժամանակ ասում է, որ լրագրության ամենաբարդ կողմերից մեկն այն է, որ «գործ ես ունենում լավ, սակայն մի փոքր պարզամիտ մարդկանց հետ, որոնց հեշտ է մոլորեցնել եւ օգտագործել սեփական նպատակներով: Դժվար է համոզված լինել, որ նրանք հասկանում են, թե ես ինչ եմ անում եւ պահել հարցազրույցների ժամանակ իմ տված խոստումները, որոնք ես անպատիժ կերպով կարող եմ խախտել»: Այս նյութը գրելը նրա համար բարոյականության քննություն է եղել:

Ինքնատիրապետում

Որքան էլ լայն գիտելիքներ ունենա լրագրողը եւ որքան էլ մեծ լինի նրա տաղանդը, եթե նա չի կարողանում պահպանել ժամկետները, ապա նրանից օգուտ չկա: Ժամկետը բացարձակ պահանջ է լրագրողի համար: Հեռագրային գործակալության համար վերջնաժամկետը ամեն րոպե է: Երբ Լինդի Ուոշբորնը գրում էր հրդեհի մասին իր նյութը, նա տեղյակ էր, որ լրագրերն արդեն պատրաստում են իրենց առաջին էջը:

Վերջնաժամկետները երբեմն հուսահատեցնող են լինում: «Ես չեմ ճանաչում գոնե մեկ լրագրողի, ով հաճույքով է լուսաբանում բեյսբոլի Համաշխարհային սերիան»,- ասում է Էդվին Փոուփը, «Մայամի հերալդ»-ի սպորտային բաժնի խմբագիրը: Խաղերը սկսվում են գիշերը, նույնիսկ ժամը 8:30-ին, որպեսզի հեռուստատեսությանը վաճառվեն գովազդային ներդիրները: Եթե խաղը երկար է տեւում, խաղի ավարտի եւ Արեւելյան ափի առավոտյան թերթերի լույս տեսնելու վերջնաժամկետի միջեւ համարյա ժամանակ չի մնում:

«Դա մեզ հուսահատեցնում է»,- ասում է «Վաշինգտոն Փոսթ»-ի սպորտային բաժնի թողարկող խմբագրի տեղակալ Ջորջ Սոլոմոնը Ռեդ Սոքս եւ Մեթս սերիայի մասին: Ուշ սկիզբը եւ ուշ ավարտը լրագրողներին անընդհատ ճնշում են:

Վերջնաժամկետին հասնելու իրենց շտապողականության պատճառով Օհայո նահանգի Քլիվլենդի «Փլեյն դիլերը» Սոքս-Մեթս խաղի վերնագիրը տպագրել էր `

Ռեդ Սոքսը հաղթել է
Դարձել է սերիա

Վերնագիրը պետք է լիներ

Ռեդ Սոքսը հաղթել է
Դարձել է սերիայի առաջատար

Սակայն նման կոպիտ սխալներ հազվադեպ են պատահում: Լրագրողները հասցնում են իրենց աշխատանքն անել՝ հակառակ վերջնաժամկետների ճնշմանը: Բեյսբոլ, թե վարչության ժողով, ակնարկ, թե թմրանյութեր վաճառողների ոստիկանական շուրջկալ, նորությունների թողարկում, թե գովազդային տեսահոլովակ. միշտ գոյություն ունի վերջնաժամկետ:

Պատահում են, այնուամենայնիվ, եւ ավելի խաղաղ րոպեներ: Իսկ երբ լրագրողը ժամանակ է ունենում, նա այն լավագույն ձեւով է օգտագործում՝ ստեղծելով նորություններ եւ հոդվածներ: Քաղաքապետարանում մեզ հանդիպած թղթակիցը հոդված կպատրաստի վարդեր աճեցնելու քաղաքագլխի հոբբիի մասին, որը կարժանանա այգեգործությամբ հետաքրքրվող խմբերի հավանությանը: Կրթության հարցերը լուսաբանող լրագրողը ակնարկ կգրի մանկապարտեզի մի կամավորի մասին, իսկ դատական թղթակիցը հարցազրույց կանցկացնի դատավորի հետ՝ հանուն դատարանի ռեֆորմի նրա կազմակերպած քարոզարշավի վերաբերյալ:

Ստեղծագործ մոտեցում, հնարամտություն

«Ժամանակ առ ժամանակ մի շշմեցնող նորություն փրկում է մեզ տաղտուկից եւ թերթը դարձնում իր գնին արժանի»,- ասում է Ջեյմս Ք.Բաթենը, Նայթ Ռիդեր լրագրային ցանցի նախագահը: «Սակայն շատ օրեր այդպիսի դեպքեր տեղի չեն ունենում: Եվ մեր ստեղծագործ մոտեցումը կամ հնարամտությունն է, հատկապես սովորական հանգիստ օրերին, որ լրագիրը դարձնում է այդքան գերող եւ այնքան անփոխարինելի...»

Հետաքրքրասիրությունը ծնում է ստեղծագործական մոտեցում:

«Ես հարցասեր երեխա եմ եղել, եւ ինձ միշտ հանդիմանել են հյուրերի անձնական գործերին խառնվելու համար»,- հիշում է

Հելեն Թոմասը, «Յունայթեդ Փրես Ինթերնեյշընալի» Սպիտակ տան ավագ թղթակիցը: Մի անգամ Թոմասը հարցրել է, թե Ռոնալդ Ռեյգանը մահափորձից հետո հիվանդանոցում ի՞նչ դոնդող է կերել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստեղծագործ աշխատանքի վճռորոշ գործոնը բարձր ինտելեկտուալ գործակիցը (IQ-ն) չէ: Իհարկե, ընդունակություններն իրենց դերն ունեն, սակայն ամենից կարեւորը հաստատակամությունն ու եռանդն են: Ստեղծագործ մարդիկ աշխատասեր են լինում:

Մենք ասում ենք, որ ստեղծագործ մոտեցում եւ հնարամտություն ցուցաբերող լրագրողը նախաձեռնող է: Այս լրագրողը հանձնարարությունների չի սպասում, այլ ինքն է գաղափարներ հղանում: Թղթակիցը, որը պատմություններ է տեսնում աշխատանքի գնալու ճանապարհին, իր տեղամասում քարտուղարուհու հետ զրուցելիս կամ վերելակում պատահական հանդիպման ժամանակ, փողոցում ու ճաշարանում, այդ թղթակիցն ապագա ունի:

Ջիմ Դուայերը պատմություններ էր գտնում Նյու Յորքի մետրոյում երթեւեկելիս: Նա այնքան պատմություններ գտավ, որ դարձավ «Նյուսդեյ»-ի մետրոյի թղթակիցը: Մետրոյում նվագող կիթառահարը նրան պատմում է. «Մարդիկ ասում են, որ ես միլիոն դոլարի արժանի ձայն ունեմ, ի՞նչ եմ անում ես մետրոյում: Ես մի աղջիկ ունեմ եւ կին: Ես կարող եմ օրվա հացս հոգալ: Ես հարուստ չեմ: Ես գիտեմ, որ օրհնված եմ եւ անում եմ այն ամենը, ինչը ինձնից է կախված»: Դուայերը ականատես է լինում կարճ տեսարանների՝ 4-ամյա տղան ձեռքով է անում ոստիկանական սպային, որն ի պատասխան ողջունում է երեխային: «Փոքրիկ տղաները դեռ ձեռքով են անում ոստիկաններին,- ասում է ոստիկանը: - Դա հաճախ է պատահում: Ինձ դուր է գալիս»:

Հայտնաբերել միտումները: Լրագրողերն իրենց հնարամտությունը ցույց են տալիս նաեւ հայտնաբերելով միտումները, ուժեղ «ընդերքի հոսանքները», որոնց հիման վրա ստեղծվում են ուշադրության արժանի նյութեր: Վերցնենք, օրինակ, աճող հետաքրքրությունը կրոնի նկատմամբ: Նախկին հիպիները, որոնք այժմ հաջողակ բիզնեսմեններ են, ծնված 1946 եւ 1964 թվականների միջեւ, ավելի կրքոտ հետարքրություն են ցուցաբերում կրոնի նկատմամբ, քան իրենց ծնողները: Ինչո՞ւ: Ինչպե՞ս է այն դրսեւորվում: Արդյոք նրանք հարում են խարիզմատիկ կամ Փենթեքոսթալ՝ հիսնականների աղանդների՞ն, թե՞ մնում են հիմնական կրոնների հետ:

Շերիլ Ջեյմսը պատմում է, որ Պուլիտցերյան մրցանակ շահած իր «Լքված ընծան» հոդվածաշարի գաղափարը ծագել է այն ժամանակ, երբ նա միտում է հայտնաբերել: «Մեկ տարուց ավելի Հարավային Ֆլորիդայում նկատվում էր մի ողբերգական միտում՝ մայրերը լքում էին իրենց երեխաներին: Շատ բնական թվաց զբաղվել այդ դեպքերից մեկով»: Նա գրեց մի մոր պատմություն, որն իր նորածին տղային թողել էր տուփի մեջ՝ Թամփա արվարձանի աղբարկղների մոտ:

Փնտրել գաղափարներ: Լրագրողներն իրենց նյութերի համար գաղափարներ են զարգացնում՝ ուսումնասիրելով մարդկանց հուզող հարցերն ու հետաքրքրությունները: Ներկայացնում ենք մի քանի խնդիրներ, որոնք այսօր հուզում են ամենքին:

Առողջապահություն: Միացյալ Նահանգներում ավելի քան 37 միլիոն մարդ բժշկական ապահովագրություն չունի, իսկ 25 միլիոնի ապահովագրությունը լրիվ չէ: Երեխաների մահացության մակարդակով ԱՄՆ-ն աշխարհում գրավում է 25-րդ տեղը: Քաղաքներում առողջապահական լուրջ խնդիրներ են ԴԱՎ-ը, ալկոհոլիզմը եւ թմրամոլությունը: Կյանքի տեւողությունն ավելացել է, եւ ավելի մեծ միջոցներ են պահանջվում հարկերի հաշվին գործող առողջապահական ծրագրերի համար, որոնք արդեն առանց այդ էլ գերլարված են: Ովքե՞ր են առաջինը օգնություն ստանում, եւ ովքե՞ր դրա կարիքն ավելի շատ ունեն:

Ընտանիք: 1950-ական թվականներից ի վեր աշխատող կանանց թիվը եռապատկվել է՝ հասնելով 58 միլիոնի: Այսօր մինչեւ 6 տարեկան երեխա ունեցող կանանց 60 տոկոսն աշխատում է տանից դուրս: ԱՄՆ-ում ընտանիքների միայն 7 տոկոսում մայրը տանն է, իսկ հայրը միակ դրամ վաստակողն է: Համարյա 2 միլիոն չամուսնացած զույգեր ապրում են համատեղ: Ամեն տարի 1,2 միլիոն ամուսնալուծություն է գրանցվում՝ ընդգրկելով 1 միլիոն երեխա: Որոշ խմբեր ձգտում են խստացնել ամուսնալուծությունները կարգավորող օրենքները: Մինչեւ 18 տարեկան երեխաների մեկ քառորդն ապրում է միայն մեկ ծնողի հետ: Սեւամորթ երեխաների համար այդ թիվը հասնում է 60 տոկոսի: 18-ից 24 տարեկանների կեսն ապրում է տանը ծնողների հետ, իսկ 23 միլիոն ամերիկացիներ ապրում են միայնակ:

Կրթություն: Համազգային քննության ժամանակ ամենացածր

միավորները ստանում են ցածր եկամուտ ունեցող միայնակ ծնողների երեխաները: Մարդիկ համոզված են, որ ԱՄՆ-ի կրթական համակարգում լուրջ թերություններ կան: Միջնակարգ դպրոցներն ավարտում են անգրագետներ, ավելի ու ավելի քիչ թվով ուսանողներ են ուսումնասիրում գիտություններ, մաթեմատիկա եւ օտար լեզուներ: Ութերորդ դասարանցիներից յոթից միայն մեկն է ութերորդ դասարանի մաթեմատիկայից հմուտ: Միջին խավն աճող տեմպերով երեխաներին ուղարկում է մասնավոր դպրոցներ եւ, որպես հետեւանք, պետական դպրոցների բարգավաճմամբ ամենից շահագրգիռ այդ խավն իր հետաքրքրությունը կորցնում է պետական կրթության նկատմամբ: Ուսուցիչներին հանձնարարում են գործեր, որոնք միշտ համարվել են ընտանիքի պարտականությունը, եւ , միեւնույն ժամանակ, հարկատուները ընբոստանում են, եթե պետք է վճարեն կրթության ծախսերի համար:

Փող: Բոլորին անհանգստացնում է այս հարցը: Թվում է, թե ոչ մեկը բավարար քանակով դրանից չունի, իսկ ոմանք չունեն ոչինչ: Արդյոք այն մարդիկ, ովքեր տարեկան վաստակում են 100 000 կամ 500 000 դոլար, ազնվորեն վճարո՞ւմ են իրենց հարկերը: Երեխաների հինգերորդ մասը մեծանում է աղքատության մեջ, փոքրահասակ հղիությունները եւ ապօրինի ծնունդները սովորական երեւույթ են հասարակության որոշ հատվածներում, որն, ինչպես ասում են, «աղքատության մշակույթի» հետեւանք է: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի տնտեսությունը արտադրությունից շարժվում է դեպի ծառայությունների ոլորտ, կապույտ օձիքներից դեպի սպիտակ օձիքներ: Յուրաքանչյուր բնակավայր եւ բազմաթիվ ընտանիքներ իրենց վրա զգում են այս միտումի հետեւանքները:

Ռասիզմ: Չնայած քաղաքացիական իրավունքների համար պայքարին, ի հեճուկս օրեքների եւ կրթական ծրագրերի, ռասիզմը տարածված է եւ կարող է ընդլայնվել: Ինչու՞ է այսպես եւ որո՞նք են դրա հետեւանքները:

Սրանք, թվում է, հսկայածավալ խնդիրներ են, չափազանց բարդ այն լրագրողի համար, որին երեկոյան լուրերի թողարկման ժամանակ երկու րոպե է տրվում կամ լրագրում՝ 750 բառ: Իրականում, դժվար չէ այս հարցերը ներկայացնել մարդկանց հասկանալի լեզվով, գտնել անհատներ եւ խմբեր, որոնք այս միտումների ու զարգացումների կրողներն են:

Աղքատության մասին պատմելիս, գտեք ընտանիք, որը մեկ ամբողջ ամիս յոլա է գնալու աշխատող մոր աշխատավարձի համեստ չեկով կամ նպաստով: Ինչո՞վ է սնվում այդ ընտանիքը: Ի՞նչ են հագնում երեխաները: Մի կարիքավոր ընտանիք կարող է չափազանց շատ ծախսել ոչ այնքան անհրաժեշտ սննդի կամ զվարճալիքների վրա: Մինչդեռ մեկ այլ ընտանիք կարող է ղեկավարել խելացի մայրը, որի ջանքերը կոգեւորեն շատերին:

Հաստատակամություն

Այս պատմություններից շատերի համար տեղեկություններ հավաքելը եւ նյութը պատրաստելը շատ երկար ժամանակ է պահանջել: «Սենթ Փիթերսբերգ Թայմս»-ի թղթակից Թոմաս Ֆրենչը մեկ տարի է անցկացրել Լարգոյի միջնակարգ դպրոցում՝ աշակերտների կյանքին նվիրված հոդվածաշարի համար նյութ հավաքելու նպատակով:

Յոթ մասից կազմված պատմության մեջ նկարագրվում էին երիտասարդներ, որոնք ի ցույց են դնում ոսկյա զարդեր եւ իրենց հետ ման են տալիս փեյջերներ, մի փայլուն աշակերտ, որ լատիներենի դասին Կիկերոն է թարգմանում, երիտասարդ աղջիկներ, որ քննարկում են իրենց այցերը հղիության ընդհատման կլինիկա, տղաներ, որոնք երբեք չեն ճանաչել իրենց հայրերին եւ խստապահանջ ու օրինապահ ծնողների երեխաներ:

«Դպրոցը դարձել է մի վայր, որտեղ տագնապահարույց թվով աշակերտներ հրաժարվում են մասնակցել որեւէ հանձնարարության, եթե հարկավոր է դրան ավելի շատ ուշադրություն հատկացնել, քան Համերի կամ Ուիլսոն Ֆիլիպսի վերջին տեսահոլովակներին», - գրում է Ֆրենչը:

Որոշ աշակերտներ ավտոկանգառ են մտնում այնպիսի մեքենաներով, որոնք «բառացիորեն ցնցվում են ձայնագրիչներից եկող ձայներից»: Աշակերտների մեքենաները «սարքավորված են մինչեւ 1000 վատ հզորության ստերեոներով, իսկ նրանց լսածն այժմ 2 Լիվ Քրուն է»:

Մի այլ երկարաժամկետ ծրագիր էր ձեռնարկել Մեմֆիսի «Քոմերշըլ Ափիըլ»-ը:

Լրագիրը երկու թղթակից եւ մեկ լուսանկարիչ էր գործուղել Միսիսիփիի Թունիքա վայրը, որը Ջեսի Ջեքսոնը նկարագրել էր որպես «Ամերիկայի Եթովպիա»: Թունիքան թշվառության խորհրդանիշն էր Միացյալ Նահանգներում:

Թղթակիցներից երկուսը սպիտակամորթ էին՝ լուսանկարիչ, Միսիսիփիում ծնված Ջեֆ Մաք Ադորին եւ Քեւին Քիթրիջը, որի տեղամասի մեջ էր մտնում Թունիքան: Մյուս թղթակիցը Չելեստա Ուիլյամսն էր, սեւամորթ մի կին, որ ծնվել էր Նյու Յորքում, դպրոցն ավարտել Դեթրոյթում եւ սովորել էր Ինդիանա նահանգի Բոլ համալսարանում (Մունսիում):

Ժամանում Թունիքա

Ահա Ուիլյամսի օրագրի առաջին գրառումը՝

Ժամանեցինք Թունիքա: Տարօրինակ զգացողություն է ստամոքսիս մեջ, նման է այն զգացողությանը, երբ մտնում ես մութ սենյակ՝ տարօրինակ անհայտ զգացում, հավանաբար վախ: Մի զարմանալի զգացողություն եւս՝ Մեմֆիսն ընդամենը 30 մղոն հեռավորության վրա է, սակայն կարծես թե հայտնվել ես օտար երկրում: Երբ մենք բեռնաթափում էինք մեքենան, երեք երիտասարդ՝ մի տղա եւ երկու աղջիկ, կանգ առան մեր վարձած տան կողքին: Տղան, անունը կարծեմ Դերեք, ծղոտով զովացուցիչ ըմպելիք էր խմում եւ անկեղծ ու ջերմ ժպտում մեզ, իսկ աղջիկները կանգնել էին մի կողմ եւ ժպտում էին ավելի ամաչկոտ: Դերեքն ասաց, որ սովորում է Ռոզա Ֆորթ դպրոցի վերջին դասարանում: Ասաց, որ ուզում է լավ աշխատանք գտնել, գուցե հիմնի շինարարական ընկերություն եւ վերակառուցի Թունիքայի տները: Ես նայեցի շրջապատի տներին: Մտապահեցի Քաղցրիկ Առուն: Եվ նրան հաջողություն մաղթեցի:

Լրագրողներն ուսումնասիրեցին Միացյալ Նահանգների ամենաաղքատ կոմսության համայնքային կյանքի ցուցանիշները՝

Եկամուտ - Եկամտի հիմնական աղբյուրը պետական օգնությունն է, մեծ մասամբ նպաստները: Ընտանիքի միջին եկամուտը տարեկան 6620 դոլար է, մինչդեռ ԱՄՆ-ում ընտանիքի միջին եկամուտը հավասար է 17710 դոլարի:

Կրթություն - Դեռեւս խտրական է, ոչ թե օրենքով, այլ բնակության վայրի ավանդույթներով:

Առողջապահություն - Սեւամորթների մոտ մանկական մահացության մակարդակը 1000 կենդանածնին 31 մահվան դեպք է, սպիտակների մոտ՝ 11: Պատճառները՝ աղքատություն եւ տգիտություն: Սովորական երեւույթ է դեռահասների հղիությունը:

«Այստեղ հղի դեռահասների ճնշող մասը սեւամորթներ են, աղքատ ու չամուսնացած: Նրանք տեղեկությունների չեն ստանում ընտանիքի պլանավորման մասին, իսկ նախածննդյան բուժսպասարկման սպասում են ամիսներով», - գրում է Ուիլյամսը: «Ես այստեղ ամեն ինչ տեսել եմ ու լսել,- ասում է հիվանդանոցի աշխատակիցը, սակայն ընդունում է. «12 տարեկան ծննդաբերող աղջնակները դեռեւս ցնցում են ինձ»:

Աշխատանք - «Յուրաքանչյուր 100 ընտանիքից 45-ը պաշտոնապես համարվում է աղքատ: Համարյա բոլոր աղքատները սեւամորթներ են»:

Քաղաքականություն - 73 տոկոս սեւամորթ բնակչություն ունեցող կոմսությունում սպիտակները մեծամասնություն են կազմում քաղաքային եւ կոմսության բոլոր վարչություններում, բացի ընտրական հանձնաժողովից: Մի հոդվածում մեջբերված էր Միսիսիփիի համալսարանի պատմության պրոֆեսորի խոսքը. «Քանի դեռ դուք ունեք տնտեսական կախման մեջ գտնվող բնակչություն, դուք միշտ ենթակա կլինեք առնվազն ոչ ֆորմալ, չքննարկվող եւ չգիտակցված ճնշումների, եթե որոշեք իրականացնել ձեր քաղաքական իրավունքները»:

Սառն ընդունելություն: Ինչպես պարզվեց, սեւամորթները մեծ մասամբ ուրախ էին տեսնելու լրագրողների խմբին, սակայն սպիտակ պաշտոնյաները հրաժարվում էին հարցազրույցներ տալ: Նրանք գանգատվում էին, որ նախորդ հոդվածները անախորժություններ են բորբոքել:

Բայց եւ այնպես, լրագրողներին հաջողվեց խորանալ սեւերի ու սպիտակների առանձնացած աշխարհների մեջ: Նրանք զրուցեցին բարեկեցիկ սպիտակների հետ եւ երկու-երեք երեխա ունեցող անչափահասների հետ, ինչպես նաեւ գնացին եկեղեցի: Ահա նրանց պատմությունը:

Եկեք աղոթենք:

Գերապատիվ Հոլմսը սովորական տեսք ունի՝ կարճահասակ, բեղերով, մազերի նոսրացող գծով, ճակատը անվերջ մտահոգություններից ակոսներով պատված: Սակայն, նա ինձ համար դեռեւս հանելուկ է: Ես ընդհատում եմ նրա կիրակնօրյա դպրոցի դասը Աֆրիկյան Մեթոդիստական Եպիսկոպոսական եկեղեցում՝ մոտավորապես 10:45-ին ներս սողոսկելով ետեւի դռնից: Սենյակի մյուս դռան մոտ կանգնած են գերապատիվ Հոլմսը եւ եղբայր Փիսը՝ մի թմբլիկ, հնչեղ ձայնով սեւամորթ մարդ: Գերապատիվ Հոլմսը ողջունում է ինձ մի քիչ նյարդային ժպիտով՝ անհանգստացած լրագրողի ներկայությունից:

Ես նստում եմ երկրորդ շարքում Ջեֆի ու Չելեստայի կողքին: Առաջին երկու- երեք շարքերը կիսով չափ զբաղեցրել են փոքրիկ երեխաներ ու մի քանի մեծահասակներ, հիմնականում կանայք: Աղջիկների «Արեւի շողիկներ» երգչախումբն արդեն տեղավորվել է ամբիոնի ետեւում՝ ժամը 11-ի ժամերգության համար:

Մեզ խնդրում են ներկայանալ, այդ մասին Չելեստան ինձ զգուշացրել էր:

Ջեֆը ժպտալով կանգնում է:

«Բարի լույս: Իմ անունը Ջեֆ Մաք Ադորի է: Ես այցելության եմ եկել Թունիքա եւ երջանիկ եմ, որ կարող եմ ձեզ հետ միասին աղոթել այստեղ Աստծո տված այս հոյակապ օրը»:

Սրանից հետո շարունակելը դժվար է: Երբ իմ հերթն է գալիս, ես պարզապես ասում եմ իմ անունը:

Ժամերգությունը սկսվում է: Շատ են երգում, հենց սկզբից միանգամից երեք երգ: Եկեղեցին դեռեւս կիսով չափ դատարկ է, սակայն երգողները չեն քաշվում, եւ երգերը հնչում են բարձր ու անկաշկանդ: Իմ առջեւ նստած հաղթանդամ կինը երգում էր ցածր հարմոնիաները, իսկ տիկին Գրանթը՝ հուղարկավորման գրասենյակի տնօրենի կինը, լրացնում է նրան իր հիանալի սոպրանոյով:

Քարոզի ժամանակ գերապատիվ Հոլմսը խոսում է երգեցիկ ոճով, որի նմանը ես երբեք չէի լսել, սակայն Չելեստան ասում է, որ դա տարածված է սեւամորթների եկեղեցիներում: Նախադասությունը սկսվում էր բավականին բարձր նոտայով եւ մեկ երրորդով նվազում էր եզրափակիչ վանկի վրա՝ առաջ բերելով ռեզոնանս եւ դողալով վիբրացիաներից: Դա նման էր հանպատրաստից երգի:

Ժամերգության վերջում գրեթե բոլոր ներկա եղողները մոտեցան մեր ձեռքերը սեղմելու եւ ողջունելու:

Ես եկեղեցուց դուրս եկա հոյակապ տրամադրությամբ:

Քեւին Քիթրիջ

Արդյունքները: Մամուլի ուշադրությունն օգնեց: Այն հյուղակները, որտեղ շատ սեւամորթներ էին ապրում փոխարինվեցին,

բաց առուն, որը թափոններ էր տեղափոխում Քաղցրիկ Առվի Մայրուղու երկարությամբ, մաքրվեց: Բալելավումները ներկայացնում ենք Թունիքայի առանձին բնակիչների օրինակով:

Թունիքա, Միսիսիփի: - Քրիսթին Բելի փայտ հայթայթելու ջանքերը, որպեսզի վառարանում կրակ ունենա եւ իրեն ու իր երեք երեխաներին տաքացնի, երեկ ավարտվեցին, երբ նա բացեց իր նոր բնակարանի դուռը...

Որոշ ընտանիքների համար, ինչպիսին Անդրյու Ջոնսն ու իր կինն են, նոր բնակարանը նշանակում է վերջին 12 տարիների ընթացքում առաջին անգամ հոսող ջուր ունենալ: Ուրիշների համար, ինչպիսին Դորիս Մուրը եւ նրա 10-ամյա որդի Ադրիանն են, դա առաջին ապրելավայրն է, որը նրանք կարող են կոչել իրենցը...

Նվիրվածություն

Կան մարդիկ, ովքեր լրագրող են դառնում, որովհետեւ մեծ ցանկություն ունեն բացահայտելու անարդարությունները: Անկասկած, այս էր «Քոմերշըլ Ափիըլի» աշխատակիցների գործողությունների դրդապատճառը: «Նյու Յորք Թայմս»-ի նախկին գործադիր խմբագիր Ա. Մ. Ռոզենթալը համոզված է, որ լրագրողների մեծ մասը վերափոխիչներ են՝ ռեֆորմատորներ: Նրանց համար հատկանշական է կարեկցանքի խոր զգացումը: Հակառակ մարդկանց մեծ մասի, որոնք բախվում են անարդարությունը որեւէ կերպ վերացնելու հուսահատության հասցնող անկարողության հետ, լրագրողները կարող են գործել: Այս իմաստով, լրագրությունն այնպիսի մասնագիտություն է, ինչպես ուսուցչությունը կամ բժշկությունը, որովհետեւ այն ձգտում է ծառայել հասարակությանը:

Պայքար ցրտի դեմ: Լսենք Մարի Էնն Ջիորդանոյին «Դեյլի Նյուսից», որը պատմում է թշվառության ճիրաններում հայտնված մի ընտանիքի նվիրված իր հոդվածների մասին :

«Դեյլի Նյուս»-ի Բրուքլինի բյուրոյի գրասենյակում ցուրտ էր: Կիրակի էր, իսկ տանտերը «ուիքէնդներին» սովորաբար ջեռուցումը չէր միացնում: Ահավոր ցուրտ օր էր, հատկապես անտանելի, քանի որ ձմեռն արդեն ավարտվում էր, եւ ցածր ջերմաստիճաններն անսպասելի էին:

«Երբ մենք աշխատում էինք մեզ տաքացնել, իմ խմբագիրն առաջարկեց, որ մի նյութ պատրաստենք այնպիսի մի ընտանիքի

մասին, որը տաքանալու հնարավորություն չունի: Համար մեկ խնդիրն այդպիսի ընտանիք գտնելն էր, մի բան, որ շատ դժվար չէր, քանի որ այդ օրերին Բրուքլինում անհաշիվ թվով մարդիկ սառնամանիքին ապրում էին առանց ջեռուցման ու տաք ջրի»: Ջիորդանոն մի կին գտավ, որը զանգել էր քաղաքային խորհուրդ եւ բողոքել, որ իրենք ջեռուցում ու տաք ջուր չունեն:

«Բեդֆորդ-Սթայվեսանթ թաղամասը փաստորեն լքված էր սառնամանիքի մեջ: Ուոլքերների տուն տանող աստիճանները մութ էին ու ճռճռան: Սակայն երբ ես հասա Ուոլքերների բնակարանը, խոհանոցում, ուր նստած էր Մարի Ուոլքերը՝ շուրջը եռացող ջուր, իսկ օջախի դուռը բաց, զարմանալիորեն տաք էր:

Ուոլքերները աշխույժ, ուրախ, բարյացկամ մարդիկ էին: Չնայած իրենց հասած դժվարություններին, նրանք կարողանում էին այդ մասին կատակել: Երեխաները դաստիարակված էին, իսկ բնակարանը՝ անթերի մաքուր:

Ընտանիքի անդամների հետ զրույցներից եւ նրանց վերաբերող փաստաթղթերի արագ ուսումնասիրությունից ես կարողացա իմի բերել, թե ինչպես են այսքան լավ մարդիկ յոլա գնում՝ ապրելով լքված շինության մեջ, առանց ջեռուցման, տաք ջրի, զուգարանի, առանց դռան կողպեքների, իսկ հարեւաններն առնետներն են ու թմրամոլները, եւ մշտական վախ ունեն այդ հարեւաններից»:

Ջիորդանոն երկու ժամ անցկացրեց Ուոլքերների ընտանիքի հետ: Նրանք բոլորն էլ վերարկուներով փաթաթված նստել էին նախասենյակում, ուր արեւի մի քանի շողեր տաքացնում էին հատակը նրանց ոտքերի մոտ:

«Ես այժմ կարող էի հասկանալ, թե նրանք ինչպես են հայտնվել այս դրության մեջ: Եվ ես շատ սիրեցի Ուոլքերներին»:

Այնուհետեւ Ջիորդանոն պետք է մտածեր իր հոդվածի մասին: «Գրասենյակ վերադառնալու ճանապարհին ես աշխատում էի մտքերս հավաքել,- հիշում է նա: -Ես գիտեի, որ կարեւոր է նկարագրել բնակարանի ցուրտը, իսկ ցույց տալ, թե ինչպես են Ուոլքերները հաղթահարում այն, հոդվածի հիմնական մասն էր լինելու:

Ես գիտեի նաեւ, որ մարդկանց կհետաքրքրի, թե ինչու են Ուոլքերներն այդպես ապրում, եւ դա նույնպես պետք է բացատրել:

Երբ ես վերադարձա խմբագրություն, հոդված գրելու համար իմ տրամադրության տակ կար 45 րոպե: «Նյուսը» տպագրեց իմ նյութը այնպես, ինչպես ես գրելի էի, բառ առ բառ»:

Ահա, թե ինչպես է սկսվում Ջիորդանոյի հոդվածը.

Մարի Ուոլքերի խոհանոցում տաք է ու լուսավոր: Հին գազօջախի վրա բոցկլտում են չորս կրակ եւ անընդհատ եռում է պղինձով լի ջուրը: Ջեռոցի դուռը բաց է, դիմացը նստած է Մարին՝ կիսագուլպայով ոտքերը հենած դռնակին, որ գազի ջերմությունից կրունկները տաքանան:

Դա բնակարանի միակ տաք կետն էր, միակ տեղն ամբողջ շենքում, ուր տաք շնչառությունից գոլորշու քուլաներ չեն բարձրանում:

Նախասենյակում, ուր լուսամուտից ներս են թափանցում արեւի շողերը, ջերմաչափը ցույց է տալիս 52 աստիճան: Դա տաք է, ասում են Ուոլքերները: Շաբաթ օրը 39 աստիճան է եղել:

Այնքան ցուրտ է, որ Բեդֆորդ-Սթայվեսանթի Գեյթս պողոտայի համար 587 չորս հարկանի շենքում խողովակները պայթել են, եւ Ուոլքերների ընտանիքի յոթ անդամները պետք է հերթով ջուր բերեն փողոցում գտնվող ծորակից…

Քաղաքի պաշտոնյաները արձագանքեցին Ուոլքերների ծանր վիճակին եւ խոստացան նրանց համար հասարակական բնակարան գտնել: Քաջ գիտենալով, թե որքան դանդաղ են պտտվում քաղաքային խորհրդի անիվները, Ջիորդանոն անընդհատ հետեւում էր այս հարցին եւ երեք շաբաթ անց գրեց իր երկրորդ հոդվածը, որը սկսվում է այսպես՝

Ջրագիծը դեռ չի աշխատում, ջեռուցում դեռեւս չկա, ներքեւի հարկերում ազատ ման են գալիս առնետներն ու թմրամոլները, իսկ Ուոլքերների ընտանիքը՝ Բեդֆորդ-Սթայվեսանթից, դեռ սպասում է կարգին բնակարանի:

«Դեյլի Նյուսում» հոդվածի (այնտեղ մանրամասն նկարագրվում էր Ուոլքերների ընտանիքի յոթ անդամների ծանր կացությունը) լույս տեսնելուց երեք շաբաթ անց նրանք դեռ դեգերում են բնակարանային օրենսդրության լաբիրինթոսում, մի դաժան իրողություն, որին բախվում են Նյու Յորքի բնակիչները՝ տանելի բնակարանների իրենց որոնումների ընթացքում…

Երկրորդ հոդվածին հետեւեցին կոնկրետ գործերը: «Կարճ ժամանակ անց Ուոլքերներն արդեն ապրում էին ավելի լավ բնակարանում, - պատմում է Ջիորդանոն: - Անցյալ ձմեռը նրանք դիմավորեցին առանց ցրտից վախենալու եւ այժմ ապրում են ապահով՝ բոլոր նյույորքցիների նման»:

Գործն ավարտին հասցրած լինելու զգացումը, օգուտ տալու հնարավորությունը լրագրողների ամենամեծ պարգեւն է:

Պայքար մանկական մահացության դեմ: Ֆիբի Զերվիքի համար այն փաստը, որ Հյուսիսային Կարոլինայում մանկական մահացության ամենաբարձր մակարդակն է ԱՄՆ-ում, ավելին էր, քան վիճակագրական տվյալ: Դա խթան էր այնպիսի գործողությունների, որոնք կարող էին կյանքեր փրկել: Նա նկարագրեց իրավիճակը նահանգի արեւելյան մասում, որտեղ մահացության մակարդակն ամենից բարձրն էր: Եվ նա գտավ «թշվառության, անբավարար բժշկական օգնության եւ անհուսության մի ժառանգություն»: Նրա հոդվածները «Ուինսթոն Սալեմ Ջորնալում» հասարակության եւ նրա պատասխանատուների ուշադրությունը բեւեռեցին այդ կարեւորագույն խնդրի վրա:

Սթիվ Ջենինգի համար միայն լրագրությունը բավական չէր, նա ձգտում էր ավելի ակտիվ դեր կատարել փոփոխությունների հասնելու գործում: Մի քանի տարի «Ասոշիեյթիդ Փրեսում» աշխատելուց հետո, նա սկսեց պետական պաշտոնյայի իր կարերան՝ դառնալով Կոնգրեսի մի ենթակոմիտեի աշխատակազմի ղեկավարը:

Այս աշխատանքը նրան հնարավորություն էր տալիս ուշադրություն հրավիրել դիետաների վտանգավորության, բժշկական լաբորատորիաների անբավար սարքավորման եւ դեղանյութերի վտանգավոր թափոնների վրա:

Ջենինգի պետական աշխատանքի շնորհիվ «Վաշինգթոն Փոսթում», «Նյու Յորք Թայմսում» եւ «Ուոլ Սթրիթ Ջորնալում» տպագրվեցին նշանակալի հոդվածներ, որոնք հանգեցրեցին օրենսդրական բարեփոխումների:

Մրցակցել Օրուելի հետ: Որոշ լրագրողների համար բրիտանացի գրող Ջորջ Օրուելը, որն աշխատել է ներկայացնել գլխիվայր շրջված մի խելակորույս աշխարհ, կատարյալ լրագրող է: Օրուելի լրագրությունը օրինավորության կողմն է, եւ նա գիտե, որ մարդկանց հասկանալի լինելու համար, ինքը պետք է գրի պարզ ու հասարակ, չնայած նա հաճախ գրում էր բարդ երեւույթների մասին:

Իր «Անասնաֆերմա» եւ «1984» վեպերում, որտեղ նկարագրվում են ամբողջատիրական հասարակարգերի սարսափները, Օրուելը շեշտը դնում է անկախության վրա: Նա համոզված էր, որ լրագրողը երբեք չպետք է առանց կասկածելու ընդունի նույնիսկ մի տող՝ ձեւակերպված որեւէ կուսակցության կամ հեղինակավոր անձի կողմից: Լրագրողը պետք է ինքնուրույնաբար հետեւություններ անի:

Վստահություն, նախաձեռնություն

Խմբագիրների ու լրագրողների հետ զրույցների ժամանակ հաճախ խոսվում է վստահության մասին: Եթե լրագրողին հանձնարարել են նյութ գրել, ապա նա աշխատում է այնքան, միչեւ որ այն պատրաստ լինի տպագրության կամ հաղորդման համար: Հասարակությունը վստահում է, որ լրագրողն իրենից կախված ամեն ինչ կանի, ինչպիսին էլ լինեն հանգամանքները:

Գաղափարներ հղանալիս լրագրողը ցույց է տալիս իր նախաձեռնությունը եւ անխոնջ ու համարձակ հետեւում է պատմությանը: Նոթր Դամ քոլեջն ավարտելուց մի քանի ամիս անց Ֆիլ Քոքլիին աշխատանքի ընդունեցին «Ալբուքերք Թրիբյունում» եւ վստահեցին Նյու Մեքսիկոյի համալսարանի տեղամասը:

«Երբ ինձ նշանակեցին այդ տեղամասում, ես առանձնապես նշանակալի նյութերի չէի սպասում,- պատմում էր Քոքլին: - Իմ առաջին հոդվածը մի ուսանողի մասին էր, որը կարողացել էր «որբ» ձվից բադիկ ստանալ»:

Սակայն Քոքլին նախաձեռնող էր ու խորամուխ լինող: Մի քանի ամիս անց նրա նախաձեռնությունը պտուղներ տվեց: Նա մոռացությունից հանեց ակադեմիական մի սկանդալ՝ կապված սպորտային ֆակուլտետի հետ: Քոքլին հայտնաբերեց, որ մի քանի մարզիկների թվանշանները կեղծվել են, որպեսզի նրանք իրավունք ունենան մասնակցելու մրցումներին:

Իր հոդվածներում Քոքլին պետք է բացարձակապես ճշգրիտ լիներ: Խմբագիրները կախված են իրենց թղթակիցներից. վերջիններս երբեք չպետք է գուշակություններ անեն, ոչինչ չպետք է ենթադրեն, հնարավորին չափ ամեն ինչ պետք է ստուգեն: Լինի դա որեւէ բառի գրություն, ինչ-որ հասցե հոդվածի համար, թե ճանապարհային պատահարի ժամանակ տեղի ունեցած մահվան դեպքի կապակցությամբ հարուցված մեղադրանք, լրագրողը ստուգում ու ստուգում է կրկին:

Իսկական ճշգրտություն

Այն գիտակցությունը, որ մարդիկ գործում են իրենց կարդացածի հիման վրա, լրագրողներին ստիպում է պահպանել ճշգրտության բարձր չափանիշներ: Լրագրողները ձգտում են մարդկանց այնպիսի տեղեկատվություն տալ, որ նրանք ապրեն երջանիկ, լիարժեք կյանքով, տեղեկություններ, որ կօգնեն նրանց խելացի ծախսել իրենց դրամը, համերաշխ ապրել հարեւանների հետ, հասնել իրենց նպատակներին:

Մեկնաբանությունը, որտեղ ասվում է, թե 25 դոլարարանոց տոմսերով ռոք համերգը թալան է, տեղեկատվական հաղորդումը, որտեղ ներկայացվում է նահանգապետության թեկնածուի նախընտրական ծրագիրը, խմբագրականը, որը համոզում է կողմ քվեարկել դպրոցական փոխառությանը, ավտոմոբիլային դողերի մեկշաբաթյա աճուրդի գովազդը՝ մարդկանց ապահովում են այնպիսի տեղեկություններով, որոնք նրանք կարող են օգտագործել: Իսկ քանի որ այս դաժան ու անմարդկային աշխարհում մարդ մնալու համար մենք պետք է ծիծաղենք, ապա երեքթաթանի, կիսակույր Լաքի շան մասին պատմությունը նույնպես կօգնի մեզ:

Ճշգրտությունը անաչառ դիտարկումների գործառույթն է: Լրագրողները հեռվից նայում են այն հպանցիկ տեսարանին, ինչն օգնում է նրանց տեսնել պարզ, անկողմնակալ եւ առանց կանխակալության, առանց անձնական վերաբերմունքի ու նախօրոք կազմած կարծիքի աչքակալների:

Անաչառություն

Լրագրողի կանխակալության բացակայությունը մենք անվանում ենք օբյեկտիվություն՝ անաչառություն, եւ դա լրատվության այն բաղադրիչն է, որը թույլ է տալիս, որ փաստը ընթերցողին մատուցվի առանց լրագրողի կարծիքների, զգացմունքների, եզրակացությունների ու կռահումների: Չնայած իրենց մասնակցությանը այլ մարդկանց գործերին, լրագրողները կարողանում են այդ մարդկանցից, ինչպես նաեւ դիտարկվող դեպքերից որոշակի հեռավորության վրա մնալ:

«Դունսբերի» երգիծական էջի հեղինակ Գերի Թրյուդոն ասում է, որ ինքն ավելի մեծ հաջողությամբ է գաղափարներ հղանում լինելով դրսի մարդ, քան՝ եթե բարեկամանար կարեւոր մարդկանց հետ: Թրյուդոն նշում է, թե ինքն ուզում է, որ իր աշխատանքը ներկայացնի ժուռնալիստական մոտեցումը, այսինքն լինի այնպիսին, կարծես մեկը դրսից հայացք է նետում մարդկանց գործերին:

Լրիվ մեկուսացումը երբեմն անհնարին է: Երբ Սիրսի հանրախանութում կորավ վեցամյա Ադամ Ուոլշը, Ֆլորիդա նահանգի Հոլիվուդ քաղաքից, «Սան-Թաթլեր»-ի թղթակից Չարլի Բրենանը որոշեց մոտիկից հետեւել այս պատմությանը, եւ թերթն իր համաձայնությունը տվեց:

Երկու շաբաթ ամեն օր Բրենանի նյութերը հայտնվում էին թերթի առաջին էջում: Իր հոդվածներում 26-ամյա լրագրողը նկարագրում էր ամբողջ քաղաքի մտահոգությունը եւ երեխային գտնելու ջանքերը: Բրենանը սերտ կապ էր պահպանում ծնողների հետ, եւ զգում էր, թե ինչպես օրեցօր ավելանում էր նրանց վիշտն ու հուսահատությունը:

Բրենանը երեխայի ծնողներին ուղեկցեց Նյու Յորք՝ մասնակցելու կորած երեխաներին նվիրված հեռուստատեսային հաղորդմանը:

Հաղորդումից երեք ժամ անց ամուսինների հյուրանոցի սենյակում զնգած հեռախոսը: Ջոն Ուոլշը վերցրեց լսափողը: Զանգը Ֆլորիդայից էր: Որոնումներն ավարտվել էին:

Ջրանցքում գտել էին երեխայի աճյունի մնացորդներ, գլուխը պատկանում էր Ադամ Ուոլշին:

Բրենանը Ուոլշների հետ էր, երբ նրանք իմացան այդ մասին:

«Օհ, աստված, օհ, աստված, ո՞վ կարող էր այդպիսի բան անել իմ փոքրիկ տղային, - արտասվում էր հայրը, - ո՞վ կարող էր կտրել նրա գլուխը»:

Բրենանը սգում էր Ուոլշի հետ:

«Այս դեպքը ամենասարսափելի բանն է, որի հետ ես ընդհանրապես առնչվել եմ, - պատմում է Բրենանը: - Երեխայի ծնողներն այլեւս երբեք նույնը չեն լինի: Կասկածում եմ, որ ես էլ նույնը կմնամ»:

Այս ընտանիքի գործերին եւ նրանց ողբերգությանը իր մասնակցության մասին Բրենանն ասում է. «Այս պատմությունը նկարագրելու համար պետք էր լինել ամեն ինչի մասնակիցը: Հեռու մնալն անմարդկային կլիներ»:

Մասնակցություն

Նոր գաղափարների նկատմամբ հետաքրքրությունը եւ փորձի բազմազանությունը լրագրողներին ստիպում են առնչվել ամեն կարգի մարդկանց հետ: Նրանք, ովքեր գրում են ապրուստ վաստակելու համար, պարտավոր են մասնակցել տարբեր մարդկանց գործերին, քանի որ առանց մարդկային չափանիշների իմացության, ոչ մի գրավոր նյութ չի հուզի սիրտն ու միտքը: Թղթակիցը, տեսաբանը կամ գովազդի հեղինակը ստեղծագործում են անօդ տարածության մեջ, եթե չգիտեն այն մարդկանց հետաքրքրություններն ու ճաշակները, որոնց վրա ձգտում են ազդեցություն գործել:

Ամենուր մարդիկ են՝ գործարաններում ու բենզինի լցակայաններում, հանրախանութներում ու լվացքատներում, գործազրկության կենտրոններում ու բարձր պաշտոնյաների հարկաբաժիններում, դասասենյակներում ու խոհանոցներում: Մարդկանց լսելով աշխատանքի վայրում, թատրոնում եւ ամենուր՝ լրագրողները կարող են լսել նրանց սրտերի տրոփյունը, կարող են հասկանալ նրանց կարիքները, ունկնդիր լինել նրանց երազանքներին:

Երբ Փրովիդենսի «Ջորնալ-Բյուլիթենի» թղթակիցներ Քրիսթոֆեր Սքանլանը եւ Մարք Փաթինքինը որոշեցին ուսումնասիրել Ռոդ Այլենդի սեւամորթ համայնքները, նրանք ձեռնարկեցին հարցազրույցների մի շարք, որը նրանց տարավ սեւամորթ փաստաբանների գրասենյակներ ու նպաստ ստացող մայրերի բնակարաններ, նրանք հանդիպեցին առեւտրականների ու ձկնորսների, այցելեցին բնակարանային ծրագրերով կառուցվող տները՝ ոմանց համար անհուսության հուշարձաններ, ուրիշների համար՝ հույսի մոդելներ եւ, իհարկե, եղան ոստիկանությունում:

Կարգապահություն

Հանձնարարության վրա համառորեն աշխատելը մի այլ գիծ է, որը բնորոշ է ստեղծագործական աշխատանք կատարողներին՝ գրողներին, երաժիշտներին, նկարիչներին, դիզայներներին, շինարարներին, պարողներին, դերասաններին, ուսուցիչներին: Էռնեստ Հեմինգուեյը նախադասությունների ու պարբերությունների վրա այնքան էր աշխատում, մինչեւ որ գոհ մնար: Նա 20 - 30 անգամ արտագրում էր պարբերությունը, մինչեւ որ ստանում էր վերջնական արդյունքը:

Խորհուրդ կատարյալ կոմիկից

Թվում էր, թե Ու. Ս. Ֆիլդզը, աշխարհի մեծագույն կատակերգակ դերասաններից մեկը, օժտված է բնական կոմիզմով, կատակները նրանից ջանքեր չեն պահանջում: Իրականում նա իր աշխատանքի վրա մեծ ջանքեր էր թափում: Նա ասում էր. «Ցույց տվեք ինձ մի կատարերգու, որը կատարելության չի ձգտում եւ ես ձեզ ցույց կտամ սովի մատնված մարդ: Դու պետք է անվերջ քրտինք թափես, ճիգեր գործադրես եւ փորձեր անես: Կատակերգուն պետք է մի տողի վրա այնպես տառապի, ինչպես աղեթափություն ունեցող մարդը ծանրաձող բարձրացնելիս»:

«Նյու Յորքեր»-ի հեղինակ Ջոն Մաքֆին իրեն նկարագրում է որպես «աշխատող լրագրող» եւ խմբագրություն է մտնում առա-

վոտյան 8:30-ին, իսկ դուրս գալիս երեկոյան 8:30-ին: Ամեն օր նա միայն մեկ 90-րոպեանոց ընդմիջում է անում:

Մաքֆին, որը համարվում է երկրի լավագույն լրագրողներից մեկը, իրեն գրել ստիպում է կարգապահությամբ:

«Մարդիկ ուզում են գրող դառնալ առանց գրելու»: Անհնարին է: Քոլեջն ավարտելուց հետո նա ձեռնամուխ եղավ հեռուստատեսության համար պիեսներ գրելուն: Նա սովորում էր, հետեւաբար աշխատանքը ծանր էր: Գրամեքանան լքելու գայթակղությունը այնքամ մեծ էր, որ նա իրեն աթոռին էր կապում լոգարանի խալաթի գոտիով:

Դան Ռադերը շատ է սիրում ձկնորսությունն ու որսորդությունը, սակայն նա հանգստին չի կարող շատ ժամանակ հատկացնել: «Ես աշխատում եմ շաբաթական մոտ 110 ժամ, - ասում է նա,- դա կարող է ձեր վերջը տալ, եթե չտվեց, ապա ձեզ համար դժվար կլինի լավ աշխատել: Կարծում եմ, որ մտահոգվել արժե միայն դրա համար»:

Անգլիացի վիպասան Էնթոնի Թրոլոփն ինքնակենսագրության մեջ նշում է, որ ինքը գրել է ամեն օր, չնայած երկար տարիներ ամբողջ օրն աշխատել է: Մի անգամ Մերձավոր Արեւելքի ու Անգլիայի միջեւ փոստային կապ հաստատելու նպատակով Եգիպտոս ուղեւորվելիս, նա ահավոր տառապում էր ծովային հիվանդությունից: Սրտխառնոցի նոպաների արանքում նա հաջողացնում էր գրել իր օրական բաժինը՝ ավելի քան 1000 բառ:

Խիզախություն, տոկունություն

Հակառակ իրենց մեկուսացած լինելուն, իրենց անկողմնակալությանը, իրենց կարգապահությանը՝ լրագրողներն էլ ունեն զգացմունքներ, որոնք կարող են հուզել: Հանձնարարություններ կան, որոնք անտանելի ծանր են. թղթակիցը պետք է հարցազրույց անցկացնի այն տղայի մոր հետ, որը մոտոցիկլետով դիմահար հարվածել է հանքաքարով լի բեռնատարին կամ արվեստի տեսաբանը, որը պետք է գրի, որ երիտասարդ երաժշտի դեբյուտը անհաջող է, չնայած ուսումնառության վրա ծախսած տարիներին, կամ խմբագրականների հեղինակը, որն իրեն օգնական պետք է վերցնի երկու փայլուն թեկնածուներից մեկին:

Պատահում են նաեւ վտանգավոր հանձնարարություններ: Լրագրողները հաշմանդամ են դառնում ու սպանվում, նրանց վրա կրակում են սնայպերները, ծեծում են զայրացած մարզասերները:

Մահը երեկոյան: «Ֆորթ Ուորթ Սթար-Թելեգրամի» թղթակիցների ու լուսանկարիչների խումբը Լիբերիայում լուսաբանում էր Հյուսիս-արեւմտյան բապտիստական աստվածաբանական սեմինարիայի միսիոներների աշխատանքները, երբ հանկարծ հայտնվեց պատմության հորձանուտի մեջ:

Լիբերիայում սկսվել էր վայրենի բռնությունների ալիքը: Երիտասարդ զինվորական, ավագ սերժանտ Սեմյուել Ք.Դոուն ռազմական հեղաշրջում էր կատարել: Դոուի հրամանատարությամբ զինվորականները սպանել էին երկրի նախագահին, այնուհետեւ ձեռնամուխ եղել մյուս ղեկավարների ոչնչացմանը:

Մահապատիժները պետք է իրականցվեին մի շոգ երեկո Լիբերիական ափին: Հրավիրված էին մամուլի ներկայացուցիչները:

Լուսանկարիչ Լարի Ս. Փրայսը եւ թղթակից Փոլ Ռոուանը ճանապարհ ընկան դեպի լողափ, որտեղ սպիտակ ավազի մեջ կանգնեցվում էին 10 ոտնաչափ բարձրությամբ հաստ ամուր սյուներ: Փրայսը կտրվեց լողափից 100 յարդ հեռավորության վրա խմբված լրագրողներից: Նա միայնակ շարժվեց դեպի ավազի մեջ կանգնեցված սյուները: Քայլում էր եւ լուսանկարում: Ծանր սպառազեն զինվորները նայում էին նրան, բայց ոչինչ չէին ձեռնարկում:

Ռոուանը ավելի մոտիկ տեղավորվեց եւ սկսեց նշումներ անել: Նա նշում էր իր ծոցատետրում, որ սյուների թիվն ավելանում է՝ չորսից դառնալով հինգ, հինգից՝ յոթ, յոթից՝ ինը: Սյուների միջեւ կանգնած է 27-ամյա լուսանկարիչը եւ նկարում է:

Հետո բերեցին մարդկանց:

«Նրանք սյուներին կապեցին ինը մարդ, ծեր, արդեն գիրացող, սպիտակած մազերով ինը մարդ»,- գրում է Ռոուանը:

Հետո լսվեցին կրակոցներ, եւ մարմինները կուչ եկան ավազի վրա: Փրայսն այնքան մոտ էր կանգնած, որ կրակած փամփուշտի պարկուճը հարվածեց նրան:

Նա շարունակում էր լուսանկարել:

Հին կառավարողների մահվան լուսանկարները Փրայսին բերեցին 1981 թվականի Պուլիտցերյան մրցանակ՝ լուսանկարչության գծով: Նկարները պատկերում էին մարդկանց, ովքեր հաշվում էին գնդակահարվողների թիվը, մահվան պահը եւ թե ինչպես են տոնում սպանությունները:

Փրայսին եւ Ռոուանին սարսափեցրել էր այն, ինչ նրանք տեսնում էին: Սակայն նրանց աշխատանքն իրենց ընթերցողների եւ պատմության համար, այդ նշանակալի դեպքերը գրանցելն էր:

«Ես հաստատ սառնասիրտ մարդ չեմ,- հետագայում ասում էր Փրայսը: - Ողբերգությունը լուսանկարելն, անշուշտ, ազդում էր ինձ վրա»:

Վտանգավոր տարածություն

Խիզախությունը անհրաժեշտ է լրագրողներին, չնայած նրանք այս մասին շատ չեն խոսում: Երբ լրագրողներին ուղարկեցին ԱՄՆ-ի Հարավ՝ լուսաբանելու քաղաքացիական իրավունքների համար այնտեղ սկսված բողոքները, նրանցից շատերը ենթարկվեցին բռնությունների: Բիլ Մայնորը, որն ավելի քան 40 տարի աշխատում էր Միսիսիփիում, վերհիշում է 1961 թվականի դեպքերը, երբ դաշնային դատարանի որոշմամբ Մաք Քոմբի ավտոկայանում ռասայական խտրականությունը վերացվել էր: Ազատության սեւամորթ ցուցարարները մոտենում էին քաղաքին: Նրանց քաղաք մտնելու ժամկետը մոտենում էր եւ «լարումը խտանում էր, ինչպես Դիքսիի ցողը», - պատմում է Մայնորը: Քուելլի 1987 թվականի հուլիսի եւ օգոստոսի համարներում նա ներկայացնում է այդ միջադեպը իր «Միսիսիփիի սահմանային գիծը» հոդվածում:

«Ես գնացել էի Մաք Քոմբի «Էնթերփրայզ-Ջորնալ» տեղական թերթի խմբագրություն իմ երեք ընկերների հետ, որոնք ներկայացնում էին «Թայմսը» եւ «Լայֆը»: Հենց որ մենք շենքից դուրս եկանք մայթ, չորս ջահել խուլիգաններ հարձակվեցին մեզ վրա: Նրանք ակնհայտորեն հետամուտ էին «Թայմսի» եւ «Լայֆի» տղաներին եւ ինձ հանգիստ թողեցին: Այդ խմբից ամենահանդուգնը, որը հետո պարզվեց սիրող ընբշամարտիկի նման մի բան էր, հարձակվեց Սիմոնս Ֆենթրեսի վրա, որն այդ ժամանակ «Թայմսի» Ատլանտայի թղթակիցն էր եւ բռունցքով հարվածեց նրա գլխին: Զարմանալի էր, սակայն Ֆենթրեսը վայր չընկավ: Միաժամանակ, մնացած երկու ստահակները Դոն Ուրբրոքին՝ Մայամիում «Լայֆի» թղթակցին, հարվածներով գցեցին ապակյա ցուցափեղկի մեջ այնպիսի ուժով, որ ապակին կոտրվեց ու սահելով վայր ընկավ գիլյոտինի դանակի նման: Ուրբրոքին հաջողվեց ժամանակին մի կողմ քաշվել եւ խուսափել վայր ընկնող ապակուց: Եթե նա մի փոքր հապաղեր, ապակին նրան երկու կես էր անելու: Չորս սրիկաները փախան, եւ ես հարցրի կոտրված ցուցափեղկի խանութի տիրոջը, արդյոք ճանաչու՞մ է նրանց: Նա գլուխն օրորեց ու ասաց. «Ես նրանց երբեք չեմ տեսել»: Դա, իհարկե, սուտ էր: Գոնե ավազակախմբի առաջնորդը լավ հայտնի էր քաղաքում»: (Այս պատմությունն ունի դրամատիկական հետգրություն: Հեղինակն իմացել է, որ երկու տարի անց, ճամփեզրի պանդոկներից մեկում խանութպանին սպանել է այդ նույն խուլիգանը, որին նա չցանկացավ ճանաչել:)

Որոշ իրողություններ

Ինչպես տեսանք, լրագրությունը գոյատեւում է՝ գովազդների համար տեղ ու ժամանակ վաճառելով: Սրա հետեւանքն այն է, որ շատ հրատարակիչներ հաշվապահական մատյաններին ավելի մեծ ուշադրություն են դարձնում, քան նորություններին: Թերթերն ու հեռարձակման կայաններն ու ցանցերը մեծ բիզնեսի բաղկացուցիչ մասն են դառնում, եւ դրան զուգընթաց գնալով ահագնանում է բաժնետերերի՝ շահաբաժիններն ավելի ու ավելի մեծացնելու պահանջը, որն էլ իր հերթին հանգեցնում է այլ ճնշումների՝ որպեսզի կրճատվի նորություններով զբաղվող աշխատակիցների թիվը, նյութերը պատրաստելիս հիմնվեն մամլո հաղորդագրությունների, այլ ոչ թե թղթակիցների աշխատանքի վրա, գովազդին հատկացվի ավելի շատ տեղ ու ժամանակ եւ շեշտը դրվի ժամանցի վրա՝ ի հաշիվ նորությունների:

Ուսանողները, որոնք մտածում են լրագրողի կարիերայի մասին, պետք է հասկանան սա եւ դեռ ավելին՝ խղճի լրագրությունը մեծ մասամբ չի վարձատրվում՝ որեւէ փոփոխության հասնելով: Մարդիկ հաճախ ուշադրություն չեն դարձնում այնպիսի բաների վրա, որոնք, լրագրողի կարծիքով, ակնհայտորեն սխալ են: Նրանք տգետ, երբեմն նույնիսկ դատապարտված հանցագործներին վերադարձնում են նրանց նախկին պաշտոնները: Նրանք հանդուրժում են կրթական եւ քրեական իրավական համակարգեր, որոնք չեն գործում:

Հակառակ խմբագրատներում տիրող քաղաքականությանը, որը հաճախ կարող է դաժան լինել, հրատարակիչների ագահությանը եւ հասարակության անտարբերությանը, լրագրությունը, ինչպես տեսանք, կարող է բարի գործեր անել: Եվ այն շարունակում է գրավել այն երիտասարդ կանանց ու տղամարդկանց, ովքեր ունեն ընդունակություններ եւ խիղճ:

Աշխատանքների բազմազանություն

Որեւէ աշխատանքի նախապատրաստվելիս՝ կարեւոր է հաշվի առնել այնպիսի իրողություն, ինչպիսին աշխատանքի շուկան է: Լավ կրթություն ստացած երիտասարդ կնոջ կամ տղամարդու համար ժուռնալիստիկայում լայն ասպարեզ է բացվում. լրագրեր՝ օրաթերթեր ու շաբաթաթերթեր, ամսագրեր՝ ընդհանուր ու մասնագիտական, ռադիո ու հեռուստատեսություն, հասարակական կապեր, գովազդ, տեղեկատուներ:

Դուք կարող եք լինել մասնագետ եւ գրել աերոտիեզերական արդյունաբերության եւ պաշտպանության մասին «Աերոսփեյս Դեյլի» տեղեկատուում կամ՝ զբաղվել Ռոլեյդսի գովազդով Յանգ եւ Ռուբիքամ ընկերության համար, կամ մասնակցել միջազգային կոնֆերանսների որպես «Թայմսի» աշխատակից, կամ նկարագրել Սան Ֆրանցիսկոյի Գիգանտների խաղը «Քրոնիքլի» կամ «Էքզամիների» համար, կամ վարել ABC-ի հաղորդումները, կամ Արքանզասի Ջոնսբորոյում KAIT հեռուստատեսությամբ խոսել հրդեհների, ճանապարհային պատահարների եւ քաղաքային խորհրդի նիստերի մասին:

Ձեր ընտրած աշխատանքը կարող է ձեզ տանել Վաշինգթոն, որտեղ դուք կին կոնգրեսականի համար կապահովեք կապերը մամուլի հետ կամ Պեկին՝ նկարագրելու այն լարումը, որը գոյություն ունի ծերացող ղեկավարության եւ ժողովրդավարության ձգտող երիտասարդ այլախոհների միջեւ:

Սկսնակների մեծ մասը քչից է սկսում, եւ սա է ճիշտ ձեւը: Փոքրից սկսողները շատ բան են սովորում:

«Փոքր թերթերում աշխատելը, երբ գրում ես ոստիկանական միջադեպերի, կրթական խորհրդի եւ քաղաքային վարչության նիստերի մասին, անգնահատելի փորձառություն է», - ասում է «Նյու Յորք Թայմս»-ի արտասահմանյան թղթակից Քլայդ Հաբերմանը: «Մի օր Տոկիոյում հրդեհ կլինի կամ երկրաշարժ, եւ այդ ժամանակ կպահանջվի ոչ թե լեզուների կամ պատմության մասնագետ, այլ մեկը, որն արդեն այդպիսի փորձ ունի, գիտե, թե ինչպես ցույց տալ ողբերգություն ապրող մարդկանց: Տարբերություն չկա, թե որտեղ է դա տեղի ունենում՝ Տոկիոյո՞ւմ, թե՞ Նյու Յորքում»:

Ջորջթաունի համալսարանն ավարտելուց հետո Քերոլ Սարդինյան սկսեց աշխատել UPA-ում: «UPA -ում ես սովորեցի, թե ինչպես կարելի է դուրս գալ մի քանի շատ բարդ դրություններից, - ասում է նա: - Դուք իսկապես պետք է անցնեք կրակով փորձություն: Ժամանակ չկա, որ քեզ մի բան սովորեցնեն, քանի որ ընդամենը երկու կամ երեք թղթակից զբաղվում է այն ամենով, ինչ տեղի է ունենում Փենսիլվանիայի արեւմտյան մասում»: Այժմ նա «Մեդիքեըր Քոմփլայընս Ալերթ» տեղեկատուի խմբագիրն է: Դասքո Դոդերն իր աշխատանքն սկսել է Նյու Հեմփշիր նահանգի Քոնքորդ քաղաքում, AP-ի կենտրոնական բյուրոյում, որտեղ, ինչպես ինքն է ասում, սովորել է «հաջող մեջբերումները սկզբից դնել»: Նա եղել է «Վաշինգթոն Փոսթ»-ի եւ «Յու Էս Նյուս էնդ Ուորլդ Ռիփորթ»-ի արտասահմանյան թղթակիցը Արեւելյան Եվ-

րոպայում, Խորհրդային Միությունում ու Չինաստանում եւ միջազգային հարցերին նվիրված մի քանի գրքերի հեղինակ է:

Ոչ բոլորն են ցանկանում աշխատել մեծ քաղաքներում: Լրագրողը, որն ուզում է տեսնել իր աշխատանքի արդյունքները, երջանիկ է իր փոքրիկ գործով:

«Մեր քաղաքի նման համայնքում, - ասում է Սթիվեն Հարթգենը՝ Այդահոյի Թուին Ֆոլզ քաղաքի (բնակչությունը՝ 30 000) «Թայմս-Նյուս» օրաթերթի հրատարակիչը,- դու կարող ես տեսնել քո աշխատանքի արդյունքները: Այսպիսի վայրերում գրավում է այն, որ կարող ես ազդել որեւէ բանի վրա: Փոքր քաղաքների լրագրությանը վերադարձ է դեպի գաղութային ժամանակների լրագրություն, երբ լրագրողները կարողանում էին հասնել ուղղակի արդյունքների»:

Ամեն տարի քոլեջի ավելի քան 10 000 շրջանավարտներ աշխատանքի են անցնում լրագրերում, ռադիոկայաններում, գովազդային գործակալություններում եւ հասարակական կապերի ընկերություններում: Նման աշխատանքների մոտ երեք քառորդը բաժին է ընկնում ժուռնալիստիկայի բաժինների շրջանավարտներին: Օրաթերթում սկսնակի աշխատավարձը տարեկան 17 000 դոլար է, ռադիոյում ու հեռուստատեսությունում՝ 15 000, գովազդային գործակալությունում՝ 18 000 եւ հասարակության հետ կապերի ծառայությունում՝ 19 000:

Հարթգենը՝ «Թայմս-Նյուսից» (որն ունի լրիվ աշխատանքային օրն աշխատող խմբագրական բաժնի 24 եւ գովազդային բաժնի 30 աշխատակից), ասում է, որ ինքը փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր ունեն լավ կրթություն, նպատակի ուժեղ զգացողություն, կարողանում են փայլուն գրել, հետաքրքրասեր են, հեշտ բռնկվում են (ոգեւորվածություն. նրանք պետք է զգան. «Պետք է մի բան անել»), ինչպես նաեւ գնահատում, հարգում ու կարեկցում են մարդկանց:

Բերսոն-Մարսթելերի հանրային կապերի գործակալությունում աշխատանքի համար դիմորդներին առաջարկում են գրել մամլո հաղորդագրություն որեւէ ելույթի հիման վրա, մի քանի փաստերի հիման վրա գրել լուսանկարների մակագրություններ եւ կազմել հոդված:

Փենսիլվանիայի նահանգի համալսարանի հասարակական տեղեկատվության եւ կապերի բաժնի տնօրեն Արթուր Վ. Սիրվոն խորհուրդ է տալիս իր գործընկերներին, որ քոլեջի շրջանավարտներ վարձելիս «Անպայման գրավոր թեսթ անցկացնեն, քանի որ գրելը նորությունների գործակալության յուրաքանչյուր աշխա-

տակցի աշխատանքի բավականին մեծ մասն է»: «Դիմորդն, - ասում է նա, - պետք է կարողանա լավ գրել»:

Փորձառության հետ բարձրանում են աշխատավարձերը: Խոշոր մայրաքաղաքային թերթերի թղթակիցները, որոնք պայմանագրեր ունեն Լրագրային գիլդիայի հետ, շաբաթական վաստակում են 1000 դոլար եւ ավելի: Այսքան է վճարը նաեւ հիմնական ռադիոկայաններում:

Խոշոր լրագրերի խմբագիրներին եւ խոշոր ռադիոկայանների մենեջերներին վճարում են տարեկան 75 000 -ից 100 000 դոլար: Այս բոլոր կազմակերպությունների ղեկավար աշխատակազմը վաստակում է 250 000-ից 500 000 դոլար տարեկան, եւ բոլորը գիտեն ցանցերի հաղորդավարների միլիոնանոց պայմանագրերի մասին:

Անցած տասը տարիների ընթացքում տպագիր լրագրության բնագավառում աշխատանք ստացած շրջանավարտների թիվը համարյա նույնն է մնացել, մինչդեռ հասարակական կապերի ու գովազդի ընդլայնվող դաշտում զբաղվածների թիվը գրեթե կրկնապատկվել է: Ժուռնալիստիկայի դպրոցներում եւ ֆակուլտետներում սովորողների թիվը արտացոլում է աշխատանքի այս հնարավորությունները:

Աշխատանքային փորձաշրջան

Եկեք դիտենք այն երիտասարդի փորձությունները, որը հաղթահարել է թեսթի առաջին արգելապատնեշը եւ աշխատանքային փորձաշրջան է անցնում: Մենք հավաքվել ենք Մասաչուսեթսի Գլոչեսթեր քաղաքի մի սրճարանում, որտեղ Նիքոլաս Թրոուբրիջը ընկերոջը պատմում է «Գլոչեսթեր Թայմս» տեղական լրագրում իր առաջին օրերի մասին: Նա հենց նոր է ավարտել քոլեջը, աշխատել է այդ քոլեջի շաբաթաթերթում:

«Ես պետք է անցնեի երեք օրվա աշխատանքային փորձաշրջան,-պատմում էր նա՝ ուտելով ապուխտով սենդվիչը: - Առաջին օրը պարզապես աղետ էր: Ինձ հանձնարարել էին խտացնել հինգ պատմություն՝ կրճատելով դրանք: Երկու ժամ անց ես ունեի հինգ հատ երկու էջանոց նյութ:

Ղեկավարս նայեց դրանք եւ ասաց. «Երբ ասացի կարճ, ի նկատի ունեի երկու պարբերություն, այլ ոչ թե երկու էջ»:

Երբ եկավ երրորդ օրը, եւ թերթի հին աշխատակիցն ինձ առաջարկեց, որ ես մասնակցեմ քաղաքի Լեգիոն Հոլում տեղի ունենալիք քաղաքագլխի ընտրությունների բանավեճերի վերաբե-

ոյալ նրա հոդվածը նախապատրաստելուն եւ լրացուցիչ նյութ հավաքեմ, ես հասկացա, որ սա այն է, ինչ ինձ պետք է:

Իմ հանձնարարությունն էր խոսել ներքեւի բարում գտնվող մարդկանց հետ եւ պարզել, ինչու նրանք դահլիճում բանավեճերը չեն լսում: Թղթակիցն ինձ ծանոթացրեց բարմենի հետ եւ վերեւ բարձրացավ:

Խելոքները: Ես զրուցեցի բարի մի քանի մշտական հաճախորդների հետ, եւ իմ նյութի սկիզբն արդեն պատրաստ էր: Այդ ժամանակ ես հանդիպեցի խելոքներին:

Նրանք բարի կողքի սենյակներից մեկում զբաղված էին թղթախաղով: Ես ներկայացա, որից հետո մեկը շրջվեց իմ կողմն ու հարցրեց. «Դուք նոր աշխատող եք, այնպես չէ՞»:

Երբ ես նրան բացատրեցի, որ նույնիսկ չեմ էլ աշխատում, այլ փորձնական ժամկետում եմ, նա ասաց. «Լավ, եթե դուք ուզում եք այդ աշխատանքը ստանալ, բարում ցնցող նորություն կա: Անունը Ջեք է եւ անցյալ շաբաթ նա ռեկորդ է սահմանել»:

Նրանք ինձ լիակատար անկեղծությամբ ու պարզությամբ պատմեցին, որ ռեկորդը զուգարան չգնալն է եւ որ տպվելու է Գինեսի համաշխարհային ռեկորդների գրքում:

«Դե լավ է՛, դուք կատակում եք», - ծիծաղեցի ես:

Նրանք ինձ հավաստիացրեցին, որ դա սուտ չէ: Ես գնացի բար ու հարցրի թե ով է Ջեքը:

«Ինչու՞ է ձեզ պետք Ջեքը», - հարցրեց մի կին՝ ձեռքում զովացուցիչ ընպելիքով շիշ:

«Ես լսել եմ, որ նա ռեկորդ է սահմանել: Նա այն մարդն է, որ չի գնացել ... մոռացա, թե ուր, - կակազեցի ես: - Դուք ինչո՞ւ վերեւ չեք գնում, որ լսեք քաղաքական գործիչների դեբատները»:

«Մեկն ապուշ է, իսկ մյուսը մտավոր թերզարգացած», - պատասխանեց նա, թերեւս զայրացած թեկնածուների այդպիսի ընտրությունից: «Չէ, լավ չասացի, նրանք երկուսն էլ մտավոր թերզարգացած են»:

Ես այս մեջբերումն արեցի իմ պատմության սկզբում, իսկ խմբագիրը նյութս դրեց առաջին էջում: Հաջորդ օրը նա ինձ տեղեկացրեց, որ ես ընդունված եմ աշխատանքի եւ որ դրա համար պետք է շնորհակալ լինեմ բարում հանդիպած կնոջը: Մի քանի օր անց նամակ ստացվեց քաղաքագլխի պաշտոնի թեկնածուներից մեկից, որտեղ նա պնդում էր, որ այդ նյութը վիրավորանք է մտավոր հիվանդություններ ունեցող մարդկանց հասցեին:

Իմ բախտը բերեց, որ իմ պատրաստած նյութն այն առասպելական Ջեքի մասին չէր, որը ռեկորդային թվով օրերի ընթացքում անտեսում էր բնության կանչը: Եթե այդպես լիներ, ապա ես, հավանաբար, դեռ աշխատանք փնտրելով Հարավում դեգերելիս կլինեի, բեռնատարներում ցնցվելով վարորդների հետ՝ ճամփեզրի անվերջ կանգառներով եւ հարցազրույցներով»:

Ամբոխի մեջ կորածը

Մի քանի շաբաթ անց, որպես ավելի խելոք ու փորձված թղթակից (իր կարծիքով) Թոուբրիջին հանձնարարեցին ուղեկցել այն ծխականներով ավտուբուսը, որոնք մեկնում էին Բոստոն՝ Հռոմի պապին տեսնելու: Թոուբրիջը նրանց հանդիպեց առավոտյան ժամը 7-ին՝ տեղական եկեղեցու դիմաց, այնտեղ նրանք բաժանվեցին չորս խմբի, որ շարժվեն դեպի Բոստոնի հանրային զբոսայգի, որտեղ Պապը պետք է պատարագ մատուցեր:

«Ես որոշեցի ամբողջ օրը մնալ ամենամեծ խմբի հետ, լսել մարդկանց մեկնաբանությունները, դիտել Պապի նկատմամբ նրանց վերաբերմունքը:

Զբոսայգու ճանապարհին ես ետ ընկա, որ մի բաժակ սուրճ խմեմ: Երբ ես սրճարանից դուրս եկա, խումբն արդեն գնացել էր:

Ես սլացա դեպի զբոսայգի: Նրանք կորել էին մարդկային ծովի մեջ: Երկու ժամ փնտրելուց հետո, ես հասկացա, որ պարզապես ժամանակ եմ վատնում:

Ես գնացի հեռախոսի մոտ եւ զանգ տվեցի ղեկավարիս:

«Ես նրանց կորցրել եմ», - հայտնեցի ես:

«Ու՞մ ես կորցրել, Նիք»:

«Սուրբ Աննայի եկեղեցու ծխականներին: Ես գնացել էի սուրճ խմելու, բայց երբ վերադարձա, արդեն գնացել էին, անհետացել», - ասացի ես՝ համոզված, որ նա խորհուրդ կտա ինձ ճանապարհ ընկնել դեպի հարավ եւ ուրիշ աշխատանք փնտրել:

«Նիքը կորցրել է ծխականներին եւ հիմա փնտրում է նրանց Բոստոնի հանրային զբոսայգում»,- ես լսում էի, թե նա ինչպես է դա պատմում աշխատողներին:

Խմբագրությունում ծիծաղ էր լսվում:

«Մի անհանգստացեք,- ասաց նա: - Պարզապես ետ գալու ճանապարհին ավտոբուսի մեջ մի քանի լավ մեջբերում գրի առեք: Եվ ավտոբուսից չուշանաք»:

«Խնդիր չկա, - պատասխանեցի ես,- ես ամեն ինչ վերահսկում եմ»:

Երիտասարդ թղթակցի ինքնավստահությունը կարող էր անհիմն թվալ: Սակայն նա կարողացավ պահել իր աշխատանքը եւ հաջողությունների հասնել:

Բավարարվածություն...

Այովայի օրաթերթերի թղթակիցների շրջանում կատարած հետազոտությունից պարզվել են աշխատանքի հետ կապված հետեւյալ հաճույքները՝

- «Մենք ոչ մեկին պարտական չենք: Սա ազնիվ տեղ է»:
- «Ես մասնակցում եմ այն ամենին, ինչ տեղի է ունենում համայնքում»:
- «Լրագրողների ընկերությունը»:
- «Ստեղծագործ աշխատանքի ազատությունը»:
- «Ես այնտեղ եմ, որտեղ կարեւոր բան է կատարվում»:
- «Կարգապահություն, արդյունավետ ուսուցում աշխատանքի ընթացքում»:
- «Խմբագրական սյունակում կարծիքներ արտահայտելու հնարավորություն»:
- «Փոքր թերթում հնարավոր արկածախնդրությունը»:
- «Ղեկավարության կողմից ինձ եւ յուրաքանչյուր լրագրողին տրված ազատությունը»:

... եւ հուսահատություն

Չարլզ Մ. Յանգը անհանգիստ բնավորություն ունի: Նա տքնում է ու լարվում իր հոդվածները գրելիս՝ երբեք բավարարված չմնալով: Սակայն Ռոուլինգ Սթոունզի եւ այլ հրատարակությունների նրա հոդվածները ռոք խմբերի եւ էստրադային դերասանների մասին այնքան հարթ են, ասես թխկու անուշահոտ է հոսում բլիթների վրա:

Հակառակ իր տառապանքներին՝ Յանգը գրելուց հաճույք է ստանում: Դա նրա դժբախտությունն է եւ ուրախությունը: Նրա զմայլանքը լեզվով եւ իր թեմաներով պարզորոշ երեւում է «Կարլի Սայմոնը, կյանքը, ազատությունը եւ տավարի մսով ռագուի հետապնդումը» հոդվածից, որը սկսվում է այսպես՝

Ռոքի մասին գրողներից շատերը, ինչպես պարզվել է որոշ դիտարկումներից, կուզենային լինել նրանց տեղում, ում մասին իրենք գրում են: Այսինքն՝ իրենց գրամեքենաները փոխեին 20 000 մոլեգնած խելառ ցանցառների համար տխմարություններ ծղրտալու հետ, իսկ այդ ժամանակ Քեյթ Ռիչարդը նրանց ուղեղները լցնի Քուլ Ուիփի բարձր ակկորդներով: Բայց ոչ ես: Ես չեմ ուզում լինել Միք Ջագերը: Ոչ էլ ցանկություն ունեմ լինելու Կարլի Սայմոնը, որ քոլեջների միլիոնավոր ուսանողներ կեղտոտ մտքերով նայեն իմ ալբոմների կազմերին: Ես նույնիսկ չեմ ուզում լինել Ջեյմս Թեյլորը, որն ամուսնացած է Կարլի Սայմոնի հետ:

Ես ամեն ինչ կտայի, որ լինեի Բենջամեն Թեյլորի տեղում: Ահա մեկը, որը կյանքից ամեն ինչ ստանում է: Բավական է Բենջամեն Թեյլորը միայն լաց լինի, Կարլի Սայմոնը իր կուրծքը դնում է նրա բերանը: Երկրի վրա մնացած 4 միլիարդս կարող ենք լաց լինել մեր մնացած ամբողջ կյանքի ընթացքում, իսկ Կարլի Սայմոնը իր կուրծքը մեր բերանները չի դնի:

Ենթադրում եմ, որ ավելի մեծ անարդարություններ են խաթարել մարդկային պատմությունը, սակայն դրանք մտքիցս այժմ թռել են, քանի որ հենց նոր Կարլի Սայմոնը իր կուրծքը դրեց Բենջամեն Թեյլորի բերանը: Տղան հրաշալի ժամանակ է անցկացնում: Ես ծածկվում եմ սառը քրտինքով, անհանգստությունից, որ տաս ոտնաչափ հեռավորության վրա պարզորոշ կնկատվի, որ ամեն երեք րոպեն մեկ իմ աչքերը Կարլի Սայմոնի երեսից իջնում են ցած, դեպի նրա վեր քաշած բլուզը:

«Սա արդեն անպարկեշտ է դառնում»,- ասում է Կարլի Սայմոնը Արեւմտյան Կենտրոնական զբոսայգու իր հսկայական տասը սենյականոց բնակարանի հյուրասենյակում: Բենջամեն Թեյլորը՝ Ջեյմս Թեյլորի սիրունիկ մանրապատկերը, մարմնամարզիկի նման ոլորվել է իր նախաճաշի շուրջը, որը նա ամուր սեղմել է իր երկու ձեռքերով եւ երկու ոտքերով, ինչպես նաեւ իր բերանով:

Կանայք լրագրության մեջ

Ավագ սերնդի լրագրողների մեծ մասը կանայք են: Հանրային կապերի ոլորտում աշխատող ավագների 70 տոկոսը կանայք են: Մյուս ասպարեզներում այդ թիվը կազմում է մոտ 60 տոկոս:

Կանայք հատկապես շատ ներկայացված են ավելի փոքր լրագրերում, եւ մի քիչ պակաս ավելի մեծ լրագրերում: Ամեն 100 խմբագիրներից ու նորությունների պատասխանատուներից միայն 10-ն է կին, մեծ մասամբ՝ 25 000-ից պակաս տպաքանակ

ունեցող թերթերում: Նույն անհավասարությունն է դիտվում ռադիո եւ հեռուստակայաններում: Սակայն վիճակն աստիճանաբար բարելավվում է, քանի որ ավելի շատ կանայք են ստանձնում պատասխանատու պաշտոններ:

Փոքրամասնությունները լրագրության մեջ

Ասոշիեյթիդ Փրեսի պատասխանատու խմբագիրների կազմակերպությունը (ԱՓՊԽ) պարզել է, որ խոշոր թերթերը, որոնց տպաքանակը 150 000-ից ավելի է, փոքրամասնություններին պատկանող սկսնակ լրագրողներ վարձում են 40 տոկոսի չափով: «Փոքրամասնությունների աշխատանքի ընդունվելու ճանապարհը տարբերվում է մյուսներից», - ասում է ԱՓՊԽ-ն: «Սպիտակների մեծամասնությունը աշխատանքը սկսում է փոքր թերթերից: Փոքրամասնությունները ավելի խոշոր թերթեր են գնում»:

Սեւամորթ, իսպանախոս ու ասիացի լրագրողներին աշխատանքի ընդունելու փորձերը սկսվել են 1960-ականներին՝ ի պատասխան քաղաքացիական իրավունքների շարժման: Հաջորդ տասնամյակի ընթացքում ժուռնալիստիկայում փոքրամասնությունների թիվն ավելացել է 35 տոկոսով: 1960-ական թվականներին թերթերի խմբագիրների պաշտոններում փոքրամասնությունները կազմում էին մեկ տոկոս: Այսօր այդ թիվը հասել է 9 տոկոսի, որը, շատերի կարծիքով, դեռեւս խիստ ցածր է: Թերթերի համարյա երկու երրորդում փոքրամասնությունների ներկայացուցիչներ չկան, իսկ 90 տոկոսում նրանք ներկայացված չեն ղեկավար պաշտոններում:

Թերթերի ցանցեր

Թերթերի մեծ մասը եւ շատ ռադիո եւ հեռուստաստուդիաներ պատկանում են ընկերությունների, որոնք ունեն մի շարք լրատվական սեփականություններ: Լրագրային արդյունաբերության մեջ սեփականության կենտրոնացումը անընդհատ մեծանում է. ցանցերին պատկանող թերթերի տպաքանակը կազմում է օրաթերթերի ընդհանուր տպաքանակի 82 տոկոսը եւ օրաթերթերի 76 տոկոսը:

Ցանցերն օրական վաճառում են 50 միլիոն թերթ, որն օրական հատավաճառ տպաքանակի 80 տոկոսն է: Ամենամեծ շրջանա-

ռությունն ունեցող ցանցերն են՝ Նայթ Ռիդերը՝ 3,8 միլիոն տպաքանակով, եւ Գանեթ ընկերությունը՝ ավելի քան 150 օրաթերթերի, եռօրյաների եւ շաբաթաթերթերի 6,3 միլիոն տպաքանակով:

(Մի շփոթեք գնորդներին եւ ընթերցողներին: Տպաքանակն արտացոլում է գնորդների թիվը: Սակայն ամեն մի գնորդից բացի, թերթը կարդում են մեկ կամ երկու մարդ եւս):

Ցանցերը թերթերի ագրեսիվ գնորդներ են, եւ մամուլի որոշ քննադատներ պնդում են, որ այդ բացակա սեփականատիրությունը նշանակում է ավելի փոքր հետաքրքրություն տեղական գործերի նկատմամբ եւ ավելի մեծ անհանգստություն եկամուտների վերաբերյալ:

Մաս 2

Ինչպես գրել

Գլուխ 3
Հիմունքներ

Մուտք

Լրագրողներն այլ մասնագետների նման, ենթարկվում են իրենց մասնագիտության օրենքներին ու սովորույթներին: Լրագրողի աշխատանքի հիմունքներն են ճշգրտությունը, հղումը աղբյուրներին, փաստերի ուսումնասիրությունը, հավասարակշռվածությունը, հակիրճությունը, պարզությունը, մարդկային մասնակցությունը, նյութում ներկայացված մարդկանց ինքնության ճշգրտությունը, կենտրոնացումը նյութի կարեւոր կողմերի վրա, անաչառությունը եւ ստուգումը:

Ճշգրտություն

Լրագրության հիմքը ճշգրտությունն է: Հոդվածը, տեսությունը, նորությունների թողարկումը ոչինչ են, եթե ճշգրիտ չեն. պետք է բառերն ու անունները ճիշտ գրվեն, հասցեները՝ ճիշտ լինեն, բառերը՝ օգտագործվեն բառարաններում եղած իմաստներին համապատասխան, մեջբերումները՝ կատարվեն առանց աղավաղումների:

Զրպարտության օրենքի մասին խոսելիս՝ դասախոսները հաճախ սարսափելի պատմությունների իրենց պաշարից հանում են անվան սխալ սկզբնատառի մասին պատմությունը: Դատական լուրերի թղթակիցը ամուսնալուծության մասին թղթակցության մեջ ազգանվան «Թ»-ի փոխարեն «Լ» էր գրել: Նյութը լույս տեսնելուց մի երկու օր անց թերթը ծանուցում է ստանում մի զույգից, որը բաժանվելու մտադրություն չուներ, սակայն նրանց անվան սկզնատառերը սխալմամբ ներկայացվել էին նյութի մեջ: Զրպարտության մեղադրանքն արդեն հարուցված էր:

Այս պատմությանը հետեւում է ուսանողների սարսուռը, ինչին էլ ձգտում էր դասախոսը: Պահն անցնում է, եւ ուսանողները մոռանում են դրա մասին, որպես այն պատմություններից մեկը, որ նրանք լսում են մի ամբողջ կիսամյակ: Սակայն մոռանալ չարժե: Այդ պատմություններն իրական են: Զրպարտությունների մասին հայցերը սկսվում են մի փոքրիկ սխալից, հիմար վրիպակից, ճշգրտության դեմ չնչին մեղանչումից:

Փորձառու լրագրողներն էլ սկսնակների նման սխալներ են անում: Տեսեք, թե «Նյուսուիքն» ինչ էր տպել միայն մեկ համարում (եւ դրանք միայն այն սխալներն են, որ գտել են դրանց անմիջականորեն առնչվող մարդիկ, որ կարդացել են այդ համարը): Արիզոնայի համալսարանի քաղաքական գիտությունների պրոֆեսորի անունը սխալ էր գրված, սնանկացում էր վերագրված մի մարդու, որի կորպորացիան էր սնանկացել, զինված ուժերի նախկին օդաչուին շփոթել էին նման ազգանուն ունեցող «Իրան-կոնտրաս» սկանդալի մեջ ներգրավված մի մութ անձնավորության հետ:

Ճշգրտությունը սկսվում է տեղեկություններ հավաքելիս՝ փութաջան ուշադրությունից ամեն մի մանրուքի նկատմամբ: Անուններ, տարիք, հասցե՝ ստուգե՛ք: Տագնապին արձագանքած հրշեջ մեքենաների թիվը՝ ստուգե՛ք: Խորհրդի անդամ տիկնոջ խոսքից ճշգրիտ մեջբերում՝ ստուգե՛ք: Ստուգեք եւ կրկին ստուգեք:

Եթե սխալ լինի, հոդվածագիրն այն կուղղի: Սակայն նրա գործը առաջին հերթին սխալներ չանելն է:

Մյուս անգամ, երբ դուք շատ եք շտապում, որ կրկին ստուգեք անվան սկզբնատառը, շատ եք շտապում, որ ստուգեք մեջբերումը, շատ եք հոգնած, որ ստուգեք մի անուն, հիշեք այս ուղղումը:

Մայ Թաի Ֆինը այդ ծրագրում ընդգրկված ուսանողներից մեկն է եւ լուսանկարի կետրոնում է: Մենք սխալմամբ նրան նշել ենք որպես ճաշացուցակի մի ճաշատեսակ:

Կարեկցանքից դրդված, մենք չենք նշի այս կոպիտ սխալի հեղինակին, ոչ էլ թերթի անունը, որն այն տպագրել էր:

Հղում

Հղումը ոչ թե կարիք է, այլ անհրաժեշտություն:

Բոլոր տեղեկությունները եւ հայտարարությունները, բացի չափազանց ակնհայտներից, պետք է հղում ունենան նյութի աղբյուրին:

Ոստիկանությունը հայտնում է, որ երկու մարդ է սպանվել, երբ...

Քաղաքագլուխ Սեմ Ուոլքերն այսօր պնդում էր ...

«Մանկական հիվանդությունները պակասում են»,- հայտնում են նահանգային առողջապահական բաժնից ...

«Քոլեջի թվանշաններն անիմաստ են», - ասել է պրոֆեսոր Ալվին Գուդմանը ...

Սակայն ակնհայտ պնդումների համար որեւէ հղում անհրաժեշտ չէ, ինչպես նաեւ այն դեպքերի համար, որոնց ականատեսն է եղել թղթակիցը:

Հուլիսի 4-ը երեքշաբթի է:
Լինքոլնին կենդանության օրոք սիրել են եւ ատել:
Ապրուստի անհրաժեշտ մինիմումը անշեղորեն ավելանում է:
«Վագրերը» երեկ 3 : 2 հաշվով հաղթեցին Ուայթ Սոքսին:

«Ակնհայտ» նշանակում է որեւէ պնդում, գաղափար կամ իրավիճակ, որն հանրության կողմից ընդունվում է որպես ճշմարիտ: Եթե բացարձակ ապացույց կամ համընդհանուր ճանաչում չկա, ապա պետք է լինի հղում:
Ուշադրություն դարձրեք հղումի վրա հետեւյալ լիդի մեջ:

Այսօր ոստիկանությունից հայտնեցին, որ քաղաքամերձ ճանապարհները ուրբաթ կեսօրից հետո խիստ ծանրաբեռնված կլինեն: Տոնական ուիքենդը կտեւի շաբաթից երկուշաբթի:

Առաջին հաղորդումը վերագրվում է աղբյուրին: Երկրորդը հաղորդվում էր որպես փաստ, քանի որ այն ակնհայտ էր:
Գործողությունները վերագրվում են որեւէ անհատի կամ խմբերի, որոնք դրանք կատարում են կամ իրականացնում:

Քաղաքագլուխ Ջորջ Օլբրիթոնը այսօր հրահանգել է, որ բոլոր հիմնարկները հաջորդ երկուշաբթի փակ լինեն ի հարգանք քաղաքի առաջին քաղաքագլուխ Ռիչարդ Բիթիի, որը մահացել է անցյալ շաբաթ՝ 104 տարեկան հասակում:

Երեկ հանրապետական կուսակցության նահանգային կոմիտեն ձեռնարկեց առաջին քայլերը նոյեմբերին տեղի ունենալիք նահանգային համագումարի կազմակերպման ուղղությամբ: Կուսակցությունը ...

Ընդհանրապես, երբ մենք խոսում ենք հղումների մասին, մենք ի նկատի ունենք այն, ինչ կոչվում է մեջբերման կամ պնդումի վերագրում: Այսինքն պատասխանատվությունը դրվում է աղբյուրի վրա: Եթե հղում չկա, ապա աղբյուր է համարվում թղթակիցը, թերթը կամ ստուդիան:

Հղումը որեւէ աղբյուրի՝ չի ապահովում պնդումի ճշմարտացի լինելը: Սակայն պատասխանատվությունը դրա համար դրվում է աղբյուրի վրա: Երբ թղթակիցը կասկածում է հայտարարության ոչ ճշգրիտ կամ ճշմարտացի լինելուն, աշխատում է ստուգել այն՝ ապահովելով, որ պատասխանատուն լինի հայտարարություն անողը:

«Սենթ Փիթերսբերգ Թայմսի» արտահաստիքային թղթակից Ջեֆ Քլիքենբերգին ապշեցրել էին մի քանի բաներ, որոնք նրան պատմում էր շնաձկների մի ձկնորս: «Նրա պատմածներից շատերը ես կրկին ստուգեցի եւ պարզեցի, որ ճիշտ են: Այն բաները, որոնք չէի կարող ստուգել, ես ներկայացրեցի հղումով»,- պատմում է նա:

Մարդիկ երբեմն փաստերը հարմարեցնում են իրենց ուզածին, իսկ լրագրողը ստիպված է լինում օգտագործել այդ նյութը, հատկապես եթե հայտարարությունն արված է պաշոնյաների կամ հասարարական գործիչների կողմից: Չնայած հղումը պարզորոշ կերպով պատասխանատվությունը դնում է աղբյուրի վրա, լրագրողը պետք է ձգտի նյութի մեջ արտացոլել նաեւ ճշմարտությունը, եթե այն հայտնի է: Այս կերպ նշված է աղբյուրի ասածը, սակայն ճշմարտությունը եւս՝

Ըստ գործադիր տնօրենի հայտարարության, ավարտական կուրսի ուսանողների միավորները անցյալ տարի եղել են «ամենաբարձրը վերջին 10 տարիների ընթացքում»: Իրականում, դպրոցական մատյանները ցույց են տալիս, որ վեց եւ ութ տարի առաջ միավորները ավելի բարձր են եղել:

Տեղը նյութի մեջ

Որոշ լրագրողներ կարծում, որ հղումը լիդում կարող է այն դարձնել չափազանց երկար: Նրանք գերադասում են աղբյուրը նշել երկրորդ կամ երրորդ պարբերության մեջ: Այս մոտեցումն իրեն արդարացնում է, եթե նյութը վերցված է պաշտոնական արձանագրությունից կամ փաստաթղթից եւ հակասական չէ: Այս լիդում ոչ մի հղում էլ պետք չէ, քանզի պարզ է, որ տեղեկությունները ստացված են ոստիկանությունից.

Մի ձկնորս, գոլֆ խաղացողների մի խումբ եւ մի մետաղի ջարդոն հավաքող կիրակի կեսօրից հետո հայտնաբերել են խեղդված մարդկանց երեք դիակ, երկուսը Դեյդի ջրանցքներում, մեկը՝ լճի մեջ:

Հղումը խիստ կարեւոր է մեղադրանք կամ ամբաստանություն պարունակող լիդում:

Տեղական փաստաբան Արթուր Լեւին այսօր հայց է ներկայացրել ոգելից խմիչքի հարցերով զբաղվող նահանգային մի պաշտոնյայի դեմ՝ նրան մեղադրելով իր երկու հաճախորդներին ոգելից խմիչքի վաճառքի արտոնագրեր տրամադրելու հարցում «քմահաճ որոշումներ» կայացնելու մեջ:

Երբեմն-երբեմն լրագրողները փորձում են այսպիսի նյութի լիդը դարձնել ավելի գրավիչ՝ այսպիսի մի բան գրելով.

Ոգելից խմիչքի հարցերով նահանգային պատասխանատուն այսօր մեղադրվել է «քմահաճ որոշումներ» կայացնելու մեջ՝ ոգելից խմիչքի վաճառքի երկու արտոնագիր մերժելու համար:

Նման լիդն անազնիվ վերաբերմունք է ընթերցողի հանդեպ: Վերջինս կարող է եզրակացնել, որ պաշտոնյային մեղադրանք է ներկայացվել դատարանում կամ որեւէ պաշտոնական մարմնի կողմից: Երբ այնուհետեւ հոդվածի մեջ աղբյուրը ցույց տրվի, ընթերցողը կարող է իրեն խաբված զգալ:

Հղումի բայեր

Հղումի համար ամենից հաճախ օգտագործվողը «ասաց» բայն է: Նախադասության մեջ այս բառն անտեսանելի է, ուշադրություն չի գրավում իր վրա, ինչպես «մեղադրեց»-ը, «շշնջաց»-ը, «բղավեց»-ը, «մատնանշեց»-ը:

Երբ մի թեկնածու ասում է, որ իր հակառակորդը «անկարող է խելամիտ դատողություններ անել», լրագրողը կարող է գրել. «Թեկնածուն մեղադրեց իր հակառակորդին ...»: Եվ երբ մեկն իսկապես շշնջում կամ գոռում է, մենք այդպես էլ ասում ենք: Սակայն հղումի բայը մեծ մասամբ «ասաց»-ն է:

Անանուն աղբյուրներ

Երբեմն աղբյուրներն ուզում են անանուն մնալ: Նրանք համաձայն են տեղեկություններ հաղորդել միայն իրենց ինքնությունը չհրապարակելու պայմանով: Լրագրերն ու տեղեկատվության այլ միջոցներ դժկամությամբ են հրապարակում այսպիսի նյութերը, քանի որ անանուն մնալը աղբյուրին ազատում է պատասխանատ-

վությունից: Երբ աղբյուրին խոստացված է անանունություն, ապա լրագրողը կարող է նրա անունը չնշել:

Որոշ խմբագիրներ պահանջում են, որ աղբյուրների անուններն իրենց ասեն: Այդ դեպքում աղբյուրին պետք է տեղեկացնել, որ նրա անունը հաղորդվելու է խմբագրին: AP-ում ասում են, որ իրենց «հիմնական օրենքը հղումն է, եւ հղումը անունով: Նյութի անանուն լինելը սահմանափակվում է միայն այն դեպքերով, երբ տեղեկությունը կարեւոր է, փաստացի եւ հնարավոր չէ ստանալ որեւէ այլ աղբյուրից: Մենք անանուն նյութն օգտագործում ենք, եթե այն փաստ է, այլ ոչ թե կարծիք կամ դատողություն»:

Հիմնավորում

Երբ լրագրողը ներկայացնում է նյութեր, որոնք օգնում են ընթերցողներին կամ ունկնդիրներին դեպքը ավելի լրիվ հասկանալու, մենք ասում ենք, որ լրագրողը հիմնավորել է նյութը: Այդ նյութերը ստացվում են աղբյուրներից, լրագրողի սեփական գիտելիքներից, հղումները ստուգելուց եւ քլիփներից (քլիփները նախկինում տպագրված նյութերն են, որոնք պահվում են ռադիոստուդիայի կամ թերթի գրադարանում):

Երբ Նյու Յորքի Հռոմեական Կաթոլիկական թեմի առաջնորդ կարդինալը հրաժարվեց հետեւել այլ պրելատների եւ իր ծխականներին առաջարկել պահպանակների օգտագործումը ԴԱՎ-ի դեմ պայքարելու նպատակով, լրագրողները հիշեցին, որ Նյու Յորքի Կաթոլիկ եկեղեցին տարիներ ի վեր նահանգային օրենսդրական մարմիններում հաջողությամբ պայքարում է պահպանակները դեղատների ցուցափեղկերում տեղադրելու դեմ:

Երբ նախագահ Ռեյգանը ապարդյուն հանրապետական սենատորների աջակցությունն էր հայցում, որ նրանք պաշտպանեն խճուղիների եւ տրանզիտային փախադրումների վերաբերյալ 58 միլիոնանոց օրենսդրական նախագծի իր վետոն, «Նյու Յորք Թայմսի» թղթակից Սթիվեն Վ. Ռոբերթսը քաղվածքներ բերեց մի քանի սենատորների ասածներից: Այնուհետեւ, իր հոդվածի վերջում, նա խնդրի էությունը ներկայացրեց հետեւյալ պարբերությամբ.

Բազմաթիվ պահպանողական հանրապետականներ, որոնք Նախագահի հետ միասին կողմ են քվեարկել, երբ նա առաջարկում էր կրճատել նպաստներն ու սննդի կտրոնները, ավելի քիչ ցանկություն ունեն նրան աջակցելու, երբ խնդիրը վերաբերում է միջին խավի ընտրողների կողմից օգտագործվող ճանապարհներին ու կամուրջներին:

Այս մեկ նախադասությունը, որը քաղաքական հարցերին Ռոբերթսի տեղյակ լինելու արդյունք է, մեզ համար շատ ու շատ ճշմարտություններ է բացահայտում՝ ով ստացավ քաղաքական ապտակ, ինչպես կարելի է ազդել քաղաքական գործիչների վրա եւ ինչու որոշ օրինագծեր դառնում են օրենքներ, իսկ ուրիշները մոռացության են մատնվում: Այս պարբերությունը նաեւ բացատրական լրագրության օրինակ է, որը թույլատրվում է փորձառու եւ վստահություն վայելող լրագրողներին:

Քանի որ հնարավոր չէ, որ լրագրողներն ամեն ինչի մասին ամեն ինչ իմանան, երբ հատկապես դեպքի հետ կապ ունի որեւէ կազմակերպություն, ապա նրանք հաճախ դիմում են հասարակության հետ կապերի ծառայություններին: Երբ ՍթարՔիսթը հայտարարեց իր որոշման մասին՝ պահածո չպատրաստել այն թիւննոսից, որը որսացողների ձկնորսական ցանցերի մեջ նաեւ դելֆիններ են ընկնում, Էդելմանի հասարակական կապերի համաշխարհային գործակալությունը լրագրողներին տրամադրեց նյութերով թղթապանակներ եւ տեղեկաթերթիկներ, որտեղ ներկայացված էին ձկան այդպիսի որսի դեմ բնապահպան կազմակերպությունների վարած պայքարի պատմությունը, արդյունաբերողների տեսակետները եւ ՍթարՔիսթի քաղաքականության փոփոխության պատճառները:

Հավասարակշռվածություն եւ արդարություն

Անցյալում բավականին տարածված է եղել այն երեւույթը, երբ թերթերի հրատարակիչներն ու խմբագիրները լուրերի սյունակներն օգտագործել են, որպեսզի հարձակումներ գործեն գաղափարների, խմբերի, անհատների եւ պաշտոնյաների վրա: Դեյվիդ Հալբերշտամն իր «Ապագայի ուժերը» գրքում (Նյու Յորք, Ալֆրեդ Ա. Քնոփֆ հրատարակչություն, 1979) նկարագրում է «Նյու Յորք Թայմսի» թղթակցի այցը Քալիֆորնիա 1934 թվականին՝ լուսաբանելու նահանգապետի պաշտոնի համար ընտրարշավը: Թեկնածուներից մեկը Էփթոն Սինքլերն էր՝ բազմաթիվ գրքերի հեղինակը եւ սոցիալական ու քաղաքական փոփոխությունների ջատագովը:

Ժամանելով Լոս Անջելես՝ լրագրողը կարդաց «Լոս Անջելես Թայմսի» համարը, որպեսզի ընտրարշավի վերաբերյալ նորություններ իմանա, մասնավորապես՝ Սինքլերի մասին, որն ազգա-

յին գործիչ էր: Միակ նյութը, որը նա կարողացավ գտնել Սինքլերի մասին ասում էր, որ այդ թեկնածուն քրիստոնյա չէ:

Երեկոյան լրագրողը ճաշելու էր «Լոս Անջելես Թայմսի» գլխավոր քաղաքական մեկնաբանի հետ: Լրագրողը հարցրեց, թե որտեղ է Սինքլերը ելույթ ունենալու, որպեսզի հնարավոր լինի գրել նրա ժողովի մասին:

Ինչպես վերհիշում է «Նյու Յորք Թայմսի» թղթակիցը, ահա թե նրան ինչ պատասխանեցին. «Մոռացեք այդ մասին: Մենք այստեղ չենք զբաղվում երկու կողմերի կարծիքները տպելու նման հիմարություններով, ինչպես դուք եք անում Նյու Յորքում: Մենք պատրաստվում ենք հաղթել այդ շան որդի Սինքլերին մեր ունեցած բոլոր միջոցներով: Մենք նրան ոչնչացնելու ենք»: Եվ Հալբերշտամն ավելացնում է. «Նրանք այդպես էլ արեցին»:

Քառորդ դար անց՝ 1958 թվականին, Նյու Յորքից մի այլ թղթակից մեկնեց Քալիֆորնիա՝ նկարագրելու փոթորկուն քաղաքական իրավիճակը: Լոս Անջելիսից այդ նույն լրագրողը ղեկավարում էր քաղաքական լուրերի խմբագրությունը: Նա Արեւելքից եկած իր գործընկերոջն ապահովեց հանրապետականների մասին տեղեկություններով: «Իսկ դեմոկրատնե՞րը», - հարցրեց նրան հյուրը: «Օ՛, թող դա Ձեզ չանհանգստացնի»,- հետեւեց պատասխանը:

Ձայրացուցիչ հովանավորչության օրերը լրագրության մեջ արդեն անցել են, բացառությամբ հատուկենտ դրսեւորումների: Այսօր «Լոս Անջելես Թայմսը» երկրի լավագույն թերթերից մեկն է՝ իր հաղորդումներում հավասարակշռված եւ արդար: «Հավասարակշռված» ասելով մենք նկատի ունենք, որ հակամարտության երկու կողմերին էլ հնարավորություն է տրվում ներկայացնելու իրենց տեսակետները: Նախընտրական արշավի ժամանակ բոլոր թեկնածուներին հատկացվում է բավարար քանակությամբ տեղ եւ ժամանակ՝ իրենց հիմնական դրույթները ներկայացնելու համար: «Արդար» ասելով մենք նկատի ունենք, որ բոլոր կողմերին էլ վերաբերվում են առանց հովանավորչության: Եթե անձի դեմ մեղադրանք է հարուցվում, իսկ թերթերն ու տեղեկատվական այլ միջոցներ լուսաբանում են այդ ամբաստանությունը, ապա նրանք պարտավոր են ներկայացնել նաեւ մեղադրվող կողմի պատասխանը: Արդարությունը պահանջում է, որ լրագրողը միաժամանակ ներկայացնի մեղադրանքն ու դրա պատասխանը, եթե դա հնարավոր է:

Երբ փաստաբանը պնդում էր, որ նահանգի ոգելից խմիչքների վաճառքի խնդիրներով պատասխանատուն իր հաճախորդնե-

րի նկատմամբ անարդար էր վարվել, լրագրողը ստացավ պաշտոնյայի պատասխանը եւ այն դրեց հոդվածի կարեւոր տեղում:

Տեղական փաստաբան Արթուր . Լեւին այսօր հայց է ներկայացրել ոգելից խմիչքի հարցերով զբաղվող նահանգային մի պաշտոնյայի դեմ՝ նրան մեղադրելով իր երկու հաճախորդներին ոգելից խմիչքի վաճառքի արտոնագրեր տրամադրելու հարցում «քմահաճ որոշումներ» կայացնելու մեջ:

Լեւին ասում է, որ այդ պաշտոնյան ոչ մի պատճառ չուներ մերժելու Ֆրեդ Թ. Շմիդտին եւ Ալիս Լոնգին, որոնք դիմել էին քաղաքի հյուսիսային մասի առեւտրական կենտրոններում վաճառքի կետեր բացելու արտոնագրեր ստանալու խնդրանքով:

Նշված պաշտոնյայի ղեկավար Թեոդոր Լանդաուն ժխտել է, որ նահանգային գործակալությունը անհիմն որոշում է կայացրել: Նա նշել է, որ պաշտոնյային չեն բավարարել թեկնածուների տվյալները նրանց նախկին զբաղմունքների վերաբերյալ...

Լրագրողը թենիսի գնդակ չէ, որ անընդհատ ցատկոտի մեղադրանքի եւ հակահարվածի տիրույթում, եթե աղբյուրները հարվածների կարկուտ են տեղում: Ինչպես դուք տեսաք հղումներին նվիրված բաժնում, լրագրողն աշխատում է ստուգել նյութի ճշմարտացիությունը կամ ճշգրտությունը եւ, եթե սխալ հայտարարություն է արված, ապա ներկայացնում է հիմքեր, որոնք ուղղում են արձանագրվածը:

(Մի րոպե կանգ առնենք: Ուշադրություն դարձրեք նախորդ պարբերության վերջին բառի վրա՝ «արձանագրված»: Լրագրողները պետք է հասկանան, որ իրենց աշխատանքն արձանագրություն է, ինչն, իբրեւ հեղինակավոր, կրկնվում է մարդկանց կողմից: Այն կարող է լինել շտապ արված պատմություն, սակայն այն պատմական տարեգրության մի մասն է):

Արդարությունը նաեւ ընդգրկում է լեզվի ազնիվ գործածությունը: Նայեք այս հաղորդումներին՝

- Ջոնսն ընդունում է, որ տեսել է փաստաթղթերը:
- Ջոնսն ասում է, որ տեսել է փաստաթղթերը:

Առաջին նախադասությունից հետեւում է, որ Ջոնսն ինչ-որ սխալի համար ճնշման է ենթարկվում, մինչդեռ երկրորդ նախադասությունը չեզոք է: Պատահում են համապատասխան դեպքեր, երբ կարելի է գործածել «ընդունել», «մերժել», «բողոքել» եւ նման բառեր, որոնք ենթադրում են վերաբերմունք կամ վարվելակերպ: Սակայն սրանք իմաստ պարունակող բառեր են: Դրանց մեջ նախազգուշացում կա:

Հակիրճություն

Լրատվամիջոցների համար գրելու արվեստն այն է, երբ գիտես, թե ինչը դուրս թողնել եւ ինչպես խտացնել մնացածը: Ամենից մեծ ներգործություն ունեցող նյութում նպատակը ձեւակերպված է շատ հակիրճ: Հակիրճ լինելով՝ երկարատեւ ազդեցություն ապահովելու համար երկու ուղի կա՝ խնամքով ընտրել նյութերը եւ օգտագործել բառեր, որոնք ուժեղ ազդեցություն ունեն:

«Սենթ Լուիսի միջին ընտանիքին սնանկացումից բաժանում է ընդամենը կույր աղիքի մեկ վիրահատություն»: Հրատարակիչ Ռալֆ Ինգելսոլ 2-րդի այս 12 բառանոց նախադասությունը շատ բան է ասում. մարդիկ իրենց խնայողություններն օգտագործում են ամենօրյա ծախսերը հոգալու համար, բժշկական ծախսերը սրընթաց աճել են, այնպես որ սովորական վիրահատությունը կարող է ընտանիքին հասցնել սնանկացման:

Քալվին Քուլիջը վերադառնում է եկեղեցական ժամերգությունից: Ընկերը նրան հարցնում է, թե ինչի մասին էր քարոզը:

«Մեղքի», - պատասխանում է Քուլիջը: Ընկերը հարցնում է, թե ինչ ասաց հոգրեւորականը: Քուլիջը պատասխանում է. «Նա ասաց, որ դրան դեմ է»:

«Գրականությունը չեն կարդում, իսկ ժուռնալիստիկան հնարավոր չէ կարդալ»:

Օսկար Ուայլդ

Երբ Ջեքի Ռոբինսոնը դարձավ բեյսբոլի բարձրագույն լիգայի առաջին սեւամորթ խաղացողը, շատ մարզիկներ նրա հետ չէին խոսում: Նյու Յորքի մի լրագրի սպորտային մեկնաբան Ջիմի Քանոնը այս իրավիճակը նկարագրեց Ռոբինսոնի մասին հակիրճ նախադասությամբ. «Նա ամենամիայնակ մարդն է սպորտում»:

Բովանդակություն

Դոնալդ Ա. Մյուրեյը, Նյու Հեմփշիրի համալսարանի ֆակուլտետի անդամը եւ հոդվածագրության հրահանգիչը, ասում է, որ լավագույն հոդվածներում կա միայն մեկ գերիշխող թեմա: Լրագրողի գործը այդ խնդիրն ընտրելը եւ մնացած ամեն ինչ կտրելհանելն է:

Ինչպես ասում է Բեւերլի Քիլը «Նեշվիլ Բեներից». «Կողմնակի թեմաների համար պարզապես տեղ չկա: Ձեր նպատակին հասնելու համար ընտրեք ամենից ուժեղ մեջբերումները եւ իրադրություններ ու օրինակներ, որոնք ամենից լավ կամփոփեն այն, ինչը դուք ուզում եք տեղ հասցնել»:

Ինչպես ընտրել թեմաները: Չափազանց երկար հոդվածների գոյության հիմնական պատճառը երկրորդական թեմաների եւ մանրամասնությունների կուտակումն է: - Ես մի հոդված էի պատրաստել ռեստորանների ցանցի մասին, որը մեղադրվում էր ռասայական խտրականության մեջ, - պատմում է Քիլը: - Ես անհամար հարցազրույցներ անցկացրի, կարդացի փաստաթղթերի կույտեր: Սակայն ինձ համար պարզ էր, որ կարող էի օգտագործել դրա միայն մի չնչին մասը»:

Իր հավաքած ընդարձակ նյութից Քիլն ընտրեց իր կարծիքով մի ավելի կարեւոր թեմա, չնայած ուներ եւս երկու-երեքը, քանի որ գիտեր, որ տեղ կա միայն ամենակարեւոր թեմայի համար:

Հոդվածագիրները, որոնք փորձում են ամեն ինչ ընդգրկել, տեսնում են, որ իրենց աշխատանքի մեծ մասը իզուր է եղել՝ կրճատվել է խմբագիրների կողմից: Եթե նույնիսկ այն տպագրվում է, ապա ճկվում է գերծանրության տակ, ինչպես գարեջրով լավ «մարզված» պաշտպանը:

Նույնիսկ հոդվածաշարերն ու մեծ նախագծերը կրճատում են պահանջում: Չնայած Շերիլ Ջեյմսին տեղ էր հատկացված չորս հոդվածի համար, նա անընդհատ «կրճատում ու վերանայում էր» լքված երեխաների մասին իր նյութերը, որոնք պատրաստում էր «Սենթ Փիթերսբերգ Թայմս»-ի համար:

Ինչպես ներմուծել լրացուցիչ տեղեկություններ: Երբ հոդվածագիրն ավարտում է հոդվածի համար մեկ (երբեմն երկու եւ հազվադեպ՝ երեք) ամենակարեւոր թեմայի ընտրության դժվարագույն աշխատանքը, հնարավոր է, որ մնա հետաքրքիր կամ խնդրին առնչվող նյութ: Աղբյուրի եւ հասարակության նկատմամբ անարդար կլինի չընդգրկել այդ նյութը: Այդ մնացած նյութն օգտագործելու հարմար միջոց է ամփոփումը:

Քաղաքային խորհուրդը նաեւ

1. Հավանություն տվեց 5000 դոլար ծախսին՝ Գրանթ փողոցը Արոու եւ Բոլթիկ պողոտաների միջեւ սալահատակելու համար:

2. Նշանակեց Ֆրենք Ս. Բարնսին (Էլմ պողոտա, 103) սանիտարական ինժեների օգնականի պաշտոնում:

3. Մինչեւ հաջորդ ամիս հետաձգեց աղբահավաքման հետ կապված որոշման քննարկումը:

Հոդվածագրի կարծիքով, այս լուրերը կարճ նշումից ավելին չարժեն: Այս միջոցն օգտագործվում է նաեւ հարցազրույցների ժամանակ՝ ընտրելով լավագույն մեջբերումները:

Նելսոնը երաժշտության ասպարեզին վերաբերող տարաբնույթ մտքեր արտահայտեց:

«Քանթրի վեսթերնը գոյություն կունենա այնքան ժամանակ, որքան մարդիկ ռոմանտիկ կմնան»...

«Մեյնսթրիմի երգիչները մարդկանց տալիս են այն, ինչ, իրենց կարծիքով, ուզում են մարդիկ: Նրանք սխալվում են: Մարդկանց ուզածն իսկականն է»...

«Ճանապարհորդելով հնարավոր չէ ապրուստ վաստակել, սակայն դա մեր միակ ուղին է: Մենք այսօրվա մենեստրելներն ենք»...

«Քանթրի երաժշտությունը հուզում է եւ՛ պապիկին, եւ՛ նրա թոռնիկին»:

Ինչու՞ են որոշ հոդվածներ չափազանց երկար

Երբ դուք սկսում եք գրել, շատ կօգնի իմանալը, թե դեպի ուր եք ուղղվում: Մտքում ունենալով պլանը եւ ուղղությունը, դուք ամենակարճ ճանապարհով կհասնեք ձեր նպատակակետին: Լուիս Քերոլը «Ալիսը հրաշքների աշխարհում» գրքում նշում է, որ առանց պլանի ճանապարհը երկար կլինի: «Ասացեք, խնդրեմ, այստեղից ես ո՞ր ճանապարհով պետք է գնամ»: «Դա մեծ մասամբ կախված է, թե դուք ուր եք ուզում գնալ», - ասաց Կատուն: «Այնքան էլ նշանակություն չունի, թե ուր ... »,- ասաց Ալիսը: «Այդ դեպքում, նշանակություն չունի, թե որ ճանապարհով գնաք», - ասաց Կատուն: «...միայն թե ես հասնեմ որեւէ տեղ», - որպես բացատրություն ավելացրեց Ալիսը: «Օհ, դուք անշուշտ կհասնեք, - ասաց Կատուն, - եթե միայն բավականաչափ երկար քայլեք»:

Բառեր

Երբ անգլիացի վիպասան Ջորջ Էլիոթը աշխատում էր իր «Դանիել Դերոնդա» գրքի վրա, գրեց այսպիսի նախադասություն. «Նա սկսեց հիստերիկորեն հեկեկալ»: Էլիոթը ձեռագրում «հիստերիկորեն» մակբայը ջնջել է, գիտակցելով, որ «հեկեկալ» բայը բավականաչափ ուժեղ է՝ իր ենթադրած իմաստն արտահայտելու համար:

Գրողներն այնպես են անում, որ մեկ բառը կատարի երեքի աշխատանք: Ընտրելով կոնկրետ գոյական, որը վերաբերում է իրական անձի, տեղի կամ առարկայի, լավ գրողները խուսափում են ածականներից: Օգտագործելով բայեր, որոնք իրենք են շշնջում, երգում կամ գոռում, գրողները կարողանում են խուսափել մակբայներից: Լավ գրողները կարողանում են գոյականներն ու բայերը ծառայեցնել իրենց:

Նայեք այս նախադասություններին: Թույլերի մեջ բառերը շատ են: Ուժեղ նախադասություններն իրենց նպատակին են հասնում կարճ ճանապարհով՝ օգտագործելով գործողության բայեր:

Թույլ - Նա հազիվ էր կարողանում քայլել:
Ուժեղ - Նա երերում էր: (Նա սայթաքում էր: Նա գայթում էր:)
Թույլ - Նա հնարավորին չափ արագ դուրս եկավ սենյակից:
Ուժեղ - Նա դուրս վազեց: (Նա դուրս սլացավ: Նա դուրս թռավ:)

Կոնկրետ գոյականներն այն բառերն են, որոնք ցույց են տալիս իրականում գոյություն ունեցող որեւէ իր՝ սեղան, գրասեղան, կավիճ, մատիտ, զամբյուղ, Թեդ Քենեդի, արքայազն Չարլզ:

Վերացական գոյականները ֆիզիկական առնչություններ չունեն՝ հայրենասիրություն, ֆեմինիզմ, ազատություն, հույս: Այս բառերը տարբեր մարդկանց համար տարբեր իմաստ ունեն: Հոդվածագիրները խուսափում են վերացական գոյականներ գործածելուց, բացառություն են կազմում ուղղակի հղումները:

Բառերի ամբողջ խմբեր կարելի է կրճատել՝ մի փոքր մտածելով: Ճանապարհորդության ժամանակ լրացուցիչ ճամպրուկների մեծ մասի կարիքը չի լինում: Նյութը հակիրճ դարձնելու մոտեցումը պետք է լինի հետեւյալը: Հարց տվեք, արդյո՞ք այդ բառերն ու գաղափարները էական են:

Ներկայացնում ենք կրճատումների մի քանի օրինակներ, որոնք AP-ն առաջարկում է իր լրագրողներին:

Նախադասություն - Արվամոլների իրավունքների ազգային իրավական խումբը չորեքշաբթի հայտարարել է, որ դատական հայցեր է հարուցում մի քանի պետական գործակալությունների դեմ, այն բանի համար, որ նրանք բավարար քանակությամբ ԴԱՎ-ի դեղամիջոցներով չեն ապահովում այդ մահացու հիվանդության զոհերին:

Առաջարկվում է - «Ապահովում»-ից հետո անհրաժեշտ է վերջակետ դնել. ոչ-զոհերի համար չէին բողոքի :

Նախադասություն - Այն մարդը, որի Բնական ռեսուրսների նահանգային դեպարտամենտի ութամյա ղեկավարումն ավարտվեց սկանդալով, չորեքշաբթի դատարանի կողմից արդարացվեց դրամաշորթության մեղադրանքից եւ ասաց, որ չէր կասկածում, որ կարդարացվի:

Առաջարկվում է - Վերջակետ դնել «մեղադրանք»-ից հետո. նա էլ ի՞նչ կարող էր ասել՝ «Մեղավո՞ր եմ»:

Նախադասություն - Բժիշկների ամերիկյան ասոցիացիան կոչ է անում ծխելն արգելել ԱՄՆ-ի բոլոր ուղեւորատար ինքնաթիռներում՝ պատճառ բերելով պասիվ ծխելու եւ փակ տարածության մեջ պատահական հրդեհի հնարավոր վտանգները:

Առաջարկվում է - Չափազանց երկարաբան է: Դարձրեք «Բժիշկների ամերիկյան ասոցիացիան պահանջում է ծխելն արգելել ԱՄՆ-ի ուղեւորատար ինքնաթիռներում՝ առողջության եւ հրդեհների վտանգի պատճառով»:

«Քիչ բառեր օգտագործեք, - ասում է Քիլը, - Ոչ մեկին չի հետաքրքրում, թե որքան հարուստ է ձեր բառապաշարը»:

Որոշ մասնագետ հրահանգիչներ իրենց խնամակալության տակ գտնվողներին խորհուրդ են տալիս ուսումնասիրել հայտարարությունները: «Ամեն ինչից զատ, - ասում է մասնագետներից մեկը, - հայտարարություն տվողը վճարում է յուրաքանչյուր բառի համար եւ շահագրգռված է, որ ամեն մի բառ տեղին լինի: Հաջող հայտարարություններում շատ քիչ ավելորդաբանություններ կան»:

«Հակիրճությունը, - ասում է Լոնդոնի «Թայմսի» խմբագիր Սայմոն Ջենքինսը, - պարզության բանալին է: Առանց պարզության լրագիրն անօգուտ է»: Եւ հենց այդ պատճառով էլ անօգուտ են բառաշատ տեսությունները, խմբագրականներն ու նորությունների թողարկումները:

Պարզություն

Բոլորը՝ ընթերցողները, ունկնդիրները, խմբագիրները, համաձայն են, որ համոզվելուց հետո, որ պատմությունը ճշգրիտ է, հոդվածագրի ամենից կարեւոր գործը պարզությունն է, տեղեկությունը հասկանալի դարձնելը: Հոդվածը, խմբագրականը կամ տեսությունը պետք է հասկանալի լինի առաջին անգամ կարդալիս: Իսկ քանի որ ունկնդիրը կամ հեռուստադիտողը լսելու միայն մեկ հնարավորություն ունի, նման հաղորդումների հեղինակը պետք է լինի նույնիսկ ավելի հասկանալի:

«Պարզ գրելու միայն մի միջոց կա, - ասում է մի խմբագիր: - Գրողը պետք է գրելուց առաջ նյութը հասկանա»: Եթե հոդվածագիրը տեղեկատվությունը իր վերահսկողության տակ է պահում, ապա, որպես կանոն, այն կարող է դարձնել հասկանալի գրած նյութ:

Վատ գրված հոդվածները հաճախ մշուշապատ մտածողության արդյունք են: Ջորջ Օրուելը գիտեր այդ մասին եւ ճանաչում էր դրա նշանները՝ «զարդարուն պարբերություններ, անիմաստ նախադասություններ, ճոխ ածականներ եւ ընդհանրապես խաբեբայություն»:

Հենց որ թեման հասկացված է, հոդվածագիրը պետք է նյութը դասավորի: Ընտրվում է դեպքն ամենից լավ ամփոփող թեման: Հետո օժանդակ նյութն է դասավորվում կազմակերպված ձեւով: Լուրեր հաղորդողներն իրենց համարում են ընթերցողին դեպքերի թավուտի միջով առաջնորդող ուղեկցորդներ: Անշնորհք ուղեկցողները իրենց հետեւողներին պտտեցնում են շրջանագծերով կամ տանում են դեպի թյուրիմացությունների անտառը:

Կարճ, հստակ, գործին վերաբերող լիդը եւ հոդվածի տրամաբանական կառուցվածքը նպաստում են պարզությանը: Մենք կարող ենք ավելացնել մի էական ուղեցույց եւս: Նախադասությունը կառուցեք «ենթակա - ստորոգյալ - խնդիր» բանաձեւով: Այն նախադասությունը, որտեղ մեկը մի բան է ասում կամ անում սովորաբար պարզ է լինում: Մի քանի խորհուրդներ եւս:

- Խուսափեք չափացանց շատ կետադրական նշաններից: Չափից ավելի ստորակետերը խճճում են ընթերցողին:
- Հեռու մնացեք ածականներից ու մակբայներից:
- Զգուշացեք երկար նախադասություններից, որոնք իրար հետ կապված են «եւ», «բայց», «քանի որ» կամ այլ շաղկապներով: Որպես կանոն, երկար նախադասությունները կարելի է բաժանել վերջակետով՝ կապող բառի փոխարեն:

Մարդկային մասնակցություն

Լրագրի համալսարանական լուրերի թղթակիցը քաղաքային լուրերի խմբագրին ցույց տվեց մի նյութ, որը նա պատրաստել էր քոլեջի թերթի համար: Նա ցանկանում էր պարզել, արդյոք այն կհետաքրքրի՞ խմբագրին: Նյութն այսպես էր սկսվում՝

«Քոլեջի ուսանողների առջեւ ծառանում են բազմապիսի խնդիրներ՝ ալկոհոլի չարաշահումից մինչեւ միայնություն, սակայն այդ դժվարությունները կարելի է հաղթահարել մի փոքր ընկերական օգնության միջոցով», - ասում են Համալսարանական քահանայական ընկերության անդամները:

Կազմակերպության անդամները, կազմված վեց եկեղեցիներ ներկայացնող քահանաներից, ասում են, որ ուսանողները նման են այլ երիտասարդների:

«Ուսանողներն առանձնապես չեն տարբերվում այլ երիտասարդներից», - ասում է գերապատիվ ...

Քաղաքային լուրերի խմբագիրը կարդում է հոդվածը եւ գլուխը բարձրացնում: Նա ուսանողին ասում է, որ նյութը զուրկ չէ հետաքրքրությունից: «Դուք ահագին աշխատանք եք կատարել: Դուք ցիտում եք Ուեսլի հիմնադրամի տնօրենին, Բապտիստական ուսանողական կենտրոնի տնօրենին, մի կաթոլիկ քահանայի եւ եպիսկոպոսական եկեղեցու մի երեցի: Նրանք հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում ուսանողների փորձերի մասին թմրանյութերի, սեքսի ու ալկոհոլի հետ, որից հետո նրանք իրենց մեղավոր կամ միայնակ են զգում:

Սակայն պատմության մեջ պակասում է մի վճռորոշ տարր: Այն ուսանողների խնդիրների մասին է, սակայն նրա մեջ ուսանողներ չկան: Դուք չեք խոսել ոչ մի ուսանողի հետ:

Պատմության մեջ պակասում է մարդկային մասնակցության պահը: Այն պտտվում է խնդրի շուրջը, բայց ցույց չի տալիս մեզ մարդկանց, ովքեր դրա ուղղակի մասնակիցներն են»:

Նա ուսանող լրագրողին առաջարկում է հարցազրույցներ ացկացնել մի քանի ուսանողների հետ: Լրագրողը կարող է խոստանալ անուններ չհրապարակել, եթե նրանք խնդրեն այդ մասին:

Ընթերցողներն ու ունկնդիրներն ուզում են իմանալ, թե դեպքերն ինչ ազդեցություն ունեն մարդկանց վրա: Նրանք կուզենա-

յին անցնել մարդկանց շրջապատող պատերի ու ցանկապատնե-
րի ետեւը, որպեսզի խախտեն քաղաքի անանունությունը: Նրանք կուզենային իմանալ, թե ինչ է կատարվել անցյալ երեկո միջանցքի ծայրի սենյակում, երբ այնտեղից ճչոց լսվեց: Կամ ում 10 արագություն ունեցող հեծանիվն է մնացել սյունին շղթայված, եւ որի բոլոր մասերը, բացի հիմնակմախքից, թալանվել են: Կամ ինչ եղավ այն ընտանիքը, որի տունը անցյալ գիշեր վառվեց: Ո՞վ նրանց հյուրընկալեց: Նրանք որեւէ հագուստ ունե՞ն:

Հոդվածում նկարագրվում է քարոզը, սակայն ոչինչ չի ասվում, թե ինչի մասին են աղոթում յոթամյա երեխան կամ սեւ գշխաշորով կինը: Նորապսակները մեղրամիսն անց են կացնում Օզարքս լճի ափին, սակայն հոդվածում ոչինչ չի ասվում, թե նրանք ինչու են հատկապես այդ տեղն ընտրել:

Քանի որ մարդկային տարրը գրավում է ընթերցողի ուշադրությունը, այն սովորաբար դրվում է նյութի սկզբից: Երբ գործադուլ հայտարարեցին փոստի աշխատողները, Նյու Ջերսիի Փերթ Ամբոյ քաղաքի «Նյուս Թրիբյուն»-ում այդ ժամանակ աշխատող Մարսիա Չեյմբերսը, արհմիության եւ կառավարության հայտարարություններից ավելի հեռուն նայեց եւ տեսավ, թե ինչպես է ապրում գործադուլավոր բանվորը: Ահա այսպես էր սկսվում նրա հոդվածը:

Այս տարի մարտին կլրանա 20 տարին, ինչ Ջո Քեյփիկը Փերթ Ամբոյում աշխատում է որպես փոստատար: Նրա խնամքի տակ են կինը եւ չորս երեխաները, իսկ շաբաթական աշխատավարձը 110 դոլար է:

Նա եւ իր չորս երեխաները, որոնք ապրում են Քիսբի, Մեյփլվուդ պողոտա, 56 հասցեով Քեյփ Քոդում, ճաշին ուտում են շոգեխաշած միս, ապուր կամ սպագետի: Նախորդ տարի վիճակը վատ էր, եւ նա դիմեց սննդի կտրոններ ստանալու համար: Բայց կոմսությունում նրան մերժեցին:

Լինելով փոստատար՝ նա չի կարող ավելին թույլ տալ, քան շոգեխաշած միսն ու սպագետին:

Անցյալ շաբաթ Ջո Քեյփիկն առաջին անգամ կյանքում դուրս եկավ գործադուլի: Նա միացավ այն 49 փոստատարներին, ովքեր առաջին անգամ գործադուլ են անում փոստային ծառայության գոյության 195-ամյա պատմության ընթացքում:

«Ես այնքան էլ ճիշտ չեմ համարում գործադուլը: Իսկապես չեմ համարում», - ասում է նա Փերթ Ամբոյի դատարկ փոստատան դիմաց կանգնած:

«Բայց սա հուսահատության խնդիր է: Մեզ հարկադրել են այսպես վարվել», - ասում է նա …

Բառեր, որոնք ազդարարում են մարդկային մասնակցություն

Հոդվածի մեջ մարդկային տարրը կարող է մտցվել անձնական դերանունների եւ կոնկրետ գոյականների գործածությամբ:

1. Ջոնսոնը ցած դրեց իր մատիտը եւ փակեց իր գիրքը:

2. Ջոնսոնը ցած դրեց մատիտը եւ փակեց գիրքը:

3. Դասագրքի համար, մտածեց նա, այն աշխույժ է, ինչպես պրոֆեսոր Ալբրեխտի լավ դասախոսություններից մեկը:

4. Դասագրքի համար, մտածեց նա, այն աշխույժ է, ինչպես մի լավ դասախոսություն:

1-ին եւ 3-րդ նախադասություններում առկա է մարդկային հետաքրքրության տարրը՝ 1-ինը պարունակում է անձնական դերանուններ, իսկ 3-ում դասախոսի ազգանունն է՝ կոնկրետ գոյական: Համեմատեք հետեւյալ նախադասությունները եւ նշեք, թե որոնք են պարունակում մարդկային հետաքրքրության տարրը:

5. Այն վատ հոտ ուներ:

6. Այն վառված ռետինի հոտ ուներ:

7. Նրա մեջքը ցավում էր:

8. Նրա մեջքն այնպես էր ցավում, կարծես մի ֆուտբոլային թիմ էր մարզվել իր մարմնի վրա:

6-րդ եւ-րդ 8 նախադասությունները ներկայացնում են զգացողություններ: Թղթակիցները պետք է հարցնեն իրենց աղբյուրներին, թե ինչի նման էր հոտը, որքան վատ էին նրանք զգում, աղմուկը նրանց ինչ էր հիշեցնում:

Թղթակցության կարեւորության մասին

Եկեք կանգ առնենք եւ մի րոպեով քիչ հետ գնանք: Քոլեջի ուսանողը հարցազրույց չէր անցկացրել ուսանողների հետ: Մարսիա Չեյբերսի պատմությունը հաջողված է, քանի որ նա հարցազրույց էր անցկացրել փոստի աշխատողի հետ՝ նրա վրա գործադուլի թողած ազդեցության վերաբերյալ:

Այս հոդվածների հաջողությունը կամ անհաջողությունը կախված է թղթակցությունից: Այսպիսով, մենք հասանք գրելու հիմնարար սկզբունքներից մեկին, որ ոչ մի նյութ չի կարող ավելի լավը լինել, քան թղթակցությունը, տեղեկությունների հավաքումը, որը նրա նեցուկն է:

Ինքնության հաստատում

Հոդվածագիրները մարդկանց նկարագրում են այնպես, որ ընթերցողներն ու ունկնդիրները կարողանան նրանց պատկերացնել, տեղայնացնել եւ իմանալ նրանց ինքնությունը: Ինքնության հաստատումը արագ դիմանկար է: Ինքնության հաստատման ստանդարտ նյութը անունը, տարիքը, հասցեն եւ զբաղմունքն են:

Անուն

Մարդու անունը ճիշտ գրելու համար ամենից հարմար աղբյուրը հենց այդ անձն է: Որպես կանոն, հեռախոսագիրքը եւ քաղաքային տեղեկատուն եւս ճշգրիտ են: Մականունը հազվադեպ է գործածվում, միայն սպորտային հոդվածներում կամ վավերագրական ակնարկներում:

Տարիք

Անձի տարիքը պետք է օգտագործվի միայն այն դեպքում, եթե դա կարեւոր է պատմության համար: Միշտ նշվում է մահախոսականներում եւ դժբախտ պատահարների ու հրդեհների զոհերի դեպքում: Տարիքը նշվում է նաեւ այն դեպքերում, եթե օգնում է բացահայտելու հոդվածի թեման: Օրինակ՝ Ջոն Քենեդիի երիտասարդ տարիքը եւ Ռոնալդ Ռեյգանի տարիքը կարեւոր նշանակություն ունեին նրանց նախագահական ընտրարշավների ժամանակ:

Մեր երիտասարդամոլությամբ տառապող մշակույթի մեջ տարիքով մարդիկ երբեմն լռում են իրենց տարիքի մասին: Երբ տարիքն էական է, թղթակիցը ստիպված է այն նշել նյութի մեջ: Դա կարելի է անել բավականին ճաշակով, ինչպես օրինակ՝

Կինը միջնակարգ դպրոցն ավարտել է 1932 թվականին:

Հասցե

Թե որտեղ է մարդն ապրում, կարող է ընթերցողին շատ բան ասել: Հասցեն հարուստ շրջանում մի տեսակի ուղերձ է ենթադրում, աղքատ շրջանում՝ մի այլ տեսակի ուղերձ: Հասցեն օգնում է ընթերցողին պատկերացնել բնակության վայրը՝ ընդարձակ սիզամարգե՞ր ու առանձնատնե՞ր, թե՞ էժանագին մունիցիպալ բնակարաններ:

Զբաղմունք

Աշխատանքը բնութագրում է մարդուն: Այսինքն՝ աշխատանքով կարելի է նկարագրել մարդու բնավորությունը եւ անհատականությունը: Պատկերացրեք այն կերպարները, որոնք դուք կառուցում եք հետեւյալ պաշտոնների անունները լսելիս՝ հյուրանոցի սպասուհի, կինոպրոդյուսեր, նպարավաճառ, ձկնորս, ուսուցիչ, դերասան: Բնականաբար, այս պատկերները ընդհանրացված են, եւ մենք չենք կարող դրանք օգտագործել, հակառակ դեպքում մենք անհատներին կդարձնենք ստերեոտիպեր:

Ինքնությունը հաստատող այլ տեղեկություններ

Մենք կարող ենք այլ տեսողական մանրամասներ եւս օգտագործել՝ հասակը, կշիռը, մազերի գույնը, ֆիզիկական տարբերիչ նշանները: Ինչպես է մարդը խոսում, նրա կեցվածքը եւ շարժուձեւերը: Այս բոլորն օգնում է մեզ պատկերացնելու մարդուն: Այսպիսի նկարագրական մանրամասները կարեւոր են հատկապես ակնարկներում եւ հոդվածներում, երբ հոդվածագիրը ձգտում է ստեղծել մարդու դիմանկարը:

Ռասան, դավանանքը եւ ազգությունը երբեմն էական են պատմության համար, սակայն չափազանց հաճախ դրանք նշվում են առանց կապ ունենալու այդ իրադրության հետ:

«Նյու Յորք Թայմսի ոճի ու գործածությունների ձեռնարկը» զգուշացնում է հոդվածագիրներին.

Ռասան պետք է նշվի, եթե միայն այն իսկապես նշանակություն ունի: Նույն սահմանափակումը վերաբերում է եւ էթնիկական ու կրոնական պատկանելությունը նշելուն:

Երբ Հռոմեական կաթոլիկ եկեղեցին Ֆրանսիայում արքեպիսկոպոս նշանակեց, լրատվություններում շեշտվեց, որ նա ծնունդով հրեա է: Նացիստական համակերտրոնացման ճամբարներում մահից փրկելու համար՝ ծնողները նրան հանձնել են մի կաթոլիկ ընտանիքի, որն էլ նրան դաստիարակել է կաթոլիկական հավատով: Նրա ծնողները զոհվել են Ողջակիզման ժամանակ: Ակնհայտ է, որ այս դեպքում դավանանքի մասին նշումն էական է:

Ինքնությունը նշելը էական է, երբ աղբյուրից՝ որպես հեղինակություն, մեջբերումներ են անում: Այս դեպքում նշվում են աղ-

բյուրի պաշտոնը կամ կենսագրական տվյալները՝ ընդգծելու համար, որ այդ անձն իրավասու է խոսելու այն նյութի մասին, որի կապակցությամբ էլ նրան ցիտում են:

«Մամուլի ազատությունն ապահովված է միայն նրանց համար, ովքեր դրա միջոցներից մեկի սեփականատերն են», - գրել է Ա. Ջ. Լիբլինգը: Լիբլինգը, որը եղել է թերթի թղթակից, հետո գրել է ամսագրերի համար, ինչպես նաեւ գրքեր, մամուլի անսասան քննադատներից մեկն է եղել: Տարիներ շարունակ նա ունեցել է «Քմահաճ մամուլ» անունով իր սյունակը «Նյու Յորքեր» ամսագրում:

Լրատվության ասելիքը

Ամեն անգամ, երբ հոդվածագիրը թղթի վրա բառեր է գրում, նա ուզում է ինչ-որ բան ապացուցել: Լրագրության մեջ հիմնական ուղերձը կոչվում է լրատվության ասելիք կամ տեղեկատվության կիզակետ: Որպես կանոն, նպատակը դրվում է հոդվածի լիդի մեջ, հայտարարության վերնագրում, նորությունների թողարկման մեջ՝ առաջին մի քանի բառերում:

Եթե նույնիսկ տեղեկատվությունը ներկայացվում է հոդվածի, ակնարկի կամ խմբագրականի մեջ, եւ հոդվածագիրը միտումնավոր ուշացնում է թեմայի ներկայացումը, երբեմն այն տանելով նյութի վերջ, ասելիքը պարզորոշ նշվում է (հոդվածագրության մեջ այն պարբերությունը, որում ներկայացվում է էությունը կամ թեման, կոչվում է հենքային պարբերություն):

Հոդվածագիրները, հանձնարարություն կատարելիս, աշխատում են լրատվության ասելիքը կամ լիդը հնարավորին չափ շուտ ձեւակերպել: Որքան շուտ նրանք իրենց նյութը լավ պատկերացնեն, այնքան շատ ժամանակ կունենան իրենց թեմայի համար օժանդակ նյութեր հավաքելու համար:

Իհարկե, փոստատարների գործադուլի մասին գրելուց առաջ Մարսիա Չեյմբերսը գիտեր, որ ինքն ուզում է նկարագրել գործադուլի տնտեսական հետեւանքները մի առանձին աշխատողի օրինակով:

Չնայած փորձառու լրագրողները բավականին շուտ են պատկերացում կազմում իրենց նյութի մասին, սակայն նրանք աչալրջորեն հետեւում են նաեւ հակասող տեղեկություններին: Եթե աշխատանքի ընթացքում այնպիսի տեղեկություններ են ի հայտ գալիս, որոնք ժխտում են ունեցած պատկերացումները նյութի մա-

սին, ապա լրագրողները ձեւակերպում են նոր պատկերացումներ, որոնք համապատասխանում են իրենց դիտարկումներին: Լրագրողները տեղյակ են իրենց դարանակալող վտանգին՝ տեսնելու եւ լսելու միայն այն, ինչ իրենք են ուզում տեսնել եւ լսել:

Անկողմնակալություն

ԱՄՆ-ում, Կանադայում եւ մի քանի արեւմտյան երկրներում լրագրության մեծ ուժը նրա անկողմնակալությունն է: Լրագրերի ընթերցողները, ինչպես նաեւ ռադիոունկնդիրները եւ հեռուստադիտողները սպասում են, որ նորությունների մասին հայտնող լրագրողները լինեն անաչառ եւ անկախ: Լրագրողը լոյալ է հասարակության նկատմամբ, այլ ոչ թե կուսակցության, որեւէ կազմակերպության կամ կառավարության նկատմամբ:

Անկողմնակալությունն ունի երկու իմաստ՝

● **Մեխանիկական աշխատանք** - Նյութը անկողմնակալ է, եթե հավասարակշռված է ու անաչառ. լրագրողը չի ընդգրկում իր տեսակետները, զգացմունքներն ու կանխակալ կարծիքները: Տեղեկությունները ստուգվում են լրագրողի կողմից դեպքի ուղղակի դիտարկումներով կամ փաստաթղթերով ու գրանցումներով, որոնք լրագրողը կարող է մատնացույց անել որպես իր գրածի ապացույց: Անկողմնակալ հոդվածագիրը իր զգացմունքները ստորադասում է փաստերին:

● **Ավանդույթ** - Այսպես կոչված «ազատ աշխարհում» լրագրությունը «անաչառ երրորդ կողմն է, որը խոսում է ի շահ բոլորի», - ասում է Ամհերսթում գտնվող Մասաչուսեթսի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի անդամ Ջեյմս Բոյլանը: Լրագրության անաչառության փիլիսոփա Ուոլթեր Լիփմանը լրագրությունը նկարագրում է «որպես մի կողմ կանգնած ինստիտուտ, որի պարտականությունն է հասարակությանն ապահովել վստահելի, անաչառ տեղեկատվությամբ», - ասում է Բոյլանը:

Կարծիք

Սկսնակները դժվարությամբ են իրենց գրածներում թաքցնում իրենց ոգեւորությունը, իրենց զգացմունքներն ու կարծիքները:

Ինչո՞վ են տարբերվում այս նախադասությունները:

1. Երեկ երեկոյան Քաղաքային խորհուրդը մունիցիպալ աշխատողների աշխատավարձը բարձրացրեց ամբողջ 15 տոկոսով:

2. Երեկ երեկոյան Քաղաքային խորհուրդը մունիցիպալ աշխատողների աշխատավարձը բարձրացրեց ընդամենը 15 տոկոսով:

3. Երեկ երեկոյան Քաղաքային խորհուրդը մունիցիպալ աշխատողների աշխատավարձը բարձրացրեց 15 տոկոսով:

Եթե ձեր պատասխան այն է, որ 1-ին եւ 2-րդ նախադասություններում կարծիք է արտահայտվում, ապա դուք ճիշտ եք: Կարծիքները լրատվության հետ գործ չունեն, եթե միայն դա հղում չէ աղբյուրին: Առաջին նախադասության մեջ կարծիքն ակնհայտ է: «Ամբողջ» բառի օգտագործումը բացահայտում է լրագրողի կարծիքը, որ աշխատողները չպետք է ստանային աշխատավարձի այդպիսի բարձրացում: Այս կարգի կարծիքների տեղը լրագրի խմբագրականն է: Երկրորդ նախադասությունը ակնարկում է, որ աշխատողներն արժանի են աշխատավարձի 15 տոկոսից ավելի բարձրացման՝ նրանց աշխատավարձը բարձրացել է ընդամենը 15 տոկոսով: Երրորդ նախադասությունն ընդունելի է, քանի որ այն փաստը շարադրում է առանց կարծիք արտահայտելու: Երրորդ նախադասությունից ընթերցողները կարող են իրենց սեփական հետեւություններն անել:

Կարծիքը նյութի մասին հոդվածագրի զգացմունքների ներմուծումն է: Որպես կանոն, այն արտահայտություն է, որը ցույց է տալիս հոդվածագրի հավանությունը կամ անհամաձայնությունը: 1-ին եւ 2-րդ նախադասություններում արտահայտվում է հոդվածագրի անհամաձայնությունը:

Այժմ նայենք հետեւյալ նախադասությունները եւ փորձենք պարզել, թե որտեղ է հոդվածագիրը միջամտել:

1. Սուսերամարտի կանանց թիմը այս տարի առաջին հաղթանակը տարավ իր նոր հրաշալի մարզիչ Ալիս Մեյերսի հետ:

2. Հանցագործության մասին խոսելու դժկամությունը ցույց էր տալիս, որ նա վախենում է, թե ոստիկանությունն իրեն ծուղակը կգցի:

3. Դա շրջանում չորրորդն շենքն է, որ տուժում է հրդեհից, եւ ինչպես նախորդ երեքը, հավանաբար, հրկիզողի ձեռքի գործ է:

4. Դեմոկրատների թեկնածուն, ինչպես իր կուսակցության այլ ներկայացուցիչներ, կողմ է սոցիալական խնդիրների համար միջոցներ հատկացնելուն, ինչն անշեղորեն տանում է դեպի չհավասարակշռված բյուջե:

Ահա, թե ինչպես է խմբագիրը վերլուծում այս նախադասությունները:

1. «Ուշադիր եղեք ածականների հետ: Ամեն անգամ օգտագործելիս համոզվեք, որ այն արդարացված է, որ դուք կարող եք դա ապացուցել: Առաջին նախադասության մեջ նշվում է, որ մարզիչը «հրաշալի» է: Ինչպես նաեւ, որ «նոր» մարզիչ է: Իհարկե, եթե սա նրա առաջին տարին է, նա նոր է, եւ ընթերցողն էլ ընդունում է, որ դուք կարող եք դա ապացուցել: Բայց «հրաշալի՞»: Ի՞նչ է դա նշանակում: Որ նա լա՞վն է: Այստեղ լրագրողի ոգեւորությունը չափից ավելի է: Դուք կարող եք հղում անել թիմի տնօրենին, եթե նա ասի, որ Ալիս Մեյերսը հրաշալի է, սակայն դուք ինքներդ դա չեք կարող ասել»:

2. «Մեր իմացածը միայն այն է, որ նա չի պատասխանել ոստիկանության հարցերին: Որտեղի՞ց թղթակիցը գիտե, թե ինչ է այդ մարդու մտքում: Թղթակիցը տեսել է 20-ը 20-ի վրա ռենտգեն նկա՞ր, որը ցույց է տվել, թե ինչ կա այդ մարդու գլխում: Գուցե նա կատարում է իր փաստաբանի հրահանգները ու լո՞ւռ է մնում: Ո՞վ գիտե: Իհարկե, եթե ոստիկանության սպան ձեզ ասի. «Այդ մարդը չի խոսում, վախենում է իրեն փորձանքի մեջ գցել», ապա դուք կարող եք դա մեջբերում անել: Մեկը կա, որին դուք կարող եք այդ եզրակացությունը կամ հետեւությունը վերագրել: Խնդիրն այն է, արդյոք ազնի՞վ կլինի օգտագործել ոստիկանի ասածը: Ես այդ չէի անի: Վերջապես, նա որտեղի՞ց գիտի: Եւ նա ակնարկում է մեղավոր լինելը: Միայն երդվյալ ատենակալները կարող են դա որոշել:

3. «Լրագրողները կռահումների կամ հավանականությունների հետ գործ չեն ունենում: Եթե դա նույնիսկ հարյուրերորդ շինությունն է, եւ նախորդ 99-ը այրվել են հրկիզողների ձեռքով, թղթակիցը չի կարող եզրահանգումներ անել հարյուրերորդի վերաբերյալ: Մենք գիտենք, որ երեք հրդեհ բռնկվել է հրկիզումների հետեւանքով, սակայն չորրորդի պատճառի մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Մենք միայն կարող ենք ասել, որ մյուս երեքի պատճառը հրկիզումներն են, եւ եթե ընթերցողն ուզում է հետեւություն անել, որ չորրորդինը եւս դա է, ապա՝ իր գործն է»:

4. «Ոչ մի կարծիք, խնդրում եմ: Նախադասության մեջ երկուսը կա: Թղթակիցը գրում է «ինչպես իր կուսակցության այլ ներկայացուցիչներ»: Ճիշտ է, որ դեմոկրատներն ընդհանրապես, հանրապետականներից ավելի, հակված են պետական օգնություն տրամադրելու աղքատներին, հաշմանդամներին եւ այլոց: Բայց ոչ բոլոր դեմոկրատներն են հետեւում այդ փիլիսոփայությանը, ինչպես դա երեւում է թերթերից: Երկրորդ կարծիքն այն է, որ սոցիալական ծախսերը հանգեցնում են անհավասարակշռված բյուջեի: Անհավասարակշռված բյուջեի բազմաթիվ պատճառներ կան, օրինակ հսկայական ռազմական ծախսերը կամ ցածր հարկերը»:

Կարծիքների նրբերանգներ

«Մենք հպարտանում ենք ոչ թե մեր անկողմնակալությամբ, այլ մեր անկախությամբ: Ընթերցողները գիտեն լրագրողների տեսակետների մասին եւ սպասում են, որ դրանք արտացոլված լինեն մեր նյութերում»:

«Մոնդի» մի խմբագիր

«Ինչու՞ թույլ տալ խոսքի ազատություն: Ինչու՞ կառավարությունը, որը համոզված է, որ ճիշտ է, պետք է թույլ տա, որ իրեն քննադատեն»: Լրագրողները պետք է լինեն «ագիտատորներ, պրոպագանդիստներ եւ պետության գործակալներ»:

Լենին

«Մենք այն փակեցինք («Այենդեգան» թերթը), որովհետեւ մենք գիտեինք, թե ովքեր են նրանք եւ ինչ են ուզում: Եւ սա դեմ չէ ազատությանը: Այսպես ամեն տեղ են վարվում ... »

Այաթոլա Խոմեյնի

«Մամուլը ազատության հիմնական ժողովրդավարական գործիքն է»:

Ալեքսիս դե Թոքեվիլ

«Ազատ մամուլի տեսությունն այն է, որ ճշմարտությունը երեւան կգա ազատ թղթակցության եւ ազատ քննարկման ժամանակ, այլ ոչ թե ներկայացվի մեկ հայտարարության մեջ՝ լիովին ու անմիջապես»:

Ուոլթեր Լիփման

«Աշխարհի երկրների մեծ մասում ազատ մամուլ չկա: Թերթերի եւ հեռարձակման կայանների միայն չորրորդ մասը ազատ կարող է հաղորդել այն, ինչ գրել են լրագրողները: Այլ երկրներում, որտեղ լրագրողները հանդես են գալիս գրաքննության դեմ, նրանց բանտարկում են, կտտանքների ենթարկում եւ սպանում»:

Ֆրիդրմ Հաուզ

Լիակատար անկողմնակալություն հնարավոր չէ

Մինչեւ մենք խմբագրին թույլ տանք մեզ համոզելու, որ լրագրողը կարող է լինել այնքան անկողմնապահ, ինչքան կամրջի ձողակառույցը չափող ճարտարագետը, եկենք ընդունենք, որ լրագրողներն ունեն կարծիքներ եւ որ նրանք կարող են եզրակացություններ անել այնպիսի արագությամբ, ինչպես մարզասերն է ոտքի ցատկում, երբ իր թիմը գոլ է խփում: Իրականում, կարծիքները, զգացմունքներն ու կանխակալ եզրահանգումները կարող են լրագրողին տանել դեպի հետաքրքիր պատմություններ:

Սակայն լրագրողի կարծիքները, մասնավոր եզրակացությունները եւ զգացմունքները չեն կարող ներմուծվել լրատվությունների մեջ: Դրանք մեկնաբանի, սյունակագրի (կոլումնիստի), խմբագրականների հեղինակի եւ մի քանի այլոց իրավասությունն են:

«Ինձ ծանոթ ամեն մի լավ լրագրող ունի իր համոզմունքները,- ասում է հին թղթակից եւ «Թայմս»-ի խմբագիր Թոմաս Գրիֆիթը: - Սակայն լրագրողի մասին կարելի է դատել նրա՝ իր համոզմունքներն իր թղթակցություններից առանձնացնելու ունակությամբ»:

Ստուգում

Նորությունների խմբագրության հին աշխատողներն ասում են սկսնակներին. «Եթե մայրդ քեզ ասում է «որդիս», անպայման ստուգիր դա»:

Ռաբբի Իսմայիլ բեն Էլիշան ասում էր Մեիր Գրչին. «Ուշադիր եղիր քո գործն անելիս, որը աստվածային արվեստ է, քանի որ բաց թողնելով կամ ավել գրելով մի տառ, դու կարող ես աշխարհը կործանել»:

Լուիս Ի. Նյումեն «Հասիդական անթոլոգիա»

Երբ լրագրողն իր ունեցած տեղեկությունները հաստատում է, համեմատելով որեւէ օբյեկտիվ աղբյուրի հետ, մենք ասում ենք, որ նյութը ստուգված է:

«Նյու Յորք Թայմս»-ը գրում է. «Մի վստահեք որեւէ մեկին կամ որեւէ բանի, որը կարելի է ստուգել»: Այս կանոնը վերաբերում է նույնիսկ ամենավստահելի աղբյուրներին: Նրանք կարող են սխալվել, ինչպես օրինակ մի նկարչի ներկայացուցչի պատրաստած հաղորդումն այն մասին, որ նկարչի ցուցահանդեսը բացվելու է Իսթ 66-րդ փողոցում: Թղթակիցը, որին հանձնեցին այդ հաղորդագրությունը, սահմանված կարգով ստուգեց հեռախոսագրքով: Պատկերասրահը գտնվում էր Իսթ 61 հասցեով:

«Թալսա Թրիբյուն»-ի հատուկ նախագծերի խմբագիր Մերի Հարգրոուվը նկարագրում է, թե ինչ տեղի ունեցավ, երբ աղբյուրը թղթակցի վզին փաթաթեց իր տեսակետը, արդյունքում՝ դառնություն ու շփոթություն: Նա հարցազրույց էր անցկացրել Օքլահոմա Սիթիի «Փենն Սքուեր» բանկի ղեկավարության հետ այն բանից հետո, երբ լուրեր էին տարածվել, թե բանկը դժվարին դրության մեջ է:

Բանկի ղեկավարությունը հավաստիացրեց նրան, որ ոչ մի խնդիր էլ չկա: «Ես դուրս եկա՝ հիմար, անբան ու երջանիկ», - պատմում է նա: Նա նորից չստուգեց: Դա հուլիսի 4-ի տոների ընթացքում էր:

«Տոներից հետո բանկը փակվեց»,- շարունակում է Հարգրոուվը:

Խաբեություններ

Չնայած լրագրողներին հաճախ նախազգուշացնում են առանց նշան բռնելու կրակելուց խուսափելու, գործը ավարտած չհամարելու մասին, քանի դեռ ամեն ինչ չի ստուգվել, նույնիսկ ամենից խելոքները ժամանակ առ ժամանակ դառնում են խաբեության զոհեր: Մի օր UPI-ի Նյու Յորքի խմբագրությունում հայտնվեց մի թղթատար՝ բերելով իրավաբանական ընկերության կողմից ուղարկած մի մահախոսական: Մահախոսականը ընկերության բլանկի վրա էր, ծանուցման հետ կար նաեւ հանգուցյալի կենսագրությունը եւ լուսանկարը: Ըստ այդ ծանուցման մահացածը Լ. Դենիս Փլանքեթն էր, 31 տարեկան, «Նեյշընալ Լամփուն»-ի գլխավոր խմբագիրը: Ասվում էր, որ Փլանքեթը մահացել է նախորդ օրը Քորնելի համալսարանի 300 ուսանողների հետ ունեցած հանդիպումից հետո: Մահվան պատճառը հայտնի չէ:

UPI-ի խմբագրությունը մահախոսականը տարածեց, իսկ որոշ ժամանակ անց Նյու Յորքի բաժանմունք զանգահարեցին UPI-ի Չիկագոյի բյուրոյից եւ ասացին, որ մահախոսականը կասկածելի է թվում: Նյու Յորքը նյութը չեղյալ հայտարարեց եւ ստուգեց՝ կապվելով ամսագրի հետ: Այնտեղից տեղեկացրին, որ իրենց աշխատակիցների մեջ Փլանքեթ ազգանունով մարդ չկա, ոչ էլ «գլխավոր խմբագիր» պաշտոն ունեն: AP-ի Նյու Յորքի բաժանմունքում ստուգում էին այդ մահախոսականը, երբ զանգահարեցին UPI-ից՝ խաբեության մասին զգուշացնելու:

UPI-ում խստացրին ընթացակարգերը՝ պետք է ստուգվեին բոլոր մահախոսականները:

Ճշմարտության որոնումները

Ստուգման կամ հաստատման իմաստն այն է, որ ընթերցողի կամ ունկնդրի համար փորձում են ապահովել ճշմարտությունը: Ճշգրտությունը կարեւոր է, սակայն դա բավական չէ:

«Փաստն առանց ճշմարտության անօգուտ է: Ավելի շուտ, փաստն առանց ճշմարտության կեղծ է»: Աղբյուրը անգլիացի գրող Ջ. Ք. Չեսթերթոնն է, որի թիրախը կեղծավորներն ու շառլատաններն էին: Այս նույն գաղափարն էր որդեգրել 1950-ական թվականներին ռադիոլրագրող Էլմեր Դեյվիսը, այն քչերից մեկը, ովքեր ցանկանում էին պարզել արդյոք ճշմարի՞տ են Վիսքոնսին նահանգից սենատոր Ջոզեֆ Մաք Քարթիի հարուցած մեղադրանքները դավաճանության ու քայքայիչ գործունեության մեջ:

Իհարկե փաստ է, որ Մաք Քարթին հայտարարում էր, որ կառավարության մեջ շատ ակնառու դեմքեր կոմունիստական կուսակցության անդամներ են կամ համակիրներ, ինչն էլ մամուլը պատրաստակամ տարածում էր, մինչդեռ Դեյվիսը հարցնում էր. «Դա ճի՞շտ է»: Նա շարունակում էր հարցեր տալ. «Մամուլն ունի՞ այդպիսի պարտավորություն՝ մարդկանց հաղորդելու փաստի ճշմարտացիությունը»:

Հղումները մամուլի ուսերից վերցնում են պնդումների, մեղադրանքների եւ հայտարարությունների պատասխանատվության բեռը: Սակայն լուրջ հարցերի դեպքում չպե՞տք է, արդյոք, մամուլն ինքը աշխատի գտնել ճշմարտությունը:

Դեյվիսն ասում է՝ այո, եւ մամուլն էլ, տարիներ անց, համաձայնում է նրա հետ: Լրագրողները կատարում են անկախ ստուգումներ՝ ամբաստանությունների, հայտարարությունների, մե-

ղադրանքների, նույնիսկ դատարանի ընդունած որոշումների վե-

րաբերյալ: Փոլ Հենդերսոնը՝ «Սիեթլ Թայմս»-ից, լուրջ համարեց

մի մարդու անմեղության մասին բողոքները, որին դատապար-

տել էին առաջին աստիճանի բռնաբարության համար: Հենդերսո-

նը խորամուխ եղավ այդ պատմության մեջ եւ դատավճիռը կա-

յացնելուց հինգ օր առաջ ապացույցներ ներկայացրեց, որոնց հի-

ման վրա մարդն ազատ արձակվեց:

Հաջորդ գլխում մենք անդրադառնում ենք այն հարցին, թե ինչ-

պես սկսել հոդվածը, իսկ հետո կտեսնենք, թե ինչ կառուցվածք ունի

լրատվությունը:

Գլուխ 4
Ինչպես սկսել նյութը

Մուտք

Որեւէ նորության մասին գրելուց առաջ մենք պետք է իմանանք, թե ինչն է կարեւոր, ինչն է այդ իրադարձությունը դարձնում գրելու արժանի եւ դրա որ կողմերը հարկ կա շեշտել: Կարճ ասած՝ մենք պետք է զարգացնենք «նորության զգացողություն» կոչվող մի բան:

Լրագրողների կարծիքով, դեպքի լրատվական արժեքը պետք է որոշվի դրա ունեցած ներգործությամբ կամ հետեւանքներով. արդյո՞ք դեպքն անսովոր է եւ արդյո՞ք դեպքի մասնակիցները հայտնի կամ նշանավոր անձնավորություններ են՝ հասարակական դեմքեր:

Այլ գործոններ եւս կարող են մեծացնել կամ նվազեցնել դեպքի լրատվական արժեքը, ինչպես օրինակ՝ կոնֆլիկտը, մերձավորությունը, ժամանակը եւ հրատապությունը. արդյո՞ք մարդկանց համար դեպքը դեռ հետաքրքրություն ներկայացնում է, չնայած՝ կարող է եւ նոր չլինել:

Մենք կտեսնենք, թե ինչպես է հոդվածագիրը որոշում՝ նյութը դառնալու է չոր լրատվությո՞ւն, թե՞ հոդված, եւ՝ ինչպես է լրագրողը սկսում իր հաշվետվությունը: Մենք նաեւ կուսումնասիրենք լավ գրված, վստահության արժանի նյութի բաղադրիչները:

Ի՞նչ է լուրը

Լուրերի մեր ուսումնասիրությունը սկսվում է մի փառահեղ հինավուրց շենքում՝ կոմսության դատարանում: Երկրորդ հարկում, մետաղյա դարակներով լի ընդարձակ սենյակում մի երիտասարդ կին կանգնած է երկար սեղանի մոտ եւ աչքի է անցկացնում ինչոր թղթեր: Նա տեղական լրագրի դատական լուրերի թղթակիցն է:

Փաստաթղթերն ուսումնասիրելուն զուգընթաց՝ նա դրանք դասավորում է երկու կույտով: Մեծ կույտը կազմված է դատական այն փաստաթղթերից, որոնցում նա լրատվության համար նյութեր էր փնտրել եւ խոտանել էր: Մյուս կույտում նյութեր են, որոնք նա մի կողմ էր դրել, որպեսզի իր լրատվությունների համար նշումներ անի:

Նա կարդում է շատ արագ, սակայն վնասների փոխհատուցման մասին հայցերը, հայցվորի ու պատասխանողի հայտարարությունները եւ թղթապանակներում եղած այլ թղթերը, թվում է, վերջ չունեն: Մի էջի վրա նա վարանում է: Այնուհետեւ մանրամասն ուսումնասիրում է թղթերը: Փաստաթուղթը դնում է հետաքրքրություն ներկայացնող կույտի մեջ: Նոր թղթակիցը, որն ուսումնասիրում էր այդ տեղամասը, հարցնում է, թե ինչու նա որոշեց երկրորդ անգամ նայել այդ թուղթը:

«Այն կարեւոր թվաց,- պատասխանեց լրագրողը: - Այս բնագավառում որոշումները պետք է արագ կայացնել, հակառակ դեպքում կթաղվես եւ երբեք գրելու ժամանակ չես ունենա:

Ես երկու ուղեցույց ունեմ, որոնցով դասակարգում եմ նյութերը: Կամ նյութը կարեւոր է, կամ այնքան անսովոր, որ կարող է դառնալ հետաքրքիր պատմություն:

Այս մեկը կարեւոր է, քանի որ այն հայցադիմում է մի մեծ շինարարական կազմակերպության կողմից՝ ստիպելու կոմսության իշխանություններին, որ նրանք թույլատրեն քաղաքի հյուսիսային մատույցներում առեւտրական սրահներ կառուցել: Սա նշանակում է, որ ճակատամարտ է սպասվում շինարարական ընկերությունների եւ այն մարդկանց միջեւ, ովքեր ուզում են պահպանել կանաչ տարածքները»:

Նա իրար ամրացրած երկու էջ վերցրեց հավանական լրատվությունների կույտից: «Ահա մեկը, որ բացարձակապես կարեւոր չէ: Սակայն դրանից մի փոքրիկ սիրունիկ պատմություն կստացվի: Սա արտասովոր պատմություն է: Փաստաթղթերում նկարագրվում է մի քանի հազար դոլարի հասնող վնասների հատուցման հայց մի կնոջ կողմից, որը մեղադրում է հանրախանութի Սանթա Քլաուսին՝ իր վեցամյա որդուն ապտակելու համար:

«Դուք երբեւէ լսե՞լ եք, որ Սանթա Քլաուսին դատի տան,- հարցնում է նա: - Այսպիսի պատմությունները ընթերցողներին դուր են գալիս»:

Այդ երեկո նորաթուխ թղթակիցը մտածում էր այն ամենի մասին, ինչն իրեն պատմել էր դատական լուրերի թղթակիցը: Նա նոր էր ավարտել ժուռնալիստիկայի բաժինը եւ փորձաշրջան էր անցնում: Հասկացել էր, որ պետք է սրի իր «նորության զգացողությունը», այնպես որ կարողանա տարբերակել, թե ինչն է լրատվության արժանի, ինչը՝ ոչ:

Նա գրի առավ երկու սահմանում՝

1. Լուրն այն նյութն է, որը հասարակությունը պետք է ստանա, որովհետեւ այն կարեւոր է:

2. Լուրն այն նյութն է, որը զվարճացնում է, որը կարդալը հետաքրքրաշարժ է:

Նա հիշեց ինչ-որ տեղ կարդացածը, որն առաջին սահմանման օրինակ կարող էր ծառայել

Լուրը տեղեկատվություն է, որը մարդկանց օգնում է իրենց խնդիրները լուծել խելամիտ ձեւով:

Իսկ լուրի մյուս կատեգորիա՞ն՝ զվարճացնե՞լը: Ինչպես ասում էր իր պապիկը՝ մարդիկ ապրում են ոչ միայն հացիվ, դեպքից դեպք նրանք համադամների կարիք էլ ունեն:

Դատական լուրերի թղթակցի ուղենիշները օգնում են մեզ ճանաչելու լրատվության սահմանները: Եկեք մի քայլ առաջ անցնենք: Եթե մենք ուսումնասիրենք թերթերը եւ նորությունների թողարկումները, կտեսնենք, որ բոլոր լուրերը բաժանվում են երեք հիմնական խմբերի:

Ահա մի կանոն՝ որոշելու, թե ինչն է կարեւոր լրատվության համար: Որքան փոքր է համայնքը կամ լսարանը, այնքան ավելի շատ մասնավոր բնույթի նորությունների կարիք կա: Փոքր քաղաքներում տեղական ռադիոկայանները հաղորդում են ծնված բոլոր երեխաների մասին, իսկ թերթերը նշում են ոչ միայն բոլոր ծնունդները, այլեւ բոլոր մահվան դեպքերը եւս, ինչպես նաեւ՝ հիվանդանոց տեղափոխվածներին, դատավարությունները, ամուսնությունները, ամուսնալուծությունները, ակումբների ժողովները եւ նույնիսկ միջնակարգ դպրոցն ավարտած բոլոր շրջանավարտների անուններն ամեն տարի:

Երեք հիմնական որոշիչ գործոն

Լուրերի հիմնական մասը՝ 1) այն դեպքերի մասին է, որոնք ներգործություն են ունենում շատ մարդկանց վրա, 2) նկարագրում է անսովոր կամ բացառիկ իրավիճակներ կամ դեպքեր եւ 3) շատ հայտնի կամ նշանավոր մարդկանց մասին է:

Լրատվության ծավալը սովորաբար որոշվում է այն մարդկանց թվով, որոնց վրա դեպքն ազդում է եւ (կամ) այն մարդկանց թվով, ում համար այդ դեպքը հետաքրքրություն է ներկայացնում:

Ներգործություն: «Ներգործություն» ասելով մենք նկատի ունենք նյութի կարեւորությունը կամ նշանակությունը: Ներգործությունը գնահատելու մի ձեւը հաշվարկելն է, թե լրատվության ար-

դյունքները եւ հետեւանքները ինչպիսին կարող են լինել: Որքան շատ մարդկանց վրա է այն ազդում, այնքան ավելի կարեւոր է այդ պատմությունը:

Անսովորը: Լուրի ամենահին սահմանումներից մեկն ասում է, որ երբ շունը կծում է մարդուն, դա լուր չէ, բայց երբ մարդն է կծում շանը, դա լուր է: Կյանքի սովորական ընթացքի խախտումն է ստեղծում լրատվություն: Եթե ինչ-որ բան ստիպում է, որ լրագրողը կանգ առնի եւ ուշադիր նայի, զարմանա եւ բացականչի, ուրեմն լրագրողը գիտե, որ այն, ինչին ինքը նայում է, արժանի է լուր դառնալու:

Լուրն այն է ..

.«Լուրն այն է, ինչը հետաքրքրում է լավ լրագրողին»:
Ջերալդ Ջոնսոն «Սան», Բալթիմոր

«Լուրն այն ամենն է, ինչ ստիպում է մարդկանց խոսել»:
Չարլզ Ա. Դանա, խմբագիր, «Նյու Յորք Սան», 1869-97

«Լուրն այն ամենն է, ինչ ստիպում է ընթերցողին ասել «Ա՛յ քեզ բա՜ն»:
Արթուր Մաք Յուեն, բազմամյա խմբագիր

Լրագրողները, պատմաբանների նման, գերադասում են դրամատիկ իրադարձությունները «մարդկային մեծ հաստատուններից՝ ծնունդ, մանկություն, ամուսնություն, ծերություն եւ մահ»:

Ռոբերթ Դարնթոն, պատմության պրոֆեսոր,
Փրինսթոնի համալսարան

Նշանավոր դեմքեր: Նշանավոր են համարվում այն մարդիկ, ում մասին բոլորը գիտեն կամ ովքեր պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում: Սրանք նորությունների հերոսներն են: Դրանք կարող են լինել քաղաքական գործիչներ կամ մեքենա վաճառողներ, հոգեւորականներ կամ արհմիության ղեկավարներ, էստրադային արտիստներ կամ կառավարության անդամներ: Եթե դուք

գիտեք այդ մարդու անունը եւ կարծում եք, որ ձեր ընթերցողներն էլ գիտեն, ապա հավանական է, որ նա նշանավոր է: Ինչ էլ անեն նշանավոր մարդիկ, նույնիսկ եթե կարեւորություն չի ներկայացնում, որպես կանոն, արժանի է լրատվություններում արտացոլվելու: Անունները լուրեր են ստեղծում:

Նախագահը մրսել է, նահանգապետը մեկ շաբաթով ձկնորսության է գնացել Վայոմինգ, հեռուստաշոուի վարողը գիշերային ակումբում վիճաբանություն է սկսել՝ այս բոլորը դառնում են նորություններ: Մարդկանց մեծ մասը հաճույքով է կարդում նշանավոր մարդկանց անձնական կյանքի մասին:

Ստուգենք բուլվարային մամուլը, որպեսզի տեսնենք տարօրինակի եւ անսովորի ձգողական ուժը: Ներկայացնում ենք բազմաթիվ վերնագրերից միայն մի քանիսը՝

«Էլվիսին տեսել են Սաուդյան Արաբիայում»:

«Հիտլերին բռնել են»:

«Խեղդվող մարդն իր կյանքը փրկում է՝ փրկարար օղակ սարքելով երկու պահպանակներից»:

Եվս չորս գործոն

Իեյլի համալսարանի պատմության պրոֆեսոր Փիթեր Գայն ասում է, որ «մարդկանց փորձի կառուցողական հիմնական աղյուսներն են սերը, ագրեսիան եւ կոնֆլիկտը»:

«Երբ մարդիկ առավոտյան արթնանում են, նրանք ուզում են իմանալ, թե նախորդ գիշեր ով է մեռել եւ արդյոք այդ օրը անձրեւ գալո՞ւ է: Միշտ էլ այդպես է եղել»:

Ռոյվեն Ֆրանք, հեռուստալուրերի պիոներներից մեկը

Մենք կուսումնասիրենք եւս չորս գործոններ, որոնք բարձրացնում են նորության արժեքը՝ կոնֆլիկտ, մերձավորություն, ժամանակը եւ հրատապություն:

Կոնֆլիկտ: Կոնֆլիկտն ընկած է մեր կյանքի հիմքում: Գոյություն ունեն մեզ բոլորիս ծանոթ ներքին կոնֆլիկտներ: Ուսանողը հաջորդ օրվա ստուգարքի համար պետք է սովորի իսպաներենի

բայերի մի ամբողջ ցուցակ, իսկ ընկերները պատրաստվում են կինո գնալ՝ կոնֆլիկտ է: Մեքենայի տերը նկատում է, որ մեքենայի մարտկոցները շարքից դուրս են գալիս: Նորերը կարժենան 75 դոլար: Նա փող ունի, սակայն դրանով ծրագրել է գնել գովազդում տեսած պահարանը. կոնֆլիկտ է:

Քաղաքային խորհրդի, նահանգային օրենսդրական մարմնի կամ կոնգրեսի համարյա յուրաքանչյուր նիստ իր մեջ կոնֆլիկտ է պարունակում: ԱՄՆ-ի սահմանադրությունը կառավարող ուժերին միտումնավոր դնում է միմյանց հետ կոնֆլիկտի մեջ, որպեսզի իշխանության ոչ մի թեւ չկարողանա գերիշխել մյուսին:

Հնարավոր է՝ այն պատճառով, որ մենք այդքան մոտիկ ենք կոնֆլիկտին, մենք չենք նկատում դրա դրաման, բացառությամբ ամենից ակնհայտ դեպքերի՝ գործադուլներ, քաղաքական արշավներ, դատական վեճեր, պատերազմներ:

Պակաս բացահայտ կոնֆլիկտները նույնպես արժանի են լրատվություն դառնալու՝ անհատների պայքարը անբարենպաստ պայմանների դեմ, կին, որը շաբաթական 100 դոլարով աշխատում է ընտանիք պահել, պատմաբան, որը Թոմաս Ջեֆերսոնի մասին այլ տեսակետ ունի եւ կոնֆլիկտի մեջ է ընդունված ընբռնումների հետ, հաշմանդամ տղա, որը փորձում է բեյսբոլ խաղալ: Ամենից հետաքրքիր պատմությունները լրագրողը կարող է հայտնաբերել, երբ խմբերը, կազմակերպությունները կամ անհատները փորձում են հերքել գերիշխող տեսակետները: Երբ կանայք առաջին անգամ միավորվեցին բողոքելու, ինչպես իրենք են կոչում, սեքսուալ հասարակության դեմ, շատ քիչ լրագրողներ դրա վրա ուշադրություն դարձրեցին: Իրականում, կանանց վրա ծիծաղում էին որպես «կրծկալներ այրողների»: Մի քանի լրագրողներ, ովքեր հասկացան այդ շարժումը, ծագման պահից տեսան, որ այն դառնալու է սեռերի հավասարության համար մղվող զանգվածային եւ գործուն շարժում:

Մերձավորություն: «Այն, ինչ մոտ է իմ ընթերցողներին կամ ունկնդիրներին, ավելի կարեւոր է, քան ինչ-որ հեռավոր բաներ»: Ահա այսպես է «մերձավորություն»-ը ձեւակերպել մի լրագրող: Երբ սոցիոլոգիայի բաժնի ուսանողները ներկայացում էին պատրաստել կեղծ ամուսնությունների վերաբերյալ, այդ մասին հաղորդվել էր տեղական թերթում: Դա ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում հարեւան նահանգի ընթերցողների համար, եթե միայն այնտեղի բնակիչներն ընդգրկված չեն ներկայացման մեջ:

Մերձավորությունը, որպես կանոն, վերաբերում է ֆիզիկապես կամ աշխարհագրորեն մոտիկ ինչ-որ բանի: Մահացու ելքով վթարը քաղաքից ոչ հեռու գտնվող խաչմերուկում հետաքրքրում է տեղական ընթերցողներին, սակայն 100 մղոն հեռու ապրող մարդկանց համար այն հետաքրքիր չէ, եթե միայն զոհերից մեկն այնտեղ չի ապրել:

Մերձավորությունը մի իմաստ էլ ունի: Մարդիկ իրենք կապված են զգում նրանց հետ, ովքեր նման են իրենց կամ ում հետ ընդհանուր հետաքրքրություններ ունեն: Կաթոլիկներն ուզում են կարդալ Պապի գործունեության մասին, իսկ շատ հրեաների հետաքրքրում են դեպքերն Իսրայելում: Երբ Կիպրոսում ինքնաթիռի վթար է տեղի ունենում, Միացյալ Նահանգների ժողովուրդը հետաքրքրվում է՝ արդյոք ինքնաթիռում ամերիկացիներ եղե՞լ են: Նրանք իրենց կապված են զգում հայրենակիցների հետ, չնայած վթարը տեղի է ունեցել հազարավոր մղոններ հեռու: Դեպքը լուսաբանելիս՝ թերթերն ու հեռարձակող կայաններն իրենց ընթերցողներին եւ ունկնդիրներին կպատմեն՝ արդյոք այնտեղ ամերիկացիներ եղե՞լ են: Որքան քիչ լինի ամերիկացիների թիվը, այնքան պակաս կլինի նյութի կարեւորությունը Միացյալ Նահանգներում:

Նշանավոր դիրք եւ մերձավորություն

Ուիլի Նելսոնը եւ հեռավոր մահը

«Յունայթիդ Փրես Ինթերնեյշընալը» իր հիմնական նորությունների մեջ նույն օրը հաղորդել է այս երկու նյութերը:

ԼՈՒԻՍՎԻԼ, Քենթուքի (UPI) - Քանթրի երգիչ Ուիլի Նելսոնը չեղյալ է հայտարարել նախատեսված ելույթը շաբաթ երեկոյան Քենթուքիի նահանգային տոնավաճառի փակման համերգի ժամանակ, որովհետեւ հիվանդանոց է ընկել թոքերի բորբոքման պատճառով: Այդ տասնօրյա տոնավաճառի մենեջեր Ջուլիա Շոուն կիրակի օրը հաղորդել է, որ Նելսոնը, որն անցյալ տարվա տոնավաճառի հիմնական դեմքն է եղել, մի ուրիշ նահանգի հիվանդանոցում է՝ շնչառական ուղիների լուրջ հիվանդության պատճառով:

Տիկին Շոուն ասել է, որ հույս ունի այսօր Նելսոնին փոխարինող գտնել: 10:21 AED

Ներկայացված լուրը կարեւոր չէ, սակայն Նելսոնի հասարակական դեմք լինելը UPI-ին ստիպել է այդ նյութին այսքան տեղ հատկացնել:

Ստորեւ ներկայացվող լուրն, անշուշտ, ավելի կարեւոր է, քան քանթրի երգչի տկարությունը, սակայն նրա ազդեցությունը նվազում է, քանի որ այն մերձավոր չէ Միացյալ Նահանգների ժողովրդի համար: UPI-ը դրան հատկացրել է նախորդի կեսի չափ տեղ:

ՆՅՈՒ ԴԵԼԻ, ՀՆԴԿԱՍՏԱՆ (UPI) - Այսօր մի ավտոբուս է ընկել ջրանցքը հյուսիսային Քաշմիր նահանգում, զոհվել է 22 մարդ, հաղորդում է Հնդկաստանի մամուլի գործակալությունը: Վթարը տեղի է ունեցել Փահալգաոնի մոտ, Նյու Դելիից 400 մղոն դեպի հյուսիս-արեւմուտք:

Ժամանակ: Մենք միշտ ուզում ենք իմանալ ամենավերջին նորությունները: Մենք սլանում ենք ժամացույցի որպե ցույց տվող սլաքի հետ: Մեր նորություններ հաղորդող ռադիոկայանները, մեր թերթերը եւ մեր հեռուստատեսությունը լուրերի տարափ են տեղում մեզ վրա: Մենք արթնանում ենք լուրերի առավոտյան թողարկման հետ եւ նախաճաշում ենք նորությունների ու երաժշտության ուղեկցությամբ:

Այս տարափի մեջ լուրերի կյանքը կարճ է: Այսօր կատարվածը ավելի մեծ ներգործություն ունի, քան նախորդ օրը տեղի ունեցած դեպքը, եթե նույնիսկ դրա մասին այն ժամանակ չի հաղորդվել: Որպեսզի ընթերցողների վրա տպավորություն գործեն իրենց ժամանակին արված լրատվություններով, հեղինակները, որպես կանոն, լիդի մեջ դնում են «այսօր» բառը:

Լրագրությունը մեծ հաջողությամբ է լուսաբանում կարեւոր լուրը կամ էլ մի նոր անձնավորության գործունեություն, որը հենց այսօր է հայտնվել մեր էկրաններին: Բայց երկարատեւ իրավիճակից լուր սարքելիս, այնքան էլ լավ չի աշխատում: Մենք տեղեռիցս ցատկում ենք, երբ ջերմաչափը ցույց է տալիս 105 աստիճան: Բայց երբ այն մնում է 100- ի վրա եւ կյանքն ընթանում է իր հունով, ոչ մեկն ուշադրություն չի դարձնում դրան: Ժամանակ առ ժամանակ պահանջում են, որ լրագրողները ուշադրություն հատկացնեն տխուր մարդուն: Եվ որոշ ժամանակ լրագրողներն այդպես էլ անում են: Հետո նրանց հետաքրքրությունը մարում է:

Այժմ մենք պատրաստ ենք անցնելու մեր վերջին գործոնին:

Հրատապություն: «Հրատապություն»-ը սահմանելիս կարելի է ասել, որ այն մի իրավիճակ է, որը որոշ ժամանակ գոյություն է ունեցել եւ որի ժամանակը, վերջ ի վերջո, եկել է: Ինչո՞ւ: Մենք չգիտենք: Աղքատության դեպքում դա մի գիրք էր, որ կարդաց նախագահ Քենեդին եւ դարձրեց քաղաքական խաչակրաց արշավանք: Եթովպիայում սովի դեպքում դա մի փաստագրական ֆիլմ էր, նկարահանված օտարերկրյա լրագրողների կողմից, որն այնքան տանջալից էր, որ դիտողների սրտերը կտոր-կտոր էին լինում, եւ սովն Աֆրիկայում դարձավ լրատվություն: Սովը հանկարծ դարձավ հրատապ հարց:

Սակայն 1980-ական թվականների վերջին սովն Աֆրիկայում այլեւս հրատապ հարց չէր: Չնայած ավելի քան չորս միլիոն մարդ սովի է մատնված, իսկ բազմաթիվ շրջաններում մոլեգնում են մահն ու հուսահատությունը՝ լրագրողներն ուրիշ ուղղությամբ են նայում:

1989 թվականի սեպտեմբերին նախագահ Բուշը պատերազմ հայտարարեց թմրամոլությանը: Հեռուստատեսությունն ու մամուլը նյութեր էին տպագրում թմրանյութերի չարաշահումների մասին: Շաբաթական հրատարակություններն իրենց շապիկները տրամադրեցին այդ պայքարի դրվագներին: Հարցումները ցույց էին տալիս, որ թմրամոլությունը մարդկանց առջեւ ծառացած երկու կամ երեք կարեւորագույն խնդիրներից մեկն է: Թմրամոլությունը, որն առնվազն երկու տասնամյակ խնդիր էր եղել, հանկարծ դարձավ կարեւոր լուր:

14 ամսվա ընթացքում, սակայն, այս խնդիրը դանդաղորեն սահեց վերջին էջերը եւ հազվադեպ էր հայտնվում երեկոյան լուրերի թողարկումներում: Իսկ 1989 թվականին հարցվածների այն 70 տոկոսից, որը թմրամոլությունը համարել էր ազգային հիմնակախնդիր, հաջորդ տարի միայն 25 տոկոսն էր թմրամոլությունը նշել որպես հիմնական վտանգ: Ինչո՞ւ: Իհարկե, թմրանյութերի վաճառքի եւ դրանց հետ կապված այլ հանցագործությունների թիվը չէր նվազել: Իրականում, ամեն տարի ավելի քան մեկ միլիոն կին եւ տղամարդ շարունակում էին դատարանների առջեւ կանգնել թմրանյութերի հետ կապված մեղադրանքներով: Եվ ամեն տարի ծնվում էր 300 000 թմրամոլ երեխա:

Մեր հարցի պատասխանը մեզ տանում է դեպի լրագրության մութ ոլորտները:

Այլ գործոններ

Անշուշտ հեռուներում, ինչպես Եթովպիայում, տեղի ունեցող մահերի դեպքում աշխատում է մերձավորության գործոնը: Բայց թվում է նաեւ, թե մեր ուշադրությունը սահմանափակ է եւ չի ընկալում մեր տների հարեւանությամբ գոյություն ունեցող մահերն ու աղքատությունը: 24 երկրներում երեխաների մահացությունն ավելի ցածր է, քան Միացյալ Նահանգներում՝ աշխարհի ամենահարուստ երկրում: Միեւնույն ժամանակ, միայն մի քանի վճռական լրագրողների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ համոզել խմբագիրներին նյութեր տպագրել ԱՄՆ-ում երեխաների մահացության թվի վերաբերյալ: Իսկ 30 միլիոն մարդ շարունակում է ապրել աղքատության մեջ այդ նույն՝ աշխարհի ամենահարուստ երկրում:

Ինչո՞ւ շարունակվող պատմության նկատմամբ հետաքրքրության պոռթկումից հետո, այդ նյութը մոռացվում է առանց վերհիշվելու: Մի պատասխանն այն է, որ լրատվությունը «նյարդային» բնույթ ունի: Այն իր լույսն է սփռում մեկ այստեղ, մեկ այնտեղ՝ ոչ մի տեղ երկար չմնալով: Ոմանք կարծում են, որ այդ հատկանիշն արտացոլում է հասարակության ուշադրության կարճատեւ բնույթը, իսկ ուրիշների կարծիքով լրատվամիջոցները հասարակությանը վարժեցրել են, որ ամեն օր որեւէ նոր կամ տարբեր բան կստանան:

Ինչ վերաբերում է թմրամոլությանը եւ աղքատությանը, ըստ սոցիոլոգների, միջին խավին պատկանող մարդիկ կորցնում են հետաքրքրությունն այն սոցիալական խնդիրների նկատմամբ, ո-

րոնք ուղղակի վտանգ չեն ներկայացնում իրենց կամ իրենց երեխաների համար: Լրատվամիջոցներն, իհարկե, սպասարկում են միջին խավի շահերը: Թե ինչ է լրատվությունը, որոշվում է նաեւ նրան հատկացված բյուջեով: Թերթը, որը պետության մայրաքաղաքում թղթակցական կետ ունի եւ արտասահմանյան թղթակիցներ, ավելի շատ պաշտոնական եւ արտասահմանյան լրատվություններ կտպագրի, քան այն թերթը, որն այդպիսիք չունի: Երբ ABC-ն փակեց իր թղթակցական կետերը Կենտրոնական Ամերիկայի երեք երկրներում, նրանց վերաբերող լրատվությունը պակասեց: Հայտնի է նաեւ, որ երբ թերթը հարստանում է գովազդների շնորհիվ, ավելի շատ տեղ է հատկացվում նաեւ լրատվություններին, եւ նորությունների սյունակներում հայտնվում են հաղորդումներ, որոնք գովազդներով աղքատ եւ փոքր թերթում կանտեսվեին: Այն, ինչ նորություն չէ շաբաթ կամ երկուշաբթի, կարեւոր լուր է հինգշաբթի կամ ուրբաթ, երբ նպարեղենի եւ հանրախանութների գովազդները հնարավոր են դարձնում նաեւ ավելի շատ տեղ հատկացնել լրատվություններին:

Ամփոփում

> «Լուրեր եւ կարծիքներ հավաքելու եւ տարածելու հիմնական նպատակը համընդհանուր բարեկեցությանը ծառայելն է՝ մարդկանց տեղեկացնելով եւ նրանց հնարավորություն տալով իրենց կարծիքն ունենալու ժամանակի խնդիրների վերաբերյալ»:
>
> **Թերթերի խմբագիրների ամերիկյան ընկերություն**

Մենք համառոտ ուրվագծեցինք նորության յոթ գործոնները՝ ներգործություն, անսովորություն, նշանավոր անհատ, կոնֆլիկտ, մերձավորություն, ժամանակ եւ հրատապություն: Առաջին երեքը ավելի կարեւոր են, իսկ մնացած չորսն իրենց ներկայությամբ կամ բացակայությամբ համապատասխանաբար ընդլայնում կամ նվազեցնում են դեպքի լրատվական արժեքը:

Մի քանի խոսքով ներկայացնենք, թե ինչպես են այս գործոններն օգտագործվում: Առաջին ուղենիշը՝ ներգործությունը կամ հետեւանքը, ենթադրում է, որ դեպքն այնքան կարեւոր է, որ ընթերցողներն ու ունկնդիրները պետք է իմանան դրա մասին: Տրամաբանորեն դեպքն ինքն է պահանջում ներկայացման այնպիսի

ձեւ, որը տեղեկատվությունը ներգործուն է դառնում: Այդ հաղորդումը կատարվում է մի ձեւով, որը մենք կոչում ենք չոր լրատվություն: Նյութը սկսվում է ամենից կարեւոր փաստի կամ փաստերի շարադրանքով, որը ըստ հոդվածագրի, ամենամեծ ներգործությունը կունենա հասարակության վրա:

Երկրորդ ուղենիշը՝ անսովորը կամ արտառոցը, պահանջում է այլ մոտեցում: Լրագրողը ցանկանում է, որ ընթերցողը կամ ունկնդիրը դադար տա, լարվածությունը նվազեցնի եւ պատմությունից հաճույք ստանա: Եվ այսպիսով, ձեւը լրագրային հոդվածն է դառնում՝ գրավիչ նախաբանով, որը համոզում է ընթերցողին մի քիչ նստել եւ հետեւել, թե ինչպես է զարգանում պատմությանը: Լրատվության ասելիքը կամ լիդը կարելի է դնել վերջում, որպես խթան:

Ինչպես սկսել նյութը

Այժմ մենք պատրաստ ենք լրատվության այս գործոնները կամ արժեքները օգտագործել՝ նյութը գրելու համար: Սակայն նախ կանգ առնենք Քալիֆորնիայի նորությունների մի խմբագրությունում, որտեղ քաղաքային լուրերի խմբագիրն անցնում է թղթակիցների ու խմբագիրների սեղանների միջով: Չնայած նրա ձեռքին մտրակ չկա, միայն մի քանի թուղթ է, բայց Ջորջի պողպատե հայացքից եւ կտրուկ ձայնից բոլորի ձեռքերը դողում են: Ջորջը քաղաքային լուրերի հին ժամանակների վերջին խմբագիրներից է, որոնք հավատացած են, թե իրավունքն ուժի մեջ է:

Թերթը համարյա պատրաստ է տպագրության, եւ թղթակիցները վերջին սրբագրումներն են անում: Ջորջը նկատում է մի թղթակցի, որը նստած է իր գրասեղանի առջեւ եւ զննում է առաստաղը:

«Դուք այդ ի՞նչ եք անում», - մռնչում է Ջորջը:

«Մտածում եմ, Ջո՛րջ», - հանգիստ պատասխանում է թղթակիցը:

«Ձեզ վճարում են գրելու, այլ ոչ թե մտածելու համար»,- պատասխանում է Ջորջը:

«Ջո՛րջ, դու չես կարող գրել, եթե չես կարող մտածել», - ասում է թղթակիցը եւ վերսկսում իր «հաղորդակցությունը» առաստաղի հետ:

Ամենահին աշխատակցի հիշողության մեջ անգամ սա առաջին դեպքն է, երբ Ջորջը պապանձվում է: Նրա բերանը բացուխուփ է լինում: Բացվում է ու փակվում: Ջորջը վերադառնում է իր գրասեղանի մոտ, նստում եւ սկսում պատուհանից դուրս նայել:

Այդ խմբագրությունում ասում են, որ այդ ճակատագրական օրը Ջորջը բախվեց մի այնպիսի ճշմարտության, իր համար այնքան խոր ճշմարտության, որ դրանից հետո դադարեցրեց իր սարսափազդու շրջագայությունները խմբագրությունում:

Թղթակիցը գիտեր, թե ինչ է ասում: Հստակ մտածելակեպն ընկած է հստակ գրելու հիմքում:

Գրելուն նախորդում է պլանը, մոտեցումը: Գրելուց առաջ գրողը պետք է իրեն հետեւյալ հարցերը տա՝

1. Ո՞րն է նյութի հիմնական ասելիքը կամ նպատակը: Ինչի՞ մասին է: Նախ եւ առաջ անձի՞ մասին է, թե՞ դեպքի:

2. Այդ դեպքը կդառնա չոր լրատվությու՞ն, թե՝ հոդվա՞ծ:

3. Ինչպիսի՞ լիդ օգտագործել՝ ուղղակի՞, թե՞ հաջորդող:

4. Եթե դա դառնալու է չոր լուր, եւ ես օգտագործելու եմ ուղղակի լիդ, ո՞ր հիմնական փաստն եմ դնելու լիդի մեջ:

5. Եթե դա դառնալու է հոդված, եւ ես օգտագործելու եմ հաջորդող լիդ, սկզբում ի՞նչ միջադեպ կամ նկար պետք է օգտագործել, որ ընթերցողն այդ պատմությամբ հրապուրվի:

6. Ինչպե՞ս կառուցել նյութը: Ինչը որտեղ դնել:

Այս նախապատրաստությունները կարող են բարդ թվալ, ինչպես ուղեղի վիրահատության նախապատրաստվող վիրաբույժինը: Բացարձակապես ոչ: Փորձառության հետ փուլերը հեշտանում են: Իսկ որոշ նյութեր, թվում է, իրենք իրենց են գրվում, նույնիսկ անփորձ հոդվածագրի մոտ: Սակայն, գրել սկսելուց առաջ, եկեք առայժմ հիշենք այդ փուլերը:

Ինչպես գտնել նպատակակետը

Եթե յուրաքանչյուր հոդվածից թողնենք ամենահիմնականը, ապա բոլորն էլ կլինեն հետեւյալի մասին է՝

1. Մի անձնավորության, որը ինչ-որ կարեւոր կամ հետաքրքիր բան է արել կամ ասել կամ մի անձնավորության, որի հետ ինչ-որ կարեւոր կամ հետաքրքիր բան է կատարվել, կամ՝

2. մի դեպքի, որը կարեւոր է կամ հետաքրքիր շատ մարդկանց համար:

Լուրի սկիզբը կամ լիդը, որպես կանոն, ամփոփում է պատմության հիմնական թեման: Նայեք նորությունների կույտերին: Նրանցից համարյա յուրաքանչյուրը սկսվում է լիդով, որը պատասխանում է հետեւյալ երկու հարցերին՝

1. Ո՞վ ասաց, արեց կամ ում հետ կատարվեց ինչ-որ բան:

2. Ի՞նչ է կատարվել:

Այս հարցերը մեզ տանում են դեպի լուրեր գրելու էությունը: Երբ թղթակիցը նստում է գրասեղանի առջեւ, որ գրի, համարյա միշտ գոյություն ունի երկու տարբերակ:

1. Եթե անձը դեպքից ավելի կարեւոր է, ապա հոդվածագիրը տալիս է հետեւյալ հարցի պատասխանը՝ ի՞նչ է ասել, արել այդ անձը կամ ի՞նչ է կատարվել նրա հետ:

2. Երբ դեպքը կարեւոր է կամ անսովոր, հոդվածագիրը պատասխանում է հետեւյալ հարցին՝ ի՞նչ է կատարվել, որը նշանակալի է, բացառիկ կամ անսովոր:

Ուշադիր նայեք համարակալած կետերին եւ կտեսնեք, որ դրանք մարմնավորում են լրատվության երեք որոշիչ գործոնները՝ ներգործություն կամ հետեւանք, անսովորը եւ նշանավոր՝ հասարակական դեմք լինելը:

Կենտրոնանալ անձնավորության վրա: Երբ դեպքի հերոսը մի անձնավորություն է, որը մի բան է ասել կամ արել, կամ նրա հետ ինչ-որ բան է պատահել, հոդվածագիրը նախ եւ առաջ պետք է որոշի, արդյոք ընթերցողներն ու ունկնդիրները կճանաչե՞ն նրա անունը:

Երգիչը Մայքլ Ջեքսո՞նն է, թե՞ Ռալֆ Մարթինը: Եթե Ջեքսոնն է, ապա մարդկանց մեծ մասը կճանաչի այդ անունը, եւ «Ջեքսոն»-ը կմտնի լիդի մեջ: Եթե Մարթինն է, քչերը կճանաչեն նրա անունը, եւ անհրաժեշտ է օգտագործել տարբերիչ պիտակի նման մի բան: Օրինակ՝ «26-ամյա ռոք երգիչ»:

Ներկայացնում ենք մի քանի լիդ, որտեղ օգտագործված է դեպքին առնչվող անձի անունը՝

Ո՞վ ինչ է արել: *ՄԱԼԴԵՆ, Մասաչուսեթս (AP) - Մալդենի ոստիկանության կոմիսար Ուիլյամ Ա. Դեվիդսոնը երեկ հրամայել է աշխատանքից հեռացնել ոստիկանության երկու սպաների, որոնք նրան ձերբակալել էին հարբած մեքենա վարելու համար:*

Ով ի՞նչ է ասել: *ՍՓՐԻՆՖԻԼԴ - Համալսարանի ռեկտոր Ուիլյամ Է. Բարնսն այսօր առաջին կուրսեցիներին ասել է, թե ուսման մեջ հաջողությունների հասնելու ճանապարհն «առանց ուժերը խնայելու ջանքեր գործադրելն» է:*

Եթե դեպքի կենտրոնական դեմքը լավ ծանոթ չէ լրագրողի լսարանին, պետք է օգտագործել պիտակ, որպեսզի ընթերցողնե-

ը եւ ունկնդիրները արագ պատկերացնեն այդ մարդուն: Պիտակը կարող է լինել տարիքը, հասցեն կամ քաղաքը, որտեղ նա բնակվում է՝

Ո՞մ հետ է դեպքը կատարվել: *Քանզասի նահանգի Քանզաս Սիթիի մի 39-ամյա բնակչի երկուշաբթի օրը Ուիյանդոթի կոմսության օկրուգային դատարանում մեղադրանք է ներկայացվել շաբաթ առավոտյան այդ քաղաքի պանդոկներից մեկում հաճախորդին սպանելու համար:*

«Քանզաս Սիթի Թայմս»

Պիտակ կարող է լինել եւ անձնավորության զբաղմունքը՝

Ու՞մ հետ է դեպքը կատարվել: *Քենթուքիի նահանգային ոստիկանության գործակալը երեկ երեկոյան սպանվել է Էդմոնսոնի կոմսության գյուղական վայրերից մեկում՝ մարիհուանա փնտրելիս:*

«Լեքսինգթոն Հերալդ»

Անձի պաշտոնն էլ կարելի է օգտագործել որպես տարբերակիչ պիտակ՝

Ո՞վ ինչ է արել: *Արդեն գոյություն չունեցող Բրուքլինի բժշկական կորպորացիայի ադմինիստրատորին երեկ մեղադրանք է ներկայացվել 1984-1987 թվականներին եկամտահարկի մասին հայտարարագրեր չներկայացնելու համար:*

«Նյու Յորք Թայմս»

Երբ անձի կապը դեպքի հետ բնորոշում է նրան, այդ հարաբերությունը կարելի օգտագործել որպես տարբերակող պիտակ:

Ու՞մ հետ է դեպքը կատարվել: *ՀՅՈՒՍԹՈՆ (UPI) - Հինգշաբթի օրը ոստիկանությունը հաղորդել է. «Ռոուլինգ Սթոունզի մի երկրպագու դանակահարվել է Ասթրոդոմում\ բրիտական այդ ռոք խմբի հսկայական հաջողություն ունեցած համերգի ժամանակ»:*

Կենտրոնանալ դեպքի վրա: Եթե դեպքը նյութի ամենակարեւոր կողմն է, հոդվածագիրը լիդն օգտագործում է, որ պատահածը նկարագրի հնարավորին չափ հակիրճ ձեւով:

Ի՞նչ է կատարվել: *Այսօր պայթյունից մաս-մաս է եղել մի բեռնանավ, որը ականի է դիպել Օմանի ծովածոցում:*

NBC - ի գիշերային նորություններ

Ի՞նչ է կատարվել: *ԹՐՈՒՓ, Փենսիլվանիա (AP) - «Ութ անչափահաս երիտասարդներ ավտովթարի զոհ են դարձել երեկույթի գնալիս, երբ նրանց մեքենան ճանապարհից շեղվել է, հարվածել պարսպին, մոտ 190 ոտնաչափ թռել օդի միջով եւ շրջվել», - ուրբաթ օրը հաղորդել են քաղաքի պաշտոնյաները:*

Ի՞նչ է կատարվել: *ՉԻԿԱԳՈ (AP) - Դե Փոլ համալսարանի ուսանողական թերթը փակվել է ուրբաթ օրը՝ այն բանից հետո, երբ, հակառակ ուսանողական հրատարակությունների տնօրենի կարգադրության, նյութ է տպագրել համալսարանի տարածքում տեղի ունեցած բռնաբարության մասին, հայտնել է խմբագիրը:*

Ուշադրություն դարձրեք, որ սրանք բոլորն էլ չոր լուրերի լիդեր են: Սրանք նյութերի այն տեսակն են, որ թղթակիցներն ամենից հաճախ են պատրաստում, եւ դրան տիրապետելը կարեւոր է: Երբ դեպքն անսովոր է, թղթակիցը գրում է նյութի մի այլ տեսակ՝ հոդված:

Գտնել նպատակը

Երկրորդը այն վեց հարցերից, որոնք մենք տալիս ենք գրելուց առաջ, հետեւյալն է. «Ո՞րն է նյութի նպատակը»: Պատասխանը կարեւոր է, քանի որ նյութն իր ձեւը ստանում է՝ կախված իր նպատակից: Մենք պետք է որոշենք, արդյոք չոր լո՞ւր գրենք, թե՞ հոդված: Եթե մեր նպատակը տեղեկացնելն է, ապա մենք գրում ենք մի ձեւով, իսկ եթե զբաղեցնելն է՝ մի այլ ձեւով:

Եկեք պատկերացնենք, որ ձեզ տեղեկացրել են հրդեհի մասին, որը վնասել է ուսանողների հավաքատեղին՝ Փորք Փարլոր ռեստորանը, որը գտնվում է համալսարանի մոտակայքում: Դուք պետք է նյութ գրեք: Տեղեկություններ եք հավաքում հրշեջ ծառայությունից եւ ռեստորանի տիրոջից: Ահա ձեր գրած նյութը՝

Ուսանողների ճաշելու սիրած վայրը՝ Քոլեջ Լեյն - 150 հասցեում գտնվող Փորք Փարլորը, այսօր վնասվել է խոհանոցում սկսված հրդեհի պատճառով:

Կրակը ավերել է խոհանոցը եւ որոշ չափով վնասել ճաշասրահի տարածքը: Հրշեջ ծառայության ղեկավարությունը հայտնել է, որ հրդեհը

սկսվել է առավոտյան մոտավորապես 6:30-ին՝ թավայի մեջ եղած ճարպի բռնկման հետեւանքով:

Ինչպես հայտնել է մի պաշտոնյա, կրակը հաջողվել է վերահսկողության տակ վերցնել 15 րոպեի ընթացքում: Ոչ ոք չի վիրավորվել:

Վնասը գնահատվում է 25 000 դոլար: Տերը՝ Սթիվ Փոլթոնը, հայտնել է, որ ապահովագրությունը հատուցում է կորուստները: Նա ասել է, որ պլանավորում է երեք շաբաթից ռեստորանը վերաբացել:

Սա չոր լրատվության նյութ է: Սակայն ենթադրենք, որ աշխատողներից մեկը՝ քոլեջի մի ուսանողուհի, հրդեհի ժամանակ կորցրել է ինչ-որ արժեքավոր բան: Հրշեջներից մեկը հիշում է, որ նա ինչ-որ բան էր փնտրում մոխրացած խոհանոցային սարքավորումների արանքում: Նա կարծես լսել էր, որ աղջիկը հարցնում էր այնտեղ եղած ինչ-որ ձեռագրի մասին: Դուք զանգահարում եք Փոլթոնին եւ պարզում ուսանողուհու անունը՝ Քարեն Յունթ:

Ձեզ հաջողվում է գտնել Քարենին: Նա ասում է, որ հենց նոր էր վերջացրել անգլերենի կիսամյակային աշխատանքը, տարել էր աշխատանքի վայր եւ դրել խոհանոցի անկյունի պահարանի մեջ: Այդ աշխատանքի հիման վրա պետք է ինքը գնահատական ստանար այդ առարկայից: Նա մասնագիտանում է անգլերենի մեջ եւ ավարտելու համար իրեն անհրաժեշտ է ստուգարք հանձնել այդ առարկայից: Բայց հիմա … Նրա ձայնը ընդհատվում է:

Դուք ի՞նչ կանեք: Դուք կգրեք նույն չոր լուրը եւ վերջում կավելացնեք Քարենի կորստի մասին մի պարբերություն:

Բայց քոլեջի վերջին կուրսի ուսանողուհի Քարեն Յունթը իր կորցրածը չէր ապահովագրել: Անգլերենի նրա կիսամյակային աշխատանքը այրվել է հրդեհում: Նա այն դրել էր խոհանոցում, երբ այս առավոտ աշխատանքի էր գնացել Փորք Փարլոր:

Սա վատ ավարտ չէ: Բայց այն ավելի լավ սկիզբ չէ՞ր լինի: Քարենի դժբախտությունը կարո՞ղ է լինել նյութի լիդի մեջ: Ոչ, այդպիսով նրա կորուստը կչափազանցվի: Դա ակնհայտորեն ավելի փոքր նշանակություն ունի համայնքի համար, քան ռեստորանին հասցված վնասը:

Մյուս կողմից, հրդեհը մեծ չի եղել: Ոչ մեկը չի տուժել, եւ 25 000 դոլար վնասն էլ մեծ չէ: Դա մի սովորական հրդեհ է: Այն, ինչ այս հրդեհը տարբերում է ուրիշներից, Յունթի կորուստն է:

Այս բոլոր նկատառումները կարող են ձեզ ստիպել, որ հետեւություն անեք այն մասին, որ այս դրվագը կարող է ավելի հաջող հոդված դառնալ, քան չոր լրատվություն: Դուք զանգահարում եք Յունթին եւ նրանից ավելի շատ տեղեկություններ ստանում, իսկ հետո գրում եք հետեւյալը՝

Երեք ամիս շարունակ Քարեն Յունթը իր երեկոների մեծ մասն անց էր կացնում գրադարանում կամ գրամեքենայի առջեւ:

Քոլեջի վերջին կուրսի ուսանողուհին կիսամյակային աշխատանք էր գրում վիպասան Ջորջ Էլիոթի մասին: Այն պետք է դառնար այդ առարկայից նրա գնահատականի հիմքը, եւ կարծում էր, որ բավականին հաջող էր, որպեսզի տպավորություն գործեր Միչիգանի համալսարանի ընդունելության հանձնաժողովի վրա, որտեղ նա հույս ուներ գրել իր ավարտական թեզը:

Սակայն նրա աշխատանքը, գուցե եւ գնահատականն ու հույսերն այս առավոտ վերածվեցին մոխրակույտի:

Քոլեջ Լեյն - 150 հասցեով Փորք Փարլորում բռնկված հրդեհը, որտեղ Յունթն աշխատում է, վնաս էր հասցրել խոհանոցին: Յունթն իր աշխատանքը եւ գրքերը դրել էր խոհանոցի անկյունում, նույնիսկ չէր հասցրել պատճենահանել:

Հրդեհը սկսվել էր ...

Խմբագիրների մեծ մասը գերադասում է այս մոտեցումը, քան չոր լուրի շարադրանքը:

Ինչպես ստեղծել լիդ

Եկեք մոտիկից նայենք լրատվությունների սկզբին, հոդվածի, տեսության, խմբագրականի, հեռարձակման կամ մամլո հաղորդագրության առաջին բառերին: Եթե մենք հոդվածագիրների աշխատանքի հաշվարկ կատարենք, ապա կտեսնենք, որ նրանք ավելի շատ ժամանակ են հատկացնում լիդերին, քան նյութի այլ հատվածներին: Բոլոր գրողներն էլ գիտեն, որ որքան կարեւոր է ուժեղ սկիզբը:

Լիդին մեծ աշխատանք է վերապահված: Նախ եւ առաջ այն պետք է գրավի ընթերցողին կամ ունկնդրին, որպես կանոն, նրան տեղեկացնելով, ինչ է լինելու, ինչի մասին է նյութը: Ընթերցողին գրավելու եւ պահելու համար հոդվածագիրը լիդում ոչ մի անգամ վերջակետ չի գործածում:

1988 թվականին նախագահության բոլոր թեկնածուներից միայն երկուսը, իրենց երեխաների ծննդյան ամսաթվերի հիման վրա, ստիպված էին ընդունելու, որ նախքան ամուսնությունը իրենց կանանց հետ սիրով են զբաղվել, եւ այդ երկուսը՝ Փաթ Ռոբերթսոնը եւ Ջեսի Ջեքսոնը, թեկնածուների մեջ միակ քարոզիչներն էին:

Այսպես էր Գարի Ուիլսը սկսել ավետարանչական շարժմանը եւ քրիստոնեության աջ թեւին վերաբերող երեք գրքերի իր գրախոսականը «Նյու Յորք Ռեվյու օֆ Բուքս»-ում:

Ով կարող է դիմանալ մի այնպիսի գիրք կարդալու գայթակղությանը, որը սկսվում է այսպես՝

Մայրիկն ու հայրիկը պարզապես երեխաներ էին, երբ ամուսնացան: Հայրս տասնութ տարեկան էր, մայրս՝ տասնվեց, իսկ ես՝ երեք:

Այսպես է ջազային երգչուհի Բիլի Հոլիդեյը սկսում իր հիշողությունների գիրքը:

Լավ սկիզբը ոչ միայն հափշտակում է ընթերցողին, դիտողին կամ ունկնդրին, այն նաեւ օգնում է, որ հոդվածագիրը թեման կամ նշանակետը ունենա աչքի առաջ:

Կոմպոզիտոր Ռոբերթ Շումանը խորհուրդ էր տալիս իր ընկերոջը՝ Յոհանես Բրամսին, ուսումնասիրել «Բեթհովենի սիմֆոնիաների սկիզբը ... եւ ձգտել դրանց նման մի բան ստեղծել: Հիմնականը սկիզբն է, եթե սկիզբը պատրաստ է, ապա վերջն ինքն իրեն գալիս է»:

Նորաթուխ հոդվածագիրները զարմանում են, թե ինչո՞ւ է աշխատանքի համար կարեւոր լիդ գրելը: Խմբագիրները նյութերը ետ են վերադարձնում՝ միայն լիդը նայելուց հետո: Բայց երբ նրանք հաջողված լիդ են կարդում, նրանց դեմքի կնճիռները հարթվում են: Հաջողության հասնելու ամենակարճ ճանապարհն անցնում է հաջող լիդի միջով:

Քաղցկեղի հետ կապված վրդովեցուցիչ դեպք

Երբ «Դեյլի Նյուս»-ի թղթակից Հայդի Էվանսը հայտնաբերեց մահացու հետեւանքներով հղի մի լուրջ սխալ, որը գործել էին Նյու Յորքի առողջապահության դեպարտամենտում, նա իր նյութը սկսեց՝ միանգամից անցնելով էությանը:

Ի՞նչ էր կատարվել: *Պապուլաների 2000 քսուկները ավելի քան մեկ տարի առանց ուսումնասիրվելու ընկած են քաղաքի Առողջապահության բաժնի լաբորատորիայում: Մինչդեռ հարյուրավոր կանայք արգանդի վզիկի քացկեղով հիվանդանալու լուրջ վտանգի են ենթարկվում՝ առանց այդ մասին տեղյակ լինելու:*

Քաղաքագլուխը արագ արձագանքեց, եւ հաջորդ օրը Էվանսը ընթերցողներին հայտնեց քաղաքագլխի ձեռք առած միջոցառումների մասին:

Ո՞վ ինչ է արել: *Խիստ վրդովված, որ առողջապահության դեպարտամենտը թույլ է տվել, որ 2000 քսուկներ առանց ուսումնասիրվելու մնան քաղաքային լաբորատորիայում, քաղաքագլուխ Դինքինսը երեկ կարգադրեց անմիջապես հայտնաբերել այն կանանց, ովքեր ենթակա են արգանդի վզիկի քաղցկեղով հիվանդանալու վտանգին:*

Հաջորդ օրը Էվանսը պատրաստեց այս սրընթաց զարգացող պատմությանը վերաբերող մի նոր հոդված եւ նորից սկսեց՝ ուղղակի պատմելով, թե ինչ է կատարվել:

Ո՞վ ինչ ասաց: *Քաղաքի առողջապահության հարցերի կոմիսարը երեկ խոստացավ, որ մինչեւ հունիսի 1-ը հայտնի կդառնան բոլոր այն կանայք, որոնք ենթակա են արգանդի վզիկի քաղցկեղով հիվանդանալու վտանգին այն պատճառով, որ նրանց անալիզներն առանց ուսումնասիրվելու մնացել էին լաբորատորիայում:*

Խոստումներն ու երաշխավորությունները նպաստում են հասարակությանը հանգստացնելուն, սակայն լրագրողները գիտեն, որ իրականությունը կարող է խիստ տարբեր լինել, եւ Էվանսը ստուգեց կոմիսարի խոստումն ու հաջորդ օրը գրեց՝

Ո՞վ ինչ ասաց: *Ի պատասխան առողջապահական հարցերի կոմիսարի խոստումների՝ գտնել բոլոր այն կանանց, ովքեր ենթակա են արգանդի վզիկի քաղցկեղի վտանգին, որովհետեւ անալիզները առանց ուսումնասիրման մնացել էին լաբորատորիայում, երեկ կլինիկայի բժիշկները հայտնեցին, որ արդեն չափազանց ուշ է նրանցից շատերին հայտնաբերելու համար:*

Լրագրության դասերի ժամանակ Էվանսը սովորել էր, որ ոչ մի հոդված, որքան էլ խելոք գրված լինի, չի կարող ավելի լավը լինել. քան թղթակցությունը: Նրա թղթակցության արդյունքը մի պատմություն էր, որն ինքն իրեն պատմվում էր՝

Ի՞նչ էր կատարվել: *Ըստ «Դեյլի Նյուս»-ի ունեցած փաստաթղթերի, քաղաքի բարձրագույն պաշտոնյաները դեռեւս 1989 թվականի սկզբներին իմացել են, որ պապուլաների քսուկների մեծ թվով չհետազոտված նմուշները կանանց ենթարկում են արգանդի վզիկի քաղցկեղով հիվանդանալու վտանգին:*

Էվանսը շարունակում է այս պատմության ուսումնասիրությունը՝ ամիսներ շարունակ անդրադառնալով դրան: Նա իմացավ, որ չուսումնասիրված քսուկներից 59-ը ցույց են տվել առողջության համար վտանգավոր վիճակ եւ որ հայտնաբերվել է վտանգի ենթակա 40 կին, որոնց զգուշացրել են, որ անմիջապես դիմեն բժշկի: Այնուհետեւ նա գտավ մի քանիսին այդ կանանցից, որպեսզի պատմությունը ապահովի մարդկային չափումով:

Ո՞մ հետ է ինչ-որ բան կատարվել: *Հազարավոր կանանց նման, ովքեր դիմել էին քաղաքի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կլինիկաները՝ ստուգելու պապուլայի քսուկը, միջնակարգ դպրոցի ամաչկոտ վերջին դասարանցուն էլ ասել էին, որ եթե իրեն չտեղեկացնեն, ապա անհանգստանալու կարիք չկա:*

Դա անցյալ հուլիսին էր:

Իսկ երբ ապրիլի 16-ին նա դպրոցից տուն եկավ եւ տեսավ հեռագիրը, որում ասվում էր, որ նա շտապ կապվի առողջապահության դեպարտամենտի հետ՝ պապուլայի քսուկի կապակցությամբ, նա սարսափեց՝ մտածելով, թե նրան արգանդի վզիկի քաղցկեղ են ախտորոշել:

Այդ աշակերտուհու բախտը բերել էր, ասվում է նյութի մեջ: Կասկածելով, որ բազմաթիվ կանայք այդքան երջանիկ չեն լինի՝ Էվանսը շարունակեց իր ուսումնասիրությունները:

Ու՞մ հետ է ինչ-որ բան կատարվել: *Մերի Փոլաքը հեռագիր ստացավ ուրբաթ երեկոյան, շատ ուշ էր առողջապահության դեպարտամենտ զանգահարելու եւ պարզելու համար, թե ինչ է նշանակում այդ գրությունը. «Շտապ: Վերաբերում է ձեր առողջությանը: Բժշկական անհետաձգելի դեպք»:*

Երկուշաբթի առավոտյան, երբ նա դողդողացող ձեռքում պահել էր հեռագիրը, Քուինսի Ջամայկայի կլինիկայի բժիշկը հայտնեց նրա կյանքի ամենասարսափելի լուրը:

«Դուք քաղցկեղ ունեք», - ասաց նա:

Ուշադիր նայեք Էվանսի ստեղծած յոթ լիդերին: Առաջին հինգում նպատակը ուղղակի նշված է առաջին պարբերության մեջ: Վերջին երկուսում ակնարկվում է, որ նյութի մեջ հետագայում ինչ-որ բան է լինելու: Ասելիքը հետաձգված է: Իսկ այժմ արդեն մենք պատրաստ ենք քննարկելու լիդերի երկու տեսակները՝ ուղղակի եւ հաջորդող:

Ուղղակի եւ հաջորդող լիդեր

«Լիդի հիմնական նպատակը հակիրճ լինելը չէ: Պարզությունն է: Հին կանոնն ասում է, որքան կարճ լինի լիդը, այնքան լավ: Այնքան հին է, որ կարելի է նրա մասին մոռանալ: Սահմանափակումներ կան, սակայն 25 կամ 30 բառ պարունակող լիդը անպատճառ ավելի լավը չէ, քան 35 կամ 40 բառ ունեցող լիդը: Լիդը պետք է լինի պարզ ու հասկանալի, ոչ թե անպայման կարճ»:

Ուոլթեր Միլրս, AP

Լիդեր գրելու կանոնները շատ չեն: Ընդհանրապես ասում ենք, որ լիդը պետք է հակիրճ լինի, 35 բառից պակաս, եթե հնարավոր է: Այս պահից սկսած արդեն կանոնները կախված են լինում այն բանից, թե նյութը չոր լո՞ւր է, թե՞ հոդված:

Չոր լուրը ստիպում է, որ լրագրողը այնպիսի լիդ ստեղծի, որն ուղղակի տանում է դեպի նորության ասելիքը կամ նշանակետը: Եթե լրագրողը որոշում է հոդված գրել, ապա կարիք չկա անմիջապես նշել ասելիքը, լիդը կարելի է դնել հաջորդ նախադասություններում՝ տպավորություն գործելու նպատակով:

Ահա եւ մենք ունենք լիդերի երկու տեսակ, գոյություն ունեցող միակ երկուսը: Մյուս բոլոր տեսակներն ընգրկված են այս երկու խմբերի մեջ՝ ուղղակի եւ հաջորդող: Թող լիդերի տեսակների երկար ցուցակները ձեզ չանհանգստացնեն, դուք կարող եք հանդիպել լիդերի այսպիսի տեսակների՝ հակադրություններով, պատմողական, ստակատո, ուղղակի դիմում եւ այլն: Նորությունների խմբագրություններում ոչ ոք այս բնորոշումներով չի առաջնորդվում: Դուք կարող եք լսել նաեւ հարդ՝ կոշտ եւ մեղմ եզրերի մասին: Դրանք «ուղղակի»-ի եւ «հաջորդող»-ի հոմանիշներն են:

Դատական լուրերի թղթակից Մարիաննան, որին մենք հանդիպեցինք այս գլխի սկզբում, գիտեր, որ Սանթա Քլաուսին ներկայացրած մեղադրանքը ընթերցողների համար փոփոխություն կլինի: Դա մեղմ պատմություն էր, եւ նա սկսեց հաջորդող լիդով:

Սանթա Քլաուսը երեխաների լավագույն բարեկամն է:

Բարի ծերուկները շոյում են փոքրիկ տղաների գլուխները եւ թփթփացնում փոքրիկ աղջիկների այտերը:

Բայց երկու շաբաթ առաջ, ինչպես պատմում է Քարոլին Էլիոթը, Զեյլի հանրախանութում Սանթան հարվածել է նրա վեցամյա որդուն՝ Դենիսին:

Մարիաննան գրել էր մի այլ դատավարության մասին եւս, որն ընդգրկում էր մահացու ելքով այրվածքներ՝ գրասենյակում բռնկված հրդեհի հետեւանքով: Այս անգամ նա օգտագործել է ուղղակի լիդը:

Մի ծեր զույգ այսօր մեկ միլիոն դոլարի հայց է հարուցել Ֆրանքլինի անշարժ գույքի ընկերության դեմ, որի քաղաքի կենտրոնական մասում գտնվող գրասենյակում անցյալ օգոստոսին մահացու այրվածքներ է ստացել նրանց դուստրը:

Տեր եւ տիկին Գրանթ Ֆոսթերները, որոնք բնակվում են Իսթերն պողոտա, 22 հասցեով, մեղադրում են Ընկերությանը, որ այն անփույթ է գտնվել ...

Ահա մի անսասան օրենք լիդերի համար՝ եթե դեպքը կարեւոր է, թեման պետք է միանգամից շեշտել: Լիդը կլինի ուղղակի: Եթե հոդվածը անսովոր դեպքի մասին է, կարիք չկա անմիջապես նշել, թե ինչ է եղել կամ ինչ է ասվել: Լիդը կարող է լինել հաջորդող:

Ինչպես գրել լիդը

Եկենք ընդունենք, որ դուք արդեն որոշել եք, թե դեպքն ինչ է դառնալու՝ լո՞ւր, թե՞ հոդված, լիդը ինչ տեսակի է լինելու՝ ուղղակի՞, թե՞ հաջորդող եւ որոշ պատկերացում ունեք նյութի ծավալի մասին: Այժմ դուք պատրաստ եք գրելու:

Նախ եւ առաջ դուք պետք է իմանաք, որ լրատվություններում նախադասությունների մեծ մասը՝ առնվազն երեք-չորսը, պարզ պատմողական նախադասություններ են: Նրանք սկսվում եմ ենթակայով, որին հետեւում է ստորոգյալը եւ հետո՝ խնդիրը: Այլ կերպ ասած, նախադասությունները նկարագրում են ինչ-որ մեկին, որն ինչ-որ բան է արել կամ ասել կամ էլ ցույց են տալիս կատարվող ինչ-որ բան:

- Համալսարանի ռեկտոր Ռոբերթ Հարթմանը խնդրել է նա-

հանգային օրենսդիր մարմնին՝ հավանություն տալ համալսարանի 50 միլիոնանոց շինարարական ծրագրին, որպեսզի հնարավոր լինի բավարարել ընդունելության աճող պահանջները:

● Երեկ երեկոյան նահանգի օրենսդիր մարմինը մերժեց համալսարանի շինարարական 50 միլիոնանոց օրինագիծը՝ 67 դեմ եւ 13 կողմ ձայների հարաբերությամբ:

Եկեք այս լիդին հարմարեցնենք ենթակա - ստորոգյալ - խնդիր (Ե - Ս - Խ) կառուցվածքը:

Ով ինչ է ասել կամ արել:

Ե - Համալսարանի ռեկտոր Ռոբերթ Հարթմանը
Ս - խնդրել է
Խ - օրենսդիր մարմնին

Ի՞նչ է պատահել:

Ե - Նահանգային օրենսդիր մարմինը
Ս - մերժեց
Խ - օրինագիծը

Այժմ, երբ նայում ենք լիդի կառուցվածքին, տեսնում ենք, որ լիդ գրելու համար դուք հետեւում եք թեմային կամ նպատակակետին եւ այն բաժանում Ե -Ս- Խ բաղադրիչների: Այնուհետեւ դուք լիդը կառուցում եք այդ հիմքի վրա:

Մյուս մոտեցումը ժամանակի քննությունը բռնած վեց հարցերի սկզբունքն է (բնագրում հինգ W եւ մեկ H - թարգմ.): Որոշ սկսնակներ կազմում են դրանց ցուցակը եւ պատասխանում են հարցերին՝

Ո՞վ - Համալսարանի ռեկտոր Ռոբերթ Հարթմանը
Ի՞նչ - խնդրել է օրենսդիր մարմնին հավանություն տալ ծրագրին
Ե՞րբ - այսօր
Որտե՞ղ - (լիդում չկա)
Ինչո՞ւ- բավարարել ընդունելության աճող պահանջները
Ինչպե՞ս- (լիդում չկա)

Տասը օրինակ

Ձեր ծոցատետրում կատարեք 10 նշում: Աշխատեք դրանց հի-

ման վրա լիդեր գրել: Հետո կարդացեք եւ կտեսնեք, թե ինչ են ա-

նում թղթակիցներն այդ նշումների հիման վրա:

1. Լոս Անջելեսից Մայամի թռչող ռեակտիվ ինքնաթիռի վառե-

լանյութը թռիչքի ժամանակ վերջացել է, եւ այն վթարային վայ-

րէջք է կատարել Թամփայում:

2. Մասաչուսեթսի նահանգի Ուորսեքթեր քաղաքում անկարգություններ են տեղի ունեցել, երբ պարզվել է, որ «Ուտիճներ» ռոք խումբը, որը համերգ էր տալիս տեղական գիշերային ակումբում, իրականում «Ռոուլինգ Սթոունզ»-ն է, որն այսպիսով վերջին երեք տարում Ամերիկայում առաջին հյուրախաղերի համար փորձ է անում:

3. Կանանց մի խումբ ուղեփակել է Քալիֆորնիայի Սատանայի կանյոնում տեղակայված միջուկային ռեակտորի մատույցները:

4. Ընկերությունն առաջարկել է բարձրացնել մետաղաձուլական արդյունաբերության մեջ աշխատող գործադուլավորների աշխատավարձը:

5. Ուրբաթ օրը կփակվեն մունիցիպալ եւս մի շարք աշխատատեղեր, որպեսզի բյուջեն հավասարակշռվի:

6. Վիսքոնսինում միջնակարգ դպրոցի 18-ամյա մի աշակերտ մշակել է ոգելից խմիչքի վտանգների մասին ուսումնական ծրագիր՝ անչափահասների համար:

7. Նյու Յորքի մի ռադիոկայան, փոխելով իր երաժշտական ծրագիրը, դարձավ երկրում ամենից շատ ունկնդրվող կայանը:

8. Անցյալ սեպտեմբերին ընդունված նահանգային օրենքը անչափահասներին ուղարկում է մեծահասակների դատական համակարգ:

9. Գեղասահքի չեմպիոնուհին սնահավատ է:

10. Կույրը նավարկում է 35-ոտնաչափ երկարություն ունեցող առագաստանավով:

Համար 1. Լրագրողը, որը պատրաստում է չոր լուր, գիտե, որ պետք է միանգամից նշի ասելիքը: Քանի որ լիդը կընդգրկի մեկին, որն ինչ-որ բան ասում է, անում է կամ որի հետ ինչ-որ բան է կատարվում, լրագրողը սկսում է անձից կամ դեպքից՝ ով կամ ինչ:

Եթե լրագրողը հետեւում է Ե-Ս-Խ սկզբունքին, ապա լիդը կսկսի ենթակայով: Եթե հետեւում է նաեւ վեց հարցերի սկզբունքին, լիդը կսկսվի «ով»-ով կամ «ինչ»-ով:

Ահա մեր ցուցակի համար 1-ի Ե-Ս-Խ ձեւը:

Ե - Ռեակտիվ ինքնաթիռը

Ս - կատարեց

Խ - վթարային վայրէջք

Վեց հարցերի սկզբունքը մեզ ավելի շատ փաստեր է տալիս աշխատելու համար:

Ո՞վ (Ի՞նչը) - Ռեակտիվ ինքնաթիռը
Ի՞նչ - կատարեց վթարային վայրէջք
Ե՞րբ - այսօր
Որտե՞ղ - Թամփայում
Ինչո՞ւ- վառելիքը վերջացել էր
Ինչպե՞ս- հայտնի չէ

Ցանկացած տարբերակն էլ օգտագործելով՝ կարելի է կառուցել լիդը: Նախ եւ առաջ գրվում է ով-ը (ինչը) կամ նախադասության ենթական:

Պանամերիկյան ռեակտիվ ինքնաթիռը Լոս Անջելեսից Մայամի թռչելու ժամանակ

Ուշադրություն դարձրեք, որ մենք ռեակտիվ ինքնաթիռի մասին ասում ենք ամեն ինչ, որպեսզի այն տարբերենք, բաժանենք հազարավոր ինքնաթիռներից, որոնք այդ օրը օդ են բարձրացել: Մենք նույն բանն ենք անում, եթե ենթական անձնավորություն է: Մենք չենք ասում «մի մարդ» կամ «մի կին»: Մենք ասում ենք « մետաղաձուլական գործարանի մի 29-ամյա բանվոր» կամ «69-ամյա Միլդրեդ Շերմանը, որը բնակվում է Սենթ Չափել փ., 166 հասցեով»:

Այնուհետեւ մենք անցնում ենք «ինչ»-ին կամ ստորոգյալին եւ խնդրին:

Թամփայում այսօր վթարային վայրէջք կատարեց

Ուշադրություն դարձրեք, որ մենք այստեղ ավելացրեցինք «որտեղ»-ը եւ «երբ»-ը: Տեղն ու ժամանակը սովորաբար նշվում են ստորոգյալի կամ խնդրի կողքին:

Մենք կարող էինք այստեղ կանգ առնել, սակայն մարդիկ անտեղյակ կմնան արտակարգ դեպքի պատճառների մասին՝ «ինչու»-ին:

քանի որ վերջացել էր վառելիքը:

Այժմ մենք ունենք՝

Պանամերիկյան ռեակտիվ ինքնաթիռը Լոս Անջելեսից Մայամի թռչելու ժամանակ այսօր վթարային վայրէջք կատարեց Թամփայում, քանի որ վերջացել էր վառելիքը:

Սա տարածված հաղորդագրության բառացի կրկնությունն է:

Համար 2. Համար 1-ի մասին մեր ենթադրությունն այն էր, որ դա լուր է, որը պահանջում է ուղղակի լիդ: Իսկ համար 2-ը՞:

Մեր առաջին ռեակցիան այն է, որ սա լուրջ բան է՝ ուրեմն՝ լուր եւ ուղղակի լիդ: Սակայն վնասը չնչին է եւ ոչ ոք չի տուժել: Եթե կան կասկածներ, ապա օգտագործեք հուսալի ձեւը: Այսինքն, եթե ընտրությունն ակնհայտ չէ, նյութը գրելու լավագույն ձեւը այն ներկայացնելն է որպես լուր՝ ուղղակի լիդով: Սա ապահով ուղի է: Լուրջ բանից թեթեւ բան սարքելը կարող է վիրավորական լինել:

Համար 3-5. Համար 2-ը թերթերի մեծ մասը ներկայացրել էր հուսալի ձեւով, որն ապահով է, բայց հիմար: Համար 3-ը եւ 4-ը չոր լուրեր են՝ ուղղակի լիդերով: Առաջին հայացքից համար 5-ն էլ է թվում չոր լուր: Արդյոք այդպե՞ս է:

Համար 5-ի տեսակի մասին հուշում են «եւս մի շարք» բառերը: Դա նշանակում է, որ մունիցիպալ աշխատատեղերի կրճատումները կրճատումների շղթայի մի օղակն են: Այնպիսի բառեր, ինչպիսիք են դարձյալ, դեռեւս, շարունակվում է, ցույց են տալիս, որ նորություններ չկան: Այսպիսով մենք կորցնում են լրատվության ժամանակի գործոնը:

Թոլեդոյի «Բլեյդ»-ի թղթակից Բոբ Ռոուզը այդ դեպքը դարձրել է հոդված՝ հավաքելով որոշ լրացուցիչ փաստեր: Իր նյութում նա օգտագործել է հաջորդող լիդ: Թեման չի նշվում մինչեւ վեցերորդ պարբերությունը:

Հետաձգված լիդ՝ նյութը սկսելու համար, միջադեպերի օգտագործումով

Այս շաբաթ Մեյբլ փողոցի մի քանի բնակիչներ մի գիշեր դուրս էին եկել առնետ որսալու: Դրանք հայտվել են հյուսիսային Թոլեդոյի իրենց թաղամասում:

«Ես զանգել եմ կրծողների վերահսկման կայան, բայց պարզվեց, որ այն փակվել է,- ասում է Թոմ Մանգերը: - Ես կապվեցի քաղաքապետարանի հետ, եւ հեռախոսին պատասխանող կինն ասաց, որ չգիտե, թե ես ինչ անեմ: Նա ասաց, որ ես պետք է քվեարկեի»:

Պարոն Մանգերը, որը խոստովանեց, թե անցյալ ամիս չի մասնակցել եկամտահարկը բարձրացնելու հաշվին մունիցիպալ աշխավարձերի բարձրացման քվեարկությանը, ասում է, որ ինքն ու հարեւանը խնդիրն իրենց ձեռքն են վերցրել: «Կարծում եմ մի խնդիր արդեն կա», - ասաց նա կրծողների մասին:

Մի քանի օր անց, երեկոյան, քաղաքի մենեջերի տեղակալ Մայքլ Լ. Դաքվորթին զանգահարել են տուն եւ հարցրել, թե երբ են բացվելու քաղաքի լողավազանները:

Անցում թեմային

Քաղաքապետարանի պաշտոնյաները գիտեն, սակայն քաղաքացիների որոշ մասն ակնհայտորեն տեղյակ չի, որ նախորդ երկու տարիներին կատարված 846 աշխատատեղերի կրճատումների հետեւանքով քաղաքը չի կարող պայքարել կրծողների աճի դեմ եւ չի կարող բացել լողավազանները: Չի կարող շատ ու շատ բաներ անել, որ առաջ արել է:

Թեմա՝ նորության ասելիք

Երբ ուրբաթ օրը կրճատվեցին եւս 262 աշխատատեղեր, քաղաքը մի քայլ էլ արեց հավասարակշռելու իր բյուջեն՝ աշխատատեղերի թիվը դարձնելով 2875: Սակայն այն ցուցակը, թե էլ ինչ հնարավոր չի լինելու անել, ավելի է մեծանալու:

Համար 6 Ակնհայտորեն կարիք չկա լիդում օգտագործել «այսօր» բառը: Այն հոդված է, եւ AP-ն հաջորդող լիդ է դրել:

ՖՈՆԴ ԴՈՒ ԼԱՔ, Վիսքոնսին (AP) - Երբեմն միջնակարգ դպրոցի նախավերջին դասարանի աշակերտը լավագույն օգնությունը ստանում է ոչ թե ուսուցչից կամ ծնողներից, այլ միջնակարգ դպրոցի վերջին դասարանի աշակերտից:

Այդ տեսությունը՝ «Երեխաներն օգնում են երեխաներին», ընկած է ոգելից խմիչքի մասին տեղեկատվական ծրագրի հիմքում, որը մշակել է Սենթ Մերի Սփրինգսի միջնակարգ դպրոցի մի աշակերտ՝ դպրոցի տարրական եւ միջին դասարանների համար:

Ծրագրի հեղինակը Ջեֆ Վայնշրոթն է, Սփրինգսի 18-ամյա վերջին դասարանցին …

Ահա լիդի գաղափարը՝ միջնակարգ դպրոցի աշակերտը մշակել է դեռահասների ալկոհոլիզմի դեմ պայքարի ծրագիր: AP-ի հոդվածագիրը հասկացել է, որ դեպքի եզակի կամ անսովոր ընույթն այն է, որ աշակերտն ուսուցանում է աշակերտներին ոգելից խմիչքի վտանգների մասին: Հոդվածագիրն օգտագործել է այդ գաղափա-

ը՝ նյութը սկսելու համար: Դրան արագ հետեւում է առանձնահատուկ թեման՝ երկրորդ եւ երրորդ պարբերությունների մեջ:

Համար 7. Ի՞նչ է տեղի ունեցել համար 7-ում: FM կայանը մեղմ երաժշտությունից անցել է դիսքո երաժշտություն հաղորդելուն, եւ նրա վարկանիշը թռել է վեր: Կարեւո՞ր է, թե՞ զվարճալի: Այն ամսագրի համար, որը նվիրված է հեռարձակումներին, դա կարեւոր նորություն է, եւ ուղղակի լիդն էլ իր տեղում է:

Նյու Յորքի WKTU - FM կայանը սկսել է դիսքո հաղորդել եւ դարձել է երկրի ամենից շատ ունկնդրվող կայանը:

Սակայն լսարանի մեծ մասի համար ռեակցիան այդ լիդի նկատմամբ կարող է լինել՝ հետո՞ ինչ: Ջեֆ Ուոլդենի համար, որը ստորեւ ներկայացվող նյութը գրել է ժուռնալիստիկայի դասի համար, դա հետաքրքրաշարժ պատմություն է, եւ այդ պատճառով, օգտագործել է հաջորդող լիդ: Նա փոփոխությունը դրամատիկ է դարձնում հետեւյալ ձեւով՝

ՆՅՈՒ ՅՈՐՔ - Անցյալ տարվա հուլիսի 24-ին երեկոյան 5:59-ին WKTU - FM «Մեղմ 92»-ը հաղորդում էր Նիլ Յանգի «Ամեն ինչ անցավ» մեղմ ռոք երգը:

Երեկոյան ժամը 6-ին WKTU - FM «Նոր դիսքո 92»-ը հաղորդում էր Դոննա Սամերի «Վերջին պարը»:

Դոննա Սամերի այդ երգը շահեց այս տարվա Օսկարը լավագույն օրիգինալ երգի համար «Փառք աստծո, այսօր ուրբաթ է» ֆիլմում: Ռադիոկայանի համար այս երգով սկսվեց միայն դիսքո ֆորմատը, ինչը WKTU - FM-ը դարձրեց ամենից շատ ունկնդրվող կայանն Ամերիկայում. յուրաքանչյուր քառորդ ժամ այն միացնում է 275000 մարդ ...

Ուղղակի լիդն ասում է ընթերցողներին, որ ահա գալիս է ինչ-որ կարեւոր բան: Ուոլդենի սկիզբը նրանց ասում է՝ հանգստացեք, ես պատրաստվում եմ ձեզ զվարճացնել: Բայց տեսեք, որ թեման կամ կենտրոնական գաղափարը երկու տեսակների՝ ուղղակի եւ հաջորդող լիդերի համար էլ ճիշտ նույնն է :

Ե - Ռադիոկայանը
Ս - կատարել է
Խ - ֆորմատի փոփոխություն

Համար 8. Համար 8-ում ներկայացվում է մի օրենք, որը նոր է ընդունվել: Ինչպիսի՞ մոտեցում է պահանջում այս նյութը:

Ռիչարդ Հիգինսը, ժուռնալիստիկայի բաժնի մի այլ ուսանող, մտածեց, որ իր նյութը պետք է նկարագրի օրենքը գործողության

մեջ՝ պարունակելով մարդկային չափման ուժեղ տարր: Այդ պատճառով նա իր նյութը սկսում է՝ ներկայացնելով երկու երիտասարդ օրինազանցների դիմանկարը դատական նոր միջավայրում:

ՆՅՈՒ ՅՈՐՔ - Ռաֆայել Թորեսը եւ Հեքտոր Վալդեսը նստած են փայտյա սեղանի առաջ եւ խաղում են Սուպերմենի գունազարդ գրքերով, սանրում են իրենց մազերը, ձեռքով են անում եւ ժամանակ առ ժամանակ ձայն տալիս սենյակում գտնվող իրենց ընկերներին:

Սա կարող էր մի տեսարան լինել Հարավային Բրոնքսի դպրոցից, որտեղ նրանք սովորում են ութերորդ դասարանում: Սակայն սա հրդեհումների եւ բազմակի սպանությունների մեղադրանքով դատավարություն է Բրոնքսի քրեական դատարանում, իսկ երկու վտիտ շփոթված տղաները այստեղ են եկել ոչ սովորելու նպատակով: Նրանք մեղադրյալներն են ...

Հաջորդ պարբերության մեջ Հիգինսը ներկայացնում է կենտրոնական թեման, որն ընթերցողին տեղեկացնում է, որ այդ դեռահասները առաջին պատանիներից են, որոնց դատում են չափահասների դատարանում: Նա նյութը դարձրել է հոդված:

Համար 9. AP-ի թղթակից Լինդա Քրեյմերն ասում է, որ այս տեսակի հոդվածի համար նա հավաքում է «նյութերի կույտեր»: Երբ նա գրում է, աշխատում է «քաղհանել ոչ էական մասերը: Ես ձգտում են այնպիսի միջադեպ ընտրել, որն ամենից լավ կարտացոլի եւ կընդգծի այն, ինչը ես ուզում եմ ասել»:

Այստեղ շատ ճշգրիտ նկարագրվում է, թե հոդվածագիրն ինչպես պետք է ընտրի միջադեպը կամ դեպքը՝ հոդված կամ լրատվություն սկսելու համար: Միջադեպը պետք է մտնի ուղղակի թեմայի կամ կենտրոնական գաղափարի մեջ:

«Երբ ես գրում էի գեղասահքի չեմպիոնուհի Լինդա Ֆրաթիանիի մասին, ես սկսեցի՝ նկարագրելով հաջողության թալիսմանը, որը նա մրցումների ժամանակ կպցրել էր իր զգեստին: Ինձ համար սնահավատության այս փոքրիկ դրսեւորումը ցույց էր տալիս աստղի մյուս էությունը՝ 17-ամյա աղջնակին»,- պատմում է Քրեյմերը: Այսպիսով, նրա թեման էր՝ չնայած Ֆրաթիանիի հոյակապ ելույթը նրան դարձնում էր համարյա թագուհի, իսկական Լինդա Ֆրաթիանին երիտասարդ կնոջ զգացմունքներ ունեցող դեռահաս է: Ահա Քրեյմերի հաջորդող լիդի առաջին պարբերությունը՝

Լինդա Ֆրաթիանիի գեղասահքի պսպղուն զգեստին ամրացված էր մի պստլիկ կապույտ տոպրակ, որի մեջ նա դրել էր երկու հատ չորս տերեւ ունեցող երեքնուկ, մի կտոր ոսկյա փայլաթիթեղ եւ կանաչ թելի մի կտոր:

Համար 10. Համար 10-ում լրագրողը, հաջորդող լիդի օգնությամբ, ընթերցողին տանում է կույր մարդու առագաստանավը՝

Ամուր բռնելով առագաստի թոկասարքից՝ Ալբերթ Ադամսը իր 35 ոտնաչափ երկարությամբ առագաստանավով կարողանում է զարգացնել առավելագույն արագության:

Դեղին իրանով նավը արձագանքում է Ադամսին եւ ավելացնում է արագությունը: Ադամսը դառնում է դեպի իր անձնակազմը՝ կնոջն ու երկու դեռահաս որդիներին եւ խնդրում է ձեռք մեկնել իրեն:

Ադամսը կույր է ծննդյան օրվանից: 33-ամյա հաշվապահը կանոնավոր կերպով նավարկության է դուրս գալիս: Եվ լսողությամբ կարողանում է որոշել, թե քամին որ ուղղությամբ է փչում …

Ինչպես շատ հոդվածների սկիզբ, այստեղ եւս ցույց է տրվում, թե ինչ է անում ենթական:

Քրտինքն ուլունքի նման կախվել էր Բրյուս Ջերնիգանի ճակատին: Նրա երկտակ մկանները ուռչում էին, երբ նրա ուժեղ կրծքավանդակի միջով արյունը մղվում էր դեպի աջ ձեռքը: Դեմքը լարումից ծամածռվել էր:

Բրյուսի հակառակորդը՝ Քլոդ Բրեդֆորդը, ժպտում էր թվացյալ հեգնանքով, երբ երկու տղաների բռունցքները, բազկամարտի մամլիչի մեջ սեղմված, դանդաղ օրորվում էին:

Հետո, էներգիայի մի պոռթկումով, 14-ամյա Քլոդը իր կողմը շեղեց ուժերի նժարը: Երբ դատավորը հայտարարեց մարտի ավարտը՝ երկու տղաներն էլ համարյա ուժասպառ վայր ընկան:

Նրանցը ուժի, դիմանալու եւ կամքի քննություն էր: Վերջում Քլոդը կարողացավ ուժասպառ անել իր ընկեր եւ ախոյան 14-ամյա Բրյուսին Անիսթոնին՝ Զբոսայգիների եւ ժամանցների բաժնի կազմակերպած բազկամարտի առաջին մրցումների ժամանակ, որը տեղ ունեցավ շաբաթ առավոտյան, Քարվերի հասարակական կենտրոնում:

«Ամեն ինչ կախված է շարժվելու ձեւից»,- ասում էր հետո Քլոդը:

Բազկամարտը ուժի հնագույն մրցություն է, երբ երկու ախոյանները մամլակի մեջ սեղմում են իրենց ձեռքերը, իսկ արմունկները հարթ մակերեւույթի վրա են: Հաղթում է նա, ով մյուսի ձեռքը ներքեւ կծալի եւ կդիպցնի սեղանին:

Հնադարում մարդիկ բազկամարտը համարել են ուժի ոչ բռնի քննություն, որտեղ մի ախոյանը կարող էր հաղթել մյուսին:

Շաբաթ օրվա մրցույթը կազմակերպված էր այլ նպատակով. բացատրություններ է տալիս Զեբեդի Մըրֆին՝ քաղաքի ժամանցների հարցերով պատասխանատուն, որը համակարգում էր այս միջոցառումը եւ հանդես էր եկել մրցավարի դերում:

«Մենք ուզում ենք, որ նրանք (տղաները) հետաքրքրվեն մի նոր բանով», - ասում է նա: Մըրֆին պատմում է, որ երեխա ժամանակ ինքն էլ է բազկամարտով զբաղվել իր թաղամասի երեխաների հետ, բայց սա առաջին անգամն է, որ քաղաքը հովանավորում է այսպիսի մրցամարտ:

«Հաջորդ տարի, հավանաբար, կկրկնենք», - ավելացնում է Մըրֆին:

Շաբաթ օրը մրցամարտին մասնակցեցին Անիսթոնի Քարվեր շրջանի 20 տղաներ: Երեխաներին բաժանել էին երեք տարիքային խմբերի, եւ մրցակիցներին որոշել էին վիճակահանությամբ, պատմում էր Մըրֆին …

Չոր լրատվության լիդ

Եկեք ավելի խորանանք առօրյա նորության մեջ, որը կոչվում է նաեւ չոր լուր կամ պարզապես լուր:

Առաջին գլխում մենք տեսանք, թե ինչպես է թղթակիցը գրում Ռոուզ Հարիեթ Ալենի մահախոսականը: Այդ իրադարձությունը պարունակում է լրատվության մեկ գործոն՝ նշանավորությունը: Ներգործության որոշակի պահ կա նաեւ այն փաստի մեջ, որ կազմակերպվելու է դրամահավաք, որն արդեն վերաբերում է հասարակությանը: Թղթակիցը որոշում է սա դարձնել չոր լուր, ինչպես մահախոսականների մեծ մասը:

Սակայն այստեղ կա երկու ուժեղ տարր, յուրաքանչյուրն էլ լիդի հնարավոր թեմա են՝ մահը եւ դրամահավաքը: Լիդում պետք է լինի միայն մա՞հը, թե՞ երկու տարրերն էլ: Եկեք լսենք, թե ինչ է մտածում հոդվածագիրը:

«Քաղաքում բոլորը ճանաչում են Ալենին, ուրեմն ես կսկսեմ դրանից եւ անմիջապես կանցնեմ դրամահավաքին: Լիդում կլինեն երկու տարրերն էլ»: Ահա թղթակցի լիդը՝

Ռոուզ Հարիեթ Ալենը, 71 տարեկան, բնակվում էր Ֆուլթոնի պողոտա, 33 հասցեով, եւ 30 տարի դասավանդել է դպրոցում, իսկ 13 տարի, մինչեւ թոշակի անցնելը, եղել է դպրոցի տնօրեն, երեկ իր մահկանացուն կնքեց Քաղաքային հիվանդանոցում: Կազմակերպվելու է դրամահավաք ...

Թղթակիցը շարունակում է վերլուծել իր լիդը. «Ոչ, այսպես լավ չէ: Առաջին պարբերությունը պետք է սենսացիոն հնչի, շատ է երկար: Գուցե ավելի լավ կլինի գրել դրամահավաքի մասին, քանի որ դա երկարատեւ նշանակություն ունեցող փաստ է: Պարզ է, որ այդպիսի սկզբի դեպքում, Ալենի անունը կմտնի նյութի մեջ, քանի որ դրամահավաքը կազմակերպվում է նրա հիշատակին»:

Սահմանվել է դպրոցական կրթաթոշակ ի հիշատակ Ռոուզ Հարիեթ Ալենի, 71 տարեկան, որը մահացավ երեկ, տեղական դպրոցներում ավելի քան 43 տարի աշխատելուց հետո:

«Այսպես ավելի լավ է: Ավելի կարճ է եւ միավորում է երկու տարրերը»:

Նա շարունակեց գրել, բայց չորրորդ պարբերության մեջտեղում հանկարծ կանգ առավ ու սկսեց դանդաղ կարդալ իր գրածը:

«Սա դառնում է պատմություն դրամահավաքի մասին, ոչ թե

բոլորին հայտնի ուսուցչուհու, որը քաղաքում, անշուշտ, հազարավոր բարեկամներ ունի: Նշանակությունը, իսկական կարեւորությունը դրամահավաքը չէ, այլ նրա մահը: Ալենի մահը կազդի մեր ընթերցողներից շատերի վրա: Լիդը պետք է կենտրոնանա Ալենի մահվան վրա, իսկ դրամահավաքը կգնա ավելի ուշ»: Նա նորից սկսեց՝

Ռոուզ Հարիեթ Ալենը, որի մանկավարժական եւ վարչական կարիերան տեղի դպրոցներում շարունակվել է ավելի քան 43 տարի, երեկ մահացավ 71 տարեկան հասակում:

Ալենը մահացել է քաղաքային հիվանդանոցում, որտեղ նա ընդունվել էր անցյալ շաբաթ՝ սրտի կաթվածից հետո, որը տեղի էր ունեցել իր տանը, Ֆուլթոնի պողոտա 33 հասցեով:

30 տարի Ալենը դասավանդել է քաղաքի մի քանի տարրական դպրոցներում: Իսկ մանկավարժական կարիերայի հաջորդ 13 տարին եղել է Լինքոլն դպրոցի տնօրենը: Վեց տարի առաջ նա անցել էր թոշակի:

Նրան հիշում են որպես բարյացկամ եւ հին բարի ժամանակների վերացող տեսակի ուսուցչուհի: Տնօրեն լինելով՝ հաճույքով էր փոխարինում հիվանդացած ուսուցչին:

«Նա խիստ էր,- հիշում է իրավաբան Ալբերթ Գրինը: - Եթե տնային աշխատանքդ չէիր կատարում, նա ծնողներիդ հաջորդ օրը դպրոց էր կանչում»:

Գրինը եւ Ալենի ուրիշ նախկին աշակերտներ հայտնեցին, որ ծրագրում են կրթաթոշակ հիմնել ի հիշատակ Ալենի:

«Միսս Ալենի ընտանիքը աղքատ է եղել,- պատմում է Գրինը: - Նա մեզ պատմել է, թե իր համար որքան դժվար է եղել ուսում ստանալը նահանգի մանկավարժական քոլեջում, ինչպես է նա մի ընտանիքում աշխատել օթեւան եւ սնունդ ստանալու պայմանով եւ օրական վեց ժամ տնային գործեր է արել, հետո գնացել դասի եւ սովորել»:

Այս տարբերակը բավարարում է թղթակցին: Այնտեղ հավասարակշռված ձեւով ներկայացված են նյութի երկու կարեւոր տարրերն էլ՝ Ալենի մահը եւ դրամահավաքը: Նա լավ մեջբերումներ ունի, որոնք Ալենի անձնավորության մասին ինչ-որ բան են ասում: Ալենի վերաբերյալ մասնավոր մանրամասնությունները օգնում են ընթերցողին պատկերացնելու, թե ինչ տեսակ անձնավորություն է եղել Ալենը:

Հոդվածի լիդ

Երբ Դեյվիդ Սթեքսին ուղարկեցին լուսաբանելու բազկամարտի մրցումները, նա գիտեր, որ իր նյութը «Անիսթոն Սթար»-ի հա-

ջորդ օրվա համարում ամենից կարեւորը չի լինելու: Նա գիտեր, որ պետք է հոդված գրի, ինչը նշանակում էր, որ նա պետք է ուշադիր լինի եւ գտնի մի լավ միջադեպ՝ նյութը սկսելու համար:

Նախագահների սպանություններ

Ուղղակի լիդը ընթերցողին կամ ունկնդրին հնարավորին չափ հակիրճ ձեւով պատմում է, թե ինչ է պատահել: Այդ է եղել թղթակիցների հիմնական նպատակը՝ շշմեցնող նորություններ լուսաբանելիս, ինչպես ցույց են տալիս նախագահների սպանությունների մասին այս լիդերը՝

Ասոշիեյթըդ Փրեսին
Այս երեկո թատրոնում կրակել են նախագահի վրա եւ հավանաբար մահացու վիրավորել:
Լոուրենս Ա. Գոբրիջ, 14 ապրիլի 1865

UPI
Նախագահ Քեննեդի
Դալաս, 22 նոյեմբերի
UPI - Երեք կրակոց է արձակվել նախագահ Քեննեդիին ուղեկցող մեքենաների վրա Դալասի կենտրոնում:
ԳԹ1234ՓՍ...

UPI
ՇՏԱՊ
Առաջինին ավելացնել կրակոցներ, Դալաս
Դալասի կենտրոնում
Վիրավորների մասին չի հայտնվել
Դեպքը տեղի է ունեցել կոմսության շերիֆի գրասենյակի մոտ Մեյն փողոցի վրա, դեպի հանրախանութ տանող անցումից արեւելք, որտեղ նախագահը պետք է իջ...

ԿԱՅԾԱԿ
Քեննեդին լուրջ վիրավորված է
Հավանաբար լուրջ
Հավանաբար մահացու վերք է ստացել մարդասպանի գնդակից
ԻԹ1239ՓՍ

Մերիամ Սմիթ, 22 նոյեմբերի 1963

Սանթա Քլաուսը

Եկեք ավելի մոտիկից դիտարկենք, թե դատական լուրերի թղթակիցն ինչպես է պատրաստում իր լիդը հանրախանութի Սանթա Քլաուսի դեմ հարուցված մեղադրանքի մասին: Երբ Մարիաննան իմացավ այդ հայցի մասին, նա միանգամից հասկացավ, որ գրելու է մի կարճ հոդված: Խնդիրն այն էր, թե ինչպես գտնել ուշադրության արժանի լիդ: Նա մի քանի գաղափարներ ուներ: Լավ կլինի շեշտել, մտածում էր նա, որ չնայած մարդկանց մեծ մասը Սանթային պատկերացնում է որպես բարի ծերուկ, այստեղ նրան մեղադրում են դաժան արարքի մեջ: Մարիաննան որոշեց լիդում օգտագործել հակադրության այդ գաղափարը՝

Սանթա Քլաուսը, բարության այդ մարմնավորումը, դատի է տրվել երեխայի հետ դաժան վարվելու համար ...

Ինչպես պատահում է առաջին անգամների հետ, այս մեկն էլ լիովին բավարար չէր: Գաղափարը հաջող էր, նա զգում էր, բայց ոչ այն ձեւով, որ գրել էր: Հոդվածագիրները պետք է օգտագործեն պարզ լեզու, բայց նա օգտագործում է «մարմնավորում» բառը, որը որոշ մարդիկ կարող են չհասկանալ: Նա մի նոր փորձ արեց:

Բարի Սանթա Քլաուսին դատի են տվել դեռահասի հետ դաժան վարվելու համար:

Լիդը դեռեւս չափազանց մոտ էր չոր լուրի լիդին եւ ձանձրալի էր հնչում: Հոդվածի սկիզբը պետք է նշան անի ընթերցողներին, ասի նրանց, որ մի որոպեով կանգ առնեն՝ մի զարմանալի բան կա նրանց պատմելու:

Հանկարծ նա հասկացավ, որ գոյություն ունի ավելի լուրջ խնդիր, քան բառերի եւ տոնի ընտրությունը: Հետաքրքրաշարժ լինելու իր ջանքերի պատճառով նա մոռացել էր, որ փաստերի հետ պետք է բծախնդրորեն զգույշ լինի: Նրա լիդում սխալ էր նշվում մեղադրվող կողմը: Դա Սանթա Քլաուսը չէր, ինչպես նշում էին նախորդ երկու լիդերը: Դա հանրախանութն էր:

Աղետից հնարավոր եղավ խուսափել, եւ նրան սկսեց զբաղեցնել մի այլ խնդիր՝ հակիրճության խնդիրը: Գիտեր, որ շատ տեղ չունի, այնպես որ նյութը հինգ-վեց պարբերությունից ավելի չէր կարող ծավալվել: Դանդաղ սկսելով՝ հետո նա պետք է համառոտ ներկայացնի փաստերը՝ մայրիկի անունն ու հասցեն, միջադեպի նկարագրությունը, պահանջվող փոխհատուցումը: Նա գրեց հետեւյալը՝

Սանթա Քլաուսը երեխաների լավագույն բարեկամն է:

Բարի ծերուկները շոյում են փոքրիկ տղաների գլուխները եւ թփթփացնում փոքրիկ աղջիկների այտերը:

Բայց երկու շաբաթ առաջ, ինչպես պատմում է Քարոլին Էլիոթը, Զեյլի հանրախանութում Սանթան հարվածել է նրա վեցամյա որդուն՝ Դենիսին:

Տիկին Էլիոթը, որը բնակվում է Իսթ Էնդ պողոտայի 49 տանը, 10 000 դոլար է պահանջում իր «նվաստացման եւ շփոթության» եւ իր որդու «նյարդային հակազդեցության» համար: Երեկ նա հանրախանութի դեմ հայց է հարուցել Գրանթ կոմսության օկրուգային դատարանում:

Հանրախանութը մեկնաբանություններ չի անում:

Այժմ, երբ մենք տեսանք, թե ինչպես են հոդվածագիրները մոտենում իրենց նյութին եւ ինչպես են կառուցում սկիզբը կամ լիդը, հոդված գրելու մեր արահետը տանում է դեպի լիդի ու բուն նյութի միավորումը սահուն գրած եւ հարթ ամբողջի մեջ:

Գլուխ 5
Ինչպես կառուցել նյութը

Մուտք

Լուրը կառուցվում է՝ ելնելով այն հիմնական տարրերի կամ թեմաների թվից, որոնք հոդվածագիրն ուզում է օգտագործել լիդում:

Մեկ տարր պարունակող լուրի բուն նյութն ընդգրկում է փաստեր, մեջբերումներ եւ միջադեպեր, որոնք բացատրում եւ հիմնավորում են լիդում օգտագործված տարրը: Ավելի պակաս կարեւոր նյութը ներմուծվում է բուն նյութի մեջ այն բանից հետո, երբ լիդում ներկայացված տարրը լրիվ բացատրվել է:

Երեք կամ չորս տարր պարունակող լիդերն ընդգրկում են նյութի բոլոր տարրերը կամ դրանց ամփոփումը: Բուն նյութում տարրերից յուրաքանչյուրը հերթով բացատրվում է՝ ընթերցողին ապահովելով լրացուցիչ նյութերով, հիմնավորելով լիդում նշված տարրերը: Հետեւում է ցանկացած երկրորդական նյութ: Կան բացառություններ. լրատվության կամ հոդվածի մեջ թեման կարող է դրվել վերջում կամ սկզբից մի քանի պարբերություն հետո:

Լրատվություն պատրաստող լրագրողը շինարար է: Շինարարների նման, նա աշխատում է՝ հիմնվելով գծագրերի վրա: Ինչպես շինարարը տարբեր գծագրեր ունի գրասենյակ, բնակելի շենք կամ երեք ննջարանով տուն կառուցելու համար, այնպես էլ լրագրողը տարբեր գծագրեր ունի նյութերի տարբեր տեսակների համար:

Չոր լուր

Եկեք ուսումնասիրենք չոր լուրի կառուցվածքը: Առաջին քայլը որոշելն է, թե քանի հիմնական տարր կամ թեմա է լինելու նյութի մեջ:

Երբ մենք խոսում ենք առանձին թեմաների կամ տարրերի մասին, մենք նկատի չունենք առանձին փաստերը: Նյութի մեջ կարող են լինել բազմաթիվ փաստեր, սակայն միայն մեկ, երկու կամ երեք հիմնական թեմա կամ տարր: Կարելի է ասել, որ թեման կամ տարրը միմյանց առնչվող մի խումբ փաստերի ամփոփումն

է: Ահա լրագրողի կազմած ամփոփումը քաղաքային խորհրդի ժողովի հիմնական որոշման մասին՝

Քաղաքային խորհուրդը 4 : 3 ձայների հարաբերությամբ կողմ քվեարկեց քաղաքի փողոցների սալահատակման համար 1 միլիոն դոլար հատկացնելուն:

Ամփոփումը դառնում է լիդի հիմնական տարրը: Ծրագրի կողմ եւ դեմ փաստարկները, քաղաքի փողոցների ներկա վիճակը, քաղաքի ճարտարագետի պնդումը, որ փողոցները կարգի բերելու համար անհրաժեշտ է այդ գումարի կրկնապատիկը, սրանք բոլորը փաստեր են, որ մտնելու են բուն նյութի մեջ՝ հիմնավորելու լիդի գլխավոր տարրը:

Քաղաքային խորհուրդը քննարկել է նաեւ մի քանի այլ խնդիրներ, որոնք հոդվածագիրը մտցնելու է նյութի մեջ՝ քաղաքի վերականգնման բաժնի տնօրեն աշխատանքի ընդունելու հարցը, 500 000 դոլար արժողությամբ կոշտ թափոնների վերամշակման գործարանի կառուցումը, քաղաքային տոների բաշխումն այնպես, որ աշխատողները կարողանան երեք օր հանգստանալ: Այս թեմաներն իրենց կարեւորության տեսակետից երկրորդական են եւ ընդգրկվելու են նյութի մեջ այն բանից հետո, երբ հոդվածագիրը բուն նյութի մեջ բավարար ուշադրություն հատկացնի փողոցները սալահատակելու ծրագրին, որը հիմնական թեման է:

Եկեք քննարկենք մի այլ սցենար: Ենթադրենք, քաղաքային խորհուրդը հավանություն է տվել կառուցելու 500 000 դոլար արժեքով թափոնների գործարան: Սա լուրջ հարց է եւ արժանի է ուշադրության որպես հիմնական տարր՝ փողոցների սալահատկման ծրագրի հետ միաժամանակ: Այս դեպքում հոդվածագիրը պետք է պատրաստի երկու տարր պարունակող լիդ: Այն բանից հետո, երբ այս տարրերը բավարար կերպով ներկայացվեն նյութի բուն մասում, հոդվածագիրը կանդրադառնա վերականգնման բաժնի տնօրենի նշանակմանը եւ տոների մասին առաջարկին:

Լրագրության հրահանգիչ Դոնալդ Մ. Մյուրեյն ասում է, որ լիդը կարելի է ներկայացնել որպես խոստում, իսկ բուն նյութը՝ որպես այդ խոստման իրականացում: Լիդն ասում է ընթերցողին կամ ունկնդրին. «Հե՛յ, տեսեք, թե ես ինչ եմ իմացել»: Բուն նյութն ասում է. «Այժմ ես այն ձեզ համար կմեկնաբանեմ»:

Մեկ տարր պարունակող լուրի կառուցումը



Ինքնաթիռի վթարի հետեւանքով զոհվել է երեք մարդ: Հրդեհը ոչնչացրել է քաղաքի հագուստեղենի խանութը: Նախագահը խորհրդակցության է մեկնել Մեխիկո: Մահացել է դպրոցի նախկին տնօրենը: Բուլերը հաղթել են Լեյքերներին:

Սրանք լրատվական ներդիրներ են՝ սփոթ լուրեր, եւ որպես այդպիսիք, ենթադրում են մեկ տարր պարունակող լրատվություններ: Մեկ տարր պարունակող լուրերն ունեն 5.1 գծագրում ներկայացված կառուցվածքը:

Լիդը առաջին պարբերությունում է: Երկրորդ պարբերության մեջ լիդը զարգացվում է կամ ներկայացվում է անհրաժեշտ նախապատմությունը: Նյութը շարունակվում է՝ լիդի մասին տեղեկությունները հիմնավորելով եւ ամրապնդելով: Երբ հոդվածագիրն ավարտում է լիդի գլխավոր տարրը հիմնավորող եւ առնչվող նյութերը, ավելացվում են երկրորդական թեմաները:

Ներկայացվում է մեկ թեմա պարունակող լրատվական ներդիրի օրինակ՝ մեկ տարր պարունակող նյութ:

Մեկ տարր պարունակող նյութի կառուցվածքը

Լիդ՝ հրդեհը կարող է տարածվել

Դանիել Բուն ազգային անտառում բռնկված հրդեհը, որը ոչնչացրել է 500 ակր անտառ, սպառնում է անցնել մասնավոր հողահանդակներին:

Լիդի մեկնաբանություն՝ ուժեղ քամիների պատճառով կրակը տարածվում է

Անտառապետության Քենթուքիի ստորաբաժանումը այսօր զեկուցել է, որ ուժեղ քամիները դժվարացնում են կրակը մարելու աշխատանքները: Ծառայության պաշտոնյաները տեղեկացնում են, որ քամիները կրակը քշում են դեպի անտառի հյուսիս-արեւելյան տեղամասերը:

Նախապատմություն՝ երբ է հրդեհը սկսվել, պատճառը, օդերեւութաբանական իրավիճակը

Հրդեհը սկսվել է չորեքշաբթի օրը: Պատճառը պարզված չէ: Ըստ մի պաշտոնյայի, անտառային հրդեհները սովորական են չոր, շոգ եղանակի ժամանակ, ինչպիսին որ այժմ իշխում է այդ տարածքում:

Լիդի լրացուցիչ մեկնաբանություն՝ հրշեջները խոչընդոտների են հանդիպել

Անտառապետության ստորաբաժանումը 40 հրշեջ է ուղարկել այս տարածք, որպեսզի նրանք փորձեն զսպել կրակը: Սակայն ճանապարհների բացակայությունը խոչընդոտներ է հարուցել:

Լիդի լրացուցիչ մեկնաբանություններ՝ որ տարածքներն են վտանգված

Ոչ մի բնակելի տարածք վտանգի տակ չէ, ասել է մի պաշտոնյա: Սակայն հյուսիս-արեւելյան հատվածում մասնավոր անձանց պատկանող անտառային արժեքավոր հանդակներ կան:

Երկրորդական թեմա՝ մարտավարությունները

Անտառապետության ստորաբաժանումը փորձարկում է անտառային հրդեհների դեմ պայքարի մի նոր ցողացրման հեղուկ, որը մշակվել է մեր նահանգի ճարտարագետների կողմից: Խրա-

մատներ փորելուն եւ ծառահատումներին զուգընթաց, հրշեջ-ներն օգտագործում են ցողացրման հեղուկը, որի հետեւանքով ժամանակավորապես թափվում են տերեւներն ու ստեւները՝ այդ ձեւով խոչընդոտելով կրակի տարածմանը:

Երկու տարր պարունակող նյութի կառուցումը

Նահանգապետը հայտարարում է, որ ֆինանսական դժվարու-թյունների պատճառով ինքը կտրուկ միջոցներ պետք է ձեռք առ-նի երկու կրթական ծրագրերի վերաբերյալ: Նա կարգադրել է ան-միջապես դադարեցնել քոլեջի եւ համալսարանական ավանների շինարարական ծրագիրը: Նա նաեւ ավելացնում է, որ նահանգա-յին կրթական հանձնաժողովին խորհուրդ կտար հաջորդ տարվա համար սառեցնել միջնակարգ դպրոցների ուսուցիչների աշխա-տավարձերը:

Որպես ձեր քոլեջի թերթի թղթակից՝ դուք ուզում եք իմանալ, արդյոք ձեզ մոտ շինարարությունը դադարեցվելո՞ւ է, թե՞ ոչ: Դուք հայտնաբերում եք, որ այդ հրամանով դադարեցվում է երեք միլիոն դոլար արժեցող հանրակացարանի կառուցման ծրագիրը, որը պետք է իրականացվեր նահանգի միջոցներով: Սա կարող է դառնալ մեկ տարր պարունակող մի լավ նյութ: Միջնակարգ դպ-րոցների ուսուցիչների աշխատավարձերի սառեցումը ուղղակի չի առնչվում ձեր ընթերցողներին, այդ պատճառով էլ դառնում է երկրորդական նյութ:

Մյուս կողմից, մամուլի ընկերակցության եւ խոշոր օրաթերթե-րի նահանգի մայրաքաղաքի թղթակցական կետի աշխատակից-ները հասկանում են, որ իրենց ընթերցողների համար երկու հայ-տարարություններն էլ հետաքրքրություն են ներկայացնում: Քա-նի որ այս թղթակիցների համար երկու լուրերն էլ հավասարա-պես կարեւոր են, նրանք իրենց նյութերը կկառուցեն երկու տարր պարունակող լիդի հիման վրա:

Գոյություն ունի երկու տարր պարունակող նյութը կառուցելու երեք եղանակ՝

1. Եթե երկու տարրերը հարմար են մեկ նախադասությամբ հաղորդվելու, ապա հոդվածագիրը կարող է երկուսն էլ դնել ա-ռաջին պարբերության մեջ:

2. Եթե երկու տարրերի միացումը մեկ նախադասության մեջ պահանջում է 35-40-ից ավելի բառ, ապա հոդվածագիրը յուրաքանչյուր տարրին կհատկացնի առանձին նախադասություն: Այս տարբերակը հոդվածագրին հնարավորություն է տալիս երկու նախադասությունները դնել առաջին պարբերության մեջ կամ յուրաքանչյուր նախադասություն դարձնել առանձին պարբերություն:

3. Եթե երկու տարրերը չի կարելի տեղավորել մեկ նախադասության մեջ (առաջին տարբերակ), իսկ հոդվածագիրը չի ցանկանում լիդը գրել երկու նախադասությամբ կամ երկու պարբերությամբ (երկրորդ տարբերակ), քանի որ չափազանց երկարաբան կամ ծանր է ստացվում, ապա գոյություն ունի երրորդ տարբերակը՝ ամփոփ լիդը: Ամփոփ լիդը հենց այն է, ինչը ենթադրում է նրա անվանումը: Այն ամփոփում է երկու տարրերը:

Տարբերակներ՝ ֆինանսական դժվարություններ: Եկեք տեսնենք, թե ինչ է անում նահանգի մայրաքաղաքում աշխատող լրագրողը նահանգապետի հայտարարության կապակցությամբ: Նա հերթով քննարկում է տարբերակները: Կնախընտրեր այնպիսի լիդ, որում երկու տարրերն էլ լինեին եւ որը 35 բառից ավելի չլիներ (առաջին տարբերակ)՝

Նահանգապետ Մարք Աքոսթան այսօր հայտարարեց, որ ֆինանսական դժվարությունները ստիպում են անհապաղ դադարեցնել նահանգի քոլեջների շինարարության 25 միլիոն դոլար արժողությամբ ծրագիրը եւ ասաց, որ ինքը նաեւ խորհուրդ է տալիս հաջորդ տարի սառեցնել դպրոցների ուսուցիչների աշխատավարձերը:

Լիդում բառերի թիվը բավարար է, սակայն ինչ-որ ծանրաբեռնված է թվում: Նա որոշում է փորձել երկրորդ տարբերակը՝ երկու նախադասությամբ:

Նահանգապետ Մարք Աքոսթան այսօր հայտարարեց, որ ֆինանսական դժվարությունները ստիպում են անհապաղ դադարեցնել նահանգի քոլեջների շինարարության 25 միլիոն դոլար արժողությամբ ծրագիրը: Նա ասաց, որ ինքը նաեւ խորհուրդ է տալիս հաջորդ տարի սառեցնել դպրոցների ուսուցիչների աշխատավարձերը:

Ոչ: Դեռեւս ծանրաբեռնված է: Ավելին, նա հանկարծ տեսավ, որ լիդը կարելի է շրջել: Առաջինը պետք է դնել աշխատավարձերի սառեցումը, քանի որ շատերի երեխաներն են հաճախում նահանգի դպրոցները, եւ հետեւանքները զգալի կլինեն բոլոր քաղաքներում:

Եթե նա նույնիսկ տարրերը տեղափոխի, լիդը դեռ մնում է ծանրաշարժ: Ինչ վերաբերում է յուրաքանչյուր նախադասությունը պարբերություն դարձնելուն, նրան դուր չեն գալիս երկու պարբերությամբ լիդերը, եթե միայն ստիպված չէ օգտագործել դրանք:

Հնարավո՞ր է կրճատել բառերի թիվը: Այո, նա նահանգապետի կտրուկ քայլի պատճառը կտեղափոխի երկրորդ պարբերություն՝

Նահանգապետ Մարք Աքոսթան այսօր ասաց, որ ինքը խորհուրդ կտար հաջորդ տարի սառեցնել դպրոցների ուսուցիչների աշխատավարձերը եւ որ կարգադրել է անհապաղ դադարեցնել նահանգի քոլեջների շինարարության 25 միլիոն դոլար արժողությամբ ծրագիրը:

Նահանգապետը հայտարարեց, որ ֆինանսական դժվարությունները ստիպում են իրեն դիմել այդ քայլերին: Նա ասաց, որ երբ ընդունվում էր շինարարական ծրագիրը, կրթության համար դաշնային միջոցների կրճատումներ չէին սպասվում:

Այսպես ավելի լավ է, մտածում է նա: Նա կարողացել է նույնիսկ նախապատմության հետ կապված նյութեր մտցնել երկրորդ պարբերության մեջ: Բայց քաղաքային լուրերի խմբագիրը կարճ լիդերի երկրպագու է եւ սիրում է, որ լիդը 25 բառից պակաս լինի: Այժմ թղթակիցը պետք է փորձի ամփոփ լիդը՝ երրորդ տարբերակը: Ամփոփ լիդ գրելու հնարքը երկու տարրերի միջեւ ընդհանուր եզր գտնելն է: Այստեղ երկու տարրերում միահյուսվում են նահանգի ֆինանսական դժվարությունները:

Թղթակիցը նաեւ ուշադրություն է դարձնում, որ նահանգապետն իր գործողությունները ներկայացնում է որպես «կտրուկ» եւ որոշում է օգտագործել այդ գաղափարը՝ ամփոփ լիդ գրելու համար:

Նահանգապետ Մարք Աքոսթան այսօր հայտարարեց, որ ֆինանսական դժվարությունները ստիպում են իրեն «կտրուկ» միջոցներ ձեռք առնել ուսուցիչների աշխատավարձերի եւ նահանգի քոլեջների շինարարական ծրագրի կապակցությամբ:

Նահանգապետն ասաց, որ ինքը խորհուրդ կտար հաջորդ տարի սառեցնել դպրոցների ուսուցիչների աշխատավարձերը: Եվ նա կարգադրել է անհապաղ դադարեցնել նահանգի քոլեջների շինարարության 25 միլիոն դոլար արժողությամբ ծրագիրը:

Նահանգապետը պարզաբանել է, որ դաշնային միջոցների անսպասելի կրճատումներն են իրեն ստիպել դիմելու այդ գործողություններին …

Տարբերակներ՝ աղբահավաքման դժվարություններ: Ներկայացնում ենք երկու պարբերությամբ լիդ (երկրորդ տարբերակ), որը թղթակիցը ստեղծել է, քանզի որոշել է, որ պետք չէ մեկ լիդի մեջ խցկել քաղաքային խորհրդի ընդունած երկու կարեւոր որոշումները՝

Երեկ երեկոյան քաղաքային խորհուրդը քվեարկեց, որպեսզի հետաձգվի քաղաքի հյուսիսային մասում աղբանոցի համար տեղամաս գնելու մասին որոշումը, այն բանից հետո, երբ այդ շրջանի վրդովված բնակիչները խանգարեցին խորհրդի նիստը:

Մի այլ որոշմամբ, խորհուրդը 4:3 ձայների հարաբերությամբ քվեարկեց, որ դադարեցվի քաղաքի ամառային կրթական ծրագրերի ֆինանսավորումը՝ հակառակ ծնողական խմբերի բողոքներին:

Գործողությունները չափազանց շատ են, որպեսզի ընթերցողը հեշտությամբ ընբռնի, մտածում է հոդվածագիրը: Նա որոշում է օգտագործել ամփոփ լիդը (երրորդ տարբերակ): Պետք է գտնել երկու տարրերը միավորող մի ընդհանուր գաղափար: Իհարկե, ընդհանուր գաղափարներից մեկն այն է, որ երկու որոշումներն էլ ընդունել է քաղաքային խորհուրդը: Բայց դա այնքան լայն է, որ համարյա ոչինչ չի ասում: Մյուս գաղափարը գործողությունների կարեւոր լինելն է, սակայն սա նույնպես չափազանց ընդհանուր է: Կա մի ընդհանուր գաղափար եւս՝ բողոքող խմբերը: Նա փորձում է ինչ-որ բան գրել՝

Երեկ բնակիչների մի խումբ Քաղաքային խորհրդում իր նպատակին հասավ, իսկ վրդովված բողոքավորների երկրորդ խումբը պարտություն կրեց:

Այնքան էլ վատ չէ: Եկեք սա ընդունենք եւ տեսնենք, թե ինչ է հետեւելու: Հոդվածագիրը պետք է անմիջապես հերթով մեկնաբանի երկու գործողությունները՝

Հաջողությամբ պսակված բողոքն ուղղված էր քաղաքի հյուսիսային մասում աղբանոցի համար հողակտորի ձեռքբերման վերաբերյալ խորհրդի քննարկումներին: Այդ շրջանի բնակիչներն իրենց բողոքներով խանգարեցին խորհրդի նիստի աշխատանքները:

Խորհուրդը հետաձգեց այդ հարցի կապակցությամբ որոշումը:

Մի այլ որոշմամբ, խորհուրդը 4:3 ձայների հարաբերությամբ քվեարկեց, որ դադարեցվի քաղաքի ամառային կրթական ծրագրերի ֆինանսավորումը՝ հակառակ ծնողական խմբերի բողոքներին:

Չնայած ամփոփ լիդի դեպքում ժանանակ է անհրաժեշտ, որպեսզի ընթերցողը հասնի նյութի էությանը, բազմաթիվ թերթեր գերադասում են այն, եւ այդ ձեւով են գրվում բարդ նյութերի լիդերը: Ամփոփ լիդերը չեն խեղդում ընթերցողին կամ ունկնդրին: Ամփոփ լիդը ընթերցողին հրավիրում է մասնակցելու պատմությանը:

Զիգզագներ: Մենք տեսանք, որ մեկ տարր պարունակող նյութի բուն մասը կազմված է նախապատմությունից եւ լիդի բացատրություններից կամ մեկնաբանություններից: Լրացուցիչ կամ երկրորդական նյութը ներկայացվում է նյութի խորքերում:

Երկու տարր պարունակող նյութը հետեւում է նույն հիմնական գծին: Սակայն բազմատարր նյութեր գրելիս՝ ավելի լավ է չցատկոտել նյութից նյութ: Հոդվածագիրը չպետք է մի պարբերություն գրի, որը վերաբերում է լիդի Ա տարրին, հետո ցատկի դեպի մի պարբերություն, որը վերաբերում է լիդի Բ տարրին, հետո վերադառնա Ա-ին, եւ այսպես շարունակ: Չափազանց շփոթեցնող է:

Լավագույն մոտեցումը իրար նման նյութերը միմյանց հետ ներկայացնելն է: Մինչեւ Բ տարրին անցնելը՝ միավորեք լիդի Ա տարրին վերաբերող բոլոր նյութերը: Քաղաքային խորհրդի նիստին վերաբերող պատմության մեջ բուն նյութում սկզբից ներկայացվում է աղբանոցի վերաբերյալ մասը, քանի որ դա լիդում նշված առաջին տարրն է: Աղբանոցի մասին հիմնավորող նյութ գրելուց հետո, լրագրողը գրում է անցումային կամ փոխանցող պարբերություն՝ ներկայացնելով ամառային ծրագիրը, եւ այնուհետեւ օգտագործում է ամառային ծրագրի քվեարկությանը վերաբերող նյութը:

Ներկայացնում ենք Ա տարրի (աղբանոցի դեմ հաջողությամբ պսակված բողոք) մեկնաբանությունից հնարավոր անցումը Բ տարրի (քվեարկություն քաղաքի ամառային ծրագրի դադարեցման վերաբերյալ) մեկնաբանությանը քաղաքային խորհրդի նիստի մասին նյութի մեջ՝

Մինչ աղբանոցի դեմ բողոքողները գոհ են խորհրդի որոշումից, ծնողները, որոնք հույս ունեին պահպանել ամառային ծրագրերը, հիասթափված են:

Հաջողված անցումը ընթերցողներին բացատրում է, թե որտեղ են եղել (աղբանոցի մասին որոշում) եւ հետո տեղեկացնում է, թե ուր են նրանց տանում (ամառային ծրագրի մասին որոշում):

Ուշադրություն դարձրեք «մինչ» բառին, որը նախադասության մեջ գործածվում է անցումն ապահովելու համար: «Մինչ»-ը շաղկապ է՝ բառ կամ արտահայտություն, որը ծառայում է կապելու համար: Դրանք իրար են միացնում նյութի տարբեր տարրերը եւ հոդվածին կուռ կառուցվածք են տալիս: Ահա այդպիսի մի քանի այլ բառեր եւ բառակապակցություններ՝

հետո	ավելի ուշ
չնայած	այդ ժամանակ
եւ	ավելին
առաջ	մինչդեռ
բայց	հաջորդ
դեռ ավելին	այժմ
ինչեւէ	մյուս կողմից
ի լրումն	ուրեմն

Դուք կարող եք տեսնել, որ այս բառերը երկկողմանի են՝ ընթերցողին տանում են ետ, այնուհետեւ՝ առաջ: Ուշադրություն դարձրեք դրանց գործածությանը այս անցումային նախադասություններում՝

- Հոքերը անհանգստանալու բան չունեն այսօրվա հակառակորդների հետ խաղում, բայց վաղվա խաղը այլ է լինելու:
- Ի լրումն վառելիքի բարձր գների մասին իր մեկնաբանությունների, նա քննարկեց նաեւ բնակարանների մեկուսացման անհրաժեշտության հարցը:
- Առարկությունների այս ցուցակում հաջորդը բաժնի գործունեությունն էր՝ կապված փողոցների վերանորոգումների հետ:

Լրագրողը չպետք է դառնա բանաձեւի ստրուկը: Երբեմն երկու տարր պարունակող լրատվություն ստեղծող լրագրողը Ա-ից եւ Բ-ից յուրաքանչյուրի մասին լրացուցիչ մեկ-երկու պարբերություն կգրի, մինչեւ յուրաքանչյուրը հիմնավորող նյութերի բավականին խիստ առանձնացմանն անցնելը:

Որոշ հոդվածագիրներ կարող են ներկայացնել երկրորդական նյութը՝ առանց ավարտելու լիդի մեջ եղած տարրերի բոլոր հիմնավորումները: Այդպես անում են այն դեպքում, երբ երկրորդական նյութը կարեւոր է, սակայն ոչ այնքան, որ մտնի լիդի մեջ:

Այժմ մենք պատրաստ ենք անցնելու երեք տարր պարունակող նյութին: Անակնկալներ չեն լինի: Հիմնական մոտեցումը նույնն է:

Երեք տարր պարունակող նյութի կառուցվածքը

Քաղաքային լուրերի խմբագիրը հենց նոր է կարդացել «Նյու Յորք Թայմս»-ի կիրակնօրյա համարում զետեղված նյութը դեռահասների եւ մարիհուանայի մասին: Նա կանչում է թղթակցին եւ ասում. «Կրճատեք սա եւ «Թայմս»-ին արժանին մատուցեք: Մենք տպագրելու ենք մի շարք՝ ներկայացնելով դեռահասների շրջանում թմրանյութերի օգտագործման համայնապատկերը, եւ ես ուզում եմ, որ ցույց տրվի խնդրի ծավալը»:

Թղթակիցը կարդում է նյութը եւ տեսնում, որ այնտեղ առկա է երեք տարր՝ դեռահասները մարիհուանան հեշտությամբ են ձեռք բերում, այն օգտագործելու համար իրենց մեղավոր չեն զգում եւ չեն վախենում այն օգտագործել:

Թղթակիցը վերցնում է երեք թուղթ, եւ յուրաքանչյուրի վրա գրում մեկ տարրի անվանումը: Ամեն մեկի տակ թվում է հիմնավորող փաստերը: (AP-ի Նյուսֆիչըրսից Սոլ Փեթը, ինչպես նաեւ այլ արհեստավարժներ, իրենց հոդվածների համար հաճախ նախնական ուրվագծեր են կազմում):

Առաջին թղթի վրա, օրինակ, «Հեշտ է ձեռք բերել» վերնագրի տակ նա գրեց՝

> Գնում են դասընկերներից
> Գնում են փողոցի վաճառողներից
> Նույնիսկ հանրահայտ Հանրային գրադարանում վաճառողներից
> Այնտեղ վաճառվում են նաեւ կոկային եւ հերոյին

Համանման ցուցակներ գրեց մյուս երկու թղթերի վրա եւս: Չորրորդ թղթի վրա նա թվում է երկրորդական նյութը, ինչպիսին դեռահասների ոգելից խմիչքների գործածության աճն է:

Այժմ նա պատրաստ է գրելու: Կուզենար լիդում նշել բոլոր երեք տարրերը՝ շեշտելու, ցույց տալու խնդրի ծավալը:

> Նյու Յորքի մարիհուանա ծխող դեռահասները այն հեշտությամբ են ձեռք բերում, օգտագործելու համար իրենց մեղավոր չեն զգում եւ ձերբակալվելուց համարյա չեն վախենում:
>
> Սրանք 1000 դպրոցականների հարցման արդյունքներն են, որ հաղորդել է «Նյու Յորք Թայմս»-ը կիրակի օրը ...

Այժմ նրան միայն մնում էր վերադառնալ իր առաջին թղթին եւ զարգացնել մարիհուանայի մատչելիության թեման: Դա վերջաց-

նելուն պես, նա գրելու է անցումային նյութ եւ անցնելու է մեղավորությունը չընդունելու վերաբերյալ երկրորդ թղթին եւ այդպես շարունակ, մինչեւ որ վերջացնի երկրորդական նյութը:

1, 2, 3 մոտեցում: Թղթակիցները երեք տարր պարունակող նյութի համար երբեմն օգտագործում են ամփոփ լիդի մի տարատեսակ: 1, 2, 3 մոտեցումը մոտավորապես այսպիսի տեսք ունի՝

Քաղաքային խորհուրդը իր երեկվա նիստում ընդունեց հետեւանքներով հղի երեք որոշում:

խորհուրդը որոշեց՝

1. Մրցույթ հայտարարել վիճելի հանրային կենտրոնի առնչությամբ, որի կառուցումը կասեցվել էր դատարանի կողմից:

2. Գնել երեք հողակտոր քաղաքի կենտրոնը շրջանցող նոր տրանզիտային հանգույցի համար:

3. Կառուցել հետիոտնային անցում 28-րդ խճուղու վրա, այն հատվածում, որտեղ կառուցվելու է Արդեն Հիլզի հանրախանութը:

Զգուշացում. երկու կամ երեք տարր պարունակող լիդը կարող է հոդվածագրի՝ դժվար վիճակից դուրս գալու հնարք լինել, եւ խմբագիրներն էլ լավ գիտեն այդ: Դեպքերի մեծ մասում կա մեկ կարեւոր տարր, ոչ թե երկու կամ երեք, եւ հոդվածագիրն ինքը պետք է կարողանա պարզել, թե ո՞ր տարրն է կարեւոր: Երկու կամ երեք տարր պարունակող լիդ կարելի է օգտագործել միայն այն դեպքում, երբ մեկ տարր պարունակող լիդ օգտագործելը չի ստացվել:

***Ժամանակագրական մոտեցում*:** Դեռեւս նախապատմական ժամանակներում մարդիկ, քարանձավներում կրակի շուրջը հավաքված, պատմություններ էին լսում: Նշանակություն չուներ, թե քանի անգամ էին պատմում, միեւնույն է, մարդիկ լսում էին: Եթե նույնիսկ ունկնդիրները գիտեին պատմության ավարտը, նրանք պատմողին մինչեւ վերջ լսում էին: Վարպետորեն պատմված հեքիաթի գնահատումը այն սկզբունքն է, որն ընկած է ժամանակագրական մոտեցման հիմքում:

Այս մոտեցման դեպքում պատմությունը պատմում են երկու անգամ: Լիդն ասում է ընթերցողին, թե ինչ է կատարվել, իսկ հիմնավորող նյութը լրացնում է լիդը: Այնուհետեւ գրվում է անցումը, եւ հեղինակը վերադառնում է, որպեսզի ցույց տա, թե ինչպես է կատարվել դեպքը՝ այն օրը, երբ կատարվել է հանցագործությունը, հարսանյաց հանդեսին մեկնող երկու զույգերի ոգեւորությունը, գեյմի վերջին երկու րոպեի առաջին նետումը:

Ահա այսպես է սկսվում դպրոցական ավտոբուսի մի սարսափելի ուղերթի պատմությունը Քոնեքթիքութ նահանգի Սթամֆորդ քաղաքի «Ադվոքիթ» թերթում՝

Ուրբաթ երեկոյան ցածր դասարանների քառասուն աշակերտ իսկական սարսափ են ապրել դպրոցական համար 10 ավտոբուսում:

Միշտ 15 րոպե տեւող երթուղին Քլունան Միդլ դպրոցից մինչեւ Ուեսթոուվեր եւ Լոնգ Ռիջ թաղամասերը տեւել է մեկ ժամից ավելի: Աշակերտները պատմում են, որ նրանք մի ժամ անց են կացրել, դիտելով, թե ավտոբուսն ինչպես է թեքվում ոլորապտույտերն անցնելիս եւ լսելով դիմացից եկող վարորդների ազդանշանները, որ ավտոբուսը դանդաղեցնի ընթացքը:

Ոմանք կարծել են, թե վարորդն իրենց առեւանգել է, սակայն դպրոցական ավտոբուսները շահագործող ընկերությունը հայտարարել է, որ այդ մարդը պարզապես մոլորվել էր:

«Բոլոր երեխաները գոռում էին, իսկ ոմանք լաց էին լինում, - պատմում է յոթերորդ դասարանցի Քարեն Սիրենը: - Մենք պատուհանից ձայն տվեցինք մի ոստիկանի, բայց նա մեզ չհավատաց»:

Վախից ութ հոգի դուրս են ցատկել ավտոբուսից, երբ այն կանգ է առել Ռիփովամ միջնակարգ դպրոցի մոտ եւ օգնության համար ոստիկանական մեքենա են կանգնեցրել: Վերջ ի վերջո, բոլոր աշակերտները տուն են վերադարձել, ուշացած, բայց անվնաս:

Դպրոցների վերահսկման հարցերի տեղակալ Ալեն Գրաֆթենը հայտնել է, որ դեպքը կուսումնասիրի եւ երկուշաբթի որոշ պատասխաններ կունենա:

Այս լրատվական ներդիրի վեց պարբերությունների մեջ Ռիտա Յենսենը եւ Քեւին Ֆլինը նկարագրել են դեպքի գագաթնակետը եւ հիմնական մասը: Կարելի էր այստեղ կանգ առնել: Սակայն լրագրողները գիտեն, որ այս տեսակի միջադեպերի նկատմամբ այնքան հետաքրքրություն կա, որ անհրաժեշտ է այն շարունակել: Նրանք գրեցին անցումը, ապա անցան ժամանակագրական պատումին՝

Ըստ «Ադվոքիթ» զանգահարած դպրոցականներից եւ ծնողներից, ինչպես նաեւ ARA ավտոբուսների սպասարկման ընկերությունից ստացված տեղեկությունների, սարսափելի ուղերթը սկսվել է, երբ …

Ուշադրություն դարձրեք «սկսվում» բային: Այն ընթերցողին ասում են, որ նա նստի ու լսի, թե ինչպես է հոդվածագիրը ծավալում իր պատմությունը:

Շրջված բուրգի մոտեցում: Ավտոբուսային սարսափելի ուղերթի մասին պատմությունը լարվածության գագաթնակետին է հասնում սկզբից՝ լիդի մեջ: Հոդվածագիրները սկզբից ներկայացնում են հիմնական նյութը, հետո՝ երկրորդական տեղեկությունները: Այս մոտեցմամբ ստացվում է նյութի ավանդական կառուցվածք՝ շրջված բուրգ:



Շրջված բուրգի սկզբունքը կատարյալ է չոր լուրի համար: Երբ գործը վերաբերում է կարեւոր դեպքերին, ընթերցողներն ու ունկնդիրները ցանկանում են հենց այդ վայրկյանին իմանալ, թե ինչ է տեղի ունեցել:

Սակայն, շրջված բուրգի սկզբունքի կիրառումը սահմանափակում է հոգվածագրի պատմելու հնարավորությունները: Երբեմն հոդվածագիրը ցանկանում է գլխավոր տարրը պահել՝ նոր պարբերության մեջ կամ նույնիսկ վերջում ներկայացնելու համար: Երբեմն էլ պատմությունն ավելի լավ է ստացվում, երբ գագաթնակետը դրվում է վերջում, այլ ոչ թե սկզբում:

Երկար ժամանակ հոդվածագիրները պայքարել են շրջված բուրգի սահմանափակումները հաղթահարելու համար: Նույնիսկ դարձրել են լրագրական հոդվածագրության սահմանափակումների խորհրդանիշը: Տաղանդավոր հոդվածագիրները մոդա են դարձրել ծաղրել շրջված բուրգի սկզբունքը:

Նրանց ծաղրը տեղին է մինչեւ որոշակի սահման: Իրականում շրջված բուրգի սկզբունքին տիրապետած հոդվածագիրները տարիներով կարողացել են անցնել նրա սահմանը, ինչպես նաեւ խախտել լուրի ավանդական կառուցվածքը, եթե հնարավոր է եղել: Վերջին արտահայտությունը այնքան կարեւոր է, որ կրկնում ենք՝ եթե հնարավոր է:

Շրջված բուրգի սկզբունքը լավ արդյունքներ է տալիս նյութերի, ինչպես նաեւ նորությունների թողարկումների մեծ մասի համար: Հակառակ իր սահմանափակումներին, այն դեռեւս լայնորեն օգտագործվում է լրատվական ներդիրների համար:

... Եվ մի այլ բան: Երբ հնարավոր է լինում, տեղեկատվություններ գրող լրագրողներն այնպիսի բանաձեւերից, ինչպիսին շրջված բուրգն է, հեռանում են դեպի պատմություն պատմելու սզբունքը:

Միսս Ամերիկայի շրջագայության ընթացքում նրա ժամանումը Քալիֆորնիա մի հնարավորություն էր, որ լրագրողն օգտագործեց ստեղծագործ մոտեցման սկզբունքը կիրառելու համար:

«Ինձ ուղարկել էին մի մոթել, որտեղ միսս Ամերիկան ասուլիս էր կազմակերպել, - հիշում է նախկին թղթակիցը, այժմ լրագրության դասուսույցը: - Նա նոր էր թագադրվել եւ երկրով մեկ շրջագայություն էր կատարում: Այդ օրերին փոքր եւ միջին քաղաքներում դա իսկական լուր էր»:

Թերթերի երկու թղթակից, հեռուստատեսության օպերատորների խումբը եւ մի թղթակից սպասում էին նրա համարի սենյակներից մեկում: Անկյունում միսս Ամերիկայի մայրը զգեստ էր արդուկում: Նրանք սպասում էին: Հինգ կամ տասը րոպե ուշացած ներս մտավ միսս Ամերիկան:

«Նրա ձեռքին մի շիշ փեփսի էր, որքան հիշում եմ: Սեղմել էր կրծքին, բացված չէր: Դարակներից մեկի վրա ստվարաթղթե ցուցանակ էր, որը նշում էր նրա շրջագայության մի ուրիշ հովանավորի,- հիշում է նա: - Այդ ամենը թվում էր կազմակերպված, բեմադրված»:

Այդ ժամանակ լրագրողի մոտ միտք է ծագում միսս Ամերիկայի այցելությանը նվիրված իր հոդվածի մասին: Այն պետք է ունենա թատերական բեմադրության ձեւ:

Նա հոդվածը սկսում է բեմական ցուցումներով՝

Բեմի աջ կողմում: Մայրիկը արդուկում է երկնագույն երեկոյան զգեստը: Ձախ կողմում՝ դարակի վրա գովազդային ցուցանակ է: Ցածր դարակների վրա բացված ճամպրուկներ են: Լրագրողները եւ օպերատորները նստած են, կամաց զրուցում են:

Ետնաբեմից ներս է մտնում միսս Ամերիկան: Նա քայլում է դանդաղ, կրծքին սեղմելով չբացված սոդայաջրի շիշը: Մի պահ լռություն է տիրում: Նա սկսում է խոսել:

Միսս Ամերիկա -Շնորհակալություն, որ եկել եք: Ես որոշ բաներ կասեմ, հետո կպատասխանեմ հարցերին…

Նա պատմում է, որ երբ հանձնեց իր նյութը, քաղաքային լուրերի խմբագիրը ծիծաղեց, ուզեց այն վերադարձնել, հետո որոշեց տպագրել: «Դա միանգամյա միջոցառում էր: Դրանից հետո ես պիես չեմ գրել, բայց ոչ թե այն պատճառով, որ գաղափարը վատն էր: Համապատասխան առիթ այլեւս չներկայացավ»:

Մեր օրերում խմբագիրների մեծ մասը պահանջում է պատկերավոր ու գունագեղ հոդվածներ, եւ երբ առիթը հարմար է, նրանք համոզում են, որ թղթակիցներն օգտագործեն հոդված գրելու տեխնիկան, նույնիսկ չոր լուրի դեպքում: Ահա եւ տեղի ունեցավ մեր ծանոթությունը լրատվական հոդվածի հետ:

Մինչ մենք մանրամասնորեն կուսումնասիրենք լրատվական հոդվածը, նայենք տեղեկատվական հոդված կոչվող հիբրիդի մյուս ծնողին՝ հոդվածին:

Հոդված

Հոդվածը լրագրության շտեմարանն է: Այն կարող է լինել այս արեւի տակ գոյություն ունեցող ամեն ինչի մասին, նույնիսկ հենց արեւի: Հոդվածը կարող է լինել սերուցքային կարկանդակի նման թեթեւ ու փափուկ եւ կողամսի խորովածի նման ծանրակշիռ ու հիմնավոր: Այն կարող է մեզ լացացնել ու ծիծաղեցնել: Չոր լուրի եւ հոդվածի միջեւ հիմնական տարբերությունն այն է, որ չոր լուրը մեզ տեղեկացնում է, իսկ հոդվածը, որպես կանոն, նպատակ ունի մեզ զբաղեցնել:

Հոդվածի մի այլ բնորոշ գիծը նրա ոճն է: Չոր լուրն այն է, ինչ կա, դեպքի պարզ շարադրանքը: Հոդվածը… հնարավոր չէ ասել, թե ինչ ձեւ կարող է ստանալ հոդվածը: Եվ այս հատկանիշն էլ կարող է դառնալ նրա տարբերանշանը: Որոշ հոդվածներ երգիծական են, ուրիշները՝ լուրջ: Իսկ երրորդները ոչ մի բնորոշման չեն ենթարկվում, ինչպես այս մեկը՝

Վեցամյա Բրայան Ուոթերսը երեկ մի ցանկապատ նկատեց այն փողոցի ներքեւում, որտեղ գտնվում է իրենց դպրոցը եւ շեղվեց տուն դարձի իր սովորական ընթացքից :

Նա ակնապիշ նայում էր երկաթյա ցանկապատին՝ IIIIII:

Հետո նա որոշեց բակին նայել ցանկապատի միջով՝ IIIoIII : Սակայն մի կուշտ նայելուց հետո, Բրայանը չկարողացավ գլուխը դուրս քաշել:

Անցորդներից մեկը զանգահարեց հրշեջ ծառայություն, եւ ցանկապատին մոտեցավ մի հրշեջ՝ զինված դարբնի մուրճով՝ /:

Կարճ ժամանակ անց նա իրարից հեռացրեց մի զույգ ձող՝ II(o)II: Ազատագրվելով՝ Բրայանը մաքրեց արցունքները եւ շարունակեց իր ճանապարհը դեպի տուն:

Ընտրել ոճը

Հոդվածի ոճը, ինչպես մենք կտեսնենք, պարզ է ու հանգիստ: Մայք Սթենթոնի հոդվածը, որը հաղորդվել է AP-ի հեռատիպով, այնքան է դեգերում, որքան իր հերոսը՝ քոլեջի մի ուսանող, որը գնացքով ճանապարհորդում էր, որպեսզի նյութ հավաքի իր կիսամյակային հանձնարարության համար: Հակառակ իր «թավալգլոր» անկանոն ոճին, Սթենթոնը մինչեւ վեցերորդ պարբերության ավարտը մեզ բավականաչափ տեղեկություններ է տալիս, որ մենք կարողանանք ուսանողի եւ նրա արածի սպառիչ պատկերը ունենալ:

Ահա նյութի սկիզբը՝

ԱՄՀԵՐՍԹ, Մասաչուսեթս (AP) - Թեդ Քոնովերի դասասենյակը երերացող ապրանքատար վագոնն է, իսկ նրա առաջին լուրջ քննությունը՝ կռիվը հարբած թափառաշրջիկի հետ: Նա վայր է ընկել գնացքից, ուտելիք է փնտրել աղբամաններում եւ ոջլոտել է:

Ամերսթի քոլեջի ուսանողը երեք ու կես ամիս գնացքների մեջ է անցկացրել՝ ապրելով երկաթուղային թափառաշրջիկների կյանքով, որպեսզի ուսումնասիրություն կատարի իր ավարտական աշխատանքի համար:

Նա հայտնաբերել է, որ ամեն ինչ չէ, որ այդքան վատ է:

«Ինչ-որ բան կա ապրանքատար վագոնի մեջ ցատկելում, պարզապես լավ ես զգում քեզ»,- ասում է 23-ամյա ուսանող Քոնովերը, որը մարդաբանություն է ուսումնասիրում Դենվերում:

«Դա քո երեսին փչող քամին է եւ քեզ սլացնող գնացքը: Կարծում եմ, որ որոշ ճշմարտություն կա այն ասույթի մեջ, որ ամերիկացի ամեն մի իսկական տղա պետք է գնացքների մեջ այսպես ցատկելով ճանապարհորդի»:

Անցյալ աշուն Քոնովերը անցել է 10 000 մղոն՝ չափչփելով Ամերիկայի Արեւմուտքը, որպեսզի ուսումնասիրի նրանց, ում գրող Ջոն Սթայնբեքն անվանել է «վերջին ազատ մարդիկ»:

Քոնովերն ասում է, որ ինքը չէր ուզում «գրադարանում տառապել» իր աշխատանքը պատրաստելու համար, այդ պատճառով էլ մի կիսամյակ անց է կացրել դիտելով եւ զրուցելով 460 շրջմոլիկների հետ: Նրա հաշվարկներով այսօր Միացյալ Նահանգներում ապրում է առնվազն 10 000 թափառաշրջիկ ...

Իրողություններ հոդվածի համար

Ոճ - Հանգիստ, ոչ պաշտոնական: Թույլ տվեք, որ նյութի մեջ մարդիկ գործերով զբաղվեն, թողեք, որ նրանք խոսեն: Ապացույցներ բերեք: Այնպես արեք, որ նյութն առաջ շարժվի մեջբերումների ու միջադեպերի միջոցով: Օգտագործեք երկխոսություններ: Թող մարդիկ զրուցեն միմյանց հետ: Լսեք նրանց աշխատելիս եւ հանգստանալիս: Թոմաս Վուլֆը, որը ակնարկի վարպետ էր, ասում էր. «իրատեսական երկխոսությունը» հմայում է ընթերցողներին: Այնպիսի բայեր օգտագործեք, որոնք ընթերցողի համար պատկերներ են ստեղծում: Երբ հնարավոր է՝ օգտագործեք ներկա ժամանակը, որպեսզի ընթերցողին շարունակվող գործողության կամ դեպքին ներկա լինելու զգացում տաք:

Լիդ - Գերադասելի են հաջորդող լիդերը: Սկսելու համար կարելի է օգտագործել մի դիպված կամ միջադեպ: Լիդում շեշտեք մարդկային հետաքրքրության պահը՝ ցույց տալով ուղղակի ներգրավված մեկին: Համոզվեք, որ լիդը համապատասխանում է հիմնական թեմային:

Բուն նյութ - Խուսափեք ընթերցողին ավելորդ մանրամասներով ծանրաբեռնելուց: Մի քանի հաջող ընտրված մեջբերումները եւ միջադեպերը իրենք են պատմում պատմությունը: Հոդվածի էությունը ընտրության մեջ է: Չեն ասում է . «Սկահակ պատրաստելու համար անհրաժեշտ է կավ եւ կավի բացակայություն»: Դուք պարտավոր չեք օգտագործել այն ամենը, ինչ ստացել եք աղբյուրից:

Կենտրոնանալ թեմայի վրա

Քանի որ հոդվածին բնորոշ է հանգիստ, անշտապ մոտեցումը, եւ այն պարունակում է բազմաթիվ մեջբերումներ եւ մի քանի հետաքրքիր միջադեպեր, սկսնակները կարծում են, թե հոդված գրելու համար բավական է միայն իրար վրա կուտակել մեջբերումներն ու դիպվածները եւ դրանք իրար սոսնձել մի քանի անցումներով:

Թոմաս Վուլֆը նշում է, որ չափազանց շատ են այն գրողները, ովքեր կարծում են «եթե ինչ-որ ձեւով բավական քանակով մանրամասներ, պատահական փաստեր հավաքես, էջերի միջից ինչ-որ կերպ հառնելու է կուռ պատկերը»:

Այո, նա համաձայն է, մանրամասները եւ երկխոսությունները էական են, սակայն լավ հոդված գրողները «ամեն ինչ իրար վրա են կուտակում խիստ զգույշ ձեւով՝ աստիճանաբար ներկայացնելով միակ ասելիքը ...»

Վուլֆի «միակ ասելիքը» հոդվածի թեման կամ ասելիքն է:

Հոդվածագիրը պետք է ընթերցողին հրամցնի միայն այն մեջբերումները, փաստերը եւ միջադեպերը, որոնք հոդվածագրի նախատեսած ասելիքի օրինակ են եւ հիմնավորում:

Այս առումով հոդվածը չի տարբերվում որեւէ լրատվությունից: Այն պետք է ունենա հիմնական թեմա, որը հենց սկզբից պետք է պարզ դառնա, անշուշտ գոնե մինչեւ վեցերորդ պարբերությունը: Հիմնական թեման միշտ նյութի ողնաշարն է: Մնացած ամեն ինչ նրանից է ճյուղավորվում:

Թղթակիցը, որը հարցազրույց է անցկացնում հարբեցողների ու թմրամոլների կլինիկայից հենց նոր դուրս գրված ռոք երգչի հետ, լավ պատկերացնում է այն հարցերը, որի պատասխանները նրան անհրաժեշտ են հոդված գրելու համար: Նույնը եւ սպորտային լրագրողը, որը պետք է նյութ պատրաստի 38-ամյա նետողի հետ, որն անվանվել է բեյսբոլի տարվա լավագույն վետերանը:

Ռոք երգիչը կարող է զարմացնել լրագրողին, ասելով. «Ես վերջ եմ տալիս երաժշտությանը: Եթե շարունակեմ, նորից վերադառնալու եմ հին սովորություններիս: Եթե երաժշտությամբ չզբաղվեմ, կլինեմ աղքատ, բայց կենդանի»: Նետողը կարող է բորբոքված եւ բարկացած լինել, այլ ոչ թե երջանիկ, որ շահել է այդ մրցանակը: Նա կարող է երկար խոսել իր աշխատավարձի, խաղընկերների կամ բեյսբոլի խորհրդի որեւէ անդամի վերաբերյալ: Անսպասելի նյութը դառնում է նյութի հինական թեման:

«Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ի բանաձեւերը

Ահա այն կառուցվածքը, որը «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ը հաջողությամբ կիրառում է շատ տարիների ընթացքում՝

Սկիզբ - Սկսեք միջադեպով կամ թեման լուսաբանող օրինակով:

Թեմա - Սկզբից ոչ շատ անց նշեք նյութի ասելիքը: Ասելիքը մի իջեցրեք վեցերորդ պարբերությունից ցած:

Բուն նյութ - Ապահովեք թեման մեկնաբանող մանրամասնություններ: Պատմեք ընթերցողներին, թե ինչ է տեղի ունենում եւ ինչու ու ինչ է արվել այս իրավիճակի կապակցությամբ:

Շեշտել ավարտը

Հոդվածները, որպես կանոն, ունենում են ուժեղ ավարտ: Փոխանակ ավարտվելու երկրորդական տեղեկատվությամբ, ինչպես լուրերի մեծ մասը, հոդվածը կարող է ունենալ այն, ինչ կոչում են խթան, բռունցքի մի հարված, որը թեման իր տեղն է դնում:

Իր նյութի մեջ մի կնոջ մասին, որն այցելել է Դեյդի կոմսության բանտը՝ բանտարկյալներին օգնելու, որ ինչ-ինչ խնդիրներ լուծեն, «Մայամի Հերալդ»-ի թղթակից Շուլա Բեյերը նկարագրում է Ջորջիա Ջոունս Այերսին՝ որպես այն բանտարկյալներին կարեկցող, որոնց, նրա կարծիքով, անարդար են մեղադրել եւ բանտարկել: Սակայն Այերսը բարեհոգիի մեկը չէ: Նա տանել չի կարողանում հանցագործությունը: Որպեսզի Այերսի մասին այս բանն ասի, Բեյերը ավարտում է իր պատմությունը հետեւյալ դրամատիկ դեպքով ու մեջբերումով՝

Ջորջիա Այերսի մասին պատմում են նաեւ այսպիսի մի պատմություն: Նա ոստիկանությանն է հանձնել մի թմրանյութեր վաճառողի: Նրան դատապարտել են ութ տարվա բանտարկության: Այդ վաճառողը նրա որդին է եղել՝ Սեսիլը:

«Երբ իմ սեփական երեխաներն են վատ բան անում, ես նրանց չեմ պաշտպանում: Օրենքն օրենք է: Տղաս ինձ հարգում է այդ բանն անելու համար: Ես չէի կարող տեսնել, թե ինչպես է նա իրեն կործանում:

Ավելի լավ է ես նրան տեսնեմ ճաղավանդակի ետեւում, քան, ինձ կանչեն դիարան՝ նրա մարմինը ճանաչելու համար»:

Լրատվական հոդված

Մի ցուրտ շաբաթ օր, վաղ առավոտյան, երբ Բոբ Ռոուզը տանից պատրաստվում էր գնալ աշխատանքի՝ Թոլեդոյի «Բլեյդ», հեռախոսը զնգաց: Թերթից էր: Ռոուզի՝ Փարքվուդ պողոտայի վրա գտնվող բնակարանից մի քանի թաղամաս այն կողմ հրդեհ էր: Կարո՞ղ է նա գնալ այնտեղ: Այո, կարող է: Մի քանի րոպե անց նա դուրս եկավ:

Փորձեց հասնել մեքենայով, բայց ապակու վրա նստած սառույցը չէր հալվում եւ, մի քանի թաղամաս անցնելով, նա մեքենայից դուրս ցատկեց եւ ճանապարհի մնացած մասն անցավ վազքով:

«Ես այն ժամանակ հասա, երբ հրշեջը տնից մի երեխա էր հանում», - պատմում է նա: Մեկ ժամ անցկացնելով հրդեհի վայրում՝ լրագրողը տեղեկություններ էր հավաքում հրշեջ ծառայության պատասխանատուներից եւ այն մարդկանցից, ում հրդեհը դուրս էր քշել իրենց տներից:

Ինչպես հաղթահարել գրելու արգելակները

Սկսելը գրելու ամենից դժվար մասն է:

Ահա մի քանի առաջարկություն՝

Ծիսակարգ - Էռնսթ Հեմինգուեյը սրում էր 20 մատիտ: Որոշ գրողներ թերթում են սիրած գիրքը կամ պատմվածքը: Ոմանք դանդաղ քայլում են մինչեւ ցայտաղբյուրը, ջուր են խմում եւ ետ գալիս:

Ամփոփում - Աշխատեք արագ գրի առնել մի քանի նախադասություն, որոնք լուսաբանում են դեպքը: Սա օգնում է կենտրոնանալ եւ տրամադրում է գրելու:

Հատված - Սկսեք որեւէ բանից, որը, կարծում եք, կարող է նյութի որեւէ հատվածը դառնալ: Սա նման է շարժիչը տաքացնելուն: Երբ արդեն տաքացել եք, հատվածը մի կողմ դրեք եւ անցեք լիդին:

Խմբագրությունից նա կապվեց հիվանդանոցի հետ, ուր տարել էին վիրավորներին, եւ օրվա երկրորդ կեսին, շատ շուտ, նա արդեն վերջացրել էր իր նյութը: Բայց այնքան էլ չէր հավանում:

«Այն ինչ-որ հաջող չէր», - հիշում է Ռոուզը: Նա խնդրեց քաղաքային լուրերի խմբագրի տեղակալին իր կարծիքը հայտնել, եւ

պատասխան ստացավ, որ նյութում պակասում է դրաման: Լրագրողը մի քիչ էլ աշխատեց եւ հեռացավ գրասենյակից մի փոքր բավարարված:

Շուտով նորից զանգեցին: Պատասխանատու խմբագրի տեղակալ Էդ Ուիմփլը փոփոխություն է կատարել: «Նա ցանկացել էր ընթերցողին մտցնել ուղղակի պատմության մեջ: Իմ լիդը դրվել էր երրորդ պարբերությունում, իսկ մահացած աղջկա վրա արտասվող հրշեջի տեսարանն առաջինն էր», - պատմում է Ռուուզը: Հոդվածը տպվեց թերթի առաջին էջում:

Անցյալում խմբագիրների մեծ մասը կնախընտրեր Ռուուզի չոր լուրի լիդը: Սակայն Ուիփլի ուզածը լրատվական հոդվածն էր:

Լրատվական հոդվածը շեշտում է մարդկային հետաքրքրության տարրը եւ դրաման: Դրամատիկ մեջբերումը եւ խոսուն միջադեպը ցույց են տալիս գլխավոր թեման: Ընթերցողին գրավելու համար լրատվական հոդվածում կարելի է օգտագործել հաջորդող լիդը, իսկ այնուհետեւ, մի քանի պարբերություն հետո, անցնել նյութի ասելիքին կամ էլ լիդի թեման կարելի է դնել վերջում՝ որպես խթան:

Ռուուզի հոդվածը ընթերցողին միանգամից տանում է պատահարի վայրը: Մեզ համար տեսանելի է դառնում մուգ վերարկուով բարձրահասակ մարդը՝ գրկին մի փոքրիկ մարմին: Երկրորդ պարբերությունը ընթերցողին շշմեցնում է հակիրճ մեջբերումով:

Պատմելու այս ձեւը ավելի լավ է արտացոլում պատահարի դառնությունը, քան դա կաներ ուղղակի լիդով չոր լուրը, ինչպիսին ներկայացվում է ստորեւ՝

Մի 4-ամյա երեխա զոհվել է եւ ընտանիքի երկու այլ անդամներ տեղափոխվել են հիվանդանոց, երբ նրանց տանը՝ Լորենս պողոտա, 2346 հասցեով, այս առավոտ հրդեհ է բռնկվել:

Ուղղակի լիդը բավարար է, բայց այս դեպքի ասելիքը երեխայի մահվան ողբերգությունն է: Ինչո՞ւ ընթերցողին դա ցույց չտալ եւ չթողնել, որ ընթերցողը կիսի վիշտը: Տպագրված հոդվածի լիդը ծառայում է այդ նպատակին:

Լրատվական հոդվածը կառուցվում է դեպքերի, օրինակների, պատահարների եւ մեջբերումների շուրջը: Մարդկային հետաքրքրության գործոնը գլխավորն է լրատվական հոդվածում, ինչպես նաեւ հոդվածում:

Կամավորները մեռնողների մոտ: Հյուսիսային Քարոլինա նահանգի Ռալի քաղաքի «Նյուս Էնդ Օբզըրվըր»-ի թղթակից Ռիք Սլադերը իր պատմությունը Հոսփիսի մասին կառուցել էր մարդկանց շուրջը: Հոսփիսը մի կազմակերպություն է, որը ծառայում է մահացող մարդկանց եւ նրանց ընտանիքների կարիքներին:

Պատմությունը սկիզբ է առնում Ուեյք կոմսության Հոսփիսի տարածած մամլո հաղորդագրությունից: «Իմ խմբագրին թվաց, որ սա ուշադրության արժանի կազմակերպություն է, եւ ես պետք է տեսնեմ, թե նրանք ինչ են անում», - պատմում էր Սլադերը: «Կազմակերպության աշխատանքների մասին տեղեկություններ ստանալը իմ գործի հեշտ մասն էր: Կամավորները եւ պաշտոնյաները պատրաստակամ հանդիպեցին ինձ հետ»:

Սլադերի կարծիքով, այս կարգի տեղեկությունները պատմության միայն մի մասն են: Նրան անհրաժեշտ էր մարդկային տարրը: Նյութը պետք է պատկերի մարդկանց, որոնց հետ կամավորներն աշխատում են՝ մեռնողներին: Նա ցանկանում էր ցույց տալ, թե ինչպես է հոսփիսն աշխատում, ոչ թե պատմել՝ հիմնվելով պաշտոնյաների ասածների վրա:

«Սա ստիպեց, որ պաշտոնյաները մի պահ վարանեն», - պատմում էր լրագրողը: «Նրանց անհանգստությունը հասկանալի էր: Նման իրավիճակներում հարաբերությունները գաղտնի են»: Ի վերջո, նրանք համաձայնվեցին կապվել որոշ ընտանիքների հետ՝ պարզելու արդյոք Սլադերը կարո՞ղ է նրանց հետ հանդիպել:

«Մեկ, թե երկու օր անց ինձ տվեցին Սիլվերների եւ Վոլքերների անունները: Ահա այս պարագայում ես ինձ մի քիչ անհարմար էի զգում: Ես զանգահարում էի այդ մարդկանց՝ հարցնելու, արդյոք նրանք ինձ՝ օտարիս հետ, կխոսե՞ն իրենց մերձավորների մահվան մասին»:

Սլադերը սովորեց մի բան, որ շատ երիտասարդ թղթակիցներ տարօրինակ են համարում: Չնայած իրենց բաժին հասած ողբերգություններին, որոշ մարդիկ պատրաստակամությամբ զրուցում են լրագրողների հետ, եթե համոզված են, որ լրագրողներն անկեղծ են եւ նրանց նպատակն օգնելն է:

Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Սլադերը կառուցել նյութի սկիզբը: Նա օգտագործել է մեջբերումներով օրինակ՝ իր ասելիքը ցույց տալու համար: Այն, որ իրենց գործին նվիրված կամավորները թեթեւացնում են մահացողների ցավերը:

Երեքամյա Բեթանի Ուոլքերը հիվանդ էր եւ չէր ուզում, որ իրեն այցելեին: Երբ հայտնվեց Էլիզաբեթ Հերնանդեսը, նա այդպես էլ ասաց.

«Հարմար կլինի՞, որ ես քեզ այցելության գամ», - հարցրեց տիկին Հերնանդեսը:

«Ոչ, - պատասխանեց Բեթանին: - Ես ձեզ դուրս կշպրտեմ»:

«Միեւնույն է, կգամ»:

«Ես ձեզ նորից դուրս կշպրտեմ»:

Տիկին Հերնանդեսը անվարան շարունակում էր գալ՝ նորից ու նորից: Օրերն անցնում էին, եւ Բեթանիի հուզմունքը փոխվում էր համբերության: Սկսվեց ընկերությունը եւ, ի վերջո, իհարկե սերը:

Մի օր նրանք միասին էին, եւ Բեթանին իրեն սովորականից վատ էր զգում: Նրանք քիչ էին խոսում: Երբ տիկին Հերնանդեսը թեքվեց, որ նրան հանբուրի, Բեթանին, մանկական անկեղծությամբ, շշնջաց. «Ես ընդմիշտ քո ընկերը կլինեմ»:

Պայմանագիրը վավերացվեց կնիքով: Եվ չնայած Բեթանին մի քանի շաբաթ անց մահացավ լեյկեմիայից, այն դեռ ուժի մեջ է: Նրանք, ում սիրում են, չեն մոռացվում:

Բեթանիի ծնողները՝ Ռալիի բնակիչներ Ռոբերթ եւ Դարլին Վոլքերները, համոզված են, որ այդ ընկերությունը ջերմացրել է իրենց դստեր կյանքի վերջին օրերը, իսկ տիկին Հերնանդեսն ասում է, որ ինքը, Բեթանիին ճանաչելով, հոգեպես ավելի է հարստացել:

Այս զգացմունքը կիսում են Ուեյք կոմսության Հոսփիսի կամավորները, մի կազմակերպության, որը կոչված է հոգալու մահացողների եւ նրանց ընտանիքների ֆիզիկական եւ էմոցիոնալ կարիքները:

Սակայն դժվար է Հոսփիսի մասին խոսել որպես մի կազմակերպության, որն ունի բյուջե, բլանկներ եւ հիմնադիր փաստաթղթեր: Հոսփիսը մարդիկ են, ցավող մարդիկ, ովքեր, հանդիպելով մահվան պահերին, տոն են դարձնում կյանքի յուրաքանչյուր վայրկյանը, ընդունում են մահը, ինչպիսին որ կա՝ հրաժարվելով երեսները շուռ տալուց: Դա, առանց վարանելու կարելի է ասել, մարդկանց փոխադարձ կապվածության ամենաբարձր դրսեւորումներից է:

Ուեյք կոմսության Հոսփիսը սկսել է հաճախորդներ ընդունել ապրիլից: Մինչեւ այսօր այն ծառայություններ է մատուցել վեց ընտանիքների: Նրանցից հինգում մահացածներ կան:

Բժշկական հարցերի տնօրեն բժիշկ Ուիլյամ Ռ. Բերին ասում է, որ իրենց առաքելությունը պարզ է: «Մենք բժշկական խնամք եք ապահովում հիվանդության վերջին աստիճանում գտնվող հիվանդների համար տնային պայմաններում,- պատմում է նա: Մենք օգնում ենք հիվանդներին եւ նրանց ընտանիքներին՝ հնարավոր ամեն ձեւով հոգալով նրանց կարիքները»:

Առաջին ինը պարբերություններում Սլադերը ցույց է տալիս, թե ինչպես է աշխատում Հոսփիսը, չնայած ոչ մի անգամ չի օգտագործում այդ բառը: Նա մինչեւ 10-րդ պարբերությունը չի ներկայացնում Հոսփիսը, այդ եւ հաջորդ երեք պարբերություններում են լիդը եւ նախապատմությունը: Կասկած չկա, որ սա հոդվածը սկսելու տպավորիչ ձեւ է:

Հակառակ չոր լուրի, որն ավարտվում է, երբ վերջանում է երկրորդական նյութը, հոդվածի վերջը պետք է ընթերցողին կամ ունկնդրին թողնի նյութի ասելիքի տպավորության տակ: Սլադերը դա անում է միջադեպերի վառ համադրությունների եւ այն ընտանիքներից մեջբերումների օգնությամբ, որտեղ մահվան դեպքեր են եղել: Ահա նրա հոդվածի ավարտը՝

Բեթանին մահանալուց մի քիչ առաջ դարձավ չորս տարեկան: Ծննդյան օրվա տոնակատարությունն այնպիսին էր, որ նրա փոքրիկ ընկերները դեռ խոսում են այդ մասին: Եկել էին քեռի Փոլը հեռուստատեսությունից եւ Գափի ծաղրածուն: Այնտեղ էին նաեւ Հոսփիսի շատ աշխատողներ, որոնք օգնել էին այն նախապատրաստել:

Ջեյմս Սիլվերը եւս տոնել էր իր ծնունդը ուրբաթ օրը, իսկ երկուշաբթի նա մահացավ: Նա ամեն ինչ ծրագրել էր եւ հրահանգներ էր թողել, որ անպայման պետք է նշեն, եթե ինքը նույնիսկ չկարողանա մասնակցել: «Նա ուզում էր, որ իր ընկերները, նրանք, ովքեր այնքան բան էին արել իր համար, լավ ժամանակ անցկացնեն», - ասում է տիկին Սիլվերը: Եկել էին Հոսփիսի աշխատակիցները:

Նրանք եկել էին նաեւ երկու թաղումներին: Նրանք դեռ գալիս են, պատմում են ընտանիքները, զանգահարում են, այցելում իրենց, հաց են կիսում եւ՝ հիշողություններ ու ապագայի հույսեր:

«Երբեմն մոռանում ես, թե մարդիկ որքան լավը կարող են լինել,- ասում է տիկին Սիլվերը, - բայց համոզված եմ, որ այնպես է, ինչպես Ջեյմսն էր միշտ ասում: Նշանակություն չունի, թե ինչքան ես ապրել երկրի երեսին, այլ, թե ինչ ես արել այստեղ եղած ժամանակ»:

Ինչպես կառուցել հոդվածը եւ լրատվական հոդվածը

Հոդվածի եւ լրատվական հոդվածի կառուցվածքը կախված է այն բանից, թե լրագրողն ուզում է միանգամից անցնել ասելիքի՞ն, թե՞ ընթերցողին պահել անհայտության մեջ: Երբեմն լիդը սկզբում է լինում՝ առաջին կամ երկրորդ պարբերության մեջ: Սա առաջին տարբերակն է: Հաճախ լիդը գալիս է ներածական հատվածից հետո, ինչպես Հոսփիսի մասին Սլադերի նյութում (երկրորդ տարբերակ) կամ կարելի է դնել վերջում (երրորդ տարբերակ):

Այս տարբերակները ներկայացված են 5.3 գծագրում:

Գծագիր 5.3.

Առաջին տարբերակ	Երկրորդ տարբերակ	Երրորդ տարբերակ
Լիդը առաջին կամ երկրորդ պարբերության մեջ է:	Միջադեպեր, օրինակներ, մեջբերումներ մի քանի պարբերություններում: Պետք է վերաբերեն լիդին:	Միջադեպեր, օրինակներ, մեջբերումներ ամբողջ նյութի մեջ՝ մինչեւ վերջ: Պետք է հիմնավորեն լիդը: Խթանում:
Միջադեպեր, մեջբերումներ եւ օրինակներ մինչեւ վերջ: Պետք է հիմնավորեն լիդը:	Լիդ	
	Լրացուցիչ միջադեպեր, օրինակներ, մեջբերումներ:	
Ավարտ - լիդի մասին հիշեցում՝ ամփոփման կամ օրինակի, միջադեպի, մեջբերման միջոցով:	Ավարտ - լիդի մասին հիշեցում՝ ամփոփման կամ օրինակի, միջադեպի, մեջբերման միջոցով:	Ավարտ - լիդը խթանի մեջ:

Երեք ճանապարհ դեպի միեւնույն ավարտը

Նորությունների թողարկումը, նվիրված սոյայից հիմնական ճաշատեսակների պատրաստմանը, կսկսվի որեւէ ճաշատեսակով (առաջին տարբերակ): Հոդվածը, նվիրված FFA-ի պատանիների մրցումներին, որին առաջին անգամ մասնակցողը շահել է լավագույն խաղացողի մրցանակը, կսկսվի վերջինիս հպարտ ժպիտով, երբ նա երկնագույն ժապավենը մեկնում է իր ծնողներին, իսկ հետո կպատմի ընթերցողներին մրցանակի առիթների մասին (երկրորդ տարբերակ): Հոդվածը, նվիրված հիանալի կահույք պատրաստող ատաղձագործին, որի արտադրանքը վաճառվում է ամենաթանկ խանութներում, կնկարագրի նրան աշխատելիս: Երրորդ պարբերության մեջ ընթերցողները կիմանան, որ Ֆրենք Լոպեսը կույր է (երրորդ տարբերակ):

Զգուշացում: Որոշ հոդվածագիրներ կարծում են, որ կարող են ընտրել որեւէ հուզիչ պատահար, որեւէ հետաքրքիր միջադեպ կամ ցնցող մեջբերում եւ այն օգտագործել պատմության սկզբում: Այդ-

պես չի արվում: Սկզբի համար ընտրված նյութը պետք է տանի ուղղակի դեպի գլխավոր թեման: Տեսեք, թե ինչպես է սկսվում նյութը «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ում՝

1940 թվականն էր, երբ Էլմեր Նովակը ավարտեց դպրոցի երկրորդ դասարանը եւ իջավ քարածխի հանքահորը, ճիշտ ինչպես իր եղբայրներն իրենից առաջ եւ հայրը նրանցից առաջ:

Միանագամից ընթերցողի առջեւ հառնում է այդ մարդու միօրինակ կյանքի պատկերը: Թղթակիցը շարունակում է այսպիսի տեղեկատվությամբ. «Նովակն ունի մի գրավաթուղթ, 10 երեխա եւ սեւ թոքեր»: Ներկայից թղթակիցը դառնում է անցյալին. «Մի անգամ՝ 1947-ին, նա թողել է հանքերը, այն բանից հետո, երբ եղբայրը մահացու ճզմվել է ածուխ տեղափոխող վագոնի տակ, բայց մի քանի ամիս անց վերադարձել է՝ հանուն փողի»:

Այս հոդվածը մեկն է ֆիզիկապես ծանր եւ մտավոր ընդարմացնող աշխատանքներին նվիրված շարքից: Հոդվածագիրը Նովակի օրինակով ցույց է տվել ածխահատների կյանքը:

Ամփոփում

Այս գլխում ուսունասիրված շարադրանքի տեսակներն իրենց կառուցվածքը ստանում են՝ ելնելով նկարագրվող դեպքի բնույթից: Եթե հոդվածագրի կարծիքով դեպքը կարեւոր ներգործություն կունենա ընթերցողների վրա, նա կընտրի չոր լուրի ձեւով շարադրանքը եւ նյութը կսկսի՝ որոշիչ տարրը առաջին պարբերության մեջ ներկայացնելով:

Եթե կարիք չկա դեպքը հաղորդել անհապաղ, սակայն այն պարունակում է ուշադրության արժանի տարր, կարելի է մտածել լրատվական հոդվածի ձեւն ընտրելու մասին: Եվ եթե լրագրողի միակ նպատակը զբաղեցնելն է, նա հոդված կգրի: Ե՛վ լրատվական հոդվածում , եւ՛ սովորական հոդվածում որոշիչ տարրը կարելի է դնել նյութի ցանկացած մասում:

Այժմ, երբ մենք ուսումնասիրեցինք պատմություն գրելու հիմնական տարրերը, պատրաստ ենք մի աստիճանով վեր շարժվել՝ նյութը դարձնել ներդաշնակ: Հաջորդ գլխում մենք կտեսնենք, թե ինչպես են արհեստավարժ լրագրողները ստիպում, որ բառերը ծառայեն իրենց:

«Գրողը, - ենթադրաբար ասել է Սեմյուել Ջոնսոնը,- այն մարդն է, որի համար գրելն ավելի դժվար է, քան այլ մարդկանց համար»:

Գլուխ 6
Ինչպես ներդաշնակ դարձնել նյութը

Մուտք

Լավ գրված լինելը օգնում է լավ ընթերցանությանը: Դուք կարող եք գրված նյութը դարձնել ընթերցանության համար հետաքրքիր ու հեշտ՝ կարճ նախադասությունների ու պարբերությունների մեջ օգտագործելով առօրյա բառեր եւ ընդգրկելով մեջբերումներ ու երկխոսություններ, միջադեպեր ու պատահարներ:

Հոդվածագիրներն իրենց նյութին կյանք ու համոզչականություն են տալիս տեղեկատվության միջոցով, որը ցույց է տալիս դեպքի մարդկային չափումը: Յուրաքանչյուր հոդվածի համար ընտրում են գրելու ոճ, որն արտացոլում է դեպքի բնույթը:

Լավ գրելը կախված է ուշադիր ու ճշգրիտ դիտարկումներից: Ոչ մի պատմություն չի կարող ավելի լավը լինել, քան նրա հիմքում ընկած տեղեկությունը:

Լավ գրելու բաղադրամասերը

Երբ Ջիմ Բիշոփը երիտասարդ թղթակից էր եւ պայքարում էր Նյու Յորքի բուլվարային լրագրության թոհուբոհի մեջ համբավ ստեղծելու համար, մի հայտնի սյունակագիր նրան մի կողմ տարավ ու խորհուրդ տվեց:

«Եթե ուզում եք գրել, - ասաց նրան Մարք Հելինգերը, - դուք պետք է սովորեք գրել կարճ բառերից կազմված հակիրճ նախադասություններ»:

Բիշոփը հետեւեց այդ խորհրդին եւ կիրառեց այն իր բոլոր գրվածքներում: Նա դարձավ հաջողակ թղթակից, այնուհետեւ սինդիկատային սյունակագիր, այնպիսի գրքերի հեղինակ, ինչպիսիք են «Լինքոլնի մահվան օրը» եւ «Մի օր նախագահ Քեննեդիի կյանքից»: Իր պատմություններում, սյունակներում եւ գրքերում Բիշոփն օգտագործում էր կարճ նախադասություններ եւ առօրյա լեզու:

Բիշոփը գիտեր, թե որոնք են լավ գրելու բաղադրամասերը: Դրանք են՝

1. Պարզ նախադասություններ: Գրողները հետեւում են ռուս մեծ գրող Իսահակ Բաբելի խորհրդին. «Մեկ նախադասության մեջ չպետք է լինի մեկ գաղափարից եւ մեկ պատկերից ավելի»:

2. Պարզ բառեր: Լրատվամիջոցների համար գրողները հասնում են իրենց ընթերցողներին՝ ամենօրյա խոսակցական լեզուն օգտագործելով: Ինչքան քիչ լինեն երկար բառերը, այնքան լավ: Երկար կարող է լինել տասից առավելագույնը մեկ բառը: Ջորջ Օրուելը այդ միտքը շատ պարզ է արտահայտել. «Երբեք մի օգտագործեք երկար բառ, եթե կարճը հարմար է»:

3. Համոզչականություն: Նյութի ասելիքը պետք է փաստաթղթերով այնքան լավ հիմնավորված լինի, որ ընթերցողը կամ ունկնդիրը համոզվի, որ լրագրողը դեպքը ներկայացրել է ճշգրտորեն ու ամբողջությամբ:

4. Բնական ոճ: Դեպքի մասին պատմելու ձեւը պետք է դեպքին համապատասխան լինի: Դեպքը եւ նրա նկարագրությունը պետք է սերտ նմանություն ունենան, հարմար լինեն միմյանց:

Գրողներն իրենց «հրամանատարության տակ» ունեն գրելու տեխնիկայի ամբողջ «մարտկարգեր», որոնք կարող են գործի դնել՝ ընթերցողներին շլացնելու համար: Առաջինը հենց լեզուն է եւ բառերի զարմանահրաշ հարուստ, գունագեղ եւ թրթռուն շարքերը: Երկրորդը՝ գեղարվեստական ստեղծագործության տեխնիկան է, երկխոսությունների ու քննական դիտարկումների միջոցով մարդկանց բնաթուգրումը, որոնք յուրացրել են լրագրողները:

Երբեմն խելացի ու փայլուն գրելը դառնում է ինքնանպատակ՝ փոխանակ լինելու նպատակին հասնելու միջոց: Նյութի նպատակը ճշմարտությունն ասելն է: Գունագեղ գրվածքը հնարավոր չէ օգտագործել քողարկելու փաստերի ու դիտարկումների անբավարար մակարդակը: Դա չի կարող անտարակուսելի փաստ դարձնել այն, ինչը լոկ ենթադրություն է: Այն չպետք է օգտագործվի լուրջ եւ բարդ երեւույթները տափակ ու պարզունակ դարձնելու համար:

Պարզ նախադասություններ

«Ես հիշում եմ, թե ինչպես էր մի առիթով ինձ հանդիմանում քաղաքային լուրերի խմբագրի տեղակալը. «Հիշո՞ւմ եք ձեր պատրաստած կարճ լուրը այն պատուհան մաքրողի մասին, որն ընկել էր 10-րդ հարկից եւ ջախջախվել: Նա չէր ընկել, նա ՆԵՏՎԵԼ էր: Այնպես գրեք, որ բայերը նշանակություն ունենան»:

Ֆլեթչեր Փ. Մարթին «Չիքագո Սան-Թայմս»

Ռոբերթ Փեքը ռեռայթեր էր, եւ նրա աշխատանքը խրթին նյութերը պարզեցնելն էր: Հիմնական խնդիրներից մեկը երկար նախադասություններն էին, որոնք, նրա կարծիքով, հետեւանք են այն բանի, որ հոդվածագիրներն աշխատում են նախադասության մեջ չափից ավելի տեղեկություններ մտցնել: Փեքը, որը համարվում էր Նյու Յորքի բոլոր ժամանակների լավագույն ռեռայթերներից մեկը, ասում էր, որ ինքը կարող է նախադասությունը կրճատել «մինչեւ մի փոքր ավելին, քան ենթական, ստորագյալը եւ խնդիրը»:

Այդպիսով, ասում էր նա, ստացվում է մի նյութ, որը «նրբագեղ է ու սրընթաց»: Փեքը կտրում-հանում էր բառեր, նախադասություններ ու պարբերություններ: Մնում էին պատմությունները, որոնք լավ են գրված, եւ սկզբից մինչեւ վերջ ընթանում են արագ ու նրբագեղ:

Լրագրողները թղթակցությունների ժամանակ հավաքում են մեծ քանակությամբ տեղեկություններ եւ դժկամությամբ են հրաժարվում որեւէ բան բաց թողնելուց, նույնիսկ եթե դրանց մի մասը կապ էլ չունի իրենց նյութի ասելիքի հետ: Սակայն եթե նյութը մի մարդու մասին է, որը քննարկում է քոլեջն ավարտելու համար մաթեմատիկայի եւ այլ գիտությունների անհրաժեշտությունը, ապա համալսարանական ավանի գեղեցկությունների եւ գարնանային կազդուրիչ եղանակի մասին լրագրողի դիտողությունները գործին չեն վերաբերում, որքան էլ խելացի եւ գովասանական լինեն:

Ռիթմ: Մենք ասում ենք, որ կարճ նախադասություններն օգնում են պարզության հասնելուն: Բայց 10 եւ 15-բառանի նախադասությունների երթը նույնքան նյարդայնացնող կլինի, որքան երկու նոտա դայլալող կիվիվի երգը, որը լսվում է ամբողջ երեկո: Մենք նկատի ունենք, որ գրողը պետք է հաստատի նախադասությունների ռիթմ՝ երկար նախադասություն, ապա կարճ, շատ կարճ եւ մի քիչ ավելի երկար: Ընդհանրապես նախադասության միջին երկարությունը պետք է լինի կարճի կողմը, 20 բառից պակաս. 15-ի մոտ: (Այս պարբերության մեջ նախադասությունների միջին երկարությունը 12-ից 13 բառ է:)

UPI-ի լավագույն թղթակիցներից մեկին՝ Ֆրեդերիք Ց. Օթմանին խնդրել են իր գործընկերներին խորհուրդներ տալ գրելու արվեստին տիրապետելու մասին: Նա ասել է. «Ես չեմ կրկնի նախադասությունները պարզ կառուցելու մասին զգուշացումները, բայց կպնդեմ, որ դուք հաշվեք բառերը: Եթե դուք ունեք երկար նախադասություն, հաջորդը կարճ կազմեք: Սրա նման. «Գաղափարը

բազմազանություն մտցնելն է, բայց եթե ձեզ մոտ մեկ նախադասությանը միջինը 25-ից ավելի բառ է ընկնում, ընթերցողը կլքի ձեզ: Դա ապացուցված է գիտական եղանակներով»:

Նայենք «Վաշինգթոն Փոսթ»-ում տպագրված հոդվածի առաջին երեք նախադասությունները.

Նրանք հայտնվեցին մթության մեջ՝ 1978 թվականի դեկտեմբերի 11-ի լուսաբացից առաջ: Նրանք վեց կամ յոթ հոգի էին, գլխներին դահուկորդների դիմակներ, ձեռքներին ավտոմատներ եւ գիտեին, թե այդ առավոտ ինչ պետք է լիներ «Լյուֆթհանզա»-ի բեռնային թերմինալում:

Միլիոններ:

Նախադասությունների երկարությունը 10, 23 եւ 1 է: Երեք նախադասության մեջ 34 բառ է, միջին երկարությունը ստացվում է 11 բառ: Նույնքան կարեւոր է, որ կա հավասարակշռություն՝ կարճ, երկար, շատ կարճ:

Դյուրընթեռնելիություն: Այս ցուցակը տրվում է հեռագրական գործակալությունների թղթակիցներին:

Նախադասության միջին երկարությունը	*Ընթեռնելիություն*
8 կամ պակաս բառ	Շատ հեշտ է կարդալ
11 բառ	Հեշտ է կարդալ
14 բառ	Բավականին հեշտ է կարդալ
17 բառ	Սովորական
21 բառ	Բավականին դժվար է կարդալ
25 բառ	Դժվար է կարդալ
29 եւ ավելի բառ	Շատ դժվար է կարդալ

Եթե նախադասությունները երկար են, անախորժություններից խուսափելու համար հիշեք անգլիացի գրող Ջորջ Օրուելի խորհուրդը. «Եթե հնարավոր է մի բառ կրճատել, անպայման կրճատեք»: Զգուշացեք «եւ» ու «բայց» բառերից: Երբեմն այդ բառերը երկրորդ միտք են ներմուծում: «Եվ»-ից ու «բայց»-ից առաջ փորձեք վերջակետ դնել:

Պարբերությունները երկար չպետք է լինեն: Երկար պարբերությունը կարող է հոգնեցնել ընթերցողին: Նյութի բառերի թիվը բաժանելով պարբերությունների թվին, կստանանք պարբերու-

թյան միջին երկարությունը: Որոշ խմբագիրներ նախընտրում են, որ պարբերության մեջ 50-70 բառից ավելի չլինի: Պարբերությունները կարճ պահելու մի եղանակ է այն երեք-չորս նախադասությամբ սահմանափակելը:

Նյութի դյուրընթեռնելիությունը ստուգելու համար փորձեք օգտագործել Ֆոգի գործակիցը: Վերցրեք նյութի նախադասություններ բառերի միջին թիվը: Գումարեք երեք եւ ավելի վանկ ունեցող բառերի միջին թիվը: Ապա ընդհանուրը բազմապատկեք 0,4-ով: Այս պարբերության Ֆոգի գործակիցը 5,2, որը նշանակում է, որ այն կհասկանա հինգերորդ դասարանի աշակերտը:

Պարզ բառեր

Բանաստեղծ եւ Լինքոլնի կենսագիր Կարլ Սենդբերգը 75 տարեկան հասակում ասել է. «Ես դեռ ուսումնասիրում եմ բայերը եւ այն գաղտնիքը, թե ինչպես են նրանք իրար միացնում գոյականները: Ես ածականներին ավելի մեծ կասկածանքով եմ վերաբերվում, քան իմ ողջ կյանքի ընթացքում մի այլ ժամանակ»: Մենք կարող ենք մի կասկածյալ եւս ավելացնել՝ մակբայները:

Ածականներն ու մակբայները անհաջողակ գրողի հենակներն են, գրողի, որը չի կարողանում գտնել կոնկրետ գոյականներ ու բայեր, որոնք կենդանացնում եւ առաջ են մղում պատմությունը: Ածականներն ու մակբայները հենափայտեր են, որոնք կանգուն են պահում քանդվող գոյականներն ու բայերը: Նրանք խոչընդոտում են պատմության ընթացքը:

Նայեք այս նախադասությանը՝

Շտապող մարդը շտապ կերավ իր նախաճաշը, արագ խմեց իր հյութը, շտապ շարժումով վերցրեց իր բաճկոնը եւ արագ դուրս եկավ:

Այժմ եկեք օգտագործենք կոնկրետ գոյականներ ու բայեր, որպեսզի ազատվենք ածականներից ու մակբայներից՝

Իրավաբանը խժռեց իր սենդվիչը, կուլ տվեց կոկան, ճանկեց բաճկոնը եւ դռնից դուրս նետվեց:

Մի րոպե: Մենք որտեղի՞ց գիտենք, որ նա իրավաբան է, որ նա սենդվիչ է ուտում եւ կոկա է խմում: Մենք գիտենք, որովհետեւ մենք հարցրել ենք եւ դիտել: Մենք հետեւում ենք այս կանոնին՝ լավ տեղեկությունը նախորդում է լավ հոդվածին:

Համոզչականություն

Երբ «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ի թղթակից Ջոան Է. Ռիգդոնը ուզում էր նկարագրել քոլեջի աճող վարձի հետեւանքները, նա ուներ բազմապիսի համոզիչ տվյալներ:

Համարյա 5 միլիոն ուսանող պարտքով է սովորում, եւ նրանց պարտքը հասնում է 12,5 միլիարդ դոլարի:

Նա հայտնաբերել է, որ այդ պատճառով որոշ ուսանողներ փոխում են աշխատանքի հետ կապված իրենց ծրագրերը, որպեսզի կարողանան վճարել իրենց պարտքերը: Իր տվյալներին դրամատիզմ հաղորդելու համար, նա ընտրում է մի ուսանողի, որը մարմնավորում է այդ իրավիճակը: Լայամ Ս.Ֆլոյդը ծրագրում էր Բոսթոնի քոլեջի իրավաբանական դպրոցն ավարտելուց հետո աշխատել օկրուգային հավատարմատարի գրասենյակում:

«Այժմ,- գրում է Ռիգդոնը,- նա աշխատանք է փնտրում սնանկացման հարցերով զբաղվող ընկերություններում: Պատճառը, ըստ նրա, բացառապես ֆինանսական է: Ավարտելուց հետո ունենալով 51 000 դոլար կրթական վճարների պարտք՝ 28-ամյա պարոն Ֆլոյդի հաշվարկով իրեն ավելի եկամտաբեր աշխատանք է հարկավոր, որպեսզի կարողանա մուծել 550 դոլար կազմող ամսավճարները»:

Ֆլոյդի մասին ներդիրի օգտագործումը ոչ միայն նյութը դարձնում է համոզիչ, այլեւ վիճակագրությանը եւ փաստերին նվիրված նյութի մեջ մարդկային հետաքրքրության տարրի ներմուծումով այն դարձնում է ավելի հետաքրքրական:

Մեջբերումների գործածություն: Մեջբերումները համոզիչ են: Թերթերի եւ հեռուստատեսության համար գրող Մերվին Բլոքին հանձարարվել էր ամսագրի համար նյութ գրել՝ «Դեյլի Նյուս»-ի եւ «Նյու Յորք Փոսթ»-ի միջեւ ծագած լրագրային պատերազմի մասին:

Նա մեջբերում է անում «Փոսթ»-ի մայրաքաղաքային լուրերի խմբագրից՝

«Ի՞նչ մրցակցություն»,- Ճայթում է «Փոսթ»-ի մայրաքաղաքային լուրերի խմբագիր Սթիվ Դանլեւին: - Եթե դա պատերազմ է, ապա կոտորած է, սա է «Փոսթ»-ի կարծիքը: Նրանց ամեն մի կորստից, մենք երկու շահում ենք ունենում ... Մենք այնքան վստահ ենք, որ խրամատներում ման ենք գալիս առանց սաղավարտների»:

Մենք պատկերացնում ենք գունագեղ, ինքնավստահ, հանդուգն խմբագրին:

Սթադս Թերքելը հարցազրույց էր ունենում հեռախոսային միջնորդի հետ: Էնիդ Դյու Բույայի աշխատանքը մարդկանց զանգահարելն էր ու համոզելը, որ բաժանորդագրվեն Չիքագոյի թերթերից մեկին: Նա զրուցում է Թերքելի հետ:

Սկզբում ինձ դուր էր գալիս մարդկանց հետ զրուցելու միտքը: Սակայն շատ շուտով, ճանաչելով այն շրջանը, ուր ես զանգում էի (նրանք չէին կարող իրենց թույլ տալ ուտելիք գնել, ուր մնաց լրագիր) իմ աշխատանքը սկսեց ինձ նյարդայնացնել: Նրանք ասում են. «Օրիորդ, ես պետք է ինն հոգու կերակրեմ, թե չէ կօգնեի ձեզ»: Ի՞նչ կարող եմ ես ասել: Մի կին, որին ես զանգահարել էի վաղ առավոտյան, հենց նոր էր հիվանդանոցից դուրս եկել: Նա անկողնուց վեր էր կացել եւ մոտեցել հեռախոսին:

Նրանք ինձ պատմում են իրենց հոգսերի մասին: Ոմանք կարդալ չգիտեն, աստված վկա: Նրանք այնքան կրթություն չեն ստացել, որ թերթ կարդան: Գիտե՞ք, թե ես ինչ եմ ասում. «Իսկ եթե կարդաք միայն հումորի էջը՞...», «Եթե դուք երեխաներ ունեք, նրանք պետք է սովորեն թերթ կարդալ»: Ես ամաչում եմ, երբ հիշում եմ այդ:

Միջին խավի մարդիկ այնքան զբաղված են, որ խոսելու ժամանակ չունեն: Բայց աղքատ շրջաններում մարդիկ իսկապես ուզում են օգնել բարեգործությանը, որի մասին ես խոսում էի: Նրանք ասում են, որ ես այնքան հաճելի ձայն ունեմ, որ իրենք միեւնույն է կգրվեն: Շատերն այնքան երջանիկ են, որ ինչ-որ մեկն իրենց զանգ է տվել: Նրանք պատրաստ են ամբողջ օրը զրուցել ինձ հետ: Ինձ պատմում են իրենց բոլոր խնդիրների մասին, եւ ես էլ լսում եմ:

Նրանք այնքան են ոգեւորվում, որ ինչ-որ բարի մեկը խոսում է իրենց հետ, որ մեկը պարզապես մի քանի րոպե լսում է, թե ինչ է կատարվել իրենց հետ: Ինչ-որ ձեւով հետաքրքրվում է իրենցով: Ինձ համար միեւնույն է, որ նրանք չեն բաժանորդագրվում: Միեւնույն է, ես լսում եմ: Ես կյանքի շատ պատմություններ եմ լսել հեռախոսով: Ինձ համար միեւնույն է, թե ղեկավարությունը լսում է այս զրույցները:

Այս մեջբերումներով այնքան բան է բացահայտվում: Դյու Բուայի կարեկցանքը, նրա դժգոհությունը աշխատանքից, չունեւորների վեհանձնությունը, մարդկանց սարսափելի միայնությունը եւ մոռացված լինելը: Եվ այս ամբողջն ընդամենը չորս պարբերությամբ:

Թերքելը հարցազրույցների վարպետ է: Նրա ձայնագրած հարցազրույցներից շատերը մտել են գրքերի մեջ: Նրա հարցազրույցները աշխատավոր մարդկանց հետ ներկայացված են «Աշխատավոր մարդիկ: Մարդիկ պատմում են, թե ինչ են անում ամբողջ օրը եւ ինչի մասին են մտածում այդ ժամանակ» գրքում (Նյու Յորք, Փանթեոն Բուքս, 1972): «Լավ պատերազմը: Երկրորդ համաշխարհային պատերազմի բանավոր պատմությունը» (Նյու Յորք, Փանթեոն Բուքս,1984) գրքում պատմում են զինվորները:

Թղթակիցը նշանակում էր ստացել Կենտրոնական Ամերիկայի մի երկրում, որը ղեկավարել էր դիկտատորների երեք սերունդ, եւ նա ցանկանում էր պարզել, թե մարդիկ ինչ են մտածում երկրի ներկա ղեկավարի մասին: Նախագահի պապը անգութի համբավ է ունեցել: Թշնամիներին տանջելու նրա սիրած ձեւերից մեկը եղել է նրանց ջրհորի մեջ գլխիվայր իջեցնելը: Ենթադրվում էր, որ թոռը լուսավորյալ է:

Թղթակիցը մեկնեց գյուղական վայրեր՝ պարզելու, թե ինչ են մտածում գյուղացիները: Հարցազրույցներից մեկի ժամանակ նա հարց տվեց ագարակի մի ծեր բանվորի, արդյոք տարբերություն կա՞ երեք նախագահների միջեւ: Բանվորը պատասխանեց իսպաներեն: Թղթակիցը այն դրեց իր նյութի մեջ՝ անգլերեն թարգմանության հետ միասին. «Մի ծառը չի կարող տալ երեք տեսակի պտուղ»:

Հակառակ նախագահի՝ խնամքով մշակված եւ թանկ արժեցող հասարակության հետ կապերի ապարատին, որ գործում էր Միացյալ Նահանգներում եւ որին հրահանգված էր նրան ներկայացնել որպես ժողովրդավար, ագարակի բանվորի անպաճույճ խոսքն ավելի մեծ կշիռ ունի, քան մամուլի համար նախագահական հաղորդագրությունները:

Լավ գրելու մի քանի խորհուրդներ

1. Լիդը պետք է լինի գրավիչ, պարզ եւ հասարակ:

2. Օգտագործեք մեջբերումներ, երբ նրանք ավելի արտահայտիչ են, քան վերաշարադրանքը: Լավ մեջբերումները դրեք նյութի սկզբում:

3. Օգտագործեք օրինակներ, դիպվածներ, մանրամասնություններ, երբ նրանք օգնում են հաղորդելու նյութի ասելիքը: Ցույց տվեք, մի պատմեք:

4. Պատումին շարժում հաղորդեք՝ անցումների միջոցով պարբերություններն իրար կապակցելով, օգտագործելով կարճ բառեր եւ փոփոխելով նախադասությունների ռիթմը:

5. Լավ նյութը կառուցվում է հիմնավոր տեղեկության հիմքի վրա: Գնացեք դեպքի վայրը, անձամբ զրուցեք աղբյուրի հետ:

6. Սկսեք գրել միայն այն ժամանակ, երբ գիտեք, թե ինչ եք ուզում ասել: Եթե ժամանակ ունեք, ուրվագիծ գրեք, որը կազմված լինի միայն մի քանի որոշիչ բառերից, որոնք հիշեցնեն ձեզ նյութի կառուցվածքի մասին:

Մեջբերումների հետ աշխատելը կարող է արվեստ լինել, գիտենալու արվեստ, թե երբ օգտագործել ուղղակի մեջբերում եւ երբ վերաշարադրանք: Մարդու ամեն մի ասածը չպետք է ուղղակի մեջբերվի: Ուղղակի մեջբերում օգտագործեք, երբ

☐ Կարեւոր է ասածն արձանագրելը:

☐ Մեջբերումն ամփոփում է ասելիքը:

☐ Մեջբերումը թույլ է տալիս, որ ընթերցողը կամ ունկնդիրը պատկերացնի դեպքը կամ անձին:

☐ Մեջբերումներն էական նշանակություն ունեն հարցերի ու պատասխանների ձեւով կառուցված նյութերում, ինչպիսիք են ժողովների, դատավարությունների եւ առերեսումների մասին նյութերը:

Ցուցադրելն ընդդեմ պատմելու: Երբ «Սենթ Փիթըրսբերգ Թայմս»-ի թղթակից Ջեֆ Քլինքենբերգը հարցազրույց էր վերցնում համաշխարհային ճանաչման արժանացած ձկնորս Ա.Ջ.Մաք Քլեյնից, նա ցանկանում էր, որ ընթերցողներներն իրենք որոշ եզրակացություններ անեն Մաք Քլեյնի մասին: Նա կարող էր ասել, որ Մաք Քլեյնը համաշխարհային համբավ ունի: Փոխա-

րենը, նա այդ ցույց է տալիս ընթերցողներին հետեւյալ միջադեպի օգնությամբ:

Մոդայիկ «Քափրիչիո» ռեստորանում, որտեղ նախաճաշում է ITT-ի խորհրդի նախագահը, մատուցողները պտտվում են Ա. Ջ. Մաք Քլեյնի շուրջը՝ ինչպես լոցմանները շնածկան շուրջը: Մի մատուցող վառում է նրա ծխախոտը, մինչ մյուսը՝ գինի է լցնում: Սեղանապետը, իսկ հետո նաեւ ռեստորանի տերը, կանգ են առնում նրա մոտ՝ հարցնելու արդյոք ճաշը նրա սրտո՞վ է:

Նախ ցույց տվեք, հետո պատմեք

Այդ արտահայտությունը, նա միանգամից որոշեց, պետք է լինի լիդում: Էլեն Փերլմանը հարցազրույց էր անցկացնում «Մեդիքէյդի» Նյու Հեմփշիրի բաժանմունքի տնօրենի հետ՝ նահանգային բյուջեներից «Մեդիքէյդի» համար հատկացվող աճող ծախսերի վերաբերյալ իր հոդվածի համար:

«Եթե հղի մայրերը ստանան նախածննդյան այն խնամքը, որի կարիքն ունեն,- պատմում է տնօրենը,- ապա հետծննդյան խնամքի բաժանմունքներում այդքան շատ չեն լինի ծննդյան ցածր քաշով միլիոն դոլարանոց մանկիկները»: Այդ երեխաների վրա ծախսվում է, ըստ նրա, նահանգի «ՄեդիքԷյդի» համարյա 100 միլիոնանոց ծախսերի զգալի մասը:

«Միլիոն դոլարանոց մանկիկներ»: Արտահայտությունը մեխվում է Փերլմանի հիշողության մեջ:

«Որքան նա խոսում էր,- պատմում է Փերլմանը,- այնքան ես հետաքրքրվում էի մանրամասնություններով, որպեսզի կարողանամ թղթին հաղորդել հիվանդանոցում գտնվող պստլիկ մանկիկի պատկերը, որի խնամքն այդքան թանկ է նստում»: Տնօրենը չասաց երեխայի անունը, միայն սկզբնատառերը, բայց դա բավական էր, որպեսզի այդ բարդ թեման կենդանանար:

Նա պարզեց, որ նահանգում կա մանկիկ Ս.-ի նման եւս 137-ը :

Մանկիկ Ս.-ն շուտով կդառնա մեկ միլիոն դոլարանոց մանկիկ:

Երբ 14 ամիս առաջ նա ծնվեց, երկու ֆունտից պակաս էր կշռում, իսկ պստլիկ մանկիկի բժշկական հսկայական ծախսերը, որոնք նրա վաղաժամ ծնվելու հետեւանք են, մի քանի շաբաթից կանցնեն նրա ծնողների առողջապահական ցմահ ապահովագրության մեկ միլիոնանոց սահմանը:

Այդ ժամկետից սկսած Նյու Հեմփշիրի առողջապահության հասարակական համակարգը կվճարի կլորիկ գումար՝ մոտ 500 000 դոլար միայն հաջորդ տարի, որպեսզի մանկիկ Ս.-ն կենդանի մնա, մինչեւ որ կարողանա ինքնուրույն ապրել:

«Սիթի Էնդ Սթար» ամսագրի լրագրող Փերլմանն ասում է. «Եթե ես պարզապես գրեի «Նյու Հեմփշիր նահանգը XXX դոլար է վճարում 138 ծանր հաշմանդամ մանուկների խնամքի համար»՝ չոր լուրի լիդ, ես հավանաբար կկորցնեի իմ ընթերցողներից շատերին: Ընթերցողին պետք է միանգամից գրավել՝ ընթերցանությունը շարունակելու օգտին համոզիչ փաստարկ բերելով»: Նյութի մեջ ներկայացվում են թվեր, մի քանի աղբյուրների մեջբերումներ եւ տարբեր կարծիքներ, թե ով է պատասխանատու ազգի առողջության համար, ինչը պահանջում է կապվել տասնյակ աղբյուրների հետ: Սակայն փաստաթղթերը ներկայացվում են միայն այն բանից հետո, երբ Փերլմանը թույլ է տալիս, որ ընթերցողը տեսնի մանկիկ Ս.-ին իր ինկուբատորի մեջ:

Մենք կարող էինք հավատալ Քլինքենբերգին, եթե նա մեզ ասեր, թե Մաք Քլեյնը հանրաճանաչ է: Հնարավոր է նաեւ, որ չհավատայինք: Բայց այս հատվածն ընթերցելուց հետո մենք համոզվում ենք դրանում:

Քլինքենբերգի ասելիքն այս նյութում ձկնորսության ժողովրդավարական բնույթն է լինելու: Վտակի, գետի, օվկիանոսի ափին բոլորը հավասար են: Որպես դրա օրինակ Քլինքենբերգը թույլ է տալիս, որ Մաք Քլեյնը մի դեպք պատմի՝

Քլինքենբերգը հինգ ժամ անցկացրեց Մաք Քլեյնի հետ, կարդաց նրա գրառումները եւ զրուցեց նրան ճանաչող մարդկանց

հետ: Արդյունքը՝ նշումներով լի մի նոթատետր էր: Քլինքենբերգը գրեց ինը ժամ եւ նյութը վերախմբագրեց 17 անգամ:

Շնաձկների ձկնորսի մասին իր նյութում Քլինքենբերգը մեզ ցույց է տալիս կամրջից ձկնորսություն անող մարդուն: Նյութն այսպես է սկսվում՝

> Մի անգամ ես ձուկ բռնելու էի գնացել Աֆղանստանի թագավոր Զահիրի հետ, բայց գիտե՞ք, թե ինչն է ամենից շատ տպավորվել: Ես հիշում եմ, թե ինչպես նա իր պայուսակի խորքից մի փոքր լուսանկար հանեց, որտեղ ինքն էր, ձեռքին հինգ ֆունտանոց մի իշխան: Իմ կողքին թագավոր էր եւ միակ բանը, որ նա ուզում էր, իր հպարտության առարկա ձուկը ցույց տալն էր: Հոյակապ էր: Ինչ եմ ուզում ասել: Ձկնորսությունը համընդհանուր գործ է: Երբ մարդիկ ձուկ են որսում, նշանակություն չունի, թե ովքեր են: Նրանք բոլորն էլ նույնն են:

Ընթերցողին Սուինթի հետ դրել են կամրջի վրա, մթության մեջ, երթեւեկության կենտրոնում, նա լսում է, թե ինչպես է Սուինթը հառաչում եւ տեսնում է, թե ինչպես են մեքենաները շառաչելով անցնում իրենց կողքով:

Եթե լրագրողն այդ մասին պատմեր, ապա կստացվեր մի այսպիսի բան՝

> Ռոն Սուինթը մթության մեջ հառաչում էր՝ հիշելով Ծեր Հիտլեր անունով շնաձկան՝ Թամփա ծոցի ամենամեծ շնաձկան մասին, իսկ մեքենաները շառաչյունով սլանում էին ցցված կամրջով: Մեկը մեքենայից ձայն տվեց, եւ Սուինթն ինքնաբերաբար ընկրկեց …

Ռոն Սուիթն ուզում է որսալ Թամփա ծոցի ամենամեծ շնաձկանը՝ Ծեր Հիտլերին, եւ նա ձկնորսության է դուրս եկել ցցված կամրջի վրա, մինչ մեքենաները հռնդոցով սլանում են նրա կողքով:

Սա լիդերից ամենվատը չէ, սակայն այն նսեմանում է Քլինքենբերգի գրածի կողքին:

Ցույց տալը թույլ է տալիս, որ ընթերցողը տեսնի, շոշափի, զգա հոտը եւ նույնիսկ համը:

Վադոնիա կոմսության քաղաքական զբոսախնջույքները սկսվում են չոդերով (եփած ձուկ կամ կակղամորթներ՝ խավարտով- թարգմ.), այնքան թանձր են կակղամորթներով լի մեծ ամանները, որ արգանակը հազիվ է երեւում: Այնուհետեւ բանջարեղենը՝ կանաչ լոբի, բարակ ու երկար, ցուկինի՝ երկայնակի մասերի բաժանած եւ մանր կտրտած եւ, կարող եք ընտրել, տապակած կամ խաշած: Հետո ամանների մեջ դիզած եգիպտացորեն, վրան կարագի մի մեծ կտոր, որը դանդաղորեն հալչում է հատիկների վրա, հետո ճակնդեղ՝ կարմիր եւ հյութեղ, կոնֆետի նման քաղցր ...

Պարզապես պատմելը ընթերցողին զրկում է շոշափելու, հոտը եւ համը զգալու բերկրանքից՝

Վադոնիա կոմսության քաղաքական զբոսախնջույքների ժամանակ ուտելիքն առատ է: Մատուցվում են բանջարեղեն, կակղամորթներով չոդեր եւ մի քանի տեսակի միս:

Այսպես կարելի է գրել փողոցի անկյունում գտնվող տապակած ճտերի բուֆետի ճաշացանկը:

Մանրամասնություններ: Մի թղթակից գրել է. «Վճիռը լսելու համար դատարանի դահլիճում հավաքվել էր մոտ մեկ տասնյակ մարդ»: Մյուսը գրել էր. «Դատարանի դահլիճում 11 մարդ կար, ներառյալ մեղադրյալի ընկերուհին»:

20 րոպեանոց դասախոսության կարիք չկա, ապացուցելու, թե որ թղթակիցն է ապահովել համոզիչ մանրամասնություններ: Մենք հասկանում ենք, որ երկրորդ թղթակիցը եղել է այնտեղ, դեպքի վայրում:

Եթե գրադարանից գողացված գրքի չափսերը եղել են 4 X 6 մատնաչափ, ապա այդպես էլ ասացեք: Մի՛ գրեք «Դա մի փոքր գիրք էր»: Գրե՛ք. «Արժեքավոր գիրքն ուներ 4 X 6 մատնաչափ չափսեր, այնքան փոքր էր, որ կարող էր տեղավորվել վերարկուի գրպանում»: Սա առանձնահատուկ մանրամասնություն է, գումարած պատկեր: Մենք տեսնում ենք վերարկուի գրպանում դրված գիրքը:

Ընթերցողները սիրում են մանրամասնություններ, որոնք նրանց օգնում են պատկերացնել դեպքերն ու մարդկանց. «Կասկածյալը 5 ոտնաչափ եւ 4 մատնաչափ հասակ ունեցող կին է, որը կրում է երկնագույն սպորտային կոշիկներ, կիպ գրկող դեղին բլուզ եւ կապույտ ջինս: Նրա շագանակագույն մազերը կարճ կտ-

րած են: Օգտագործել է փոքր ատրճանակ, որը տեղավորվում է նրա ձեռքի ափի մեջ»:

Տեսեք, թե «Մայամի Հերալդ»-ի թղթակիցն ինչպես է սկսում դեռահասի սպանության մասին նյութը՝

16-ամյա Քենեթ Ռիչարդսոնը սպանվել է հինգշաբթի օրը՝ մի մաշված շագանակագույն գլխարկի պատճառով, հայտնել են ոստիկանությունից:

Թղթակիցը նկատում է չափսերը, քաշը, քանակը, գույնը, հոտը: Չափսերը հավասար էին բասկետբոլի՞, թե՞ բեյսբոլի գնդակին, ծանր էր գրքի՞, թե՞ նամակի չափ: Ի՞նչ հոտ ուներ՝ սոխի՞, սխտորի՞, թե՞ նոր կտրած խոտի: Դա մուգ կապու՞յտ էր, համարյա սեւ՞, թե՞ բաց երկնագույն, ինչպես երկինքը անձրեւից հետո: Ձայնն ինչպիսի՞ն էր՝ թեթեւ, ինչպես հրավառության ճարճատյո՞ւն, թե՞ հակընդդեմ հրդեհի թնդյունի նման:

Ուշադրություն դարձրեք, որ այս հարցերի մեջ մանրամասնությունները կապվում են այնպիսի երեւույթների հետ, որոնք կարելի է տեսնել, շոշափել, հոտն զգալ, լսել:

Ինչպես մենք խուսափում ենք ասել «մոտ մեկ տասնյակ» կամ «փոքր», այնպես էլ չենք օգտագործում այնպիսի վերացական բառեր , ինչպիսիք են հայրենասիրություն, հավասարություն, սեր, եթե միայն նրանք կապված չեն որեւէ դեպքի, իրավիճակի հետ կամ էլ՝ մեջբերում չեն: Վերացական բառերի նշանակությունը պայմանական է: Օրինակ՝ ի՞նչ է «անպարկեշտություն»-ը: Ըստ ֆեդերալ դատավորի դիտարկումների. «Նույն բանը մի մարդու համար քնարերգություն է, մյուսի համար՝ անպարկեշտություն»:

Բառերը պետք է խարսխված լինեն բնության մեջ եղած իրական երեւույթներին: Եթե աղբյուրն սկսում է խոսել դեռեւս չծնված երեխաների իրավունքների, Սահմանադրության իմաստի, երիտասարդների անբարոյականության մասին, թղթակիցն անմիջապես զգաստանում է: Նա գիտե, որ այս բառերը տարբեր մարդկանց համար տարբեր իմաստ ունեն: Նրանց իմաստն անորսալի է: Թղթակիցը պետք է բռնի ձեռքից դուրս սահող բառերը եւ կապի, խարսխի իրական երեւույթներին:

Թղթակիցը կարող է աղբյուրին հարցնել. «Կարո՞ղ եք մի օրինակ բերել, թե դուք ի՞նչը նկատի ունեք արդար ու կարգին աշխատավարձ ասելով»: Ինչպես մի թղթակից է ասում. «Ես բոլորին, ովքեր ընդհանուր բառերով են խոսում, միշտ խնդրում եմ, որ օրինակ բերեն»:

«Այնպես արեք, որ ես տեսնեմ»

«Լրագրային աշխատանքի սկզբում հանդիպածս առաջին խմբագիրը կույր էր... Անունը Հենրի Բելք էր: Նա Գոլդսբորոյի (Հյուսիսային Քարոլինա) «Նյուս Արգուս»-ի խմբագիրն էր: Լրագիրն այն ժամանակ 9000 տպաքանակ ուներ: Դա մի բարձրահասակ, կարծում եմ՝ վեց ոտնաչափ յոթ մատնաչափ հասակ ունեցող մարդ էր եւ շրջում էր ալյումինե գավազանը պարզած: Կրում էր մաշված փափուկ գլխարկ, որը պետք է որ գնված լիներ այն ժամանակներում, երբ նա տեսնում էր եւ նայել էր «Առաջին էջը» ֆիլմի նման մի ֆիլմ: ... Նրա կին՝ Լուսիլը եւ դպրոցահասակ ժառանգները նրա համար կարդում էին «Նյուս Արգուս»-ի եւ «Ռալի Նյուս էնդ Օբզերվեր»-ի ամեն մի համարի ամեն մի բառը: Եվ շատ ու շատ օրերի ընթացքում (ես դեռ ցնցվում եմ, երբ հիշում եմ, թե քանի անգամ), իմ հոդվածները բառ առ բառ լսելուց հետո, ինձ կանչում էր իր խուցը եւ ասում. «Դուք այնպես չեք գրում, որ ես տեսնեմ: Այնպես արեք, որ ես տեսնեմ»:

Տարիներ անց միայն ես հասկացա, որ ոչ մեկը ինձ երբեւէ լավ գրելու ավելի հակիրճ ու ավելի լավ ցուցում չի տվել, քան Հենրի Բելքը այդ հինգ բառով. «Այնպես արեք, որ ես տեսնեմ»:

Ասելու շատ բան չի մնացել: Դա, ամենից բացի, հենց այն է, ինչին ձգտում է լավ գրված նյութը, նաեւ լավ թղթակցությունն, անշուշտ: Դա ընթերցողին տանելն է դեպքի վայր, այնպես անելն է, որ նա տեսնի, լսի եւ հասկանա: Իհարկե, յուրաքանչյուր խմբագրի գործը, ով ուզում է բարձրացնել գրելու որակը, այնպես անելն է, որ թղթակիցներն հասկանան, որ իրենք պետք է այնպես գրեն, որ ընթերցողը տեսնի: Դա այնքան դյուրին է եւ, ավաղ, այնքան բարդ»:

Ջին Ռոբերթս, գործադիր խմբագիր,
«Ֆիլադելֆիա Ինքուայերը»

«Մենք այս փողոցում կավճանկարների մի փոքրիկ հավաքա-

ծու ենք կազմում»: Մեջբերումը Միչիգանի Մասքեգոն Հեյթսի բնակելի թաղամասի լիազորի հետ հարցազրույցից է: Նա պատմում է քաղաքի այդ շրջանի մասին, որին պատուհասել է թմրամոլությունը եւ ահա նրա հետեւանքը՝ սպանություն: Կավիճը նշել էր զոհերի մարմինների ուրվագծերը:

Լիզա Փերլմանը՝ AP-ից, գիտե, որ այդ մեջբերումը ուղղակի նշանակետին է խփում: Ընթերցողների համար դա դրամատիկ պատկեր է: Դուք տեսնում եք մայթը եւ նշումները՝ մի քաղաքային մահարձան:

Հոդվածագիրները զգոնություն են ցուցաբերում այն բառերի նկատմամբ, որոնք կարող են պատկերներ նկարել: Մեյնի Օլդ Օրչարդ Բիչի «Սան Թայմս»-ի թղթակից Մելինդա Վերչինի Նունանը եկեղեցական բուժական ծառայությունների մասին իր նյութն այսպես է սկսում՝

Ցավը մարդուն միշտ գերի է դարձնում:

Յուրաքանչյուր ոք, ով երբեւէ տառապել է գլխացավից մինչեւ սրտի ցավ, գիտե, թե ինչ է նշանակում, երբ չդադարող ցավը քեզ շրջապատում է, կապկպում եւ ծուղակը գցում: Այո, դուք իսկական գերի եք: Պատկերը ճշգրիտ է:

Բնական ոճ

Լավ գրված նյութի չորրորդ բաղադրամասը դեպքին համապատասխանող գրելաոճն է: Այսինքն՝ գրելու ոճը պետք է հարմարեցված լինի թեմային:

Լրագրողի համար ոճը մի քանի նշանակություն ունի: Մենք խոսում ենք հեռահաղորդումների գրելաոճի մասին, նկատի ունենալով, որ գրածը պետք է բարեհունչ լինի ականջի, այլ ոչ թե աչքի համար: Նախադասությունները կարճ են, օգտագործվում է ներկա ժամանակը եւ, ունկնդիրներին չշփոթեցնելու համար, մանրամասնությունների թիվը քիչ է: Մենք ոճի մասին խոսում ենք նաեւ նկատի ունենալով այն ոճը, որը ներկայացված է ոճաբանության ձեռնարկներում, այսինքն՝ «փողոց» բառի հապավում, երբ գրվում է ստույգ հասցեն, իսկ եթե ստույգ չէ, լրիվ է գրվում: Այսպիսով, Ասոշիեյթիդ Փրեսի համար պատշաճ ոճ է «Փենսիլվանիա պող., 1600», բայց ոչ «Փենսիլվանիա պողոտա»: AP-ն չի գործածում հարգալից տիտղոսներ՝ պարոն, տիկին, օրիորդ: «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ը, ինչպես տեսանք պարտքերով ծանրաբեռնված պարոն Ֆլոյդի դեպքում, օգտագործում է այդպիսի դիմելաձեւեր: Ոճ է:

Բայց այստեղ մենք խոսում ենք մի ինչ-որ ավելի անորոշ, ավելի ոչ ճշգրիտ բաների մասին: Ոճը պատումի զգացումն է, պատումի երանգը: Կարելի է այսպես էլ ասել՝ երբ դուք երաժշտության մի պատառիկ եք լսում, ճանաչում եք, դա Մայքլ Ջեքսոնն է, Համերը, Մոցարտը, թե Բրամսը: Պատկերասրահում նկարին նայելիս, կարող եք ասել, դա Պիկասո է, թե Ռեմբրանդտ: Ոճ է: Անհատական յուրահատկություն:

Անկասկած ճշմարիտ է, որ շատ գրողներ ունեն իրենց ուրույն ոճը: Հեմինգուեյի ոճը կտրուկ է, հիմնականում ցույց է տալիս, պատմում է քիչ: Հենրի Ջեյմսի ոճը շրջանաձեւ է, եռանկյունի է, ինչ-որ կա: Թանձր: Նա անդադար պատմում է:

Վոնեգութը ոճի մասին՝ հարգանք ընթերցողի նկատմամբ

Կուրտ Վոննեգութը՝ «Համար 5 սպանդանոցը», «Օրորոց կատվի համար» եւ այլ վեպերի հեղինակը, ասում է, որ երբ գրողն աշխատում է իր գրելաոճի վրա, դա ընթերցողի նկատմամբ «հարգանքի նշան է»:

«Եթե դուք ձեր մտքերը խզբզում եք, ինչպես պատահի, - ասում է նա, - ձեր ընթերցողները գլխի կընկնեն, որ դուք իրենց բանի տեղ չեք դնում: Նրանք ձեր գինը կիջեցնեն մինչեւ եսասերի կամ հաստագլխի աստիճանի կամ ավելի վատ՝ կդադարեն կարդալ ձեր գրքերը»:

Վոննեգութն ասում է, որ գրողները պետք է սիրեն այն, ինչի մասին իրենք գրում են: «Դա իսկական սեր է, այլ ոչ թե խաղեր լեզվի հետ, որը կլինի ձեր ոճի ամենից հմայիչ եւ գայթակղիչ տարրը»:

Նա ավելացնում է այս խորհուրդները՝

1. Մի նյութից մյուսը մի թռեք:

2. Պարզ գրեք: Աստվածաշունչը սկսվում է «մի նախադասությամբ, որը 14 տարեկան աշխույժ երեխայի գրելուն է համապատասխան. «Սկզբում Աստված ստեղծեց երկինքը եւ երկիրը»:

3. Կրճատելու խիզախություն ունեցեք: Ամեն մի նախադասություն, նշում է նա, պետք է «պարզաբանի ձեր նյութը»:

4. Եղեք ձեզ նման: Գրեք այնպես, ինչպես խոսում եք:

5. Ասացեք այն, ինչ ուզում եք ասել:

Թղթակիցն իր նյութը գրելիս, նորությունների թողարկումները պատրաստող հոդվածագիրը եւ գովազդներ պատրաստող լրագրողը ոճը հարմարեցնում են դեպքի բնույթին: Սյունակագիրները եւ քննադատները կարող են ունենալ իրենց հատուկ ոճը, սակայն լրատվամիջոցների համար գրողների մեծ մասն ունի հարյուրավոր ձայներ:

Եթե մահախոսական է, թող լինի վշտալի: Եթե ֆուտբոլային խաղ է, պատմեք այն շնչակտուր: Եթե ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունն է բաժնետերերին, ապա թող լինի պարզ եւ փաստացի:

Երիտասարդ կնոջ դիմանկարը, որը հենց նոր է գեղեցկության մրցույթում առաջին տեղը շահել, չի գրվելու նույն լուրջ ոճով, ինչ քաղաքի բնակչի մահախոսականը: Դիմանկարը կլինի աշխույժ:

Էվելին Մարի Ուելթոնը երեկ առավոտյան գլխացավով արթնացավ:

Նախորդ գիշեր նա պառկել էր քնելու երազանքներով լի գլխով:

Մեյսոն Սիթիի քոլեջի երկրորդ կուրսի 19-ամյա ուսանողուհին երեկ երեկոյան Հասարակական դահլիճում թագադրվել էր Միս Դագլաս կոմսություն: Հաջորդ ամիս նա մասնակցելու է նահանգի եզրափակիչին:

«Ես ամբողջ օրը ինձ ահավոր եմ զգացել, պարզապես ահավոր»,- իր հաղթանակից հետո պատմում էր Ուելթոնը: «Բայց հենց որ դահլիճ մտա, ինչ-որ բան կատարվեց: Գիտե՞ք, կարծես ինչ-որ բան փայլատակեց»:

Լույսերը, մրցության ոգեւորությունը, մինչեւ բարձունքները հասնելու հնարավորությունը իրենց ազդեցությունն էին ունեցել:

«Ես պարզապես հասկացա, որ կարող եմ հաղթել»,- ասում էր նա...

Ի տարբերություն նախորդի, մահախոսականը կլինի լուրջ եւ զուսպ:

Ալբերթ Ֆանելը, 78 տարեկան, որը բնակվում էր Իսթ Ալֆայն պող., 45 հասցեով, թոշակի անցնելուց առաջ 46 տարի աշխատել էր որպես քաղաքի գրասենյակի քարտուղար, երեկ մահացավ երկարատեւ հիվանդությունից հետո:

Ֆանելը թոքերի քաղցկեղով հիվանդանոց էր ընդունվել երկու շաբաթ առաջ:

Քաղաքապետարանի նախկին աշխատակիցն ամբողջ նահանգում հայտնի էր քաղաքապետարանի քարտուղարի գրասենյակի աշխատանքներում կատարած իր նորամուծություններով: Նա ներմուծել է .... նոր համակարգը ...

Ականջ դրեք ձեր խոսքին

«Երբ դուք գրում եք, դուք ընթերցողի գլխում ձայներ եք առաջացնում: Դա կարող է լինել միապաղաղ մրթմրթոց (եւ այդ է պատճառը, որ պաշտոնական զեկույցները քնեցնում են ձեզ) կամ ուրախ աղմուկ, նենգ շշուկ, կրքի դող:

Ականջ դրեք ուրվականներով լի սենյակում լսվող դողդողացող ձայնին.

«Եվ յուրաքանչյուր ալ վարագույրի մետաքսե, տխուր, անորոշ շրշյունը սարսռեցնում էր ինձ, լցնում երբեւէ չզգացած արտասովոր սարսափներով ...»

Սա Էդգար Ալան Պոն է, վարպետը: Մեզանից քչերը կարող են թուղթն այնպես վառ խոսեցնել, ինչպես Պոն, սակայն նույնիսկ սկսնակները ավելի լավ կգրեն, հենց որ սկսեն ականջ դնել այն ձայներին, որոնք լսվում են իրենց գրվածքներում»:

Ռասել Բեյքեր, սյունակագիր

Դաժան պատմություն: Միթչ Մենդելսոնը պետք է լուսաբաներ մի ողբերգական պատմություն՝ հրդեհ, որի զոհն էին դարձել հինգ հոգի: Նրա նյութի ոճը պարզ է եւ ուղիղ: Նա թույլ է տալիս, որ փաստերը ցույց տան ողբերգությունը: Նա ոչ մի զարդարանք չի ավելացնում: Ահա նրա քչախոս հոդվածի սկիզբը՝ տպագրված «Բիրմինգեմ Փոսթ-Հերալդ»-ում:

Հաջորդող լիդը ընթերցողին մտցնում է գործողության մեջ

Դատաքննիչը երեկ երեկոյան կանգնած էր անձրեւի տակ եւ փորփրում էր ծխացող քարերը, որոնք մի ժամանակ տուն էին եղել: Նա փնտրում էր չորս փոքրահասակ երեխաների եւ նրանց մեծ տատիկի մարմինները:

Մի կողմում կանգնած օգնող մարդը սարսռեց:

Մեկը մյուսի ետեւից փոքրիկ ածխացած մարմինները շղթայով փակում էին վինիլե պարկերի մեջ եւ տանում:

Սահմռկեցուցիչ մեջբերումը ամփոփում է ողբերգական դեպքը

Երբ դատաքննիչ Դեյլ Քանինգամը հեռանում էր, անցորդներից մեկը հարցրեց, արդյոք ավերակների մեջ ուրիշ մարմիններ մնացե՞լ են: «Հինգն էին, - պատասխանում է նա, - հինգը չափազանց շատ է»:

4-ամյա Ռեջինալդ, 2 տարեկան Սթեֆանի ու Ռոդերիք եւ 6 ամսական Ամանդա արդներները եւ 88-ամյա Ֆանի Հարվելը երեկ առավոտյան զոհվել են իրենց տանը բռնկած հրդեհի հետեւանքով:

Էական փաստերը լրացնում են նյութը

Երեխաների մայրը՝ 23-ամյա Սոնդրա Գարդները, հրդեհը սկսվելու պահին եղել է հարեւանների տանը: Նրա 19-ամյա եղբորը հաջողվել է տանից դուրս փախչել: Տիկին Գարդները Ֆեյրֆիլդի Լլոյդ Նոլան հիվանդանոցում բուժվում է շոկից:

Բոլոր չորս երեխաները նույն սենյակում են եղել: Մի մարմին գտել են անկյունում, իսկ մյուսը՝ մահճակալի տակ:

Տիկին Հարվելը մահացել է ետնամուտքի դռան մոտ ...

Ամենաերիտասարդ մայրերը

Դեռահասների հղիությունը դաժան թեմա է, եւ Շարոն Քոհենի ստորեւ ներկայացվող լրատվական հոդվածը արտացոլում է այդ երեւույթի բնույթը, որը Միացյալ Նահանգներում արդեն կարծես դարձել է անլուծելի խնդիր: Քոհենն օգտագործում է հաջորդող լիդը, որը ցույց է տալիս ընդհանուր խնդրի թողած ազդեցությունը մի մարդու վրա.

Չիքագո (AP) - Քիմի համար մանկության վերջին ճառագումը՝ ցատկապարանների բզզոցը, խաղահրապարակում տեղի ունեցող սեթեւեթանքները, երեկույթները ընկերուհիների տներում թոշնեցին եւ անցան 13 տարեկանում: Քիմը հղիացավ:

Այսօր Քիմը սովորում է բարձր դպրոցի առաջին դասարանում: Նա ունի 10 ամսական դուստր եւ ստոիկի ձեւավորված բնավորություն: «Ես պետք է ամեն ինչ ընդունեմ այնպես, ինչպես կա, - ասում է նա՝ թոթվելով ուսերը: - Հետեւանքներին դիմանամ՝ լավ կամ վատ»:

Քիմը մայրիկ-երեխա է: Նա մեկն է Միացյալ Նահանգների այն 10 000 աղջիկներից, ովքեր14 եւ ավելի փոքր տարիքում դուրս են եկել մանկության կոկոնից եւ, 22կլված հայտնվել մայրության մեջ:

Դեռահաս մայրերի համար կյանքի ճամփան դժվարին է:

Մայրիկ-երեխաների համար կյանքի արահետն ավելի դժվարին է եւ ավելի երկար:

Ամերիկայի ամենաերիտասարդ մայրիկներն ամեն մի քայլափոխի հանդիպում են ֆիզիկական, էմոցիոնալ, սոցիալական անբարենպաստ պայմանների:

Նորմայից բարձր է բարդություններով ուղեկցվող հղիության եւ նվազ ու հիվանդոտ երեխաներ ծնունդաբերելու վտանգը: Նրանք հասուն չեն եւ իրենց երեխաներին հաճախ վերաբերվում են որպես տիկնիկների, որոնք միայն զուգելզարդարելու համար են, իսկ լավագույն դեպքում՝ որպես քույրերի կամ եղբայրների:

Իրենցից ավելի մեծ դեռահասներից մայրիկ-երեխաները տարբերվում են նրանով, որ տարիներ կտեւի, մինչեւ նրանք ստանան միջնակարգ դպրոցի ավարտական վկայականներ, աշխատանք եւ իրենց սեփական տներն ունենան, կարճ ասած՝ իրենք էլ մեծանան:

«Դեռահասների հղիության հետ կապված համարյա բոլոր (բացասական) հետեւանքները ավելի փոքր աղջիկների մոտ ընդգծված բնույթ ունեն: Դրա արձագանքները ավելի ու ավելի են տարածվում», - ասում է Նյու Յորքի Երեխաների բարեկեցության լիգայի Ատլանտայում կատարվող հետազոտությունների ասիստենտ եւ «Երեխաները որպես ծնողներ» գրքի հեղինակ Շելբի Միլերը:

Բազմաթիվ մայրիկ-երեխաներ, դեռեւս դեռահաս, երկրորդ երեխան են ունենում՝ շարունակելով իրենց վայրէջքը դեպի աղքատության, տգիտության եւ հուսահատության ճահիճը, որտեղ եւ նրանցից սկիզբ են առնում մայրիկ-երեխաների նոր սերունդներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հղիացած երեխաների 15-ից 25 տոկոսը երկու տարվա ընթացքում նորից հղիանում է ...

Լավ ընթերցանության բոլոր բաղադրամասերն առկա են՝ ամենօրյա լեզու, կարճ նախադասություններ՝ նախադասությունների միջին երկարությունը 16 բառ է: Պատումը շարժվում է Քիմի խոշոր պլանից դեպի մայրիկ-երեխաների խնդրի համայնապատկերը՝ ստեղծելով տրամաբանական եւ կինեմատոգրաֆիական կառույց: Մեջբերումները եւ հատկանշանական մանրամասնու-

թյունները համոզում են մեզ, որ լրագրողներն իրավիճակի տերն են: Գրելու ձեւը, հիմնականում գրելու ձեւը, ձգտում է մեզ համոզել, որ իրավիճակը ճշգրիտ է արտացոլված՝ ներմուծելով ապացույցներ, որոնք կոչվում են հիմնավորող փաստեր:

Ուշադրություն դարձրեք կարճ, համարյա ստակատո նախադասություններին, երբ ներկայացվում էր Քիմի հղիությունը: Սա դաժան թեմայի շուրջ կոշտ զրույց է: Երբ Քոհենը իր հեռադիտակի ոսպնյակները այնպես է հարմարեցնում, որ ավելի լայն պատկեր երեւա, նախադասություններն էլ դառնում են ավելի երկար: Քիմի դժվարին դրությունը նկարագրող նախադասությունները պարունակում են միջինը 13 բառ, իսկ վերջին հինգ նախադասությունները՝ միջինը 24 բառ:

Ինչպես տիրապետել գրելու արվեստին

Մենք տեսանք, որ լավ գրում են այն լրագրողները, ովքեր մտահոգվում են նախադասությունների, բառերի, ընթերցողին համոզելու եւ ոճի մասին: Հոդվածագիրները գիտեն, որ լավ գրելը նյութի կառուցվածքը խնամքով պլանավորելու արդյունք է: Նրանք գիտեն, որ մեջբերումները, դեպքերը եւ օրինակները աշխուժացնում են պատմությունը: Եվ նրանք չեն բավարարվում մեկ տարբերակով: Նրանք դեմ չեն վերանայել իրենց նյութերը, միայն թե ժամանակը թույլ տա: Եվ, ամենից կարեւորը, գիտեն, որ իրենք պատմությունները պետք է պատմեն պարզ եւ ուղղակի ձեւով:

Պատմել պարզ

Ինչքան էլ լինի նյութի ծավալը, լիդը լինի ուղղակի, թե՝ հաջորդող եւ ինչպիսին էլ լինի նյութի կառուցվածքը, գոյություն ունեն որոշ էական պահանջներ, որոնցից ոչ մի լրագրող չի կարող եւ չի ուզենա խուսափել: Նյութը հիմնականում պետք է մատուցել պատմողական նախադասություններով, որոնք ընթերցողին տանում են իրենց հետ: Ենթակա, ստորոգյալ, խնդիր եւ վերջակետ: «Ավելի բարդ նախադասությունը ձեզ կարող է առաջնորդել դեպի անախորժություններ»,- ասում է AP-ի թղթակից, Փուլիթցերյան երկու մրցանակների դափնեկիր Ռելման Մորինը:

Նայենք Մորինին երկրորդ Փուլիթցերյան մրցանակը բերած այս պատմության սկզբին: 1957 թվականն է, նա Լիթլ Ռոքի Կենտրոնական միջնակարգ դպրոցի դիմաց հեռախոսի խցիկում է եւ թելադրում է այն դրամատիկ դեպքերի մասին, որոնք ծավալվում են իր առջեւ:

> Այդ պահին ութ նեգրեր՝ երեք տղա եւ հինգ աղջիկ, հատում էին դպրոցի բակը՝ շարժվելով դեպի դպրոցի հարավային կողմի դուռը: Աղջիկները գուլպաներով էին, իսկ տղաները հագել էին վզերը բաց շապիկներ:
>
> Նրանք չէին վազում, նույնիսկ արագ չէին քայլում: Նրանք պարզապես քայլում էին դեպի աստիճանները, բարձրացան եւ դպրոցի ներսում էին, մինչեւ որ փողոցի ծայրում հավաքված 200 մարդ, մի քանիսից բացի, կիմանային այդ մասին:
>
> «Նրանք ներս մտան», - բղավեց մի մարդ: «Օ, Աստված, նիգերները դպրոցում են»:

Պարզ եւ ուղղակի, այս երեք պարբերությունները կլանում են: Ուշադրություն դարձրեք, թե որքան դանդաղ են առաջ գնում առաջին եւ երկրորդ պարբերությունները: Մորինն օգտագործում է դրամատիկ երանգ չունեցող բայեր՝ հատում էին, հագել էին, քայլում էին: Իսկ հետո հանկարծ մի մարդ բղավում է: Ոչ մի ընթերցող չի կարող շարունակել: Գոռացող մարդու ասածը մեզ անմիջապես կանգնեցնում է:

Նախադասությունների թափը, ուղղությունը եւ շարժիչ ուժը բխում են բայերից: Նյու Յորքի լեգենդար խմբագիր Սթենլի Ուոլքերը երիտասարդ թղթակիցներին խորհուրդ էր տալիս «խուսափել ածականներից եւ հավատարմության երդում տալ այն փոքրիկ բայերին, որոնք թռչում են ու ցատկոտում, լողում են ու կտրում»:

Հիմունքները

Լրագրության բաժինների ուսանողների սերունդներ սովորել են գրելու երկու կանոն՝

1. Բոլոր նյութերը կառուցել շրջված բուրգի սկզբունքով: Սա նշանակում է, որ կարեւոր նյութը պետք է դրվի նյութի սկզբից, նախընտրելի է լիդում:

2. Լիդը պետք է պատասխանի այս հարցերին՝

Որտե՞ղ	**Ո՞վ**
Ինչու՞	**Ի՞նչ**
Ինչպե՞ս	**Ե՞րբ**

Այս կանոնները բավականին լավ են աշխատում, ինչպես երեւում է հետեւյալ լիդերից:

Վաղը առավոտյան ժամը 7:30 նահանգապետ Ժանետ Քոչինովսկին Քաղաքացիական դահլիճում ելույթ է ունենալու նահանգում բռնի հանցագործությունները նվազեցնելու եղանակների մասին, որոնք անցյալ տարի, նախորդ տարվա համեմատությամբ, աճել են 22 տոկոսով:

Մելորի քոլեջի վերջին կուրսեցի, 22-ամյա Ջոն Ուիթիքոմբը՝ Հեմփթոնից, երեկ գիշեր լուրջ վնասվածքներ է ստացել, երբ կորցրել է իր վարած մոտոցիկլետի ղեկավարումը եւ հարվածել է ծառին՝ 28-րդ մայրուղու՝ վերջերս ողողումներից վնասված հատվածում:

Այս լիդերը այնքան տեղեկություններ են պարունակում, որ կարող են մի ամբողջ պատմության տեղ ծառայել: Կարճ լուրերի համար, լուրերի ամփոփումների եւ այն դեպքերում, երբ տեղը սուղ է, հին բանաձեւերը դեռեւս ուժի մեջ են եւ գործում են հաջողությամբ: Նրանք օգնում են մեզ իմանալու, թե ինչ է կատարվում եւ իմանալու արագ:

Պատմություն պատմել

Սակայն, երբ մարդիկ կարդալու համար հարմար տեղավորվում են, նրանք ավելին են սպասում, քան հեռագրերը: Հոդվածագիրներից այսօր պահանջվում է պատմություններ պատմելու իմտություն:

Ընթերցողներին գրավելու եղանակներից մեկը, իսկ սա թերթերի ու ամսագրերի համար լուրջ խնդիր է, չոր լուրը լրատվական հոդվածի ձեւով ներկայացնելն է, իհարկե, երբ հնարավոր է: Ներկայացվող երկու հաղորդումներից դուք ո՞րը կնախընտրեիք:

Չոր լուրի լիդ

Քաղաքապետարանից այսօր հաղորդեցին, որ այս ամառ Մայամիի հանրային լողավազանները փակվելու են երեկոյան ժամը 5-ին, այլ ոչ թե 8-ին, քանի որ փրկարարների պակաս է զգացվում:

Լրատվական հոդվածի լիդ

Ամառային շոգ երեկոներին թարմություն ու ջուր փնտրող Մայամիի բնակիչները այս տարի դրանք չեն գտնի քաղաքի հասա-

րակական լողավազաններում: Վերջին տարիներին առաջին անգամ դրանք փակվելու են երեկոյան ժամը 5-ին: Պատճառը բյուջեի սահմանափակումները չեն, որոնք ստիպում են, որ ավանդաբար մինչեւ երեկոյան ժամը 8-ը բաց լողավազանները շուտ փակվեն այս շոգ ամառվա պայմաններում: Ճիշտ հակառակն է:

Քաղաքը չի կարողանում գտնել արտոնագիր ունեցող փրկարարներ, հայտարարել է Բրայան Ֆինիքումը …

Լրատվական հոդվածի լիդը տպագրվել է «Մայամի Հերալդ»-ում, եւ մենք բոլորս էլ կհամաձայնենք, որ այն ավելի հետաքրքրական է: Հակիրճ տեղեկություններից ավելի այնտեղ ոչինչ չի ասվում: Ավելին, ոմանք կարող են պնդել, որ այն դեր է խաղացել կանադական անտառների ամայացման գործում: Ինչ էլ լինի, լրագրությունը շարժվում է պատմություններ գրելու ուղղությամբ, նույնիսկ եթե դրանք ավելի շատ տեղ են զբաղեցնում:

Բանն այն չէ, որ հետաքրքիր լիդերի ազդեցությունը վերջերս է հայտնի դարձել: Ահագին ժամանակ եւ էներգիա են վատնվել գրելու կանոնների մասին այնպիսի գրքեր ստեղծելու վրա, որտեղ անընդհատ նշվում է, որ գրելու հին եղանակն այլեւս ցանկալի չէ: Ճշմարտությունն այն է, որ արդեն տասնամյակներ ի վեր ցանկալի չէ:

Ավելի քան կես դար առաջ Նյու Յորքից մի լրագրող փոքրիկ ուղեցույց գրեց նրանց համար, ովքեր ընտրել են լրագրողի կարիերան: 1941 թվականին Էլիոթ Առնոլդն այս էր ուզում ասել՝

> Այսօր թերթի համար հոդվածներ գրելու կանոններ չկան: Լիդի մեջ կամ նյութի սկզբում «ո՞վ, ինչպե՞ս, ի՞նչ, ե՞րբ եւ որտե՞ղ» դնելու հնադարյան գաղափարը լիովին անտեսվում է: Երկրի լավագույն լրագրողներն իրենց պատմությունները պատմում են իրենց ուզած ձեւով, եւ ընթերցողներն էլ սովորել են կարդալ բազմատեսակ ձեւերով մատուցվող պատմություններ:
>
> Թերթերն այժմ ձգտում են ինքնատիպության, ձգտում են նոր լինելու ե՛ւ նյութերի կառուցվածքի, ե՛ւ թերթի էջադրման առումով: Այսօր թերթերն այլ տեսք ունեն եւ իրենք էլ այլ են:
>
> Հենց այդ պատճառով էլ խմբագիրները անընդհատ փնտրում են նոր տիպի տաղանդներ, տաղանդներ, ովքեր օրենքների չեն ենթարկվում, տաղանդներ, ովքեր ինքնատիպ են ու ազատ …

Մինչ դուք կսլանաք մոտակա խմբագրի մոտ եւ ձեզ կհայտարարեք տաղանդավոր եւ բանաձեւերի կապանքներից ազատագրված, համոզվեք, որ տիրապետում եք հիմունքներին: Միայն եզակի հանճարները ուսումնառության ու աշակերտության շրջանի կարիք չունեն: Մնացածներիս համար վատ գաղափար չէ սովորել՝

հետեւելով բանաձեւերին: Նախ շրջված բուրգը եւ վեց հարցերի սկզբունքը: Իսկ հետո կարող եք ազատ սավառնել:

Էլվիսի բանաձեւը: Էլվիսի երգերի հեղինակներից մեկը պատմում էր, որ հինգ տարի Էլվիսի համար հաջողված երգեր գրելուց հետո, ինքը հասկացել է, որ կրկնում է իրեն: Երգերը հաջողված էին, սակայն ճնշված էին բանաձեւի տակ, պատմում էր հեղինակը: Իմաստ չկար, որ Փրեսլին փոխեր իր ոճը, քանի որ այն հսկայական ֆինանսական հաջողություն ուներ: Ինչեւէ, հեղինակը զգում է, որ մարտահրավեր չկա, եւ որոշում է անցնել երաժշտության նոր ձեւերի:

Ասածի մի մասը կարող է այնքանով բանաձեւ թվալ, որքան Փրեսլիի հիթերի բաղադրամասերը: Համարենք ապացուցված: Սակայն վատ բան չկա այն բանաձեւի մեջ, որն անփորձ գրողին ուղղում է դեպի ստեղծագործական աշխատանքը: Բանաձեւին տիրապետելուց հետո, կարելի է առաջ շարժվել դեպի ավելի մեծ ձեռնարկումներ, ինչպես դա արեց Փրեսլիի երգերի հեղինակը:

Սկսնակ գրողները բավականին շուտ հայտնաբերում են, որ հուզիչ, դյութիչ արձակը չի հոսում, ինչպես ջուրը ծորակից: Նրան պետք է համոզել սիրաշահելով: Գրելը դժվար գործ է: Նրանք, ովքեր գրելով են փող վաստակում՝ բանաստեղծները, վիպասանները, քննադատները, գովազդների հեղինակները, հանրային կապերի ասպարեզում աշխատողները ծանոթ են մտքերին կենդանություն տալու հաճույքին … եւ բոլորն էլ ծանոթ են դրա տառապանքներին: Հատկապես նորից գրելու, վերամշակելու ցավին:

Սան Ֆրանցիսկոյի «Հալ Ռինի եւ գործընկերներ» գովազդային գործակալության ավագ աշխատակից Քիրք Սայթրոնը Քալիֆորնիայի սալոր աճեցնողների համար 300 վերնագիր գրեց, մինչեւ որ կանգ առավ մեկի վրա: Այն մրցանակակիր դարձավ:

Լավ գրելը նորից գրելն է, ասել է հին թղթակից եւ խմբագիր Ֆրեդ Ցիմերմանը:

Հենրի Դեյվիդ Թորոն «Ուոլդենի» վրա աշխատելիս վեց տարում գրել է գրքի յոթ տարբերակ: Քոնքորդ լճի ափին մենության մեջ անցկացրած երկու տարիների գեղեցիկ ու պարզ պատմության ետեւում տարիների տառապալից աշխատանք է:

Էսսեիստ եւ քննադատ Քասքի Սթինեթն ասում է, որ Թորոն «կանգ էր առնում, հետո նորից սկսում, մի կերպ կպցնում ու վերադասավորում, ընտրում էր ու դեն շպրտում, ջոկջկում ու վերանայում եւ կռվում էր անգլերեն լեզվի հետ, մինչեւ որ համաձայնության եկավ նրա հետ»:

«Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչ է նշանակում ամբողջ օրը գլուխը ձեռքերի մեջ սեղմած նստել եւ աշխատել ձեր դժբախտ ուղեղից մի բառ քամել»:

Գյուստավ Ֆլոբեր, վիպասան

Վերստուգում: Ահա որոշ ստուգողական հարցեր այն հոդվածագիրների համար, ովքեր հանձնելուց առաջ վերանայում են իրենց պատրաստած նյութը՝

1. Լիդը ճշգրտորեն արտացոլու՞մ է թեման: Եթե բուն նյութի մեծ մասը լիդում ներկայացված թեմայի մասին չէ, ուրեմն լիդը սխալ է:

2. Եթե օգտագործել եք հաջորդող լիդ, մեջբերումը կամ միջադեպը ուղիղ տանու՞մ է դեպի հիմնական թեման:

3. Արդյոք պատմությունը կու՞ռ է շարադրված, թե՞ ցատկում է թեմայից թեմա: Երկրորդական նյութը գտնվում է հիմնական նյութից առա՞ջ:

4. Պատմության մեջ շարժում կա՞: Այն առաջ են տանում գոյականներն ու բայե՞րը: Փաստերը, դեպքերը, մեջբերումները նյութին շարժում հաղորդու՞մ են:

Հաղորդագրությունների մշակում: Լրագրությամբ զբաղվող ամեն մի կնոջ կամ տղամարդու տասը սիրող է հասնում: Դրանք այն սիրողներն են, ովքեր հայիոյում են Յունայթիդ Ուեյզի տեղական բաժանմունքը կամ Բոյ Սքաուտների ներկայացուցիչներ են, ովքեր գրում կամ հեռախոսով տեղեկացնում են իրենց գործունեության մասին: Նրանք տեղեկություններ են ուղարկում ընթացիկ դրամահավաքի հաջողությունների մասին կամ թելադրում են արծվի կոչում ստացած սկաուտների անունները եւ հասցեները:

Գոյություն ունեն եւ արհեստավարժներ: Նահանգապետի տեղեկատվական գրասենյակից հայտնում են, որ նա մյուս հինգշաբթի ելույթ է ունենալու Ռոթարի ակումբում: Համալսարանի լրատվական ծառայությունից հաղորդագրություն են ուղարկում քիմիայի պրոֆեսորի շահած մրցանակի մասին: Նյութերի մեծ մասը կարող է դառնալ լավ լուր: Փաստորեն, թերթի կամ լուրերի թողարկումների նյութերի համարյա կեսը ստեղծվում է որեւէ կամավորի կան մամուլի հետ կապերի արհեստավարժ պատասխանատուի հաղորդման հիման վրա: Կամավորը կարող է այնքան ուշադիր եւ ընդգրկուն չլինել, ինչպես արհեստավարժը, որը քաջ գիտակցում է, որ իր բարի համբավը ուղղակիորեն կապված է իր

նյութի արժանահավատությունից: Սակայն որ աղբյուրից էլ տեղեկատվությունը օգտագործվի, այն պետք է նախապես ստուգվի:

Առաջին ստուգումը կատարվում է թերթի արխիվից: Նահանգապետի այցը այդ վայրը կարող է ընտրվելուց ի վեր առաջինը լինել, իսկ մամուլի հաղորդագրության մեջ դա չի նշվում: Քիմիայի պրոֆեսորին վերջերս մերժել են պաշտոնի բարձրացում տալ, իսկ քոլեջի լրատվական ծառայությունը անուշադրության է մատնել այդ տեղեկությունը: Քանի որ համայնքի այլ լրատվամիջոցներ եւս օգտագործելու են մամուլի հաղորդագրությունները որպես իրենց նյութերի հիմք, հոդվածագիրը կաշխատի գտնել այդ պատմության այնպիսի կողմ կամ այնպիսի տեսանկյուն, որը նա եզակի է համարում: Այն կարող է թաքնված լինել հաղորդագրության հինգերորդ պարբերության մեջ կամ կարող է ի հայտ գալ ստուգման ընթացքում:

Տեղական կազմակերպությունների հաղորդագրությունները հաճախ այսպես են սկսվում՝

Կին ընտրողների լիգայի տեղական բաժանամունքը երեկ հանդիպում է անցկացրել տիկ. Ալբերթ Մորիսոնի տանը: Հրավիրված էր կոնգրեսական Ֆրենսիս Գիլմորը Արդմորից: Կոնգրեսական Գիլմորը խոսեց Կոնգրեսի քննարկելիք առաջիկա օրինագծերի մասին: Նա իր շրջանում երկշաբաթյա շրջագայություն է կատարում …

Աշխատելով խուսափել վերահաս նինջից, հոդվածագիրը շարունակում է հաղթահարել հաջորդ երկու պարբերությունները եւ, ահա վերջապես, հինգերորդ պարբերության մեջ գտնվում է լիդը՝ կոնգրեսական Գիլմորը հայտարարել է, որ պատրաստվում է քվեարկել ամեն տեսակի հովանավորչական վարձաչափերի դեմ: Հոդվածագիրը գիտե, որ լիդն ու նյութը արդեն պատրաստ են, քանի որ տեղական որոշ արտադրություններ օգտվում են նման վարձաչափերից: Լրագրողը գիտե, որ պետք է անմիջապես թղթակցություն հավաքի՝ խոսի կոնգրեսական Գիլմորի եւ ընկերությունների ղեկավարների հետ, որոնց վրա ազդելու է այդ որոշումը, ստուգի ու պարզի, թե Կոնգրեսում ինչ է կատարվում այդ խնդրի կապակցությամբ:

Սխալներ անհամար

Անկախ այն բանից, թե որքան հիմնավոր փաստահավաքում եւ ստուգում է կատարվել, ինչքան էլ հետաքրքիր լինի նյութը, այդ ամենը կարող է ի չիք դառնալ մի փոքրիկ վրիպումի, ուղղագրական կան քերականական սխալի պատճառով: Սխալները

նման են ճամբարի մոծակներին: Որքան էլ ուշադիր լինեք, նրանք հաջողացնում են վրան թափանցել: Նրանց թիվը պարզապես չափազանց շատ է, իսկ նրանց համառությունը գերազանցում է մեր ձեռք առած նախազգուշական միջոցները: Նրանք՝ բառերի սխալ եւ անհամապատասխան գործածությունները, տառասխալները, կլիշեները, քերականական եւ կետադրական սխալները, շրջապատում են մեզ:

Եկեք նահանգներով պտույտ գործենք եւ տեսնենք, թե ինչ ենք գտնում: Բայց ճանապարհ ընկնելուց առաջ, ահա, առավոտյան թերթերի հետ բերել են մի գրություն ԱՄՆ Փոստային ծառայությունից:

Հասցեների վերաբերյալ այս տեղեկությունները ճիշտ օգտագործելու դեպքում դուք կօգնեք, որ նոր ավտոմատավոր սարքավորումը ձեր փոստը տեսակավորի նրա նպատակակետին համատապասխան:

Օհ, օհ: Յուրաքանչյուր սխալի համար մեկ «օհ»: Կարո՞ղ եք գտնել դրանք:

Իսկ այժմ եկեք սկսենք …

Քալիֆորնիայի Թեքոփա Հոթ Սփրինգսում տարածված տեղակագրում հայտարարվում էր, որ բլիթներն ու նրբերշիկը **կապացուցվեն** դպրոցի ցածր դասարանցիների կողմից:

Թեքսասի Յուեյլդի եւ Հարավային Դաքոթայի Հոթ Սփրինգսի մոտ տեղադրված ցուցանակները ճանապարհորդներին հրավիրում են քաղաքի **առեւտրիական** կետերը:

Նյու Յորքի Ռուզվելտի հիվանդանոցի ցուցանակը հիվանդներին հատուկ կլինիկա է հրավիրում հետեւյալ հարցով.

«Ուզու՞մ եք ձեր քաշը ***վազեցնել***»:

Նյու Յորքի Բատավիայի Էքսոնի բենզակայանի պաստառի վրա կարդում ենք.

«***Մեգենաների*** լվացում»:

Օնթարիոյի Փարի Սաունդի Լեյքսայդ մոթելը հրապուրում է ճանապարհորդներին, քանի որ, կանգ առնելով իրենց մոտ, նրանց տրամադրության տակ կլինեն **թրանավակներ**:

Նահանգային համար 90 խճուղու երկարությամբ Հարավային Դաքոթայի Միթչելից դեպի արեւելք վարորդներին առաջարկվում է 24-ժամյա **վերանայման** ծառայություն:

Ֆլորիդայի Հոմսթեդի Փաբլիքս հանրախանութի մուտքի ցուցանակը հաճախորդներին զգուշացնում է.

«Մեր արտոնագիրը թույլ չի տալիս ***ոխելից*** խմիչք օգտագործել խանութում կամ ավտոկանգառում»:

Արիզոնայի Բիզբիի «Քոփըր Քուին Հոթել»-ի զբոսաշրջիկների համար նախատեսված գրքույկում ասվում է, որ քաղաքը «պահպանել է ճարտարապետական նույն տեսքը, ինչ **նրա** ծաղկման շրջանում»:

ԱԱԱ-ի հարավային երեք նահանգների ուղեցույցում կար Հարավային Քարոլինայի Միրթլ Բիչի մոթելի մի գովազդ, որը պարծենում էր, թե ունի «ժողովների **առնածին** դահլիճ»:

«Սթիլ» ընկերությունն իր բրոշյուրում զգուշացնում է իրենց արտադրության սղոցներ գնողներին, որ հնարավոր է «այնպիսի **իրադարձություն**, որը կոչվում է հետհարված»:

Նյու Յորքի Համալսարանի Հեռակա կրթության դպրոցը գովազդում է ոճաբանության իր դասընթացները. «ՆՅՀ-ն յուրաքանչյուրին տալիս է գիտելիքներ, որ բառերը **նրանց** երբեք տհաճություն չպատճառեն»:

Բլումինգդեյլ հանրախանութում ցուցանակի վրա հարց կա. «Ընդհանուր ի՞նչ **ունի** հին ագարակը եւ Բլումինգդեյլը»:

Բայց ո՞վ կարող է մարդկանց մեղադրել այս սխալների համար, եթե թերթերում եւ հեռուստատեսությամբ նրանք տեսնում եւ լսում են բազմաթիվ սխալներ:

Դանքինի դոնաթների հեռուստատեսային գովազդային հոլովակում ասվում է. «Հայտնի չէ, թե հանրախանութի դոնաթները որքա՞ն ժամանակ են այնտեղ **տրված**»:

Սուրբ Պատրիկի օրվա շքերթի ժամանակ, գրում է «Սավաննա Մորնինգ Նյուս»-ը, 87 կանանցից 86-ը «մերկացել էր մինչեւ **գորտատեղերը**»:

Ցանցի սպորտային մեկնաբանը ասում է, որ Նոթր Դամը շատ փոխանցումներ նպատակին է հասցնում, որովհետեւ փոխանցում կատարողները «**գերադասում են** պաշտպաններին»:

«Բոսթոն լոուբ»-ը հիշատակում է մի մարդու, որին մեղադրում են «**անուշադիր** սպանության մեջ»:

«Միլուոքի Ջորնալ»-ը հոդված էր տպագրել զբոսաշրջիկների մասին, ովքեր «անգլերենի դասերին **միատեղվում են**»:

«Էդիթըր եւ Փաբլիշըր»-ը գրում է, որ Բոսթոնի համալսարանի Հասարակական հաղորդակցությունների ֆակուլտետը հայտարարում է, թե «պակիստանցիների համայնքը գաղտնի գործակալների տուն է ... »:

«Նյու Յորք Թայմս»-ում գտնում ենք այս մեջբերումը. «Բայց ես մարդկանց **շատեմ** հարգում»:

«Վաշինգթոն Փոսթ»-ը նկարագրում է այն ջանքերը, որոնք գործադրում են Հյուսիսային Վիրջինիայի ջրերի հիմնավոր պահեստարանը ցամաքելուց փրկելու համար: Նա նաեւ հիշատակում է մի ընկերություն, որն «**առաչինն** է օգտագործել մի նոր մեքենա»:

«Յուջին Ռեջիսթըր-արդ»-ը գրում է, որ վագոնավարը «կարողացել է կանգ առնել Ծննդյան **տոնավճարի** մոտ»:

Հարավային Քարոլինայի «Բոֆոր Գազեթ»-ը նշում է, որ «չնայած **զարմանահրաշ** ուշացմանը, «Բիրգադուն»-ը վերջնագիծը հատող առաջին նավակն էր»:

AP-ին գրում է «**առաջին ավանդական** Միջազգային կոնգրեսի» մասին:

«Նյու Յորք Թայմս»-ի նշանավոր սյունակագիր Ջեյմս Ռեսթոնը իր ընթերցողներին պատմում է արտասահմանյան «**լուրջ ճգնաժամի**» մասին:

Եթե որմնադիրներն այնպես վարվեն իրենց գործիքների հետ, ինչպես չափազանց մեծ թվով լրագրողներ վարվում են լեզվի հետ, նրանց կառուցած պատերը կծռվեն, հատակը կթեքվի, իսկ իրենք էլ շատ արագ կհայտնվեն գործազուրկների ցուցակում:

Փաստ է, որ լեզուն փոխվում է: Սակայն որոշ բաներ երբեք չեն փոխվում: Նախադասությունները վերջանում են վերջակետերով, իսկ բայը միշտ համաձայնում է գոյականի հետ: «Քերականություն» բառի վերջում միշտ գրվելու է «թյուն» եւ երբեք «թուն», իսկ «երկրորդ կուրսեցի»-ն անկասկած այսպես է գրվելու եւ ոչ երբեք «երկկուրսեցի»:

Կարեւոր է նշել, թե ինչու են սխալներն արվում: Դրանց մեծ մասը թափթփված մտածողության կամ ընդհանրապես մտածելու բացակայության հետեւանք է:

Ծփոթ մտածողություն = սխալներ

Գործիքներով աշխատող ամեն ոք գիտե, թե որ գործիքն ինչի համար է: Ավտոմեխանիկը օդային ճնշման չափիչը չի օգտագործի լուցամոմի ճեղքը չափելու համար: Դա իմաստ չի ունենա: Բայց լրագրողները երբեմն բառերի հետ վարվում են առանց պատշաճ հարգանքի: Նրանք իրենց բառերի պահեստից մի բառ են որսում, որը քիչ թե շատ հարմար է թվում:

Սովետական երկու տիեզերագնացները հաջողությամբ կցեցին իրենց «Սոյուզ 35» տիեզերանավը ...

Գոսիփոլը առաջին անգամ հայտնագործվել է 1971 թվականին այն բանից հետո, երբ գյուղացիները ...

Զինված ավտոմատավորները կիրակի օրը առեւանգեցին աշխարհի խոշորագույն պարբերականի սեփականատեր եւ խմբագիր ...

Սրանք հեռագրային հաղորդագրություններ են:

Այն փաստը, որ տիեզերանավը կցվել է, ցույց է տալիս, որ ամեն ինչ հաջող է անցել: «**Հաջողությամբ**»-ը ավելորդ բառ է:

Երկրորդ մեջբերման մեջ եւս կա մի ավելորդ բառ՝ «**առաջին**»: Երբ որեւէ բան է հայտագործվում, պարզ է, որ դա տեղի է ունենում առաջին անգամ: Կարո՞ղ էր Կոլումբոսը առաջին անգամ Ամերիկան հայտնագործել 1492 թվականին, հետո նորից հայտնագործել այն մի քանի տարի անց իր հաջորդ ճանապարհորդության ժամանակ:

Ինչ վերաբերում է երրորդ նախադասությանը, հարցրեք ձեր ընկերներին, լսե՞լ են նրանք երբեւէ «**չզինված**» ավտոմատավորների մասին:

Այս երեք նախադասություններում առկա են ավելորդաբանություններ՝ ավելորդ անգամ կրկնվող բառեր:

Գրելուց առաջ մի պահ մտածեք:

«Վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քոլեջի շրջանավարտներից շատերը նույնիսկ կարդալ եւ **մրել** չգիտեն», - ասվում է Քենթուքիի մի քոլեջի խմբագրականում: Խմբագրականի հեղինակը չի մտածել, թե ինչ է գրում:

«Քուքի կղզիներից **օտարված** նախկին վարչապետ Ալբերթ Հենրին մահացել է ...»: Սա գրել է UPI-ին: Ինչպե՞ս կարող էր հոդվածագիրը «վտարված»-ը շփոթել «օտարված»-ի հետ: Ակնհայտ է, որ գրելու ընթացքում նա չի մտածել:

Ի՞նչ կասեք հետեւյալի մասին՝

Մի ժամ տարբերությամբ մի զույգ երկրաշարժ ...
Ավազակների տրիոն սկսեց ...

Ոմանք կարող են փաստարկներ բերել, որ այս նախադասությունները տեխնիկապես ընդունելի են: Բայց ոչ այն լրագրողի համար, ով բառարանի հետ միասին օգտագործում է նաեւ առողջ դատողությունը: Լրագրողի համար զույգերով լինում են կոշիկները, իսկ տրիոներով երգում են: Երբ լրագրողները չափից ավելի

շատ ջանք են գործադրում, նրանք աղավաղում են լեզուն, ինչպես այս լիդում՝

> Շաբաթ օրը Ֆիլադելֆիայում Անկախության օրվան նվիրված փառատոնի ժամանակ Ֆրենքի Վալիի կատարումը եւ «Չորս եղանակներ» կոնցերտն ավարտվեցին ողբերգությամբ, երբ ուժեղ քամու պատճառով 40 լուսարձակներ խորտակվեցին բեմի վրա:

«Ողբերգություն»-ը ուժեղ բառ է: Ծանոթ լինելով ռոք համերգների ժամանակ ոտնատակ եղած մարդկանց մասին հաղորդումներին, ընթերցողը վատթարագույնն է սպասում: Իրականում ի՞նչ էր տեղի ունեցել: Կոտրվել էր դաշնակահարի ձեռքը, մի քանիսն էլ կտրվածքներ ու կապտուկներ էին ստացել:

Հետեւեք ձեր լեզվին

Մի փոքրիկ աղջիկ լուսամուտից վայր էր ընկել հացի արկղի մեջ, որը նվազեցրել էր նրա ընկնելու թափը, եւ երեխան չէր վնասվել: Դրանից լավ հոդված կստացվեր, եւ նորաթուխ թղթակիցը այսպես սկսեց իր լիդը.

«Նախախնամությունը (անգլերեն՝ փրովիդենս) եւ հացի արկղը միջամտեցին, որ փրկեն ... կյանքը ...»:

Քաղաքային լուրերի խմբագիրը գլխով նշան արեց եւ խորհուրդ տվեց թղթակցին. «Ինչ վերաբերում է բառերին, այժմ էլ շատ ուշ չէ, որ դուք իմանաք, որ «Փոսթ-Դիսփաթչ»-ում դրանք օգտագործվում են իրենց ուղղակի իմաստով, միայն եւ միայն ուղղակի իմաստով: Ինչ վերաբերում է «Փոսթ-Դիսփաթչ»-ի ընթերցողներին, նրանց համար Փրովիդենսը քաղաք է Ռոդ Այլենդ նահանգում»:

Քաղաքային լուրերի խմբագիրը լեգենդար Օ. Ք. Բովարդն էր, իսկ միջադեպը տեղի էր ունեցել 1900 թվականին: Խորհուրդը տեղին է նաեւ այսօր:

Երբ Մասաչուսեթսում գողերը թունել էին փորել, թափանցել բանկի պահեստը եւ ճողոպրել 700 սեյֆերի պարունակությամբ, AP-ն գողությունը ներկայացրել էր որպես կողոպուտ: Կողոպուտը գողություն է ուժի գործադրմամբ եւ հանցագործություն է անձի նկատմամբ՝ բռնության կիրառմամբ: Գողությունը սեփականության հափշտակություն է, եւ այստեղ այդ դեպքն է:

Հեռուստալրագրող Մերվին Բլոքը, որը վարում էր հեռարձակվող լրագրության դասընթացներ, մի երկու օր դիտեց լուրերի թո-

ղարկումները եւ հավաքեց երկու մատնաչափ հաստություն ունեցող մի տրցակ՝ լի ավելորդաբանություններով, սխալ քերականությամբ եւ բառերի անտեղի օգտագործումներով: Նրա հավաքածուի մեջ ամենից հաճախ հանդիպողը կլիշեն էր:

«Այսօր ցանկացած ամերիկյան օրաթերթ կարդալիս կարելի է եզրակացնել, որ խմբագրություններից իսպառ անհետացել են վերստուգող խմբագիրները, ինչպես ճերմակակտուց փայտփորիկն է անհետացել հարավի անտառներից: Թվում է, թե մենք մեծացրել ենք երիտասարդ թղթակիցների մի սերունդ, որոնց գիտելիքները ուղղագրությունից, մեղմ ասած, զրոյից ցածր են: Այսօրվա լուռ եւ հականեխիչ միջոցներով ախտահանված խմբագրություններում նյութի ճանապարհը էկրաններից ուղիղ թերթն է: Մի ժամանակ ալեհեր ցանցառ ծերուկը փակում էր թղթակցի ճանապարհը, որ մեղմ, սակայն վճռական բացատրի, որ «մղել»-ը եւ «հղել»-ը տարբեր բառեր են, եւ որ չի կարելի շփոթել «վերաբերել»-ը եւ «վերբերվել»-ը: Ծեր ցանցառները վերացել են, եւ նրանց հետ էլ գրագիտությունը»:

Ջեյմս Ջ. Քիլփաթրիք, սյունակագիր

Կլիշեներ

Ջորջ Օրուելը գրողներին խորհուրդ էր տալիս զգուշանալ այնպիսի արտահայտություններ օգտագործելուց, որոնք նրանք միշտ տեսնում են տպագրված վիճակում:

Եթե սկզբից ձեզ չի հաջողվում, փորձեք նորից եւ նորից: Մտցնել գլուխը: Կրակից ընկնել բոցի մեջ: Մրից մրջուրն ընկնել: Սերը սարեր է շրջում: Վարդի նման ալ շուրթեր:

Մի ժամանակ սրանք ինքնատիպ եւ պատկերավոր արտահայտություններ են եղել: Սակայն թարմությունն անցողիկ է: Գրողները վերցրել են դրանք, օգտագործել եւ նորից օգտագործել: Եվ արտահայտությունները դարձել են ձանձրալի ու տափակ, եւ այսօր դրանք կոչում ենք կլիշեներ: Իր գրածը գնահատող ոչ մի գրող այսօր չի օգտագործի այս հնացած եւ հոգնած արտահայտությունները:

Քանի որ այս նախադասություններն ու արտահայտությունները լսվում են ամենուր եւ անընդհատ, դրանք տպվում են գրողների հիշողության պահեստներում: Հարմար արտահայտություն փնտրելու ժամանակ կլիշեները դուրս են ցատկում: Նորից ետ հրեք իրենց տեղը:

Ահա Բլոքի ընտրած կլիշեներից մի քանիսը: Նա ասում է, որ դրանք միայն իր հավաքածի մի փոքր մասն են:

ՉԻՔԱԳՈ - Դա ամենից անցանկալի կրճատումն էր ...

ԽԱՐԹՈՒՄ, ՍՈՒԴԱՆ - Սովետական ռազմական միջամտությունը Աֆղանստանում եւ Իրանի ճգնաժամը ստիպեցին, որ հնչեն տագնապի զոդանջներ ...

ՆՅՈՒ ՅՈՐՔ - Ամենուր հնչում էին թեկնածուների պայքարի ...

ՆՅՈՒ ՅՈՐՔ - Ալեքս Կարասը շարունակում է մնալ այն բացառությունը, որը հաստատում է կանոնը ...

ՖՈՐԹ ՈՒԵՅՆ, ԻՆԴԻԱՆԱ - Մարթա Քոուլմանը ֆեդերալ գործակալներին հանդիպեց փակ դռների ետեւում ...

ՆՅՈՒ ՅՈՐՔ - ABC-ն եւ NBC-ն համոզված են, որ կատակերգությունը ծիծաղեցնելն է միշտ եւ ամենուր ...

ՅՈՒՆԻՈՆԴԵՅԼ, Ռոդ Այլենդ - Նյու Յորքի թիմը հատեց վերջնագիծը ...

Ավելորդաբանություններ

Ի՞նչն է ընդհանուր այս արտահայտություններում՝ լուրջ ճգնաժամ, դանդաղ քարշ գալ, արագ վազել, չար գույժ, մանրամասն զննել:

Նրանք պատկանում են «լիովին ավերված»-ների եւ «առաջին ավանդական»-ների ընտանիքին՝ ավելորդաբանությունների ընտանիքին: Այս անշնորհք երեխաների, այս անտեղի կրկնությունների ծնողները նրանց հղացել են ածականամոլության եւ մակբայամոլությյան կրքի պահին: Ավելորդաբանությունները նաեւ շփոթ մտածողության զավակներն են:

Լուրջ ճգնաժամ - Ո՞ր ճգնաժամն է աննշան:

Դանդաղ քարշ գալ - Դուք չեք կարող արագ քարշ գալ:

Արագ վազել - Փորձեք վազել որեւէ այլ ձեւով:

Չար գույժ - Նայեք բառարանում, թե ինչ է նշանակում «գույժ»-ը:

Մանրամասն զննել - Նույնը «զննել»-ի համար:

Ներկայացնում ենք թերթերում ամենից տարածված ավելորդաբանությունները: Այն կազմել է Մինեսոթայի լրագրային ասոցիացիան:

բացարձակապես անհրաժեշտ	ներդիր կցվում է	ազնիվ եւ արդար
նախնական պլանավորում	ճիշտ նման	նորից վերաշինել
հարց տալ	արդար եւ ազնիվ	ետ վերադառնալ
հավաքել եւ միավորել	վայր ընկնել	մերժել եւ հրաժարվել
ավելի ուշ օր	առաջին եւ կարեւոր	ետ շրջվել
կից առ այս	իմ ընկերս	ճիշտ եւ կարգին
ներկա ժամանակում	միասին հավաքվել	վեր բարձրանալ
անվավեր համարել	ազնիվ ճշմարտություն	կանոններ եւ կարգավորումներ
Չիքագո քաղաք	կարեւոր հիմնախնդիրներ	ներս ուղարկել
մերձավոր մոտիկություն	անհրաժեշտ պահանջներ	չափով փոքր
կարծիքների կոնսենսուս	բաց անել	դեռ մնալ
կրկնօրինակված պատճեն	այլ երկընտրանք	ժամանակավորապես ընդհատել
շարունակել առաջ գնալ	բացահայտորեն	լիովին
	ակներեւ	ոչ պիտանի
երկուսով համագործակցել	պարզ ու հասարակ	ճշմարիտ փաստեր
ամեն եւ յուրաքանչյուր	հետաձգել մինչեւ ավելի ուշ	տարբեր եւ բազմատեսակ

Լրագրային շտամպներ

Բառարանում «լրագրային շտամպ»-ը բացատրվում է որպես թերթերում օգտագործվող լեզվաոճ: Լրագրողներին այն հայտնի է որպես կլիշեների, տափակաբանությունների, չափազանցված գրելաձեւի, մաշված արտահայտությունների եւ գերհագեցած արձակի միացություն, որոնք հուսադրող սկսնակին կամ անհույս վետերանին բնորոշող նշաններ են:

Լրագրային շտամպների դեպքում գները եւ հանցագործությունները միշտ երկինք են հասնում, անհանգստացած պաշտոնյաները ահազանգում են:

Երբ ժողովը տեղի է ունենում մեկ ժամից ավելի, ուրեմն գրում են, որ ժողովը ժամեր է տեւել: Ժողովի ընթացքում նշված փաստերը միշտ միայն փաստեր են, երբեմն անհերքելի փաստեր են:

Մոտակա ընտրությունները միշտ մեծ իրադարձություն են, իսկ ընտրվածը իր պաշտոնավարությունը դիմավորում է ճառով: Պաշտոնյան, որն անսովոր ինչ-որ բան է արել, նոր էջ է բացել քաղաքականության պատմության մեջ:

Մարդիկ հաճախ ողջունում են այն գործերը կամ հայտարարությունները, որոնք նրանց դուր են գալիս: AP-ն իր թղթակիցների հարցում է անցկացրել, պարզելու ամենից շատ օգտագործվող բառը կամ արտահայտությունը, եւ հաղթողը եղել է «ողջունել»-ը: Կամ ինչպես կասեին լրագրողները, «ողջունել»-ն արժանացավ դափնիների:

Զգուշացեք՝ վտանգավոր է

Կոկա - Այս բառն ապրանքանիշ է: Այդպիսի բառերը արտադրողի կողմից արտոնագրվում են եւ օրենքով պաշտպանվում են, որ այլոք այն չօգտագործեն: Գրվում են մեծատառով:

Վերջնականացնել, կարեւորել - զգույշ եղեք հնարովի բառերից, հատկապես, որոնք ներմուծվում են պետական պաշտոնյաների անհասկանալի ժարգոնից:

Փոքրամասնություններ - Մի օգտագործեք, եթե ի նկատի ունեք փոքրամասնությունների խմբերի ներկայացուցիչներին:

Սխալ է՝ երբ կանայք եւ փոքրամասնություններն ընտրվեցին ...

Ճիշտ է՝ երբ կանայք եւ փոքրամասնությունների խմբերի ներկայացուցիչներն ընտրվեցին ...

Հրաշք - չափացանց շատ է օգտագործվում, ինչպես «Ջոնսը հրաշքով փրկվեց մահից, երբ ...»: Հրաշքները թողեք ոգիների աշխարհին:

Ամենաեզակի - Ընջեք «ամենա»-ն: Եզակի նշանակում է տեսակի մեջ միակը: Նույնը վերաբերում է եւ «ամենից եզակի» եւ «բավականին եզակի» արտահայտություններին:

Հոմանիշներ «ասաց»-ի համար

AP-ի անցկացրած հարցման մյուս հետաքրքիր մասը վերաբերում է «ասաց» բառի հոմանիշներին: Ինչ-ինչ պատճառներով լրագրողները գերադասում են օգտագործել հայտարարեց, նշեց,

պնդեց, շշնջաց, գոռաց, արտասանեց, կրկնեց, հիշեց, վերհիշեց, հարցրեց, խնդրեց, արտաբերեց, պատմեց եւ հաղորդեց:

«Ասաց» բառից խուսափելու պատճառները առնվազն երկուսն են: Մեկը վախն է օգտագործելու միեւնույն բառը երկու անգամ նույն նյութի մեջ: Եթե լրագրողը նյութ է պատրաստում Էքսպո-15-ի վերաբերյալ, հոմանիշներ օգտագործելը շատ հարմար է՝ ցուցադրություն, դեպք, ցուցահանդես, ցուցադրում, ներկայացում: Սակայն «ասաց»-ը ոչ մեկի ուշադրությունը չի գրավում, անկախ այն բանից, թե քանի անգամ է գործածվում, իսկ նրա փոխարինողները սովորաբար չափազանցնում են ասածի բնույթը եւ ընթերցողին մոլորության մեջ գցում:

Մյուս պատճառը հոդվածագրի անհաղթահարելի ցանկությունն է պարծենալ իր իմացածով: Ամեն մեկն էլ կարող է «ասաց» բայն օգտագործել: «Տեսեք, թե ես քանի բառ կարող եմ մտածել ձեզ շլացնելու համար»,- ասում է հոդվածագիրը: Մարդն իր լսածը չի կրկնում, այլ արձագանքում է: Ծրագիրը չեն ավարտում, այլ վերջնականացնում են: Միջոցառումը չի հրավիրվում կամ պլանավորվում, այլ նախորոշվում է: Ապագա դեպքերը մոտալուտ են: Ահա այս է լրագրային շտամպների հիվանդությունը:

Ճիշտ է, ոստիկանն ասաց, նա ասաց, կինն ասաց կրակահերթը զուրկ է գրավչությունից: Որպեսզի պատմություններն արագ շարժվեն, ուշադիր հոդվածագիրները կօգտագործեն արտահայտություններ, որտեղ բացակայում են նման կրկնությունները: Ոստիկանությունը զեկուցում է, նա արեց հետեւյալ առաջարկները, նա ապացուցեց: Այս արտահայտություններին հետեւում են աղբյուրի ասածները կամ ներկայացված տեղեկատվությունը:

Լրագրային շտամպները վարակիչ են: «Կնոջը **շնորհել են** իր որդու սպանությունը»: Այս նախադասությունը վերցված է լուրերի թողարկումից: «Շնորհել են»-ը նախադասությունը դարձնում է զավեշտական: Նույնիսկ այդ դեպքում այն օգտագործում են պատճառական կապ ցույց տալու համար: Նման արտահայտություն է «շնորհիվ»-ը, ինչպես այն օգտագործվել է Հարավի մի լրագրում. «Շնորհիվ վերջերս տեղի ունեցած փոթորկի, գետաբերանի շրջանում անօթեւան են մնացել 600 մարդ»: Կարելի է սպասել, որ շուտով սպորտային մեկնաբանները կգրեն. «Ջոնսոնի ջանքերի շնորհիվ կոտրվել են Սիմսի երեք կողերը եւ քիթը»: Սիմսի մայրիկը պարտավոր է Ջոնսոնին շնորհակալական նամակ հղել:

Ամփոփում

Նյու Յորքի մի թերթի խմբագրի խնդրեցին կազմել ամենից հաճախ հանդիպող խնդիրների ցուցակը, որոնք նա նկատել է հենց նոր իր մոտից տարված թերթի մեջ: Ահա նրա ցուցակը՝

1. Անբավարար ինքնախմբագրում: Թղթակիցները այնքան են չարչարվում բառերը թղթին հանձնելիս, որ բառերին նայում են որպես իրենց ներդրումների եւ դժկամությամբ են փոխում դրանք: Մի գուրգուրեք ձեր գրած ամեն մի բառը: Միշտ հարց տվեց՝ այս բառը, նախադասությունը, պարբերությունը առա՞ջ է շարժում պատմությունը:

2. Սխալ լիդ: Պատմության հիմնական ասելիքի համար հոդվածագիրն օգտագործել է երկրորդական թեման: Հոդվածագիրը պետք է անընդհատ հարց տա՝ ինչո՞վ է այս դեպքը տարբերվում նման պատմություններից: Պատասխանը դրվում է լիդի մեջ:

3. Վատ կազմակերպում: Սա հաճախ հիմնական թեման չորոշելու հետեւանք է եւ չիմանալու հետեւանք, թե նյութը ինչպես մատուցել՝ որպես լո՞ւր, լրատվական հոդվա՞ծ, թե՞ հոդված:

4. Հաջորդող լիդի սխալ գործածություն: Չափազանց շատ են կարեւոր լուրերը մատուցվում ոչ այնքան կարեւոր լուրի ձեւով:

5. Երկարաբանություն: Կարիք չկա օգտագործել յուրաքանչյուր մեջբերում, յուրաքանչյուր դիտարկում: Լրագրության մեջ քանակը նշանակություն չունի, կարեւոր է մեջբերումների եւ դիտարկումների որակը:

6. Ձանձրալիություն: Սա կարող է երկարաբանության արդյունքը լինել: Պատճառը կարող են լինել նաեւ բայերի անհաջող ընտրությունը, երկար նախադասությունները, մեջբերումների բացակայությունը:

Էդգար Ալան Պոն ընդհանրացնում է գրողի նպատակը. «Ամբողջ երկի մեջ չպետք է գրվի մի բառ, որը միտված չլինի դեպի ... նախորոշված պլանը: ... Անտեղի երկարությունից պետք է ... խուսափել»;

Մաս 3
Թղթակցություն

Գլուխ 7
Տեղեկություններ գտնել եւ փաստեր հավաքել

Մուտք

Նշանակալի տեղեկատվությունը ձեւավորվում է դիտարկումներից, հարցազրույցներից եւ հետազոտություններից: Հավաքված նյութը լրացվում է լրագրողի ընդհանուր եւ հատուկ գիտելիքներով: Լրագրողի նպատակն է ընթերցողին կամ ունկնդրին ապահովել դեպքի մասին փաստացի նյութով, ինչպես նաեւ ներկայացնել դեպքի պատճառները եւ հետեւանքները:

Փաստահավաքման հիմքերը

Լրագրողները փաստերի զարմանալի հավաքողներ են: Նրանք օգտակար տեղեկությունները հավաքում են փոշեկուլի արտադրողականությամբ: Գիտակցելով, որ իրենց գրածի արդյունավետությունը մեծապես կախված է լինելու իրենց ժողոված փաստական նյութից՝ լրագրողներն անդուլ կերպով կատարելագործում են լրահավաքման իրենց հմտությունները: Նրանք սովորում են, թե ինչպես տեղեկություններ դուրս քաշել չկամ աղբյուրներից եւ ինչպես մարդկանց օգնել, որ իրենց ազատ պահեն տեսախցիկի առջեւ: Նրանք սովորում են, թե ինչպես օգտագործել հետազոտության նյութերը, որոնք կարող են քաղվել ամեն տեղից՝ տարեգրքերից մինչեւ համակարգչային աղբյուրները:

Լրագրողներն անհրաժեշտ տեղեկատվություն ստանում են երեք եղանակով՝ ուղղակի դիտարկում, հարցազրույց եւ հետազոտություն:

Ուղղակի դիտարկում

Տեղեկատու լրագրությունը հիմնվում է փաստերի վրա, իսկ ամենից համոզիչ են այն փաստերը, որոնք լրագրողը հավաքել է ուղղակի դիտարկումների միջոցով:

Փենի Լերնուն, որը Լատինական Ամերիկայում մի շարք թերթեր էր ներկայացնում, հոդված էր պատրաստում բոլիվիական

հանքագործների մասին, որոնք ծանր պայմաններում աշխատում են Անդերի բարձր լեռնային շրջաններում: Լերնուն հաստատ որոշել էր հանքափորներին դիտել աշխատանքի ժամանակ, չնայած լսել էր, որ նրանք երբեմն այցելուների վրա դինամիտ են նետում եւ հատկապես կասկածամտորեն են տրամադրված կանանց նկատմամբ, որոնք, ըստ հավատալիքների, դժբախտություն են բերում:

Նա տղամարդու շորեր հագավ եւ միացավ ինժեներին, որը հանձն էր առել նրան ուղեկցել հանքահոր: «Սիգլո Վեհնթե հանքահորի խորքերում էինք,- վերհիշում է նա,- երբ մոտեցավ մի հանքափոր՝ երեսին ժպիտ, իսկ ձեռքում՝ դինամիտի մի ձող»:

«Խուճապի մեջ չընկնեք,- գոռաց ինժեները,- ուղղակի վազեք»:

Միջանցքը կտրուկ թեքվում էր, այդտեղ էլ նրանք խցկվեցին հենց այն պահին, երբ դիտամիտը պայթեց: Լերնուն ողջ մնաց եւ գրեց իր պատմությունը:

Ուղղակի դիտարկումները թույլ տվեցին, որ AP-ի թղթակից Նենսի Շուլինզը որսա ուղեղը վնասված մի 8-ամյա տղայի կյանքի դառը պահերը. վերջինիս արիությունն օգնում էր նրան հաղթահարել հսկայական դժվարություններ: Շուլինզը զրուցեց մի քանի հարեւանների հետ, ովքեր օգնում էին Մեթյուին վերականգնվել: Նա տեսավ, թե ինչպես է պատանին չարչարվում՝ ձեռքերն ու ոտքերն օգտագործելու համար: Երբ նա հեռանում էր, պատանին «իր հենակներին փոկերով կապված» «մեծ ճիգերով սովորում էր սողալ»: Հենց որ ինքը հասավ դռանը, գրում է Շուլինզը, տեսավ, թե ինչպես Մեթյուն «երեսի առաջ մի ձեռքը տարուբերում է ետ ու առաջ»: «Նա ձեզ համբույրներ է ուղարկում»,- բացատրեց մայրը:

Ստորերկրյա սարսափը: Ֆիլադելֆիայում թերթերը նյութեր էին տպագրում քաղաքի մետրոյում տեղի ունեցող հանցագործությունների, ուշացումների եւ վթարների մասին: Մեկում հաղորդվում էր քաղաքում հայտնի իրավաբանի մասին, որին ծեծել էին, բռնաբարել եւ թողել, որ մեռնի մութ ռելսուղիների վրա: Կնոջը գտել էին հարձակումից 18 ժամ անց:

«Ֆիլադելֆիա» ամսագրի թղթակից Մայք Մալոուն որոշեց ուսումնասիրել մետրոյի համակարգը: Նա հարցազրույցներ անցկացրեց հանցագործությունների զոհերի հետ, ոստիկանության

հետ դուրս եկավ պարեկության, աշխատեց մետրոյի վագոնավարների հետ եւ սեզոնային տոմսով ամիսներ շարունակ երթեւեկեց մետրոյով: Նրա նյութը՝ «Սարսափի թունելը», ներառում էր հետեւյալ դիտարկումները.

> … դժոխք տանող մայրուղի … խավար, մահացու սարսափի 40 մղոն … 40 մղոն, ուր հարբածները վայր են ընկնում իրենց սեփական փսխունքի մեջ, կաղկանձող դեռահաս փանքերը միզում են բոլորի աչքի առաջ, անճոռնի մուրացկանները դրամը ոչ թե խնդրում են, այլ պահանջում, դա 40 մղոն է, ուր տարեցները չափազանց ահաբեկված են, որ իրենց շուրջը նայեն, միայնակ կանայք չափազանց սարսափած են, որ խոսեն …

Միայն ուղղակի դիտարկումը կարող էր ստեղծել այս տողերում առկա լարումն ու սարսափը:

Ձկնորսական պատմություն: Թամփայի ծոցի ցցամածի՝ էստակադի վրա երկու ձկնորս փորձում էին իրենց բախտը: «Սենթ Փիթերսբերգ Թայմս»-ի արտահաստիքային թղթակից Ջեֆ Քլինքենբերգը եւ մի այլ թղթակից «ոչինչ չէին բռնում»,- ինչպես պատմում է Քլինքենբերգը, երբ նրանց կողքով անցավ մի ձկնորս, մոտ 60 ֆունտ հանդերձանք շալակած:

Ձկնորսը նայեց Քլինքենբերգին ու նրա գործընկերոջը եւ ծիծաղեց: «Դուք դրանցով երբեք ոչինչ չեք բռնի»,- ասաց նա՝ մատնացույց անելով նրանց հանդերձանքը:

Հետո նա սկսեց խոսել «Ծեր Հիտլեր» անունով շնաձկան մասին, որին նա հաստատ որոշել էր բռնել: Քլինքենբերգին հաջողվեց ձկնորսին մի քանի հարց տալ, մինչ վերջինս կշարունակեր իր ճանապարհը: Լրագրողները շարունակեցին ձուկ որսալ, բայց Քլինքենբերգը մտացրիվ էր: Նա մտածում էր, որ այդ մարդու մասին արժե մի բան գրել:

Երկու շաբաթ անց Քլինքենբերգը զանգահարեց այդ ձկնորսին եւ պայմանավորվեց հանդիպել ցցամածի վրա:

«Ես գնացի նրա հետ: Երեկոյան ժամը 6-ին կամրջի մոտ էինք եւ մնացինք մինչեւ գիշերվա ժամը 2-ը՝ ժամանակ վատնելով շնաձկների ու «լեյդիձկների» վրա»,- պատմում է Քլինքենբերգը: Քլինքենբերգը վերադարձավ աշխատանքի եւ այդ պատմության համար մեքենագրեց երեք էջ նշումներ՝ մեկ նիշ ինտերվալով: Այնու-

հետեւ նա գրեց.

> Ռոն Սուինթը մթության մեջ հառաչում էր՝ հիշելով «Ծեր Հիտլեր» անունով շնաձկան՝ Թամփա ծոցի ամենամեծ շնաձկան մասին, իսկ մեքենաները շառաչյունով սլանում էին ցցամածի կամրջով: Մեկը մեքենայից ձայն տվեց, եւ Սուինթն ինքնաբերաբար ընկրկեց: Նրան մի քանի անգամ հարվածել էին անցնող մեքենաներից դուրս նետած գարեջրի տուփերով: Մի հսկա բեռնատար այնքան արագ սլացավ, որ կամուրջը ցնցվեց: Օդում կախված էր վառելիքի ծուխը:
>
> Առաջին շնաձուկը «Ծեր Հիտլերը» չէր, բայց դա էլ մեծ ձուկ էր, մի շնաձուկ, որին Սուինթը հետո կշռեց, քաշը 500 էր, որը երեք ֆունտանոց մի կենդանի «լեյդիձուկ» խայծ էր կուլ տվել եւ լողացել Թամփայի լույսերի ուղղությամբ: Շնաձուկը քիչ էր մնացել սպաներ Սուինթին …

Նորից տեսնում ենք, որ դեպքին ներկա եղած թղթակիցը կարողանում է ընթերցողների համար այն կենդանի ներկայացնել:

> Էռնեսթ Հեմինգուեյը գրողի իր կարիերան սկսեց որպես թղթակից եւ ժամանակ էր խլում գեղարվեստական երկեր գրելուց, որ լուսաբանի պատերազմական գործողությունները եւ միջազգային իրադարձությունները: Երբ Իտալիայի դիկտատոր Բենիտո Մուսոլինին մամուլի ասուլիս էր հրավիրել, նրա աշխատասենյակ հրավիրված թղթակիցները Մուսոլինիին գտան գրասեղանի մոտ՝ ակնհայտորեն խորասուզված ընթերցանության մեջ: Մինչ այլ թղթակիցներ կանգած սպասում էին, Հեմինգուեյը ոտնաձայրերի վրա մոտեցավ, որ տեսնի, թե Մուսոլինին ինչ գիրք է կարդում: «Դա ֆրանսերեն-անգլերեն բառարան էր, գլխիվայր պահած»,- գրեց Հեմինգուեյը իր նյութում:

Ոչ միշտ է հնարավոր դեպքի վկան լինել: Բանկ են թալանել, բեռնատարը հարվածել է մի այլ ավտոմեքենայի, հեղեղումների հետեւանքով քանդվել է կամուրջը: Այդ դեպքերն այնքան արագ են կատարվել, որ լրագրողը կարող էր դեպքի վայրում լինել միայն բախտի բերումով: Նման դեպքերում թղթակիցը տեղեկությունների համար դիմում է աղբյուրներին՝ վկաներին եւ պաշտոնյաներին:

Կապիտուլյացիայի ժամանակ: Խորաթափանց լրագրողների դիտարկումները չեն սահմանափակվում միայն նշանակալին եւ խոշորամասշտաբը արտացոլելով: Հաճախ մի աննկատելի բան ամբողջական է դարձնում պատկերը, որն էլ դեպքը դնում է իմաստալից հեռանկարի մեջ:

Հոմեր Բիգարթը՝ իր Ժամանակի մեծագույն թղթակիցներից մեկը, «Միսսուրի» ռազմանավի տախտակամածին էր այն պահին, երբ Ճապոնիայի արտաքին գործերի նախարարը ստորագրում էր անվերապահ կապիտուլյացիայի փաստաթուղթը, որով եւ ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Ներկայացնում ենք Բիգարթի «Հերալդ Թրիբյուն» ուղարկած հաղորդագրության առաջին երեք պարբերությունները:

Ճապոնիան, հատուցելով Փըրլ Հարբորում սկսած իր անխոհեմ խաղի համար, այսօր առավոտյան 9:05 դուրս եկավ մեծ տերությունների շարքերից, երբ արտաքին գործերի նախարար Մամորու Շիգեմիցուն ստորագրեց անվերապահ կապիտուլիացիայի մասին փաստաթուղթը:

Եթե գերիների ճապոնական ճամբարներում տեղի ունեցած վայրագությունների մասին հիշողություններն այդքան թարմ չլինեին, կարելի էր խղճալ Շիգեմիցուին, երբ նա իր փայտե ոտքով կաղին տալով շարժվում էր դեպի բրդյա կանաչ կտորով ծածկված սեղանը, որտեղ նրան սպասում էին թղթերը:

Նա ծանր հենվել էր իր գավազանին եւ դժվարությամբ նստեց: Երբ նա ստորագրում էր, սեղանին հենած գավազանը վայր ընկավ ռազմանավի տախտակամածին:

Մարտադաշտում: Բիգարթը լուսաբանել է ցամաքային պատերազմը Եվրոպայում եւ վկա է եղել նրա մի քանի ամենից արյունալի ճակատամարտերին: 1943 թվականին Իտալիայում նա Հինգերորդ բանակի հետ տեսել է պատերազմի անմարդկային դեմքը: Ահա մի պարբերություն մի նյութից, որը նա պատրաստել էր ճակատամարտի դաշտից վերադառնալուց հետո:

Դաշտի հեռավոր ծայրում ընկած էին մի քանի սպանվածներ: Մի տղա ճզմված ընկած էր ոչ խոր նեղ խրամատում՝ ժայռի տակ: Մյուսը, դեռ հրացանը սեղմած, նայում էր ծառի ետեւից՝ չտեսնող հայացքը սեւեռած Լիրիի հարթավայրին: Երրորդը երեսնիվայր փռված էր այնտեղ, որտեղ վայր էր ընկել: Նա լսել էր գերմանական արկի զգուշացնող սուլոցը եւ ընկել էր փորի վրա, բայց հարթ գետնին, որտեղ թաքնվելու տեղ չկար: Պարզ է, որ նրան վայրկենապես սպանել էր ինչ-որ բեկոր, քանի որ պայքարի հետքեր չէին երեւում:

Ածխահանքում: Երբ դադարեց «Թրիբյունի» հրատարակությունը, Բիգարթը աշխատանքի անցավ «Նյու Յորք Թայմս»-ում, որը եւ նրան ուղարկեց Քենթուքի՝ գրելու ածխահատների շրջանում գործազրկության մասին: Նա ժամանակ չխնայեց, որ հայացք նետի բնապատկերի վրա:

Վտակները լցված են աղբով, փակված են գլաքարերով եւ տիղմով, որը գոյացել է բաց հանքերի շահագործման հետեւանքով: Բլուրների լանջերը, որոնք պետք է համատարած շողշողային աշնանային գույներով, կտրտված են տգեղ սանդղավանդներով, որտեղ բուլդոզերները եւ հողափոր մեքենաները անտառը քանդել էին, որ հասնեն նրա տակ գտնվող ածուխին:

Բառերով շնչավորած այս պատկերները, ամբողջովին ստեղծված լրագրողի անողորմ բառերի վրձնահարվածներով, ներգործում են մանրամասնություններով, մերկ շրջապատում սփռված դիտարկումների գոհարների շնորհիվ: Մի հիացած գործընկեր ասել է Բիգարթի մասին. «Նա տեսնում է շատ բաներ, որոնք մենք չենք նկատում»:

Բիգարթը, որին գործընկեր թղթակիցները համարում էին երբեւէ եղած լավագույն թղթակիցը, միանգամից փայլուն չի սկսել: Նրա «աստղը» երկար ճանապարհ է անցել: Դուրս մնալով քոլեջից՝ նա սկսեց ցրիչ աշխատել «Թրիբյունում»: Տղան լուրերը վազեցնում էր շարվածքի սենյակ, սուրճ ու կարկանդակ էր հասցնում իրենց գրամեքենաներն հակված թղթակիցներին եւ բոլորին օգնում: Այդպես չորս տարի, մինչեւ վերջապես իրեն ցույց տալու հնարավորություն տրվեց՝ հանձնարարվեց լուսաբանել Նյու Յորք - Ֆլորիդա երկաթգծի բացումը: Նա գնաց սխալ ռելսուղի եւ իր նյութի մեջ սխալ երկաթուղագիծ նկարագրեց:

Բիգարթը խորանում էր յուրաքանչյուր հանձնարարության մեջ՝ փնտրելով դեպքերի պատճառները եւ հետեւանքները: Համառությունը նրան հաճախ անախորժությունների մեջ էր գցում այն երկրներում, որտեղ ճշմարտությունն այն էր, ինչը հայտարարում էին իշխանությունները: Նրան վտարել են Հունգարիայից, Սիրիայից, Վիետնամից, Սաուդյան Արաբիայից եւ այլ երկրներից:

Նա նաեւ արհեստավոր էր՝ վերջնաժամկետից առաջ ամեն մի որպեն օգտագործում էր իր նյութի վրա աշխատելու համար: Վիետնամում աշխատած մի գործընկեր ասում էր, որ Բիգարթը «իր նյութի վրա աշխատում էր ավելի շատ, քան մեզանից որեւէ մեկը»: Երբ այլ լրագրողներ արդեն հանձնում էին իրենց նյութերը, «Հոմերը դեռ իր դյուրակիրի մոտ նստած մի բառ էր ջնջում, որովհետեւ հիշել էր ավելի լավը»

Ամբոխի առաջին շարքերը խցկվելը, աղբյուրներին շփոթեցնող հարցեր տալը, համագործակցել չցանկացող պաշտոնյաների՝ լրագրողներից ազատվելու փորձերը կասեցնելը - սրանք կարող են լինել թղթակցի ամենօրյա աշխատանքը: Որոշ նորաթուխ լրագրողներ կարող են այսպիսի պահվածքը համարել ագրեսիվ եւ անկիրթ: Լրագրողը ոչ մի դեպքում անքաղաքավարի չպետք է լինի, սակայն նրա պարտքն է տեղեկատվություն հավաքել մարդկանց համար, ովքեր ուզում են եւ կարիք ունեն իմանալու, իսկ սկսնակները պետք է հաղթահարեն իրենց ամաչկոտությունը:

Պարսից ծոցի պատերազմի ժամանակ մարտի ուղղակի դիտարկումներին թույլ էին տալիս մասնակցել միայն սահմանափակ թվով թղթակիցների, որոնցից կազմում էին լրագրողների խմբեր: Զինվորականներն ընտրում էին այցելության վայրերը եւ ուղեկցում էին լրագրողների խմբերին: Վերադառնալով՝ լրագրողներն իրենց դիտարկումները կիսում էին գործընկերների հետ: Մամուլի ներկայացուցիչները տանել չէին կարողանում այդ խմբերը: «Լրագրողները տեղ էին հասնում մարտը վերջանալուց առնվազն երկու օր անց», - ասում էր AP-ի թղթակից Ջորջ Էսփերը: «Մեզ նաեւ հեռու էին պահում (եւ կարծում եմ միտումնավոր) պատերազմի որեւէ սարսափ, ասենք՝ ամերիկյան կորուստները, տեսնելուց»:

Հարցազրույցներ

Ինչպես տեսանք, ուղղակի դիտարկումները լրագրողին ապահովում են վառ մանրամասնություններով, որոնք կենդանություն են հաղորդում նյութին: Բայց ճշմարտությունն այն է, որ փաստեր հավաքողը սովորաբար վճռական պահին ներկա չի լինում եւ, հետեւաբար, պետք է վստահի դեպքի վկաներին եւ մասնակիցներին:

Հեղեղված ագարակները դիտող թղթակիցը նկատում է մի քանդված կամուրջ: Իր նյութին կենդանություն հաղորդելու համար թղթակիցը կաշխատի գտնել մեկին, ով տեսել է, թե ինչպես է ջրի հոսանքը քշում կամուրջը:

Բանկի կողոպուտի անհրաժեշտ մանրամասնությունները եւ երանգները թղթակիցը կստանա, երբ զրուցի բանկի աշխատակիցների ու այն հաճախորդների հետ, որոնք ներկա են եղել կողոպուտին: Մանրամասն հարցազրույց կվերցնի գանձապահից, որի դրամարկղը կողոպտել են:

Ընկերության տարեկան հաշվետվության հեղինակը թվերի անվերջ սյունակներին կենդանություն կհաղորդի ընկերության նախագահից վերցրած հարցազրույցով՝ տարեկան գործունեության մասին նրա մեկնաբանություններով:

«Ցնորված եպիսկոպոսները»: Երբ Բոնի վան Գիլդերին լրագրության դասի համար հանձնարարեցին նյութ պատրաստել փողոցային բանդաների մասին, նա հույս ուներ բանդան աննկատ դիտել: Դա չհաջողվեց եւ նա պետք է զրուցեր աղբյուրների հետ:

Տեղեկություններ ստանալու համար Վան Գիլդերը կարող էր վստահել միայն ոստիկանությանը: Նա հարցազրույցներ ունեցավ ոստիկանական սպաների հետ: Նաեւ ուսումնասիրեց ոստիկանական փաստաթղթերը՝ թերթերից կտրտած քաղվածքների հետ միասին: Բայց կուզենար ավելի ուղղակի կապվել բանդայի հետ: Նա գտավ Թայմս հրապարակի բանդան՝ «Ցնորված եպիսկոպոսներին», եւ զրուցեց մի քանի անդամների հետ:

Ահա, թե ինչպես է սկսվում նրա պատմությունը:

Փայլուն ունկնդիրը: «Վաշինգթոն Փոսթ»-ի աշխատակից Բոբ Վուդուորդը իր վեց ամենից լավ վաճառվող գրքերի համար տեղեկություններ էր հավաքել, որոնք շատ քչերն էին ի վիճակի հայթայթել: Ինչպե՞ս: Նրա հետ աշխատող մարդիկ, ըստ «Նյու Յորք Թայմս»-ում Վուդուորդին նվիրված ակնարկի, ասում են. «Նրա տարբերիչ նշաններն են՝ խնամքով նախապատրաստվելը եւ կարեւոր աղբյուրների հետ նորից ու նորից զրուցելը»: Նրա մեծագույն տաղանդը, ասում է Քարլ Բերնսթայնը, որի հետ Վուդուորդը գրել է Նիքսոնին եւ Ուոթերգեյթին նվիրված «Նախագահի ամբողջ շքախումբը» գիրքը, «փայլուն ունկնդիր լինելն է»:

Կառավարության մամուլի ծառայության աշխատակիցը նկարագրում է Վուդուորդի ոճը որպես «զինաթափող: Նա ասում է, օրինակ, այսպիսի բաներ՝ կարո՞ղ եք ինձ այս բանում օգնել»:

Վուդուորդը կատարում է իր տնային աշխատանքը՝ խնամքով պատրաստվելով հարցազրույցներին: Երբ նրան պետք էր կարեւոր տեղեկություններ ստանալ մի ծովակալից, նա հարցազրույցը սկսեց՝ գովաբանելով ծովային սպայի 20 տարի առաջ գրած գիրքը: Վուդուորդը նախորդ գիշերվա կեսն արթուն էր մնացել եւ կարդացել գիրքը:

«Դուք նրա հետ ինչպիսի՞ հարաբերություններ եք հաստատել»: Այս հարցը տվեցին Ծերիլ Ջեյմսին իր նորածին մանկանը լքած մի մոր հետ հարցազրույցի կապակցությամբ: Ջեյմսը պատասխանեց. «Ես պարզապես աշխատում եմ անկեղծ ասել, թե ես ինչ եմ անում եւ այնպես անել, որ նա ինձ վստահի, իմանա, որ ես իրեն տված խոսքս կպահեմ: Դրանից բացի, երբ ես ի վերջո հարցազրույց էի անցկացնում նրա հետ, ինչպես բոլորի հետ զրուցելիս, ես աշխատում էի հանգիստ հարաբերություններ հաստատել, ինքս լինել մարդկային, որ նա հասկանա, որ ես լրատվամիջոցների հրեշ չեմ»: «Սենթ Փիթերսբերգ Թայմս»-ի հոդվածագիր Ջեյմսը շահեց 1991 թվականի Փուլիթցերյան մրցանակը իր հոդվածաշարի համար, որում նկարագրվում էին երեխայի լքումը, մոր ձերբակալությունը, դատավարությունն ու դրանց հետեւող իրադարձությունները:

Երբեմն հեռախոսը կարող է լինել աղբյուրին հասնելու միակ միջոցը, բայց միշտ վտանգ կա, որ զրուցակիցը պարզ չի լսի: Թենեսի նահանգի Օուք Ռիջ քաղաքի «Օուք Ռիջեր»-ը տեղական դեղագործին շնորհած մրցանակը նկարագրում է որպես «Հին Վիեննայի գավաթ»: Ոչ, դա ավստրիական գարեջրի բաժակ չէր: Իրականում, ինչպես թերթը նշել էր ուղղման մեջ, դեղագործին հանձնել էին «Հիգիենայի գավաթ» մրցանակը (Հիգիենան հին հույների առողջության աստվածուհին է):

«Մի բան, որում ես հաստատ համոզված եմ, այն է, որ մասնագետներին անընդհատ ցիտելը թղթակիցների համար շատ հեշտ ճանապարհ է: Իմ կարծիքով, գոյություն չունի այնպիսի բան, որը կոչվում է կովբոյների մասնագետ: Կովբոյների միակ մասնագետը կովբոյն է: Եվ միակ ճանապարհը պարզելու եւ գնահատելու, թե ինչի նման է նրանց կյանքը, նրանց հետ համատեղ աշխատելն է, նրանց հետ դուրս գալը եւ նրանց կողքին լինելը, պարզապես նրանց հետ թրեւ գալը: Ես պարապ-սարապ թրեւ գալու նվիրված կողմնակիցն եմ»:

Ուիլյամ Բլանդել, «Ուոլ Սթրիթ Ջորնալ»

Ատամնաբույժներ եւ ֆոտոթղթակիցներ: Երբ Նիքոն ընկերությունը որոշեց փոխել իր գովազդային գործակալությունը, կես դյուժին կազմակերպություններ մրցակցության դուրս եկան 15 միլիոն դոլարանոց պայմանագրի համար: Հաղթողը «Ամիրատի եւ Փուրիս»-ն էր, իսկ հաղթանակի պատճառը, ինչպես նշում է նրա նախագահը, այն էր, որ իրենք շաբաթներ են ծախսել՝ պարզելու, թե ինչպես են օգտագործվում Նիքոնի ապարատները:

Նրանք զրուցել էին ատամնաբույժների հետ, որոնք Նիքոնի ապարատներն օգտագործում են վերականգնողական ատամնաբուժության մեջ: Գործակալության ներկայացուցիչները Սաուդյան Արաբիայում զրուցել էին Պարսից ծոցի պատերազմը լուսաբանող ֆոտոթղթակիցների հետ, որպեսզի պարզեին, թե նրանք ինչ սպասումներ ունեն իրենց լուսանկարչական սարքավորումներից:

«Մենք լիովին սուզվել էինք շուկայի մեջ»,- պատմում է գործակալության նախագահ Մարտին Փուրիսը: Նիքոնը որոշեց, որ գործակալության տեղեկատվություն հավաքելու ոճը խոսում է նրա ստեղծագործական կարողությունների մասին:

Հետազոտություն

Մենք ուսումնասիրեցինք տեղեկատվությունների երկու հիմնական աղբյուրները՝ ուղղակի դիտարկումները եւ հարցազրույցները: Երրորդ ասպարեզը, որը գրավում է լրագրողին, զեկուցագրերի, փաստաթղթերի, տեղեկանքների հսկայական գանձարանն է: Գանձերն ընդգրկում են թերթերի կտրվածքներ, կառավարական զեկուցագրեր, ինչպիսին մարդահամարի տվյալներն են, դատական փաստաթղթեր, ոստիկանական գործեր, հեռուստագրադարանների տեսանյութեր, բյուջեներ, հարկերի մասին գրանցումներ: Կարելի է էջեր լցնել մատչելի նյութերի թվարկումով, որոնց մեծ մասը կարող է լրագրողին օգտակար լինել:

Հոդվածների մեծ մասում միավորված են բոլոր երեք տեսակի աղբյուրները: Լերնուն օգտագործել է այն դիտարկումները, որոնք նա կատարել է Բոլիվիայի հանքերի ընդերքը կատարած իր ուղեւորության ժամանակ: Նա տեղեկանքներից ու փաստաթղթերից մանրամասն տեղեկություններ է հավաքել հանքերի արտադրողականության, հանքափորների աշխատավարձերի, հանքարդյունաբերող ընկերությունների շահույթների մասին: Նաեւ տեղեկություններ է ստացել ճարտարագետների, պաշտոնյաների եւ հանքերի հետ կապված այլոց հետ հարցազրույցներից:

Մալոուն երթեւեկել է մետրոյով, զրուցել ուղեւորների, վագոնավարների եւ ուղեւորափոխադրումների հարցերով զբաղվող պաշտոնյաների հետ եւ կարդացել է մետրոյի համակարգի մասին թերթերի բոլոր քաղվածքները, որոնք կարողացել է գտնել:

Ամեն օր հսկայական քանակությամբ տեղեկությունների են մշակվում դատարաններում, օրենսդրական մարմիններում, թերթերի ու ամսագրերի խմբագրություններում: Ամեն ինչ այնտեղ է: Լրագրողի միակ խնդիրն է՝ իմանալ, թե ինչն է առկա եւ ինչպես դրանց տեղը որոշել:

Ինչ կա այնտեղ: Սա իմանալը հեշտ չէ: Բայց այն լրագրողները, ովքեր գիտեն, թե ինչպես է աշխատում համակարգը, կարող են հասնել տեղեկանքներին ու փաստաթղթերին, քանի որ գիտեն, թե ինչը որտեղ է պահվում:

Ինչպես ստանալ: Պետության կողմից ֆինանսավորվող հիմնարկների եւ գործակալությունների բոլոր տեսակի տեղեկությունները, չնչին բացառությամբ, մատչելի են հասարակության համար: Քաղաքների, կոմսությունների, նահանգային եւ դաշնային հաշվետվությունները, փաստաթղթերը, ուսումնասիրությունները եւ նման բաներ բաց են լրագրողների համար: Որեւէ ոլորտում աշխատող թղթակիցը, որն ընկերացել է փաստաթղթերի պահպանմամբ զբաղվող մարդկանց հետ, սովորաբար դրանք ստանալու հնարավորություն է ունենում: Նյութերի մի այլ գանձարան է բազմազան հրատարակությունների երկար շարքը: Դրանք ձեռք բերելը դյուրին է դարձել համակարգչային տվյալների բազաների օգնությամբ:

Տվյալների բազաներ: Համակարգչային տվյալների բազան տեղեկատվության պահեստարան է, որը մեքենան կարող է կարդալ: Անհամար թերթեր, ինչպես նաեւ ամսագրերն ու հետազոտական աշխատանքներով զբաղվող հիմնարկները իրենց նյութերը ներմուծում են համակարգիչների մեջ: Համակարգիչ են ներմուծվում շատ պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաեւ՝ դատարանների եզրակացություններ, թեզերի թեմաներ եւ դիսերտացիաներ, նաեւ՝ վիճակագրական պաշտոնական այնպիսի տվյալներ, ինչպիսին մարդահամարի տվյալներն են:

Տվյալների բազան խնայում է թղթակցի ժամանակը, ապահովում է նրան ամենաթարմ տեղեկություններով եւ հնարավորություն է տալիս ստանալու տեղեկություններ, որոնք ոչ մի այլ տեղ չկան կամ կարելի է ձեռք բերել թանկ ճանապարհորդություններով կամ հեռախոսային զրույցներով: Որոշ թերթեր բաժանորդագրվում են միայն մի քանի տվյալների բազաների: Համալսարանական գրադարանների մեծ մասը մի քանիսն ունի: Իրավաբանական դպրոցն, օրինակ, կբաժանորդագրվի Lexis տվյալների բազային՝ իրավաբանական տեղեկություններ ստանալու համար, իսկ բժշկական դպրոցը կկապվի Medline-ին:

Թղթակցություն համակարգչի օգնությամբ: Համակարգիչը միայն տեղեկություններ հավաքելու գործիք չէ: Նրանով կարելի է նաեւ տեղեկությունները մշակել: Իսկապես, այն կարող է այնքան նյութ այնքան արագ տեսակավորել եւ դասավորել, որ լրագրողի համար համակարգչից օգտվելու գիտելիքներն անհրաժեշտություն են:

Երբ Չիքագոյի մոտակայքում գտնվող Փադոքի թերթերին հարկավոր էր իմանալ, թե ինչ եղան այն մարդիկ, ովքեր ձերբակալվել էին հարբած վիճակում մեքենա վարելու համար, թղթակիցները համակարգչի մեջ մտցրեցին 1500 հարբած վիճակում մեքենա վարելու համար ձերբակալությունների դեպքեր եւ նրանց դասակարգումը: Պարզվեց, որ ձերբակալվածների ավելի քան երկու երրորդը խուսափել է դատապարտումից: 15-ից միայն մեկն է բանտ ուղարկվել կամ մեծ տուգանք վճարել:

Համակարգչային սկավառակների վրա այժմ այնքան տեղական եւ կոմսություններին վերաբերող տվյալներ կան, որ ամեն մի թերթ կամ կայան կարող է մրցանակ շահող պատմություններ ստեղծել համակարգչի օգնությամբ: Ատլանտայի «Քոնսթիթյուշըն»-ը, օգտագործելով տեղական բանկից ստացած տեղեկությունները, ցույց տվեց բնակարանային վարկերի հարցում ռասայական խտրականության օրինակները եւ Փուլիթցերյան մրցանակ շահեց:

Ռոբերթա Հեյմանը իր թերթի՝ «Էվանսվիլ Քուրիեր»-ի համար կոմսության դատարաններում ուսումնասիրեց մեկ տարվա ընթացքում քրեական գործերով ձերբակալությունները : Նա ուզում էր իմանալ՝

- Գործերի որ տոկոսով էին դատապարտյալներն իրենց մեղավոր ճանաչել:

- Բանտ ուղարկված սպիտակների եւ սեւամորթների տոկոսը:
- Հասարակական պաշտպանների ծանրաբեռնվածության աստիճանը:

Նա հայտնաբերեց. «Այնքան շատ մարդ է դատական հետապնդման ենթարկվել, որ համակարգն իրեն սպառել է եւ՛ համայնքն անվտանգ պահելու, եւ՛ աղքատների համար արդար ու հավասար արդարադատություն ապահովելու իմաստով»:

Դատարանները կաթվածահարությունից պաշտպանելու համար գործերի 84 տոկոսում դատապարտյալներն իրենց մեղավոր են ճանաչում (մեղավոր ճանաչում այն իմաստով, որ մեղադրյալը համաձայնում է իրեն մեղավոր ճանաչել ավելի թեթեւ մեղադրանք ներկայացնելու պայմանով, սպանության փոխարեն՝ չկանխամտածված սպանություն, մեծ չափերի հասնող հափշտակության փոխարեն՝ գողություն եւ այլն): Քրեական հանցագործությունների դեպքերի միայն 8 տոկոսն է հասնում դատարան:

Սեւամորթներն ավելի հաճախ են ձերբակալվում եւ բանտարկության դատապարտվում, իսկ ծանր հանցագործություն կատարած սեւամորթների 80 տոկոսը օգտվում է հասարակական պաշտպանի ծառայություններից, քանի որ չի կարող դատապաշտպան վարձել:

Կոմսության հասարակական պաշտպանները աշխատում են կես դրույքով, սակայն ծանրաբեռնվածությունն այնքան մեծ է, որ նրանք պարզապես խեղդվում են: Հեյմանի կարծիքով, այդ ծանրաբեռնվածությամբ աշխատելու համար անհրաժեշտ է լրիվ աշխատանքային օրով աշխատող պաշտպանների գրասենյակ: Մեծ ծանրաբեռնվածության արդյունքը մեղադրողների վրա գործադրվող ճնշումն է՝ մեղավոր ճանաչելու հարցում, որի հետեւանքով էլ ստացվում են ավելի թեթեւ դատավճիռներ կամ հանցագործներն ընդհանրապես չեն դատապարտվում:

Որքան էլ օգտակար լինի համակարգիչը, այն «չի փոխարինի թղթակցի որեւէ հիմնական հմտության: Համակարգչից քաղված տվյալները ձեզ հիմք կտան ավելի ուժեղ նյութ ստեղծելու, քան առանց դրանց: Դուք կարող եք ավելի շատ եւ ավելի լավ հարցեր տալ: Դուք ավելի լավ կպատկերացնեք, թե ում ուղղել հարցերը եւ որտեղ փնտրել ավելի շատ տեղեկություններ:

Բայց այս բոլորից քիչ օգուտ կլինի, եթե դուք չունենաք հարցազրույցներ վարելու հմտություններ, եթե դուք չկարողանաք ստեղծել լավ աղբյուրներ, եթե չկարողանաք ճիշտ փաստեր ստանալ եւ չիմանաք, թե ինչպես կազմակերպել եւ գրել նյութը»:

Ռոբերթա Հեյման, «Էվանսվիլ Քուրիեր»

Երբ «Հադսոն Դիսփաթչ»-ի (Յունիոն Սիթի, Նյու Ջերսի) թղթակից Ժանեթ Ուիլսոնը լսեց քաղաքի թմրամոլության դեմ պայքարի գործակալության ղեկավարի մասին ասեկոսեները, նա օգտվեց FOIA տվյալների բազայից եւ պարզեց, որ այդ մարդը 33 անգամ ձերբակալվել է այնպիսի մեղադրանքներով, ինչպիսիք են բռնաբարությունը, սպառնալիքները, թմրանյութերի օգտագործումը եւ վաճառքը, կոտրանքով գողությունը եւ ոստիկանական սպային վիրավորանքներ հասցնելը:

Պաշտոնական աղբյուրներ: Տեղական, նահանգային եւ դաշնային կառավարական գործակալություններից հոսում են օգտակար տեղեկությունների ամբողջ հեղեղներ: Մշտապես կատարվում են հետազոտություններ, որոնց արդյունքները հրապարակվում են: Պլանավորման տեղական գրասենյակները հետեւում են քաղաքի զարգացմանը: Նահանգային օրենսդրական մարմինը ֆինանսավորում է օրենսդրական ծառայությունը, որը կատարում է նահանգի համար կենսական նշանակություն ունեցող հետազոտություններ: Դաշնային մակարդակով այս հեղեղները դառնում են գետեր:

Հնարավոր է նույնիսկ ձեռք բերել Հետաքննությունների դաշնային բյուրոյի հաշվետվությունները: 1966 թվականին կոնգրեսն ընդունել է «Տեղեկատվության ազատության ակտ»-ը, որով հասարակության համար մատչելի դարձան դաշնային փաստաթղթերը եւ հաշվետվությունները:

Ակտում նշվում է, որ հասարակությունն իրավունք ունի ուսումնասիրել ամեն մի փաստաթուղթ, որն իր տրամադրության տակ ունի կառավարության գործադիր թեւը, ինը բացառություններով, որոնց մեջ են եկամտահարկերի մասին տեղեկությունները, ներհիմնարկային գրագրությունները եւ արտաքին քաղաքականության ու ազգային անվտանգությանը վերաբերող գաղտնի փաստաթղթերը: Հարցումը բավարարելու համար կառավարական հիմնարկին տրված է ժամանակի սահմանափակում, որը նա պարտավոր է պահպանել: Բոլոր դաշնային հիմնարկները եւ բոլոր նահանգներն ունեն Տեղեկատվության ազատության բաժիններ, որտեղ պետք է ուղարկել տեղեկությունների մասին հարցումները: Նյութը խնդրելիս որեւէ պատճառաբանման կարիք չկա, սակայն ճշգրիտ հարցումը օգնում է, որ հիմնարկն արագ պատասխանի: Վճարները չափավոր են:

Երրորդ հավելվածում ներկայացված են հարցման ընթացակարգը եւ նամակի նմուշը:

Ընդհանուր հաշվառման գրասենյակը անկախ դաշնային գործակալություն է, որի հրապարակած հաշվետվություններից ամբողջ խորագրեր կարելի է վերցնել: Տեղերում կարելի է օգտագործել վերջին հաշվետվություններից մեկը, որը վերաբերում է շշերով ջրին. «Սննդի եւ դեղանյութերի խորհրդի թույլ վերահսկողության պատճառով շշերով ջուրը կարող է պարունակել հնարավոր վնասաբեր վարակիչ նյութեր, որոնք արգելված են խմելու ջրի մեջ»: Իսկ ձեր հանրախանութում դրանցից չկա՞ն:

Հարցումներ: Հասարակական կարծիքի հարցումները նոր պատմությունների հիմնական աղբյուրներից են: Հարցումների ընթացքում համակարգված ձեւով պարզվում է, թե մարդիկ ինչ են ասում իրենց մտածած բաների մասին որոշակի ժամանակահատվածում: Դրանցով որոշում են, թե մարդիկ ինչ են մտածում խնդիրների լայն շրջանակի վերաբերյալ, հղիության արհեստական ընդհատումների օրինականացումից ու դպրոցներում աղոթելուց մինչեւ հասարակական դահլիճի կառուցումը: Հարյուրավոր կազմակերպություններ, ներառյալ թերթերն ու հեռարձակման կայանները, հարցումներ են կատարում:

Ուշադիր լինելու դեպքում հարցումների արդյունքներից կարելի է կանխագուշակել, թե մարդիկ ինչպես են վարվելու ամենամերձավոր ապագայում: Բայց քանի որ մարդիկ փոխում են իրենց կարծիքները, երկարատեւ կանխորոշումները կարող են մոլորության մեջ գցել: Ժամանակները եւս փոխվում են, եւ նոր հանգամանքները կարող են ազդեցություն ունենալ մարդկանց վրա:

Ներկայացնում ենք երկու զգուշացում եւ հինգ առաջարկություն, որ դուք հաշվի առնեք հարցումներն անցկացնելիս եւ արդյունքները մեկնաբանելիս:

1. Հարցումները պարզում են միայն այն, թե մարդիկ ինչ են ասում այն մասին, թե իրենք ինչ են գերադասում կամ պատրաստվում անել: Ոչ մի հարցումով հնարավոր չէ պարզել, արդյոք հարցվածները ճշմարտությունն են ասում: ԱՄՆ-ի սենատի ընտրությունների մի թեկնածու, որը եղել էր Կու Կլուքս Կլանի անդամ եւ նեոնացիստական գրականություն էր վաճառել օրենսդրի իր գրասենյակից, տարբեր հարցումների ժամանակ ստանում էր ձայների 22-ից 28 տոկոսը: Սակայն ընտրությունների օրը նա հավաքեց ձայների 44 տոկոսը: Պարզ էր, որ մարդիկ չէին ցանկացել հարցումներն անցկացնողներին հայտնել, որ պատրաստվում են քվեարկել ռասիստի օգտին:

2. Հարյուրավոր անհատներ, խմբեր եւ կազմակերպություններ հարցումներ են կատարում եւ պատրաստակամությամբ դրանք տրամադրում են լրատվամիջոցներին: Որպես կանոն, հարցումներ կատարող հիմնական կազմակերպությունները՝ Ռոփերի, Հարիսի եւ Գելափի, ուշադիր են իրենց հարցերի, հարցվողների ընտրության եւ արդյունքների մեկնաբանության խնդրում:

Ահա առաջարկությունները

1. Խնդրեք, որ հարցերը ձեզ տրամադրեն: Ուշադրություն դարձրեք բառերի ընտրության վրա՝ պարզելու՝ արդյո՞ք հարցերը պարզ են եւ անկանխակալ:

2. Պարզեք, թե հարցումը երբ է կատարվել: Վիճահարույց խնդիրների դեպքում մարդիկ, նոր զարգացումների հանդես գալուն զուգընթաց, փոխում են իրենց կարծիքները:

3. Ստուգեք, թե ի՞նչ ձեւով է կատարվել հարցումը՝ կտրոնների՞, հեռախոսային զանգերի՞, փողոցո՞ւմ: Այս տեխնիկաները կասկածի տակ են, քանի դեռ օգտագործում են, այսպես կոչված, ոչ պատահական նմուշը (ընտրանքը), նմուշ, որը չի ներկայացնում ամբողջ հասարակությունը: Արժանահավատ հարցումների ժամանակ, որպես կանոն, օգտագործվում են պատահական ընտրված հեռախոսի համարներ կամ, որն ավելի լավ ձեւ է, հարցումն անց են կացնում այցելելով տները: Պարզեք, թե ինչպես է որոշվել նմուշը եւ ովքեր են ընդգրկված նրա մեջ:

4. Իմացեք, թե ով է հովանավորել հարցումը:

5. Պարզեք արդյոք որոշվա՞ծ է սխալանքի սահմանը եւ ի՞նչ ճշգրտությամբ:

Սխալանքի սահման: Որքան մեծ է հարցման նպատակով պատահականորեն ընտրված մարդկանց քանակը, այնքան փոքր է սխալանքի սահմանը: 100-ից 95 հարցման համար սխալանքի սահմանը կլինի հետեւյալը՝

Հարցվողների թիվը	Սխալանքի սահմանը (%)
50	° 14
200	° 7
600	° 4
1 500	° 3
9 600	° 1

Այսպիսով, 1 500 հոգու հարցման դեպքում, եթե ընտրության արդյունքը Ջոունզի եւ Սմիթի միջեւ 51:49 է, դա կարող է նշանակել, որ իրականում արդյունքը տատանվելու է 54:46 Ջոունզի օգտին արդյունքից մինչեւ 52:48 Սմիթի օգտին: Տարբերությունը մեծ չէ:

Հեռուստատեսային հարցումներ: Հեռուստակայանները հեռուստադիտողների հարցումներ են կատարում՝ առաջարկելով նրանց զանգահարել մի ինչ-որ 900 համարով եւ գրանցել իրենց կարծիքները որոշակի հարցերի կապակցությամբ: Կայաններն արդյունքները հաղորդում են լուրի տեսքով: Ինչի՞ մասին չի հաղորդվում. որ կայանները գումարներ են գրպանում (1 զանգի համար 75 սենթից 1 դոլար մեկ րոպեի համար) եւ որ հարցումը հակա-գիտական է եւ չի արտացոլում հասարակական կարծիքը:

Այս հարցումները նաեւ հռչակված են իրենց ակնհայտ ոչ ճշգրտությամբ, ինչպես պարզել է «USA Today»-ը, երբ ուսումնասիրել է 81 տոկոս բարենպաստ գնահատական ստացած նյույորքցի ֆինանսիստ Դոնալդ Թրամփի օգտին գրանցված զանգերը, որը կնոջ ու պարտատերերի հետ կապված անախորժությունների մեջ էր ընկել: Պարզվեց, որ 7800 զանգերից 5700-ը կատարել էր միայն մեկ աղբյուր:

Թիրախային խմբեր: Համառոտ անդրադառնանք գովազդային եւ հասարակական կապերի գործակալությունների կողմից կիրառվող հաշվետվությունների տեխնիկային, որը երբեմն-երբեմն օգտագործում են նաեւ թերթերն ու կայանները: Հնարավոր

գնորդների վերաբերմունքը նոր սպորտային կոշիկների նկատմամբ պարզելու համար գործակալությունը ներկայացուցչական խմբի անդամներին հարցեր կտա ձեւի, գնի եւ գույնի մասին:

Գլխացավի նոր դեղի կապակցությամբ «Ադվիլ» ընկերությունը փորձարկել է միջին տարիքի կանանց համար գովազդի մի քանի եղանակ: Ինչը նրանք ամենից շատ էին հավանել, դարձել էր գովազդային արշավի հիմքը:

«Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ն ընթացիկ խնդիրների, առաջարկվող օրենքների, թեկնածուների մասին հարցեր է տալիս մասնագետների խմբերին: Պատասխանները դառնում են նոր պատմությունների ու մեկնաբանությունների հիմքեր: Թիրախ խմբի օգտակարության բանալին նրա կառուցվածքն է: Այն պետք է ներկայացուցչական լինի: Ընտրությունների չմասնակցող 18,19 եւ 20 տարեկանների վերաբերյալ հարցման համար մի կազմակերպություն ընտրեց այդ տարիքի երիտասարդ կանանց եւ տղամարդկանց մի խումբ: «Նյու Յորք Թայմս»-ն ընտրություններին չմասնակցելու վարքագծի վերաբերյալ իր հոդվածում մեջբերում էր թիրախ խմբի 18-ամյա ներկայացուցչին Դելավար նահանգից, որն ասում էր, թե ծնողները եւ ուսուցիչները բավարար աշխատանքներ չեն տանում, որ երիտասարդներին խրախուսեն մասնակցելու ընտրություններին: «Հենց որ դառնում ես 18 տարեկան, այնպես չէ, որ կարող ես պարզապես «միացնել» քվեարկելու սովորությունը, գնալ ընտրատեղամաս եւ ընտրել»:

PR աղբյուրներ: Տեղեկատվության կարեւոր աղբյուր են հասարակական կապերի գործակալությունը եւ նորությունների գրասենյակը: Լինի դա տեղեկություն շուկա հանվող նոր նախաճաշիկի մասին, թե բասկետբոլի տեղական թիմի մասին տեղեկատվական փաթեթ՝ հասարակական կապերի բաժինների աշխատակիցների աշխատանքը մեծ դեր ունի լուրերի հավաքման գործում: Լուրերի կեսից մինչեւ երեք-քառորդը սկիզբ են առնում հասարակության հետ կապերն ապահովող աղբյուրներից:

PR նյութերը ներկայացվում են հետեւյալ ձեւերով:

Հաղորդագրություն: Տեղեկություններ, որոնք աղբյուրի կարծիքով կարող են լուր կամ հոդված դառնալ:

Տեղեկատու թերթիկ: Նյութերի ուրվագիծ, որը կարող է օգտագործվել որպես նախահիմք:

Հայտարարություն դիրքորոշման մասին: Հասարակությանը ներկայացվում է աղբյուրի տեսակետը որեւէ խնդրի կապակցությամբ:

Տեղեկատվական փաթեթ: Մանրամասն եւ հաճախ խնամքով

մշակված նյութերի հավաքածու, որը սովորաբար լրացվում է լուսանկարներով:

Տեղեկատուներ: Առանց տեղեկատու նյութերի լրագրողն այնքան է պատրաստված իր հանձնարարությունները կատարելու, որքան «Թեքսաս Ռեյնջերների» հետ դաշտի կենտրոնը նետված Մանկական լիգայի խաղացողը: Նա անօգնական է: Սկսեք հեռախոսագրքից եւ բառարաններից: Այն քաղաքներում, որտեղ գոյություն ունեն քաղաքային տեղեկագրքեր, դրանք եւս կարեւոր աղբյուր են: Հոդվածագրի ձեռքի տակ է թերթի, գործակալության, կայանի ոճի ձեռնարկը: (Տես Բ հավելվածը:)

Այս չորսի կողքին են Համաշխարհային տարեգիրքը, քերականության մի լավ դասագիրք, քարտեզների ատլասը, նահանգի ավտոճանապարհների քարտեզը եւ քաղաքի պլանը: Շատ լրագրողներ իրենց հետ ունենում են նաեւ գրպանի բառարան:

Խմբագիրները կարող են ներել անհաջող լիդը կամ վատ կառուցված նյութը: Լրագրողներից նույնիսկ լավագույնները ունենում են վատ օրեր: Սակայն խմբագիրները փնթփնթում են ուղղագրական սխալների համար: Ուղղագրական սխալով գրված բառի համար ոչ մի ներում չկա: Նույնիսկ ավելին, խմբագիրները միշտ սխալներով գրողներին համարում են ալարկոտ, բառարանում բառը ստուգելու համար չափազանց ծույլ: Այն հոդվածագիրը, ով բառարանի թերթերը շրջելու եռանդ չունի, հաստատապես իրեն ամբողջությամբ չի նվիրի հանձնարարությունը կատարելուն:

Գոյություն ունեն տասնյակ տեղեկատուներ: Բիզնեսի ոլորտի մասին գրող լրագրողը քաջ ծանոթ է «Սթանդարդ եւ Փուր»-ի շարքի բազմաթիվ գրքերին, «Դան եւ Բրադսթրիթ»-ի տեղեկատուներին եւ «Մուդի»-ի ձեռնարկներին: Գովազդի եւ հասարակական կապերի ոլորտում աշխատողները, ում անհրաժեշտ են վիճակագրական տվյալներ, ծանոթ են Սիմոնսի հաշվետվություններին եւ մարդահամարի տվյալներին:

Լրագրությամբ բոլոր զբաղվողները պետք է տեղյակ լինեն, թե ինչպես օգտվել հետեւյալ տեղեկատուներից՝

- Բարթլեթի «Հանրածանոթ մեջբերումներ»
- «Պարբերական գրականության ընթերցողի ուղեցույց»
- «Նյու Յորք Թայմս»-ի այբբենական ցանկ
- «Ով ով է Ամերիկայում»
- «Ամերիկացիների կենսագրությունների բառարան»
- «Ժամանակակից կենսագրություններ»

«Օգտվեք բոլոր մատչելի աղբյուրներից: Անպայման նայեք թերթի գրադարանը, որպեսզի տեսնեք, թե թերթն այդ մասին ինչ է գրել եւ զրուցեք տարիքով ավելի մեծ թղթակիցների հետ: Նրանք շատ բան գիտեն: Տեղի համալսարանի պրոֆեսորները հիանալի են մեկնաբանում տեխնիկական նորույթները: Եթե տեղում մասնագետներ չկան, նրանց հետ կապվեք հեռախոսով եւ գտեք նրանց, որտեղ էլ լինեն: Գրադարանավարները եւ պատմաբանները անգնահատելի աղբյուրներ են: Այդպիսին են նաեւ լավ լուսանկարիչները, որոնք տեսնում եւ հասկանում են բաներ, որոնք դուք կարող եք բաց թողնել»:

Ռոբերթա Հեյման «Էվանսվիլ Քուրիեր»

Հեղինակավոր աղբյուրներ: Երբեմն հանձնարարությունը այնքան բարդ է լինում կամ թղթակցի համար այնքան անծանոթ ոլորտից, որ նա հազիվ է կարողանում որոշել, թե ինչից սկսի: Այդ թեմային նվիրված լրագրային քաղվածքները շատ կցկտուր են, իսկ տեղեկատուները սահմանափակված են միայն նյութի մասին որոշ տվյալներով: Թղթակցին անհրաժեշտ է անցնել այդ նյութին վերաբերող արագացված դասընթաց, սակայն հանձնարարությունը պետք է արագ կատարվի, եւ խոր հետազոտությունների համար ժամանակ չկա:

Իր աշխատանքի երկրորդ օրը Յան Վոնգը, որպես Մոնրեալի «Գազեթ»-ի ծովային լուրերի թղթակից, մի հանձնարարություն ստացավ եւ ցուցում՝ արագ վերջացնելու այն, քանի որ հաջորդ օրը նրա համար մի նոր գործ էր նախատեսված:

Վոնգն արեց այն, ինչ թղթակիցներն անում են նման իրավիճակներում: Նա դիմեց տեղյակ մարդկանց՝ հեղինակավոր աղբյուրներին:

«Ես զանգեցի երեւի 20 հոգու,- պատմում է նա: -Ես զանգահարեցի բոլորին, ում գտա ծովային տեղեկատուի մեջ: Մարդիկ ինձ շատ օգնեցին, բայց ես զգում էի, որ խեղդվում եմ»:

Մարդիկ, ում հետ նա կապվեց, համբերատար գտնվեցին: Աստիճանաբար նա աղբյուրներից բավականաչափ տեղեկություններ հավաքեց, որ հասկանա քաղվածքների իմաստը եւ օգտագործի թերթի գրադարանում եղած այլ նյութեր:

«Մեկ օրում ես ահագին բան սովորեցի աղբյուրների, հեռախոսագրքերի, գրադարանների եւ քաղվածքների մասին»,- ասում է նա:

«Ես աշխատեցի նյութի վրա, մինչեւ որ համոզվեցի, որ ամեն ինչ ճիշտ է եւ երբ հանձնեցի խմբագրին, նա նայելուց հետո հավանություն տվեց՝ միայն մի քանի փոփոխություններ անելով:

Հենց մյուս օրը ես պետք է նյութ պատրաստեի Կանադայի ամենախոշոր նավթային ընկերության կողմից ամենամեծ նավաշինարանի ձեռքբերման մասին: Սա եւս նախորդ օրվա նյութի նման դժվար էր: Ես գաղափար չունեի այդ բաների մասին:

Սակայն նորից ինձ փրկեցին իմ միլիոն զանգերը եւ քաղվածքները: Նյութը տպվեց բիզնես հավելվածի առաջին էջում»:

Վոնգը հիշում է, թե որքան էր ամաչում այն հարցերից, որոնք նա ստիպված էր տալ աշխատանքի առաջին օրերին:

«Համոզված եմ, իմ աղբյուրները կարծում էին, որ ես հիմար հարցեր եմ տալիս»,- վերհիշում է նա:

Հոդվածի համար տեղեկություններ եւ նախապատմություն հավաքող թղթակցի համար գոյություն չունեն հիմար հարցեր, իսկ աղբյուրները, որոնք շահագրգռված են իրենց անհանգստացնող խնդիրների եւ իրենց մասին տեղեկությունների ճշգրիտ հաղորդման մեջ, քաջ տեղյակ են այդ մասին:

Լրագրողներն իրենց հիշողության գրքերում դատարկ էջեր են ունենում, սակայն խմբագիրներն ամեն ինչ գիտեն: Մի հեռուստատեսային թղթակից իմացել էր, որ 20 տարի արտասահմանում մնալուց հետո, Էվա Պերոնի աճյունը վերադառնալու է Արգենտինա: Դա կարեւոր լուր էր: Ծնչակտուր, նա զանգ է տալիս ցանցի երեկոյան լուրերի խմբագրին եւ գոռում. «Էվա Պերոնին ետ են բերում»: Դադար, հետո խմբագիրը պատասխանում է. «Տեսեք, կարո՞ղ եք նրանից անգլերեն հարցազրույց վերցնել»:

Ինչպես կառուցել նախապատմությունը

Ուսումնական ոլորտով զբաղվող ամառային պրակտիկանտը հարց տվեց իր հարեւան թղթակցին. «Ես ի՞նչ պետք է իմանամ այս ոլորտի մասին»: Պատասխանը շշմեցնող էր. «Ամեն ինչ»:

Բարի գալուստ լրագրության աշխարհ: Սա կարող է համարվել սկսնակի աշխատանքի ընդունման ծիսակարգ, սակայն հարեւան թղթակիցը ելնում էր իր փորձից: Բայց, միեւնույն ժամանակ, միշտ գոյություն ունի սկզբնակետ՝ պարզել, թե ինչպես են աշխատում այդ ոլորտի համակարգերը:

Ուսումնասիրեք համակարգը, ճանաչեք քաղաքը

Կրթություն - Ո՞վ է պատասխանատու: Տեսուչն ընտրվո՞ւմ է, թե՞ նշանակվում: Ինչպե՞ս է ֆինանսավորվում դպրոցական համակարգը: Դպրոցական խորհուրդը վերահսկո՞ւմ է ուսումնական ծրագիրը, դասագրքերի գնումը: Ինչպե՞ս են ընտրվում դպրոցների տնօրենները: Քանի՞ ավարտական դասարանցի է անցնում SAT կամ ACT թեստերը եւ որքա՞ն են քաղաքի եւ առանձին դպրոցների միջին միավորները: Ինչի՞ է հավասար ավարտական գործակիցը: Ինչպե՞ս են կատարվում գնումները դպրոցների համար՝ գնահարցումների՞, թե՞ բանակցությունների միջոցով:

Նման կարգի հարցեր կարելի է տալ ցանկացած ոլորտի վերաբերյալ, իսկ պատասխանները սկսնակ թղթակցի համար լավ մեկնարկ են ապահովում:

Քաղաք նոր ժամանած լրագրողը պետք է նաեւ շատ բան իմանա համայնքի մասին:

Քաղաքական գործընթացները: Ինչպե՞ս են ընտրվում քաղաքագլուխը եւ քաղաքային խորհուրդը: Ո՞վ է նշանակում ոստիկանության պետին: Իշխանությունը ում ձեռքին է՝ քաղաքագլխի՞, թե՞ խորհրդի: Ինչպե՞ս է աշխատում իրավական համակարգը:

Սոցիալական միջավայրը: Ովքե՞ր են քաղաքի ազդեցիկ մարդիկ: Ինչպիսի՞ն են մարդկանց հարաբերություններն իրար հետ: Համայնքի ռասայական, կրոնական եւ էթնիկական կազմը:

Քաղաքի տնտեսությունը: Ինչպե՞ս են մարդիկ փող վաստակում: Որո՞նք են հիմնական գործատուները: Ովքե՞ր իշխանություն ունեն: Ի՞նչ փոխհարաբերությունների մեջ են բիզնեսը եւ քաղաքականությունը:

Մեծ քաղաքների բնակարաններում ապրողներին գույքահարկի կիրառությունը այնքան չի հետաքրքրում, որքան փոքր քաղաքների եւ արվարձանների առանձնատների բնակիչներին: Այդահո նահանգի Թուին Ֆոլզի տնտեսությունը հիմնված է գյուղատնտեսական արտադրության վրա, իսկ Արիզոնայի Սիերա Վիստան արտոնություններով օժտված քաղաք է, արագ սննդի իր ցանցով եւ մոթելներով, որոնք սպասարկում են ճանապարհորդներին եւ մոտակա ռազմական բազայի ծառայողներին:

Երբ լրագրողները բավարար պատրաստություն չունեն, կարող են հիմար երեւալ տպագրված նյութերում եւ ծիծաղելի հնչել եթերում:

Տպագիր նյութ: Քաղաքի կաշառակեր քաղաքական գործիչը բանտից մի տառապալից աղերսանք էր ուղարկել, իսկ «Նյու Յորք Թայմս»-ը նրան ցիտել էր: 19-ամյա բանտարկության ժամկետը, ինչպես հայտարարել էր նա, ավելի երկար է, քան նման հանցագործությունների համար ստացել են այլոք: Երբ վերջանա դատապարտման ժամկետը, նա դուրս կգա որպես ծեր, խեղանդամ մարդ՝ բանտում թողնելով իր լավագույն տարիները:

Իրականում, դատապարտյալը ենթակա է ներման պատիժի մեկ-երրորդը կրելուց հետո, եւ քաղաքական գործչի 19 տարին փաստորեն կդառնա վեց տարի չորս ամիս:

Հեռարձակում: Միլիոն դոլար վաստակող վարողը Նյու Յորքի բնակիչների համար վատ լուր ունի՝ սպանությունները 11 ամիսների ընթացքում գերազանցել են նախորդ տարվա 12 ամիսների ցուցանիշը, քաղաքին տալով «ազգային ամենաբարձր գործակիցը»,- ասել է նա:

Կիսաճշմարտություն է: Նյու Յորքում տեղի է ունենում սպանությունների ամենամեծ թիվը ԱՄՆ-ում, տարեկան մոտ 2200: Իսկ գործակիցը մի քիչ այլ է: Գործակիցն ընդհանուր թիվը չէ, այն ընդհանուր թիվն է բաժանած բնակչության թվի վրա: Նյու Յորքում սպանությունների գործակիցը մոտ 29-ն է 100 000 բնակչի հաշվով: Վաշինգթոնում այն 72 է, իսկ ազգային գործակիցը 8,7 է 100 000 բնակչի հաշվով: Գործակիցը տալիս է հանցագործությունների նման երեւույթների ճշմարիտ պատկերը, քանի որ հաշվի է առնում բնակչության թիվը:

> «Ես կարծում եմ, որ միտքն իսկապես տեսնում է մանրամասնությունների: Առնվազն իմ միտքը: Այն տեսնում է իմանալ, թե ինչպես է աշխատում համակարգը, ինչ են մարդիկ իրար ասում, ինչպես են ապրում ...»:
>
> **Մյուրեյ Քեմփթոն, թղթակից եւ սյունակագիր**

Ուսումնասիրեք մամուլի մասին օրենքը եւ մամուլի պատմությունը

Լրագրողները նաեւ պետք է իմանան մամուլի մասին օրենքը եւ մամուլի պատմությունը: Զրպարտության եւ գաղտնիության մասին օրենքների իմացությունը կօգնի թղթակիցներին խուսա-

փելու տհաճ դատական վեճերից եւ կխրախուսի նրանց համարձակ լինել(մամուլի մասին օրենքը կուսումնասիրվի 5-րդ մասում):

Մամուլի պատմության իմացությունը լրագրողի առջեւ բաց է անում անցյալը: Գիտելիքները նրանց մասին, ովքեր նպաստել են, որ մամուլը դառնա ժողովրդավարության ամրոց, լրագրողին խիզախություն են տալիս, երբ նրա վրա հարձակվում են, տոկունություն, երբ առօրյան դառնում է ծանր աշխատանք եւ վստահություն, երբ լրագրությունը նսեմացվում է:

Երբ Դան Ռադերը CBS հեռուստակայանով լուսաբանում էր նախագահ Նիքսոնի գործունեությունը, Սպիտակ տան աշխատակազմի ղեկավարը նրան մեղադրեց ոչ ճշգրիտ եւ կանխակալ թղթակցությունների մեջ եւ փորձեց նրան զրկեց այդ ոլորտում աշխատելու հնարավորությունից: Նախագահի վերաբերյալ Ռադերի խիստ ելույթները նրան թշնամացրին Նիքսոնի եւ նրա օգնականների հետ: Ռադերը տեղի չտվեց: Նա գիտեր, թե որն է լրագրողի պարտականությունը եւ հաստատակամությամբ շարունակեց իր գործը:

Մի հեռուստաքննադատ Ռադերին նկարագրել է որպես «միակ անձնավորությունը, ցանցային լրագրությունը ծնել է Էդվարդ Ռ. Մարոուից հետո. վերջինս կարողանում էր հեռուստալուրերն ապահովել այնտեղ բացակայող խղճով»:

Հեռահաղորդումների լրագրության ցանկացած փառքի դահլիճում Մարոուի անունն ականավոր է: Որպես ռադիո- եւ հեռուստաթղթակից՝ նա ռադիո- հեռուստալրագրությունը պաշտոնական գործունեությունը միապաղաղ հաղորդելուց դարձրեց մի գործ, որը խորամուխ է լինում, թե հայտարարությունների ետեւում ինչ կա թաքնված: Նրա ավանդները դեռեւս պահպանվում են:

Հավաքեք հատուկ տեղեկություններ

Ուսումնական ոլորտը լուսաբանելու նշանակված մեր պրակտիկանտը այնքան լավ աշխատեց, որ քոլեջն ավարտելուց հետո թերթը նրան վարձեց այդ աշխատանքը շարունակելու համար: Նա արդեն պատրաստված էր: Նա գիտեր, որ հանրային կրթությունը հարձակումների է ենթարկվում, քանի որ չի կարողանում կրթություն ապահովել մեծ թվով պատանիների համար (ընդհանուր գիտելիքներ): Նա ուզում էր իմանալ, թե ինչու որոշ դպրոցներ լավ կրթություն են տալիս, իսկ մյուսները՝ ոչ, եւ ընթերցելով անհրաժեշտ նյութերը, դպրոցները գնահատելու համար նշեց որոշ ուղենիշներ (հատուկ գիտելիքներ):

Նոթատետրում հետեւյալ ուղենիշներ են.

- Ուժեղ տնօրեն
- Կարգապահ մթնոլորտ
- Բարձր պահանջներ աշակերտներից
- Տնային աշխատանքներ
- Աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում
- Հիմնական հմտությունների շեշտում
- Աշակերտների եւ ուսուցիչների աշխատանքի պարբերական գնահատում

Այցելելով դպրոցներ՝ թղթակիցը, հարցեր տալիս եւ դիտարկումներ կատարելիս, հիմք էր ընդունում իր ցուցակը:

Հատուկ գիտելիքների մակարդակը թղթակցին հատկապես անհրաժեշտ է, երբ հանձնարարում են լուսաբանել անծանոթ նյութ կամ կարճ ժամկետով պետք է փոխարինի մի այլ ոլորտի թղթակցի: Թղթակիցը, որը հարցազրույց է վարելու քանթրի երգեր կատարողի հետ, պետք է արագ որոշ բաներ կարդա, եթե նրա գիտելիքները սահմանափակվում են միայն ռոքով եւ ջազով: Երբ երգիչն ասում է, թե ինքը հավատարիմ է Ջիմի Ռոջերի ավանդույթներին եւ որ ուրիշ երգիչներ միավորներ են հավաքում Նեշվիլի ձայնասկավառակներ արտադրողների կողմից ներմուծած կոմերցիոն փափուկ հնչյունի շնորհիվ, թղթակիցը պետք է հասկանա, թե ինչի մասին է խոսում երգիչը:

«Բոսթոն Հերալդ Ամերիքըն» թերթում մի կարճ հաղորդում այսպես էր շարադրված:

Վաղը երեկոյան ժամը 8:30-ին Ջորդան հոլում Բոսթոնի Քաղաքային սիմֆոնիկ նվագախումբը (նվագավար Մաքս Հոբարթ) կներկայացնի Բեթհովենի դաշնամուրի 4-րդ կոնցերտը (մենակատար Սթեֆանի Բրաուն): Նախատեսվում է նաեւ Մուսորգսկու նկարների ցուցահանդես:

Թերթի շատ ընթերցողների այս նյութը կզվարճացնի: Դասական երաժշտությունից տեղյակները կհասկանան այն, ինչը չգիտեր թղթակիցը: Մուսորգսկին ռուս կոմպոզիտոր է եւ ունի մի գործ՝ «Պատկերներ ցուցահանդեսից» վերնագրով, որն էլ պետք է կատարվեր դաշնամուրի կոնցերտի հետ միասին:

Լրագրողներին աշխատանք տվող մարդիկ չեն ակնկալում, որ նրանք պետք է ամեն ինչ իմանան հենց սկզբից: Սակայն նրանք ակնկալում են, որ լրագրողները որոշ բաներ իմանան այն մարդկանց մասին, ում համար գրում են եւ իմանան, թե ինչպես օգտա-

գործել տեղեկատու նյութերը: Գործատուները ենթադրում են, որ լրագրողները պետք է ունենան սովորելու, գիտելիքների պաշարը հարստացնելու սովորություն: Եկեք հերթով ուսումնասիրենք այս սպասելիքները:

Մի հեռուստակայան հաղորդել էր, որ Նյու Յորքի քաղաքագլուխ Մարիո Կուոմոն հիվանդանոցում է: Հաղորդումից հետո թղթակիցներն անմիջապես կապվել են քաղաքագլխի մամլո քարտուղարի հետ՝ պարզելու արդյո՞ք Կուոմոն, որը նախագահության հնարավոր թեկնածու էր, հիվանդ է:

«Ասացեք նրանց, որ ես իմ առանձնատանն եմ եւ հեռուստացույցով դիտում եմ Նիքերի խաղը»,- ասում է Կուոմոն իր մամլո քարտուղարին, եւ նա էլ այս տեղեկությունը հաղորդում է լրագրողներին:

«Հնարավոր չէ,- առարկում է մի թղթակից: - Նիքերը Արեւմտյան ափին են, իսկ խաղը 11-ից շուտ չի սկսվի»: Քաղաքագլուխը դրանից հետո ստիպված էր խոստովանել, որ հիվանդանոցում մեջքի ցավերի կապակցությամբ սկաներային քննություն է անցել:

Ծանոթացեք լսարանի հետ

Ինչ-որ հոդվածագիրն անում է, ուղղված է որեւէ մեկին, եւ լրագրողը, ով հույս ունի գրածը հասցնել իր լսարանին, պետք է ճանաչի իր ընթերցողին կամ ունկնդրին: Լսարանից է կախված նյութի բովանդակությունը, լեզուն եւ ոճը:

Սպորտային շաբաթաթերթի հոդվածագիրը կարող է օգտագործել մասնագիտական լեզու, առանց բացատրելու, թե ինչ է նշանակում ERA, NBI կամ «կարմրասպիտակներ»: «Սեվընթին»-ում տպագրված հոդվածը սանրվածքների նոր քմահաճույքների վերաբերյալ «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ի մարքեթինգի բաժնում կներկայացվի մի քանի տողով:

Քանի որ հասարակությունը գնալով դառնում է ավելի ու ավելի բարդ, լրագրողները, հրատարակությունները եւ կայանները, որոնց կարելի է ներկայացնել որպես տեղեկատվություն վաճառողներ, դժվարանում են որոշել իրենց թիրախ խմբերը:

Թյուրիմացությունները կարող են թանկ նստել: Մի խոշոր կանադական թերթ, որի ընթերցողների մի ստվար հատված կազմում էին գործարարները, եւ որի գովազդներից ստացվող եկամուտները կտրուկ նվազել էին, խնայողության նպատակով որոշեց կրճատել որոշ

աշխատակիցների եւ մի շարք բաժիններ: Ամենազգալի կրճատումները կատարվեցին սպորտային խմբագրությունում: Տպաքանակը կտրուկ ընկավ: Թերթը աչքաթող էր արել այն փաստը, որ գործարարների մեծ մասը մոլի մարզասեր է:

Նոր կինը: Ի՞նչ կարելի է ասել 1990-ականների կնոջ մասին: Վերջապես ո՞վ է նա: Միայնակ մասնագե՞տ, որն ամուսնությունը հետաձգում է մինչեւ 30-ամյա տարիքը կամ էլ բոլորովին չի ամուսնանում: Տնային տնտեսուհի՞, որի կյանքը կենտրոնացած է երեխաների ու ամուսնու շուրջը: Ամուսնացա՞ծ կին, որը հավասարակշռում է աշխատանքն ու ընտանիքը:

Աշխատելով շահել գովազդային արշավը՝ «Ամերիքըն Թելեֆոն էնդ Թելեգրաֆ»-ը (AT&T)1990-ականների կանանց բնորոշեց որպես բոլոր երեք տեսակների պատկանող եւ տպագրեց գովազդներ, որտեղ երեքն էլ պատկերված էին: Երբ «Գուդ Հաուզինգ»-ը կնոջը ցույց տվեց որպես ամբողջ օրը տանը գտնվող մեկին, գովազդային արշավը տապալվեց... «Մեզ քննադատեցին բազմաթիվ կանայք, որոնց կարծիքով նոր ավանդապաշտությունը նշանակում էր վերադարձ խոհանոց»,- պատմում է գործակալության ստեղծագործական խմբի անդամներից մեկը: Նոր գովազդներն արդեն կանանց ցույց էին տալիս աշխատանքի ժամանակ:

AT&T-ի գովազդային բյուջեն բավականին ծանրակշիռ է, եւ նրանք կարող են կանանց ցույց տալ բազմազան դերերում, սակայն փոքր ընկերությունները պետք է գտնեն այն տարրերը, որոնք ընդհանուր են կանանց մեջ: Խոնավ սրբիչների մի գովազդում կինը մի ձեռքին պահել էր խոնավ սրբիչը, մյուսում՝ բջջային հեռախոսը: Միաժամանակ կոստյում էր հագնում: Պարզ չէր, թե նա աշխատանքի՞ էր գնում, իր որդու բեյսբոլի Մանկական լիգայի խաղի՞ն, թե՞ հասարակական որեւէ գործով: «Մենք աշխատում ենք, որ չեզոք լինի»,- ասում էր ընկերության ներկայացուցիչը:

Բորդենի սպագետիի գովազդում կինը խոհանոց է մտնում, երբ ամուսինը եւ երեխաները սպագետին գցում են եռացող ջրի մեջ: Նա աշխատանքի՞ց է վերադառնում, ծնողական ժողովի՞ց, թե՞ վերեւի հարկը փոշեկուլով մաքրելուց հետո: Ոչ ոք չի խոսում: Նպատակն այն է, որ գովազդը բավարարի բոլոր դիտողներին:

Նույն նպատակն էլ ընկած է լրագրողների, հասարակական կապերի եւ տեղեկատվության բնագավառի այն մասնագետների աշխատանքի հիմքում, ովքեր ջանում են ազդել հնարավորիս լայն լսարանի վրա:

Ընթերցողների եւ ունկնդիրների շրջանը: Լսարանի սպեկտրի մի ծայրում կարդալու նվազագույն հմտություններ ունեցողներն են: Սան Դիեգոյի Ռազմածովային բազայում կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 23000 զորակոչիկների 37 տոկոսը չի տիրապետում կարդալու հմտություններին՝ 10-րդ դասարանի մակարդակով: Վաշինգթոնի Վալտեր Ռիդի անվան բանակային հոսպիտալում ցուցանակները փոխեցին՝ հարմարեցնելով երրորդ դասարանի մակարդակին, քանի որ հավաքագրված աշխատակազմի մի մասը դրանք չէր հասկանում:

Մյուս ծայրում քոլեջի շրջանավարտներն են եւ այլոք, որոնց կվիրավորի պարզունակ գրածը:

Լրագրողներից ոմանք մտքում ունենում են ընթերցողի որոշակի տեսակ: Մարթին Նոլանը՝ «Բոսթոն Գլոուբ»-ից, ունի «մի մարդու պատկեր, որն աշխատում է ձեռքերով, բայց աշխույժ հետաքրքրություն է պահպանում շրջապատի նկատմամբ եւ կլիշեների ու հարմարավետ լոզունգների կարիք չի զգում»:

Դան Ռադերը՝ CBS-ի լուրերից, մտովի վերադառնում է իր երիտասարդության Թեքսասը:

«Թեքսասում ես ճանաչում եմ մարդկանց, ովքեր քրտնաջան աշխատում են: Իմ ընտանիքում էլ կան այդպիսիք: Եվ ես ինձ հարց եմ տալիս, նրանք կհասկանա՞ն այս պատմությունը: Նրանք այն մարդիկ են, որոնց ես ամենից լավ եմ ճանաչում ... բարի, ազնիվ, խելացի մարդիկ»:

Այս բոլոր մարդիկ, անկախ իրենց տնտեսական կարգավիճակից կամ կրթության մակարդակից, ունեն բազմաթիվ ընդհանուր հատկանիշներ: Նրանք ձգտում են ներդաշնակ ապրել իրենց հարեւանների հետ, ուզում են, որ իրենց երեխաները հասնեն իրենց կամ գերազանցեն իրենց հաջողությունները, հավատարիմ են աշխատանքային էթիկային եւ արժանի են հանգստի, ինչպես նաեւ իրենց ու իրենց ընտանիքների վրա ազդող որոշումներ ընդունելիս օգնության կարիք ունեն:

Լրագրողներն այս մարդկանց պարտք են այն ամենը, ինչը իրենց ուժերի սահմաններում է:

Ուսումնասիրություն

Տեղեկատվական միջոցների համար նոր գաղափարների փնտրտուքի մեջ գրողին մատչելի են բազմազան տեղեկություններ: Մի գովազդային գործակալության մարքեթինգի բաժինը

մեկ միլիոն դոլարանոց շուկա էր գտել, երբ բաժնի աշխատակիցը վերլուծում էր տեղեկանքները: Նա ուշադրություն է դարձրել դեռահասների կողմից սննդի վրա ծախսված գումարներին: Մի թղթակից, որը տվյալներ էր փնտրում հիվանդությունների մակարդակի մասին, հայտնաբերում է իր համար մի ցնցող տեղեկություն: Նա պարզում է, որ ԱՄՆ-ը աշխարհում 17-րդ տեղն է գրավում մինչեւ մեկ տարեկան երեխաների պոլիոմիելիտով լրիվ պատվաստման տոկոսով: Նա որոշում է երեկոյան ժամը 7-ի լուրերի թողարկման համար պարզել, թե իրավիճակն ինչպիսին է իրենց շրջանում:

ԱՄՆ-ի ընտանիքների մի ուսումնասիրություն բացահայտում է, որ հակառակ ենթադրությունների, աղքատների մեջ երեխաների թիվն ավելի մեծ է, քան ծերերինը: Երեք տարեկանից փոքր չորս երեխայից համարյա մեկը ապրում է թշվառության մեջ: Սա համազգային թիվն է: Իսկ ձեր շրջանում այդ թիվն ի՞նչ է: Նյու Յորքում 22,7 տոկոս է, Միսիսիփիում՝ 36 տոկոս:

Տեղեկանքները նաեւ ցույց են տալիս, որ այդ աղքատ երեխաների մեծ մասն ապրում է միայնակ ծնողների ընտանիքներում, սովորաբար մոր կողմից ղեկավարվող ընտանիքում: Տվյալները նշում են, որ այժմ գոյություն ունեցող միայնակ ծնողների ընտանիքների թիվը համարյա հավասարվել է ավանդական ամուսինկին ընտանիքների թվին:

Իսկ սա էլ իր հերթին տանում է մի այլ տեղական լուրի՝ դեռահասների հղիության: ԱՄՆ-ում դեռահասների հղիության մակարդակը ամենաբարձրն է աշխարհում եւ տարբերվում է այլ երկրներից նրանով, որ չի նվազում: Տեղական թվերը կարելի է համեմատել նահանգային եւ ազգային տվյալների հետ:

Մի թիվ եւս: Ամերիկայի երիտասարդության համարյա մեկ երրորդը հնարավոր է, որ 18 տարեկանում արդեն համալրի նպաստ ստացողների շարքերը: Պետական ծախսերի մեջ, պաշտպանությանը վերաբերող ծախսերից բացի, սոցիալական ապահովության ծախսերը երկրորդն են՝ կրթության ծախսերից հետո: Համեմատեք ձեր շրջանի սոցիալական ապահովության եւ առողջապահության ծախսերը:

Այս բաժնում ներկայացված նյութերի մեծ մասը գտել ենք «Համաշխարհային տարեգրքում»: Դուք եւս վերցրեք այն եւ տեսեք, թե ինչ կարելի է այնտեղ գտնել, որը դառնա հոդվածի, հանրային գովազդի կամ հասարակական կապերի արշավի հիմք:

Լավ թղթակցությունից պարզ է դառնում, որ նյութը հետաքրքրել է հոդվածագրին: Կանադական հեռարձակումների կորպորացիայի լուրերի թողարկման ժամանակ պատմել են 20 տարվա բաժանումից հետո մի եղբոր ու քրոջ իրենց մոր հետ վերամիավորման պատմությունը: Հայրը երեխաներին փոքր հասակում տարել է Նոր Զելանդիա: Ընկերները 15000 դոլար են հավաքել նրանց ինքնաթիռի տոմսի համար, որ իրենց մորը տեսնեն, որի մասին հայրն ասել էր, թե մահացել է: Նյութի վերջը: Բայց ինչու՞ է հայրը պատանիներին առեւանգել եւ ովքե՞ր են գումարը հավաքել՝ նորզելանդացինե՞րը, թե՞ կանադացիները: Մեզ այդ մասին չեն ասում: Հոդվածագրի անփույթ թղթակցությունը ցույց է տալիս, որ ամբողջական պատմություն ստեղծել նրան խանգարել է իր անբավարար հետաքրքրությունը նյութի նկատմամբ:

Ծարունակեք սովորել

Թղթակիցը երբեք չի դադարում սովորել: Նա անվերջ համալրում է լրագրության համար կարեւոր գիտելիքների իր պաշարը:

«Լավ թղթակիցը ամբողջ կյանքի ընթացքում ուսանող է,- ասում է հին թղթակից Ջոզեֆ Գալոուեյ կրտսերը: - Յուրաքանչյուր նոր հանձնարարություն պահանջում է եւս մի մասնագիտության կամ համակարգի տեսության եւ պրակտիկայի արագացված դասընթացներ»:

Կարող է թվալ, թե այդքան բազմազան ոլորտների մասին գիտելիքների կուտակումը ստեղծում է բազմագետ, բայց ոչ խոր լրագրողների: Այդպես չէ: Տեղեկատվությունը միանալու, նմուշներ դառնալու հատկություն ունի, որպեսզի կտորներն ու հատվածները միավորվեն: Լրագրող եւ մի քանի գրքերի հեղինակ Դեյվիդ Հալբերսթամն ասում է. «Ականավոր թղթակիցների տաղանդը» կազմված է «անսահման եռանդից, փայլուն մտքից, ամեն ինչ հիշելու եւ նյութը սինթեզելու կարողությունից»:

Այս սինթեզելն է, տեղեկություններն իրար միացնելը, որ ստեղծում է գերազանց հոդված:

Գիտելիքների պաշարը կառուցվում է երկու հիմքի վրա՝ ընթերցանության եւ փորձի: Լրագրողները կարդում են անհագ եւ առնչվում են բազմապիսի մարդկանց, խմբերի ու կազմակերպությունների հետ:

Ընթերցանություն: «Լավ թղթակից դառնալու համար պետք է կարդալ»,- ասում է Գալոուեյը, որը Թեքսասի մի փոքր օրաթերթից

իր ճանապարհը հարթել է մինչեւ UPI-ի մոսկովյան բյուրոյի ղեկավար՝ Վիետնամում ռազմական թղթակից աշխատելուց հետո, այնուհետեւ աշխատել է «Յու.Էս. Նյուս էնդ Ուորլդ Ռիփորթ»-ում:

«Եթե այս էլեկտրոնային դարում դուք այդպիսի սովորություն չունեք, ուրեմն պետք է մարզեք ձեզ՝ կուլ տալու տպագիր խոսքը նույն ագահությամբ, ինչ Մահվան հովտի վերջին 15 մղոնը սողալով անցածը կուլ կտար ջուրը:

Կարդացեք ամբողջ կյանքում:

Ձեր աչքի առաջ հայտնված ամեն մի թերթ կարդացեք ոճի, բովանդակության, գաղափարների, հաճույքի համար: Եվ գրքեր, Աստված իմ, գրքեր: Ժամանակակից տպագրությունը ձեզանից 500 տարով առաջ է ընկել եւ ամեն տարի ձեզանից էլ ավելի է առաջ անցնում:

Ձեր ներկայացրած նմուշը կամ ռեզյումեն նշանակություն չունեն: Ցույց տվեք ձեր գրադարակները եւ գրադարանային քարտը»:

Պարսից ծոցի պատերազմի մասին Ջոզեֆ Գալոուեյի լավագույն թղթակցություններից մեկը, նկարագրում էր Հետեւակային 24-րդ դիվիզիայի արշավը Բասրայի ուղղությամբ: Գալոուեյը դիվիզիան ճակատամարտի դաշտում ուղեկցող միակ լրագրողն էր: Նրան հրավիրել է գեներալ Նորման Շվարցքոփֆը, որ նրա մոտիկ ընկերն էր դեռեւս իրենց համատեղ վիետնամական տարիներից: Գեներալը գնահատում էր ռազմական հարցերի Գալոուեյի գիտելիքները:

«Ես երջանիկ եմ եղել: Ես մեծացել եմ մի ընտանիքում, որտեղ ընթերցանությունն ու կրթությունը հարգի են եղել: Կարծում եմ, որ իմ գիտելիքների պաշարը պետք եկան այդ երեկո»:

Այսպես է բացատրում Սան Ֆրանցիսկոյում Համաշխարհային սերիայի իր ռեպորտաժի ժամանակ սկսված երկրաշարժի մասին հավասարակշռված ու ճշգրիտ հաղորդումը ABC-ի սպորտային մեկնաբան Ալ Մայքլզը:

Լրագրողները կարդում են իրենց ոլորտին վերաբերող մասնագիտական հրատարակություններ: Տեղի համալսարանական լուրերը լուսաբանող թղթակիցը կկարդա «Քրոնիքլ օֆ Հայըր Էջյուքեյշըն»-ը, իսկ քաղաքապետարանում աշխատող թղթակիցը կու-

սումնասիրի «Սիթի էնդ Սթեյթ»-ի համարները: Այս հրատարակություններն ապահովում են նախապատմություններ եւ առաջարկում են նոր գաղափարներ:

Ժամանակի հետ համաքայլ ընթացքը նաեւ պահանջում է, որ թղթակիցը ծանոթ լինի մասնագետների մեկնաբանություններին ու կարծիքներին, որոնք ներկայացվում են վերլուծական ամսագրերում: Լրագրողների կողմից ընթերցվող ամսագրերի թվում են «Ատլանտիկը», «Քոմենթրին», «Հարփերսը», «Նեյշընը», «Նաշընալ Ռեվյու»-ն, «Նյու Ռիփաբլիք»-ը եւ «Նյու Յորքեր»-ը:

Ոգեշնչում: Հարցրեք ձեր ծանոթ լրագրողին: Հարցրեք գրողին, թե ինչպես է նա սովորել գրել, եւ նրա նշած վեցերորդ դասարանի ուսուցչի եւ քոլեջի դասախոսի կողքին, հանկարծ դուրս կգա մի այլ գրող: Վիպասան, բանաստեղծ, պամվածքների հեղինակ, ակնարկագիր, թատերագիր: Նույնիսկ մի այլ լրագրող:

Հեմինգուեյի ազդեցությունը հաջորդ սերնդի լրագրողների վրա հսկայական է եղել: Երիտասարդ տարիքում Հեմինգուեյը Քանզաս Սիթիում լուսաբանել է ոստիկանական դատարանների աշխատանքը, եւ նրա մշակած լրագրային ոճը կարելի է տեսնել իր վեպերում: Նա լեզուն կտրում է մինչեւ ոսկորը, թողնում է, որ ընթերցողներն իրենք հետեւություններ անեն իր սակավ նկարագրություններից եւ պարզ, սակայն ոչ երբեք պարզունակ երկխոսություններից:

Հեմինգուեյը լայն հետաքրքրությունների տեր ընթերցող էր, բայց ուներ մի սիրած հեղինակ եւ մի սիրած գիրք:

«Ամբողջ ժամանակակից ամերիկյան գրականությունը ծագում է Մարկ Տվենի մի գրքից, որը կոչվում է «Հեքլբերի Ֆինն» ... Դա մեր ունեցած լավագույն գիրքն է: Դրանից առաջ ոչինչ չի եղել: Դրանից ի վեր նույնքան լավ ոչինչ չի եղել»:

Անզուգական թղթակից եւ գրող Ջոն Մաք Ֆին, որի գործերը տպագրվել են «Նյու Յորքեր»-ում եւ վերատպվել մի շարք գրքերում, հարցազրույց էր տվել: Մաք Ֆին նշել է, որ ինքը հաճախ Շեքսպիր է ընթերցում, միշտ ակնածանքով: Գոյություն չունի այնպիսի բան, ասում է Մաք Ֆին, որ Շեքսպիրը չկարողանա անել:

«Նյու Յորքեր»-ի մի այլ հեղինակ, որով հիացել են, Է. Բ. Ուայթն է՝ բառերի մի վարպետ ոսկերիչ: Նրա ակնարկների ժողովածուն կարդացվում է հստակ եւ միեւնույն ժամանակ բանաստեղծական արձակի նման: Անթոլոգիաներում դուք կհանդիպեք «Նյու Յորքեր»-ի այլ հեղինակների՝ Ջեյմս Թըրբեր, Ուիլյամ Մաքսվել, Լիլիան Ռոս, Ջոզեֆ Միթչել եւ Բրենդան Գիլ:

Լրագրողներն ավելի ու ավելի լայնորեն են գործածում գեղար-

վեստական արձակի տեխնիկան, իսկ հետեւում են այնպիսի գրողների, ինչպիսիք են Նորման Մեյլերը, Սոլ Բելոուն, Ջոն Օ'Հարան, Ջ.Դ.Սելինջերը: Ոճ եւ դիտարկումների տեխնիկա լրագրողները սովորում են Դիքենսից, Վիրջինիա Վուլֆից եւ Ռալֆ Էլիսոնից: Նախադասության ռիթմ եւ հակիրճություն վերցնում են պոեզիայից՝ Շեքսպիրի սոնետներից մինչեւ Սիլվիա Փլաթի չափածոն:

Գայ Թալեսի եւ Թոմաս Վուլֆի լրագրական գործունեությունը, որոնք շարժման մեջ դրին նոր ժուռնալիզմի ազատագրման գործընթացը, շարունակում է կարեւոր նշանակություն ունենալ:

Սակայն միայն տեխնիկայով եւ գրելաոճով սահմանափակվել հնարավոր չէ: Շատ գրողներ առաջնորդվել են խղճի ձայնով, ինչպիսին Օրուելն էր, ով հանդես եկավ անհանդուրժողականության, իմպերիալիզմի եւ ռասիզմի դեմ շատ ավելի վաղ, քան դա անելը քաղաքականորեն ճիշտ էր համարվում:

Չարլզ Դիքենսը, վիկտորյան դարաշրջանի բեղուն վիպասանը, ավելի քան մեկ դար առաջ տեսավ անօթեւան լինելու սարսափները եւ այն ուղին, որով հասարակությունն իր զոհերն է դարձնում անօգնականներին, փոքրահասակներին եւ աղքատներին:

«Դիքենսը ճաշակել է անօթեւան լինելու դառնությունը,- գրում է Սթիվեն Մարքուսը Քոլումբիայի համալսարանից: -Մանկության օրերին ինքն էլ է անօթեւան եղել եւ այդ խնդրով նաեւ զբաղվել է որպես վերափոխիչ՝ ապաստան կազմակերպելով տնազուրկ կանանց համար»:

«Դժվար ժամանակները» վեպում, քարասիրտ դպրոցական համակարգի եւ շահամոլ հասարակության ծուղակն ընկած երեխայի օրինակով, Դիքենսը բացահայտում է այս չարիքը փոքրիկ աղջկա՝ Սիսիի, եւ նրա բարերար Լուիզայի միջեւ տեղի ունեցող երկխոսության միջոցով: Սիսին նկարագրում է իր դպրոցական պրոբլեմները:

«Պատմիր ինձ քո սխալների մասին»:

«Ես համարյա ամաչում եմ, - դժկամությամբ ասաց Սիսին: - Բայց այսօր, օրինակ, Պարոն Մաք Չոքամչայլդը մեզ բացատրում էր Բնական բարեկեցությունը»:

«Ես կարծում եմ, պետք է լինի Ազգային», - նկատեց Լուիզան ...

«Ազգային բարեկեցությունը: Եվ նա ասաց, որ այժմ այս դասասենյակը ազգն է: Եվ ազգն ունի կա 50 միլիոն փող: Սա բարեկեցիկ ազգ չէ՞, արդյոք: Համար քսան աղջի՛կ, սա բարեկեցիկ ազգ չէ՞, եւ դու արդյոք չե՞ս ապրում ծաղկուն պետության մեջ»:

«Իսկ դու ի՞նչ ասացիր», - հարցրեց Լուիզան:

«Միսս Լուիզա՛, ես ասացի, որ չգիտեմ: Ես կարծում էի, որ չեմ կարող իմանալ ազգը բարեկեցիկ է, թե ոչ եւ ես ծաղկուն երկրում եմ ապրում, թե ոչ, մինչեւ չիմանամ, ու՞մ է պատկանում փողը եւ արդյոք դրա մի մասը ի՞նձ է պատկանում: Բայց սա կապ չուներ: Խնդիրը թվերը չէին»,- պատասխանեց Սիսին՝ արցունքները սրբելով:

Առողջ դատողություն

Նշանակություն չունի, թե որքան է թղթակցի գիտելիքների մակարդակը կամ որքան անխոնջ է նա հետեւում քաղաքի, նահանգի եւ ազգային նորություններին եւ իրադարձություններին, այս բոլորը կարող է անտեղի լինել, եթե թղթակիցը չունի առողջ դատողություն:

Ռոնալդ Ռեյգանը սիրում էր պատմել զոհողության մի հուզիչ պատմություն: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, պատմում էր նա, մի ռմբակոծիչ լուրջ վնասվածքներ էր ստացել: Օդաչուն հրաժարվում է պարաշյուտով դուրս նետվել, քանի որ գնդացրորդը ծանր վիրավոր էր եւ չէր կարող տեղից շարժվել: Դողացող ձայնով Ռեյգանը պատմում էր ունկնդիրներին, թե ինչպես էր օդաչուն քաջալերում երիտասարդ, վախեցած գնդացրորդին. «Ոչինչ, տղաս, մենք միասին կիջնենք ցած»:

Պատմությունը որոշ ժամանակ ազդեցություն էր ունենում ... , մինչեւ մի քանի թղթակիցներ իրենց հոդվածներում նշեցին, որ եթե երկու օդաչուները զոհված լինեին օդանավի վթարի ժամանակ, ոչ ոք չէր իմանա նրանց վերջին բառերը:

Ինչպես նշումներ անել

Տեղեկատվություն հավաքելու ընթացքում, լինեն դրանք տեղեկատուներից, հետազոտություններից, հարցազրույցներից, թե ուղղակի դիտարկումներից, թղթակիցները միշտ նշումներ են անում: Շատ քիչ թղթակիցներ են բացարձակ հիշողության տեր, եւ միայն ինքնասպանը կարող է իր հիշողությանը վստահել անունների ուղղագրությունը, ճշգրիտ հասցեները եւ այլ հատուկ տեղեկություններ: Բավական չէ նշումները գրի առնել, անհրաժեշտ է գրի առնել ընթեռնելի, մի դժվարին աշխատանք լրագրողների համար, ովքեր իրենց վայելչագրության դասերն ավարտել են չորրորդ դասարանում:

Որոշ թղթակիցներ հույսը դնում են ձայնագրիչի վրա, որը

հարմար է որոշ հարցազրույցների պարագայում: Սակայն հրատապ դեպքերի կամ այն մարդկանց համար, ովքեր պարզապես սարսափում են ձայնագրվելուց, ամենից հարմարը գրավոր նշումներն են:

Մանրամասն նշումներ արեք, խորհուրդ է տալիս լրագրության դասագիրքը: Ոչ այնքան, խորհուրդ են տալիս փորձառու թղթակիցները: Միայն ամենից անփորձ կամ անհուսորեն շփոթված թղթակիցը ամեն ինչ գրի կառնի: AP-ից Վալտեր Միլրսն ասում է. «Նոթատետրում չափազանց շատ գրառումներ ունենալը կարող է նույնքան անլուծելի խնդիր լինել, որքան շատ քիչը: Այնպես որ լավագույն թղթակիցները ամեն բառ գրի չեն առնում: Նրանք նշում են միայն կարեւորը: Լավագույն թղթակիցները գիտեն, թե որոնք են դրանք ...»:

Տեղեկատվություն հավաքելու հմտությունը դեռեւս թղթակցության ընթացքում նյութի ասելիքն իմանալու մեջ է, նույնիսկ նախապես, եւ նշումներ անելն այն տեղեկությունների մասին, որոնք կապ ունեն պատմության գաղափարի հետ: Նշումները, հաճախ ցանուցիր, գումարած լավ հիշողությունը, բավական են լավ թղթակցի համար:

Բիլ Բլանդելը՝ «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ի երկարամյա թղթակիցն ու խմբագիրը, որը «Ջորնալ»-ի աշխատակիցների համար նաեւ գրելու դասընթացներ էր վարում, ասում է. «Ես միշտ աշխատել եմ ունենալ որեւէ թեմա...»:

Հետո դուք հավաքում եք գործին առնչվող տեղեկությունները: Այլ թեմաներ էլ «կարող են հայտնվել, որոնք նույնիսկ ավելի հետաքրքիր են, եւ դուք էլ բավարար ճկունություն պետք է ունենաք դրանք որսալու համար»,- ասում է Բլանդելը:

Առանց ձեզ ուղղություն տվող գաղափարի, ասում է նա, «դուք անախորժությունների կհանդիպեք ... ձեր հորիզոնն այնքան լայն է, որ դուք չեք կարող ամբողջն արտացոլել»:

Հոմեր Բիգարթը, որին համարել են թղթակիցների թղթակից, կարող էր լիդը գրել դեպքը լուսաբանելու ամեն մի պահին, պատմում է մի գործընկեր: «Նա ամեն րոպե ուներ պատմության լիակատար պատկերը»:

« ... Նշումներն օգտագործում են հիշողությունը շարժման մեջ դնելու համար: Դրանք ծածկագրված են եւ հակիրճ, բայց բավական տեղեկություններ են տալիս, որ նյութը լցվի մանրամասնություններով»:

Բեվերլի Ջ. Փիթս, Բոլի նահանգային համալսարանի ավարտական հետազոտությունների բաժնի տնօրեն, «Փորձառու լրագրողների լուրեր գրելու արվեստը: Օրինակներ լուրերի խմբագրությունից»

Ինչպես մշակել նշումները

Ներկայացնում ենք մի հնարք, որը կօգնի կազմակերպել ձեր նյութը: Հենց որ նշմարվում է մի թեմա, որը դուք հաստատ օգտագործելու եք ձեր նյութում, կողքին ինչ-որ նշան դրեք, օրինակ՝ X եւ այդ նույն նշանը դրեք այդ թեմայի հետ կապ ունեցող ձեր բոլոր նշումների կողքին:

Երբ հայտնվում է մի նոր թեմա կամ գաղափար, ձեր նոթատետրում մի այլ նշան դրեք: Կարող եք օգտագործել թեկուզ #, /, *, + նշանները: Կարող եք շրջանակի մեջ վերցնել այն թեմայի նշանը, որը դառնալու է լիդ:

Նյութը կազմակերպելու համար գործածում եք նշաններ ու տառեր: Արդեն խմբագրությունում դուք խմբավորում եք նման նշանները: Եվ, ով հրաշք, նյութը կառուցված է, որովհետեւ դուք նման նյութերը դասավորել եք իրար կողքի: Նյութն ունի տրամաբանություն եւ կապակցվածություն:

Ավելի երկար նյութերի համար, երբ թղթակիցը նշումներով լի մեկ կամ երկու նոթատետր ունի, հնարավոր է նաեւ ձայնագրված հարցազրույցներ, հետազոտությունների հաշվետվություններ եւ նույնիսկ տվյալների բազայի տեղեկանքներ, կույտը կարող է անհաղթահարելի թվալ: Ահա մի լավ խորհուրդ AP-ի նորությունների թողարկումների հեղինակ Սոլ Փեթից:

Աշխատեք պատկերացնել հետեւյալը: Ես վերադարձել եմ խմբագրություն: Ունեմ գրառումներով լի մի քանի նոթատետր: Ունեմ քաղվածքներ թերթերից: Գուցե նաեւ գրքից կամ ամսագրից մի հատված եւ ձայնագրված հարցազրույցներ, որոնք արդեն վերծանել եմ: Այս ամբողջն արդեն պատրաստ է: Սա իմ հիմնական նյութն է: Բայց այդ բոլորը կարծես ինչ-որ անկազմակերպ են: Այնպես որ ես նստում եմ, եւ սա պարզապես անհետաքրքիր էշի աշխատանք է, որը ես ատում եմ, բայց համարում են անհրաժեշտ, եւ ես կազմում եմ իմ նշումների ուրվագիծը: Ես պատմությունը չեմ ուրվագծում, որովհետեւ այն դեռ չեմ պատկե-

ռացնում: Ես կազմում եմ իմ ունեցած նյութերի ուրվագիծը: Ես դրանք դասավորում եմ կույտերով: Ահա նյութեր նրա սրամտության մասին (Փեթը քննարկում է Նյու Յորքի քաղաքագլուխ Էդ Քոչի մասին ակնարկը): Ահա նյութեր նրա անկախության մասին: Ահա նյութեր, որոնք ցույց են տալիս, որ նա կարող է խիստ վարվել փոքրամասնությունների հետ: Ահա նրա կենսագրությանը վերաբերող նյութեր: Այդ բոլորը իմ նոթատետրերում ցաքուցրիվ վիճակում է: Այսպիսով, ուրվագծելու միջոցով, ես այդ ամբողջը ունենում եմ երկար հատվածներով թղթին հանձնված: Սա շատ անհետաքրքրիր աշխատանք է: Ես երկու-երեք օր եմ ծախսում դրա վրա:

Ես նյութի հետ ավելի լավ եմ ծանոթանում: Այնպես որ, երբ ես արդեն պատրաստ կլինեմ գրելու, ես կարիք չեմ ունենա կանգ առնելու եւ փնտրտուքների մեջ ընկնելու նոթատետրերում կամ քաղվածքների կույտերում:

Հաջորդ գլխում եկեք միանանք թղթակիցներին եւ տեսնենք, թե նրանք ինչպես են իրենց պատմությունների համար տեղեկություններ հավաքում:

Գլուխ 8
Նպատակաուղղված թղթակցություն

Մուտք

Այն լրագրողները, ովքեր նախօրոք պլանավորում են իրենց նյութը, գիտեն, թե ինչի են ուզում հասնել եւ ինչպես, գրում են հետաքրքրիր եւ ընթերցվող պատմություններ: Նախքան տեղեկատվություն հավաքելը՝ նրանք իրենց նյութի համար գաղափարներ եւ կառուցվածքներ են մշակում:

Նրանց փաստահավաքին օգնում են իրենց ստեղծած աղբյուրները եւ այն գիտակցությունը, որ նյութի հիմքում պետք է ընկած լինի էականը, որը պատասխանում է ընթերցողի հիմնական հարցերին, ինչպես նաեւ նկարագրվող դեպքերի կամ մարդկանց եզակի կողմերը:

Կանխակալությունը եւ կաղապարները կարող են կանգնել բարեխիղճ փաստահավաքման ճանապարհին, սակայն ուժեղ զգացմունքը կարող է նաեւ առաջնորդել հետաքննական ու մեկնաբանական թղթակցության, որը վեր է հանում իրավիճակի էությունը:

Ինչպես մշակել կառուցվածքը

Ֆրեդ Ցիմերմանը հասկացավ, որ համալսարանական թերթի համար լավ պատմություն է գտել: Նա լսել էր, որ մոտակա Էմփորիա պետական քոլեջի մի դասախոս հեռացվել էր աշխատանքից մի քանի զանցանքների համար: Դասախոսը երիտասարդ էր, մորուք էր կրում եւ վիճելի քաղաքական ու սոցիալական հայացքների տեր էր: Դասախոսի հեռացումը համալսարանը պառակտեց երկու զայրացած խմբերի:

«Ես վազվզեցի ամբողջ Էմփորիայով մեկ, հարցազրույցներ ունեցա մտքովս անցած բոլոր մարդկանց հետ,- հիշում է Ցիմերմանը, - եւ նշումներով լցրեցի երկու նոթատետր:

Այնուհետեւ նստեցի գրամեքենայի առջեւ, որտեղ էլ հայտնաբերեցի, որ նույնիսկ աղոտ պատկերացում չունեմ, թե ինչի նման է լինելու իմ նյութը»:

Իր կարիերայի սկզբում Ցիմերմանը տիրապետեց թղթակցության արվեստին, որն ընկած է լուր գրելու հիմքում: Նա հասկացավ, որ թղթակիցը սկսում է ըմբռնել պատմության գաղափարը հենց որ ստանում է հանձնարարությունը, նույնիսկ թղթակցությունը սկսելուց առաջ: Նա կարող է դա անել, քանի որ ծանոթ է իր ոլորտին, ինչպես նաեւ գիտելիքների ընդհանուր պաշար ունի:

Քանզասի համալսարանից հետո Ցիմերմանն իր աշխատանքը շարունակեց «Ուոլ Սթրիթ Ջորնալ»-ում, որտեղ նա լուսաբանում էր նաեւ Սպիտակ տան աշխատանքները: Որպես թղթակից հանձնարարության գնալիս՝ Ցիմերմանը մտքում արդեն մեկ-երկու գաղափար էր ունենում: Այս նախնական գաղափարները նրա կառուցվածքն էին, որի վրա հիմնվելով, նա կատարում էր իր դիտարկումները եւ հարցեր տալիս աղբյուրներին: Եթե դիտարկումներից ու պատասխաններից հետեւում էր, որ նա սխալ ուղու վրա է, դեն էր նետում նախնական գաղափարը՝ հանուն իր հայտնաբերած նոր գաղափարի:

> Յուրաքանչյուր պատմություն նման է եռոտանու, ասում է Քեն Ֆյուսոնը «Դես Մուա Ռեջիսթըր»-ից, որի ոտքերն են «գաղափարը, թղթակցությունը եւ գրելը: Քանի դեռ երեքը հավասար են, առաջին տեղում գաղափարն է: Եթե գաղափարը թույլ է, ոչ մի բազմակողմանի թղթակցություն կամ գեղեցիկ գրվածք չեն կարող այն փրկել»:

> Խմբագրականների ու գովազդների հեղինակը, ակնարկագիրը, գործակալության հասարակական կապերի պատասխանատուն - բոլորն էլ գրելուց առաջ իրենց գլխում պլան են ունենում: Քըրք Սայթրոնը Քալիֆորնիայի սալոր աճեցնողների գովազդի վրա աշխատանքը սկսելուց առաջ գիտեր, որ իր գովազդի բանալին մանրաթելն է: Իսկ ֆիլմի կեսը դիտելուց հետո, Բարբարա Շուլգասերը գիտեր, որ իր ակնարկը «Սան Ֆրանցիսկո Էքզամիներ»-ի համար բացասական է լինելու եւ նա շարունակում էր դիտել, որ այդ եզրակացության համար փաստարկներ գտներ:

Ինչպես պատրաստվել

Թղթակիցը, որին հանձնարարված է քաղաքի մի բանկիրի հետ հարցազրույց վարել վարկերի դրույքաչափերի կտրուկ

բարձրացման մասին, կարող է բանկիրի հետ եղանակի մասին մի քանի բառ փոխանակել: Սակայն թղթակիցը հաստատ գիտե, թե ինքն ինչու է եկել: Ինչպե՞ս այդ աճը կազդի իրենց շրջանում բնակարանային շինարարության վրա: Կարո՞ղ են մարդիկ տներ կառուցել, եթե ստիպված լինեն վարկ վերցնել այդքան բարձր տոկոսադրույքներով:

Թղթակիցը, որին հանձնարարված է պարզել համալսարանի ղեկավարության վերաբերմունքը նահանգի օրենսդիրների կողմից հենց նոր ընդունված խղճուկ բյուջեի վերաբերյալ, գիտե իր նյութի նպատակը: Համալսարանը ի՞նչ կրճատումներ է անելու: Պետք է դադերցվե՞ն որոշ ծրագրեր: Իսկ դասախոսների եւ աշխատակիցների աշխատավարձե՞րը:

Լրագրությունը բավականին նման է այլ հետազոտական աշխատանքներին՝ խուզարկուի, միջուկային ֆիզիկոսի կամ պատմաբանի: Նախ եւ առաջ հետազոտողը զարգացնում է որեւէ տեսություն: Հետագայում նրա կողմից կատարված դիտարկումները կամ կհիմնավորեն, կամ կմերժեն այն: Տեսությունը փաստերով չհաստատվելու դեպքում՝ հետազոտողը զարգացնում է մի նոր տեսություն:

«Բասքերվիլների շունը» պատմվածքում Արթուր Կոնան Դոյլը նկարագրում է Շերլոկ Հոլմսին, մեկուսացած Բեյքեր Սթրիթ փողոցի իր տանը այն բանից հետո, երբ իմացել էր սըր Չարլզ Բասքերվիլի սպանության մասին: Հոլմսը «կշռադատում էր փաստերի յուրաքանչյուր մասնիկ, այլընտրանքային տեսություններ էր կառուցում, համեմատելով իրար հետ եւ վերջապես որոշեց, թե որ կետերն են էական եւ որոնք անկարեւոր»: Սպանության վայրն այցելելուց շատ առաջ՝ Հոլմսին, իր հետաքննությունը սկսելու համար, սկզբնակետ էր անհրաժեշտ:

Պարզ է, որ գաղափարները չեն կարող ձեւավորվել, երբ միտքն ամուլ է: Միայն լավ պատրաստված, գիտելիքների ընդհանուր եւ մասնագիտական պաշար ունեցող մարդիկ կարող են ստեղծել իրագործելի տեսություններ ու գաղափարներ:

Հակառակ վարպետ խուզարկուի, թղթակիցը չի կարող ժամեր անցկացնել մեկուսացած՝ փաստերի պատառիկների վրա մտորելով: Հաճախ թղթակիցը պատրաստվելու համար մի քանի րոպե է ունենում: Զարմանալի է, սակայն թղթակիցների մոտ զարգացել է ճնշման տակ օգտակար գաղափարներ հղանալու կարողությունը:

Շերիֆի դիմանկարը: Լինդա Քրամերը AP-ի համար մի քանի լրատվական ներդիրներ էր պատրաստել շերիֆ Ռիչարդ Հոնգիս-

թոյի մասին, որն անսովոր մոտեցում ուներ իրավապահ մարմինների խնդիրների նկատմամբ: Այժմ թղթակիցն ուզում էր պատրաստել դիմանկարը մի մարդու, որը նույնիսկ մի անգամ բանտարկվել է՝ դատարանին վիրավորանք հասցնելու համար, իսկ հիմա Սան Ֆրանցիսքոյի բանտի պետն է:

Քրամերը պատմում է, որ ինքը սկզբում անշտապ «կարդացել է նրա գործերի մասին տարիներով հավաքված քաղվածքները եւ հարցազրույցները»: Նա սկսում է իր պատմության համար գաղափար զարգացնել, որն հետագայում ամրապնդվեց՝ շերիֆի հետ կոմսության բանտում մի օր անցկացնելուց հետո:

«Նրա վերաբերմունքը բանտարկյալների նկատմամբ եւ հպարտությունը բանտում կատարված նորամուծությունների համար, ցույց էին տալիս մարդուն՝ իր տարերքի մեջ», - պատմում է Քրամերը: Բանտում շրջագայելու ընթացքում նա հավաքել էր բանտարկյալների ասածները եւ դիտարկումներ արել, որոնք հիմնավորեցին պատմության համար իր զարգացրած գաղափարն այն մասին, որ Հոնգիսթոն նոր տեսակի շերիֆ է, որն ընկերաբար է վարվում բանտարկյալների հետ եւ աշխատանքին վերաբերվում է ոչ ավանդական ձեւով:

Երբ արդեն պատրաստ էր, նա գիտեր, թե ինչպես պիտի սկսի նյութը: Նա ընտրեց բանտում շրջագայելու ընթացքում տեղի ունեցած մի միջադեպ, որը ցույց էր տալիս Հոնգիսթոյի բարեսիրտ հարաբերությունները ճաղավանդակի ետեւում գտնվող մարդկանց հետ:

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍՔՈ (AP)- Գրասեղանի մոտ նա ստուգեց 38 տրամաչափի ատրճանակը, որը կրում էր նոր ու կոկիկ համազգեստի գոտկատեղի մոտ եւ ստուգողական համայցի համար մտավ կոմսության բանտը:

«Հե՛յ, շերիֆ, - ձայն տվեց մի բանտարկյալ,- լսել ենք, դու էլ ես բանտում եղել»:

«Ըհը, - պատասխանում է շերիֆ Ռիչարդ Հոնգիսթոն, - գուցե անհանգստանում ես, որ քեզ կտեսնեն հանցագործի հե՞տ»:

Ծիծաղելով՝ նա առաջ անցավ: Բանտարկյալը նայեց նրա ետեւից հիացած հայացքով: «Նա ուրիշ շերիֆներից տարբերվում է, - ասաց նա, - երբեմն կասկածում եմ, արդյոք նա ընհանրապես շերի՞ֆ է»:

Շատ ուրիշներն էլ են այդպես զարմացել այն օրվանից ի վեր, ինչ նախկին ոստիկան Հոնգիսթոն 1971 թվականին ստանձնել է այս պաշտոնը եւ սկսել է խարխլել շերիֆների վարվելակերպի մասին ավանդական պատկերացումները ...

Իրավաբանի դիմանկարը: Ենթադրենք, ձեզ հանձնարարված է հարցազրույց վարել մի իրավաբանի հետ, որն իր ժամանակի նշանակալի մասը հատկացնում է բռնությունների ենթարկված երեխաներին, ծեծված կանանց եւ սեռական հանցագործությունների զոհերին օգնելուն: Ներկայացնում ենք դիմանկարի համար անհրաժեշտ տվյալները:

Արտաքին տեսք - Մարդն ինչ տեսք ունի:

Նախապատմություն - Կրթություն, դաստիարակություն, հետաքրքրություններ:

Զբաղմունք - Փորձը: Այս բնագավառում աշխատելու ժամանակը: Աշխատանքն ընտրելու պատճառները: Ինչպես է աշխատանքը կապվում դիմանկարի թեմային:

Մանրամասնություններ - Մարդու անհատականությունը բացահայտող դեպքեր, մեջբերումներ եւ միջադեպեր:

Սրանք ընդհանուր պահանջներ են: Իրավաբանի դիմանկարի համար մեզ անհրաժեշտ են նաեւ առանձնահատուկ մանրամասնություններ: Նրա մասին քաղվածքները նայելուց եւ ոլորտն ուսումնասիրելուց հետո, դուք որոշում եք տալ հետեւյալ հարցերը. «Դուք նշու՞մ եք սեռական հանցագործությունների չափահաս զոհերի անունները», «Մեր շրջանում ձեր աշխատանքի հետ կապված հանցագործությունների ա՞ճ, թե՞ նվազում եք տեսնում», «Օկրուգային դատախազը, դատարանները եւ ոստիկանությունը այս հանցագործությունների նկատմամբ ճի՞շտ վերաբերմունք ունեն»:

Դուք նաեւ կցանկանաք պարզել նման հանցագործությունների զոհերին օգնելու նրա որոշման պատճառները: Ինքն արդյոք չի՞ եղել (այս հարցը պետք է շատ նրբանկատ տրվի) բռնության ենթարկված երեխա, ծեծված կին կամ սեռական հանցագործության զոհ:

Ինչպես ճկուն լինել

Նորից նայենք առաջին գլուխը եւ տեսնենք, թե ինչպես է Բերքլի Հադսոնը վարվում իր պատմությունը գրելիս: Երբ Չեսթեր Ջեֆերդսը նրան պատմում էր իր երկարատեւ բանտարկության մասին, Հադսոնը հոդվածի համար գաղափար զարգացրեց՝ Ջեֆերդսին պահել են առանց լուրջ պատճառի:

Հադսոնի առաջին թղթակցություններն ուղղված էին պարզելու, թե ճի՞շտ է արդյոք այդ թեման: Թղթակցությունը հիմնավո-

րեց նախնական գաղափարը եւ այդ թեման դարձավ հոդվածի առանցքը:

Երբ Թոլեդոյի «Բլեյդ»-ից Բոբ Ռոուզը պետք է հարցազրույց անցկացներ Քաղցկեղի ամերիկյան ասոցիացիայի նախկին նախագահի հետ, նա մտքում արդեն պլան ուներ: Հարցեր կտա քաղցկեղի հիմնական տեսակների եւ նրանց առաջացման պատճառների մասին: Երբ Ռոուզը ժամանեց այն հյուրանոցը, որտեղ կանգ էր առել քաղցկեղի մասնագետը, ընդունարանի սեղանից վերցրեց այդ օրը հյուրանոցում տեղի ունեցող իրադարձությունների ցուցակը՝ տեսնելու արդյոք որեւէ հետաքրքիր բան չկա՞:

Ցուցակում նշված էր «Ռ.Ջ.Ռեյնոլդս Տոբաքո» ծխախոտի ընկերությանը հատկացված սենյակի համարը, որտեղ աշխատակիցները հրահանգներ էին ստանում տեղում գովազդային արշավ կազմակերպլու ուղղությամբ: Ռոուզն արագ փոխեց իր պլանները: Նա որոշեց կենտրոնանալ թոքերի քաղցկեղի եւ ծխելու միջեւ գոյություն ունեցող կապի վրա:

Ռոուզն ամփոփում է նպատաուղղված թղթակցության գործընթացը. դու գիտես, թե ինչի մասին ես ուզում գրել եւ ինչպես ես ուզում գրել արդեն այն ժամանակ, երբ թղթակցություն ես սկսում: Բայց արժեցող բան հայտնվելուն պես, պատրաստ եղիր փոխելու քո պլանները:

Ինչպես թափ վերցնել: Թղթակիցն անմիջապես սկսեց պլան կազմել, երբ խմբագիրը հանձնարարեց նրան զբաղվել տեղի քոլեջի սպորտային ծրագրին վերաբերող հայտարարությամբ: Նա ստուգեց թերթի գրադարանում եղած քաղվածքները քոլեջի մասին եւ պարզեց, որ նրանք ցանկանում են իրականացնել միջհամալսարանական սպորտային ծրագիր: Վերջերս բասկետբոլի մարզիչ են վարձել մեծ տասնյակի թիմերից: Մի այլ քաղվածք նկարագրում էր, թե ինչպես է երկրպագուների ակումբը պարտվել ֆուտբոլային թիմին: Թղթակցի համար պարզ էր, որ քոլեջը ձգտում է այս ասպարեզում թափ վերցնել:

Քոլեջն այդ թղթակցի ոլորտն էր, սակայն նա ծանոթ չէր սպորտային ծրագրերին, քանի որ դրանով զբաղվում էր թերթի սպորտային խմբագրությունը: Նա գիտեր, որ կարճ ժամանակում ահագին տեղեկություններ պետք է հավաքի եւ այդ պատճառով էլ կապվեց համալսարանի իր աղբյուրներին եւ զրուցեց սպորտային լուրերի խմբագրության մի քանի լրագրողների հետ :

Քոլեջի մարզական խորհրդի անդամ մի հոգեբանության պրոֆեսորից նա տեղեկացավ, որ խաղացողների մեջ լուրեր են պտտվում մեքենաների օգտագործման եւ որոշ մարզիկների

գաղտնի վճարների մասին: Հավանաբար նախագահը կխոսի այդ բաների մասին: Թղթակիցը զանգահարեց քոլեջի հասարակական կապերի գրասենյակ եւ ղեկավարին հարցրեց այդ մասին: Նա միանգամից տվեց հիմնական հարցը՝

«Թո՛մ, նախագահն այսօր խոսելո՞ւ է մարզիկներին տրվող վճարների մասին»:

Թոմը չափացանց փորձված էր, որ շփոթվեր եւ ծիծաղեց:

«Ես դա չեմ հաստատի,- պատասխանեց նա (դադար),- բայց նաեւ չեմ ժխտի»:

Այս վերջին մեկնաբանությունը թղթակցին համոզեց, որ նա ճիշտ ուղու վրա է, եւ նա նորից զբաղվեց թերթի գրադարանով եւ տվյալների բազայով՝ միջհամալսարանական սպորտում տեղի ունեցած չարաշահումների վերաբերյալ նյութեր գտնելու համար: Մամուլի ասուլիսի ժամանակ նա չզարմացավ, երբ նախագահի հետ միասին տեսավ քոլեջի սպորտային տնօրենին եւ երկու մարզիչների: Ոչ էլ զարմացավ, երբ նախագահը ժխտեց գաղտնի վճարների մասին մեղադրանքները: Թղթակիցը սպասում էր դրան:

Զարմանալի չէ, որ երբ թղթակիցը վերադարձավ խմբագրություն, նա կարողացավ արագ գրել եւ առավոտյան թողարկման համար համապարփակ նյութ ուներ: Նա պատրաստել էր նախապատմությանը վերաբերող տեղեկությունները եւ գաղափար ուներ, թե ինչի մասին է լինելու դեպքը՝ չարաշահումների ժխտման:

Խոսեց նախագահը, ինչպես նաեւ քոլեջի սպորտային տնօրենը եւ երկու մարզիչները: Հետո թղթակիցները հարցեր տվեցին: Սենյակով պտուտահողմի նման անցան հազարավոր բառեր եւ առնվազն մեկ դյուժին գաղափարներ, բայց թղթակցին հարհանգ էր տրված սահմանափակվել մեկ սյունակով: Այդ նպատակը նրան պահում էր որոշակի սահմաններում, չնայած նոթատերերում եղած նյութի ծավալին:

Գորշը հաղթում է սեւ ու սպիտակին: Մարք Փաթինքինի զարգացրած գաղափարը իր ամուսնուն սպանած կնոջ մասին այն էր, որ տնային տնտեսուհին «ստիպված պատասխանել էր տարիներ տեւած բռնություններին»: Բայց երբ Լուսի Ֆոսթերը պատմեց, որ ինքը սիրում էր ամուսնում հակառակ նրա ծանր բնավորությանը, Փաթինքինը հասկացավ, որ իր տեսությունը ոչինչ չարժե:

Սկզբում նա բարկացավ: Նյութ չկա: Հետո «Փրովիդենս Բյուլեթեն»-ի թղթակիցը որոշեց փոխել իր նպատակակետը: «Բռնությունների ենթարկված կինը, որը պատասխանում էր բռնությամբ, պարզապես կլիշե է»: Փաթինքինն աշխատեց սպանված

ամուսնուն պատկերել որպես «պարկեշտ ամուսին եւ հայր», որը հարբած ժամանակ մոլեգնում էր: «Չարագործին մարդկային գծերով օժտելը, կարծում եմ, ի նպաստ նյութի էր: Գորշը հաղթեց սեւ ու սպիտակին»:

Ուոլթեր Լիփմանը, ամերիկյան լրագրության խոշորագույն դեմքերից մեկը, մի առիթով նկատել է, որ թղթակցի համար հավաքելու չափազանց շատ փաստեր կան, եւ նույնիսկ եթե թղթակիցը կարողանա դրանք բոլորը հավաքել, ոչ մեկը չի ուզենա այդ ամենը կարդալ: Լրագրության էությունն, ասում էր նա, ընտրողական գնահատականն է:

Լուրերն իրականության հակիրճ պատկերն են: Լրագրողի աշխատանքը թեման կամ թեմաներն ընտրելն է, որոնք լավագույնս պատկերում եւ ամփոփում են դեպքը: Քանի որ դեպքերը հաճախ անկանոն են, իսկ ժամանակը միշտ սուղ է, թղթակիցն աշխատում է փաստահավաքման ընթացքում առաջ ընկնել՝ հնարավորին չափ շուտ զարգացնելով գաղափարը:

Այնուհետեւ հարկ է դիտարկումներ կատարել, հարցեր տալ եւ հետազոտել նախապատմությունը, որոնք էլ կազմում են հոդվածի բուն նյութը հիմնավորող մանրամասնությունները:

Զգուշացում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդիկ, որոնք նախապես որոշ գաղափարներ ունեն այն մասին, թե ինչ են տեսնելու եւ լսելու, այդ գաղափարները կհաստատեն, ինչ էլ որ լինեն իրենց դիտարկած դեպքերն ու փաստերը: Ընտրողական ընկալումը եւ պահպանումը վտանգավոր են թղթակիցների համար, որոնք պետք է ուշադրություն դարձնեն այն դիտարկումներին, որոնք հակասում են իրենց ենթադրություններին:

Նախնական գաղափարները օգնում են գործի դնելու թղթակցության շարժիչը: Այս փորձնական թեմաները շարժում եւ ուղղություն են հաղորդում: Բայց եթե թղթակցությունը պարտություն է կրում այս գաղափարները հիմնավորելու գործում, նրանցից արագ ազատվում են եւ որդեգրում մի նոր պլան, որն ավելի է համապատասխանում նոր փաստերին:

Ինչպես ձեւավորել գաղափարներ

«Ենթադրենք, թե քաղաքագլուխը պատրաստվում է պակասեցնել ոստիկանների թիվը, որովհետեւ քաղաքի բյուջեի հետ կապված խնդիրներ կան: Կզրկվենք բազմաթիվ ոստիկաններից: Կարեւոր լուր է: Իմ պարտքը կլինի ոչ թե պարզապես գրի առնել ձայնագրիչի նման, այլ փորձել եւ քաղաքագլխից ու այլ պաշտոնյաներից, եւ բյուջեի կամ ոստիկանության հետ կապ ունեցող մարդկանցից հարցազրույցների միջոցով պարզել, թե ի՞նչ է դա նշանակում: Նրա ասածը լու՞րջ է: Թե՞ պարզապես խորամանկություն է՝ նահանգից ավելի շատ միջոցներ ստանալու համար: Նա կկարողանա՞ դա հեշտությամբ գլուխ բերել: Ի՞նչ է դա նշանակելու պարեկության առումով: Ի՞նչ է դա նշանակելու հանցագործությունների առումով»:

Քլայդ Հաբերման, «Նյու Յորք Թայմս»

Իմանալ հիմունքները

Հրատապ լուրերը կարող են բացառություն լինել գաղափարը սկզբից ունենալու մոտեցումից: Չէ՞ որ թղթակիցը երբեք չգիտե, թե ինչ է սպասվում հրատապ լուրից: Փաստն այն է, որ լրատվական ներդիրների մեծ մասը իսկապես կարելի է համապատասխանեցնել մոդելին (նմուշօրինակին), եւ եթե թղթակիցը տիրապետում է նմուշօրինակին, նրա համար շատ ավելի հեշտ կլինի թղթակցել ու նյութը գրել: Մենք կարող ենք այդ մոդելը կոչել առաջին անհրաժեշտության պայմաններ կամ պատմության հիմունքներ:

Առաջին գլխում դուք կարդացիք Լինդի Ուոշբորնի մասին, որն AP-ի համար հրդեհ էր լուսաբանում: Հենց որ պարզեց, որ Բրեդլի Բիչի հրդեհը լուրջ է, Ուոշբորնը պլան մշակեց: Նրա առաջին հարցը հրշեջ ծառայության դիսպետչերին Աշբերի Փարքում հետեւյալն էր. «Մահվան դեպքեր կա՞ն»:

Ուոշբորնը գիտի, որ հրդեհի կամ ցանկացած աղետի հիմնական տարրը մարդկային չափումն է՝ զոհվածների ու վիրավորների թիվը: Հրդեհի մասին գրելիս կան նաեւ այլ անհրաժեշտ պայմաններ կամ հիմունքներ: Եվ եթե մենք նայենք Ուոշբորնի հարցերին, մենք դրանք կտեսնենք: Նա դիսպետչերին հարցրեց շինության հասցեն, այնտեղ ինչ է տեղակայված, երբ է ստացվել առա-

ջին ահազանգը: Նա ցանկացավ պարզել հրդեհի պատճառը եւ թե ինչ տեսք ուներ շենքը: Ուշբորոնը գիտեր, որ այդ հարցերի պատասխանները ձեւավորելու են իր նյութը:

Առաջին գլխում ներկայացված մահախոսական գրողը նույնպես հարցերի մի շարք ուներ, քանզի գիտեր, որ պատասխանները դրվելու են իր նյութի հիմքում: Նրան անհրաժեշտ էր պարզել անունը, հիվանդությունը, գործունեությունը, ժառանգներին, թաղման արարողակարգը:

Տարբեր տեսակի պատմությունների համար կարելի է սահմանել հիմնական պայմանների ցուցակներ: 9-րդ եւ 10-րդ գլուխներում ներկայացվում են տարբեր բնույթի նյութերի հիմնական բաղադրամասերը կամ առաջին անհրաժեշտության պայմանները:

Հիմունքները հոդվածագրի սկզբնակետերն են թղթակցության ամբողջ ընթացքում: Նրանցից են կախված թղթակցի վաղ դիտարկումները եւ աղբյուրներին ուղղված առաջին հարցերը: Նրանք են ձեւավորում նյութը, լցնում կաղապարը:

Սկսնակների մոտ ամենից հաճախ հանդիպող թերություններից մեկն այն է, որ նրանք իրենց նյութերում չեն ներկայացնում հիմունքները: Խմբագիրն անպայման կնշի, որ հոդվածագիրը իր նյութի մեջ դատարկ տեղ է թողել կամ չի կարողացել արդարացնել ընթերցողի սպասելիքները եւ պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Հիմունքները հավաքելուց հետո, լրագրողը առաջ է շարժվում դեպի ավելի հատուկ եւ մանրամասն դիտարկումներ ու հարցեր: Սովորական, հիմունքներին վերաբերող հարցերի պատասխանները, որպես կանոն, տանում են դեպի այն հարցերը, որոնք բացահայտում են դեպքի կամ անձնավորության եզակի կողմերը կամ բնույթը:

Անկախ այն բանից, թե որքան է տեւում նախապատրաստվելը՝ մի քանի րոպե, օրինակ, հրատապ լուրի համար, թե մի քանի ժամ՝ ակնարկի համար, այն ենթադրում է հիմունքների ամփոփում եւ գուցե նաեւ մի քանի հարցեր գրի առնելը, որոնք անհրաժեշտ է տալ աղբյուրին: Հանձնարարության բնույթը ծնում է որոշակի գաղափարներ դիտարկումների եւ հարցերի համար, որոնք հիմունքներից առաջ են անցնում:

Յուրաքանչյուր հոդված, յուրաքանչյուր հաղորդագրություն կարելի է հարմարեցնել որոշակի տեսակի կամ կատեգորիայի: Գոյություն ունեն մարզական խաղերի մասին նյութեր, որոնցով զբաղվում են մարզական մեկնաբանները, ոստիկանական թղթակիցները գրում են հրդեհներին ու ձերբակալություններին

նվիրված պատմություններ, որոշակի ոլորտ կամ ընդհանուր հարցեր լուսաբանող լրագրողները գրում են նյութեր ժողովների մասին, մամլո հաղորդագրություններ պաշտոնների բարձրացումների կամ նոր արտադրանքի թողարկման մասին: Գոյություն ունեն նաեւ մամլո ասուլիսներ, ժողովներ, մահախոսականներ, վթարներ, հանցագործություններ, եղանակի տեսություններ եւ կարճ դիմանկարներ: Իրադարձությունների կամ թեմաների այս տեսակներից յուրաքանչյուրն ունի հիմնական բաղադրամասեր կամ տարրեր, որոնք պետք է մտնեն նյութի մեջ:

Մահախոսականում սխալ է եղել: Մահախոսականն, օրինակ, ակնհայտորեն պետք է ընդգրկի մահացողի անունը: Քանի որ ընթերցողն ուզում է որոշ բաներ իմանալ այդ մարդու մասին, ամեն մի մահախոսականում պետք է նշվի անձի հասցեն կամ բնակության քաղաքը, ինչպես նաեւ զբաղմունքը: Մահախոսականի համար գոյություն ունեն նաեւ այլ խիստ անհրաժեշտ պայմաններ, որոնք դուրս են մնացել ներկայացվող հեռագրային հաղորդագրությունից: Տեսեք, կարո՞ղ եք արդյոք գտնել պակասող հիմունքներից մեկը:

AM-Մահացել է Հոբգուդը, 180 <

Մահացել է պատերազմի ամենամեծահասակ վետերանը <

ԱՐՔԱԴԵԼՖԻԱ, Արքանզաս - Երկուշաբթի օրը տեղի կունենա Նորման Հոբգուդի թաղման արարողությունը, մի մարդու, որն ըստ պաշտոնական տվյալների, պատերազմի ամենամեծահասակ վետերանն էր երկրում:

Ուրբաթ օրը մահացած Հոբգուդը բանակ է զորակոչվել 1898 թվականին, Իսպանա-ամերիկյան պատերազմի ժամանակ ծառայել է Քենթուքիի կամավորական երրորդ հետեւակային զորամասում: Վետերանների գործերի կառավարչությունն ասում է, որ նա ցուցակներում եղած 30 միլիոն վետերաններից ամենից ծերն էր:

Ըստ Վետերանների գործերի կառավարչության տվյալների, Իսպանա-ամերիկյան պատերազմի վետերաններից կենդանի են միայն մոտավորապես 250-ը:

Քենթուքիի բնիկը եղել է նաեւ Արքանզասի ամենածեր նահանգային օրենսդիրը: Նա երկու ժամկետ ընտրվել է Ներկայացուցիչների նահանգային պալատ՝ 1925 եւ 1927 թվականներին:

Հոբգուդը, որն ապրում էր Արքադելֆիայի ծերանոցում, հաճախ հարցազրույցներ էր տալիս իր վիճակի մասին, որպես ամենածեր վետերանի: Մշտապես Արքադելֆիայում Վետերանների օրվան նվիրված հանդիսությունների մասնակիցն էր:

Անցյալ տարի Հոբգուդին պարգեւատրեցին Արքանզասի Գերազանց ծառայության համար մեդալով Հենդերսոնի նահագային համալսարա-

նում տեղի ունեցած Վետերանների օրվան նվիրված արարողության ժամանակ:

Հոբգուդը եղել է իրավաբան, ուսուցիչ եւ ֆերմեր: Նա գյուղատնտեսությամբ զբաղվել է մինչեւ 99 տարեկան հասակը եւ իր ծննդյան 100-րդ տարեդարձի ժամանակ եկեղեցում կիրակնօրյա ժամերգության ժամանակ քարոզ է կարդացել:

AP-NR-03-02 1413EST <

Նյութը հաղորդելուց մի քանի րոպե անց խմբագիրը նկատեց վրիպումը եւ կարգադրեց նոր նյութ գրել՝ նշելով պակասող հիմունքը: Լուրը նախորդի պատճենն էր, բացառությամբ երկրորդ պարբերության:

Հոբգուդը, որը մահացել է ուրբաթ օրը 108 տարեկան հասակում, հավաքագրվել է բանակ 1898 թվականին եւ Իսպանա-ամերիկյան պատերազմի ժամանակ ծառայել է Քենթուքիի երրորդ կամավորական հետեւակային զորամասում: Վետերանների գործերի կառավարչությունից հայտնել են, որ նա իրենց ցուցակներում եղած 30 միլիոն վետերաններից ամենածերն էր:

(Դուք չգտա՞ք հիմար սխալը. հոդվածագիրը մոռացել էր նշել մահացածի տարիքը, որը բոլոր մահախոսականների հիմնական բաղադրամասերից մեկն է):

Ամփոփելով՝ նշենք, որ պատմության ամեն մի տեսակի համար գոյություն ունեն հիմնական տարրեր եւ դրանք անպայման անհրաժեշտ է ընդգրկել նյութի մեջ: Դրանք սակարկության առարկա չեն: Դուք կարող եք սրտի ուզածի չափ դժգոհել, որ այս պահանջները ձեզ դնում են կաղապարների մեջ: Բայց մոռացեք նրանցից մեկը եւ կընկնեք դժվարին կացության մեջ այն լրագրողի նման, որը մոռացել էր նշել վետերանի տարիքը:

Հիմնական տարրերը կարելի է դնել նյութի ցանկացած մասում՝ լիդում, մեջտեղում, վերջում: Տեղը որոշում է հոդվածագիրը, եւ դա կախված է տարրերի հարաբերական կարեւորության վերաբերյալ նրա կարծիքից եւ նյութի կառուցվածքից:

Սակայն ոչ մի ցուցակ չի կարող կանխագուշակել որեւէ նյութի բոլոր չափումները: Հոդվածագիրը պետք է պատրաստ լինի բացահայտելու իր նկարագրած դեպքի եզակի կողմերը: Հաճախ դա անսովոր, տարօրինակ փաստ է, որ նյութը տարբերում է հրդեհի, մարզական կամ զեկուցումների մասին նման նյութերից: Եթե փաստը եզակի է եւ նշանակալի, հոդվածագիրը դրանով էլ սկսում է իր պատմությունը: Դրանք կարող են լինել հրշեջի արցունքները, երբ նա ծխացող ավերակներից հանում է երեխայի աճյունը, ինսերորդ նետման ժամա-

նակ վերջին վազորդի սխալը, դպրոցական խորհրդի թեկնածուների հաճախակի բացակայությունները ժողովներից:

Լրագրությունը մեխանիկական գործողություն չէ: Այն չի կարող կատարվել այնպես, կարծես վարժական թիմն է մեքենայի նման կատարում իր աշխատանքը: Լրագրությունն արվեստ է, որով զբաղվորները պետք է թարմ աչքով նայեն ամեն մի դեպքի եւ գտնեն նրա եզակի կողմերը: Սակայն աչքը պետք է ֆոկուս՝ կիզակենտրոն ունենա, նայելու ուղղություն: Հիմունքներն էլ լրագրողին ցույց են տալիս ճիշտ ուղղությունը:

Հրդեհների մասին պատմությունները թվում են շատ թե քիչ իրար նման: Լավ թղթակիցները կարողանում են գտնել այն, ինչը նյութը տարբերում է նախորդ շաբաթ գրված նյութից: Ահա Էմիլ Վենիքրի լիդը «Մեսա Թրիբյուն»-ում.

«Չորեքշաբթի առավոտյան բնական գազից ծագած հրդեհի ժամանակ ծանր այրվածքներ է ստացել Մեսայի մի 81-ամյա բնակիչ, որի հարեւանը սպիտակ հացի շերտերի օգնությամբ հանգցրել է մարդու ծխացող մաշկը»:

Ինչպես ներդաշնակ դարձնել կառուցվածքը

«Նյուսդեյի» խմբագրություն այս պատմությունը հասել է բյուրոներից մեկից:

Փլեյնվյու - Մի 12 տարեկան լրագրավաճառ մահացել է չորեքշաբթի օրը, երբ հեծանիվով թերթերը բաժանելիս նրան մեքենա է հարվածել, հայտնել են ոստիկանությունից:

Ֆիլիպ Գոլդսթայնը, որ բնակվում է Ռամզի Ռոուդ 6 հասցեում, տանից դուրս է եկել առավոտյան 5:48-ին եւ հեծանիվը վարել է դեպի Օուլդ Քանթրի Ռոուդ, որտեղ, ինչպես տեղեկացնում են ոստիկանությունից, հատել է Հանթինգթոն, Թիմոն փողոց 7 հասցեում բնակվող 53-ամյա Ջոզեֆ Հավրանքի մեքենայի ճանապարհը: Հավրանքը վնասվածքներ չի ստացել եւ նրան մեղադրանք չի ներկայացվել: Ըստ ոստիկանության տվյալների, նրա մեքենան տեղապտույտ է տվել խոնավ ճանապարհի վրա, երբ վարորդը փորձել է արգելակել:

Գոլդսթայնին տարել են Փլեյնվյուի Կենտրոնական կլինիկական հիվանդանոց եւ ավելի ուշ, վիրահատման նպատակով, տեղափոխել Նասաուի կոմսության Իսթ Մեդոու Բժշկական կենտրոն: Ցերեկը ժամը 2:40 նա մահացել է:

Թերթի խմբագիրն զգաց, որ այստեղ հնարավոր է ավելին գտնել եւ խնդրեց, որ թղթակիցն ավելի խոր զբաղվի այդ լուրով: Ահա այն նյութի սկիզբը, որը գրել է Ջեֆ Սոմերը:

ՓԼԵՅՆՎՅՈՒ - Երեքշաբթի առավոտյան մոտավորապես ժամը 9-ին Նասաուի կոմսության Բժշկական կենտրոնի բժիշկները Ջերալդ եւ Բարբարա Գոլդսթայններին հայտնեցին այն մասին, որ շատ փոքր է հույսը, թե ավտովթարից վիրավորված նրանց 12,5 տարեկան որդի Ֆիլիպը ողջ մնա:

Գոլդսթայնները պատրաստվում էին Ֆիլիպի բար միցվին՝ հրեա տղայի չափահաս դառնալու ծեսին, որը պետք է տեղի ունենար հաջորդ օրը: Եվ մտածում էին Ֆիլիպի մոտիկ ընկերոջ մասին, որ հրավիրված է բար միցվին: Ընկերը գտնվում էր Մանհեթենի հիվանդանոցում, որտեղ վերջերս նրան պատվաստվել էր իր հոր երիկամը:

«Մենք անմիջապես որոշեցինք նրա (Ֆիլիպի) երիկամները նվիրաբերել պատվաստումների համար»,- հայտնեց երեկ Ջերալդ Գոլդսթայնը՝ Փլեյնվյուի իրենց տան արեւոտ բակում նստած: «Ֆիլիպը շատ զգայուն, կարեկցող տղա էր: Նա շատ էր անհանգստանում իր ընկերոջ համար: Մենք համոզված ենք, որ նա էլ այսպես կուզենար»:

Յոթերորդ դասարանցին, որը երազում էր մի օր ընդունվել Հարվարդի Բժշկական դպրոցը եւ բժիշկ դառնալ, մահացավ չորեքշաբթի օրը: Եվ երեկ Սթոունի Բրուքի համալսարանի հիվանդանոցում Սաֆոլքի երկու երիտասարդ բնակիչներ, որոնք երբեք չէին տեսել Ֆիլիպին, ստացան նրա երիկամները: Ֆիլիպի ծնողներն ասում են, որ իրենց որդին շարունակում է ապրել՝ խորհրդանշական ձեւով:

«Հույս ունեմ, որ մի օր իմ կինը եւ ես կկարողանանք հաց կիսել այդ մարդկանց հետ», - ասում է Մանհեթենում աշխատող իրավաբան Գոլդսթայնը: «Մեզ փոխանցել են, որ իրենք կիսում են մեր վիշտը, եւ հույս ունենք, որ մենք էլ կկարողանաք կիսել նրանց ուրախությունը մեր որդուց ստացած նվերի համար»:

Երիկամ ստացողները՝ 22-ամյա Քեթի Քուիլը, Հաթինգթոն Սթեյշընն, Ռեյնոլդս փող., 16, եւ 23-ամյա Ռոբերթ Թայլիաֆերոն, Փորթ Ջեֆերսոն, Լոնգաքր Քորթ 15, երեկ գիշեր եղել են կայուն վիճակում եւ հանգստանում էին վիրահատություններից հետո, որ իրականացրել է 30 հոգուց կազմված բժշկական խումբը՝ դոկտոր Ֆելիքս Ռափոփորթի ղեկավարությամբ ...

Ինչու՞ է երկրորդ նյութն ավելի հաջող, քան առաջինը: Կա միայն մեկ պատճառ՝ ավելի համապարփակ թղթակցություն: Ահա սա են նկատի ունենում խմբագիրները, երբ թղթակիցներին ասում են. «Դուք գրություն չեք գրում, դուք թղթակցություն եք գրում»:

Նշանակություն չունի, թե ինչ հմտությամբ հոդվածագիրը կվարվի բառերի հետ, բայց նույնիսկ ամենատաղանդավոր հոդվածագիրն առանց լավ նյութի շատ բան չի կարող անել:

Լսեք ամենավերջին երգերը, նայեք հեռուստատեսային թոք շոուները, հիշեք ձեր տեսած վերջին ֆիլմը: Երբ նյութը շարքային է ու միջակ, նույնիսկ ամենից շնորհքով կատարողն այն չի կարող կենդանացնել: Ռոուլինգ Սթոունզի ոչ բոլոր երգերն են դարձել պլատինե սկավառակ, եւ Մադոննա էլ չի կարող միջակ մեղեդին դարձնել հիթ: Մայքլ Ջեքսոնի որոշ կատարումներ տափակ են: Դեյվիդ Լեթերմանի ամբողջ աշխույժ հումորը չի կարող կենդանացնել ձանձրալի հյուրին: Ռոբին Ուիլյամսը, Մերիլ Սթրիփը եւ Դասթին Հոֆմանը խաղացել են այնպիսի անպետք ֆիլմերում, որոնց մասին եւ՛ իրենք, եւ՛ իրենց երկրպագուները կգերադասեին ընդմիշտ մոռանալ: Վերջին 40 տարիների լավագույն կինոդերասան համարվող Մարլոն Բրանդոն նկարահանվել է ավելի քան մեկ դյուժին զարմանալի միջակ ֆիլմերում:

Բայց, եթե տրվի լավ նյութ, ռոք խումբը, երգիչը, թոք շոուի վարողը, տաղանդավոր դերասանը կամ դերասանուհին կստիպեն, որ մենք նստենք ու բացականչենք. «Այ սա ուրիշ բան է»: Այդպես էլ այն հոդվածագիրը, որը դիպուկ դիտարկումներ է կատարում եւ ճիշտ հարցեր տվել:

Քարոլ Մաք Քեյբը «Փրովիդենս Ջորնալ»-ի խմբագիրը, որը զբաղվում է լրագրողների գրելու հմտությունների հարցերով, մի քանի խորհուրդ ունի:

Դուք հարց եք տալիս՝ ինչի՞ նման էր դա, ի՞նչ տպավորություն թողեց: Տարեք ընթերցողին այնտեղ, որտեղ նա չի կարող գնալ: Դուք թղթակից եք, գնացեք եւ ձեզ հետ բերեք տեղեկություններ: Ինչպե՞ս էր այն անտառներում: Ինչպե՞ս էր այն կղզում: Ինչպե՞ս է լինում մարդու երազներում: Եվ դուք դա անում եք՝ միավորելով նշանակալի մանրամասնության ամեն մի փշուրը եւ այն օգտագործելով այնտեղ, որտեղ հարմար եք գտնում: Երբեմն այն, ինչ դուրս եք թողնում, նույնքան կարեւոր է, որքան ձեր օգտագործածը;

Ծանոթացեք ոլորտի հետ

Թերթի համար լրահավաքման կենտրոնը ոլորտն է: Թղթակիցները տեղավորվում են այն ռազմավարական դիրքերում, որտեղ սովորաբար ստեղծվում են լուրերը՝ ոստիկանությունում, կոմսության դատարանում, քաղաքապետարանում կամ դաշնա-

յին դատարանում: Այս դեպքերում նշանակված թղթակիցները կոչվում են տեղամասային (ոլորտի) թղթակիցներ:

Որոշ թղթակիցներ ունենում են ոչ թե աշխարհագրական, այլ որեւէ բնագավառի վերաբերող տեղամասեր: Մինչ ոստիկանական կամ քաղաքապետարանի լուրերի թղթակիցներն իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում մի տեղում (աշխարհագրական տեղամաս), կրթության եւ շրջակա միջավայրի հարցերը լուսաբանող թղթակիցները շարժվում են ընդարձակ տարածքներով եւ ուսումնասիրում բազմատեսակ թեմաներ (թեմատիկ տեղամասեր/ոլորտներ): Կրթության հարցերի թղթակիցն այցելում է տարրական դպրոցներ, մտնում է համայնքի քոլեջները, մասնակցում է դպրոցական խորհուրդների նիստերին եւ նույնիսկ մեկնում նահանգի մայրաքաղաք՝ լուսաբանելու կրթության հետ կապված խնդիրներ: Շրջակա միջավայրի հարցերով զբաղվող թղթակիցը լուսաբանում է տեղական, շրջանային, նահանգային եւ դաշնային զարգացումները:

Այլ թեմատիկ ոլորտներից են բժշկությունը, գիտությունը, աշխատանքը, գյուղատնտեսությունը, քաղաքականությունը, կրոնը եւ կատարողական արվեստները: Սպորտը եւս համարվում է ոլորտ, քանի որ մարզական մեկնաբանների մեծ մասը գրում է մի քանի մարզաձեւերի մասին:

Քանի որ ռադիո- եւ հեռուստակայանների մեծ մասն ավելի քիչ թղթակիցներ ունի, քան թերթերը, համարյա բոլոր կայանների թղթակիցները զբաղվում են ընդհանուր հարցերով: Միայն ցանցերը եւ խոշորագույն ռադիո- եւ հեռուստակայաններն ունեն տեղամասային թղթակիցներ:

Ռադիոհեռուստակայանների թղթակիցների մեծ մասը լուսաբանում է նաեւ ընդհանուր հարցեր: Մի հերթափոխի ընթացքում Լոս Անջելեսի AP-ի թղթակից Ջենիֆեր Բոուլզը լուսաբանում էր Յունիվերսալ ստուդայում բռնկված մեծ հրդեհը եւ գնացքի վթարը, որում զոհվել էին չորս հոգի: Իսկ երբ նա երեկոյան պատրաստվում էր դուրս գալ գրասենյակից, զանգահարեցին Լոս Անջելոս Դոդջերս թիմից, որը շահավետ պայմանագիր էր կնքել Մեթսի աստղ Դերիլ Սթրոբերիի հետ: Սա բացառիկ լուր էր, եւ Բոուլզը նորից սկսեց աշխատել: Գիշերվա ժամը 3-ն էր, երբ նա ճանապարհ ընկավ տուն:

Կապեր հաստատեք

Կրոնի հարցերը լուսաբանող իր տեղամասում Մելանին նորելուկ էր եւ հիշեց լրագրության հրահանգչի խորհուրդը: «Նոր տեղամասում ծանոթացեք բոլորի հետ, այլ ոչ միայն պատասխանատուների»,- ասում էր նա:

Բոլորի՞: Այո, ոչ միայն քաղաքի ամենամեծ եկեղեցու պաստորի, այլ նաեւ երգեհոնահարի, խմբավարի եւ քարտուղարի հետ: «Տվեք նրանց ձեր այցեքարտը, նրանց համար գրի առեք ձեր անունը եւ հեռախոսի համարը»,- ավելացնում էր մի հրավիրված դասախոս:

Ավելի ուշ այդ խորհուրդը լիովին ապացուցեց իր ճիշտ լինելը, երբ Առաջին բապտիստական եկեղեցու քարտուղարը նրան հայտնեց՝ Աստվածաշնչի ճշգրիտ մեկնաբանության առիթով խորհդում տեղի ունեցած պառակտման մասին: Մի այլ կարեւոր լուր սկսվեց այն բանից, որ տեղական սինագոգի կանտորը տեղեկացրեց տարբեր դավանանքի մարդկանց միջեւ ամուսնության ծեսերին ռաբբիի մասնակցության վերաբերյալ սինագոգի նոր դիրքորոշման մասին:

Նա սովորեց մտերմիկ զրուցել իր ոլորտի մարդկանց հետ այնպես, որ չթվա, թե ինքը լուրեր է հավաքում: Չէր մոռանում հեռախոսով կապվել նրանց հետ, ում հաճախ չէր կարող այցելել:

«Մոտեցեք ու սեղմեք ձեռքերը»,- ասում է Կուրտ Ռոգանը «Սեդար Ռափիդս Գազեթ»-ից: Այնուհետեւ ձեր ծանոթներին խնդրեք ձեզ ներկայացնել ուրիշներին: Թերթի կրթական ոլորտի թղթակից Ռոգանը սկսնակներին խորհուրդ է տալիս ծանոթություններ հաստատել այն անհատների հետ, ովքեր բավականին ժամանակ այդ ոլորտում են: «Այդ անձնավորությունը կարող է հետապնդել իր նպատակները, սակայն ձեզ էլ կարող է որոշակի հեռանկար տալ»:

Մայք Քինգը՝ Ատլանտայի «Քոնսթիթյուշընի» գիտության եւ բժշկության ոլորտների թղթակիցը, ասում է, որ մարդկանց հետ կապեր հասատելու լավագույն ձեւը «նրանց հետ ծանոթանալն է՝ առանց նրանց մասին գրելու նպատակ ունենալու: Որոշ ժամանակ է պահանջվում, որ մարդիկ իրար ընտելանան»: Քինգին դուր է գալիս աղբյուրների հետ լուրերի փոխանակումը: «Դու նրանց մի համեղ պատառ ես տալիս, որ իրենց հետ տանեն: Ոչ մի այնպիսի բան, որ դու կգրեիր թերթի համար, բայց նրանք սիրում են այդպիսի ներքին ասեկոսեներ»: Ի պատասխան, պատմում է նա, ինքը ստանում է նշանակալի տեղեկություններ: Նա նաեւ

նշում է, որ հասարակական կապերով զբաղվողները եւս շատ օգտակար են: «Երբ նոր ես սկսել այդ ոլորտում աշխատել, հանրային կապերի ծառայության աշխատակիցներից կարող ես իմանալ, թե ովքեր են այդ ոլորտի մասնագետները, գիտակ մարդիկ, ում հետ արժե հանդիպել»:

Երբ Դան Ռադերը լուսաբանում էր Սպիտակ տան գործունեությունը CBS-ի նորությունների համար, նա պատմում էր, որ ուժեղ մրցակիցների հետ վազքարշավին կարողացավ դիմանալ շնորհիվ իր անձնական աղբյուրների: «Նրանք ինձ անտեսանելի թանաքով գրված նամակներ չէին փոխանցում, բայց ես ինձ համար կանոն էի դարձրել ծանոթանալ քարտուղարուհիների, վարորդների, վերելակի օպերատորների եւ մատուցողների հետ,- պատմում է Ռադերը,- ես նրանց հրավիրում էի ճաշի կամ նրանց հետ կիսում էի իմ սիգարները կամ այն, ինչ իրենց հաճելի էր»:

Քաղաքավարությունը, ուրախ մեկ-երկու խոսքը եւ մարդկային հետաքրքրությունը հաճախ բավական են հնարավոր աղբյուների հետ ընկերանալու համար: Ծրջապատում գտնվողներին դուր է գալիս, որ մարդիկ կարծում են, թե իրենք մոտ են աշխարհի ուժեղներին եւ իրենց համարում են կարեւոր գործերի մասնակիցներ: Սրան հասնում են լրագրողներին տեղեկություններ հաղորդելով:

«Վիզալիա Թայմս-Դելթա»-ի դատական լուրերի թղթակից Լորի Ուիլսոնը սիրում է զրուցել իր տեղամասի մարդկանց հետ: «Ես սիրում եմ զբոսնել եւ զրուցել դատարանի գործավարների հետ: Մի վախեցեք նրանց հարցնել՝ սա ի՞նչ է նշանակում»:

Թղթակիցները չեն կարող իրենց աղբյուրներից ավելին անել: Աղբյուրները ներքին տեղեկություններ են տալիս եւ բարդ դեպքերում նախապատմություն են ապահովում: Մասնավոր տեղեկությունը հանգեցրեց Դերիլ Սթրոբերիի մասին լուրին, որը լքում էր Նյու Յորք Մեթսը՝ հանուն Լոս Անջելես Դոդջերների, եւ որպեսզի բացահայտի, որ Գրեմիի մրցանակակիր դուետը չի երգել իրենց հիթ ալբոմում:

Թղթակիցները գուրգուրում են իրենց աղբյուրները, իսկ բերքը կարող է շատ նշանակալի լինել: Մի աղբյուր, որի հետ կապեր էր հաստատել AP-ի գիտության ոլորտի խմբագիր Փոլ Ռոբբրնը իր տեղամասում գտնվող Ծրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունից, զանգահարեց եւ տեղեկացրեց, որ ծխախոտի լոբբին կարողացել է մի գիտնականի հեռացնել պասիվ ծխելու հետեւանքներն ուսումնասիրող հանձնաժողովից: Ռոբբրնը ճշտեց այս տեղեկությունը, եւ նրա հոդվածն այդ հեռացման մա-

սին հանգեցրեց նրան, որ ՇՄՊ գործակալությունը նորից աշխատանքի ընդունեց այդ գիտնականին:

Թղթակիցը չի կարող իր տեղամասում ամեն տեղ լինել: Լավ աղբյուրը աչքերի լրացուցիչ զույգ է: Դատարանում, ուր օրական բազմաթիվ գործեր են վարվում, իրավաբանը դիմում է թղթակցին եւ պատմում նրան, որ պատրաստվում է հայց ներկայացնել կառուցվող շինությունը ցանկապատելու դատարանի որոշման դեմ: Քաղաքապետարանում քարտուղարուհին թղթակցին հրավիրում է պլանավորման գրասենյակ, որ ցույց տա մերձքաղաքային զբոսավայրի հենց նոր ներկայացված պլանները:

Երկու վտանգ: Աղբյուրների հետ գործ ունենալիս՝ տեղամասային թղթակիցները բախվում են երկու՝ աղբյուրների համար գրելու եւ նրանց հետ չափազանց մոտ հարաբերություններ հաստատելու վտանգի : Երբեմն թղթակիցը կարող է գրել այնքան մասնագիտական ձեւով, որ նրան միայն իր աղբյուրը կհասկանա: Ավելի նենգ ծուղակ է աղբյուրների հետ չափից ավելի մոտիկ ընկերական հարաբերություններ հաստատելը, այնքան մոտիկ, որ թղթակիցը կարող է նրանց նկատմամբ մեղմ վարվել: Թղթակիցը գուցե նաեւ չուզենա քննադատական նյութ գրելու պատճառով լավ աղբյուր կորցնել:

Աղբյուրի վստահելիությունը կարելի է ստուգել մի քանի եղանակներով, ասում է «Նյուսդեյի» հետաքննական թղթակցության ղեկավար Բոբ Գրինը:

Նախորդ արժանահավատություն - Աղբյուրն անցյալում ճշգրի՞տ է եղել:

Վավերականություն - Կարո՞ղ է աղբյուրն ապահովել այն նյութերը, որոնք կվավերացնեն նրա հաղորդած տեղեկությունները:

Մերձավորություն - Աղբյուրն այնպիսի դիրք ունի՞, որ նրան մատչելի լինեն ձեզ տրամադրվող փաստերը:

Դրդապատճառ - Ձեզ տեղեկություններ հաղորդելու աղբյուրի շարժառիթը տրամաբանակա՞ն է:

Համատեքստին համապատասխանելը - Տեղեկությունը համապատասխանու՞մ է հայտնի փաստերին:

Վստահելիություն - Աղբյուրը կայուն եւ խելացի անձի տպավորություն թողնու՞մ է:

Զգուշացում. ուշադիր եղեք մասնագետների հետ

Նույնիսկ աղբյուրներից լավագույնները կարող են սխալվել, երբ ներկայացնում են իրենց կարծիքները եւ ենթադրություններ են անում: Նայեք Պարսից ծոցի պատերազմի վերաբերյալ այս կանխատեսումներին, որոնք տպագրվել են մինչեւ պատերազմը սկիզբը:

«Միացյալ Նահանգները, հնարավոր է, հեռանա իր եվրոպական շատ դաշնակիցներից եւ համարյա հաստատ կդառնա արաբական աշխարհի թշնամության առարկա»:

Զբիգնեւ Բժեժինսկի,
ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության
նախկին խորհրդական

Ոչ մեկն էլ տեղի չունեցավ:

« ... կոալիցիան մի օրում գրեթե լիովին կքայքայվի» եթե ԱՄՆ-ը պատերազմ սկսի, եւ ԱՄՆ-ը չի ունենա «ոչ մի բարեկամ, Իսրայելից բացի ...»

Ջորջ Բոլ, ՄԱԿ-ում ԱՄՆ-ի նախկին ներկայացուցիչ

Կոալիցիան շարունակեց իր գոյությունը, եւ Մերձավոր Արեւելքի երկրներից միայն Հորդանանը պաշտպանեց Իրաքին:

Իրաքը կօտագործի քիմիական զենք, որը կստիպի, որ ԱՄՆ-ի զորքերը «խուճապի մատնվեն եւ նահանջեն»: Իսրայելը կհարձակվի Իրաքի վրա: Արաբական երկրները կանցնեն թշնամու կողմը: Իրաքը կգործադրի սիբիրախտի վարակը: ԱՄՆ-ը կպատասխանի միջուկային զենքով, իսկ տեռորիստները «կգրոհեն Արեւմուտքի ատոմակայանները եւ կռմբահարեն Յունիոն Սթեյշընը Վաշինգթոնում»:

Դենիել Թ. Փլեշ, Բրիտանա-ամերիկյան
անվտանգության տեղեկատվական խորհուրդ

Վերը նշվածից ոչ մեկն էլ տեղի չունեցավ:

Այժմ նայեք պատերազմից առաջ կատարված կորուստների գնահատականին:

3344 - 16059 - Ջոշուա Էփսթայն, Բրուքինգսի հիմնարկություն
30000 - Փաթ Բուքանան, քաղաքական վերլուծաբան
45000 - Պաշտպանության հարցերի տեղեկատվական կենտրոն:
Իրականում, կորուստների թիվը 500-ից պակաս էր,
որի մեծ մասը սեփական կրակի եւ վթարների հետեւանք էր:

Վտանգավոր հարցազրույց: Աղբյուրներն օգտակար եղան Յան Վոնգին, երբ նա, դեռեւս սկսնակ լրագրող, գրում էր Մոնրեալի նավահանգստի մասին եւ հետո էլ օգնեցին նրան Պեկինում անցկացրած տարիներին: Աղբյուրները կազմակերպեցին հարցազրույց ուսանողական մի առաջնորդի հետ այն բանից հետո, երբ Տյանանմեն հրապարակի կոտորածը նրան ստիպել էր ընդհատակ անցնել: Ձերբակալվել էին 21 ամենից փնտրվող ուսանողական առաջնորդներից ութը, ներառյալ մեկը, որին մատնել էր քույրը:

Ուսանողի հետ հանդիպելիս Վոնգը պետք է զգույշ լիներ: «Հանդիպումը պետք է գաղտնի լիներ: Օտարերկրյա լրագրողներն աշխատում էին արտաքսման վտանգի տակ, եւ ռազմական դրության օրենքներով ուսանողի հետ հացազրույց ունենալն ապօրինի էր»: Նրանք երկուսն էլ կարող էին ձերբակալվել:

Վոնգը հանդիպումը նշանակեց հասարակական զբոսայգում:

«Եթե ինչ-որ մեկը մեզ մոտենար, մենք կնկատեինք: Նա փախչելու հնարավորություն կունենար:

Հարցազրույցը տեւեց մոտ 45 րոպե: Նա հանգիստ էր, բայց ես շատ գրգռված էի: Հետս մի երրորդ մարդու էի բերել, որը որոշ հեռավորության վրա էր: Նա պետք է վկա լիներ, եթե մեզ երկուսիս էլ բռնեին»:

Ամեն ինչ հարթ անցավ: Ուսանողների առաջնորդը խնդրեց, որ նյութը չտպագրվի, մինչեւ որ ինքը նոր թաքստոց տեղափոխվի, եւ Վոնգն ու իր խմբագիրը համաձայնվեցին: Ահա այսպես է սկսվում նյութը:

> Կառավարության կողմից ամենից փնտրվողների ցուցակի մեջ ընդգրկված ուսանողական առաջնորդը Պեկինում հայտարարեց, որ ինքը եւ այլ այլախոհներ երկրի ներսում ստեղծել են բարեփոխումների նոր ճակատ:
>
> 22-ամյա Ժայ Վեյ Մինն ասաց, որ խումբը, որն իրեն կոչում է Չինաստանի փրկության ժողովրդավարական ճակատ, արդեն ակտիվ է հեռավոր մարզերում եւ վերջերս սկսել է կողմակիցներ հավաքել մայրաքաղաքում:
>
> Ճակատը պաշտոնապես ստեղծվել է Պեկինում փետրվարի 25-ին, իր 60 անդամների երեք ժամ տեւած գաղտնի ժողովի ժամանակ ...
>
> Պարոն Ժայը զարմանալիորեն համարձակ էր: Միայն անհանգիստ աչքերն էին մատնում նրա տագնապը: «Ես չեմ ուզում բանտ ընկնել: Բայց ես չեմ վախենում»,- ասում էր նա ...

Նյութը պատրաստելիս, հանդիպումներ կազմակերպելու համար, Վոնգը ստիպված էր օգտագործել այն, ինչ ինքը կոչում էր փողոցային հնարքներ: «Հետապնդումների ժամանակ ես պարզեցի, որ մարդկանց հետ առանց հայտնաբերվելու զրուցելու լավագույն ձեւը գնումների գնալն է: Պեկինի շուկայում հագուստեղենի շրջիկ վաճառողները թույլ են տալիս, որ հաճախորդները հագուստը փորձեն իրենց փոքրիկ տաղավարների ներսում: Դա կատարյալ վայր է հարցազրույցների համար»:

Գրեմի շահած խաբեբաները: «Դա իհարկե Բեռլինի պատի քանդվելը չէր,- պատմում է AP-ի Նյու Յորքի բյուրոյի թղթակից Լարի Մաք Շեյնը,- կամ էլ կոմունիզմի փլուզումը Արեւելյան Եվրոպայում»: Սակայն դա էլ խիստ հետաքրքիր էր, այդ «զանգը մի հին աղբյուրից»: Զանգահարողը հայտնեց, որ «Միլլի Վանիլլի» փոփ խմբի երկու անդամներ մի նոտա իսկ չեն երգել հսկայական հաջողություն ունեցած «Անուշիկս, դու գիտես, որ դա ճիշտ է» ալբոմում: MTV-ի աստղերը վաճառել են իրենց ալբոմի 7 միլիոն օրինակ եւ արժանացել են Գրեմի մրցանակին որպես «լավագույն երիտասարդ երգիչներ»: Աղբյուրի բացահայտումը ցնցեց փոփ երաժշտության աշխարհը, իսկ «Միլլի Վանիլլի»-ի կատարողներ Ռոբ Փիլաթուսը եւ Ֆաբ Մորվանը ստիպված եղան հրաժարվել իրենց մրցանակից:

Թղթակիցները սովորել են, որ լրագրության մեջ հաջողության հասնելու ուղին իրենց ոլորտներում նախաձեռնություն ցուցաբերելն է, որը նշանակում է սովորական թղթակցությունից մի քայլ առաջ անցնել:

Նախաձեռնություն ցուցաբերեք

Ոստիկանական լուրերի թղթակցից պահանջվում է հանցագործության լուսաբանում լրատվական ներդիրում: Նախաձեռնության արտահայտություն է, երբ թղթակիցը, ոստիկանական տեղեկագրերի մեջ խորանալով, պարզում է, որ հանցագործությունների մեծ մասը կատարվում է երեկոյան ժամը 9-ի եւ գիշերվա ժամը 2-ի միջեւ: Իսկ պարզելը, որ հենց այդ ժամերին են ավելի քիչ թվով ոստիկաններ աշխատանքի դուրս գալիս, քան օրվա որեւէ այլ ժամերի, խոսում է իսկական նախաձեռնության մասին: Այդ կերպ ստեղծված պատմությունները, որոնք թղթակցի նախաձեռնության արդյունքն են, կոչվում են նախաձեռնական:

Ազատ լրագրողները հաց վաստակելու համար հիմնվում են իրենց նախաձեռնության վրա: Գրեգ Գրանդսենը, մի կարճ ժամանակ թերթի թղթակից աշխատելուց հետո, մեկնեց Խորհրդային Միություն՝ որպես ազատ լրագրող: Նա գրում էր պատմություններ, որոնցով այլ թղթակիցներ, զբաղված քաղաքական եւ տնտեսական զարգացումներով, հետաքրքրվելու ժամանակ չունեին: Ինչպես է վերակառուցումն ազդել հրատարակչական արդյունաբերության վրա, խորհրդային ռոք խմբերի անհաջող փորձերը՝ մրցակցելու արեւմտյան երաժշտական արդյունաբերության հետ, խորհրդային ֆիլմարտադրությունը, մոլախաղերը Խորհրդային Միությունում: Պուշկինի հրապարակի ստորերկրյա անցումում նա մի կին տեսավ, որը Հարավային Աֆրիկա ներգաղթելու փաստաթղթեր էր վաճառում: Այդ կնոջ մասին նրա նյութը տպագրվեց առաջին էջում:

Խաղատան սեղանատամները: Երբ Հայդի Էվանսը լրագրություն էր ուսանում, նրան հանձնարարվել էր նյութ գրել Ատլանտիկ Սիթիի խաղատները տանող ձրի ավտոբուսները նստող մարդկանց մասին: Ի տարբերություն իր շատ համակուրսեցիների, որոնք զրուցում էին մարդկանց հետ ավտոբուսում կամ խաղային ավտոմատների մոտ, Էվանսը մի քանի թաղամաս քայլեց դեպի մոտակա գրավատունը:

«Մարդիկ ի՞նչ են գրավ դնում, երբ փողը վերջանում է»,- դիմեց նա խանութի տիրոջը: Վերջինս ձեռքը տարավ վաճառասեղանի տակ, հանեց մի աքցան եւ պատասխանեց:

«Նրանք հարցնում են, թե ես ինչ կտամ ոսկե ատամի դիմաց,- ասաց նա,- եւ ես նրանց այս եմ մեկնում»: Էվանսն իր նյութը կառուցեց այս մեջբերման շուրջը:

Վտանգավոր խաչմերուկ: Ռութ Փադավարը Նյու Ջերսիի Հաքենսաք քաղաքի «Ռեքորդից» ասում է, որ նյութեր պատրաստելիս, ինքն օգտվում է իր սեփական փորձից: « Քիչ էր մնացել ես զոհվեի Ֆեըր Լոնի խաչմերուկում,- պատմում է նա,- եւ երբ խմբագրություն հասա, փնտրեցի այդ վայրում տեղի ունեցած վթարների, ինչպես նաեւ պլանավորվող վերանորոգումների մասին քաղվածքներ: Վերջին նյութը տպագրվել էր մի քանի տարի առաջ: Ես այն լրացրեցի»: Ահա արդյունքը՝

Տրասպորտի նահանգային վարչության առնվազն 13 տարի տրվող խոստումներից հետո էլ Ֆեքը Լոնի խիստ վտանգավոր խաչմերուկը դեռեւս մնում է խիստ վտանգավոր, իսկ վերանորոգումների վրա նույնիսկ մի փեննի չի ծախսվել:

Նա շարունակեց՝ ցույց տալով, որ ամեն տարի խոստանում են վերակառուցել եւ հետո մոռանում այդ մասին: Խաչմերուկում, գրում է նա, վեց տարում տեղի է ունեցել 179 վթար, 120 հոգի վնասվածքներ են ստացել:

Մահացու սնունդը: Լայզա Լ. Ռիքմանը՝ AP -ից, ծննդատանը կրծքով կերակրում էր իր դստերը, երբ անցնող բուժքույրը արհամարհական նկատողություն արեց կրծքով կերակրող մայրերի մասին: Ոչ մեկը նրան կերակրելիս չէր օգնում, իսկ երբ Ռիքմանը դուրս էր գրվում հիվանդանոցից, մի բուժքույր նրա ձեռքը խոթեց մանկական սննդի նմուշներով մի փաթեթ «չնայած ես այդ մասին չէի խնդրել»: Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի մամլո ասուլիսի ժամանակ Ռիքմանն իմացավ, որ բժիշկներին խիստ անհանգստացնում է կրծքով կերակրող մայրերի թվի կտրուկ նվազումը:

«Ես որոշեցի ուսումնասիրել այդ վիճակը,- պատմում է նա: - Ստացվեց երեք մասից կազմված մի շարք, որն արտացոլում էր նաեւ մանկական սնունդ արտադրող ընկերությունների գործունեությունը Երրորդ աշխարհի երկրներում: Ընկերությունների կողմից մանկական սննդի վաճառքն այդ երկրներում հանգեցրել էր «տարեկան ավելի քան 1 միլիոն մանկիկների մահվան»,- գրում է նա:

Միացյալ Նահանգներում ամեն տարի 750 միլիոն դոլար է հատկացվում մի ծրագրի, որն, ինչպես գրում է Ռիքմանը «մեծապես խոչընդոտում է կրծքով կերակրելուն», ինչը բժիշկները համարում մանուկներին սնելու լավագույն ձեւը:

Օգտագործեք սեփական փորձը

Ինչպես տեսանք, թղթակիցները երբեմն լավ գաղափարներ են հղանում՝ ելնելով սեփական փորձից: Երբ 1981 թվականին չինական ոստիկանությունը հափշտակեց Յան Վոնգի «Տոյոտան», նա այդ դեպքի մասին գրեց «Գլոուբ էնդ Մեյլ»-ում: «Ամեն ինչ սկսվեց մի տարի առաջ, հունիսի 4-ին, երբ չինական բանակն իր համար կրակով ճանապարհ էր բացում Տյանանմեն հրապարա-

կում», - գրում էր նա: Վոնգը հյուրանոցից լուսաբանում էր դիմագրավումը, իսկ մեքենան կանգնեցրել էր մոտակայքում: Երբ նա ցանկացավ մեքենան վերցնել, այն չքացել էր:

«Իսկ անցյալ ամիս, մենք տեսանք բեժ գույնի ետեւի դռներով մեր հին «Տոյոտան» կանգառում կանգնած», - գրում է նա: Այն օգտագործվել էր որպես ոստիկանական մեքենա: Ի վերջո, ոստիկանությունն այն վերադարձրեց:

«Մեզ ստիպեցին, որ մի փաստաթուղթ ստորագրենք, որ մեքենան մեզ վերադարձվել է լավ վիճակում: Իրականում կոտրված էին օդոմետրը, արագաչափը եւ ազդանշափողը: Բացակայում էին ծխախոտի վառիչը եւ համարանիշները: Մի նստարան պատռված էր, իսկ հատակին շաղ էին տված ծխախոտի կոթուններ եւ կոնֆետների փայտիկներ»:

Բենզինի բաքը նույնպես դատարկ էր:

Վոնգն ունեցել է ավելի լուրջ ընդհարումներ: «Երեք հոգի օրը ցերեկով փորձում էին ինձ առեւանգել եւ գցել առանց համարանիշների մեքենայի մեջ, երբ ես բանուկ ժամին տուն էի վերադառնում»: Վերհիշելով այդ դեպքը՝ Վոնգը նշում է, որ ինքը սխալ է թույլ տվել, որ ետ է մղել այդ մարդկանց: Եթե նրանք հաջողության հասնեին, ասում է նա, ինքը կունենար նախաձեռնական մի սքանչելի հոդված:

Ազատ լրագրողները հաց վաստակելու համար հիմնվում են իրենց նախաձեռնության վրա: Գրեգ Գրանդսենը, մի կարճ ժամանակ թերթի թղթակից աշխատելուց հետո, մեկնեց Խորհրդային Միություն՝ որպես ազատ լրագրող: Նա գրում էր պատմություններ, որոնցով այլ թղթակիցներ, զբաղված քաղաքական եւ տնտեսական զարգացումներով, հետաքրքրվելու ժամանակ չունեին: Ինչպես է վերակառուցումն ազդել հրատարակչական արդյունաբերության վրա, խորհրդային ռոք խմբերի անհաջող փորձերը՝ մրցակցելու արեւմտյան երաժշտական արդյունաբերության հետ, խորհրդային ֆիլմարտադրությունը, մոլախաղերը Խորհրդային Միությունում: Պուշկինի հրապարակի ստորերկրյա անցումում նա մի կին տեսավ, որը Հարավային Աֆրիկա ներգաղթելու փաստաթղթեր էր վաճառում: Այդ կնոջ մասին նրա նյութը տպագրվեց առաջին էջում:

Հետաքննական լրագրություն

«Լավագույն թղթակցությունը՝ կարճ, թե երկար, միշտ հետաքննական է այն իմաստով, որ այն փորում է, փորում ու փորում: Լավագույն գրվածքը սահմանվում է որպես համարյա բացատրական այն իմաստով, որ դեպքը պատկերում է այնքան վառ, այնքան համոզիչ, որ ընթերցողները տեսնում են եւ հասկանում»:

Ջին Ռոբերթս, «Ֆիլադելֆիա Ինքուայրեր»-ի գործադիր խմբագիր

Եթե թղթակիցն ապացուցել է, որ հասկանում է կազմակերպությունների, գործակալությունների եւ պետական ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպումը համայնքում եւ նախաձեռնություն է ցուցաբերել իր ոլորտում, նրան կարելի է վստահել հետաքննությամբ զբաղվել:

Հետաքննությամբ զբաղվող լրագրողները ձգտում են բացահայտել այնպիսի տեղեկություններ, որոնք մարդիկ աշխատում են գաղտնի պահել: Այդ նյութերի մեջ կարող են լինել անօրինական գործողություններ եւ գործողություններ, որոնք օրինական են, սակայն վիրավորական: Վիրավորական ասելով ի նկատի ունենք, որ այդ գործողություններն ինչ-որ կերպ վիրավորում են մարդկանց կամ զրկում իրավունքներից:

«Շարլոթ Օբզըրվըր»-ը հասարակությանը գերազանց ծառայելու ասպարեզում Փուլիթցերյան մրցանակ է շահել՝ Հարավի տեքստիլ ֆաբրիկաներում տիրող վտանգավոր եւ հակասանիտարական պայմանների հետեւանքները ներկայացնող հոդվածաշարի համար: Շարքը վերնագրված էր «Շագանակագույն թոքեր. մահաբեր անփութության դեպք»: Թերթը մի Փուլիթցերյան մրցանակ եւս շահել է PTL կրոնական կազմակերպությունում Ջիմ եւ Թամմի Բաքերների ֆինանսական չարաշահումները բացահայտելու համար: Գանեթի նորությունների ծառայությունը Փուլիթցերյան մրցանակ է ստացել սբ. Պողոսի եկեղեցու հայրերի կողմից ղեկավարվող բարեգործական կազմակերպությունում տեղի ունեցող խարդախությունները ցույց տալու համար:

Հետաքննական լրագրությունը հիմնված է խորամուխ լինելու, գրանցումները, փաստաթղթերը եւ համակարգչային տվյալները մանրամասն ուսումնասիրելու վրա: Հետաքննություն վարող թղ-

թակիցները հիմնվում են նաեւ աղբյուրների վրա՝ գաղտնի եւ ներքին տեղեկություններ ստանալու համար: Լավ աղբյուրների շնորհիվ Բոբ Վուդուորդը եւ Քարլ Բերնսթայնը կարողացան բարձրացնել Ուոթերգեյթի ծածկույթը «Վաշինգթոն Փոսթ»-ում: Այդ աղբյուրները թղթակիցներին ապահովեցին այնպիսի տվյալներով, որոնք հանգեցրին այսպես կոչված Ուոթերգեյթյան կողոպուտի հետ առնչվող բացահայտումներին, որը վերընտրությունները շահելու Նիքսոնի վարչակազմի պլանների մի մասն էր կազմում:

Չնայած որոշ թղթակիցների հանձնարարվում է զբաղվել հետաքննական լրագրությամբ, որպես առանձին ոլորտ, սակայն բոլոր թղթակիցներից էլ ակնկալվում է, որ նրանք եւս իրենց տեղամասերում խորամուխ լինեն տեղեկություններ փնտրելու մեջ: Լրագրողը, որն առանց ստուգելու հավատում է պաշտոնյաների հայտարարություններին, չի կարող ընթերցողներին եւ ունկնդիրներին ապահովել իր ոլորտին վերաբերող տեղեկությունների ամբողջ ծավալով: Այսպիսի թղթակիցը թող երբեք հույս չունենա, որ կզբաղվի հետաքննական լրագրությամբ:

Ինչպես մեկնաբանություններ գրել

Թղթակցին, որն իր ոլորտի գիտակն է, որն ունի լավ աղբյուրներ եւ կարող է ընթացիկ դեպքերը տեսնել համատեքստի մեջ, հաճախ առաջարկվում է մեկնաբանություններ գրել: Այս հոդվածները, երբեմն սյունակի տեսքով, կոչվում են լուրերի մեկնաբանություններ:

Օրինակ՝ հոդվածագիրը կաշխատի ցույց տալ, թե ինչպես է ընդունվել քաղաքային խորհրդի որոշումը. կողմնակից խմբերը, դեմ հանդես եկող կազմակերպությունները, որոնք տանուլ են տվել եւ դրա պատճառները, ինչպես նաեւ նրանց դիրքորոշումների շարժառիթները: Հոդվածագիրը կներկայացնի նաեւ նոր որոշման հետեւանքները:

Մեկնաբանությունը խմբագրական չէ: Խմբագրականների հեղինակները ընթերցողներին կամ ունկնդիրներին ասում են, որ ինչ-որ բան լավ է կամ վատ: Այսինքն, նրանք գնահատականներ են տալիս: Մեկնաբանությունների հեղինակը դեպքը դնում է համատեքստի մեջ:

Դեպքը համատեքստի մեջ դնելը նշանակում է, որ մեկնաբանը դեպքը տեղադրում է պատճառների ու հետեւանքների հոսքի մեջ է: Դեպքը, որը լուրի դեպքում մեկուսացված է, կտրված է հարա-

բերվող դեպքերի շրջանից կամ հոսքից: Մեկնաբանությունը ցույց է տալիս, որ լուրը հոսքի մի մասն է:

Քաղաքային խորհրդի որոշումը՝ քաղաքի սահմաններից դուրս գտնվող մի փոքր տարածություն կառուցապատելու վերաբերյալ, կարելի է ներկայացնել որպես գերբնակեցվածության հետեւանք, որ մարդիկ քաղաքի կենտրոնների հին տներից ձգտում են տեղափոխվել նոր տներ եւ երեխաներին մեծացնել մեծ քաղաքի վտանգներից հեռու: Միջնակարգ դպրոցների նոր ուսումնական ծրագիրը կարող է SAT եւ ACT միավորների անկման, ինչպես նաեւ տեղական համալսարանի ճնշման հետեւանք լինել այն պատճառով, որ չափազանց շատ առաջին կուրսեցիներ կարիք ունեն անգլերենի եւ մաթեմատիկայի շտկիչ դասերի:

Ինչպես հաղթահարել խոչընդոտները

Թղթակցության մասին մեր քննարկումների ընթացքում շեշտել ենք տրամաբանական, համակողմանի մոտեցման անհրաժեշտությունը: Մենք խոսել ենք այն մասին, թե ինչպես են թղթակիցները ընտրում ժամանակավոր գաղափարներ, այնուհետեւ փնտրում են դրանք հիմնավորող նյութեր, հետո հրաժարվում մի թեմայից հանուն մի ուրիշի, քանի որ առաջինի օգտին փաստարկներ չեն հայտնաբերվել:

Այս մոտեցումը ստիպում է, որ թղթակիցը թվա սառն ու մեկուսի, իր դիտարկումները անկիրք գրի առնող, ինչպես էլեկտրոններին հետեւող գիտնականը: Լրագրողների մեծ մասն այդպես չի աշխատում: Բոլորի նման, նրանք էլ ունեն զգացմունքներ, դիրքորոշումներ եւ անձնական արժանիքներ: Ոչ մեկը զերծ չէ զգացմունքներից, նախապաշարմունքներից եւ կանխակալ կարծիքներից: Այս զգացմունքների մի մասը դրական է եւ կարող է նպաստել լրագրության հաջողությանը:

Բարոյական վրդովմունք

Լրագրողների՝ նյութի մեջ խորանալու հիմքում ընկած համառ զգացմունքը բարոյական վրդովմունքն է: Շատ լրագրողներ ձգտում են աշխարհը ավելի լավը դարձնել եւ չեն կարող հաշտվել հարստության եւ իշխանության սխալ գործադրումների եւ չարաշահումների հետ, որոնք կյանքը շատ շատերի համար դարձնում են դժվարին ու տառապանքներով լի: Չբավարարվելով պաշտո-

նական հայտարարություններով, բացատրություններով եւ ներողություններով՝ թղթակիցները, որոնք օրհնված են կամ գուցե անիծված բարոյական վրդովմունք կոչվող զգացմունքով, հասնում են իրենց նպատակին: Տեսեք, թե ինչի է հասել Չիքագոյի WIND ռադիոկայանը:

Մեծ քաղաքներում վթարները հաճախակի են, այնքան հաճախակի, որ լրատվամիջոցները շատ ուշադրություն չեն հատկացնում դրանց: Սակայն մի վթար հուզեց ռադիոկայանի աշխատակիցներին: Այն տեղի էր ունեցել մի կնոջ եւ նրա երկու երեխաների հետ:

Նրանց մեքենան խափանվել էր Դան Ռայան մայրուղու վրա: Այդ երեքը մոտ երկու ժամ սպասել էին, մինչ նրանց կողքով անցնում էին հազարավոր մեքենաներ, ներառյալ մի քանի ոստիկանական: Ոչ մեկն օգնություն չի առաջարկել:

Վերջ ի վերջո մայրը եւ 12-ամյա որդին որոշում են օգնություն փնտրել: Նրանք մյուս տղային, որն անդամալույծ էր, թողնում են մեքենայի մեջ: Բայց ոչ մի օգնություն չեն գտնում: Մինչ ավագ որդին մեքենայից նայում էր, մի մեքենա հարվածում է մորն ու եղբորը, եւ նրանք զոհվում են:

Այդ մահերը զայրացնում են WIND-ի աշխատակիցներից մեկին, եւ այդ զայրույթի հետեւանքով ստեղծվում են հոդվածներ եւ խմբագրականներ՝ Չիքագոյի շուրջը ձգվող մայրուղու 125 մղոնը կապի համակարգով ապահովելու անհրաժեշտության մասին: Այդ արշավի ընթացքում մարդիկ զանգահարում էին եւ պատմում սարսափի իրենց պատմությունները: Մի մարդ պատմեց, որ իր որդին մեքենայով անցնելիս է եղել Այզենհաուերի մայրուղով, երբ մի մոտոցիկլետիստ կոտրել է նրա մեքենայի առջեւի ապակին:

«Մեքենան ճանապարհից շեղվել է, հարվածել սյունին, տղան դուրս է թռչել մեքենայի միջից,- մեջբերում է կայանը հոր խոսքերը: -Նա վնասված մեքենայի կողքին համարյա մեկ ժամ պառկած է մնացել, մինչեւ օգնություն կհասներ»:

WIND-ի այս արշավը շահեց «Սիգմա Դելտա Չի» մրցանակը ռադիոկայանների համար՝ հասարակությանը մատուցած ծառայության ասպարեզում:

Այլ մրցանակներ էլ են ստացել այն լրագրողները, ովքեր բացահայտել են վտանգավոր աշխատանքային պայմաններ, ռասայական անարդարություններ, բանտարկյալների մահվան դեպքեր կոմսության բանտերում՝ բժշկական խնամքի բացակայության պատճառով, վտանգավոր թափոնների անօրինական թաղումներ:

Ճիշտ է, զգացմունքների մասնակցությունը կարող է հանգեցնել լավ հոդվածների, սակայն որոշ զգացմունքներ եւ դիրքորոշումներ կարող են աղճատել դիտարկումները եւ թղթակցին կուրացնել:

Կանխակալ կարծիք

Ինչպես տեսանք, լրատվությունը ընտրության արվեստ է: Լրագրողներն ընտրում են, թե ինչ են ցանկանում դիտարկել, եւ հետո ընտրում են իրենց դիտարկումներից այն տարրերը, որոնք ցանկանում են դնել իրենց նյութերի մեջ: Թղթակիցը, որը համոզված է, որ աղքատներն իրենք են իրենց թշվառության պատճառը, չէր նկատի այն պատմությունը, որը տեսավ «Դեյլի Նյուս»-ի թղթակից Մարի Էնն Ջիորդանոն առանց ջրի ու ջերմության կացարանում ապրող մի ընտանիքի վիճակի մեջ:

Ինչպես մեզանից շատերը, լրագրողներն էլ ունեն քաղաքական հայացքներ: Սակայն նրանք աշխատում են զսպել դրանք: Որոշ թղթակիցներ էլ գլխի չեն ընկնում իրենց կանխակալության մասին, այն աղավաղված պատկերացումների մասին, որոնք իրենց հետ ման են տալիս:

Մեր ծնողները, մեր եկեղեցիները կամ սինագոգները, մեր ընկերները, մեր դպրոցները, մեր սիրած հեռուստահաղորդումները, այս բոլորը եւ դեռ շատ այլ բաներ, ազդում են մեր աշխարհընկալման վրա: Պատվախնդիր լրագրողը պետք է հիշի, որ ոչ մի մարդ, ոչ նույնիսկ նրանք, որոնց հավատամքն են լայնախոհությունը, կարեկցանքը եւ նվիրվածությունը ժողովրդավարական արժեքներին, ազատ չեն ժամանակի եւ տեղի նախապաշարմունքներից:

Լայնախոհության ձեւավորման համար անհրաժեշտ է ձերբազատվել որոշ սովորույթներից, հավատամքներից եւ գաղափարներից, որոնք կարող են գալ դեռ մանկության օրերից՝ ծնողների նախապաշարումներից հրեաների ու իտալացիների նկատմամբ, ուսուցչի անտարբերությունից դանդաղ ընկալողի նկատմամբ, ընկերոջ թշնամական վերաբերմունքից դեպի սեւերն ու իսպանախոսները, եկեղեցու անհանդուրժողությունից քննադատության նկատմամբ:

Երիտասարդ լրագրողի համար ամենադժվար խնդիրներից մեկը հեղինակությունների նկատմամբ ճիշտ դիրքորոշում հաստատելն է: Երեխային սովորեցնում են հարգել եւ հետեւել հեղինակություններին՝ ծնողներին, ուսուցիչներին, մասնագետներին:

Երեխա ժամանակ մենք անում էինք այն, ինչ ուրիշներն ասում էին մեզ:

Այնուհետեւ գալիս է ընբոստանալու ժամանակը: Եթե իմ հայրն այդքան խելոք է, ինչու՞ չի կարողանում հաշիվները վճարել: Եթե քաղաքական գործիչներն այդքան իմաստուն են, ինչու՞ նրանք չեն կարողանում հավասարակշռել բյուջեն: Ինչ վերաբերում է ուսուցիչներին, դպրոցի կամ քոլեջի ամեն մի ուսանող հիմար ուսուցչի մասին իր սիրած պատմությունն ունի:

Կա նաեւ միջին ճանապարհ: Լրագրողը պետք է թերահավատորեն վերաբերվի հեղինակություններին, սակայն հասկանա նաեւ ղեկավարման անհրաժեշտությունը: Հայտարարությունը ճիշտ չէ միայն այն պատճառով, որ իշխանություն ունեցող մեկը կամ մի մասնագետ է այդպես ասում: Լրագրողի պարտականությունն է ստուգել պնդումները, դրույթներն ու հայտարարությունները՝ անկախ աղբյուրի հեղինակավոր լինելու աստիճանից:

Թերահավատությունը ցինիզմ չէ: Իմաստ չունի երես դարձնել որեւէ մեկից միայն այն պատճառով, որ այդ անձը լիազորագրեր ունի կամ տիտղոս: Լայնախոհությունը, լայն տեսահորիզոնը, տարբեր մարդկանց հետ առնչվելը եւ այն գիտակցությունը, որ մարդիկ շատ ընդհանրություններ ունեն, սակայն իրարից տարբերվում են, այս ամենն օգտակար է հակազդելու համար մեր գլխների մեջ եղած այն պատկերացումներին, որոնք կարող են աղավաղել իրականությունը:

Գլուխ 9
Ինչպես որսալ կենդանի խոսքը

Մուտք

Հարցազրույցները երկու կարգի են լինում. տեղայնացված հարացազրույց՝ լրատվության համար, եւ խորացված հարցազրույց՝ բնութագրական ակնարկների կամ դիմանկարների համար:

Հանդիպումների մասին հոդվածները սեւեռվում են դրանց արդյունքում կայացած վճռի, փոխադարձ համաձայնության կամ արծարծված կարեւորագույն հարցի վրա:

Սիմպոզիումներում ու հանձնաժողովներում տեղի ունեցող քննարկումների մասին լրատվությունն ուղղված է ելույթ ունեցողների համեմատությանը կամ էական տարաձայնությունների լուսաբանմանը: Հեղինակը կարող է առանձնացնել ելույթ ունեցողներից մեկ կամ երկուսի կողմից արտահայտված որեւէ կարեւոր հանգամանք:

Մամուլի (տեղեկատվական) ասուլիսները հրավիրվում են որոշակի նպատակով եւ այդ նպատակը սովորաբար հանդես է գալիս իբրեւ հոդվածի գլխադիրը:

Ելույթների (ճառերի) լուսաբանումը կենտրոնացած է խոսնակի արտահայտած գլխավոր գաղափարի, ինչպես նաեւ լսարանի վերաբերմունքի կամ ելույթից հետո լրագրողներին տրված պատասխանների շուրջ:

Նմանատիպ հոդվածները սովորաբար համեմված են առատ մեջբերումներով, որոնք հիմնավորում ու լիցք են հաղորդում թեմային:

Հարցազրույցներ

Հոդվածների մեծամասնությունը մասամբ կամ ամբողջապես որեւէ կարգի հարցազրույցի վրա է հիմնված: Հարցազրույցը կարող է բաղկացած լինել կողոպուտը հետաքննող ոստիկանին տրված մի քանի կարճառոտ հարցերից, ընդարձակ հարձազրույցից՝ քոլեջի ուսման վարձի բարձրացման առնչությամբ լրացուցիչ տեղեկություններ քաղելու նպատակով եւ կամ՝ տեղական բեյսբոլի

թիմի նոր սեփականատիրոջ մասին ակնարկի համար մանրամասն հարցազրույցից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդվածը պետք է արտացոլի կատարվածի բնույթը, արդեն իսկ պարզ է դառնում, թե հարցազրույցի վրա հիմնված կամ հարցազրույց պարունակող հոդվածներն ինչից են սկսվում, այն է՝ մեջբերումներից:

Տեխնիկան

Հաջող հարցազրույց վարելու գաղտնիքը նպատակի հստակությունն է, այսինքն պետք է պարզ հասկանալ, թե ինչ եք ուզում իմանալ կամ պարզել: Քանի որ տեղայնացված հարցազրույցը հաճախ հեռախոսով են վարում, հիմնականում խիստ զբաղված աղբյուրների հետ, լրագրողը պետք է առանց ժամանակ կորցնելու անցնի բուն նյութին: Ակնարկին տրամադրվող ժամանակն ավելի շատ է: Եվ այնուամենայնիվ, լրագրողը իրավունք չունի վատնելու խոսակցի ժամանակը: Ստորև ներկայացնում ենք հարցրազրույց վարելու մի շարք ցուցումներ.

- Պետք է հստակ պատկերացում ունենալ, թե աղբյուրից կամ ձեր զրուցակցից հատկապես ինչ եք ուզում իմանալ,
- Արագ անցեք բուն նյութին,
- Ուշադրությամբ ունկնդրեք՝ որսալու անհրաժեշտ նախադասությունը: Ակնարկների համար հետեւեք խոսուն շարժուձեւին,
  արտահայտման կամ շարժվելու ոճին:
- Հարցրեք՝ որեւէ կարեւոր բան բաց թողե՞լ եք, թե՝ ոչ:
- Հարցրեք, թե աղբյուրը կհամաձայնի՞ նորից հանդիպել, եթե լրացուցիչ տեղեկությունների կարիք զգացվի (որոշ մարդիկ հրաժարվում են աշխատանքից դուրս՝ տանը հեռախոսազանգերի պատասխանել: Հարցրեք, թե ուրիշ էլ ու՞մ կարելի է դիմել նույն հարցի առնչությամբ):

Տեղայնացված (լրատվական) հարցազրույց

Տեղայնացված հարցազրույցները լրացուցիչ նյութ են տալիս ապագա տեղեկատվական հոդվածի համար: Լրագրողները հարցազրույցներ են վարում ոստիկանության հետ՝ հանցագործու-

թյունների կամ հրշեջ պարետի հետ՝ հրդեհների հնարավոր պատճառների մասին տեղեկատվություն քաղելու նպատակով: Մարզական լրագրողները թիմի մարզիչների կամ խաղացողների հետ հարցազրույցներ են վարում խաղերի մասին հոդվածներ գրելու համար: Այս տեղայնացված հարցազրույցներում լրագրողները սովորաբար հավելյալ նյութեր են հավաքում՝ այնպիսի փաստեր, որոնք պիտի լուսաբանեն կամ ավելի ցայտուն դարձնեն նկարագրվող իրադարձությունը:

Լրացուցիչ նյութերի նման փնտրտուքը հեղինակին սովորաբար մղում է առանձնապես չկարեւորել զրուցակցի անձը, որոհետեւ ուշադրությունը տվյալ դեպքում բեւեռացված է ոչ թե անձի, այլ նկարագրվող իրադարձության վրա: Սակայն հեղինակը չի կարող անտեսել աղբյուրի ասածը: Հաճախ մեջբերումները սրություն ու հետաքրքրություն են առաջ բերում հոդվածի նկատմաբ, ավելի բովանդակալից ու համոզիչ դարձնում այն:

Տրանսպորտային աղետալի վթարի մասին հետեւյալ հոդվածում տեղեկատվության աղբյուրը նահանգային ավտոճանապարհային ոստիկանության տեսուչն է.

«Ըստ ավտոճանապարհային ոստիկանության՝ երեկ գիշեր Մորգանթաունից 15 մղոն դեպի հյուսիս 10-րդ մայրուղու վրա բեռնատարի եւ ավտոմոբիլի սրընթաց բախման հետեւանքով վախճանվել է երեք հոգի:

Մահացու վիրավորվածները ավտոմոբիլի ուղեւորներն էին. Ուեսթերն պողոտա -237-ի բնակիչ, 22 ամյա Ալբերտ Ֆոսթրը, նրա եղբայրը՝ 18-ամյա Մայքլը, եւ վարորդը՝ Թամփայի բնակիչ 21-ամյա Բերթ Փիլրսը, Ֆլորիդայից: Բեռնատարի վարորդ Նյու Օռլեանի բնակիչ 48-ամյա Ջորջ Ալենը թեթեւ վնասվածքներ է ստացել:

Նահանգային մայրուղիների ոստիկանության խոսնակ Ռոբերտ Ջեքսոնն ասաց, որ ավտոմեքենան, ակնհայտորեն, փորձել է արեւմուտք տանող գծից 180 աստիճանի շրջադարձ կատարել եւ արագությունն ավելացնելով մտել է բեռնատարի երթեւեկության գիծը:

«Ավտոմեքենան ջարդուխուրդ էր եղել,- ասաց Ջեքսոնը: -Ճանապարհին 100 յարդ տարածությամբ ամեն կողմ դրա բեկորներն էին սփռված: Երթեւեկությունը դեպի արեւելք 90 րոպե դադարացված էր»,- ասաց նա:

Ուշադրություն դարձրեք, որ գլխադրի մեջ ամփոփված մահվան մասին գլխավոր տեղեկությունները եւ դրա աղբյուրները: Հաջորդ պարբերության մեջ նշված են զոհերի անուններն ու ինք-

նությունը: Երրորդ պարբերությունը նկարագրում է վթարը, իսկ չորրորդը՝ համապատասխան մեջբերում է պարունակում:

Սա է տեղայնացված լրատվական հոդված նկատմամբ ընդունված մոտեցումը: Սակայն ինչու՞ այդքան դրամատիկ մեջբերումը ավելի վեր չտանենք:

«Երեք երիտասարդ է զոհվել սարսափելի վթարի ժամանակ, երբ մի բեռնատար ու մարդատար ավտոմեքենա բախվել են երեկ գիշեր 10-րդ մայրուղու վրա՝ Մորգանթաունից 15 մղոն հեռավորությամբ:

Ավտոմեքենան ջարդուխուրդ էր եղել,- ասաց Ռոբերթ Ջեքսոնը՝ նահանգային ավտոմայրուղիների ոստիկանության ներկայացուցիչը: Մասերը սփռվել էին ամբողջ ճամփի երկայնքով 100 յարդ տարածությամբ»:

Մահացու վիրավորվածները ...

Այս տարբերակն, իհարկե, ավելի նախընտրելի է, որովհետեւ ուղղակի խոսքը տալիս է իրադարձության էությունը՝ տեղի է ունեցել սարսափելի ատովթար:

Նկարագրելով վթարի տեսարանը՝ ոստիկանական սպան, փաստորեն, լրագրողի խնդրանքն էր կատարում: Լավ հարցը ոչ միայն արժեքավոր տեղեկություններ ստանալու գրավականն է, այլեւ հոդվածին կենդանություն ու հետաքրքրություն տվող պատասխաններ կորզելու միջոց: Ուշադիր լսող լրագրողը կարող է որսալ այն արտահայտությունը կամ նախադասությունը , որ կենդանություն է տալիս լրատվությանը: Տեղին օգտագործված ուղղակի խոսքը ցանկացած անուղղակի խոսքից լավ է:

Տեղայնացված հարցազրույցի ժամանակ հարցերը կախված են տվյալ դեպքերի բնույթից: Կոնկրետ այս՝ ճակատագրական ավտովթարի դեպքում լրագրողը նախ տալիս է կարեւոր հարցերը. սպանվածների անունն ու հասցեն, պատճառները, վթարի վայրը: Երբ սպան խոսք է բացում ավերածության մասին, լրագրողը խնդրում է ավելի մանրամասն պատմել եւ ստանում է այդ խոսուն մեջբերումը:

Այնպիս մի հոդվածի համար, ինչպես ասենք Չեյփլ Հիլ քաղաքում, Հյուսիսային Քարոլինա համալսարանում քույրական վերապատրաստման դասընթացների մասին նյութն է, հարցազրույցը կարելի է վարել այդ դասընթացներն ավարտած որեւէ կնոջ հետ, ինչպես ստորեւ: Նա մի ժամանակ բուժքույր է եղել ապա ամուսնացել է եւ քսան տարի զբաղված է եղել երեխաներին մեծացնելով: Այդքան երկարատեւ ընդմիջումից հետո որոշել է վերադառ-

նալ աշխատանքի եւ հաճախել է բուժքույրական վերապատրաստման դասընթացները: Ահա Հյուսիսային Քարոլինայում հրատարակվող «Քոսթլայն Թայմս»-ից բերված մի մեջբերում, ուր ամփոփված է նյութի էությունը:

«Առանց այդ դասընթացների ես ոտքս հիվանդանոցից ներս չէի համաձակվի դնել,- ասաց նա: - Այնքան փոփոխություններ ու բարեփոխումներ են կատարվել»:

Իհարկե, այստեղ, ըստ էության, ոչ մի արտառոց բան չի ասված, սակայն մեջբերումը տեղին է՝ իր նպատակին է ծառայում:

«Մարդկանց մեծամասնությունը հաճույքով է համաձայնում հարցազրույցի: Երբեք պատճառը չեմ հասկացել, բայց դա իրողություն է: Մարդիկ, որ ոչ մի շահ չունեն դրանից, կամ ուզում են ձեզ օգնած լինել, կամ նրանց շոյում է այն, որ հատուկ իրենց հետ հարցազրույց վարելու համար ժամանակ եք տրամադրել… Եվ սա վերաբերում է նույնիսկ խիստ դաժան իրադրության մեջ գտնվող մարդկանց. այն անձանց, ում հետ դժբախտություն է տեղի ունեցել, ասենք ում ընտանիքի անդամներին սպանել են»:

Քլայդ Հաբերման, «Նյու Յորք Թայմս»

«Երբեմն շատ դժվար է հարցազրույց վարել ոստիկանության հետ: Մեկ անգամ, որ հաջողվեց խոսակցությունը սկսել, ալեւս խնդիր չկա: Սակայն շատ հաճախ նրանք իրենց խոսքը համեմում են բյուրոկրատական այնպիսի ժարգոնով, ասես կատարվածը ոստիկանական ակադեմիայում է հնարվել կամ նման մի բան: Այսպես՝ ոչ մեկը չի ասի «Որքան որ մեզ հնարավոր եղավ պարզել, հանցագործը արական սեռի, սպիտակամորթ տղամարդ է»: Եվ հաճախ դժվար է կոտրել բյուրոկրատական այդ ժարգոնը, որով շրջապատում են իրենց ոստիկանության ներկայացուցիչները»:

Քլայդ Հաբերման, «Նյու Յորք Թայմս»

Ակնարկներ կամ դիմանկարներ

Բոլորս էլ հետաքրքրասեր ենք, թերեւս՝ չափից ավելի: Ուզում ենք իմանալ, թե ինչու՞ ամենատաղանդավոր երիտասարդ ուսանողուհին հանկարծ որոշեց հեռանալ դպրոցից: Այդ ինչպե՞ս է, որ անկյունի տանն ապրող մեծահասակ զույգն ամեն տարի կարողանում է նոր «Քադիլաք» գնել. ինչու՞ հանկարծ մեր փողոցում ապրող զույգը բաժանվեց: Ուզում ենք իմանալ, թե իրականում ինչպիսի՞ մարդ է Մայքլ Ջեքսոնը. ինչպե՞ս է «Օուքլանդ Աթլետիկ» թիմի երիտասարդ պաշտանը տնօրինում ստացած տարեկան չորս միլիոն դոլարը:

Մեր հարցերի մեծ մասն այդպես էլ անպատասխան է մնում: Դրանցից ընդամենը մի քանիսն են, որ բացահայտվում են լրագրողի ակնարկում կամ բնութագրական հոդվածում:

Երբեմն ակնարկը կարող ավելի մեծ հոդվածի մեկ դրվագը լինել: Օրինակ՝ Ռոդ Այլընդի գոհարեղենի արտադրության (որ նահանգի ամենախոշոր արդյունաբերական ճյուղն է) մասին հոդվածաշարում «Փրովիդենս Ջուռնալ Բյուլեթինի» լրագրող Բրուս Բաթըրֆիլդը պատմում է Մերիի մասին, որը գոհարեղենի գործարանում կես դրույքով աշխատող բարձր դասարանի աշակերտուհի է: Բաթըրֆիլդը թողնում է, որ Մերին ինքը ներկայացնի իրեն:

... Ասենք ինչ հիմա անում եմ: Ամբողջ ժամանակ ոտքի վրա եմ: Օրը երեք ժամ 45 րոպե ոտքի վրա եմ:

Ես աշխատում եմ մի սենյակում, ուր մետաղ են հալեցնում եւ կարծեմ ջերմությունը 1200 աստիճան է (ըստ Ֆարենհայթի սանդղակի - թարգմ.)

Կան մարդիկ, ովքեր 25տարի շարունակ աշխատել են այնտեղ ու մինչեւ այսօր էլ ժամը $4 դոլարից ավելի չեն վաստակում:

Իսկ նրանք արժանի են խրախուսանքի: Այնքան լավ մարդիկ են այնտեղ աշխատողները: Պարզապես ուրիշ բան անել էլ չգիտեն: Կամ բարձրագույն կրթության դիպլոմ չունեն, կամ էլ ունեն, բայց մեր հասարակությունում նրանց համար համապատասխան աշխատանքը քիչ է: Ու բոլորն էլ քառասունն անց են:

Նրանք ավելիին են արժանի:

Յուցումներ: Նշված մեջբերումները որոշակի տեղեկություն են տալիս գործարանի եւ առանձնապես՝ Մերիի մասին: Նա ծանր աշխատանք է կատարում, շատ է աշխատում, եւ նրան անհանգստացնում է իր աշխատակիցների վիճակը: Ուղղամիտ, ազնիվ,

երիտասարդ կին է: Նրա գործընկերներն ավելիին են արժանի, որովհետեւ նրանք այնքան բարի մարդիկ են: Սակայն Մերին իրատեսորեն հաշվի է առնում նաեւ նրանց կրթության պակասը: Նա գիտակցում է, որ կրթություն չունեցող մարդկանց համար աշխատատեղերը շատ չեն:

«Նրանք ավելիին են արժանի»: Մերիի խոսքերը ընթերցողին կարող են ստիպել մի պահ վայր դնել թերթն ու մտորել: Թեեւ Մերիի մասին շատ բան չի ասված, սակայն կարծես արդեն ճանաչում ենք նրան:

Սա ակնարկի ամենակարեւոր պահանջն է. այն պետք է բացահայտի մարդուն: Դրա համար պետք է դիպուկ մեջբերումը որսալու սուր ականջ եւ հատկանշական մանրամասնը նկատելու սուր աչք ունենալ:

Տեսեք, թե տեսածն ու լսածը զուգակցելով, Նյու Յորք Թայմսի լրագրող Մայքլ Ուայնրափն ինչքան բան է քամում մի քանի նախադասությունից.

Տնօրեն Քույր Ջոաննան կապույտ պարեգոտ է կրում, բոյը՝ հինգ ոտնաչափ է, ու աչալուրջ հսկում է: «Մեր նպատակը նրանց բարոյական ճիշտ դաստիարակություն տալն է, ասում է նա,- ճիշտ... կներեք, ՎԵՐՋ ՏՎԵՔ, ԱՆՄԻՋԱՊԵՍ, տանել չեմ կարող, երբ ճաշի սեղանին իրար վրա բան են շպրտում... այո, նրանց Քրիստոնեական դաստիարակություն տալն է: Անում ենք այն, ինչ կարող ենք: Դրա մի մասն, անշուշտ, կմոռացվի»:

Ստորեւ տրվում են չորս ցուցումներ բնութագրական ակնարկների համար

1. Խնամքով նախապատրաստվեք. Քաջածանոթ եղեք նյութին, եւ աշխատեք տեղեկություններ քաղել այն մարդու մասին, ում հետ հարցազրույց եք վարելու:

2. Նախապատրաստական աշխատանքի ընթացքում **մեկ-երկու թեմա մշակեք եւ ձեր հարցերը խարսխեք այդ թեմաների վրա:**

3. Ձեր զրուցակցին այնպիսի մոտեցում ցույց տվեք, որ նրա մեջ խոսելու ցանկություն արթնանա:

4. Ուշադիր լսեք եւ դիտեք: Արթուն եղեք, թե ինչ է ասվում եւ ինչպես է ասվում: Անպայման զննեք սենյակը՝ պատկերացում կազմելու ձեր զրուցակցի հետաքրքրությունների, ճաշակի եւ անձնական կյանքի մասին:

Նախապատրաստական աշխատանք: Մանրակրկիտ նախապատրաստությունը սկսվում է թերթի խմբագրության կամ հեռարձակման կայանի գրադարանից, որտեղ եղած նյութերը կարող են տեղեկություններ տրամադրել եւ հուշել առաջադրվելիք հարցերը: Հաջորդ քայլը տեղեկատուներն արագ քրքրելն է: Քոլեջի նոր նախագահի մասին կարող է նշված լինել «Ով՝ ով է Ամերիկայում» ալմանախում: Թեեւ «Ով՝ ով է»-ն պարբերաբար վերահրատարկվում եւ թարմացվում է, սակայն կենսագրական տվյալները անպայմանորեն պետք է ճշտել զրուցակցի հետ:

Եթե նոր նախագահը մասնագիտացած է որոշակի ասպարեզում, ապա շատ հնարավոր է, որ նրա հոդվածները գրանցված լինեն «Պարբերական գրականության ուղեցույց ընթերցողի համար» տեղեկատուում: Նրա հոդվածներում արտահայտված որեւէ միտք կարող է հիմք դառնալ նախնական հարցի: Աղբյուրներն իրենց շոյված են զգում, երբ տեսնում են, որ լրագրողը հետաքրքրվել է իրենց անձով եւ գործունեությամբ:

Երբ «Վըրջինիան Փայլոթ»-ից Մալ Վինսենթը (Նորֆոլք, Վիրջինիա) հարցազրույցի էր նախապատրաստվում դերասանուհի Ժաքլին Բիսեթի հետ, նույնիսկ իր տասը տարի առաջվա հարցազրույցի նյութերն էր աչքի անցկացրել:

Այն ժամանակ Վինսենթը փորձել էր Բիսեթի հետ հարցազրույց անցկացնել զգայացունց մի ֆիլմի շուրջ, ուր վերջինս Ալեն Ալդայի հետ գլխավոր դերակատար էր: Այն ժամանակ Բիսեթը սեքսի դերասանուհի էր համարվում: Սերֆինգի վերաբերյալ մի ֆիլմում նա մերկ տեսարանում էր խաղացել, իսկ մեկ ուրիշ ֆիլմում՝ հանդես էր եկել հարուստների հետ անկողին ցատկող կնոջ դերում:

Այն ժամանակ Վինսենթը նրա անձի մասին որոշակի կարծիք էր կազմել. մանր դերերում հանդես եկող մի երիտասարդ կինոաստղ, որին հանդիսատեսը մեկ անգամ տեսնելով մոռանում է: Սակայն այն ժամանակ Բիսեթը զարմացրել էր նրան. նա իր ուզած ուղղությամբ էր տարել հարցազրույցը: Հենց սկզբից ասել էր. «Անունս է Բիսեթ. հանգով բռնում է «համբուրիր էդ»-ի հետ: Երբ Վինսենթը հարց էր տվել ուրիշ մի դերասանի հետ նրա անձնական կապի մասին, Բիսեթը բռնկվել էր: Ոչ թեեւ նրանց կենակցությունը շատ էր արծարծվել, սակայն կտրուկ հրաժարվել էր քննարկել այդ թեման:

Դրա վրա Վինսենթը փորձել էր կանանց ազատագրման տեսանկյունից մոտենալ հարցին, որ այն ժամանակ նորություն էր:

«Ես կանանց իրավունքների մասին ձեզ հետ խոսելու մտադրություն չունեմ,- նետել էր նա,- Մեկ է՝ ինձ հետ չեք համաձայնելու»: Ապա կանչել էր վարորդին ու հեռացել:

Վինսենթը գիտեր, որ Բիսեթը հարցազրույցի «համով պատառ» է: Ներկա հարցազրույցին նախապատրաստվելու ընթացքում նա պարզեց, որ Բիսեթն ինքն է ֆինանսավորում մի ֆիլմ՝ քննադատներին համոզելու, որ ինքը կարող է խաղալ: Որպես համառեժիսոր նա փայատեր էր նոր ֆիլմի դրական գովազդից ստացվող եկամտի: Այդ պատճառով էլ Վինսենթը հասկանում էր, որ այս անգամ դերասանուհին ստիպված պետք է լիներ ավելի զգույշ վարվել լրագրողների հետ:

Հիշում էր նաեւ, որ նա ինքնատիպ մտածողություն ունի, ինչն այս անգամ էլ ապացուցեց:

«Ես չեմ ուզում, որ ինձ զարդասեղի տեղ դնեն,- ասաց նա: -Ուզում եմ լինել ավելին, քան պարզապես հմայիչ կինը: Հասարակությունը սխալվում է՝ մարդկանց այդպես պիտակելով»:

Նույն քլթքլթան Բիսեթն էր, սակայն այս անգամ գոնե համբերեց մինչեւ հարցազրույցի վերջը: Իր նախապատրաստական աշխատանքի շնորհիվ Վինսենթը գիտեր՝ ինչպես մոտենալ նրան:

Ինչպես որոշել թեման: Այս հարցազրույցի համար Վինսենթի նախապատրաստական աշխատանքի օրինակը ցույց է տալիս, թե որքան կարեւոր է նախապես հնարավոր թեմայի կամ գաղափարի հարցերն առանձնացնելը: Երբեմն բուն թեման կամ նորության առանցքը հենց ինքը նորությունն է, այն, ինչի համար անձն այդ պահին լրատվարժան է դարձել: Ասենք, տեղացի մի վաճառական քաղաքապետարանի «Միացյալ Ուղի» կազմակեպության կողմից պարգեւատրվում է իր բարեսիրական գործունեության համար: Ձեռներեցի մասին ակնարկը բնականաբար կենտրոնացած կլինի այն գործունեության շուրջ, որի համար նա պարգեւատրվել է: Բիսեթի դեպքում՝ նորության առանցքը նոր ֆիլմն էր: Պարտադիր չէ, որ նորությունը նաեւ ակնարկի թեման դառնա: Քոլեջի նոր նախագահի մասին ակնարկի դեպքում նյութի առանցքը նոր նշանակումն էր, սակայն ակնարկի թեման քոլեջի ուսուցման ծրագրի շուրջ նոր նշանակված պաշտոնյայի գաղափարներն են:

Նյութի առանցքը ընթերցողին հուշում է. «Ահա ձեզ մի արժանի մարդ»: Թեման ասում է՝ «Ահա ձեզ այդ մարդու մասին հետաքրքրական կամ նրա անձը լուսաբանող մի բան»:

Խորացված հարցազրույցը իր թեման հետապնդող լրագրողի եւ իր գաղափարներն արտահայտող խոսակցի հակադրությունն է: Թե հարցապնդողը, թե հարցապնդվողն այս դեպքում իրենց մտքերն են առաջ քաշում: Վինսենթի երկրորդ հարցազրույցում Բիսեթը Վինսենթի միջոցով ուզում էր ընթերցողներին եւ ֆիլմի լսարանին հասկացնել, որ ինքը լուրջ դերասանուհի է, որ պետք է մոռանան իր դերերը որպես սեքս դերասանուհու, որը նրանց հիշողության մեջ դաջվել է այն տեսարանից, երբ նա հանդես էր գալիս թաց, մարմնին կպած թափանցիկ շապիկով:

Վինսենթի նոր թեման երկրոդ կարգի ֆիլմերում նկարահանվող երիտասարդ սկսնակ դերասանուհու ուղին էր մինչեւ լուրջ ֆիլմեր ստեղծող 37-ամյա հասուն կինը: Հարցազրույցը հաջող ընթացավ, որովհետեւ երկու թեման էլ՝ թե Վինսենթինը եւ թե Բիսեթինը, հակադրության մեջ չէին՝ զուգահեռ էին ընթանում: Երբեմն բախումն անխուսափելի է: Նահանգապետական թեկնածուի մասին ակնարկ գրելու ուղարկված լրագրողը տեղյակ է, որ այս թեկնածուն նորելուկ է, մեկը, ով նախկինում երբեք պետական պաշտոն չի զբաղեցրել: Լրագրողի թեման է՝ «Ի՞նչն է այս մարդուն ներշնչել, որ ինքը կարող է նահանգային կառավարման ողջ թնջուկն իր վրա վերցնել առանց որեւէ քաղաքական փորձառության»: Իսկ թեկնածուի նախընտրական քարոզարշավի թեման է՝ «Նոր ավելը հիմնավոր է մաքրում»:

Լրագրողը բավական փորձառու է նման ծեծված խոսքերը հալած յուղի տեղ ընդունելու եւ ամեն կերպ փորձելու է ճնշում գործադրել թեկնածուի վրա, որպեսզի սա ապացուցի պետական ապարատը մաքրելու իր կարողությունը: Այստեղից՝ առաջացող լարվածությունը, եթե իհարկե, լրագրողին չհաջողվի հանգստացնել թեկնածուին եւ մղել նրան անկաշկանդ խոսակցության:

Երկխոսությունը պետք բնական հնչի, այնպես ինչպես մարդիկ իրականում արտահայտվում են: Լսենք Դեյվիդ Լեշին, որ մեծացել է Հյուսիսային Քարոլինայի Ուինսթոն Սալեմ քաղաքի աղքատ թաղամասում, միջին դասի սեւամորթներից մի քանի թաղամաս հեռու: «Ինձ համար մեծ նշանակություն ուներ, որ փոքրիկ սեւամորթ տղա էի ու մեծացա եւ իմացա, որ շատ սեւեր կան, որ ահագին բան ունեն»,- ասում է նա: Այժմն նա 71 տարեկան է՝ թոշակի անցած բարձր դասարանների մաթեմատիկայի ուսուցիչ, ռեգբիի ու թենիսի մարզիչ, եւ իր հին թաղամասով շրջում է «Ուինսթոն Սալեմ Ջուռնալից» Ֆեբ Զերվիքի ընկերակցությամբ: Զերվիքն իր ակնարկում նրանից առատ մեջբերումներ է անում:

«Տես, հենց էստեղ էր,- ասում նա ցույց տալով այն վայրը, որտեղից իբրեւ յոթ տարեկան մի մանչուկ կիրակի օրերը ցանկապատի ճեղքից հետեւում էր 14-րդ փողոցի շքեղ հագնված մարդկանց թենիսի խաղերին: - Թենիսով զբաղվելուս պատճառը նրանց ձեռքի լիմոնադն ու սենդվիչներն էին, երեւի թե սիտս այդ սենդվիչներին էր կպել»:

«Մասնագետները գնահատում են, որ տնային աշխատանքդ լավ ես կատարել ու խելացի հարցեր ես տալիս, սակայն նրանց դուր չի գալիս, երբ դու ես խոսում: Մի փորձեք տպավորություն գործել նրանց վրա: Թողեք իրենք ձեզ վրա տպավորություն գործեն: Միշտ հիշեք, որ դուք լսողն եք»:

Բրուս Սելքրեյգ, հատուկ
«Սփորթս Իլլըսթրեյթիդի» համար:

Հարցազրույց վարողի մարմինն էլ է խոսում: Պարսից ծոցի պատերազմի մասին սպաների հետ հարցազրույց վարելիս Բաբ Վուդվորդը փորձում էր ներքին տեղեկատվություն ստանալ: Միացյալ գլխավոր հրամանատարության նախագահի խոսնակի ասելով Վուդվորդը «մարմնական խոսքի տեսակետից իրեն պարկեշտ էր պահում: Ուշադրությամբ առաջ էր հակվում, երբ գեներալները խոսում էին, անկեղծ էր, բարեհամբույր,- պատմում էր խոսնակը:- Եթե զգում էր, որ ցավոտ հարց է շոշափել, այլեւս դրան չէր անդրադառնում, այլ նույն հարցին մոտենում էր մեկ այլ կողմից, որ չխախտի վստահության սահմանը»:

Ինչպես խոսակցության մեջ քաշել

Ինչպես խոսակցության մեջ քաշել: Լրագրողները մարտավարության տարբեր մեթոդների են դիմում, որպեսզի հարցազրույցի ենթակա անձանց մղեն անկեղծ ու անկաշկանդ զրույցի ու ստիպեն, որ իրենց բնական պահեն: «Մայամի Հերալդից» Ջին Միլլերն ասում է, որ հարցազրույցի ժամանակ ինքը փորձում է հնարավորին չափ հասկացող երեւալ:

«Անընդհատ գլխով եմ անում»,- ասում է նա: Դրանով տպավորություն է ստեղծում, թե համաձայն է խոսողի հետ ու խրախուսում է՝ շարունակել խոսքը: «Եթե տեսնում եմ, որ ձայնագրիչն ու նոթատետրը խանգարում են, ոչ ձայնագրիչ եմ օգտագործում ոչ էլ նոթատետր: Տհաճ հարցերը վերջում եմ թողնում եւ դրանք ներողություն հայցելու տոնով եմ տալիս»:

Միլլերի տեխնիկան որոշ հեռուստատեսային հաղորդավարների կողմից կիրառվող առճակատման տակտիկայի հակառակն է: Որոշ ժամանակ անց լրագրողը վարժվում է այն մարտավորությանը, որն իրեն ամենից ավելի է հարմար: Անշուշտ, շատ անգամ հարցազրույցի բնույթից է կախված այն վարելու մեթոդը: Առճակատումից բացի ուրիշ էլ ինչ մեթոդ կարող է կիրառվել այն գործարանատիրոջ հետ հարցազրույցի ժամանակ, որի գործարանն աղտոտում է քաղաքի օդը եւ մոտակա գետը:

Երբ Թրուման Քափոտեն հանձնարություն ստացավ «Նյու Յորքըրի» համար Մառլոն Բրանդոյի հետ հարցազրույց վարել, լրագրողը փորձում էր Բրանդոյին խոսեցնել մոր հետ իր բարդ հարաբերությունների մասին: Մի օր Բրանդոն իսկապես բացվեց ու Քափոտեն մեջբերում արեց, ուր նա մոր մասին ասում էր. «Այլեւս պետքս չէր: Այնտեղ էր նա: Սենյակում: Ինձ հենված: Ու ես թույլ տվի, որ ընկնի: Որովհետեւ էլ չէի դիմանում..... ճենապակու պես կտոր-կտոր լինելուն: Ես անցա նրա վրայով: Ուղիղ դուրս գնացի: Պետքս չէր: Այն ժամանկվանից ի վեր պետքս չէ»:

Հարցազրույցը հրատարակվելուց հետո Բրանդոյին հարցրին, թե ինչն էր նրան մղել Քափոտեյի հետ այդքան անկեղծանալու խիստ անձնական մի հարցի շուրջ: «Սատանի ճուտը ամբողջ երեկո ինձ իր ամեն տեսակ պրոբլեմներից էր պատմում: Ինձ թվաց՝ գոնե մի քանիսն էլ ես պետք է պատմեմ»:

Ռալֆ Էլիսոնը՝ սեւամորթ Ամերիկայի կյանքը նկարագրող «Անտեսանելի մարդը» դասական երկի հեղինակը, ճգնաժամի տարիներին աշխատում էր Դաշնային Գրողների ծրագրում: Նրա աշխատանքի էությունն այն էր, որ հարցազրույց պետք է վարեր ամեն կարգի ու դասի ամերիկացիների հետ՝ նրանց բերանից լսելու իրենց կյանքի ու ժամանակի պատմությունը:

Էլիսոնի տեխնիկան էլ նման էր Քապոտեյի տեխնիկային:

«Ես տարբեր պատմություններ էի մոգոնում, որ մարդիկ սկսեն խոսել: Ու հետո թիկն էի տալիս ու հնարավորին չափ մանրամասն գրի առնում»:

Որոշ մարդկանց պարզապես պետք է թեթեւ հրել, որ սկսեն խոսել: Բայց շատերին լրագրողը պետք է հարցեր տա՝ շատ ու շատ հարցեր:

Ես պարզեցի, որ մարդկանց մեծամասնությունը ոչ միայն խոսելու կարոտ է, այլեւ ահագին բան ունի պատմելու: Հաճախ նրանց ականջ չեն դնում, սակայն նրանք ասելիք ունեն: Այս մարդիկ հուսահատորեն փորձ են անում դուրս պրծնել այն կաղապարներից, որ հարցախուզորդները, մամուլն ու քաղաքական գործիչներն են փաթաթում նրանց վզին:

Բիլ Մոյերս, հեռուստատեսության լրագրող

«Հարցի ձեւակերպումը չափազանց կարեւոր է: Եթե նախագահին հարցնենք. «Չէի՞ք ցանկանա, արդյոք, ձեր կարծիքն արտահայտել X-ի վերաբերյալ», նա միշտ էլ կարող է պատասխանել՝ «Ոչ, շնորհակալություն» կամ էլ ասել ինչ ուզենա եւ համարել, որ կարծիք է արտահայտել... Ցանկալի արդյունքի հասնելու համար հարցը պետք է կոնկրետ ձեւակերպել, եւ նախընտրելի է՝ հակիրճ: Այնպիսին, որ ուղղակի պատասխան է ենթադրում»:

Սեմ Դոնալդսոն, ABC NEWS

«Եթե որեւէ մեկից շատ բան եք ուզում դուրս կորզել, ապա անիմաստ է սկզբից եւեթ վրա տալ, թե երբ է սկսել ծեծել կնոջը կամ՝ երբ է դրան վերջ տվել: Ավելի նպատակահարմար է նախ պարզել մնացած հարցերը, եւ վերջում, երբ պատրաստ եք դուրս վռնդվելու, միայն այդ ժամանակ տաք ձեր հարցը: Երբ տրվելիք հարցը բացահայտորեն վերաբերվում է նուրբ խնդիրների, ինչպես մարդկանց անձնական կյանքը, ֆինանսական գործերը եւ նրանց զգացմունքներն այնպիսի բաների վերաբերյալ, որ ի վերջո, ձեր գործը չեն, երբեմն օգտակար է նախապես խոստովանել, որ թեեւ, անկեղծ ասած, տրվելիք հարցը այնքան էլ պատշաճ չէ, սակայն ստիպված եք հարցնել, որի համար ներողություն եք խնդրում: Դրանով վիրավորանքը գոնե փոքր ինչ կմեղմանա»:

Քլայդ Հաբերման, «Նյու Յորք Թայմս»

«Ես լսում եմ: Հարցը տալիս եմ ու լսում: Ինձ միշտ ապշեցնում է, թե որքան շատ առաջնակարգ լրագրողներ են իրենց ժամանակը վատնում նրա վրա, որ «աղբյուրին» պատմեն իրենց կարծիքը»:

Հյու Սիդնի, «Թայմ»

Ինչպես հարցեր տալ: Ակնարկի համար անցկացվող հարցազրույցի ժամանակ, եթե աղբյուրը հարցազրույցի փորձ չունի, կաշկանդվածությունը հանելու համար ավելի լավ է նախ դեսից-դենից մի քանի հարց տալ: Առաջին իմաստալից հարցերն արդեն արտացոլում են հոդվածի համար նախատեսված լրագրողական թեման:

«Նայած թե ինչ հարցեր եմ տալիս, դրանով էլ կանխորոշվում է հոդվածիս նյութը,- ասում է «Ցինցինաթի Փոստ»-ից Ջեյն Բրեյզիսը: -Այն, ինչի մասին չեմ հարցնում, պարզ է՝ չեմ իմանա»:

Հարցերի պատասխաններից նոր թեմաներ են ծնվում: «Հենց թվում է, թե պատասխանը գտել ես, նոր հարց է առաջանում: Հարցազրույց վարելու գաղտնիքն այն է, որ նոր հարցեր գտնես, ու երբեք չդադարես դրանք տալ»,- ասում է Բրեյզիսը:

Հարցերը պետք է լինեն պարզ եւ անպաճույճ: Լարի Քինգը, որի ռադիոզրույցի ծրագիրը հեռարձակում են ավելի քան 200 ռադիոկայաններ, հարցազրույց վարելու վարպետ է: Նրա կարծիքով «Եթե ձեր հարցը երեք նախադասությունից ավելի է, ուրեմն վատ հարց է»: Հարց տալու իմաստն այն է, որ զրուցակիցը խոսի: Բարդ հարցերը միայն շփոթեցնում-ճնշում են աղբյուրին:

Քինգը մտաբերում է Սենդի Քուֆեքսի մի հարցազրույցը բեյսբոլի խաղում հաղթանակ տարած փիթչերի (գնդակ նետողի) հետ: Քուֆեքսը սպորտաձեւի պատմության մեջ ամենալավ փիթչերներից մեկն է, սակայն հարցազրույց վարելու մեջ անփորձ: Նա խաղացողին հարցնում է. «Նկատեցի, որ այսօրվա խաղում չորրորդ ելույթի ժամանակ դուք ձեր գնդակի հարվածը մի փոքր թուլացրիք, դեռ ժամանակ ունեիք, որովհետեւ 4-0 հաշվով հակառակորդից առաջ էիք: Հետո յոթերորդ փուլում կիրառեցիկ ձեր պտտվող նետումը: Իսկ իններորդում վերադարձաք արագահարվածին, ու չնայած դրան՝ դեռ առջեւում էիք»:

«Փիտչերը ընդամենը կարողացավ պատասխանել՝ այո»,- մտաբերում է Քինգը:

Քինգն ասում է, որ հարցազրույց վարողի համար լավագույն հարցը «ինչո՞ւ»-ն է: «Ինչո՞ւ», «ինչպե՞ս» եւ «Կարո՞ղ եք ձեր միտքը պարզաբանող որեւէ օրինակ բերել» հարցերը մարդկանց ստիպում են խոսել:

Երբեմն լռությունն էլ է մարդուն մղում խոսելու: Դեյվիդ Մ. ՄաքՔլուն, որ «Ամսվա գիրք» ակումբի նորություններ»-ի համար հարցազրույցներ է անցկացնում, ասում է. «Ես զգացել եմ, որ լռությունը երբեմն ավելի բովանդակալից պատասխանների առիթ է դառնում, քան սուր հարցադրումը»:

Երբ աղբյուրը որեւէ արտառոց բան է ասում, որոշ փորձառու հարցազրուցավարներ նախընտրում են լուռ մնալ: Հոնքերը բարձրացնելուց բացի լրագրողն ուրիշ ոչ մի շարժում չի անում: Նա, ում հետ հարցազրույց են վարում, այն զգացումն է ունենում, թե իր ասածը լավ տեղ չի հասել: Եվ, սովորաբար, պարտավորված է զգում լռությունը լցնել իր մտքի մեկնաբանություններով, ինչը հավելյալ լույս է սփռում ճշմարտության վրա:

Սովորաբար հարցազրույցի ժամանակ կիրառվող մարտավարությունն ու տրվող հարցերը կախված են նրանից, թե աղբյուրն ով է եւ ինչ կարգի տեղեկատվություն եք ուզում ձեռք բերել: Հնարավոր է՝ ձեր զրուցակիցը նախընտրի քիչ խոսել կամ ընդհանրապես լռել: Սակայն պետական պաշտոնյան իրավունք չունի լռելու հանրային գործերի վերաբերյալ, եւ հնարավոր է՝ հարկ լինի այս մասին հիշեցնել աղբյուրին:

Ակնարկի նյութ հանդիսացող անձը միակը չէ, որի հետ պետք է հարցազրույց վարել ակնարկ գրելու համար: Այն անձաց ցուցակը, որոնք կարող են սուբյեկտի մասին հետաքրքիր տեղեկություններ տալ, անսահմանափակ է. ընկերները, բարեկամները, աշխատողները, գործատուները, ուսուցիչները: Երբեմն այս աղբյուրները սուբյեկտի մասին կարող են այնպիսի առանձնահատուկ կարծիք հաղորդել, որը լրագրողին կօգնի մարդուն տեսնել նոր տեսանկյունից ու հայտնաբերել թեմաներ, որոնց մասին նախկինում չէր մտածել:

Լսել եւ դիտել: Լավ հարցեր տալով եւ ուշադիր լսելով՝ լրագրողը սովորաբար կարող է գտնել այն միակ մեջբերումը, որ լավագույնս նկարագրում է անձին կամ իրադարձությունը: Երբ Ուեյն Քինգին «Նյու Յորք Թայմսը» գործուղել էր Կոլորադոյի ածխահանքում տեղի ունեցած աղետի մասին գրելու, Քինգը հարցազրույց անցկացրեց 15 վախճանված հանքագործներից մեկի եղբոր հետ: Վերջինս հայացքը հառեց Քոլորադոյի լեռնաշղթայի արեւմտյան լանջերի կողմն, ուր Հոլանդական կիրճ կոչվող հանքն էր, եւ ասաց. «Այդ մեծ սարը լափեց եղբորս»:

Քինգը այս մեջբերումը հոդվածի վերեւում դրեց. այն ամփոփում էր հանքագործի կյանքն ու մահը:

Ժեստերն էլ են խոսում: Խոսելու ժամանակ կկոցած աչքերը կարող են ասվածն ընդգծել այնպես ցայտուն, ինչպես հոծ տառատեսակը՝ գրավոր նախադասության մեջ: Կամ երբ խոսակիցը որեւէ բան ասելով շրջվում է, դա կարող է նշանակել, որ ասածը նրան անհարմար դրության մեջ է գցել: Լավ լրագրողն ուշադիր է ոչ-խոսակցական հաղորդակցության՝ աղբյուրի շարժումների նկատմամբ:

Երբ հարցազրույցը սուբյեկտի տանը կամ գրասենյակում է կայանում, ապա գրառումներ պետք է կատարել սենյակի կահավորության, պատերի նկարների, գրասեղանին կամ հյուրասիրության սեղանին եղած ամսագրերի մասին: Այս մանրամասները երբեմն բացահայտում են անհատի նախասիրությունները, ճաշակն ու հետաքրքրությունները:

Ժուռնալիզմի հայտնի պրոֆեսորը իր գրասենյակի պատերը ծածկել էր ճանաչված մարդկանց հետ իր լուսանկարներով: Հարցազրույցի ժամանակ լրագրողը, նկատելով պատի նկարները, եզրակացրել էր, որ ըստ երեւույթին, պրոֆեսորը, եսասիրությունն ահռելի է, որ անհրաժեշտություն է զգում իր նկարները ցուցադրել այցելուներին: Լրագրողը նաեւ եզրակացրել էր, թե պրո-

ֆեսոր չնայած իր ողջ համբավին, թերարժեքության զգացում ուներ: Լրագրողն իր դիտարկումները գրի էր առել հետագայում կիրառելու նպատակով: Ոմանք իրենց դիտարկումները, լսած անեկդոտներն ու պատմությունները մոտ մեկ տարի պահում են, մինչեւ որ պետք կգան:

Նյու Յորք Թայմսից Հաուել Ռեյնսը մի անեկդոտ էր պահել երիտասարդ, աճող քաղաքական գործչի մասին, որն իր աղբյուրից էր լսել: «Այդ մեջբերումը պահեցի, որովհետեւ գիտեի, որ մի օր պետք է գալու»,- ասել էր Ռեյնսը: Մի տարի անց նա երիտասարդ քաղաքական գործչի մասին իր ակնարկում օգտագործեց այն որպես եզրափակիչ նախադասություն:

Գրառումներ կատարել: Շատ լրագրողներ ակնարկներ գրելու համար ձայնագրիչից են օգտվում, մյուսները նախընտրում են ծոցատետրը, գտնելով, որ այդպես ուշադրությունն ավելի քիչ է շեղվում: Պատասխանելով Ռոյ Փիթեր Քլարքին՝ Ռեյնսը հարցազրույց վարելու տեխնիկայի մասին ասել է. «Եթե նոթատետր եմ գործածում, շատ շուտ եմ այն մեջտեղ հանում ու գրիչն էլ եմ սկզբից մեջտեղ հանում: Դրանցով խաղում եմ այնքան, որ ի վերջո մարդիկ այլեւս ուշադրություն չեն դարձնում նշումներ անելուս:

Եթե որեւէ մեկն իրոք կարեւոր բան ունի ասելու, եւ ես զգում եմ որ նշումներ անելը կարող է խանգարել, գրառումներ էլ չեմ անում: Հետո, երբ խոսողը հարցի շուրջ իր ասելիքը վերջացնում է (իսկ ես լավ հիշողություն ունեմ) հանում եմ ծոցատերտրն ու գրի առնում այն, ինչ ասվել է:

Սակայն փորձում եմ անկեղծ լինել նշումներ կատարելու վերաբերյալ երկու նկատառումով. նախ՝ դա հավաստում է ձեր հեղինակությունը: Ոչ մեկը հետագայում չի համարձակվի հարցականի տակ առնել իր խոսքերը, որոնք դուք գրի էիք առնում այն պահին, երբ դրանք դուրս էին գալիս իր բերանից: Երկրորդ՝ սրանք այնպիսի մարդիկ են, ովքեր սովոր են լրագրողների հետ առնչվել»:

Հրապարակել կամ ոչ: Լրագրողի պարտականությունը հոդված գրելն է: Փորձառու լրագրողներից շատերը համաձայն չեն գաղտնապահության նախապայմանին, եւ գրեթե երբեք աղբյուրին չեն հիշեցնում այդ հնարավորության մասին:

«Ես ինքս երբեք չեմ առաջարկում որեւէ բան դուրս թողնել»,- ասաց Ռեյնսը: Նրա աղբյուրների մեծամասնությունը փորձառու

մարդիկ են, սովորաբար պետական կամ հասարակական դեմքեր: Նրանք գիտեն, որ իրենց ասածը օգտագործվելու է:

«Ասվածից հետին թվով ոչ մի բան չեմ հանում,- ասում է Ռեյնսը: - Երբ ինձ ասում են՝ «Ինչ որ հենց նոր ասացի հրապարակման ենթակա չէ», դա իրենց գործն է եւ ինձ ամենեւին չի պարտավորեցնում: Այդպես էլ ասում եմ, սակայն չեմ գտնում, որ այդ մասին պարտավոր եմ զգուշացնել»:

Ռեյնսն ընդունում է հրապարակման համար չնախատեսված ինֆորմացիա: Սակայն այդ դեպքում նա ճգրտորեն հետեւում է լրագրողական հիմնադրույթներին: Ստորեւ բերված են այն պայմանները, որ աղբյուրը կարող է առաջադրել, երբ չի կամենում, որ իր ասածը հրապարակվի:

- Մեջբերումը պետք է վերագրվի ոչ թե աղբյուրին, այլ ինչ որ «մի պաշտոնյայի» կամ նման անորոշ աղբյուրի,
- Ասվածը պետք է ներկայացվի պատմողական ձեւով՝ որպես հեղինակի խոսք, առանց աղբյուրը նշելու,
- Նյութը կարելի է օգտագործել միայն այն դեպքում, երբ կան այն հաստատող նաեւ այլ աղբյուրներ, եւ նույնիսկ այդ դեպքում այն չպետք է վերագրվի նախնական աղբյուրին,
- Նյութը կարող է օգտագործվել միմայն իբրեւ ընդհանուր տեղեկատվություն եւ ոչ մի դեպքում ենթակա չէ հրապարակման:

Հարցազրույցի վարպետը: Նրա հարցազրույցները միջազգային միջադեպերի են առթել, դարձել Միացյալ Նահանգների պետական քարտուղարներից մեկի խայտառակության պատճառը եւ լրագրողների նախանձն էին շարժում: Օրիանա Ֆալաչին հարցազրույցներ էր վարում արքաների ու նախագահների, բռնապետների ու լրտեսներ հետ: Յուրաքանչյուր հարցազրույցի համար նա նոր մեթոդ էր ընտրում, սակայն բուն տեխնիկան նույնն էր: Նա խնամքով նախապատրաստվում էր, կարդում գրքեր, հոդվածներ, այլ հարցազրույցներ՝ ինչ որ հաջողվում էր: Ֆալաչին հստակ պատկերացնում էր, թե ինչպիսի մոտեցում պետք է ցուցաբերի եւ ինչ հարցեր պետք է տա, եւ ըստ անհրաժեշտության հարցազրույցի ընթացքում զգում էր, թե ինչպես փոխել մոտեցումն ու հարցադրումները:

Նախապատարաստական փուլում նա փորձում էր հայտնաբերել զրուցակցի խոցելի տեղերն ու ըստ այդմ շարժվել:

«Հենց որ որեւէ մեկը թույլ է տալիս իր մասին գրել, նա իր կյանքն է մեկնում ձեզ եւ պետք է միշտ հիշեք, որ դուք պատասխանատվություն եք կրում այդ անձի հանդեպ: Նույնիսկ այն դեպքում, երբ այդ անձը ձեզ թույլ է տալիս ուզածին պես տնօրինել իր անձնական կյանքի մասին ձեր տվյալները կամ անփույթ է դրանց վերաբերյալ, միեւնույն է՝ դուք եք որոշում, թե ինչը կարելի է գրել, ինչը՝ ոչ»:

Լիլիան Ռոսս, «Նյու Յորքեր»

Ձայագրել կամ ոչ

«Քանի որ ձայնագրում եմ, ուրեմն՝ կամ»:

Սթադս Թերքել, ռադիո-հարցազրուցավար

«Այսօրվա հարցազրույց վարողները մեծ մասամբ հիմնվում են ձայնագրությունների վրա: Նրանք չեն լսում: Նրանք զրույց չեն վարում: Նրանք՝ առանձնապես երիտասարդ սերունդը, մեքենայից դուրս եկած բառերին այնպես են վերաբերվում, ասես դրանք ավետարան լինեն, որ մինչեւ թղթին չհանձնեն, չի կարելի ձեռք տալ»:

Ջորջ Փլիմփթոն, հեղինակ

«Այն պահից, ինչ մեխանիկական սարք եք ներմուծում հարացազրույց, ստեղծում եք այնպիսի մի մթնոլորտ, որտեղ անձը երբեք իսկապես իրեն ազատ չի զգալու, որովհետեւ անընդհատ ինքն իր ասածին է հետեւում»:

Թրուման Քափոթե, հեղինակ

«Դոկտոր Քիսինջեր,- հարցրեց նա Միայցյալ Նահանգների այն ժամանակվա Պետական քարտուղարին,- ինչով կբացատրեք ձեր գրեթե կինոաստղի կարգավիճակը: Ինչպե՞ս կբացատրեք այն, որ ցանկացած նախագահից ավելի ճանաչված եք ու ավելի լայն ժողովրդականություն եք վայելում»: Ֆալաչին հաճոյախոսում էր Քիսինջերին այն հաշվարկով, որ նրա փառասիրությունը շոյելով (որ լրագրողի եզրահանգմամբ՝ նրա հսկայական եսասիրության արդյունքն էր), կարող է ստիպել նրան անկեղծանալ: Ի զղջումն վերջինիս՝ հենց այդպես էլ եղավ:

Նա ընդունեց, որ ինքը հսկայական հաջողության է հասել: Որովհետեւ՝ «միշտ միայնակ եմ գործել: Ամերիկացիները դա շատ են սիրում: Ամերիկացիները սիրում են վերաբնակի սայլի առաջապահ կովբոյին, որ միայնակ առաջնորդում է դեպի քաղաք կամ գյուղ՝ ընդամենը մի ձիով, եւ ուրիշ ոչինչ: Թերեւս՝ նույնիսկ առանց ատրճանակի, քանի որ չի սպանում: Նա միայն գործում է, այդքանը, ուղղակի պետք եղած պահին լինում է պետք եղած տեղում: Մի խոսքով՝ վեստերնները»:

Քաղաքակիրթ եւ կրթված Քիսինջերի կերպարն իբրեւ կովբոյի, ողջ աշխարհի թերթերում սենսացոն վերնագրերի նյութ դարձավ:

Ֆալաչին ժամանակ չէր կորցնում բուն նյութին անցնելու համար: Նա Այաթոլլա Խոմեյինիին հարցրեց՝ «Դուք ֆանատիկո՞ս եք»: Երբ վերջինս նրան պատասխանեց, թե ինքը կարիք չունի չադրա հագնելու, Ֆալաչին այն պատռեց: «Ահա թե ինչ կանեմ ձեր միջնադարյան հիմար փալասը»: Այդ տեսնելով՝ Այաթոլլան դուրս եկավ սենյակից, իսկ Ֆալաչին հետեւից գոռաց. «Այդ ո՞ւր եք գնում՝ չիշիկ անելո՞ւ»: Հետո ցուցադրաբար հրաժարվեց հեռանալ մինչեւ Խոմեյինին չշարունակի հարցազրույցը: Այաթոլլան համաձայնեց, որովհետեւ Ֆալաչին ապշեցրել էր նրան:

Ոչ բոլոր լրագրողները կարող են դիմել այդ մեթոդներին: Ֆալաչին բուռն անհատականություն է, եւ աղբյուրները գիտեն այդ մասին, երբ համաձայնում են նրան հարցազրույց տալ:

Ֆալաչիի ելակետային դրույթն այն է, որ իշխանության տեր մարդիկ պատասխանատու են իրենց գործերի համար: Նա նրանց դեմ հանդիման կանգնեցնում է իրենց արարքներին ու բացատրություն պահանջում: Մեկ անգամ Լիբիայի նախագահ, բռանպետ Մուհամմար Քադաֆիին ընդհատեց, երբ վերջինս փառաբանում էր սեփական անսխալականությունը: «Դուք Աստծուն հավատու՞մ եք»,- հարցրեց նա:

«Այո, իհարկե: Ինչու՞ եք հարցնում»:

«Որովհետեւ կարծեցի, թե դուք եք Աստվածը»,- պատասխանեց նա:

Ֆալաչին իր հետ կատարված դեպքերից շատերը շարադրել է իր «Հարցազրույց պատմության հետ» գրքում, ինչպես նաեւ Լուչինդա Ֆրանքսին («Ֆալաչիի կերպարի ետեւում», Սաթըրդեյ Ռիվյու, Հունվար 1981), Դեյվիդ Սենֆորդին «Ձայներիզների տիկինը», Էսքուայր, Հունիս 1975), Ռոբերթ Շիրին («Օրիանա Ֆալաչի», Փլեյբոյ, նոյեմբեր, 1981) եւ այլոց տված հարցազրույցներում:

Դիմանկարի կամ ակնարկի էական տարրերը

Բնութագրական ակնարկի կամ դիմանկարի էական տարրերը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ.

Հիմնադրույթներ
- Սուբյեկտի անունն ու ինքնությունը
- Դիմանկարի թեման
- Ակնարկ գրելու պատճառը (նորության առանցքը)
- Սուբյեկտի կենսագրությունը
- Խնդրո առարկա անձից եւ նրա բարեկամներից ու գործընկերներից լսած դեպքեր եւ անեկդոտներ
- Սուբյեկտի ֆիզիկական նկարագրությունը
- Սուբյեկտից ու աղբյուրներից ուղղակի մեջբերումներ
- Սուբյեկտի դիտարկումը աշխատանքի պահին, տանը կամ խաղի ժամանակ՝ շարժուձեւը, ոճը
- Տպավորիչ եզրափակում

Էկրանի ետեւում

Այժմ եկեք քննարկենք երկու դիմանկար: Նախ՝ ահա թե ինչպես է սկսում Վինսենթը Բիսեթի իր բնութագրումը.

Հոլիվուդ - Ժաքլին Բիսեթին հանկարծ գեղեցիկ չանվանեք, եթե ուզում եք լեզու գտնել հետը:

«Ես չեմ ուզում, որ ինձ կրծքազարդի տեղ դնեն,- կտրուկ հարում է նա՝ հանրահայտ մոխրականաչավուն աչքերը փայեցնելով,- Ես ուզում եմ ավելին լինել, քան պարզապես գրավիչ կինը: Հասարակությունը սխալվում է մարդկանց այդ կերպ պիտակելով»:

(Առաջին երկրորդ պարբերությունների համար հետաձգված գլխադիր)

Ներկայումս Բիսեթը «Ժաքեթ Փրոդաքշնզ» ֆիրմայի հանձնաժողովի նախագահն է՝ թող որ միակ անդամն այդ հանձնաժողովում: Որպես այդպիսին՝ նա «Հարուստներն ու հռչակավորները» շարքի համառեժիսորն է: Այս ճոխ, մեծածախս նկարահանումներով ֆիլմաշարը նրան ներկայացնում է իբրեւ սյուժեի գլխավոր

անձանցից մեկը՝ հարգարժան մի գրող, որ երբեմն պատահական սիրային հարաբերությունների մեջ է մտնում իրենից երիտասարդ տղամարդկանց հետ:

(Նորության առանցքը երրորդ պարբերության սկզբում)

Ֆիլմը, որն այժմ ցուցադրվում է «Լինհեյվ» եւ «Հրապարակ 6» կինոթատրոններում, Բիսեթին հնարավորություն է տալիս՝ «մեկ անգամ եւ ընդմիշտ ապացուցելու, որ ես կարող եմ եւ լուրջ դերասանուհի լինել»:

(Թեման պարբերության վերջում)

Երրորդ պարբերության վերջին նախադասությունը ծառայում է նաեւ իբրեւ անցում: Այն ընթերցողին ավելի լիարժեք բացատրություն է տալիս Վինսենթի հոդվածի հիմնական թեմայի մասին՝ Բիսեթը ջանում է ապացուցել, որ ինքը միայն զարդարանք չէ: Նկատեք, որ նորության առանցքը տարբեր է դիմանկարի թեմայից: Չորրորդ պարբերության մեջ Վինսենթն արդեն արծարծում է երրորդ պարբերության վերջում նշված թեման՝ Բիսեթի՝ լուրջ դերասանուհի դառնալու ձգտումը:

Թեեւ իր կարծիքով նախկինում էլ է իր կարողություններն ապացուցել, նա գիտակցում է, որ քննադատներից ոմանք այդ կարծիքին չեն: «Չգիտես ինչու քննադատները սիրում են ինձ ընդհանուր կաթսայի մեջ խառնել,- ասում է նա: -Այդ առումով իմ կարիերան Քենդի Բերգենի՝ իմ կինոհերոսի ճակատագիրն է հիշեցնում: Երկուսս էլ քննադատների ձեռքից ենք տուժել »:

Հարցազրույցը վարելուց հետո անհրաժեշտ է հոդվածը որքան հնարավոր է շուտ գրել, ասում են փորձառու գրողները: Ի դեպ՝ որեւէ դեպքից հետո գրելը պետք է արագ կատարվի, քանի դեռ տպավորություններն ու հիշողությունները թարմ են:

Ուայները ակնարկներից անցել է հետազոտական լրատվության եւ «Ֆիլադելֆիա Ինքուայրըրի» համար կատարած իր աշխատանքի համար արժանացել է Փուլիտցերյան մրցանակի:

Թմբուկի վրա

Դիմանկարի կամ բնութագրական ակնարկի համար պարտադիր չէ, որ նորությունն անպայմանորեն խիստ էական լինի: Այն կարող է լինել այնքան պարզ մի նորություն, ինչպես Նյու Յորքում նվագող ջազային թմբկահար Սոնի Քրիերի դիմանկարինը:

Թիմոթի Ուայների հոդվածն սկսվում է Քրիերի կյանքից կարճառոտ մի դիպվածի նկարագրությամբ՝ երկրորդ պարբերության մեջ անցնելով կենսագրական տվյալներին: Երրորդ պարբերությունը ներկայացնում է թեման՝ այն, որ Սոնի Քրիերը 83 տարեկան հասակում դեռ թմբուկ է նվագում եւ ըմբոշխնում կյանքը:

Քրիերը նկարում պատկերված է թմբուկի առջեւ: Տեսնում ենք, թե նա ինչպես է «բարձրադիր ծնծղաների վրա կատարում փայտիկներով իր դոփապարը»՝ «թմբկահարության իր համազարկը»:

Վերջավորությունն ուժգնացնում է թեման՝ Դյուք Էլինգթոնից կատարված մեջբերումով, որի հետ Քրիերը 32 տարի շարունակ նվագել է:

Դիմանկարի բոլոր տարրերն էլ առկա են: Նկատեք, որ Ուայները չի փորձում շարադրել Քրիերի կյանքի մանրամասները: Ոչ մի դիմանկար չի կարող լինել ավելին, քան մի թռուցիկ հայացք մարդու կյանքին: Ներկայացնում ենք Ուայների ակնարկը:

Նյու Յորք - 1910 թվականին, երբ ջազի մեծերից Սոնի Քրիերը դեռ երեխա էր, միայն մի անհաղթահարելի երազանք ուներ. ուզում էր աշխարհի լավագույն բիլիարդ խաղացողը դառնալ:

Եթե Սոնին իր բիլիարդի կին չփոխարիներ թմբուկի փայտիկներով, գուցեեւ 1919 թվականին այդպես էլ երբեք չմիանար Դյուք Էլինգթոն անունով մի երիտասարդ դաշնակահարի: Եւ գուցե՝ 1920 թվականին Դյուք Էլինգթոնի նվագախումբն այդպես էլ չբերեր Նյու Յորք, ուր այն ճանաչում ստացավ, որպես ջազի համաշխարհային գոհարը: Ու թմբուկների ու ծնծղաների մարտկոցի փոխարեն իր կյանքի 83 տարիները կարող էր անցկացնել բիլիարդի գնդակների առջեւ:

Մի տարիքում, երբ մարդկանց մեծ մասի կյանքի ընթացքը դանդաղում է սողալու աստիճան, Սոնի Քրիերի եռանդը մազաչափ չի պակասել:

Ամեն երկուշաբթի երեկոյան ժամը 8-ին անթերի հագնված Քրիքրն իր թմբուկներն է շարում Նյու Յորքի «Ուեսթ Էնդ» սրճարանի բեմահարթակին: Երիտասարդ երկրպագուները նստում են ծերունի ջենթլմենի ոտքերի մոտ, մինչ նա Հարլեմի գինետներից ու ջազի մեղրածոր օրերից պատմություններ է հյուսում:

«Ամենից շատ սիրում էի նվագել հին Քենթուքի ակումբում,- ժպտալով ասում է Սոնին՝ աչքերը հառած հեռուները: - Ֆիթս Ուոլերն ու ես այնտեղ դուետ էինք նվագում ու «ռիսքեյ» կատարում: Ամբողջ գիշեր նվագում էինք եւ դուրս գալիս առավոտյան, երբ արեւը փայլում էր, ու ամենքով ծիծաղելով քայլում էինք Բրոդվեյով՝ առանց ցավ զգալու: Լավ օրեր էին, ջանս, համա թե լավ օրեր էին»:

32 տարվա լավ օրերի անվերջանալի շղթայում Սոնի Քրիքրի հարվածայինը Դյուք Էլինգթոնի նվագախմբի սրտի բաբախյունը եղավ: Հազար ու մի գիշերներ նա արքայավայել բազմել է իր գահին, բեմի կենտրոնի բարձրադիր հարթակի վրա՝ շրջապատված զանգակներով, շշադդումներով, դափերով, վիբրաֆոններով ու կաթսայաձեւ թմբուկներով, իսկ պղնձե հսկայական կոչնակը ետեւից շողում էր որպես լուսապսակ:

1930-ականներին եւ 40-ականներին «Դյուք Էլինգթոն» նվագախումբը ջազային աշխարհին հայտնի ամենաէլիտար խումբն էր: Սակայն համաբավն ու ճանաչումը չէին ընդարմացրել խմբի ստեղծագործական ոգին:

«Բեմի վրա՝ երեկոյի ընթացքում, փորձեր էինք անում,- ասում է Սոնին: - Եթե Դյուքին դուր էր գալիս, այդ կտորը պահում էր: Եթե ոչ՝ դե ինչ. դա մեզ վրա ոչինչ չէր նստում՝ դեն էինք շպրտում ու մոռանում:

Նվագախմբի տղաները զարմանալի տղերք էին: Միշտ ինչ-որ բան էին մտահղանում, միլիոնավոր գաղափարներ: Նրանք շատ բեղուն ստեղծագործողներ էին ու ստեղծագործում էին»:

Սոնի Քրիերն այսօր նախկին նվագախմբից ողջ մնացած միակ անդամն է: Եւ հավանաբար ամենամեծահասակ ջազային երաժիշտը, որ դեռ նվագում է: Ո՞րն է նրա հարատեւման գաղտնիքը:

«Ախր, թմբուկն իմ կյանքն է,- ասում է նա՝ վառելով ծխախոտն ու ճոճելով վիսկիի հնաոճ բաժակը: - Նվագելն ու մարդկանց ուրախություն պարգեւելն ինձ մեծագույն հաճույք են պատճառում»:

Էլինգթոնի աշակերտ, 27-ամյա կույր դաշնակահար Բրուքս Քերը, որ Սոնիի հետ է նվագում, ասաց. «Սոնիին հատուկ է մի հատկություն, որով ցանկացած տարիքում շատ քչերն են օժտված՝ նվագելու ցանկությունը: Իմ կարծիքով՝ նա ապրում է աշխատելու եւ աշխատում է ապրելու համար»:

Ելույթի ժամանակ Սոնին Բրուքսին առաջնորդում է դեպի դաշնամուրը, իսկ ինքը նստում թմբուկների առջեւ: Փոքրիկ հայելիներով պատած թմբուկները փայլում են լուսարձակների տակ: Բրուքսը նվագում է «Նստեք 'Ա' գնացքը» երգի առաջին ակորդներն ու հայտարարում՝ «Տիկնայք եւ պարոնայք, Սոնի Քրի՜ըը»:

Սոնին դաստակի թեթեւ շարժումով կենդանացնում է իր կախարդական թմբուկը՝ հնչեցնելով թմբկահարության համազարկը: Նրա փայտիկները բարձրադիր ծնծղայի վրա դոփապար են կատարում: Իսկ բաս թմբուկը պահում է չափը: Բոլոր ունկնդիրները համընթաց ռիթմ են խփում՝ նրանց մատների ծայրերն ու ոտքերը հետեւում են թմբուկի զարկերին, նրանց մարմինները ճոճվում են ներդաշնակ:

Սոնիի թմբուկները խոսում են: Նրա թմբկահարությունը երաժշտական խոսք է, որ կերպավորում է հնչող երաժշտության լեզուն: Ու դեռ ավելին՝ դրանից հառնում են Հարլեմի արձագանքները, անցյալի ոգեկոչումը:

Նա իր կյանքի պատմությունն է անում թմբուկների վրա՝ բոլոր այդ տարիներին կուտակված ռիթմերը բյուրեղացնելով ներդաշնակ շեշտադրման հեւքով: Սոնի Քրիերին ունկնդրելը ճանապարհորդություն է ետ՝ դեպի ջազի ոսկեդարը: Թմբուկների վրա նրա մենանվագը դասական ոճի համառոտ վերհուշն է:

Սոնի Քրիերի թմբուկային մենանվագը չի շարունակվելու հավերժ, սակայն ինչպես մի անգամ Դյուք Էլինգթոնն է գրել. «Սոնի Քերն անվերջանալի պատմություն է»:

Դիմանկարի եզրափակումը

Դիմանկարը եզրափակելու համար ցանկալի է որեւէ դիպված կամ անեկդոտ մեջբերել, որ ընդգծի հիմնական թեման: Ֆլորիդայի մի հզոր քաղաքական գործչի որդու՝ Ա. Սմադերսի իր դիմանկարում Ռեյնսը հոդվածի սկզբում արդեն նշում է, որ Սմա-

դերսի քաղաքական ապագան անորոշ է, որովհետեւ նա օժտված չէ հոր երկաթյա կամքով ու վճռականությամբ, որն, ըստ Ռեյնսի՝ «քաղաքական առավելության հասնելու համար երբեք չէր տատանվի թիկունքից հարվածել ընկերոջը»:

Ռեյնսը հոդվածի սկզբում գրում է հետեւյալը.

Ռեյնսի ներկայացրած պատկերը պարզ է: Սմադերս կրտսերը կրթված, ազնիվ անձնավորություն է, անպատրաստ՝ հարավի ներքին անհաշտ քաղաքական պայքարին: Ռեյնսն իր թեման աստիճանաբար բացահայտում է վերջին երկու պարբերություններում.

Թերեւս, Սմադերսն իրոք քաղաքականապես այդքան օժտված է, սակայն շատերը, որ գիտեն, թե վերեւներում քաղաքական խաղերն իրականում ինչպես են խաղացվում, հարցնում են, թե նա արդյոք այդ աստիճան սիրո՞ւմ է քաղաքականությունը կամ արդյոք այդքան կամքի ուժ կունենա՞: Նահանգապետի պաշտոնին կամ Միացյալ Նահանգների սենատորական աթոռին հասնողների մեծ մասին մի բան է բնորոշ՝ նրանց մեջ զգացվող ծարավը, ներքին կրակը, կորովը: Սա չի նշանակում, որ այդ հատկություններն անպայմանորեն դրական են, սակայն դրանք անհրաժեշտ են հաղթանակի հասնելու եւ պաշտոնը պահպանելու համար:

Այս հատկություններն ամենեւին նման չեն Բրուս Սմադերսի կերպարին, որ գծագրվում է իր գրասենյակից մեզ հասած պատմության մեջ: Սմադերսի շրջապատից մեկը մի անգամ պատմել է, թե ինչպես «Մի անգամ նրան մեկը քվեի դիմաց գումար էր առաջարկել, իսկ Սմադերսը վեր էր կացել, սենյակից դուրս էր եկել ու փսխել էր»:

Ռեյնսի ասելով ինքն այդ պատմությունը մի տարի առաջ էր լսել ու պահել էր, որ անհրաժեշտության դեպքում օգտագործի:

Ինչպես հարցազրույց վարել տուժածների հետ

Բոլոր լրագրողներն էլ վաղ թե ուշ ստիպված են լինում առնչվել որեւէ վթարի, հրդեհի, հանցագործության, աղետի, անգամ՝ հիվանդության զոհերի հետ: Նման հարցազրույց վարողները պետք է խիստ նրբազգաց լինեն իրենց աղբյուրների նկատմամբ: Որոշ դեպքերում իրադրությունը սենսացիոն երանգ է ունենում, ինչպես ասենք՝ սեռական հանցագործության զոհերի, տարօրինակ կամ դաժան մահով մահացածների ընտանիքի անդամների հետ հարցազրույցների դեպքում:

Խմբագիրը նախ եւ առաջ պետք է որոշի՝ արժե՞ արդյոք ընդհանրապես նման հարցազրույց վարել զոհի հետ: «Պետք է ինքդ քեզ հարցնես, թե ինչ նպատակով ես այդ հոդվածը գրում,- ասում է Հելեն Բենեդիկտը, որ բազմիցս գրել է տուժածների մասին: -Պարզապես խմբագրի ասածն անելը դեռ բավարար պատճառ չէ: Պետք է գտնեք եղելության բարոյական կողմը կամ այնպիսի վերջավորություն, որ արդարացնի ձեր գրածը»:

Պաշտոնական հանդիպումներ

Այժմ մենք պատրաստ ենք դեմ առ դեմ հարցազրույցներից անցնելու ժողովներում, հանդիպումներում, հանձնաժողովի նիստերում, սիմպոզիումներում, մամուլի ասուլիսներին ու ճառերի ընթացքում արտասանված բանավոր խոսքի լրատվական լուսաբանմանը:

Ժողովներ, հանդիպումներ

Հասարակական հարցերի մեծամասնությունը որոշվում է ժողովների ու հանդիպումների ժամանակ: Լրագրողի պարտականությունն է գրել պարզ ու ամբողջական հոդվածներ, որպեսզի մարդիկ իմանան, թե ինչ են անում իրենց ընտրովի կամ նշանակված ներկայացուցիչները: Այդ ժողովներին մասնակցելը լրագրողների իրավունքն է:

Իհարկե, պետական մարմինների ժողովներից բացի գումարվում են նաեւ այլ ժողովներ: Ծնող-ուսուցիչ միավորումները ամենամսյա ժողովներ են գումարում, քոլեջի քաղաքական ակումբները նույնպես հաճախ են հանդիպում: Եկեղեցական, քաղաքացիական ու մասնագիտական կազմակերպությունները նույնպես պարբերաբար հանդիպում են: Այս կարգի ժողովներին լրագրողները մասնակցում են այդ կազմակեպությունների հրավերով: Այն ժողովները, որոնք հարկային միջոցներով չեն ֆինանսավորվում, կարող են հասարակության եւ մամուլի համար փակ լինել: Քաղաքական ակումբը, ըստ հայեցողության, կարող է փակ ժողով գումարել: «Քիուանիս» ակումբի հանձախումբը պարտավոր չէ թույլատրել լրագրողների մասնակցությունը:

Ժողովին մասնակցելու թույլտվությունից ստանալով՝ լրագրողն իրավասու է դառնում հաղորդել այն ամենն, ինչ ասվում է ժողովին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն գումարում է մասնավոր կազմակերպությունը, եւ մուտքը լրատվական սահմանափակումներով է: Այն դեպքում, երբ ժողովները փակ են, լրագրողը կարող է օգտվել այն ամենից, ինչ հնարավոր է քաղել ժողովից հետո՝ մասնակիցների հետ հարցազրույցներից:

Սովորաբար ժողովները որոշակի նպատակ են հետապնդում, եւ հաճախ առաջադրված խնդիրը լուծվում է համաձայնութամբ կամ քվեարկությամբ: Երբեմն միայն ընդհանուր քննարկում է լինում: Յուրաքանչյուր տեսակի ժողով յուրովի է լուսաբանվում:

Եթե ժողովի որոշմամբ որեւէ քայլ է նախաձեռնվում ապա այդ ժողովի լուսաբանումը շեշտում է տվյալ միջոցառումը:

Երեկ 9-2 հարաբերակցությամբ Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի միացյալ ֆինանսական ենթահանձնաժողովի կողմից ձայների մեծամասնությամբ մերժվել է մի օրինագիծ, ըստ որի ոգելից խմիչքների՝ «գալոնը 10.5 սենթ» հարկը պետք է փոխարինվեր ոգելից խմիչքների մեծածախ արժեքի տոկոսադրույքով:

Եթե ժողովը որեւէ վճիռ չի կայացնում, ապա դրա վերաբերյալ լրատվությունն ընդգծում է քննարկման ամենակարեւոր մասը:

Հոգաբարձուների խորհրդի երեկվա ամենամսյա ժողովի ժամանակ համալսարանի ավտոկայանում ավելի շատ կանգառի տեղեր հատկացնելու մասին ուսանողների դիմումը հոգաբարձուների կողմից ընդամենը կարեկցանքի արժանացավ:

«Մենք տեղյակ ենք այդ խնդրին, - ասաց Հանձնախմբի նախագահ Ալֆրեդ Բրայթը, - սակայն դա այնքան բարդ է...»:

Եկեք մանրամասն ուսումնասիրենք այս երկու կարգի հանդիպման շուրջ լրատվությունը:

Ժողովներ, որոնք որոշումներ են ընդունել

Էական տարրերը

- Քվերակության արդյունքը, կայացած որոշումը, համաձայնությունը
- Քննարկված հարցերի համառոտագրությունը
- Ձեռնարկված միջոցի (որոշման) պատճառներն ու նախադրյալները
- Թեր եւ դեմ փաստարկներ
- Թեր եւ դեմ ելույթ ունեցողների անունները
- Ձեռնարկված միջոցի (որոշման) նշանակությունը եւ հետեւանքները
- Քվեարկությանը կամ որոշմանը նախորդած քննարկումները
- Հարցերի նախապատմությունը
- Քննարկված կարեւոր այլ հարցեր
- Ժողովի նպատակը, ժամանակը եւ վայրը
- Օրակարգի այլ հարցեր
- Լսարանի կազմը եւ մասնակիցների թիվը
- Լսարանի արձագանքն ու մեկնաբանությունները
- Օրակարգից նկատելի շեղումները
- Հաջորդ ժողովի օրակարգը:

Էական այս բաղադրիչներից յուրաքանչյուրը կարող է հոդվածին որպես գլխադիր (լիդ) ծառայել, եւ պարտադիր չէ, որ պահպանվի վերը նշված հերթականությունը:

Ստորեւ բերում ենք մի քանի գլխադիրներ այն ժողովների մասին, ուր որոշումներ են կայացվել

Քվերակությամբ

Երեկ երեկոյան Քաղաքապետարանի հանձնաժողովը միաձայն որոշում կայացրեցեց յուրաքանչյուր 1000 դոլար գնահատված գույքի արժեքի դիմաց սեփականության հարկն ավելացնել 5 դոլարով:

Համաձայնությամբ

Երեկ Շրջանային Իրավաբանական միավորման համաձայնությամբ որոշվեց Գրենթ շրջանի իրավաբաններին թույլ տալ գովազդել որոշակի իրավաբանական ծառայություններ:

Որոշումով

Այսօր ծնողները քաղաքային դպրոցական հանձնաժողովին զգուշացրել են, որ իրենք «հնարավոր բոլոր միջոցներով» պիտի խոչընդոտեն Դոնալդ Ֆոգթ տարրական դպրոցը փակելու առաջարկին:

Որոշման ելքով ժողովների դեպքում կարելի է կիրառել նաեւ մեկ ուրիշ լիդ: Ընթերցողները սովորաբար ուզում են իմանալ որոշման նշանակությունն ու հետեւանքները: Վերը բերված համաձայնության լիդի հեղինակը, իրավաբաններից հետաքրքրվելով, պարզում է, որ իրենց համաձայնությունը նշանակում է, որ այնպիսի իրավաբանական ծառայությունների ծանուցումը, որպիսինք են ապահարզանն ու կտակի ձեւակերպումը, նշանակում է, որ այդ ծառայությունների վարձը ապագայում նվազելու է: Այս իմանալով՝ հեղինակը փոխում է նախկին լիդը:

Հետեւանքով լիդ

Շուտով Գրենթ շրջանում կտակի ձեւակերպման կամ ապահարզանի ծախսերը կարող են ավելի էժան դառնալ:

Երբ Ալաբամայի Հանրային ծառայության հանձնաժողովը ավտոբուսային մի ընկերության թույլատրեց արվարձանից դեպի Բիրմինգհեմ երթուղի բացել, լրագրողը երկու տարբերակ ուներ ընտրելու. կամ՝ որոշման լիդ, կամ՝ հետեւանքների: Թե որն է նախընտրելի՝ դատեք ինքներդ:

Որոշման լիդ

Երեկ Հասարակական ծառայության հանձնաժողովը B&B Թրանսփորթ եւ Լիմուզին Ընկ. ընկերությանը թույլտվություն շնորհեց Ալաբասթրից Բիրմինգհեմ ավտոբուսային ծառայություն բացել:

Հետեւանքի լիդ

Նրանց համար, ովքեր ձանձրացել են Շելբի շրջանի եւ Բիրմինգհեմի միջեւ երթեւեկության խճողումներից, շուտով աշխատանքի հասնելու նոր ճանապարհ կբացվի:

Եկեք քննարկենք «Լուիսվիլ Քուրիեր Ջուրնալ»- ի հոդվածը մի ժողովի մասին, որում որոշում է կայացվել:

Որոշման լիդ

Երեկ Օլդհեմի շրջանային Պլանավորման ու Գոտեւորման հանձնաժողովը առաջարկեց մերժել Լա Գրեյնջում 68 բաժնեմասով երկհարկ բնակարանային համալիրի նոր գոտեւորման մասին առաջարկը:

Հաջորդ քայլը

Առաջարկությունն այժմ ներկայացվելու է Լա Գրեյնջի Քաղաքային Հանձնաժողովին, որը եւ կկայացնի վերջնական որոշումը:

Հարցի ամփոփումը

Թերի եւ Դոնա Փաուելը ցանկանում են ցածր խտության բնակելի շրջանի գոտեւորումը փոխել բարձր խտության բնակելի շրջանի գոտեւորման՝ իրենց 7.28 ակր հողատարածության վրա՝ Ռասել եւ Մեդիսոն փողոցների մոտ գտնվող Լա Գրեյնջի այն հատվածում, որ հայտնի է Խաղադաշտ անունով:

Լսարանը, ժողովի ժամանակը. Անցում քննարկման

Մոտ 50 հոգի էր մասնակցում հայցը քննարկող պլանավորման հանձնաժողովի երեկվա նիստին: Շրջանային գոտեւորման բաժնի տեսուչ Չարլզ Բրաունն ասաց, որ հանձնաժողովը հետեւյալ նկատառումներից ելնելով է որոշել դեմ քվեարկել վերագոտեւորման առաջարկին.

- *Տարածքը բավականաչափ հողատարածություն ունի, որն արդեն իսկ գոտեւորված է բնակարանային շինարարության համար:*
- *Անցած տարվա ընթացքում Լա Գրեյնջում կամ նրա շրջակայքում արդեն երկու այլ բնակարանային համալիրների շինարարության իրավունք է տրվել:*
- *Կալվածքը կտրված չէ այնպիսի ծառայություններից, ինչպիսին առեւտրական գոտիներն են:*
- *Առաջարկությունը հակասում է Լա Գրեյնջի համընդհանուր հողօգտագործման եւ գոտեւորման ծրագրին:*

Փաստարկներ առաջարկության դեմ

Շրջակայքի բնակչությունից տվյալ առաջարկության հակառակորդներն առարկել են, թե այդ փոփոխությունը կարող է երթե-

ւեկության պրոբլեմներ առաջացնել: Նրանք նաեւ իրենց մտահոգությունն են արտահայտել, որ շինարարության ընթացքում դինամիտի պայթյունից իրենց տները կարող են վնասվել:

Փաստարկներ հօգուտ առաջարկության

Դիմորդների փաստաբան Ջեյմս Ուիլիամսոնը պնդում էր, որ բնակարանային շինարարությունն անհրաժեշտություն է: Դրանց մի մասն հատկացվելու է թոշակառուներին ու հաշմանդամներին: Շինարարական ընկերությունն առաջարկում էր կառուցել հինգ երկհարկանի, եւ վեց բազմաբնակարան շենքեր:

Ժողովներ առանց որոշումների: Երբ ժողովում որոշում չի ընդունվում, քվերակություն չի կայանում կամ ոչինչ չի նախաձեռնվում, ապա հեղինակի գործը բարդանում է: Այս պարագայում հեղինակը գուցե կենտրոնանա ժողովի ընթացքում մասնակիցների ընդհանուր տեսակետի, որեւէ հակասության կամ կարեւոր հայտարարության վրա:

Էական բաղադրիչները.

- Քննարկման էական առանձնահատկությունը՝ ընդհանուր տեսակետ (արտահայտված կամ ենթադրելի), կարեւոր հայտարարություն, ուժեղ ընդդիմություն
- Թեր եւ դեմ փաստարկներ
- Թեր եւ դեմ ելույթ ունեցողների անուններն ու ինքնությունը
- Գլխավոր հարց(եր)ի նախապատմությունը
- Ժողովի նպատակը, ժամանակը եւ վայրը
- Քննարկված այլ հարցեր
- Լսարանի կազմը եւ մասնակիցների թիվը
- Լսարանի տեսակետն ու մեկնաբանությունները
- Օրակարգից նկատելի շեղումներ
- Հաջորդ ժողովի օրակարգը:

Ահավասիկ՝ անհետեւանք ժողովների մի քանի գլխադիրներ (լիդեր)

Ընդհանուր տեսակետ

Երեկ երեկոյան քաղաքային խորհրդի անդամներն իրենց անհանդուրժողականությունն արտահայտեցին տեղական բնակչության նկատմամբ, որ բողոքում էր գույքահարկի տոկոսադրույքի բարձրացման առաջարկի դեմ:

Հակասություն

Երեկ երեկոյան Քաղաքային Խորհրդի անդամ Գարթ Մագուայրը գույքահարկի տոկոսադրույքի բարձրացման դեմ իրենց բողոքն արտահայտող պատվիրակությանն ասաց, որ իրենց ընդդիմությունը «խիստ անհաշտ, խիստ նեղ ու խիստ ուշացած է»:

Կարեւոր հայտարարություն

Երեկ երեկոյան քաղաքապետ Սեմ Ջորջեսը քաղաքային խորհրդին հայտարարել է, թե ինքը դեմ է գույքահարկի բարձրաման առաջարկությանը:

Երբեմն հենց որոշման բացակայությունն է շեշտվում լիդի մեջ:

Անհետեւանք

Երեկ երեկոյան քաղաքային խորհրդի անդամները երկու ժամ տեւած վիճաբանությունից հետո չկարողացան որոշում կայացնել գույքահարկի տոկոսադրույքի բարձրացման շուրջ, որ անցած շաբաթ առաջարկել էր քաղաքի վերակացու Քելլի Սիմոնսը:

Հանձնաժողովների նիստեր, սիմպոզիումներ

Հանձնաժողովը կամ սիմպոզիումը, սովորաբար նույնպես ժողով է, բայց այնպիսին, ուր որոշման հանգելու նպատակ չի հետապնդվում: Դրա արդյունքը կարող է համաձայնությունը լինել: Այդ դեպքում այն դառնում է գլխադրի հիմքը:

Հանձնաժողովի անդամները, սովորաբար, անկախ են. յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետը կամ իր հետազոտության արդյունքները: Ամեն մեկն իր երգը երգող երեք, չորս կամ հինգ մարդու ասածները կարող են այնպիսի խանաշփոթ առաջացնել, որ լրագրողը դժվարանա դրանից կուռ, ամբողջական տեքստ ստեղծել:

Երբեմն, երբ ելույթ ունեցողներից մեկի խոսքը ավելի լրատվարժան է քան մյուս բոլորինը, նրա խոսքն է դառնում լիդը, ինչպես ստորեւ ներկայացված հոդվածում, որի հեղինակն է «Լեգզինգթոն Հերալդ»-ի լրագրող Ռեյ Քոնը: Հոդվածի երկու-երրորդը զբաղեցնում է միայն Ուելչի խոսքը: Մինչեւ հոդվածի վերջավորությունը երրորդ խոսնակի անունն անգամ չի հիշատակված: Հեղինակը բացարձակ առաջնությունը Ուելչին է տվել, քանի որ

նա FBI փորձառու գործակալ է եղել եւ իբրեւ արդարատաության համակարգում պետության բարձրագույն ներկայացուցիչ՝ հեղինակավոր դիրք է գրավում:

«Սպիտակօձիք հանցագործությունը՝ կաշառակերությունը, տարեկան 200 միլիարդ դոլարի վնաս է հասցնում երկրին, եւ քրեական արդարատության համակարգն այդ հանցագործության դեմ պայքարում տանուլ է տալիս պատերազմը»,- երեկ գիշեր հանցագործության եւ պատժի շուրջ Քենթուքի համալսարանում կայացած սիմպոզիումի ժամանակ հայտարարեց Պետական Դատախազի քարտուղար Նիյլ Ջ. Ուելչը:

Նիյլ Ուելչը, որ նախքան անցած տարի Քենթուքի տեղափոխվելը FBI բարձրաստիճան պաշտոնյա էր, հայտարաեց որ նմանատիպ հանցագործությունների անանխադեպ աճ է գրանցվել:

««Պատճառը՝ շահույթի ակնկալիքն է»,- ասաց նա:

Խնդրի ահագնությունը լուսաբանելու համար նա ասաց, որ ըստ մասնագետների հաշվարկների՝ տոկոսային շահույթներից տարեկան 16 միլիարդ դոլարի եկամուտի փոխարեն մուտք է գործում ընդամենը 2 միլիարդ դոլար:

«Իհարկե, որոշ ճակատամարտեր շահել ենք,- ասաց Ուլեչը,- սակայն պատերազմը տանուլ ենք տալիս»:

Սակայն Ուելչի մոտեցմանն ընդդիմախոսեց հանձնաժողովի մեկ այլ անդամ՝ Մեծ Բրիտանիայի քաղաքագիտության դոցենտ դկտ. Էռնեստ Յանարելլան: Նա ասաց, որ իրավապահ մարմինները պետք է խուսափեն տեխնոլոգիան որպես սոցիալական վերահսկողության միջոց կիրառելու «հաճելի գայթակղությունից»:

Ինչպես որոշել թեման: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է լիդի համար որեւէ ընդհանուր եզր գտնել: Հնարավոր է, որ ելույթ ունեցողների ընդհանրության միակ եզրը նրանց տարաձայնությունը լինի: Այդ դեպքում նրանց տարաձայնությունն է դառնում լիդի հիմքը:

Խմբագիրները գիտեն, որ ելույթ ունեցողներից մեկին առանձնացնելը լիդը գրելու ամենահեշտ ձեւն է: Նրանք գնահատում են տարբեր խոսնակների գաղափարներն ու մտքերը ի մի բերելու լրագրողի հմտությունը, իր դիտարկումները դասդասելու՝ կարո-

ղությունը: Յուրաքանչյուր հեղինակ փորձում է առանձին գաղափարներից իմատալից թեմա ստեղծելու կարողություն մշակել:

Ահա մի հոդված, որի սկզբում հեղինակը կարողացել է տարաբնույթ գաղափարներից ընդհանուր թեմա ստեղծել:

Ավագ դասարաններն այլեւս չեն գրավում լավագույն ուսուցիչներին. երեկ երեկոյան այս եզրահանգման եկան պետական դպրոցների ապագան քննարկող հանձնաժողովի անդամները:

Նրանք պետական կրթության առջեւ ծառացած խնդիրներից շատերի վերաբերյալ համամիտ չէին: Սակայն ընդունեցին, որ մի շարք գործոններ պատճառ են դարձել այն բանի, որ ավագ դպրոցում դասավանդելն այլեւս անհրապույր է:

Երեկ երեկոյան Քաղաքացիական սրահում կայացած հանձնաժողովի նիստը հովանավորում էր քոլեջի մանկավարժության ֆակուլտետը:

Ըստ հանձնաժողովի՝ ավագ դասարանում կրթության մակարդակի անկման պատճառը հետեւյալն է.

- *Այլ բնագավառներում աշխատանքային սահմանափակ հնարավորությունների պատճառով կանայք այլեւս ստիպված չեն մանկավարժությամբ զբաղվել. «Մասնագիտական եւ առեւտրական գործունեության նոր հորիզոններ են բացվել կանանց առջեւ»,- ասաց՝ քոլեջի մանկավարժության դոցետ, պրոֆ. Էսթեր Ջոզեֆսը:*
- *Հասարակությունը «թերահավատորեն է վերաբերվում կամ ընդհանրապես չի վստահում ավագ դպրոցին, եւ բարոյական ոգին տարիներ ի վեր աննախընթաց անկում է ապրել,- ասաց «Հորաս Ման» ավագ դպրոցի տնօրեն Ռիչարդ Բաթլը: - Ոչ մեկը չի ուզում զբաղվել մի մասնագիտությամբ, որի նկատմամբ հասարակությունը հավատ չի ընծայում»:*

«Բացի հասարակական աշխատանքից, ավագ դպրոցի ուսուցիչների աշխատավարձը, մնացած բոլոր բնագավառների համեմատությամբ, ընդհանուր առմամբ ցածր է»,- ասաց Հարրի Մեցգերը՝ Ազգային կրթական միավորման պետական գրասենյակի ներկայացուցիչը....

Միջադեպեր եւ բացակայություններ: Երբեմն ասվածը երկրորդական է նրա նկատմամբ, ինչը կատարվում է դահլիճում կամ նրա նկատմամբ, ինչ չի ասվում, ինչպես ասենք այն դեպքում, երբ ելույթ ունեցողները զգուշորեն շրջանցում են փշոտ հարցը:

«Փրովիդենս Ջուրնալ Բյուլեթինից» Քերին Էլսուորթի հետեւյալ հոդվածում քաղաքական ժողովին մասնակիցների բացակայությունն է դարձել գլխավոր թեման: Եթե թեկնածուներից որեւէ մեկը կարեւոր բան ասած լիներ, նրա խոսքը կդառնար հոդվածի լիդը: Սակայն Էլսուորթը համարել է, որ այն ինչի մասին խոսվում էր, նորություն չէ: Դրա փոխարեն՝ նա ուշադրությունը կենտրոնացրել է ոչ թե այն բանին, ինչ լսել են ականջները, այլ նրան, ինչ նկատել են աչքերը: Թեման այստեղ անտարբերությունն է: Նկատեք, թե նրա լիդը ընթերցողին ինչպես է ցույց տալիս հասարակության անտարբերությունը:

ՓՐՈՎԻԴԵՆՍ - Կոնգրեսի ընդհանուր նահանգային գրասենյակի թեկնածուների մոտ կեսն էր մասնակցում «Ռոդ Այլենդ» քոլեջում երեկ երեկոյան կայացած «Ձեր թեկնածուները» հանդիպմանը, եւ վերջիններս թվով գրեթե գերազանցում էին լսարանին:

Մասնակցում էին հանրապետական բոլոր թեկնածուները՝ բացի Սենատի թեկնածու Ջեյմս Ջ. Ռեյնոլդսի: Ըստ Ռոդ Այլենդի «Կին ընտրողների լիգայի» նախագահ Դորիս Մքարիի, թեկնածուի մամուլի քարտուղարը հաղորդել էր, թե նա հիվանդ է: Նախաձեռնության հովանավորն էր Լիգան: Դեմոկրատներից միակ մասնակիցներն էին Պետքարտուղարի թեկնածու Ռոբերթ Բերնսը, գլխավոր դատախազի թեկնածու Դենիս Ռոբերտսը, եւ սենատոր Քլեյրբորն Փելը: Երկու անկախ թեկնածուներից ոչ մեկը չէր ներկայացել:

Մոտ 30 հոգի՝ մեծամասնությունը ուսանողներ, մասնակցեցին «Բրաուն Հոլ» սրահում կայացած երկուսուկես ժամանոց նիստին: Տիկին Մքարին ասաց՝ չգիտե մասնակիցների բացակայությունը «հիվանդությա՞ն վերագրել, թե՞ համընդհանուր անտարբերության»: Վարույթը բաղկացած էր երկու րոպեանոց ելույթներից ու լսարանի հարցերից, որի ընթացքում թեկնածուներից յուրաքանչյուրը մեկ հարցի էր պատասխանում եւ երբեմն նաեւ ընդդիմախոսում մրցակցի պատասխաններին . . . . .

Սքողված լիդ: Ուշադրություն դարձրեք հետեւյալ հոդվածի սկզբին, ուր ներկայացված է դպրոցական հանձնաժողովի թեկնածուների ժողովը: Ի՞նչ կասեք լիդի մասին:

Մթ. Փլեզընթի կենտրոնացված դպրոցական համակարգը, հաշմանդամների կրթությունը եւ դպրոցական կրթության որակն էր շաբաթ օրվա բանավեճի նյութը, որի ընթացքում դպրոցական հանձնաժողովի ազատ աթոռների վեց թեկնածուները պատասխանում էին շրջանի սեւամորթ ղեկավարների հարցերին:

Երեք թափուր տեղերի համար ընտրությունները կկայանան մայիսի 15-ին:

Մթ. Փլեզընթի «Սեւամորթների քաղաքացիական կազմակերպության» հետ հանդիպմանը թեկնածուները ներկայացան Քլեյրմոնթ փողոցի վրա գտնվող Առաջին մեթոդիստական եկեղեցում:

Սեւամորթ ղեկավարների մեղադրանքների թվում նշված էր, որ կենտրոնացված դպրոցական համակարգն ու հատուկ կրթության դասարանները կիրառվում են բնակչության ինտեգրացումը ձախողելու նպատակով, որ կրթության մակարդակը ցածր է, եւ որ համակարգը թույլ է տալիս անորակ ուսուցիչներին մնալ դպրոցներում:

Թեեւ պատասխանները տարբեր էին, սակայն ընդհանուր առմամբ հանձնաժողովի անդամներ Բեաթրիս Ա. Ֆլորենտինը, Քայլ Սմիթը եւ Լինդա Շթերնը, որ ձգտում են վերընտրության, պաշտպանեցին դպրոցական համակարգը:

Այս պատմությունը օրակարգային լիդ ունի: Այսինքն՝ այն ընթերցողին հայտնում է, թե ինչ հարցեր են քննարկվել: Սակայն չի նշված, թե ինչ է ասվել այդ հարցերի վերաբերմամբ, ինչ եզրահանգումներ են արվել կամ ինչ ընդհանուր տեսակետ է գոյացել: Լրագրողը որոշակի լիդ չի գրել:

Կարելի էր լիդը գրել չորրորդ պարբերությունից.

Սեւամորթ ղեկավարները դպրոցական հանձնաժողովի թեկնածուներին երեկ երկոյան հայտնեցին, որ տեղական դպրոցներն իրենց նպատակին չեն ծառայում, եւ որ հատուկ կթության դասարաններն ու կենտրոնացված դպրոցները վնասում են դպրոցում ինտեգրացմանը:

Կամ էլ կարող էինք հինգերորդ պարբերությունը դարձնել լիդ.

Երեկ երեկոյան դպրոցական հանձնաժողովի երեք անդամներ պաշտպանեցին դպրոցական համակարգը՝ ի պատասխան սեւամորթ համայնքի ղեկավարների այն մեղադրանքին, որ հանձնաժողովը չի բավարարում սեւամորթ աշակերտության պահանջները:

Այս երկուսից էլ ավելի լավ լիդեր էլ կարող էինք գտնել: Նկատի առեք, որ լիդերը վերափոխելու նպատակը ընթերցողին անմիջապես ժողովի էությանը ծանոթացնելն է, ուր մեղադրանքներ են առաջ քաշվել եւ ի պաշտպանություն ելույթներ են հնչել: Փորձեք ձեր ձիրքն այս կարեւոր պատմությանը կյանք հաղորդելու մեջ:

Մամուլի ասուլիսներ

Էական տարրերը

- Խոսնակի արտահայտած գլխավոր միտքը
- Խոսնակի անունն ու ինքնությունը
- Ասուլիսի նպատակը, ժամանակը, վայրը եւ տեւողությունը
- Գլխավոր հարցի նախապատմությունը
- Ելույթում արտահայտված գլխավոր միտքը. հարց-պատասխանի ժամանակ հնչած էական հարցերը:
- Հայտարարության հետեւանքներն ու նշանակությունը

Մամուլի ասուլիսը երկու տեսարանով ներկայացման է նման. տեսարան 1. Վարագույրը բացվում է. բեմի վրա է այն անձը, որը ասուլիս է հրավիրել: Այս տեսարանը սովորաբար սկսում է մենախոսությամբ, որի ժամանակ ելույթ ունեցողը ներկայացնում է իր կողմից մամուլի ասուլիս հրավիրելու դրդապատճառները: Տեսարան 2-ում բազմաթիվ դերակատարներ են, որոնք բոլորն էլ փորձում են ուշադրության կենտրոնում հայտնվել: Մամուլի ներկայացուցիչները հարցեր են տալիս ասվածի վերաբերյալ, բայց ոչ անպայմանորեն դրա մասին: Երկու տեսարանից էլ կարելի է լրատվության նյութ ստեղծել:

Նահանգապետի առաջիկա թեկնածուն հայտարարում է, որ ինքը դուրս է գալիս ընտրարշավից.

Նահանգային սենատոր Ջոզեֆ Մարգերետան այսօր հայտարարեց, որ դուրս է գալիս է նահանգապետի պաշտոնի ընտրար-

շավից, որին առաջադրվել էր իբրեւ հանրապետական կուսակցության թեկնածու:

Ընտրարշավից հրաժարվելու մասին իր հայտարարությունը նա հրապարակեց «Ալեն» հյուրանոցում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

«Իմ նպատակն է վերընտրվել օրենսդիր իշխանության օղակներում»,- ասաց նա: Մարգերետայի հրաժարականը ճամփա է հարթում Բեն Էփըլմանի համար, որն այլեւս ՀԱԿ-ի (Հանրապետական ավանդական կուսակցության) կողմից պաշտոնապես առաջադրված միակ թեկնածուն է:

Մարգերետան հերքեց այն լուրը, թե իբր իր հրաժարականը պայմանավորված է կնոջ՝ ապահարզանի դիմելու հանգամանքով: 10 օր առաջ Ռոզ Մարգերետան դիմել էր ապահարզանի:

Այստեղ նորությունը բաղկացած է երկու տեսարանից: Առաջնությունը տրված է Մարգերետայի հայտարարությանը: Լրագրողներից մեկի՝ ապահարզանի մասին տրված հարցի պատասխանը նույնպես կարեւոր թեմա է: Եթե Մարգերետան պատասխաներ, թե իր կնոջ քայլն իրեն քաղաքական դժվարին կացության մեջ է դրել, այդ դեպքում երկրորդ տեսարանը կդառնար առաջնայինը:

Կնոջ ապահարզանի դիմելու պատճառով նահանգային սենատոր Ջոզեֆ Մարգերետան այսօր նահանգապետական մրցապայքարից հանեց իր թեկնածությունը, որին առաջադրվել էր հանրապետականների կողմից:

«Ապահարզանն ինձ քաղաքական դժվարին կացության մեջ է դրել»,- հայտարարեց նա «Ալեն» հյուրանոցում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ . . . . .

Սովորաբար մամուլի ասուլիսի առանցքային նորությունը հարց ու պատասխանի փուլում է ձեւավորվում: Ռոնալդ Ռեյգանի մամուլի ասուլիսներից մեկի ժամանակ նրան հարց տվին մի հույժ գաղտնի օդանավի մասին, որ Ռեյգանի վարչակազմն ուզում էր վաճառել Սաուդյան Արաբիային: Լրագրողներից մեկը հարց տվեց, թե ինչպես կարող էր Ռեյգանը վստահ լինել, որ օդանավը չի հայտնվի թշնամական երկրի ձեռքում, եթե Արաբական կառավարությունը հանկարծ տապալվի:

Ռեյգանը պատասխանեց, թե «Հնարավոր բան չէ», որ Միացյալ Նահանգները անտարբեր դիտի եւ թույլ տա, որ ներկայիս կառավարությունը գահընկեց արվի: Նախագահի ակնարկը հնչեց որպես թռուցիկ նախադասություն, գրեթե որպես կողմնակի

դիտողություն, եւ լրագրողներն անցան այլ հարցերի: Ասվածի կարեւորության գիտակցմանը համեմատ՝ մեկ ուրիշ լրագրող էլ հարցրեց օդանավերի վաճառքի մասին, եւ պատասխանը նորից հակիրճ էր:

Թեեւ օդանավի վաճառքի շուրջ հարցուպատասխանը ասուլիսի ժամանակի ընդամենը մեկ քսաներորդ մասն էր կազմում, սակայն լրագրողներն ավելի ուշ հասկացան, որ հենց դա էր առանցքային նորությունը: Միացյալ Նահանգները զգուշացնում էր բոլոր երկրներին, որ ձեռնպահ մնան Սաուդյան Արաբիայից:

Լրագրողներն ընդամենը յոթ նախադասություն ունեին ձեռքի տակ, ստիպված՝ մանրասների համար զանգահարեցին Սպիտակ տան խոսնակին, լրացուցիչ տվյալներ համար դիմեցին նաեւ այլ աղբյուրների:

«Բոստոն Գլոուբը» հետեւյալ կերպ է սկսում իր հաշվետվությունը.

Երեկ նախագահ Ռոնալդ Ռեյգանն ասաց, որ Միացյալ Նահանգները պատրաստ է Սաուդյան Արաբիային պաշտպանել թագավորությանը տիրանալու եւ դեպի արեւմուտք նավթի հոսքը դադարեցնելու ցանկացած ոտնձգությունից:

Ռեյգանի այս ակնարկը, որ ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնախնդիրներից է, ինչպես որ հետագայում հաստատեցին նրա օգնականները, մատուցվեց իբրեւ պատահական հարցի պատասխան. . . . .

Վաշինգթոնի լրագրողների մասնագիտական հոտառությունն ապացուցվեց չորս տարի անց, երբ Իրաքը ներխուժեց Քուվեյթ եւ սպառնալից զորաշարժեր սկսեց դեպի հարավ՝ Սաուդյան Արաբիա: Միացյալ Նահանգները վճռեց զսպել Իրաքի առաջխաղացումը:

Խճողված մամուլի ասուլիսների ընթացքում լրատվություն հավաքելուն մեծապես խոչընդոտում է հարցը շարունակելու դժվարությունը: Յուրաքանչյուր լրագրող իր հարցն ունի, եւ յուրաքանչյուրին թույլ է տրվում միայն մեկ-երկու հարց տալ: Եթե հարցը կարեւոր նյութ է տալիս, լրագրողը հնարավորություն չունի նոր հարցադրմամբ այն զարգացնել: Լրագրողներից մեկը կարեւոր մամուլի ասուլիսները նկարագրել է իբրեւ «վիրտուոզ կատարումների շարք»:

Ճառեր

Կարեւոր տարրերը

- Ելույթ ունեցողի կամ ճառասացի անունն ու ինքնությունը
- Ելույթի կամ ճառի հիմնական թեման
- Հիմնական միտքը հաստատող մեջբերումներ
- Ճառի նպատակը, ժամանակը եւ վայրը
- Լսարանի բնույթը, անվանի մարդկանց ներկայությունը
- Լսարանի արձագանքը կամ վերաբերմունքը
- Հիմնահարցի նախապատմությունը
- Ելույթ ունեցողի արտաքինը, հագուստը, շարժուձեւը՝ եթե կարեւոր է
- Ելույթ ունեցողի մեկնաբանությունները ճառից առաջ եւ հետո՝ եթե այդպիսիք եղել են
- Ճառի ընթացքում շոշափված այլ հարցեր
- Հարցուպատասխանի ընթացքում ստացված նյութը, եթե առկա է:

Ճառի լուսաբանումը գրեթե միշտ հիմնված է «Ո՞վ, ի՞նչ ասաց» հարցերին տրված պատասխանի վրա:

Ո՞վ - ճառասացը

Ի՞նչ - ճառի հիմնական թեման

Ճառի լուսաբանման գաղտնիքը ճառի բովանդակության մեջ կարեւոր կետն առանձնացնելն է, որից հետո այն պետք է հաստատել համապատասխան մեջբերումներով: Հիմնական միտքը ամփոփվում է լիդի մեջ՝ սովորաբար շարադրված հեղինակի խոսքերով: Մեջբերումները մտնում են նյութի մարմնի մեջ:

Քանի որ ճառերը հաճախ երկարաշունչ են եւ բազաթիվ թեմաներ են պարունակում, լրագրողը պետք է խիստ ընտրովի վերաբերվի դրանց: Հոդվածը ելույթ ունեցողի ճառից միայն երեք-չորս միտք կարող է ներառել: Կան բացառություններ. կարեւոր քաղաքական ելույթները լուսաբանվում են մանրամասնորեն, սակայն սովորական, առօրյա ելույթը կարելի է հաղորդել ընդամենը մի քանի հարյուր բառով:

Երբեմն հոդվածի համար նյութ է ծառայում ելույթի ընթացքում կատարված իրադարձությունը: Վիսքոնսինում քաղաքական ընտրարշավի ժամանակ սենատորական աթոռի համար առաջադրված հանրապետական կուսակցության թեկնածուն թվարկելով իր հակառակորդի ձախողումները, ելույթը եզրափա-

կեց հետեւյալ խոսքերով. «Մարտահրավեր եմ նետում նրան, որ հերքի իմ այս մեղադրանքները»:

Եվ հանկարծ վերջին շարքերից վեր կացավ նրա հակառակորդը եւ բղավեց. «Հերքում եմ ձեր բոլոր մեղադրանքները» եւ ուղղվեց դեպի բեմը: Այդ միջադեպն, անշուշտ, դարձավ լիդը, իսկ երկուսի բանավեճը՝ հոդվածի բովանդակությունը:

Ճառերն ու ճառասացներն այնքան բազմազան են, որքան պաղպաղակի տեսականին՝ պաղպաղակի տաղավարում: Օրինակ՝ «Քիուանիս ակումբի» ճաշի ընթացքում արտասանված ճառը, որի ժամանակ ելույթ է ունենում «Օդյուբոն միության» տեղական մասնաճյուղի ներկայացուցիչը, եւ որի ընթացքում նա քննարկում է աղի ջրերի ճահճուտները պահպանելու անհրաժեշտությունը: Կամ՝ շրջանային ատամնաբուժական միության առջեւ ելույթ ունեցող ատամնաբույժի հիշողություններն իր արհեստի վաղ օրերի մասին, երբ Փեյնլես («Անցավ»- թարգմ.) Փարքըրը ձի լծած կառքով շրջում էր քաղաքի փողոցներով ու հատը 50 սենթով սեղանատամներ էր հեռացնում, եւ այլն:

Խառնիճաղանջ, շարահյուսորեն սխալ եւ հետեւողականությունից զուրկ ճառերը փորձանք են լրագրողի համար: Այդ դեպքում արդյո՞ք աղբյուրից մեջբերումը պետք է թողնել այնպես, ինչպես խոսում է: Ինչպե՞ս կարող եք գլուխ հանել հետեւյալից:

«Մենք շուտով միջազգային - ու սա ոչ այնքան կրթական է, որքան միջավայրային - շուտով մեծ միջազգային կոնֆերանս է լինելու: Ու միշտ էլ նման բաներ լինում են - մտքի փոխանակություններ. . . . .»

«Իսկ նրա դեմքի արտահայտությունը, մինչ մարդը բանտում մահանում էր, կամ ապրում - ինչեւիցե - ազատության համար, կանգնած էր այնտեղ՝ հուսալով հակառակ հույսի՝ հանուն ազատության»:

«Պարզապես ուզում ենք, որ դուք շատ լավ ժամանակ անցկացնեք այս թանգարանում, որ մենք, գոնե Հյուսթոնում, շատ հպարտ ենք դրանով»:

Սա նախագահ Բուշի խոսելաոճն է, որն ըստ Մերի Մքրորի՝ անգլերենի հետ առանձնապես գլուխ չի դնում:

Նախագահ Այզենհաուերի շարադասությունը հաճախ խճողված էր, սակայն լրագրողներին հաջողվում էր նրա նախադասություններից իմաստալից մտքեր շարադրել ընթերցողների եւ ունկնդիրներ համար: Լրագրողներից ոմանք պնդում են, որ էթիկապես սխալ է աղճատել մեջբերումները: Նման դեպքերում նրանք նախընտրում են միտքը շարադրել իրենց խոսքերով:

Անիմաստ է թվում ու երբեմն նույնիսկ դաժան է ուրիշների քերականական ու փաստական սխալները նույնությամբ մեջբերելը: «Նյու Յորք Թայմսը» խորհուրդ է տալիս շրջանցել նման խոսակցական շեղումներն ու հաղորդել ասվածի իմաստը:

Լիդ: Ելույթի մասին պատմող հոդվածի լիդը սովորաբար պատասխանում է «Ով՝ ի՞նչ ասաց» հարցին: Այդ կատարվում է ենթակա - բայ - ուղիղ խնդիր սխեմայով, նախ՝ ելույթ ունեցողի անունն ու պաշտոնը/կոչումը, եւ ապա՝ այն, ինչ ասել է:

Որոշ խմբագիրներ նախընտրում են հակառակ կարգը՝ ինչ է ասվել եւ ում կողմից:

Գյուղաբնակ ամերիկացիները թույլ չեն տա, որ բարձր լարման լարերը աջ ու ձախ հատեն իրենց տները, տնտեսությունն ու ագարակները, այսօր հայտարարեցին Քարլթոն քոլեջի երկու դասախոսներ:

Այս խնդիր-բայ-ենթակա սխեմայի հիմքում ընկած է այն գաղափարը, որ երբեմն ասվածը շատ ավելի կարեւոր է, քան ասողը: Սակայն ռադիոհեռուստատեսային, աստիճանաբար նաեւ տպագիր լրատվության մեջ ավելի կիրառական է դառնում ենթակա-բայ-խնդիր տարբերակը:

Ելույթ ունեցողի ինքնությունը կարեւոր է: Սրանով է որոշվում մեր ուշադրության աստիճանը ելույթ ունեցողի նկատմամբ: Երբ ելույթ ունեցողի անունը ծանոթ չէ ընթերցողին կամ ունկնդրին, նշում ենք նրա պաշտոնը, կոչումը: Անվանի կամ հանրածանոթ մարդկանց դեպքում միայն անունը բավական է նրա խոսքը հիշատակելու համար:

Լիդի համար համապատասխան նյութ գտնելը կարող է դժվար լինել: Որոշ ճառասացներ մի նյութից մյուսն են թռչում: Ելույթի վերնագիրը կարող է այդ նպատակին ծառայել, եթե այն վերնագրված է: Ելույթ ունեցողի կեցվածքը կարող է հուշել ճառի շեշտադրումը: Եթե ճառասացը դանդաղ ու հատ - հատ է արտասանում խոսքերը, ուրեմն փորձում է ընդգծել ասածը: Երբ ձեռք են թափահարում կամ մատ են տնկում, ուշադիր լսեք եւ մատիտով հետեւեք ճառի տեքստին՝ պատրաստ ընգծելու շեշտված մասերը:

Եթե վստահ չեք, որն է թեման, հարցրեք ելույթ ունեցողին: Ճառին հաջորդող հարցազրույցները երբեմ լիդի շատ ավելի հաջող նյութ են տալիս, քան բուն ելույթը:

Սակավ դեպքերում հեղինակը կարող է լիդը տեսնել մի գաղափարի մեջ, որ ելույթ ունեցողը չի ընդգծել: Ասենք՝ տեղական հեռուստակայանի տնօրենը ելույթ է ունենում կանանց ակումբում՝ խոսելով զանգվածային լսարանի համար նախատեսված ծրագրավորման առավելությունների մասին: Ընթացքում նա կարող է նշել, որ իր հեռուստակայանը կրճատելու է սոցիալական հարցերին նվիրված ծրագրերը, որովեհետեւ «միեւնույնն է՝ դրանք ոչ ոք չի դիտում»:

Լրագրողը գիտե, որ ծրագրի փոփոխությունը շատ ավելի կարեւոր հարց է, քան զվարճալի կատակերգությունների ու հանելուկների շոուները: Լրացուցիչ տեղեկություններ քաղելու նպատակով լրագրողը կարող է դուրս գալու պահին կանգնեցնել ելույթ ունեցողին կամ զանգահարել նրան հեռուստակայանից:

Ինչպես օգտվել մեջբերումներից: Ինչպես այս գլխում բերված բոլոր օրինակներում, ճառի վերաբերյալ հոդվածները նույնպես հիմնված են ելույթ ունեցողի ուղղակի խոսքի վրա: Սկսնակները հաճախ ուղղակի խոսքն օգտագործում են լիդում: Իսկական հռետորը կարող է հմայել ունկնդրին լիդի արժանի հնչեղ նախադասություններով: Նման մարդկանց մեջբերումները սքանչելի են գլխադրի համար: Սակայն նման հռետորները տասը տարին մեկ են պատահում: Նշեք դրանցից մեկ-երկուսին:

Մեծ մասամբ հեղինակը հոդվածը սկսում է ճառասացի արտահայտած գլխավոր գաղափարի շարադրությամբ: Սրան անմիջապես հետեւում է մի մեջբերում, որն ամենից լավ է արտահայտում ասվածը: Ելույթի մասին հոդվածը միահյուսումն է ուղղակի եւ անուղղակի մեջբերումների՝ ճառասացի ճշգրիտ խոսքերի եւ հեղինակի շարադրության:

Երբեմն հեղինակը հրապուրվում է որեւէ իմաստուն կամ ճարտար մեջբերում առանձացնելու եւ այն հոդվածի սկզբում դնելու գայթակղությամբ, որպեսզի ընթերցողի ուշադրությունը գրավի: Գուցեեղ խոսքը կարող է ելույթ ունեցողի կողմից կիրառվել լսարանի ուշադրությունը գրավելու նպատակով, սակայն անպայման չէ, որ այն նորության հետ կապ ունենա: Հոդվածի վերեւում տրված այդ խոսքի մեկնաբանությունը կարող է շփոթեցնել ընթերցողին: Նույն զգուշությամբ պետք է վերաբերվել նաեւ իրենց խոսքը համեմելու նպատակով ճառասացների մեջբերած անեկդոտներին: Մինչեւ որ նորության հետ առնչություն չունենան՝ չի կարելի դրանք հոդվածի սկզբում օգտագործել:

Վայրը եւ լսարանը: Բացի խոսողի ինքնությունից ու արտահայտած գլխավոր գաղափարից լիդը կարող է եւս երկու տարր պարունակել:

Որտեղ է կայացել ելույթը՝ վայրը,

Ում է ուղղված եղել ճառը՝ լսարանը:

Միշտ չէ, որ հնարավոր է այդ երկուսը լիդի մեջ խցկելով գեղեցիկ եւ ամբողջական նախադասություն ստանալ:

Տեղական ճարտարապետական ֆիրմայի ղեկավարը երեկ երեկոյան Միլլեր հյուրանոցում կայացած Ինժեներների ու ճարտարապետների ակումբի ամենամյա հանդիպման ժամանակ ակումբի անդամներին հայտնեց, որ քաղաքապետարանի առաջարկած շինարարությունը կարող է շատ թանկ նստել:

Նման լիդը կարճելու համար տեղն ու լսարանը իջեցնում ենք երկրորդ կամ երրորդ պարբերություն:

Տեղական ճարտարապետական ֆիրմայի ղեկավարը երեկ երեկոյան հայտնեց, որ քաղաքապետարանի առաջարկած շինարարությունը կարող է չափից դուրս թանկ նստել:

Փրեսթոն Ուիլքոքսը Ինժեներների ու Ճարտարապետների ակումբի անդամներին հայտնեց, որ մոտավոր հաշվարկներով այն կարժենա 22 միլիոն դոլար: Նրա ելույթը տեղի ունեցավ Միլլեր հյուրանոցում:

Կարեւոր տարրերի մեր ցուցակում «լսարան» բառը նշանակում է այն անձինք, ում ճառն անմիջականորեն ուղղված է: Ուիլքոքսի խոսքում լսարանը տեղական ակումբն է: Լսարան բառը կարող է նշանակել նաեւ այն մարդիկ, ում ելույթ ունեցողը հույս

ունի հասցնել ասածը մամուլի միջոցով: Շատ ելույթ ունեցողներ ճառ ասելիս նկատի ունեն հասարակությունն ընդհանրապես: Ուիլքոքսն ակնհայտորեն փորձում էր հասարակությանը զգուշացնել նոր քաղաքապետարանի արժեքի վերաբերյալ:

Հեղինակը Ուիլքոքսի ճառում հնչած այս նախազգուշացումը մտցնում է նախապատմության մեջ:

Ուիլքոքսի ելույթը տեղի է ունենում մի ժամանակ, երբ շինարարությունը վիճահարույց հարց է դարձել: Աշխատուժի եւ շինանյութերի արժեքի բարձրացման պատճառով շինարարության գինը աննախընթաց աճել է:

Հարկատու կազմակերպությունները դեմ են շինարարության ծրագրին, որ վավերացրել էր Քաղխորհուրդը:

Սակայն տեղական արհմիություններն ու քաղաքապետ Ֆրեդ Փարթելի վարչությունը կողմնակից են ընթացք տալ դրան:

Ինչպես տեսանք՝ երբեմն լսարանը կարող է գլխադրի նյութ ծառայել: Սովորաբար նախագահական թեկնածուի գլխավոր ճառին աննախադեպ դատարկ լսարանը, եթե իհարկե թեկնածուն որեւէ արտակարգ բան չասի, արդեն իսկ գլխադրի արժեք ունի: Զարմանալիորեն ակտիվ մասնակցությունը կարող է նույնպես գլխադրի հիմք հանդիսանալ, ճիշտ ինչպես որ մասնակիցների սակավությունը թաքցնելու համար նրանց անսովոր փոքր դահլիճում հավքելը:

Լսարանի անուշադրությունը կամ ձանձրույթը եւս կարող է գլխադրի նյութ դառնալ: Լսարանի հարցերը կարող են ավելի լրատվարժան տեղեկություններ մատուցել, քան ինքը՝ ճառը:

Շարունակություն: Լրագրողները սովորաբար ճառից հետո ելույթ ունեցողների հետ հարցազրույց են անցկացնում՝ ասվածը պարզաբանելու կամ որեւէ արժեքավոր նորության շուրջ լրացուցիչ տեղեկություններ քաղելու նպատակով: Եթե ճառից հետո հարցազրույցը հնարավոր չէ, եւ կարեւոր հարցերից մեկը դեռ աղոտ է կամ լիարժեք բացատրություն չի ստացել, այդ դեպքում հեղինակը պետք է նշի, որ ելույթից հետո հնարավոր չի եղել խոսել ճառասացի հետ: Հակառակ դեպքում հեղինակին են մեղադրելու հոդվածի մեջ տեղ գտած բացթողման համար:

Ասիական բնակչության կոնֆերանսին «Իսլամական Խորհրդատվական Ասամբլեայի» անդամի ճառը լուսաբանող AP-ի լրագրողը ելույթ ունեցողի խոսքից մեջբերում էր արել այն մասին, թե Իրանը 114,000 պոռնիկ է վերացրել, «որոնք Ամերիկայի

ամոթալի ու սատանայական գերիշխանության արդյունքն են եւ ամենահոռի կյանքով էին ապրում»: Որից հետո AP-ի լրագրողն ավելացնում է. «Նա չասաց, թե ինչ կերպ է դա իրականացվել»:

Պատրաստի տեքստեր: Կարեւոր ճառերի տեքստերը երբեմն ելույթից առաջ բաժանում են լրագրողներին, որ հնարավորություն է տալիս ուսումնասիրել նյութը, եւ գրել առանց ժամանակի սահմանափակման: Վաղօրոք տեքստը բաշխելը թերթերին եւ հեռուստատեսային կայաններին հնարավորություն է տալիս այն օգտագործել նաեւ նախքան ելույթը կկայանա, եթե, իհարկե, օգտագործման սահմանափակում չի մտցված:

Երբ պատրաստի տեքստերն օգտագործում են նախքան ելույթը, հեղինակը հոդվածի վերեւում կամ վերտառնության մեջ նշում է. «Ելույթի նախապատրաստվող ճառում. . . »

Լրագրողները միշտ էլ կարեւոր ելույթները լուսաբանում են աչքը տեքստի վրա, ականջը՝ խոսողի: Լրատվությունը հնարավոր է ստեղծել պատրաստի ճառին վերջին պահին արված ավելացումներով կամ դրանից որոշ մասեր հանելով:

Ամփոփում

Չակերտներ տեսնելիս ընթերցողի մոտ որեւէ աշխույժ ու հետաքրքրական բան կարդալու ակնկալիք է առաջանում: Լրագրողի պարտքն է՝ աղբյուրից կամ իրադրությունից այնպիսի մեջբերում քաղել, որ բավարարի ընթերցողի սպասումները: Սակայն ոչ ճշմարտության հաշվին: Այսինքն՝ մեջբերումը պետք է համապատասխանի անձին կամ իրադրությանը:

Երբ Նյու-Յորքում Սբ. Պատրիկի օրվա հովանավորները լեզբիական եւ միասեռական կազմակերպությանն արգելեցին մասնակցել այդ օրվա շքերթին, մի շարք քաղաքական գործիչներ մերժեցին շքերթին մասնակցելու հրավերը: Շքերթի մասնակիցների վերաբերմունքը պարզաբանելու համար «Նյու Յորք Թայմսի» լրագրողը Իռալնդական ծագումով 45-ամյա ամերիկացու խոսքերն է մեջ բերել այդ քաղաքական գործչի մասին.

«Նա պլաստմասայե Հռոմեական կաթոլիկ է ու երեսպաշտ: Եթե երբեւէ փորձի մեկ ուրիշ պետական պաշտոնի համար պայքարել, ատամներով ու մագլիներով եմ պայքարելու, որ դրա քաղաքական կարիերան ջախջախեմ»:

Միասեռականությունն, ասաց նա, քննարկման ենթակա չէ: «Որոշ բաներ մեջս եմ պահում: Աստված կնոջն ու տղամարդուն տարբեր առանձնահատկություններով է ստեղծել»:

Ենթադրենք, հարցրեց լրագրողը, հանկարծ պարզվի, որ իր երեխաներից մեկը միասեռական է: Նա պատասխանեց, որ «խելամիտ» չէր վարվի: «Շանսատակ կանեմ այլանդակին»: Հետո մի պահ հապաղեց եւ ավելացրեց. «Չգիտեմ ինչ կանեի: Դա ինձ համար սարսափելի ողբերգություն կլիներ»:

Գլուխ 10
Հոդվածի կարեւոր տարրերը

Մուտք

Այս գլխում խոսվում է տարբեր տեսակի հոդվածների կարեւոր տարրերի մասին: Վթարների մասին հոդվածներում ուշադրության կենտրոնում են լինում մահացածների եւ վնասվածների անունները: Հրդեհների մասին հոդվածներում՝ երկու թեմա. մարդկանց հետ պատահարները եւ հասցված ֆիզիկական վնասը: Հանցագործությունների մասին հոդվածները սովորաբար վերցվում են ոստիկանական զեկուցագրերից: Հավելյալ նկարագրություններն այս հոդվածների նկատմամբ մարդկանց մոտ հետաքրքրություն են առաջացնում: Դատական սենսացիաները կենտրոնանում են մեծ չափի վնասներին վերաբերող հարցերի եւ հանցագործների դատավարության վրա:

Մահախոսականները տալիս են հանգուցյալի անունը, տարիքը, հասցեն, կյանքում նրա հասած հաջողությունների մասին տեղեկատվություն, ինչպես նաեւ հանգուցյալի հարազատների անունները: Մարզական հոդվածներն ավելի արդյունավետ են, երբ գրողը փորձում է հոդվածը հետաքրքիր դարձնել ոչ թե գեղեցիկ բառերի օգտագործմամբ, այլ երբ հոդվածն իր մեջ գործողություն է պարունակում: Խաղերի մասին հոդվածներում պետք է նշվեն թիմերի անունները, հաշիվը, վճռական պահերը, մարզիկների եւ մարզիչների ստրատեգիան եւ խաղի ազդեցությունը մրցաշարային աղյուսակում թիմի դիրքի վրա:

Համառոտ կամ կարճ հոդվածներից են նախորդող կամ նախնական հոդվածները, որեւէ մեկի մասին փոքր հոդվածները եւ այլ կարճ լուրեր: Հաջորդողները այն հոդվածներն են, որոնք շարունակում են մեկ այլ հոդվածի թեման: Ուղեկցող հոդվածները մեկնաբանում են կողքին տպագրված հոդվածի որեւէ տեսակետ: Ամփոփումները միացնում են երկու կամ ավել հոդվածները մեկի մեջ՝ կենտրոնանալով այդ հոդվածների ընդհանուր թեմայի վրա: Եղանակի տեսությունները եւ արտասովոր կամ սաստիկ եղանակի մասին հոդվածները ընդգրկում են տեղեկատվություն պաշտոնական աղբյուրներից եւ մարդկանց հետաքրքրող մանրամասներ:

Վթարների մասին հոդվածներ

Նոր լրագրողներին հաճախ առաջադրանք է տրվում լուսաբանել ոստիկանական սենսացիաները՝ որպես նրանց հասարակությանը ներկայացնելու ձեւ: Չնայած թվում է, թե ոստիկանական սենսացիաները ստիպում են տեսնել քաղաքի կյանքի վատ կողմը, բայց դրանք լրագրողին հնարավորություն են տալիս արագ կերպով ծանոթանալ քաղաքին, քանի որ վթարները, հրդեհները եւ հանցագործությունները առնչվում են հասարակության բոլոր խավերին:

Սկզբում դիտարկենք վթարների մասին հոդվածները: Վթարի մասին հոդվածը ժուռնալիստիկայի հիմնական տարրն է: Տարեկան ավելի քան մեկ միլիոն մարդ է մահանում վթարների պատճառով, եւ բոլոր թերթերը, բացի ամենամեծերից, տպագրում են հոդվածներ վթարների մասին: Միայն ամենաթեթեւ դեպքերը չեն լուսաբանվում կամ հավաքվում եւ տպագրվում են կարճ լուրերի սյունյակում:

Վթարների մասին հոդվածներում պետք է նշել մահացածների եւ վիրավորների անունները, ինչպես նաեւ՝ զոհերի տարիքը, հասցեն եւ զբաղմունքը: Վթարների մասին հոդվածները նաեւ նշում են պատճառված վնասի չափերը եւ վնասվածների առողջական վիճակը:

Հիմնական կետերը

- Մահացածների եւ վիրավորների անունները եւ տվյալները
- Վթարի տեղը եւ ժամանակը
- Ավտոմեքենաների տեսակները
- Պատճառը (պաշտոնական տվյալներով)
- Տեղեկատվության աղբյուրը
- Վարորդների եւ, եթե անհրաժեշտ է, նաեւ մյուս մասնակիցների անուններն ու տվյալները
- Ուր են տարվել մահացածները եւ վիրավորները
- Վնասվածքների աստիճանը
- Վիրավորների առողջական վիճակը
- Հուղարկավորության արարողության նախապատրաստումը (եթե հնարավոր է)
- Կատարված ձերբակալությունները կամ տրված սանկցիաները:

Եթե վթարը արժանի է ավելի մեծ լուսաբանման, ավելացրեք հետեւյալը.

- Մեքենաներին պատճառված վնասը
- Մեքենաների արագությունը, որտեղից եւ ուր էին նրանք գնում
- Արտասովոր եղանակը կամ ճանապարհի վիճակը
- Վկաների եւ հետաքննողների կարծիքները

Զգուշացում: Մի փորձեք նշել մեղավորներին, հայտնաբերել վթարի պատճառը, գրել մեքենայի մեծ արագության կամ վարորդի ալկոհոլի ազդեցության տակ լինելու մասին, եթե տեղեկատվությունը պաշտոնական աղբյուրներից չէ:

Եթե վթարը փոքր է, ապա ներկայացվում են միայն առաջին վեց կետերը:

Մահացության դեպքում վթարի ժամանակ տրվում են մահացածների մասին տվյալներ՝ տեղեկատվություն հարազատների եւ հուղարկավորության մասին:

Մահացածների եւ վիրավորների, ինչպես նաեւ վթարի տեղի մասին տեղեկատվությունով հոդվածը սկսելու փոխարեն լրագրողը կարող է սկսել՝ կատարվածը մեկ այլ տեսանկյունից դիտարկելով:

Հոդվածներ հրդեհների մասին

Հրդեհների մասին հոդվածները հաճախ մեծ ուշադրության են արժանանում: Դրանք հավանաբար հետաքրքրում են ընթերցողին հրդեհների նկատմամբ վախի պատճառով: Որն էլ լինի պատճառը, լրագրողը մի քանի օրվա ընթացքում կզբաղվի դրանով, լինի դա հասարակ տան հրդեհ, որը 20.000 դոլարի վնաս է հասցրել, թե բնակելի շենքի հրդեհ, որի պատճառով մահացած լինեն 8 մարդ:

Կարեւոր կետերը

- Մահացածներ, վնասվածներ
- Զոհերի մասին ամբողջական տեղեկատվություն
- Հրդեհի վայրը
- Շենքի տեսակը
- Պաշտոնապես նշված պատճառը

- Պատճառի հայտնաբերման աշխատանքները
- Տեղեկատվության աղբյուրը
- Ինչպես են զոհերը վնասվել կամ մահացել
- Որտեղ եւ երբ է սկսվել հրդեհը, ինչպես եւ երբ է այն մարվել
- Փրկելու փորձերը
- Ուր են տարվել վիրավորները եւ մահացածները
- Վնասվածքների աստիճանը
- Շինությանը հասցված վնասը, դրա արժեքը, ինչքան է ապահովագրությունը
- Հրշեջների եւ հրշեջ խմբերի քանակը, օգտագործված ջրի քանակը
- Արձագանքած հրշեջ կազմակերպության (ների) անունը (ները)
- Մեջբերումներ վկաների, հրշեջների, բնակիչների ասածներից
- Մարդկանց հետաքրքրող մանրամասներ
- Առաջին ահազանգի ժամանակը, ով է զանգահարել հրշեջ ծառայություն

Եթե հոդվածը գրելու ժամանակ հրդեհի պատճառը դեռեւս հայտնի չէ, այդպես էլ գրեք:

Հրդեհները հաճախ պատահում են մեծ քաղաքներում, հատկապես ձմռանը, բայց նրանք չեն լուսաբանվում, եթե մեծ վնաս չի պատճառվել, չկան զոհեր, չեն առաջացել երթեւեկության խցանումներ կամ շատ տեխնիկա եւ հրշեջներ չեն կանչվել: Փոքր կամ միջին մեծության քաղաքներում հրդեհները հաճախ լուսաբանվում են նույնիսկ եթե չկան զոհեր եւ վնասը փոքր է:

Գյուղական համայնքներում հրդեհը մանրամասն լուսաբանվում է: Նշվում են հրշեջ ընկերությունների անունները եւ հրշեջ խմբի ավագի մեջբերումները: Մի ֆերմայի հրդեհ, որը փչացրել էր մի ամբար, մեկ տրակտոր, մեկ խոտ դիզող մեքենա եւ 3.000 դեզ խոտ, տպագրվել էր որպես Քենթուկիի «Ջորջթաուն նյուս» շաբաթաթերթի առաջնորդող հոդված: Նույնիսկ մեջբերում էր արվել հրշեջ խմբի ավագի ասածներից. «Նման բաները մենք անվանում են Աստծո պատիժ: Ես տեսել եմ ֆերմաներ, որոնք հրդեհվել են կայծակի պատճառով: Երբ կայծակը խփում է չոր խոտին, դեզը փրկելու համար ոչինչ չես կարող անել»:

Մեջբերումները մեծացնում են մարդկանց հետաքրքրությունը հոդվածների նկատմամբ:

Երբ կան զոհեր կամ շատ են վիրավորները, լիդը հաճախ կենտրոնանում է հենց այդ կետերի վրա: Երբ միայն՝ սեփակա-

նությունն է տուժել, ապա հաճախ հենց դա է լինում հոդվածի նախաբանը:

Փորձեք նախաբանի մեջ մտցնել մարդկանց հետաքրքրող մանրամասներ՝ վերջին պահին հրաշքով փրկվելը, հերոսությունը, զուգադիպությունները, կարեկցություն առաջացնող մանրամասները:

Հոդվածներ հանցագործությունների մասին

Ոստիկանական լուրերի լրագրողի հիմնական գործը հանցագործությունների, բացահայտումների եւ ձերբակալությունների մասին տեղեկությունները մշակելն է: Ոստիկանական լրագրողը կարող է հետեւել ոստիկանության, քաղաքացիական եւ քրեական դատարանների աշխատանքներին՝ իմանալու համար կատարվելիք ձերբակալությունների մասին:

Համարյա բոլորը գիտեն մեկին, ով հանցագործության զոհ է եղել կամ հենց իրենք են եղել այդ զոհը: Ամեն տարի ԱՄՆ-ում ընտանիքների մեկ երրորդը ենթարկվում է կողոպուտի կամ բռնության: Այն քաղաքներում, որտեղ մարդիկ երբեք դռները չէին կողպում, այժմ ծաղկում է հակակողոպուտային համակարգերի բիզնեսը: Ավտոմեքենաների տերերը փնտրում են նման համակարգեր, որպեսզի հեռու պահեն գողերին իրենց «Տոյոտաներից» եւ «Ֆորդերից»: Որոշ քաղաքներում մարդկանց խորհուրդ են տալիս փողոց դուրս գալիս չկրել զարդեր եւ թանկարժեք իրեր:

Քոլեջների եւ համալսարանների հանրակացարաններում եւ դրանց շրջակայքում վերջին տարիներին կրկնապատկվել եւ եռապատկվել է բռնաբարությունների քանակը:

Ունեցվածքի նկատմամբ հանցագործություններ են կատարվում ամեն 3 վայրկյանը մեկ, իսկ բռնություններ՝ 24 վայրկյանը մեկ: Ամեն 6 րոպեն մեկ մի բռնաբարություն է կատարվում եւ մի սպանություն՝ 23 րոպեն մեկ:

Հանցագործությունների մեծ քանակի պատճառով ոստիկանական լուրերի լրագրողները կխճճվեն, եթե խտրականություն չցուցաբերեն: Ոստիկանական տեղեկատվության հեղեղից խուսափելու նպատակով ոստիկանական լուրերի լրագրողները հաճախ ավելի շատ ժամանակ են տրամադրում բռնություններին քան թե սեփականության նկատմամբ կատարված հանցագործություններին:

Բռնություններ	**Սեփականության նկատմամբ կատարված հանցագործություններ**
Սպանություն	Գողություն
Բռնաբարություն	Կոտրանքով գողություն
Կողոպուտ	Ավտոմեքենաների գողություն
Ծանրացուցիչ հանգամանքներով հարձակում	

Հանցագործությունների մասին ամփոփագրեր

Ոստիկանական լուրերի շատ քիչ լրագրողներ են, որ վկա են լինում հանցագործությունների կատարմանը: Սակայն նրանք ամեն օր գրում են հանցագործությունների մասին, հաճախ այնպիսի լարվածությամբ ու դրամատիզմով, կարծես իրենք ներկա են եղել իրադարձությանը: Նրանք տեղեկատվության մեծ մասը ստանում են հանցագործությունների մասին զեկուցագրերից: Դրանք ձեւեր են, որոնք լրացվում են հանցագործությունը հետաքննող ոստիկանների կողմից: Լրագրողներն այս զեկուցագրերը լրացնում են ոստիկանների եւ նրանց վերադասների, ինչպես նաեւ հանցագործության վկաների հետ հարցազրույցներով:

Հիմնական կետերը

- Զոհերի մասին ամբողջական տվյալներ
- Հանցագործության տեսակը եւ նկարագրությունը,
- Հանցագործության տեղը, ժամը եւ ամսաթիվը
- Բռնություններ՝ մահվան կամ վնասվածքի պատճառը, օգտագործված զենքը, շարժառիթը, զոհի մասին տեղեկատվություն (եթե կարեւոր է)
- Սեփականության նկատմամբ կատարված հանցագործություններ՝ կորուստի արժեքը, գողության կամ կոտրանքով գողության ձեւը
- Կասկածյալները (անուններ չեն նշվում մինչեւ չներկայացվի մեղադրանք), հանցանշանները
- Արտասովոր հանգամանքները
- Մեջբերումներ վկաների, զոհի (զոհերի), ոստիկանների ասածներից
- Տեղեկատվության աղբյուրը

Կողոպուտ

Սկսնակ լրագրողները հաճախ շփոթում են կողոպուտը (բռնություն), կոտրանքով գողության հետ (սեփականության նկատմամբ հանցագործություն): Կողոպուտը հանցագործություն է անձի նկատմամբ, կոտրանքով գողությունը՝ ունեցվածքի: Կողոպուտի նպատակը անձից ուժով կամ ուժի սպառնալիքով որեւէ արժեք վերցնելը կամ վերցնելու փորձն է:

Կոտրանքով գողություն

Կոտրանքով գողությունը ապօրինի մուտքն է որեւէ կառույց՝ գողություն կամ խոշոր չափի գողություն կատարելու նպատակով (խոշոր չափի գողություն կատարողը դատապարտվում է մեկ կամ ավելի տարվա ազատազրկման՝ նահանգային կամ դաշնային ուղղիչ աշխատանքային գաղութում): Կոտրանքով գողության դեպքում նահանգային օրենքը որոշում է՝ դա զանցա՞նք է, թե՞ խոշոր չափերի հասնող գողություն՝ հիմնվելով գողացված ունեցվածքի դոլարային արժեքի վրա: Զանցանքը հանցագործություն է, որի համար մեղավորին դատապարտում են տուգանքի կամ ազատազրկման քաղաքային կամ օկրուգային բանտում մինչեւ 1 տարի: Որոշ նահանգներում խոշոր չափի գողություն է համարվում 250 ԱՄՆ դոլարից ավելի արժեք ունեցող ունեցվածքի գողությունը, մյուսներում այդ գումարը 1000 ԱՄՆ դոլար է:

Երբ կոտրանքով գողության հետեւանքով կորուստը մեծ չափերի է հասնում, նախաբանը կենտրոնանում է գողացված իրերի արժեքի վրա:

Բացահայտում

Ոստիկանները, երբ ծանր հանցագործություն են հետաքննում, հասկանալիորեն փակբերան են, ինչը լրագրողի համար դժվարացնում է տեղեկատվություն ստանալը գործի մասին, երբ այն գտնվում է հետաքննության կամ բացահայտման ընթացքում: Երբեմն ոստիկանությունը տեղեկատվություն է տրամադրում մամուլին՝ ակնկալելով նրա օգնությունը՝ կասկածյալին գտնելու գործում:

Երբեմն լրագրողը կարող է ինչ-որ տեղեկատվություն հայտնաբերել, որը ոստիկանությունը կցանկանար գաղտնի պահել:

Ոստիկանական լուրերի լրագրողների մեծ մասը նման նյութերը չի հրապարակում: Նրանք կարող են կորցնել իրենց տեղեկատվության աղբյուրը՝ եթե օգտագործեն դրանք: Մեծ քաղաքներում կա մի չգրված օրենք, որ լրագրողը կարող է հրապարակել իր իմացած ցանկացած տեղեկատվություն: Եթե ոստիկանությունը չի կարողանում իր մարդկանց բերանը փակ պահել՝ դա նրանց պրոբլեմն է:

Նախօրոք տպագրված տեղեկատվությունը կասկածյալների մասին կարող է խանգարել ոչ միայն հետաքննությանը, այլ նաեւ դատավարությանը: Լրագրողը պետք է հաշվի առնի գործերի այսպիսի ընթացքը՝ մինչեւ պաշտոնապես թույլատրված նյութերից բացի ուրիշ բան տպագրելը:

Կարեւոր կետերը

- Հետաքննության զարգացումը
- Կասկածյալները
- Լրացուցիչ հանցանշաններ
- Գործին կցված անձնակազմը
- Հանցագործության շարադրումը

Մեծ քաղաքներում հետաքննվում են միայն ամենածանր հանցագործությունները: Ընդհանրապես, ինչքան մեծ է հասարակության հետաքրքրությունը որեւէ գործի նկատմամբ, այնքան ավելի հավանական է, որ ոստիկանությունը կարագացնի դրա ավարտը: Հայտնի մարդու կամ ոստիկանի սպանությունը անպայման կհետաքննվի: Մեծ քաղաքներում, որտեղ օրեկան երկուսից հինգ սպանություն է կատարվում, թմրանյութեր վաճառողի կամ տեղափոխողի սպանության գործը կարող է շատ արագ փակվել: Մեծ քաղաքներում, ելնելով գործնական նպատակներից, կոտրանքով գողությունը, թմրանյութեր ծխելը կամ մեքենաների գողությունը խտրականության են ենթարկվում՝ մեծ ջանքեր չեն թափվում դրանք բացահայտելու համար:

Ձերբակալություններ

Հանցագործությունների մասին ամենալավ հոդվածներից որոշ մասը ձերբակալությունների մասին են: Կրկին, տեղեկատվության մեծ մասը, որպես կանոն, գալիս է զեկուցագրերից, ձեր-

բակալությունների դեպքում՝ ձերբակալության զեկուցագրերից: Լուրջ հանցագործությունների հետաքննության ժամանակ ձերբակալումներ կատարելիս ոստիկանությունը կամ դատախազը կարող են մամուլի ասուլիս հրավիրել՝ հայտարարություններ անելու համար:

Սովորաբար մեղադրանքը ներկայացվում է ձերբակալության ժամանակ, բայց երբեմն կասկածյալը կալանքի տակ է պահվում: Կասկածյալը կարող է որոշակի սահմանափակ ժամկետով պահվել կալանքի տակ՝ մինչեւ մեղադրանք ներկայացնելը: Ձերբակալության մասին հոդված գրելիս լրագրողը պետք է համոզված լինի, որ նշված մեղադրանքներն իրականում ներկայացվել են:

Լրագրողը կարող է չսպասել մեղադրանքի ներկայացմանը՝ ձերբակալության մասին հոդված գրելու համար, բայց նա չպետք է նշի մեղադրանքի մասին: Բայց եթե մեղադրանք է ներկայացվել, հոդվածի նախաբանը հենց այդպես էլ կարող է սկսվել:

Ուշադրություն՝ մի քանի անգամ ստուգեք անունները, նամանավանդ երբ ձերբակալված անձնավորությունը տալիս է հասարակության մեջ հայտնի մարդու անուն: Համոզվեք դրանում՝ զանգահարելով կասկածյալի տուն կամ աշխատավայր կամ ոստիկանությանը հարցնելով: Որոշ կասկածյալներ սխալ անուններ եւ հասցեներ են նշում:

Կարեւոր կետեր

- Ձերբակալված անձնավորության անունը, տվյալները
- Ինչ հանցագործության մեջ է մեղադրվում
- Հանցագործության մանրամասները՝ ներառյալ զոհի (երի) անունը (ները) եւ տվյալները
- Ձերբակալության պայմանները
- Ձերբակալությունը կատարող ոստիկանները
- Տեղեկատվության աղբյուրը

Ծանր հանցագործության դեպքում ավելացնել հետեւյալը՝

- Հետաքննությունը
- Կասկածյալի մասին տվյալներ
- Հանցագործության շարժառիթը
- Ձերբակալության մասին հայտարարելու պայմանները

Նյութի կարեւորությունը: Համայնքում ապրողների եւ այնտեղ կատարվող հանցագործությունների թիվն է որոշում, թե ինչ տիպի ձերբակալությունները կարող են լինել տպագրության արժանի: Մայամիում, Դետրոյտում, Նյու-Յորքում, Չիկագոյում, Լոս-Անջելեսում եւ նման չափի բնակիչներ ունեցող այլ քաղաքներում սպանությունը կամ սպանության մեջ կասկածվողի ձերբակալությունը կարող են արժանանալ թերթում մի քանի տողի (եթե ընդհանրապես աժանանան): Բայց փոքր քաղաքներում նույնիսկ որեւէ ջինսի գողությունը եւ այդ հանցագործության մեջ կասկածվողի ձերբակալությունը դառնում են հոդվածի նյութ:

Իրավապահ մարմինները

Հանցագործությունը հետաքննում եւ բացահայտում են իրավապահ տարբեր մարմիններ: Տեղական հանցագործությունը գտնվում է մունիցիպալ ոստիկանության ենթակայության տակ: 2500 կամ ավել բնակչություն ունեցող քաղաքների 20%-ից ավելին ունի իր սեփական ոստիկանությունը: Շերիֆները տեղական ոստիկանություն չունեցող քաղաքներում եւ առանձնացված վայրերում ունեն տեղական ոստիկանության իրավասություն: Շերիֆը հետեւում է օկրուգի բանտերի աշխատանքին: Նահանգային ոստիկանությունը եւ ճանապարհային ոստիկանությունը հետեւում են նահանգի ճանապարհներին եւ օգնում տեղական ոստիկանությանը եւ շերիֆներին:

Գրանցում

Ձերբակալելուց հետո կասկածյալին գրանցում են ոստիկանությունում:

Ոստիկանական լուրերի լրագրողը հաճախ գրում է ոստիկանությունում կասկածյալի գրանցման մասին: Դատական լուրերի լրագրողը գործը իր ձեռքն է վերցնում գործը դատարան տալուց հետո, որը դատական պրոցեսի սկիզբն է:

Քրեական դատարանի աշխատանքը

Քրեական օրենքի պարտադրումը եւ կատարումը կարելի է բաժանել երկու մասի՝ նախքան դատավարությունը եւ դատ: Ծանր հանցագործության դեպքում երկու մասերն էլ մեծ ուշադրության են արժանանում:



Դատի նախապատրաստումը

Դատի նախապատրաստումը սկսվում է կասկածյալին ձերբակալելուց եւ գրանցելուց անմիջապես հետո: Այդ ընթացքում կասկածյալին տեղյակ են պահում մեղադրանքի մասին եւ հարցնում, թե արդյոք նա իրեն մեղավոր ճանաչո՞ւմ է: Օրենքի կոպիտ

խախտման դեպքում երդվյալների դատարանը մեղադրանք է ընդունում ընդդեմ կասկածյալի, որին կասկածյալը համաձայնում է կամ արդարանում: Այս պրոցեսի ընթացքում տարբեր տեսակի նախնական լսումներ կարող են լինել:

Դատի տալը: Գործը դատի է տրվում տեղական դատարանում կասկածյալի ձերբակալումից հետո՝ շատ կարճ ժամանակաընթացքում: որոշընթացը բացկացած է երկու մասից՝ դատարանը ծանոթացնում է կասկածյալին մեղադրանքի հետ եւ լսում նրա արդարացումները: Այս գործընթացում հնարավոր է գրավի գումարի որոշումը եւ գրավով ազատ արձակելը:

Նախնական լսումներ: Այս լսումները երբեմն կոչվում են հավանական գործի լսումներ: Դատավորը դիտարկում է փաստերը եւ կարող է լսել վկայություններ: Այնուհետեւ դատավորը որոշում է, թե կա՞ արդյոք իրական կամ հավանական պատճառ՝ փոխանցելու կասկածյալի գործը երդվյալների դատարան եւ պե՞տք է արդյոք կասկածյալը կալանքի տակ պահվի, թե՞ կարելի է նրան ազատ արձակել գրավով: Այս լսումների ժամանակ փաստաբան չունեցող անձին կարող են փաստաբան կցել:

Դատի տալը եւ նախնական լսումները կատարվում են այսպես կոչված սկզբնական դատարաններում կամ ամենացածր իրավասություն ունեցող դատարաններում: Դրանք են մունիցիպալ, ոստիկանական, քաղաքային եւ հանցագործությունները հետաքննող դատարանները: Այս դատարանները կարող են քննել թեթեւ գործերը եւ դատապարտել նրանց, ով խոստովանել է իր մեղքը կամ մեղավոր է ճանաչվել: Ավելի բարձր՝ նահանգային դատարանը քննում է ծանր հանցագործությունները:

Երդվյալների դատարան: Այս դատարանը, որը սովորաբար կազմված է լինում 23 հոգուց, լսում է մեղադրողի կողմից ներկայացված փաստարկները եւ որոշում է՝ ճանաչե՞լ կասկածյալին մեղավոր, թե՞ ոչ:

Որոշ նահանգներում երդվյալների դատարանները որոշման փոխարեն տալիս են եզրակացություն՝ պաշտոնապես գրված մեղադրանք, որը մեղադրողը ներկայացնում է դատարանին:

Վերաքննում

Վերաքննման ընթացքում պաշտպանվողին տեղյակ են պահում ներկայացված մեղադրանքի կամ եզրակացության մասին,

իր իրավունքների մասին եւ խոստովանելու հնարավորություն տալիս : Եթե պաշտպանվողը ընդունում է իր մեղքը, եւ դատավորը իրավասություն ունի, ապա մեղադրյալին կարող են դատապարտել: Եթե պաշտպանվողը չի ընդունում մեղադրանքը, գործը փոխադրվում է դատարան:

Նահանգային դատարաններ



Լսումներ նախքան դատը

Մի քանի տարբեր այլ լսումներ են հնարավոր մինչեւ գործը հասնի դատարան: Ահա դրանցից մի քանիսը.

Արգելում՝ որտեղ հաշվի է առնվում հանցանշանի կամ խոստովանության ընդունելիությունը:

Կարողունակություն՝ բացահայտում է պաշտպանյալի մտավոր համապատասխանությունը դատարանի առջեւ կանգնելուն:

Իրավասություն՝ բացահայտում է, թե արդյոք դատարանը իրավասո՞ւ է քննել տվյալ գործը:

Խոստովանության գործարք

Այս նախնական լսումներից ցանկացածի ժամանակ ամբաստանյալը կարող է իրեն մեղավոր ճանաչել: Իրեն մեղավոր ճանաչելով՝ ամբաստանյալը հաճախ հնարավորություն է ստանում դատվելու ավելի մեղմ մեղադրանքով, քան մինչեւ մեղայականը: Այս պրոցեսը կոչվում է խոստովանության գործարք: Այն օգտագործվում է դատարանների մեծ մասի կողմից՝ դատական գործերի ահռելի քանակությունը պակասեցնելու նպատակով: 13 քաղաքներում հետազոտությունը ցույց տվեց, որ խոստովանության գործարքը առկա է՝ 81% Լուիզվիլում եւ 97% Նյու-Յորքում:

Երբեմն իշխանությունները գործարք են կնքում ամբաստանյալի հետ՝ նրա համագործակցությունը ապահովելու նպատակով:

Եթե խոստովանության գործարք չի առաջարկվում (որը հաճախ պատահում է, երբ ամբաստանյալը հաճախակի է դատվում), գործը փոխանցվում է դատարան: Շատ քաղաքներում դատախազները կենտրոնացնում են իրենց ջանքերը՝ հետաքննելու հանցագործի (այսինքն այն ամբաստանյալի, որը մինչ այդ մեղադրվել է ծանր հանցագործության մեջ եւ դատապարտվել) «կարիերան»:

Դատ

Դատավարությունը հաճախ դրամատիկ ընթացք է ունենում, եւ լրագրողը պետք է հետամուտ լինի այն տեսնելուն եւ արտահայտելուն: Դատավարությունները նաեւ լինում են բարդ, հաճախ հագեցած իրավական ժարգոնով եւ տեխնիկական արարողակարգով: Լրագրողը պետք է նայի տեխնիկական մանրամաս-

նություններից այն կողմ՝ մարդկանց հետաքրքրությունն առաջացնող նյութը տեսնելու համար:

Դատական գործընթացը սկսվում է երդվյալ ատենակալների ընտրությամբ, ինչը կարող է տեւել մի քանի ժամից մինչեւ մեկ շաբաթ: Երդվյալ ատենակալների ընտրության ընթացքում նրանց առաջադրվող հարցերը կարող են ի հայտ բերել մեղադրողի եւ դատապաշտպանի ռազմավարությունները:

Երդվյալ ատենակալների ընտրությունը: Երդվյալ ատենակալները ընտրվում են արկղի միջից անունները հանելով: Արկղի մեջ գցված են տարածքի բոլոր քվեարկողների անունները: Ամբաստանյալը կարող է բացարկ հայտնել ատենակալին՝ դատավորին ներկայացնելով պատճառները:

Դատական վեճի պրոցեսը

Իրական դատավարությունը սկսվում է մեղադրողի եւ դատապաշտպանի բացման հայտարարություններով: Լրագրողը հաճախ գործի ուրվագծերին ծանոթանում է այս հայտարարություններից: Այնուհետեւ մեղադրողը ներկայացնում է նահանգի կողմից վկաներին (հանցագործությունների դեպքում մեղադրանքը ներկայացնում է նահագը, այլ ոչ թե անձը):

Այնուհետեւ պաշտպանվող կողմը կարող է խաչաձեւ հարցաքննության ենթարկել դատախազի վկաներին, որից հետո մեղադրողը կրկին կարող է հարցեր տալ վկաներին՝ անուղղակի քննել նրանց:

Այնուհետեւ պաշտպանվող կողմն է ներկայացնում գործը՝ իր վկաներին կանչելով:

Մեղադրողը կարող է խաչաձեւ հարցաքննության ենթարկել պաշտպանվող կողմի վկաներին, որից հետո պաշտպանվող կողմը կրկին կարող է անուղղակի հարցաքննել իր վկային:

Երկու կողմերն էլ իրավունք ունեն հերքել վկայությունները: Դատավարության պրոցեսի վերջին մասը երկու կողմերի վերջնական փաստարկներ ներկայացնելն է:

Կարեւոր կետերը

- Պաշտպանվողի մասին տեղեկատվություն
- Մեղադրանքի իսկությունը

- Նոր մեղադրանքը, եթե տեղի է ունեցել խոստովանության գործարք
- Հանցագործության տեսակը, մանրամասները
- Գործի ընթացքը
- Ինչ է պատահել այսօր
- Հետադարձ հայացք դատավարությանը
- Հաջորդ քայլերը
- Դատավորի անունը, դատարանի անունը
- Դատարանի դահլիճի նկարագրությունը

Մեղադրանքը երդվյալ ատենակալների ներկայացնելը: Դատավորը ներկայացնում է մեղադրանքը երդվյալ ատենակալներին եւ բացատրում, թե ինչպես է դա կապված գործի հետ:

Երդվյալ ատենակալների խորհրդակցությունը եւ վճիռը: Երդվյալ ատենակալները հեռանում են իրենց սենյակը՝ քննարկելու գործի փաստերը: Նահանգների մեծամասնությունում երդվյալ ատենակալները պետք է միաձայն վճիռ կայացնեն: Լուիզիանայում, Մոնտանայում, Օկլահոմայում, Օրեգոնում եւ Տեխասում վճիռը ընդունվում է ձայների մեծամասնությամբ: Երդվյալ ատենակալները կարող են հարցումով դիմել դատավորին՝ օրենքի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով, եւ կարող են պահանջել, որ իրենց համար կարդան վկայությունների արձանագրությունները: Քանի որ երդվյալ ատենակալների խորհրդակցությունները գաղտնի են, այս հարցումներից լրագրողը կարող է մոտավորապես իմանալ, թե ինչ են նրանք քննարկում:

Դատավճռի մասին հոդվածները ընդգրկում են երդվյալ ատենակալների խորհրդակցությունները եւ դատի մեջ ներքաշված կողմերի վերաբերմունքը դատավճռին: Եթե հնարավոր է՝ երդվյալ ատենակալներից հարցազրույց է վերցվում: Ընդգրկվում են նաեւ մեղադրանքները, մեղադրողի մասին տեղեկատվություն եւ հանցագործության իսկությունը:

Դատապարտելը: Եթե երդվյալ ատենակալները մեղավորության վճիռ են կայացնում, դատավորը կարող է ամբաստանյալին միանգամից դատապարտել, կարող է սպասել վավերացնող արձանագրության կամ նշանակել լսումներ մինչեւ դատապարտելը, որի ժամանակ հաշվի են առնվում ծանրացուցիչ կամ մեղմացուցիչ հանգամանքները: Որոշ նահանգներում երդվյալ ատենակալներն են կայացնում դատավճիռը այնպիսի ծանր հանցագործությունների համար, ինչպիսին սպանությունն է:

Դատավորները հաճախ հոդվածի համար հարմար մեկնաբանություններ են անում դատավճիռ կարդալիս:

Դատավարության ցանկացած փուլում կարելի է հոդված գրել: Եթե հանցագործությունը մեծ աղմուկ է առաջացրել կամ հանցագործության մեջ ներգրավված են հայտնի մարդիկ, հնարավոր է մեկ լրագրողի կցել այդ գործի ընթացքին հետեւելու համար՝ դատի տալուց մինչեւ դատավճիռը հրապարակելը:

Քաղաքացիական դատերի լուսաբանում

Մենք քննարկում էինք քրեական օրենքի գործածությունը: Օրենքի այս ճյուղում մեղադրողը պետությունն է: Օրենքի մյուս մեծ ճյուղում՝ քաղաքացիական օրենքում, գործը դատարան է տրվում խմբի կամ անձի կողմից:

Քաղաքացիական դատավարություն

Քաղաքացիական գործերը, ըստ մամուլի, այնքան դրամատիկ չեն, ինչքան քրեականները: Եվ հետեւաբար, քաղաքացիական դատավարությունների լուսաբանումը սահմանափակ է՝ հաճախ միայն քաղաքացիական դատավարության հայցերի ներկայացմամբ: Այս հայցերի նպատակը ունեցվածքի, ֆիզիկական վնասների, պայմանագրի խզման փոխհատուցումն է:

Օկրուգի դատարանին կցված լրագրողը պարտավոր է ամեն օր ստուգել դատարանի կատարածուի գրանցումները՝ հայտնաբերելու համար ամենահետաքրքիր եւ ամենակարեւոր հարցերը: Լրագրողը հաճախ ընտրում է մեծ գումարների հետ կապված հարցերը: Բայց պետք է զգույշ լինել՝ երբեմն փաստաբաններն իրենց պաշտպանյալին պատճառված վնասի գումարը չափազանցնում են, բայց այնուհետեւ համաձայնում են շատ ավելի փոքր գումարի փոխհատուցմանը՝ մինչեւ դատը ընթացող բանակցությունների ընթացքում: Իրականում հայցերի մեծամասնությունը չի հասնում դատական պրոցեսի:

Երբ հարցը կարգավորվում է փոխհամաձայնությամբ կամ դատարանը լուծում է հարցը կողմերից որեւէ մեկի օգտին, ապա հոդվածը պետք է պարունակի փոխհատուցման գումարի չափը, հայցը ներկայացնողի անունը, վնասի չափը, պաշտպանվողի անունը, այն դատարանի անունը, որտեղ լսվել է գործը եւ հայցը հատուցելու պատճառը:

Արդարության վերականգնում

Քաղաքացիական օրենքի մյուս մասը կոչվում է արդարության վերականգնում: Այս դեպքում անձը եւ անձանց խումբը ձգտում է, որ դատարանը հարկադրի մեկ ուրիշ անձի, կառավարությանը կամ որեւէ կազմակերպության կատարելու որոշակի գործողություն կամ հրաժարվելու որեւէ գործողություն կատարելուց:

Հաճախ դատական լսումներ են կազմակերպվում՝ որոշելու համար, թե արդյոք այդ հարկադրանքը պե՞տք է կրի մշտական բնույթ:

Դաշնային դատարանի աշխատանքի լուսաբանումը

Գոյություն ունեն երկու դատական համակարգեր՝ նահանգային եւ դաշնային: Այն քաղաքներում, որտեղ կան դաշնային դատարաններ, թերթերը հաճախ լրագրող են կցում այդ դատարանին՝ քննվող գործերը լուսաբանելու նպատակով:

Դաշնային դատարանները քննում են բազմապիսի գործեր, որոնք ընդգրկում են դաշնային օրենքների խախտումները՝ իմիգրացիայի հարցերը, սահմանադրական հարցերը, գողացված մեքենաների տեղափոխումը նահանգից նահանգ, արտասահմանից թմրանյութերի ներկրումը եւ դրանց տեղափոխումը նահանգից նահանգ, հարկային հարցերը, քաղաքացիական իրավունքները:

Դաշնային դատարանի համակարգը բաղկացած է երեք մասից՝ օկրուգային դատարաններ, որտեղ քննվում են գործերի մեծամասնությունը, վերքննիչ դատարաններ՝ 12 օկրուգներում, որտեղ քննվում են բողոքարկված գործերը, եւ բողոքարկման վերջին դատարանը՝ Միացյալ Նահանգների Գերագույն Դատարան, ուր գործերը ընդունվում են գրավոր հրամանով:

Մահախոսականներ

Վաշինգտոնում ապրող քաղաքական լրագրողը վերջացրեց իր ասելիքը ժուռնալիստիկայի դասարանին եւ հարցրեց, թե կա՞ն արդյոք հարցեր: Նա հենց նոր վերադարձել էր դեպի միջին արեւմտյան նահանգներ կատարած իր ճանապարհորդությունից, որը ձեռնարկել էր ուսումնասիրելու համար նախագահական թեկնածուների մասին ընտրողների կարծիքը:

- Ո՞րն էր ճանապարհորդությունից ստացած ձեր ամենամեծ տպավորությունը,- հարցրեց մի ուսանող:

Լրագրողը մի պահ մտածեց եւ պատասխանեց. «Իրականում սա ոչ մի կապ չունի քաղաքականության հետ, բայց երբ ես հարցազրույց էի վերցնում Այովացի մի կնոջից իր խոհանոցում, ես նայեցի պատին, ուր որոշ բաներ կային փակցված: Ամենավերեւում մաքուր մի պլաստիկատի կտորի վրա մի թերթ էր փակցված:

Դա նախագահ Քենեդիի հուղարկավորության մասին հոդվածն էր: Թուղթը դեղնած էր եւ մաշված: Դա ինձ որոշ բան ասեց այդ կնոջ քաղաքական հայացքների մասին: Բայց դա օգնեց ինձ պարզելու մի բան ժուռնալիստիկայի մասին: Այնտեղ ես տեսա ժուռնալիստիկայի ամենահիմնական հոդվածը՝ մահախոսականը եւ այն պահվել էր այսքան տարի շարունակ»:

Մահախոսականները ամենաշատ կարդացվող հոդվածներից են: Ընթերցողների մեկ երրորդից մինչեւ կեսը պարբերաբար կարդում է դրանք: Որոշ թերթեր տպագրում են միայն հասարակության մեջ հայտնի մարդկանց մահվան մասին հոդվածներ, բայց խորը ուսումնասիրության դեպքում հաճախ կարելի է հետաքրքիր նյութ գտնել:

- Մենք մի անգամ մահախոսական տպագրեցինք մի ավտոբուսի վարորդի մասին, որի մահը մարդկանց մեծամասնության համար ոչինչ չէր նշանակում,- պատմում է Լեոն Հիլտրը՝ «Ցինցինատի պոստ» թերթի գլխավոր խմբագիրը,- բայց մենք գիտեինք, որ շատերը նրան գիտեն որպես ավտեբուսի վարորդ, որը երգում է:

Մահախոսականի տպվելու արժանի լինելը դժվար է որոշել: Եթե տեղական ճանապարհաշինական ֆիրմայի տնօրենը արժանի է յոթ կամ ութ պարբերության, ապա ինչու՞ նույնին արժանի չէ նրա ֆիրմայում աշխատող հաշվապահը, որը 60 տարի առաջ գաղթել է Հունգարիայից: Ի՞նչն է ստիպել նրա ընտանիքին գաղթել եւ ինչպե՞ս են նրանք վճարել ճանապարհածախսը: Ինչպե՞ս է նրան հաջողվել կրթություն ստանալ: Դա կիմանան նրա հարազատները եւ ընկերները:

- Միշտ էլ չհետազոտված հետաքրքիր նյութեր կան՝ կապված մահախոսականների հետ,- ասում է Ջիմ Ադամսը՝ «Ցինցինատի պոստի» խմբագիրը,- իմ քաղաքականությունն է՝ վերաբերվել մահախոսականներին այնպես, ինչպես բոլոր մյուս հոդվածներին՝ անել մեջբերումներ եւ խոսել մարդկանց հետ, փորձել ներկայացնել այն մարդուն, ում մասին գրում ես:

Հիմնական կետերը

- Մահացածի անունը, տարիքը, հասցեն եւ զբաղմունքը
- Մահվան ժամանակը եւ տեղը
- Մահվան պատճառը
- Ծննդյան ամսաթիվը եւ տեղը
- Հարազատները
- Հուղարկավորության արարողության մասին տեղեկություններ

Սրանք հիմնական կետերն են: Ավելի երկար մահախոսականի համար ավելացրեք.

- Նվաճումները եւ հաջողությունները
- Անդամակցությունը որեւէ կազմակերպությանը
- Ձինված ուժերում ծառայելը
- Հարազատների եւ ընկերների պատմած զվարճալի դեպքերը հանգուցյալի մասին

Սովորաբար նյութի հիմնական մասը կարելի է ստանալ թաղման բյուրոյում: Տեղեկատվությունը տրամադրվում է հայտարարությունների բաժնի կողմից, որը ստանում է տեղեկությունները թաղման բյուրոյից: Երբեմն պատահում է, որ որեւէ մեկը զանգահարում է մահախոսական տպելու նպատակով՝ ներկայանալով որպես մահացածի բարեկամ կամ ընկեր: Եղեք ուշադիր: Անպայման ստուգեք տեղեկատվությունը՝ զանգահարելով հարազատներին կամ թաղման բյուրո: Որոշ մարդիկ հաղորդում են մտացածին մահվան մասին, որպեսզի ծիծաղելի դրության մեջ դնեն մեկին, որն իրականում ողջ է:

Անձնական տվյալներ

Ընթերցողներին հետաքրքրում են տեղացիների մահվան մասին հոդվածները: Մահախոսականը ընթերցողներին հակիրճ ներկայացնում է կենսագրությունը մի մարդու, ում նրանք գիտեն կամ ում մասին նրանք լսել են: Մենք կարող ենք կարդալ, որ տեղացի մեքենա վաճառողը խոլորձ աճեցնելու հոբբի է ունեցել եւ տեղական ցուցահանդեսում մրցանակներ է նվաճել կամ որ թոշակի անցած երաժշտության դասատուն 50 տարի առաջ քոլեջների ազգային ռեկորդ է սահմանել 100 յարդ մրցավազքում:

Մահախոսականները այս անձնական տվյալների հետ տալիս են հիմնական կետերը՝ անունը, տարիքը, հասցեն, զբաղմունքը, հարազատների եւ հուղարկավորության մասին տեղեկատվություն:

Մահվան պատճառը

Լրագրողները հաճախ համոզվում են, որ մահվան պատճառը մահախոսական գրելու ամենադժվար մասն է: Ընտանիքի անդամները երբեմն ամաչում են պատմել մահվան պատճառի մասին կամ վախենում են, որ իրենց հարազատի մահանալու ձեւը կարող է վատ ազդեցություն թողնել նրա հիշատակի կամ ընտանիքի հետագա կյանքի վրա: Ինքնասպանություն գործած դպրոցական աղջկա ընտանիքը խնդրում է, որ մահախոսականում գրվի, թե նա հանկարծամահ է եղել: Քաղցկեղից մահացածի այրին պնդում է, որ մահախոսականում գրվի, որ մահը վրա է հասել «երկարատեւ հիվանդությունից հետո», էֆեմիզմ, որի հաճախականությունը պակասել է քաղցկեղից մահացածների թվի ավելացման պատճառով: Օրաթերթերի մեծամասնությունը մշակված քաղաքականություն ունի այն դեպքերի համար, երբ հարազատները ցանկանում են լռության մատնել մահվան իրական պատճառը:

Լրագրողի համար հաճախ դժվարություն է ներկայացնում գրելու այն դեպքերի մասին, երբ մարդը մահանում է այնպիսի հիվանդության պատճառով, որը կարող է մատնանշել նրա ապրելակերպը՝ օրինակ լյարդի ցիռոզը կամ ԴԱՎ-ը: Ցիռոզը կապվում է ալկոհոլիզմի, իսկ ԴԱՎ-ի զոհերը հիմնականում արվամոլներն են կամ ներերակային կերպով թմրանյութեր օգտագործողները:

Շատ մեծ ռադիոկայաններ եւ օրաթերթեր գտնում են, որ ԴԱՎ-ից մահը ոչնչով չի տարբերվում քաղցկեղից կամ սրտի նոպայից վրա հասած մահվանից եւ խրախուսում են թաղման բյուրոներին եւ մահացածի հարազատներին նշելու ԴԱՎ-ը որպես մահվան պատճառ:

Երբ հանրահայտ դիրիժյոր Թոմաս Սկիպերսը մահացավ քաղցկեղից, «Նյու-Յորք Թայմսը» բազմաթիվ նամակներ ստացավ, որոնցում ընթերցողները հարցնում էին, թե արդյո՞ք նա ծխում էր: «Թայմսը» ընդունեց, որ այդ տեղեկատվությունը պետք է ընդգրկվեր մահախոսականի մեջ: Ինչպես ասաց խմբագիրներից մեկը, թերթը նախկինում մահախոսականներում ընդգրկում էր թոքերի քաղցկեղից մահացածների ծխող լինելու փաստը:

Լիդ

Հաճախ լիդում նշվում են մարդու մասնագիտությունը, նվաճումները կամ հասարակությանը օգտակար լինելու փաստը:

Թաղման արարողությունը կամ նախապատրաստումը նույնպես կարող են լինել լիդի հիմքը: Որոշ օրաթերթեր փորձում են բոլոր մահախոսականները նույն ձեւով՝ մահվան մասին գրելով սկսելու փոխարեն, սկսել թաղման ծիսակատարության եւ արարողության վայրի, օրվա եւ ժամի մասին տեղեկատվությամբ:

Երբ մարդը մահացել է մահախոսականը գրելուց մի քանի օր առաջ, լիդը հաճախ հիմնվում է թաղման արարողության վրա:

Հետաձգված լիդը հազվադեպ է օգտագործվում մահախոսականում, բայց լայն ընդունելի է, երբ ճաշակով է գրված: Ինչպես ասենք այս օրինակում.

«Կատարվեց Մարգարետ Վիլսոնի վերջին երազանքը: Երբ նա իմացավ իր քաղցկեղով հիվանդ լինելու մասին, ապա ցանկություն հայտնեց թաղվելու իր նախնիների գերեզմանոցում՝ Իռլանդիայում: Մյուս շաբաթ աճյունը կտեղափոխվի...»:

Տեղացիների մասին մահախոսականները

Երբ հանրաճանաչ մարդ է մահանում, հնարավոր է, որ այդ մասին գրեն նաեւ այն թերթերը, որոնք լույս են տեսնում այն քաղաքներում, ուր նա ծնվել եւ ապրել է: Երբեմն տեղական թերթերը գրում են նաեւ իրենց քաղաքի հետ կապ չունեցող մարդու մասին՝ օրինակ երբ սգում էին նախագահ Քենեդու մահը: Այդ ժամանակ տեղական թերթերում գրվում էր նույնիսկ նրա՝ տվյալ քաղաք այցելության մասին:

Սպորտային հոդվածներ

Մի սպորտային լրագրող մի անգամ Կարլ Ֆուրիլոյին՝ «Բրուկլին Դոդջերսի» հռչակավոր խաղացողին հարցրեց, թե ինչպես է նա սովորել այդպես լավ խաղալ:

- Ես աշխատել եմ: Ահա թե ինչպես,- պատասխանեց Ֆուրիլոն:

Եվ ինչպես ասում է գրող Ռոջեր Կանը, հենց այդպես է լրագրողը սովորում սպորտային հոդվածներ գրել: Առաջին փորձերը

կարող են լինել բավականին անհաջող:

Կամ էլ այն սպորտաձեւը, որի մասին պետք է գրել, ծանոթ չլինելու պատճառով շփոթմունքի է մատնում լրագրողին՝ ինչպես դա պատահեց Բեքի Թիգարդենի՝ «Կոլումբոս Սիթիզեն-Ջոուրնելի» սպորտային լրագրողի հետ, երբ նա առաջին անգամ պետք է գրեր բասկետբոլի մասին:

-Ես չէի հասկանում, թե ինչ է կատարվում,- հիշում է նա:

Բայց նա խաղից հետո հաջողացրեց հարցազրույց վերցնել թիմերից մեկի մարզիչից: Նա հարցրեց. «Պատմեք ինձ, թե ինչ էր կատարվում խաղադաշտում»:

Ցանկության դեպքում սովորելը հեշտ է: Լրագրողը պետք է հոդվածում չգրի իր մասին: Ընթերցողին հետաքրքրում են խաղը եւ խաղացողները եւ ոչ թե լրագրողը:

Սկսնակ սպորտային լրագրողների համար կարեւոր է իմանալ, որ սպորտի մասին գրելը չի տարբերվում լրագրության մյուս բոլոր ձեւերից: Լավ գրել՝ նշանակում է արագ եւ պարզ անցնել բուն նյութին՝ նշելով մարդկանց հետաքրքրող պահերը, խուսափելով սպորտային ժարգոնից եւ ընթերցողին, հեռուստադիտողին կամ ռադիոլսողին տեղեկություններ տալ խաղի կամ խաղացողի մասին:

Հեռուստացույցով սպորտը դիտողներ

	Մարդկանց քանակը (միլիոն)	Չափահասների տոկոսը
1. Պրոֆեսիոնալ ամերիկյան ֆուտբոլ	63,2	37
2. Բեյսբոլ	62,7	37
3. Պրոֆ. Ֆուտբոլի քոլեջների առաջնություն	48,9	29
4. Բռնցքամարտ	37,2	22
5. Բասկետբոլի քոլեջների առաջնություն	36,2	21
6. Պրոֆեսիոնալ բասկետբոլ	34,7	20
7. Պրոֆեսիոնալ ըմբշամարտ	28,8	17

Սպորտը դպրոցում եւ քոլեջում

Սպորտային լրագրողները, որոնք ձգտում են գրել «Քլիվլենդ Ինդիանա», «Դալաս Քովբոյս» կամ «Գոլդեն Սթեյթ Ուորիորզ» թիմերի մասին, գրելը սկսում են դպրոցական կամ ոչ պրոֆեսիոնալ սպորտի մասին հոդվածներից: Չնայած շատերը հետեւում են պրոֆեսիոնալ սպորտին, շատ ավելի շատերը սիրում են դիտել տեղական կամ քոլեջների թիմերի խաղերը եւ նրանք ակնկալում են պրոֆեսիոնալ սպորտի սիրահարներին տրամադրվող որակյալ հոդվածներ: Շատ օրաթերթեր դպրոցական խաղերը լուսաբանելու համար կես դրույքով լրագրողներ են վարձում, որոնց մեծ մասը ուսանողներ են:

Հիմնական կետերը

- Հաշիվը
- Թիմերի անունները, սպորտաձեւը
- Որտեղ եւ երբ է տեղի ունեցել խաղը
- Կարեւոր պահերը
- Լավագույն խաղացողը(ները)
- Լիգան, խումբը
- Խփված գնդակները, շահած միավորները
- Խաղի արդյունքի ազդեցությունը թիմերի դիրքի վրա մրցաշարային աղյուսակում
- Ստրատեգիան
- Հանդիսատեսների քանակը եւ (եթե կարիք կա) նրանց վարքը
- Վիճակագրությունը
- Վնասվածքները
- Անընդմեջ տարած հաղթանակների եւ կրած պարտությունների քանակը
- Խաղի տեւողությունը
- Հաստատված ռեկորդը(ները)
- Մեջբերումներ

Հոդվածի որակը կախված է լրագրողի որակից: Այն լրագրողը, ով խաղացողներին լավ է ճանաչում, գիտի, թե յուրաքանչյուր մարզիչ ինչ ստրատեգիա է օգտագործում տարբեր թիմերի դեմ, եւ ով ծանոթ է տվյալ սպորտաձեւին, հետաքրքիր եւ բովանդակալից հոդվածներ է գրում:

Լիդը

Հիմնական կետերից ցանկացածը կարող է լիդի հիմքը լինել: Լիդը կարող է հիմնվել լավագույն խաղացողի, սահմանված ռեկորդի, կարեւոր պահերի, խաղի երկարատեւության եւ այլնի վրա:

Երեւակայություն եւ հույզեր

Երեւակայությունը էական դեր է խաղում սպորտային լրագրության մեջ: Այնքան շատ սպորտաձեւեր եւ այնքան շատ խաղեր կան, որ թվում է, թե սպորտային էջերը հեղեղված են թիմերի անուններով եւ թվերով: Հոդվածները պետք է արտացոլեն մարդկանց ուղեղի եւ մարմնի գերլարումը՝ հնարավորությունների սահմանն անցնելու համար, գրեն արտասովոր մարդկանց եւ տարօրինակ պատահարների մասին:

Երբ Նոլան Ռայանի նետած գնդակները հինգերորդ խաղում անընդմեջ ոչ ոք չկարողացավ հետ մղել, հոդվածի կեսը նվիրված էր նրա հաջողությանը, իսկ մյուս կեսը՝ նրա սառն անտարբերությունը դրա նկատմամբ: Երբ «Մոնրեալ Էքսպոն» սեփական հարկի տակ չկարողացավ հաղթանակ տանել «Լոս-Անջելես Դոդջերսի» նկատմամբ, հոդվածը ոչ միայն թիմի անընդմեջ պարտությունների մասին էր, այլեւ ինչ-որ գերբնական ուժի եւ սնոտիապաշտության մասին:

- Մարդիկ խաղի արդյունքի մասին մի ժամից հետո մոռանում են, - ասում է «Քոմերշլ Ափիալի» աշխատող Թ. Ս. Սիմերսը, - բայց հույզերի մասին հոդվածը նրանք կարող են հիշել երկու ժամ:

Սիմերսը հեգնանքով է խոսում հոդվածի հիշարժանության մասին, բայց իրականում այստեղ միտք կա:

Լրագրողը, որը որսում է իրադարձության մարդկային կողմը, ստեղծում է մի հոդված, որն ընթերցողը կհիշի: Եվ հենց սա է, որ մենք բոլորս պահանջում ենք ժուռնալիստիկայից՝ պատմություն, որը կստիպի ընթերցողին նստել եւ ուշադիր կարդալ:

Լիդերը կարող են կենտրոնանալ այնպիսի մանրամասների վրա, որոնք նկատելի չեն մարզադաշտում կամ հեռուստացույցի առջեւ նստած սպորտի սիրահարների համար:

Կառուցվածքը

Սպորտային հոդված գրելիս հետաձգված լիդը ավելի ու ավելի հաճախ է հանդիպում: Առաջին մեկ կամ երկու պարբերությունները կարող են պարունակել մի պատահարի, անեկդոտի, կարեւոր պահի կամ ստրատեգիկ քայլի նկարագրությունը: Հետո, երկրորդ կամ երրորդ պարբերություններում, լրագրողը հաղորդում է խաղի հաշիվը: Հաջորդ մի քանի պարբերությունները նվիրված են լինում խաղի կարեւորագույն պահերին՝ գոլերին, կարեւոր փոփոխություններին, վնասվածքներին կամ խաղի արդյունքով մրցաշարային աղյուսակումթիմերի դիրքի փոփոխություններին:

Ձսպվածություն

Սպորտային լրագրողները էնտուզիաստներ են: Երբեմն նրանք այնպես են գրում, կարծես ոչ թե խաղ են մեկնաբանում, այլ աշխարհի վերջը: Նման տիպի էնտուզիազմը բերում է չափազանցությունների:

Աղմկարարություն

Սա հաճախ հանդիպող հիվանդություն է, մանավանդ հեռուստատեսային հաղորդավարների համար: Ամերիկյան ֆուտբոլում ամեն մի պահը ուղեկցվում է հաղորդավարի ձայնի բարձրացումով: Լրագրողները նույնպես գոռում են: Սկզբից մինչեւ վերջ բարձր լարվածությամբ գրված հոդվածը գրգռում է ընթերցողին: Հոդվածը չպետք է ձանձրալի լինի, բայց այն նաեւ չպետք է գոռա ընթերցողի վրա:

Չափազանցություններ

Երբեմն խաղերը նկարագրվում են որպես տիտանների պատերազմ, եւ հոդվածները չափազանցվում են: Նման տիպի հոդվածները հաճախ գրվում են ավանդական հակառակորդ թիմերի հանդիպումները լուսաբանելիս:

Անիմաստ հուզականություն

Սպորտի սիրահարները խաղի ժամանակ իսկապես հուզումնալից պահեր են ապրում: Պատահել են դեպքեր, երբ նրանք խաղացողների կամ դատավորների վրա գարեջրի շշեր են նետել: Որոշ սիրահարներ այնքան են տարվում խաղով, որ այն իրենց համար դառնում է կյանքի եւ մահու պայքար: Սպորտային լրագրողները պետք է արտացոլեն սպորտի լրջությունը եւ լարվածությունը, բայց նրանք նաեւ պետք է որոշակի սառնասրտություն պահպանեն: Չէ՞ որ սա, ի վերջո, ընդամենը խաղ է:

Խորհուրդներ սկսնակ սպորտային լրագրողին

Ահա որոշ խորհուրդներ փորձված սպորտային լրագրողների կողմից.

- Խուսափեք մեկնաբանելուց, երբ գրում եք խաղերի մասին: Հաճախ մեկնաբանությունները ցույց են տալիս լրագրողի ծուլությունը:
- Օգտագործեք մեջբերումներ, որոնք ցույց են տալիս խաղի կարեւոր կողմերը: Խուսափեք անիմաստ մեջբերումներից:
- Ուշադիր հետեւեք այն մարզչին, որն ամեն տարի, ամեն խաղի ժամանակ նույն հայտարարություններն է անում:
- Մոտ եղեք ընթերցողին: Շատ հաճախ սպորտային լրագրողները գրում են իրար համար, այլ ոչ թե ընթերցողի:
- Տեղեկատվությունը մի զոհաբերեք հանուն ոճի: Նախ տվեք տեղեկատվությունը: Ոճը ինքն իրեն կստացվի:
- Մի օգտագործեք պատերազմական տերմիններ, ինչպիսիք են «ճակատամարտ» կամ «զորքերը ուղարկեցին...» եւ այլն: Դուք գրում եք խաղի մասին, ոչ թե պատերազմի:
- Եթե ստիպված եք լինում, ապա ոչ թե չափազանցրեք, այլ ընդհակառակը՝ նվազեցրեք: Չափազանցությունը սկսնակության նշան է:
- Մի օգտագործեք սպորտային ժարգոն:
- Խուսափեք մարզիկներին հերոսներ դարձնելուց: Նրանք մարդիկ են, ոչ թե աստվածներ:

Նորություն

Քանի որ այն մարդկանց մեծամասնությունը, ովքեր բացում են թերթը երեկվա խաղերի մասին կարդալու համար, արդեն գիտի խաղերի արդյունքները, լրագրողի խնդիրն է ինչ-որ նոր բան ավելացնել: Նման նորություն ավելացնելու համար անհրաժեշտ է մանրամասն տեղեկատվություն ունենալ թե թիմերի եւ թե խաղի մասին:

Կրոնի մասին հոդվածներ

Մեր կյանքը լցված է ինչպես քաղաքականությամբ, այնպես էլ կրոնով: Բայց կրոնի մասին հոդվածների մեծ մասը ոգեշնչված չէ: Այս անտարբերությունը գուցե կապ ունի ԱՄՆ-ում կրոնի դերի նվազեցման հետ:

Ենթադրությունները, թե ամերիկացիները թերահավատ են, պրագմատիկ, աշխարհիկ եւ կրոնը չհարգող, անհիմն են: Իրականում նրանք մեծ մասամբ հավատացյալներ են: Հարցումները ցույց են տվել, որ.

- 90 տոկոսը հավատում է, որ Աստված կա,
- 80 տոկոսը սպասում է, թե ինքն Ահեղ դատաստանի օրն Աստծո կողմից կանչվելու է,
- 80 տոկոսը հավատում է, որ Աստված հրաշքներ է գործում,
- 70 տոկոսը հավատում է հանդերձյալ կյանքին,
- 50 տոկոսը հավատում է հրեշտակների գոյությանը,
- 40 տոկոսն ամեն շաբաթ եկեղեցի է հաճախում:

Իր «Աստծո հովանու ներքո. հավատքը եւ ամերիկյան քաղաքականությունը» գրքում Գարի Վիլսը գրում է, որ ամերիկայի կյանքը «կրոնական սքանչալիք է»:

Շատ թերթերում կրոնական նորությունները տպվում էին վերջին էջերում՝ քարոզների, օգնության ֆոնդերի եւ դեպի Սուրբ Երկիր կատարվող ուղեւորությունների մասին հոդվածների հետ միասին: Նման հոդվածները ցույց չեն տալիս կրոնի մեջ կատարվող դինամիկ փոփոխությունները՝ արմատականության աճը, Կաթոլիկ եկեղեցում կատարվող փոփոխությունները, այլ ազգությունների ներկայացուցիչների հետ հրեաների ամուսնությունների բարձր տոկոսը: Լուրջ կրոնական հոդվածները տպագրվում են

հիմնականում կրոնական թերթերում եւ պարբերականներում: Ընդամենը մի քանի օրաթերթեր են հասկացել կրոնի կարեւորությունը եւ վարձել են կրոնի մասնագետներ՝ այդ ասպարեզի մասին գրելու համար:

Այս լրագրողները հասկանում են, որ կրոնը չի սահմանափակվում միայն եկեղեցիներով, մզկիթներով եւ սինագոգներով: Նրանք հոդվածներ են գրում այն սոցիալ-տնտեսական պայմանների մասին, որոնք ստիպում են մարդկանց ընդունել բողոքականությունը, կաթոլիկ եկեղեցու հիերարխիայի եւ ամերիկաներում ու եվրոպայում լիբերալ կաթոլիկ աստվածաբանների միջեւ եղած տարաձայնությունների մասն, այնպիսի խճճված հարցի մասին, ինչպիսիք են. արդյոք պետությունը պե՞տք է օգնի ծխական դպրոցներին, սեռական դաստիարակությունը պե՞տք է ընդգրկվի ավարտական դասարանների ուսումնական առարկաների մեջ, պե՞տք է արդյոք ապահովիչներ բաժանել բարձր դասարանցիներին եւ արդյո՞ք հասարակական դպրոցներում պետք է թույլատրվի աղոթքը:

Աճող ժուռնալիստների մի մասը աստվածաբանության կուրսեր է անցնում: Բոլոր կրոնական լրագրողները կարդում են հետեւյալ կրոնական ամսագրերը՝ «Ամերիկա Էնդ Քոմմոնուիլ» (կաթոլիկական), «Քրիսչն Սենչըրի», «Քրիսչանիթի Էնդ Քրայսիս» (բողոքական) եւ «Քոմենթարի» ու «Թիկկուն» (հրեական):

Տեղեկատվության աղբյուրներ կարող են լինել կրոնական կազմակերպությունների առաջնորդները, աստվածաբանության ֆակուլտետի անդամները եւ կրոնական խմբերի հետ կապ ունեցող աշխարհիկ մարդիկ: Այս մարդկանց միջոցով լրագրողները հնարավորություն են ստանում հետաքրքիր հոդվածներ գրել եկեղեցիներում, սինագոգներում ընթացող այնպիսի միտումների մասին, ինչպես, ասենք, հակասություններն են կրոնական դավանանքների այսպես կոչված պահպանողական եւ ազատական թեւերի միջեւ:

Քննադատություն եւ գրախոսություն

Ֆիլմեր, գրքեր, հեռուստասերիալներ, ներկայացումներ, ցուցահանդեսներ, ալբոմներ, համերգներ, հագուստ եւ ռեստորաններ, Սիլվեստր Սթալոնեի վերջին ֆիլմը, փարիզյան նոր մոդան եւ ազգային ուտեստների ճաշացուցակին նոր աղցանի ավելացումը՝ այս ամենը ենթարկվում են թերթերի, ամսագրերի կամ հեռարձակող կայանների քննադատների եւ գրախոսների մանրամասն քննարկմանն ու գնահատմանը:

Գրախոսները սպառողական լրագրողներ են: Նրանք մեզ խորհուրդ են տալիս, թե արժե՞, արդյոք, տվյալ ապրանքի վրա փող եւ ժամանակ ծախսել: Որոշ գրախոսներ հսկայական ազդեցություն ունեն: «Նյու-Յորք Թայմսի» թատերական քննադատի բացասական գրախոսականը որեւէ թատերական ներկայացման վերաբերյալ, որի վրա միլիոնավոր դոլարներ են ծախսվել, կարող է երկու շաբաթում այդ ներկայացումը փակել տալ: «Նյու Յորքերի» դրական գրախոսականը կարող է գիրքը դարձնել բեսթսելեր:

Գրախոսականը բաղկացած է երկու մասից՝ աշխատանքի մասին հիմնական տեղեկատվություն եւ քննադատի գնահատական: Գրախոսականն է մեզ ասում, թե գիրքը գեղարվեստակա՞ն է, թե ոչ, նկարագրում է սյուժեն, գործողության վայրը եւ որոշակի տեղեկատվություն է տալիս հեղինակի նախկին աշխատանքների մասին:

«Սան-Ֆրանցիսկո Էքզամիներ»-ից Բարբարա Շուլգասերը ասում է. «Ինչպես բոլոր լավ հոդվածները, գրախոսականն էլ հիմնված է անփոփոխ անհրաժեշտությունների մի ցանկի վրա: Ամեն մի գրախոսական սկսվում է ինչպես ցանկացած այլ հոդված»:

«Բայց դրանով նմանությունը գրախոսականի եւ մյուս տիպի հոդվածների միջեւ ավարտվում է: Քննադատը կանխակալ կարծիք ունի եւ սուբյեկտիվ է»: Բայց քննադատը չի կարող իր ցանկացած միտքը արտահայտել: «Նա պարտավոր է բացատրություն տալ իր կարծիքի համար»,- ասում է Բարբարան:

Քննադատն իր գործը կատարելու համար պետք է լավ ծանոթ լինի այն ասպարեզին, որի մասին գրում է, գրի պարզ եւ հեղինակավոր ու ապացուցի իր գրախոսականում, որ իր քննադատության չափանիշներն իրական են:

- Քննադատի համար գոյություն ունեն էթիկայի ներքին նորմեր, - ասում է Շուլգասերը:

- Ամենալավ բանը, որ քննադատը կարող է անել՝ ինքն իր նկատմամբ ազնիվ լինելն է, - շարունակում է նա, - հենց որ նա սկսում է գրել, որպեսզի թերթում իր ասածներից մեջբերումներ անեն, կամ ապագա ուսանողները նրա խոսքերը կրկնեն, կամ էլ ընթերցողների եւ դերասանների սերը նվաճելու նպատակով՝ նա դադարում է հավաստի աղբյուր լինելուց նրանց համար, ովքեր կարդում են իր հոդվածները»:

Հոդվածների այլ տեսակներ

Երբ լրագրողը եկավ աշխատանքի, նա հասկացավ, որ որոշ ժամանակ խիստ զբաղված է լինելու: Նրա սեղանին դարսված

էին հայտարարություններ, խմբագրի կողմից իրեն հասցեագրված մի քանի գրություն եւ մի հեռախոսային հաղորդագրություն: Լրագրողը նստեց եւ սկսեց զբաղվել իր առջեւ դարսված թղթերով:

Նախ նա աչքի անցկացրեց հայտարարությունները: Մեկը պատմության կոնֆերանսի մասին էր, որը կայանալու էր տեղի քոլեջի հանրակացարանում: Մյուսը՝ կիրակի օրը կայանալիք բարեգործական չմշկավազքին էր վերաբերում: Երրորդը նահանգապետի ելույթի մասին էր, որը տեղի էր ունենալու հաջորդ շաբաթ: Նա դրեց այս երեքը իրար հետ, թղթի մի կտոր վերցրեց, վրան գրեց «Առաջնային» եւ ամրակով ամրացրեց իրար:

Ռազմական բազայից մի զինվորի մասին մամուլի հաղորդագրության վրա նա գրեց «աշխարհիկ կյանք»: Նա գիտեր, որ այս մամուլի հաղորդագրությունները շատ արագ կվերջացնի: Մնացածը մի քիչ ավելի շատ ժամանակ կխլի՝ մի մահախոսական, լրատվական գործակալությունից ստացած մի նյութ, որին պետք է տեղական երանգավորում տալ եւ մի հեռախոսազանգ՝ եղանակի կանխատեսման բյուրո:

Նա որոշեց նախ հեշտ գործը վերջացնել եւ սկսեց աշխատել «առաջնային» եւ «անձնական» մակագրված նյութերի հետ: Սրանք կարիք ունեն հակիրճ ձեւով՝ համառոտ կամ կարճ շարադրվելու:

Համառոտ հոդվածներ

Համառոտ հոդվածներ գրելու գաղտնիքը, ասել էին լրագրողին իր առաջին աշխատանքային օրը, ընթերցողին նյութի կարեւորագույն մասը ներկայացնելն է: Ինչպես նրան ասաց մի փորձառու լրագրող. «Ոչ մի ավելորդություն, ոչ մի գեղեցկացում: Ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս եւ վերջ»: Ոչ ավել, քան երկու կամ երեք պարբերություն, եթե խոսքը քաղաքի ամենամեծ եկեղեցում նոր վանահայր նշանակելու կամ հաջորդ ամսվա ընթացքում 72 տարեկան սենատորի ամուսնության մասին չէ:

Նախորդողներ

Նախորդողը տեղեկացնում է մարդկանց այն իրադարձությունների մասին, ուր նրանք ուզում են հաճախել կամ որի մասին նրանք ուզում են իմանալ: Ընտանիքը կարող է ցանկություն չունենալ գնալ չմշկավազքի, բայց կարող է գումար հատկացնել տեղական հիվանդանոցին՝ դրա մասին մի կարճ հոդված կարդալով:

Հիմնական կետերը

- Նախատեսված իրադարձությունը
- Իրադարձության օրը, ժամը եւ տեղը
- Նպատակը
- Հովանավորը
- Գինը, մուտքի վարձը (եթե կա)
- Իրադարձության գաղափարի ծագումը եւ զարգացումը (եթե իրադարձությունը կարեւոր է)

Ինչքան փոքր է թերթը, այնքան երկար է լինում նախորդողը:

Բարձրաշխարհիկ կյանք

Անունները նորություններ են ստեղծում: Մեծ քաղաքներում նման անունները պատկանում են հանրահայտ անձանց՝ հեռուստահաղորդավարներին, մեծահարուստներին, քաղաքականությամբ զբաղվողներին, մարզիկներին, հասարակության բարձր խավին: Փոքր քաղաքներում դա հարեւաններն են: Նրանց անցուդարձը արտացոլվում է բարձրաշխարհիկ կյանք խորագրով լույս տեսնող հոդվածներում:

Ծնունդները, նշանդրեքները եւ հարսանիքիները, շնորհանդեսները, պաշտոնաթողությունները, գովազդումները, հավաստիացումները, նշանակումները՝ այս բոլորը այդ շարքից են:

Նույնիսկ «Նյու-Յորք Թայմսը», որ միլիոնանոց օրական շրջանառություն ունի, ընդունում է հասարակության հետաքրքրությունը բարձրաշխարհիկ կյանքի նկատմամբ եւ ունի նշանդրեքներին եւ հարսանյաց հայտարարություններին նվիրված էջեր:

Բարձրաշխարհիկ կյանքի մասին հոդվածները ամրացնում են հասարակությունը: Դրանք պատմում են մարդկանց ունեցած հաջողությունների եւ երբեմն հարեւան ընտանիքի դժբախտության մասին:

Հիմնական կետերը

- Անունը, անձնական տվյալներ
- Նորությանն արժանի իրադարձությունը
- Անձնավորության ունեցած կապը իրադարձության հետ
- Իրադարձության հետ կապված հատուկ կամ արտասովոր հանգամանքները

Բարձրաշխարհիկ կյանքի մասին հոդվածները սովորաբար գրվում են հասարակ հոդվածի նման: Եթե իրադարձության հետ հատուկ կամ արտասովոր այլ իրադարձություն կա կապված, ապա այն կարող է դառնալ լիդի հիմքը, օրինակ՝ ջրի տակ տեղի ունեցած հարսանիքը, ծննդյան տոնը լեռան գագաթին տոնելը եւ այլն:

Հարսանիքների մասին հոդվածներում լիդում գրվում են հարսնացուի եւ փեսացուի անունները եւ հարսանիքի վայրը: Հոդվածի համար կարեւոր են նաեւ զույգի մասին ընդհանուր տեղեկությունները եւ ծնողների անունները:

Համառոտ հոդվածների մեծ մասը շատ արագ են գրվում, քանի որ դրանցից շատ քչերն են պահանջում հավելյալ տեղեկատվություն: Հայտարարության կամ մամուլի հաղորդագրության մեջ ընդգրկված նյութը սովորաբար լիովին բավարար է, բայց եթե ինչ-որ արտասովոր հանգամանքի ի հայտ բերելու նախանշաններ կան նյութում, անպայման ստուգեք այն: Հնարավոր է, որ այդտեղ մի լավ հոդվածի նյութ լինի թաքնված:

Հոդվածների տեղայնացումը

Հոդվածը տեղայնացնելու տրամադրությունը շատ պարզ է: Ընթերցողները ցանկանում են իրենց մոտ մարդկանց կամ իրադարձությունների մասին կարդալ: Մոտիկությունը նորության հիմնական որոշիչներից է: Լրագրողը լրատվական գործակալությունից մի նյութ է ստացել, որտեղ նշված են Օհայոյում ավտոբուսի եւ բեռնատար մեքենայի բախումի հետեւանքով մահացած 11 հոգու անունները: Մահացածներից երկուսը տեղացիներ էին:

Լրագրողը զանգահարում է «Ասոշիեյթեդ Պրես» լրատվական գործակալություն՝ իմանալու համար թե կա՞ն արդյոք վնասվածների մեջ տեղացիներ: Նա նաեւ մի քանի տեղ է զանգահարում՝ երկու մահացած տեղացիների մասին տեղեկատվություն ստանալու համար եւ իմանալու համար հուղարկավորության արարողությունների մասին մանրամասները:

Լրագրողը համոզվում է, որ ճիշտ է գրել մահացածների անունները: Լրատվական գործակալությունների կողմից տրամադրված նյութերում անունները հաճախ աղավաղվում են: Լրագրողը նաեւ հավաստիանում է, որ վթարից տուժածները իսկապես տեղացիներ են:

Հիմնական կետերը

- Տեղացու անունը կամ տեղայնացումն արդարացնող իրավիճակը,
- Ընդհանուր իրավիճակ կամ տեղեկություններ,
- Տեղեկատվության աղբյուրը, լրատվական գործակալության կամ կազմակերպության անունը:

Կառավարական եւ ազգային կազմակերպությունների զեկուցագրերը լրագրողին տեղայնացնելու համար մեծ չափի տեղեկատվություն են տալիս: Ազգային Ապահովագրական Խումբը տալիս է քաղաքներում հրդեհների քանակի մասին տեղեկատվություն, Հետաքննությունների Դաշնային Բյուրոյի տարեկան «Հանցագործություններն ԱՄՆ-ում» հրատարակությունը պարունակում է բոլոր մեծ քաղաքներում հանցագործությունների քանակի մասին տեղեկատվություն՝ դասակարգված յոթ խմբերի մեջ: Գոյություն ունեն նաեւ ավտովթարների քանակը ըստ նահանգների, աղքատությունը եւ գործազրկությունը, ինչպես նաեւ բազմաթիվ այլ սոցիալական եւ տնտեսական ցուցանիշները արտահայտող զեկուցագրեր:

ԱՄՆ-ի Կրթության դեպարտամենտը թողարկում է տարեկան տվյալներ, որտեղ ընդգրկվում է պետության դպրոցական համակարգի մասին տեղեկատվություն: Ըստ վերջին աղյուսակի՝ ուսուցիչների աշխատավարձն Ալյասկայում ամենաբարձրն է՝ տարեկան 41.700 ԱՄՆ դոլար, իսկ Արկանզասում ամենացածրը՝ 21.700 ԱՄՆ դոլար: Ամենաշատ ծախսերը աշակերտի ուսուցման վրա Ալյասկայում են կատարվում՝ 7800 դոլար, Յուտայում ամենաքիչը՝ 2500 դոլար: Բայց չնայած դրան Յուտայի ավարտական դասարանների աշակերտները ունեն ամենաբարձր ցուցանիշները քոլեջ ընդունվելու համար նախատեսված քննությունների արդյունքներով:

ԱՄՆ-ում դպրոցն ավարտածները կազմում են բնակչության 71,2 տոկոսը: Մինեսոտան այս ցուցանիշով առաջատարն է՝ 90,9%, իսկ Ֆլորիդան վերջին տեղում է՝ 58%: SAT-ի (ուսումնական ընդունակության թեստ) հանձման միջին գնահատականը 903 է: Նյու-Հեմփշիրն ունի ամենաբարձր ցուցանիշը՝ 932 միավոր, Հյուսիսային Կարոլինան ամենացածրը՝ 836 միավոր: Այն 22 նահագներից, որտեղ անցկացվել է ACT-ն (Ամերիկայի Քոլեջի Թեսթ), Վիսքոնսինի եւ Այովայի ուսանողները ամենաշատ միավորներն են հավաքել՝ 20.1, Միսիսիփիում ամենաքիչը՝ 15.9: ԱՄՆ-ում ACT-ի միջին ցուցանիշն է 48.6 միավոր:

Աղյուսակի տրամադրած 38 կատեգորիաներից կարելի է հետեւություններ եւ համեմատություններ անել: Թեսթերի արդյունքներով հաշված ուսումնական առաջադիմությունը կարելի է համեմատել ազգային փոքրամասնություն կազմող ուսանողների քանակի, աղքատության մեջ ապրող ուսանողների տոկոսը՝ մեկ անձի միջին տարեկան եկամուտի հետ:

Հաջորդող հոդվածներ

Հաջորդողներն այն հոդվածներն են, որոնք շարունակում են մեկ այլ հոդվածի թեման: Եթե ազգային կրթության կազմակերպությունը հաղորդում է, որ դպրոցն ավարտած աշակերտների թվից քոլեջ ընդունվողների քանակը նվազում է, այդ նյութով զբաղվող լրագրողը զանգահարում է տեղական դպրոցներ եւ նախաքոլեջային ուսումնական հաստատություններ՝ հաջորդողի համար տեղեկատվություն հավաքելու նպատակով: Հաջորդողները հաճախ տպագրվում են հիմնական հոդվածի հաջորդ օրը:

Եթե երկրի նախագահը Կոնգրեսի քննարկման է ուղարկել մի բյուջե, որով նախատեսված է կարիքավորներին տրամադրվող օգնության կրճատում, լրագրողները պետք է փորձեն պարզել դրա ունենալիք ազդեցությունը տեղացիների վրա:

Որոշ մարդիկ տանը նստած դրոշմանիշ են հավաքում, մյուսները մոդելային աերոպլաններ են թռցնում: Հոբբիների մեծ մասը բավականին անվտանգ է: Բայց կան մարդիկ, որ լեռներն են մագլցում: Ինչո՞ւ:

Այս հարցը հետաքրքրեց բազմաթիվ խմբագիրներին այն բանից հետո, երբ հունիսյան մի կիրակի օր Ռեյներ լեռան վրա 70 ֆուտ հաստություն ունեցող սառույցի տակ մնալով մահացան 11 լեռնագնացներ եւ ընդամենը մի քանի ժամ անց հինգ այլ լեռնագնացներ զոհվեցին, երբ նրանց խումբը Հուդ լեռան վրա մագլցելիս 2000 ֆուտ ցած գլորվեց: Լրագրողներին հանձնարարվեց գտնել տեղացի լեռնագնացների եւ նրանց պատմածները ողբերգության մասին լրատվական գործակալությունների հաղորդումների հետաքրքիր հաջորդող նյութ դարձան:

Հիմնական կետերը

- Իրադարձության ունեցած տեղական ազդեցությունը, դրա վերաբերյալ կարծիքները, դրա նկատմամբ վերաբերմունքը

- Այն իրադարձությունը, որի պատճառով լույս է տեսել հաջորդող հոդվածը

«Բոստոն Հերալդ Ամերիքընը» արագ արձագանքեց քաղաքային վարչակազմի ընդունած՝ քաղաքապետարանի աշխատողների հագուստ կրելու կանոնակարգմանը վերաբերող որոշմանը: Հենց որ կանոնակարգն ընդունվեց, «Հերալդ Ամերիքընը» լրագրողներին հանձնարարեց նոր կանոնակարգի վերաբերյալ հոդված գրել: Թերթը նաեւ մի լրագրողի հանձնարարեց իմանալ հագուստ ձեւավորողների կարծիքը դրա վերաբերյալ:

Եթե այս նոր հոդվածը լույս տեսներ մյուս օրը, այն կլիներ հաջորդող: Բայց քանի որ լրագրողին հաջողվեց արագ վերջացնել աշխատանքը, հոդվածը լույս տեսավ նոր կանոնադրության հետ միասին՝ նրա կողքին: Այս նոր հոդվածը այսպիսով դարձավ ուղեկցող՝ հիմնական հոդվածի համար:

Ուղեկցող հոդվածներ

Ուղեկցողը մի հոդված է, որը մեկնաբանում է կողքին տպագրված մեկ այլ հոդվածի որեւէ տեսակետ: Երբ Բոննի Բրիտը «Հյուսթոն Քրոնիքլի» համար մի հոդվածաշար էր գրում դյուրակառույց տներում ջերմամեկուսիչների օգտագործման վտանգների մասին, նա փորձեց իմանալ նման տներ կառուցող ընկերության կարծիքը: Այդ ընկերությունը դատի էր տրվել Տեխասում դյուրակառույց տներ գնած որոշ մարդկանց կողմից:

Բրիտը գտավ ընկերության փաստաբանին: Չնայած նա չցանկացավ պարզաբանումներ տալ, բայց Բրիտը փորփրեց նրա անցյալը եւ գտավ շատ հետաքրքիր փաստեր՝ նախ այն, որ փաստաբանը նախկինում մասնակցել էր շրջակա միջավայրը աղտոտող ընկերությունների դեմ հարուցված գործերի քննմանը, երկրորդ, նրա երկու թոռները հիվանդացել էին տուն կառուցելիս այդ նույն նյութն օգտագործելու հետեւանքով:

Ուղեկցող հոդվածի կարեւոր կետերը նույնն են, ինչ հաջորդողինը: Հիմանական հոդվածի թեման եւ դրա նկատմամբ վերաբերմունքը կամ պատասխանը գրվում են հոդվածի սկզբում եւ միասին:

Ամփոփող հոդվածներ

Ամփոփողը հաճախ օգտագործվում է մի քանի հոդվածները մեկի մեջ ամփոփելու համար: Ամփոփողը հիմնված է երկու կամ ավել հոդվածների նման տարրերի բացահայտմանը եւ դրա վրա հիմնված լիդ գրելուն:

Ամփոփողոները հաճախ գրվում են ավտովթարները լուսաբանելիս: Դրանք սովորաբար գրվում են տոներից կամ «ուիկենդներից» հետո կամ երբ վատ եղանակի պատճառով ավտովթարներ են պատահում:

Հիմնական կետերը

- Ընդհանուր տարրի վրա հիմնված լիդ
- Հերթով թվարկված պատահարները կամ իրադարձությունները
- Պատճառները, հետեւանքները, մեջբերումները, որոնք պետք է արտացոլվեն նյութի սկզբում, եթե բացատրում են իրողությունը:

Եղանակի մասին հոդվածներ

«Միս Այովա» մրցույթի հանդիսատեսները դուրս էին գալիս դահլիճից՝ մրցույթի երկրորդ տուրը դիտելուց հետո: Մեծ հերթ էր գոյացել եւ մարդիկ զրուցում էին: Բայց նրանք չէին խոսում «Միս Մուսկատինի» եզրափակիչ դուրս գալու հնարավորությունների կամ «Միսս Դյուբուկի»՝ մի քանի հազարանոց հանդիսասրահի առջեւ լողազգեստով դուրս գալու պատճառով շփոթմունքի մասին:

Նրանք դահլիճի պատուհաններից դուրս էին նայում, հետեւում էին ուժ հավաքող կարկտաբեր հողմին եւ զրուցում եղանակի մասին:

- Սա բավականին վնաս կհասցնի լոբուն, - ասաց մեկը, - երբ բանը հասնում է գործին, ապա նման քամին ավելի վատ է, քան կարկուտը:

Բոլորին հետաքրքրում է եղանակը՝ թե իր քաղաքում եւ թե մյուս տեղերում: Կալիֆորնիա մեկնող ճանապարհորդին հետաքրքրում է եղանակը Սան-Ֆրանցիսկոյում, Ֆլորիդայում ապրող ընտանիքը ուզում է իմանալ, թե արդյո՞ք Սուրբ Ծննդյան տոները կանցկանցնի +30′-ի տակ:

Մարդկանց մեծ մասը այլ քաղաքներում կամ նահանգներում բարեկամներ կամ հարազատներ ունի: Մենք անհանգստանում ենք, երբ Վաշինգտոնում փոթորիկ է լինում, արեւմտյան նահանգներում՝ ջրհեղեղ կամ հարավ-արմտյան նահանգներում երաշտը չորացնում է ցանքատարածությունները:

Թերթերն արձագանքում են այս անհանգստություններին: Նրանք եղանակի կես էջանոց գունավոր քարտեզ են տպագրում, իսկ ռադիոն եւ հեռուստատեսությունը հեղեղում են մեզ եղանակի մասին հաղորդումներով:

Եղանակի մասին հոդվածները հաճախ գրում են շաբլոն ձեւով: Բայց դա ճիշտ չէ: Երբ Նյու-Յորքում ուժեղ ձյուն եկավ, «Նյու-Յորք Թայմսի» համար գրող Մեյեր Բերգերը գրեց, թե բուքը «մեծ ձնակույտեր էր թողել, այնպես, որ լայն փողոցների վերջը հնարավոր չէր տեսնել, քանի որ ձյունը ծածկել էր երկնաքերներն ու աշտարակները սպիտակ ծածկոցով»:

«Նյու-Յորք Ուորլդ-Թելեգրամի» լրագրող Հ. Ալեն Սմիթը այդ կապակցությամբ գրեց երեւի թե ժուռնալիստիկայի մեկ տողանոց ամենատաղանդավոր հոդվածը. «Ձյուն, որին հետեւեցին փոքր տղաները՝ սահնակներով»:

Ինչպես տեսանք երկու տեսակի հոդվածներ կան եղանակի մասին՝ օրվա եղանակի տեսությունը եւ ավելի երկար նյութեր՝ արտասովոր եղանակի մասին: Ահա այդ երկու տեսակի հիմնական կետերը:

Հիմնական կետերը

- Եղանակի տեսությունը մոտակա 24 ժամվա համար
- Եղանակի տեսությունն ապագայում
- Ջերմաստիճանի, խոնավության եւ տեղումների վերջին տվյալները
- Ռեկորդային բարձր կամ ցածր ցուցանիշները (եթե կան)

Երբ եղանակը արտասովոր է, լրագրողը պետք է հաշվի առնի նաեւ հետեւանքները: Հիմնական կետերի կողքին նշված են նաեւ հնարավոր հետեւանքները.

- Զոհեր, վնասվածքներ, ունեցվածքին հասցված վնասը
- Տեղումների քանակը (երաշտի ժամկետը)
- Քամու ուժգնությունը, ձյան քանակը, ձնակույտերի բարձրությունը

- Սահմանված ռեկորդը (ները)
- Արտասովոր եղանակի նախատեսված տեւողությունը
- Հետեւանքները՝
  - Երթեւեկություն՝ փակված ճանապարհներ եւ կամուրջներ,
    պատահարներ
  - Ճանապարհորդություն՝ դադարեցված կամ պակասեցված
    օդային, ավտոբուսային, երկաթուղային կամ տեղական
    ճանապարհորդություններ
  - Փոստ՝ ուղարկելու կամ ստանալու հետ կապված
    փոփոխություններ
  - Կենցաղսպասարկում՝ էլեկտրականության,
    ջրի եւ հեռախոսի անջատումներ
  - Բիզնես՝ ցանքերին, տուրիզմին հասցված վնասներ,
    աշխատանքային գործունեության դադարեցում
  - Դպրոցներ՝ փակում կամ ժամերի փոփոխություն
  - Օգնություն՝ աղետի գոտու հայտարարում
    եւ կառավարական օգնություն:

Լրագրողները ձգտում են ցույց տալ արտասովոր եղանակի հետեւանքները՝ մարդկանց հետաքրքրող մանրամասները ներկայացնելով: Երբ արեւմտյան Մասաչուսեթսում հաստատվեց արտասովոր տաք եղանակ, «Բերքշիր Իգլի» թղթակիցը գրեց, որ «Նորդ սթրիթը ծաղկեց մանկական սայլակներով եւ շրջակայքում լսվում էր մոպեդների թխկթխկոցը»:

Ճանապարհորդող լրագրող

Որոշ լրագրողների աշխատանքի մի մասը շրջագայելն է: Մեմֆիսի օրաթերթը հյուսիսային Միսիսիպիում թղթակից ունի: Հեռուստակայաններն ունեն տարածաշրջանային թղթակիցներ: «Ասոշիեյթիդ Փրես» գործակալության կին թղթակից Թադ Բարտիմուսը հետեւում է մեկ միլիոն քառակուսի մղոն տարածքում տեղի ունեցող իրադարձություններին: Նրան են կցված Ռոքի լեռներում եւ Մեծ Հարթավայրում տեղակայված յոթ նահանգներ:

- Ես ճաշում եմ վեց տեղանոց բարերում, ուր պիցայի մեջ կարող է լինել կամ կապույտ պանիր կամ էլ ասենք սպանախ, քանի որ դա է այն ամենը, ինչ կա նրանց սառնարանում, - ասում է նա,

- քնում եմ շարժական մոթելում, որի անունն է «Ավազատուներ» եւ հաճախ հարցազրույց եմ վերցնում մարդկանցից, որոնք երբեք ինքնաթիռ չեն նստել:

Նրա տեղեկատվության աղբյուրները տարբեր են՝ քովբոյներից մինչեւ նահանգապետներ: Նա հարցազրույց է վերցրել ածխահատներից եւ 65 տարեկան մի հովիվից, որը տարվա հինգ ամիսը Բիգ Հոր լեռներում մենակ է անցկացնում:

Բարթիմուսը, որն ապրում է Դենվերում, հիմնականում ճանապարհորդում է մեքենայով: Մի օր, երբ նրա մեքենան փչացավ Կոլորադայում գտնվող Ալամոսա քաղաքի մոտ, նա ոտքով գնաց օգնության կանչելու եւ կաթոլիկ միաբանության քույրերի կողմից վարձակալված մի տան մեջ հայտնաբերեց Գվատեմալայից 50 փախստականի: Քույրերն անլեգալ կերպով նրանց Կենտրոնական Ամերիկայից տեղափոխում էին ԱՄՆ:

Բարտիմուսը սկսեց գրել հետագայում հանրահայտ դարձած այդ «սրբավայրի գործի» մասին:

Նա իրեն կցված տարածքում անընդհատ փոփոխություններ է գտնում: «Բենզալցման կայաններն ավելի քիչ են եւ ավելի ուշ-ուշ են հանդիպում: Անցած տարի իմ այցելած մահացող քաղաքում այս տարի երկու խանութ էլ է փակվել, վերադարձի ճանապարհին չես կարողանում գտնել քո ծանոթին, որովհետեւ նրա ամուսինը կորցրել է աշխատանքը, եւ նրանք ստիպված տեղափոխվել են»- գրում է նա Ամերիկայի գյուղական վայրերից դեպի քաղաքներ մարդկանց տեղափոխվելու վերաբերյալ:

Անմարդաբնակ տարածքները մեծանում են, ճանապարհները երկարում եւ նման այլ բաներ: Ուզես, թե չուզես, Ամերիկայում գոյություն ունի իր սեփական երրորդ աշխարհը:

Ամփոփում

Այս գլխում մենք նշեցինք տարբեր տեսակի հոդվածների հիմնական կետերը՝ այն անհրաժեշտ բաները, որոնք լրագրողը պետք է ընդգրկի իր հոդվածում՝ բավարարելու համար ընթերցողների հետաքրքրասիրությունը: Բայց պետք է գիտակցել, որ այս հիմնական կետերը միայն առաջին քայլերն են լրագրող դառնալու ճանապարհին:

Ընթերցողի հիմնական պահանջները բավարարելու հետ մեկտեղ լրագրողը պետք է նաեւ ցույց տա, թե ինչով է տվյալ հրդեհը կամ հանցագործությունը առանձնահատուկ: Միայն այդ հիմնական կետերի վրա հենվելը եւ միայն դա լուսաբանելը ընթերցողնե-

րին կզրկի իրականությունը սթափ գնահատելու հնարավորությունից, քանի որ մենք գիտենք, որ երկու իրադարձությունները չեն կարող բացարձակապես իրար նման լինել:

Մեկ ուրիշ հիշեցում՝ փորփրելով եւ երեւակայությունը օգտագործելով, լրագրողը կարող է թվացյալ սովորական իրադարձությունը դարձնել ավելի հետաքրքիր, քան թույլ է տալիս հիմնական կետերի թվարկումը: Այսինքն, լրագրողը պետք է այդ հիմնական կետերից այն կողմ նայի: Օրինակ՝ տասը տարի առաջ նահանգային եւ դաշնային բանտերում կային 400.000 բանտարկյալներ, այսօր այդ թիվը հասնում է 850.000-ի, ինչը հետեւանք է դատավորների վրա հասարակության ճնշմամբ՝ հանցագործներին ավելի խիստ վերաբերվելու առումով:

Այս հեղեղը, որի պատճառով բանտերում տեղ չի մնացել, հաղթահարելու նպատակով որոշ հանցագործներ տեղափոխվում են հանրակացարաններ եւ այլ ցածր անվտանգություն ունեցող վայրեր: «Հարթֆորդ Կուրանտի» թղթակիցներ Թոմ Պուլեոն եւ Ալան Քալիսոնը հայտնաբերեցին, որ Քոնեքթիքութի ցածր անվտանգությամբ բանտում պահվող մի մարդու հաջողվել էր փախուստ գործել, եւ նա հետագայում մարդ էր սպանել:

Մաս 4
Մասնագիտացում

Գլուխ 11
Հեռարձակվող նյութեր

Մուտք

Եթեր հեռարձակվող նյութերը գրվում են պարզ, ամենօրյա օգտագործվող լեզվով, երկխոսության ոճով: Եթեր հեռարձակվող նյութեր գրողները հնարավորին չափ պարզեցնում են բարդ իրադարձությունները, գրում են կարճ լիդ եւ հնարավորության դեպքում օգտագործում են ներկա ժամանակը: Երբ անհրաժեշտ է հղում կատարել ինչ-որ մեկին, ապա այն տեղադրվում է նախադասության սկզբում՝ որպեսզի հաղորդումը լսողը կամ դիտողը միանգամից տեղեկություն ստանա տեղեկատվության աղբյուրի մասին: Հեռուստա եւ ռադիո լրագրողները վերամշակում են լրատվական գործակալություններից ստացած նյութերը եւ դեպքի վայրերից հաղորդումներ վարում:

Հաղորդումներ դեպքի վայրից

Դելանոյում՝ Կալիֆորնիայի փոքր գյուղատնտեսական մի քաղաքում, օգոստոսյան մի առավոտ է: Սան-Ֆրանցիսկոյի «KRON-TV News» գործակալության հանձնարարությամբ Էմերալդ Յեհը եւ նրա օպերատոր Գարի Մերսերը երեք օր ճանապարհ են եկել՝ այստեղ հասնելու համար:

Յեհը հեռուստատեսությունում երեկոյան նորությունները վարող համահաղորդավար է, բայց նա տեղում նստողներից չէ: Հնարավորության դեպքում նա հանձն է առնում դեպքի վայրերից հաղորդումներ վարել: Այս հանձնարարությունը կապված է ֆերմաների բանվորների միացյալ արհմիության լեգենդար առաջնորդ Սեզար Չավեզի հացադուլը լուսաբանելու հետ:

- Չավեզը սկսեց իր հացադուլը մեկ ամիս առաջ,- ասում է Յեհը, - նա ձգտում է Կալիֆորնիական խաղողի սպառողների բոյկոտ հրահրել, որովհետեւ կազմակերպությունը պնդում է, թե տեղի ֆերմերները հինգ տեսակի միջատների դեմ թունաքիմիկատներ՝ պեստիցիդներ են օգտագործում, որոնք վտանգավոր են ֆերմայում աշխատողների եւ սպառողների առողջության համար:

Յեհը եւ նրա օպերատորը մշտական կապ ունեն արբանյակային կապ ապահովող «KRON» տիպի ավտոմեքենայի հետ, ինչը

նրանց հնարավորություն է տալիս իրենց նկարահանած նյութն ուղարկել հեռուստակայան, որտեղ այն մշակվում է: Արբանյակը նաեւ հնարավորություն է տալիս Չավեզի վիճակի մասին նկարահանած նյութն ուղիղ եթեր հեռարձակել:

Իր նյութերում Յեհը նկարագրում է պեստիցիդների ներկայացրած վտանգը, Ռոբերտ Ֆ. Քենեդիի երեխաների այցը, ցուցարարների ունեցած հաջողությունները:

Յեհը երեք հաղորդում է նկարահանում երկու օրում, եւ չնայած հացադուլը շարունակվում է, խմբագիրը հրահանգում է նրան հետ վերադառնալ Սան-Ֆրանցիսկո: «Դեռ ոչ» պատասխանում է Յեհը: Նա մի ուրիշ նյութ էլ է ուզում պատրաստել:

Մի օր առաջ Յեհը տեղական թերթում մի հոդված էր գտել՝ մոտակա Պորտերվիլ քաղաքում կատարվող փորձարկումների մասին: Քիմիական նյութեր արտադրող մի ընկերություն Զոլոն կոչված պեստիցիդի փորձարկումներ էր կատարում: Ըստ այդ հոդվածի՝ կասկած կար, որ այդ թունաքիմիկատի օգտագործման հետեւանքով նախորդ տարվա ընթացքում 78 աշխատողներ են հիվանդացել:

Փորձեր մարդկանց վրա

- Պեստիցիդն արտադրողները համոզված են, որ այն անվնաս է եւ ցանկանում են ապացուցել դա՝ Զոլոնով մշակված դաշտեր կամավորներ ուղարկելով, - ասում է Յեհը խմբագրին:

Յեհը ցանկանում է լուսաբանել այս փորձը: Խմբագիրը հավանություն է տալիս:

Պորտերվիլում նա հարցազրույց է վերցնում Զոլոն արտադրող ընկերության պաշտոնյաներից եւ զրուցում է նահանգի գյուղատնտեսությամբ զբաղվող պաշտոնյաների հետ:

- Ես ցանկանում էի իմանալ, թե ինչու է նահանգը ընդունելի համարում մարդկանց վրա փորձեր կատարելը եւ արդյոք մենք հետագայում կարո՞ղ ենք նման այլ փորձերի ականատես լինել, - ասում է Յեհը:

Հետո նա այցելում է այն դաշտերը, որտեղ աշխատողները հավաքում են Զոլոնով մշակված խաղողը: Նա ուզում է իմանալ, թե ովքեր են այդ կամավորները, ինչքան են նրանց վճարում, ինչու են նրանք մասնակցում այս փորձին եւ արդյոք նրանք մտահոգված են իրենց առողջությամբ:

- Ինձ պետք էր նաեւ նրանց նկարահանել, - ասում էր Յեհը:

Նյութի ուրվագծերը

Նախորդ օրը Յեհը խոսել էր պեստիցիդների մի մասնագետի հետ Զոլոնի հետ կատարվող փորձերի մասին:

- Նա շատ վրդովված էր, - ասում է Յեհը: Այս մեկնաբանությունը օգնում է նրան հավասարակշռել Պորտերվիլից ստացած իր նյութը, որտեղ նա միայն ընկերության կողմից հավաստիացումներ էր լսել պեստիցիդի անվնասության մասին:

«Գլխումս արդեն ուրվագծվել էր հաղորդման կառուցվածքը: Հեռուստատեսությունում երկու հասարակ կանոն կա՝ սկսիր քո ամենալավ նկարահանումից եւ պատմությունը պատմիր «սկիզբ - հիմնական մաս - վերջ» ձեւով: Իհարկե կան բացառություններ, բայց վերը նշվածը հետաքրքրություն է առաջացնում հեռուստադիտողի մոտ եւ նրան պարզ եւ հասարակ ձեւով ուղղորդում է ամբողջ հաղորդման ընթացքում»:

Նրա նյութի կառուցվածքը հետեւյալն է.

1. Հաղորդման սկզբում կամավորների նկարահանումները դաշտում եւ իր բացատրությունները, թե ովքեր են նրանք եւ ինչով են զբաղված:

2. Ընկերության բացատրությունները՝ փորձի վերաբերյալ

3. Դրա հակառակ կարծիքը

4. Ինչո՞ւ են աշխատողները կամավորագրվել եւ արդյո՞ք նրանք մտահոգված են

5. Ինչո՞ւ է նահանգը հավանություն տալիս մարդկանց վրա կատարվող փոձերին եւ արդյո՞ք սա սկիզբն է նման այլ փորձերի

6. Ավարտ, ուր նշվում է, թե Զոլոնի փորձն ինչ հետեւանքներ կարող է ունենալ պեստիցիդների օգտագործման համար:

Արդյունքը

Հաղորդումը համառոտ է, պարզ եւ բուն նյութին վերաբերող: Չնայած հեռահաղորդման համար գրված նյութերը նախատեսված են լսելու, դրանց նպատակը նույնն է ինչ տպագիր նյութերինը, որոնք ուղղված են տեսողական ընկալմանը, դրանք են՝ պարզություն, ճշտապահություն, ազնվություն եւ հավասարակշռություն, ներկայացման ազնվություն: Բայց տարբերություն կա տպագիր եւ հեռարձակվող նյութերի մեջ՝ այս սկզբունքների իրականացման հարցում:

Ունկնդիրների համար գրելը

Հեռարձակվող նորությունները բնութագրվում են որպես հիմնական կարճ նկարագիր տվողներ: Դրանք նախատեսված են հեռուստադիտողին կամ ռադիոլսողին տալու միայն իրադարձության ուրվագծերը: Կես ժամանոց նորությունները կարող են ամենաշատը ունենալ 20 նյութ, որոնք մի կերպ են տեղավորվում նորությունների համար նախատեսված 22-23 րոպեի մեջ: CBS-ի «News break» ծրագիրը 68 վայրկյանի մեջ տեղավորում է չորսից վեց նյութ: Մի անգամ դրանք նույնիսկ յոթն էին: Դա 10 վայրկյանից մի քիչ պակաս է յուրաքանչյուր նյութի համար, ամեն նյութը՝ մեկ-երկու նախադասություն: Բոլորը միասին՝ «News break» ծրագրի մեկ նորությունների շարքը պարունակում է մոտ 170 բառ, որը հավասարազոր է թերթի 8-10 սմ-անոց հոդվածի:

Այլ կերպ ասած, հասարակ վթարի մասին գրված հոդվածը ավելի շատ բառ է պարունակում, քան ամբողջ «News break» ծրագիրը: Հեռուստատեսային ավելի երկար նորությունների հաղորդումների մեծ մասը ավելի քիչ բառ է պարունակում քան նահանգապետ ընտրվելու մասին թերթի մի հոդվածը:

Կես ժամանոց նորությունների ծրագրի բոլոր նյութերն իրար հետ վերցրած չեն զբաղեցնի թերթի մեկ էջը:

Եթեր հեռարձակվող նյութ գրելու համար լրագրողը պետք է կարողանա փոքրացնել նյութը մինչեւ այն պարունակի միայն նորության փաստը: Հեռուստա կամ ռադիոլրագրողը պետք է ինքն իրեն տա հետեւյալ հարցերը՝ ի՞նչ պատահեց այստեղ, ո՞վ ասաց կամ արեց սա:

Պատասխանը՝ պարզ «ենթակա - ստորոգյալ - լրացում» ձեւով գրված, հենց նյութի հիմքն է:

Պարզություն

Լեզուն. հեռուստա եւ ռադիո լրագրողները օգտագործում են ամենօրյա խոսակցական լեզուն: Խոսակցական դարձվածքները եւ կրճատումները նույնպես ընդունելի են: Ոճը ոչ պաշտոնական է:

Միտքը. հեռուստա եւ ռադիո լրագրողները պարզեցնում են ամեն ինչ՝ փոքրացնելով նյութը մինչեւ մնա միայն հիմնական թեման կամ միտքը: Ունկնդիրը սովորաբար միանգամից տեղյակ է պահվում այդ թեմայի մասին: Երբեմն եթեր հեռարձակվող նյութը մինչեւ բուն թեմային անցնելը կարող է թեթեւ ներածություն

պարունակել: Դասատուների երկարատեւ գործադուլի ավարտի մասին նյութը կարող է սկսվել այսպես. «Դպրոցները կրկին բաց են»:

Ոճը. հեռուստա եւ ռադիո լրագրողները օգտվում են կարճ նախադասություններից կամ նույնիսկ դարձվածքներից: Հաղորդավարի համար հեշտ չէ կարդալ երկար նախադասությունները, եւ դրանք դժվար են ընկալվում ունկնդիրների կողմից: 25 բառից ավել պարունակող ցանկացած նախադասություն բաժանվում է երկու կարճ նախադասության: Նախադասության մեջ բառերի քանակի կրճատման ձեւերից մեկը ոչ անհրաժեշտ բառերից հրաժարվելն է:

Մի օգտագործեք ներածական դարձվածքներ եւ նախադասություններ: Նախադասության կառուցվածքը պետք է լինի «ենթակա-ստորոգյալ- լրացումներ» ձեւով:

Այս ամենը կարելի է ձեւակերպել հետեւյալ կերպ՝ օգտագործեք ամենօրյա խոսակցական լեզուն, պարզեցրեք բարդությունները, գրեք թեթեւ ներածություններ եւ կարճ նախադասություններ:

Ունկնդրին ուղղորդելը

Երկար լիդերը հոգնեցնում են ունկնդիրներին: Մեծածավալ նյութերը կարող են սկսվել մի ընդհանուր հայտարարությամբ:

Մի սկսեք նյութը անծանոթ մարդու անունով: Իսկ եթե ստիպված եք, ապա անունից առաջ նշեք նրա պաշտոնը կամ որեւէ ծանոթություն նրա մասին: Նյութը կարելի է սկսել այն մարդկանց անուններով, ովքեր, ըստ հեռուստալրագրող եւ լրագրության դասախոս Մերվին Բլոկի, ունեն «աստեղային որակ»: Դրանք են՝ նախագահը, Հռոմի պապը, նահանգապետները, սենատորները կամ կոնգրեսականները, ձեր քաղաքապետը:

Երբ Բլոկը մի նյութ էր գրում Ռոբերտ Մոզեսի մահվան մասին, նա հասկացավ, որ իր ունկնդիրների միայն մի մաս է նրան ճանաչում: Մոզեսը կառուցել էր Նյու-Յորքի երկնաքերներից մի քանիսը, ինչպես նաեւ քաղաք տանող եւ քաղաքից դուրս եկող բավականին թվով մայրուղիներ, բայց նա հասարակության ուշադրությունից երկար տարիներ հեռու էր մնացել: Եվ ահա թե ինչպես Բլոկը սկսեց իր մահախոսականը.

«Մի մարդ, որ ավելի շատ բան է կառուցել քան քան եգիպտական փարավոնները՝ Ռոբերտ Մոզեսը, մահացավ 92 տարեկան հասակում, Նյու- Յորքի արվարձաններից մեկում»:

Այստեղ բնութագիրը շատ գրավիչ է, եւ այդ պատճառով մարդիկ ուշադրություն կդարձնեն նյութին:

Հեռուստա եւ ռադիո լրագրողները խուսափում են ոչ միայն երկար եւ անծանոթ անուններով սկսող առաջաբաններից, այլեւ նրանցից, որոնք սկսվում են մեջբերումներով: Ունկնդիրը չի կարող տեսնել եւ լսել չակերտները եւ կարող է մտածել, որ բառերը պատկանում են լրագրողին:

Ահա «Ասոշիեյթիդ Փրես» գործակալության խորհուրդները հեռուստա եւ ռադիո լրագրողներին առաջաբանների վերաբերյալ.

- Ինչքան կարճ՝ այնքան լավ: Եթեր դուրս եկող նյութի առաջաբանի նպատակը պետք է լինի ունկնդրի ուշադրության գրավումը՝ ներկայացնելով նյութի բուն էությունը այդ պահի դրությամբ: Օրվա կարեւորագույն իրադարձությանը պետք չէ միաձուլել մի երկար ու մեծ նախադասության մեջ: Դրա փոխարեն ունկնդրին մի կարճ եւ գրավիչ պատճառ ներկայացրեք, որը կստիպի նրան լսել ձեզ:

Հղումներ

Ահա թե հղումներ կատարելու վերաբերյալ ինչ խորհուրդ է տալիս իր հեռուստա եւ ռադիոլրագրողներին «Ասոշիեյթիդ Փրես» գործակալությունը.

- Եթերում հղումները պետք է լինեն նույնքան պարզ, որքան տպագիր մամուլում: Բայց անվանումները պակաս պաշտոնական են եւ հղումները կատարվում են զրույցի ձեւով՝ սովորաբար ոչ թե նախադասության վերջում, ինչպես թերթերում, այլ նախադասության սկզբում:

Անհապաղություն

Հեռուստա եւ ռադիո լրագրողները առաջաբաններում հաճախ են օգտագործում ներկա ժամանակը: Դրա բացատրությունը շատ պարզ է: Եթեր հեռարձակվող նյութը նպատակ ունի ունկնդրի մոտ առաջացնել անհապաղության զգացում, ցույց տա, որ իրադարձությունը լուսաբանվում է հենց կատարվելու պահին:

Երբեմն ներկա ժամանակը սխալ է հնչում, եւ լրագրողը ստիպված է լինում օգտագործել անցյալ ժամանակը: Երեկոյան նորությունների ծրագրերը օրվա ընթացքում կատարված իրա-

դարձությունների մասին խոսում են անցյալ ժամանակով: Բայց հնարավորության դեպքում նախաբանը գրվում է ներկա ժամանակով:

Ամփոփում

Մենք տեսանք, որ եթեր հեռարձակվող նյութը գրվում է պարզ, խոսակցական լեզվով: Նախադասությունները կարճ են՝ սովորաբար «ենթակա- ստորոգյալ-լրացումներ» կառուցվածքով:

Ամեն բառ ունի իր նշանակությունը: Եթեր հեռարձակվող նյութը կարճեցվում է մինչեւ վերջին հնարավոր բառը: Նախադասությունները սկսելիս պետք չէ օգտագործել երկար դարձվածքներ եւ նախադասություններ: Եթե նշվում է տեղեկատվության աղբյուրը, ապա այն դրվում է նախադասության սկզբում: Օգտագործեք գործողություն ցույց տվող բայեր եւ հնարավորին չափ քիչ ածականներ ու մակբայներ:

Լրատվական գործակալություններից ստացված նյութերի մշակում

Չնայած հեռուստա եւ ռադիո կայանները ունեն անձնակազմ, որը նորություններ է հավաքում, բայց եթեր հեռարձակվող նորությունների մեծ մասը կայանը ստանում է դրսից: Աշխարհով մեկ եւ ԱՄՆ-ի մեծ քաղաքներում թղթակիցներ ունեցող հզոր ցանցային կայաններից բացի, մյուս կայանների մեծ մասը համաշխարհային, ազգային նորությունները եւ նահանգային ու տեղական նորությունների մեծ մասը ստանում է «Ասոշիեյթեդ Փրես» եւ « Յունայթեդ Փրես» գործակալությունների միջոցով:

Կայանների մեծ մասը բաժանորդագրվում է մի լրատվական գործակալության եւ օգտվում է նյութերից՝ հենց որ դրանք ստացվում են: Հզոր կայանները սովորաբար բաժանորդագրվում են եւ «Ասոշիեյթեդ Փրես», եւ «Յունայթեդ Փրես»-ի հիմնական ժապավենների, որովհետեւ իրականում այդ նյութերն ավելի շատ տեղեկատվություն են պարունակում, քան եթեր տրվող հաղորդումները: Կայանների լրագրողները մշակում են լրատվական գործակալություններից ստացված նյութերը եւ վերածում այն եթեր հեռարձակելուն հարմար հաղորդումների:

Հզոր կայանների կողմից լրատվական գործակալություններից ստացված նյութերի մշակումն ինքնուրույն իրականացնելու պատճառներից մեկն էլ այն է, որ կայանների տնօրենները գերադասում են, որ իրենց լրագրողներին հասնի նյութի բնագիրը՝ մինչեւ այն կմշակվի լրատվական գործակալության կողմից: Լրատվական գործակալության կողմից մշակումը կարող է տեղական ունկնդրի համար հետաքրքրություն ներկայացնող փաստը դուրս թողնել կամ անտեսել:

Նյութերը մշակվում են «Ասոշիեյթեդ Փրես» կամ «Յունայթեդ փրես» գործակալությունների կողմից՝ նորությունների ծրագրերի համար: Հաղորդավարը պատմում է ունկնդիրներին հենց այդ մշակված նյութերը, այլ ոչ թե ստացված տեսանյութը: Մշակված նյութերը, ըստ մասնագետների, չեն գրավում ունկնդիրներին, այդ պատճառով դրանք պետք է հնարավորին չափ կարճ լինեն: Մշակված նյութերից շատ քչերն են տեւում ավելի քան 20-30 վայրկյան, այսինքն դրանք պարունակում են 50-ից 75 բառ, ինչը համապատասխանում է թերթի մեկ պարբերությանը:

Նյութի նախապատրաստումը եթեր հեռարձակելուն

Ռադիոյով եւ հեռուստատեսությամբ եթեր հեռարձակվող նյութերը տարբեր ձեւերով են կազմվում: Ռադիոյով հեռարձակվող նյութը տպագրվում է այնպես, որ ամեն տողը պարունակի 45-50 նիշ: Ռադիոյի հաղորդավարի կարդալու արագությունից կախված ամեն տողը կարդալը տեւում է 3-4 վայրկյան: Իմանալով սա՝ հաղորդավարը կարող է, նայելով նյութին, ասել, թե ինչքան ժամանակ կտեւի այն կարդալը:

Հեռուստատեսային եթերի համար նյութ պատրաստելն ավելի բարդ գործ է: Ահա թե ինչպես է անում դա Բոստոնի «WBZ-TV»-ի հաղորդավար Լորեն Թյերին.

- Ես նյութը մուտքագրում եմ համակարգիչ, որը ավտոմատ կերպով նյութը գցում է էջի միայն աջ կողմի վրա: Այս կողմի վրա կան նաեւ նշաններ, որոնք հաղորդավարին հուշում են, թե որտեղ նա պետք է դադար առնի, որպեսզի միացվի տեսանյութը, եւ տեսանյութի ավարտին մնացած ժամանակը ցույց տվող մի գիծ, որպեսզի հաղորդավարն իմանա, թե երբ է այն ավարտվում, որ շարունակի կարդալը:

Էջի ձախ կողմում՝ ռեժիսորի համար նախատեսված նշումներն են:

Նյութը տպվում է եւ պատճենները տրվում են պրոդյուսերին, ռեժիսորին եւ հնչյունային օպերատորին: Հուշարար էջը ուղղակիորեն համակարգչի միջոցով բերվում է էկրանի վրա:

Ոճի կանոնները

Ներքոհիշյալ կանոնները երկար տարիներ է, ինչ օգտագործվում են հեռուստա եւ ռադիոլրագրողների կողմից՝ խուսափելու համար հաղորդավարին շփոթմունքի մատնելուց եւ օգնելու համար ունկնդիրներին իրենց լսածը արագ ընկալելու.

- **Թվերը** պետք է գրվեն տառերով
- **Հապավումներ** չպետք է օգտագործվեն
- **Պաշտոնները** պետք է դրվեն անուններից առաջ
- Կազմակերպությունների եւ գործակալությունների անվանումների սկզբնատառեր չպետք է օգտագործվեն, եթե դրանք հանրահայտ չեն
- **Մեջբերումները** պետք է պարզորեն նշեն աղբյուրը՝ հետեւյալ կերպ. «Ինչպես ասաց սենատորը...», «Ըստ նախագահի ...», «Վկայակոչելով վարչապետի ասածը...»:

Հեռուստառադիոլրագրող դառնալու համար անհրաժեշտ պայմաններ

Ըստ Բլոկի, նրանց համար, ովքեր ցանկանում են դառնալ հեռուստառադիո լրագրող, կարեւոր է լարված իրադրության մեջ լավ աշխատելու ունակությունը: Բայց միայն լավ գրելը բավական չէ: «Լրագրողը պետք է շատ բաներ իմանա: Նա պետք է իմանա, թե ինչ է կատարվում ամբողջ աշխարհում: Նա նաեւ պետք է իմանա, թե ինչպես է ամեն ինչ աշխատում՝ կառավարությունը, քրեական դատավարության գործընթացը, շրջանային խորհուրդները, նահանգային կառավարությունը:

Լրագրողի գլխում տեղավորված համակարգիչը պետք է պարունակի միլիարդավոր բիթ տեղեկություններ, որովհետեւ լրագրողին անհրաժեշտ կլինի մեծ քանակի տեղեկատվություն ստանալ եւ անել դա համարյա ենթագիտակցորեն»:

Հեռուստատեսային այն լրագրողների համար, ովքեր տեսանյութեր են պատրաստում, կարեւոր է նյութը արագորեն եթերին

նախապատրաստելու ունակությունը: Սենսացիոն ռեպորտաժներ վարելիս հեռուստալրագրողները հաճախ ուղիղ եթեր են դուրս գալիս:

Այդ անելու ամենալավ ձեւը, ըստ «NBS-TV»-ի վետերան լրագրող Ջոն Չենսալորի, ասելիքի վերաբերյալ արագ կերպով պատկերացում կազմելն է: «Պետք չէ մտքում ուրվագծել ամբողջ նյութը,- ասում է նա,- բայց լիդը եւ վերջաբանը պետք է հստակ պատկերացնել»: Ըստ նրա՝ նախապատրաստման վրա ծախսված մի քանի րոպեի արդյունքը կլինի «շատ լավ կազմակերպված նյութը»:

Իմացությունն ու գրելու եւ կազմակերպչական ունակությունները կարեւոր են, բայց հաջողակ լինելու համար նախ եւ առաջ պետք է լավ լրագրող լինել: Լավ լրագրող լինելը օգնում է լավ գրել: Լավ գրելը չի կարող օգնել թույլ կամ ծույլ լրագրողին:

Երբ Ցինցինատիի «WCPO-TV» կայանն իմացավ, որ մի մարդու սպանության մեջ մեղադրվող սանիտարը առնչություն ունի հիվանդանոցում տեղի ունեցած 20 այլ մահվան դեպքերին, ապա որոշեց հետաքննել այդ դեպքը: «Մենք շատ եւ շատ զգույշ աշխատեցինք,- ասում է գլխավոր տնօրեն Թերրի Քոննելին,- մենք շատ ամիսներ ծախսեցինք դրա վրա»:

Արդյունքը եղավ կեսժամանոց մի նյութ՝ հիմնված կայանի երեք ամսվա հետաքննության վրա: Լրագրողները ապացուցեցին սանիտարի կապը այդ մահվան դեպքերի հետ: «Ոչ մեկը այդքան չէր վազվզել, այնպես որ մենք բոլորից երեք ամիս առաջ էինք ընկել»,- ասում էր նորությունների տնօրեն Ջեք Քահալանը:

Նորությունների արդյունքը եղավ երդվյալների դատարանի հետաքննությունը, եւ շուտով սանիտարը մեղավոր ճանաչվեց 24 սպանության մեջ եւ ապացուցվեց նրա կապը 70 այլ մահվան դեպքերի հետ:

«Մահվան Հրեշտակը», ինչպես անվանեցին նրան, դատապարտվեց երեք ցմահ բանտարկության:

Գլուխ 12
Տեսողական լրագրություն

Մուտք

Ֆոտոլրագրողն օգտագործում է լուսանկարչական ապարատը՝ մեզ ներկայացնելու համար պատկերներ, որոնք տեղեկատվություն են տալիս մարդկանց, իրադարձությունների եւ գաղափարների վերաբերյալ: Ֆոտոլրագրողը տեսնում եւ պատկերում է աշխարհը:

Նորությունների եւ հատուկ լուսանկարները ճշմարտացի են, հետաքրքիր եւ օգտակար տեղեկատվություն պարունակող: Դրանք կարեւորություն կամ ազդեցություն ունեն: Դրանք կարող են լինել ուսուցողական կամ զվարճալի: Ֆոտոլրագրողները գիտեն մարդկանց, գիտեն, թե ինչպես են նրանք ապրում, աշխատում եւ խաղում: Նրանց լուսանկարները արտացոլում են այս զգացմունքայնությունը: «Լուսանկարով պատմողը» նաեւ իր «զինանոցի» մասնագետն է, որը գիտի թե որ օբյեկտիվով, լուսանկարչական ապարատի փականակի ինչ արագությամբ, օբյեկտիվի ինչքան բացվածքով պետք է նկարվի յուրաքանչյուր պատկեր:

Լուսանկարը համապարփակ է

Հնագույն ժամանակներից մարդիկ օգտագործում էին պատկերներն իրենց մտքերը եւ փորձը արտահայտելու համար՝ որսորդները քարանձավների պատերին փորագրում էին կենդանիների կամ կավե ամանեղենի վրա՝ սգացող կանանց պատկերներ: Ժամանակակից կանայք եւ տղամարդիկ նույնպես միլիոնավոր նկարներ են ստեղծում: Մենք դրանք նույնպես պատերից ենք կախում: Մենք դրանք նաեւ ուղարկում ենք մեր ընկերներին եւ բարեկամներին: Նկարները պատմում են մեր պատմությունը: Դա ունիվերսալ լեզու է:

Նկարները մեծացնում են մեր ունակությունները: Նրանք թույլ են տալիս տեսնելու իրադարձություններ, որոնք վաղուց անցել են պատմության գիրկը, ճանապարհորդելու դեպի այնպիսի վայրեր, ուր մենք երբեք չենք այցելի, զգալու ուրիշների հույզերը: Դրանք հաղորդում են զգացմունքները եւ ստեղծում տրամադրություն:

Այսօրվա «նկարով պատմողները» աշխատում են օրաթերթերում, ամսագրերում եւ հեռուստակայաններում: Նրանց կոչում են ֆոտոլրագրողներ, եւ նրանք միավորում են լրագրողի եւ լուսանկարչի ունակությունները: Մինչ նորություններ գրողը փորձում է իրադարձության էությունը պատկերել բառերով, ֆոտոլրագրողը օգտագործում է լուսանկարչական ապարատը՝ պատկերելու համար նույն իրադարձության էությունը՝ տեսողական իմաստով: Փոքր օրաթերթերում եւ շաբաթաթերթերում լրագրողներն իրենց հոդվածները պատկերազարդելու նպատակով իրենք են լուսանկարում:

Լուսանկարները, տեղեկացնելով հանդերձ, նաեւ բացահայտում են իրադարձությունը: Նրանք մեզ հնարավորություն են տալիս ապրել մյուս մարդկանց կյանքով, տեսնել աշխարհի մյուս ծայրին կատարվող իրադարձությունները: Նրանք կապում են մեզ թաքնված առարկաների հետ՝ այնքան փոքր կամ արագ, որ մեր աչքն ու միտքը չեն կարող նկատել դրանք իրենց բնական վիճակում: Նրանք կանգնեցնում են մեզ համար պարուհու թռիչքի պահը, պտղի շարժումը մոր փորում, մրցավազքի ավարտի պահը:

Ֆոտոլրագրողի լուսանկարը մեզ հնարավորություն է տալիս հասկանալ եւ զգայականորեն միաձուլվել իրադարձությանը: Ֆոտոլրագրողը, օգտագործելով իրադարձությունն ու պահը, նկարում պատկերվածների արտահայտությունները, ժեստերը եւ մարմնի լեզուն, հաղորդակցվում են մեզ հետ մեկ այլ, անձնական մակարդակի վրա: Երբեմն նորությունների լուսանկարիչը իր աշխատանքի շնորհիվ խորհրդանշում է պատմական ժամանակաշրջանի հարցերն ու հիմնախնդիրները:

Լավ լուսանկարի բաղադրամասերը

Լավ լուսանկարը նախ եւ առաջ իրադարձության ճշմարտացի պատկերումն է: Ֆոտոլրագրողը հաղորդում է իրադարձության պատկերը: Լավ լուսանկարը նաեւ հետաքրքիր է եւ օգտակար տեղեկատվություն պարունակող, երբեմն այն նաեւ ուսուցողական է: Այն կարող է նաեւ զվարճալի լինել: Լավ լուսանկարիչը ազդեցություն է թողնում իր նկարով, նրա նկարն իր մեջ հաղորդագրություն է պարունակում: Այն տեխնիկապես գրագետ է եւ գեղագիտորեն ճիշտ: Այն ունի հետաքրքրություն հարուցող իր կիզակետը:

Լավ լուսանկարիչը ճիշտ է օգտագործում լույսը եւ ստվերը: Լավ լուսանկարիչն ունի տրամաբանություն եւ ռիթմ:

Որոշ լուսանկարիչների աշխատանքները մեզ մոտ նույն տպավորություններն են թողնում, ինչ որ կթողնեին երգը, սիմֆոնիան, նովելը կամ կարճ պատմվածքը: Պեռլ Հարբորումի՝ «Արիզոնա» ռազմանավի հոգեվարքը պատկերող լուսանկարը ցույց է տալիս նվաստացված ԱՄՆ-ի եւ հզոր հակառակորդի հետ կյանքի եւ մահու պայքարի սկիզբը:

Արթուր Ռոթշտեյնի լուսանկարը, որտեղ պատկերված են մի ֆերմեր եւ նրա տղաները, որոնք վազում են պտտահողմի միջով, դարձավ երկրի ֆերմերների խորհրդանիշը, երբ ավազահողմերը երկրի հարավ-արեւմտյան մասը վերածեցին ավազուտների: Բոբիկ տղաները, որոնցից մեկը ձեռքերով պաշտպանում է աչքերը ավազահողմից, եւ նրանց հայրը՝ իր տձեւ հագուստով եւ կորացած մարմնով, պատմում են մեզ այդ պատմությունը: Նման լուսանկարները տեղյակ են պահում հասարակությանը գյուղական շրջանների վերականգնման անհրաժեշտության մասին եւ դրդում Կոնգրեսին ընդունելու նոր օրենսդրություն ֆերմերների վերաբերյալ:

Մորիս Բերմանի ծնկի եկած ամերիկյան ֆուտբոլիստի լուսանկարը արտացոլում է խաղը եւ սեզոնը: Ֆուտբոլիստի հուսահատ, կորացած մարմինը եւ նրա տանջված դեմքը պատմում են մեզ, որ նա գիտի՝ իր նախկին արագությունն ու ճարպկությունն այլեւս չկան, որ իր մարմինը այլեւս չի կարող կատարել նույն ֆունկցիաները, ինչ այն կատարում էր մինչ այդ:

Ֆոտոլրագրողի հնարքները

Ֆոտոլրագրողը օգտագործում է մարդկանց եւ իրադարձությունները ընկալելու ու իր տեխնիկական ունակությունները՝ մեկ պահի մեջ ամփոփված իր հաղորդակցությունը տեսողական պատկերի մեջ մեզ փոխանցելու համար: Իմացությունը, «թե ինչպես են մարդիկ ապրում, աշխատում եւ խաղում,- ասում է Ռոթշտեյնը,- հնարավորություն է տալիս ֆոտոլրագրողին պատկերելու իրադարձությունները եւ գաղափարները «արտասովոր՝ տեսողական ձեւով»:

Այս իմացությունը պետք է հենված լինի զգայության՝ լուսանկարվող օբյեկտի ինքնության բացահայտման կարողության վրա:

- Ամեն մի լուսանկարիչ ցանկացած պայմաններում դառնում է տվյալ իրադարձության մասնակիցը, որ փոխարինում է լուսանկարը դիտողներին, - ասում է Ռոչեսթրի Տեխնոլոգիայի ինստիտուտի լուսանկարչական ֆակուլտետի դասախոս Մայքլ Գեյսինգերը: Թերթում տպագրված կնոջ լուսանկարը, որը լուրերի է սպասում Իլինոյսի Ցենտրալիա քաղաքում գտնվող հանքահորում մնացած մարդկանց մասին «մի զգացմունքի օրինակ է, որը լուսանկարիչը պետք է ապրի, որպեսզի կարողանա իմաստալի լուսանկար նկարել»,- ասում է Գեյսինգերը:

Լուսանկարը պատկերում է մի կնոջ վիշտը եւ լարվածությունը: Բայց այն արտահայտում է բոլոր նրանց մտքերը, ովքեր վախով են նայում դեպի անիմանալին: Կտրուկ եւ դաժան լույսը, «խղճալի ձեռքերը, որ չգիտեն թե ինչ են անում մեկը մյուսի հետ», ինչպես ասում է Ինդիանայի համալսարանից Կլոդ Քուքմենը, աչքերը, որոնք կենտրոնացած են սարսափելի տեսարանի վրա, որը ինչպես նրա առջեւ է, այդպես էլ նրա մտքում, այս ամենը նախապատրաստում են մեզ գետնի տակ տեղի ունեցած արհավիրքին: Պայթյունը խլել էր 111 հանքափորների կյանքը:

Պարունակություն եւ վերաբերմունք

- Ամեն մի լուսանկար միավորում է իր մեջ ամենաքիչը երկու բան՝ պարունակություն եւ լուսանկարելու իմացություն,- ասում է «AP Wirephoto»-ի, «Լուիզվիլ Թայմսի» եւ «Մայամի Հերալդի» գրաֆիկայի եւ լուսանկարների խմբագիր Քուքմենը: - Բարձրորակ լուսանկարը լուսանկարչի իմացության (թե ինչ է նա ուզում ասել) եւ այդ ասելու համար կատարման տեխնիկայի օգտագործման ունակության արդյունք է:

Ֆոտոլրագրողներն իրենց տրամադրության տակ տպավորիչ տեխնոլոգիաներ ունեն:

- Բայց այս տեխնոլոգիաները օգտագործվում են միայն ավելի շատ ազատություն ձեռք բերելու համար, լուսանկարելու կատարողական տեխնիկան այնքան պարզեցնելու համար, որպեսզի ֆոտոլրագրողները կարողանան կենտրոնանալ թեմայի՝ գաղափարի եւ իրադարձության վրա,- ասում է Ռոթշտայնը:

Տեխնիկան եւ տեխնոլոգիան իրենք առանձին ամեն ինչ չեն: Ռեժիսոր Ֆրից Լանգը բնութագրում է կատարողական տեխնիկան հետեւյալ կերպ՝ «լուսանկարչական ապարատի ամեն մի շարժում պետք է պատճառ եւ հիմնավորում ունենա»:

- Լուսանկարելու իմացությունը ընդգրկում է աչքի ընտելացումը եւ միջոցների տեխնիկական մասի տիրապետումը՝ իրականությունը տեսողական հետաքրքիր լուսանկարի վերափոխելու համար,- ասում է Քուքմենը: Այս գործընթացը ներառում է ֆոտոլրագրողի՝ կարեւորի ընտրության, ավելորդությունների կրճատման եւ լույսի, կոմպոզիցիայի, լուսանկարչական ապարատի դիրքի եւ հեռավորության վերաբերյալ որոշում կայացնելու կարողությունները:

Ինչպես լրագրողն է օգտագործում ժամանակակից տեխնոլոգիաները՝ իր մտքերին տպագիր ձեւ տալու համար, այնպես էլ ֆոտոլրագրողը ունի տարբեր ապարատներ եւ օբյեկտիվներ, ժապավենների եւ ժամանակակից լաբորիատորիաների մի ամբողջ շարան՝ որոնք օգնում են նրան պատմելու նյութը լուսանկարի ձեւով:

Աշխատանքի տեխնիկական մասին տիրապետելն էական է: Լույսի, օպտիկայի եւ մութ սենյակի քիմիական պրոցեսների իմացությունը նույնքան անհրաժեշտ է, ինչքան սարքավորումների աշխատանքին ծանոթ լինելը: Այս տեխնիկական հմտությունը օգնում է ֆոտոլրագրողին՝ ստեղծելու բարձրորակ լուսանկարներ:

Սկսելը

- Պարզությունը ներգործուն է ցանկացած տիպի հաղորդակցման ժամանակ: Լուսանկարիչ դառնալու համար էլ լավ կլինի այդպես սկսել: Սկսեք այն բաների պատկերումից, որոնք Ձեզ հետաքրքրում են: Ամենից հաճախը այդպիսին լինում են մարդիկ, - ասում է Քուքմենը: Նա առաջարկում է փորձել լուսանկարել նախ մեկ մարդու, հետո փորձել ժապավենի վրա որսալ երկու հոգու փոխազդեցությունը:

- Հենց որ դուք սովորեք նրանց ստիպել հանգստանալ, որպեսզի նրանք դադարեն անհանգստանալ, որ լուսանկարչական ապարատը նրանց գեշ կամ ծիծաղելի կպատկերի, սկսեք կենտրոնանալ արտահայտությունների, մարմնի, լեզվի, միջավայրի, հագուստի եւ այլ միջոցներով հնարավորին չափ շատ պատմելու վրա: Փորձեք պատկերել հույզերի եւ փորձառության մի ամբողջ շարան: Ամբողջական պատմություն պատմելու համար համոզվեք, որ ձեր բոլոր լուսանկարներում գործողություն կա: Ամեն մի պատկերի համար տեսողական մի բայ պետք է լինի,- ասում է Քուքմենը:

Սկսնակի համար սովորելը սկսվում է ոչ թե մետրերով ժապավեն նկարելուց եւ մութ սենյակում ժամեր անցկացնելուց: Սկիզբը, առաջին պահը ներքին է՝ մտածել, զգալ եւ նայել մինչեւ փականակը սեղմելը: Իմացիր, թե ինչ ես ուզում ցույց տալ, ասում են մասնագետները, եւ հետո տես, թե ինչպես ես դու դա պատկերացնում քո մտքում: Հարցրու ինքդ քեզ, թե ի՞նչ ես ուզում, որ քո լուսանկարը ասի:

Աշխատելը

Հանձնարարությունը կատարելու համար ֆոտոլրագրողը հինգ քայլ պետք է կատարի՝ նա մի գաղափար կամ պատկերացում է մշակում, որոշում է համապատասխան օբյեկտիվը, փականակի արագությունը եւ օբյեկտիվի բացվածքը, ընտրում է լուսանկարելու համար հարմար իր տեղը, որոշում է, թե երբ է պետք նկարել, կատարում է մութ սենյակի աշխատանքները, սրանք ընդգծում են նյութի էությունը, թեման:

Լավ լուսանկար ստանալու համար ֆոտոլրագրողը պետք է ուշադիր եւ մտածված կերպով կատարի այս բոլոր քայլերը: Սենսացիաների դեպքում մտածելը եւ որոշելը շատ արագ է կատարվում, համարյա բնազդաբար:

Ֆոտոպատմվածքներ

Ֆոտոպատմվածքն ընդհանուր թեմայով լուսանկարների մի շարան է, որը պատկերում է որեւէ իրադարձություն կամ պատմում է որեւէ անձի կամ տեղի մասին մի պատմություն: Մինչ առանձին նկարները կարող են տպավորիչ լինել, նկարների շարքը կարող է բացահայտել նրբություններ եւ ցուցադրել զանազանություններ, ինչը չի կարող անել առանձին նկարը:

Սովորաբար ֆոտոպատմվածքը կառուցվում է մեկ ամենալավ լուսանկարի շուրջը, այն լուսանկարի, որը նկարագրում կամ որոշում է թեման: Լուսանկարիչը նկարելու ընթացքում այն իր մտքում է պահում՝ միշտ պատրաստ իրադրության, ժեստի կամ արտահայտության, որը խորհրդանշում է տվյալ իրադարձությունը:

Ֆոտոլրագրողը պետք է հասկանա, որ լուսանկարների տարբերությունը կարեւոր է հետաքրքիր ցուցադրման համար: Այս նպատակին հասնելու համար լուսանկարիչը կարող է օգտագործել լայն օբյեկտիվ մի լուսանկարի համար եւ տելեֆոտոօբյեկ-

տիվ՝ մյուսի: Լուսանկարները կատարվում են տարբեր դիրքերից:

Մոտիկից լուսանկարները, որոնք կենտրոնանում են նյութի որեւէ ասպեկտի վրա, բազմազանություն են մտցնում տեսարանի մեջ: Այս մոտիկից լուսանկարված տեսարանները, որոնք կոչվում են մանրամասնություններ, ուղղված են մոտ հարաբերություններ ստեղծելուն օրաթերթի կամ ամսագրի ընթերցողի եւ լուսանկարվող առարկայի միջեւ:

Լուսանկարիչը կարող է տարբեր լուսային տեխնիկաներ կիրառել՝ պատուհանների, սենյակի լույսերը, ուրվապատկերները: Լուսանկարները կտրվում, փոքրացվում են համաձայն նախագծի, որը ընդգծում է բուն թեման եւ ներկայացնում լուսանկարները տարբեր չափերով եւ ձեւերով: Հիմնական թեման պարունակող լուսանկարը տեղադրվում է գերիշխող դիրքում՝ եւ շրջապատվում է օժանդակ լուսանկարներով:

Ֆոտոխմբագիր

Այս ֆոտոպատմվածքների համար լուսանկարների կտրտումը եւ տեղադրումը կատարվում է լուսանկարների խմբագրի կողմից, որը նաեւ հանձնարարություններ է տալիս լուսանկարիչներին: Մեծ թերթերում եւ ամսագրերում խմբագիրը լուսանկարիչների մեծ խմբից մասնագետ ընտրելու հնարավորություն ունի: Որոշ լուսանկարիչներ լավ են աշխատում, երբ ինքնուրույն են փնտրում որեւէ սենսացիա, մյուսները բարձր որակի գործեր են կատարում, երբ կոնկրետ առաջադրանք են ստանում:

Խոշոր թերթերում եւ ամսագրերում առաջադրանքի ժամանակ լուսանկարիչները ուղեկցում են լրագրողներին: Հնարավորության դեպքում լուսանկարիչը եւ լրագրողը խորհրդակցում են կատարվելիք նկարահանումների շուրջ, բայց հաճախ լուսանկարիչը մենակ է աշխատում, հատկապես՝ երբ որեւ է նյութ է փնտրում՝ լուսանկարելու համար:

Խմբագիրն է որոշում, թե որ լուսանկարը պետք է տպագրվի: Խմբագիրը պետք է կարողանա ընտրել այն լուսանկարը, որը լավագույն ձեւով կարտահայտի իրադարձությունը: Միեւնույն ժամանակ խմբագիրը պետք է կարողանա դիմադրել դրամատիկ լուսանկար ընտրելու գայթակղությանը, որը կարող է աղավաղել իրադարձության ճշգրիտ լուսաբանումը:

Թերագնահատման դասական օրինակ

Ասում են, թե ժուռնալիստիկան պատմություն է, որը շտապում է: Այդ պատճառով էլ երբեմն հիմնականը կամ պատմականը անտեսվում է: Այդպես պատահեց Մորիս Բերմանի լուսանկարի հետ, որում պատկերված էր «Նյու-Յորք Ջայընթս» ամերիկան ֆուտբոլի թիմի խաղացող Յ.Ա. Թիթլը: Խաղի ժամանակ նա բախվեց հակառակորդ թիմի պաշտպանի հետ եւ ծնկի իջավ: Մինչ խաղը շարունակվում էր, Բերմանը միայն Թիթլին էր նկարում:

- Սաղավարտը պոկվել էր նրա գլխից, եւ նրա գլխից արյուն էր հոսում: Թիթլը չէր կարողանում կանգնել: Նա պարզապես մնացել էր ծնկի եկած վիճակում: Հետո Թիթլը կախեց գլուխը, կարծես մի ինչ-որ շատ լուրջ բան էր պատահել, - պատմում է Բերմանը:

Սակայն այդ լուսանկարը մի կողմ դրվեց խմբագրի կողմից եւ դրա փոխարեն տպագրվեց մեկ այլը, որում իր թիմակիցներով շրջապատված խաղացողին դուրս էին բերում խաղադաշտից: «Իմ հավատը չէր գալիս»,- հիշում էր Բերմանը:

Ծնկի եկած Թիթլի լուսանկարը տպագրվեց այլ թերթում եւ բազմաթիվ մրցակիցների արժանացավ: Այժմ այն կախված է Ամերիկյան ֆուտբոլի թանգարանում:

Լուսանկարչական ապարատը

Ֆոտոլրագրողների մեծ մասը օգտագործում են 35 մմ լուսանկարչական ապարատ՝ մեկ ոսպնյականոց ռեֆլեքս (RLS)՝ արագ օբյեկտիվով: Նույն ոսպնյակը օգտագործվում է եւ տեսարանը դիտելու, եւ լուսանկարելու համար, այսինքն տպագրված լուսանկարը լինելու է հենց այնպիսին, ինչպիսին մենք այն տեսնում ենք լուսանկարչական ապարատի դիտանցքից: Լուսանկարչական ապարատը սովորաբար իր մեջ ունի լուսապահպանման հաշվիչ, որը չափում է լույսի ուժգնությունը տվյալ տեսարանում եւ թույլ է տալիս լուսանկարչին՝ որոշելու լուսանկարը նկարելու ձեւը: Որոշ լուսանկարչական ապարատներ ավտոմատացված են այնպես, որ լույսի անհրաժեշտ քանակությունը իրենք են ավտոմատ կերպով որոշում:

Բացվածքը

Օբյեկտիվի բացվածքը ազդում է ժապավենին հասնող լույսի քանակի վրա: Օբյեկտիվի բացվածքը չափվում է «f-ստոպ» կոչվող թվերով: Փոքր թվերի բացվածքը ավելի մեծ եւ ավելի շատ լույս է ներս թողնում քան մեծ թվերի ժամանակ: f 1,4-ը 2 անգամ ավելի շատ լույս է թողնում ներս, քան f 2-ը: Ամեն մի դիրք թույլ է տալիս ներս թողնել նախորդի կեսի չափ լույս, գոյություն ունեն հետեւյալ դիրքերը՝ f 1,4; 2; 2,8; 4; 5,6; 8; 11; 16; 22; 32; 45:

Ժապավենին հասնող լույսի քանակը վերահսկող մյուս տարրը փականակի արագությունն է:

Փականակի արագությունը

Փականակի արագությունը ազդում է օբյեկտիվի բաց լինելու ժամանակի վրա: Փականակի բաց լինելը հաշվվում է վայրկյանի տասնորդական մասերով: «15» եւ «30» նշանները վերաբերվում են համապատասխանաբար 1/15 եւ 1/30 վայրկյանին: «B» նշանը թույլ է տալիս լուսանկարչին բաց պահել փականակը, քանի դեռ փականակի կոճակը սեղմված է:

Ճիշտ քանակի լույս ներս թողնելը կախված է օբյեկտիվի բացվածքի եւ փականակի արագության համակցումից: Քանի որ լուսանկարիչների աշխատանքի մեծ մասը կատարվում է վատ լուսավորված տեղանքում, ապա փականակի արագությունը սովորաբար դրվում է 125-ի, իսկ օբյեկտիվի բացվածքը՝ «f 2.8»-ի կամ «f 4»-ի վրա: Փականակի 125 եւ 250 արագությունները կարող են չորսալ ակնթարթը եւ հնարավոր է, որ անհրաժեշտ լինի օգտագործել 500 կամ 1000 արագությունները: Այդ դեպքում բավականաչափ լույս ներս թողնելու համար օբյեկտիվի բացվածքը պետք է մեծ լինի՝ «f 1.4» կամ դրան մոտ: Բայց լայն բացվածքի դեպքում կորչում է տեսադաշտի խորությունը, հեռու պատկերները աղավաղվում են: Այսպիսով լուսանկարիչը ինքը պետք է որոշի, թե որ լուսանկարվող օբյեկտը ինչ որակի պետք է լինի, եւ գնա համապատասխան փոխզիջումների եւ հարմարեցման:

Փոխազդեցություն

Լուսանկարիչը միշտ ստիպված է լինում հարմարեցումներ կատարել, ինչն ընդգրկում է նաեւ փոխազդեցության գաղափա-

ը: Քանի որ օբյեկտիվի բացվածքը եւ փականակի արագությունը կիսում կամ կրկնապատկում են ժապավենին հասնող լույսի քանակը, նրանք կարող են հարմարեցվել իրար հետ՝ լուսանկարչի նպատակին հասնելու համար: Եթե բացվածքը «f 4» է եւ 1/125 վայրկյան արագություն, եւ լուսանկարիչը ցանկանում է մեծ արագություն ունեցող շարժում պատկերել, ապա փականակի արագությունը պետք է դրվի 250-ի վրա, որը ներս կթողնի 125 արագության ներս թողած լույսի կեսը: Սա հավասարակշռելու համար օբյեկտիվի բացվածքը պետք է փոխվի «f 2.8»-ի, որը կրկնակի անգամ ավելի շատ լույս է ներս թողնում, քան «f 4»-ը:

Բայց «f 2.8»-ի լուսանկարի խորությունը ավելի քիչ է, քան «f 4»-ինը եւ եթե խորությունը կարեւոր է նկարի համար, ապա «f-ստոպը» պետք է թողնել «f 4»-ի վրա եւ փականակի արագությունը՝ 125-ի, ինչը կարող է հանգեցնել շարժման աղոտ պատկերմանը: Լուսանկարիչը պետք է ինքը որոշի, թե ինչ է ուզում, որ իր նկարը ցույց տա:

Օբյեկտիվները

Օբյեկտիվները հաճախ դասակարգվում են կիզակետի երկարությամբ՝ նորմալ, երկար եւ կարճ: 50 մմ օբյեկտիվը համարվում է նորմալ, քանի որ այն մոտ է մարդու տեսողությանը: Երկար օբյեկտիվը՝ 100 մմ եւ ավել, հայտնի է որպես տելեֆոտո օբյեկտիվ: Այս օբյեկտիվը մոտեցնում է հեռու առարկաները եւ փոքրացնում է տեսարանը: Ինչքան երկար է օբյեկտիվը, այնքան մեծ է խոշորացումը եւ նեղ է տեսողության անկյունը: Կարճ օբյեկտիվը հայտնի է որպես լայնանկյուն օբյեկտիվ: Այն թույլ է տալիս տեսարանի ավելի մեծ մասն ընդգրկել, քան մյուս օբյեկտիվները:

Ինչքան կարճ է կիզակետի երկարությունը, այնքան մեծ է լուսանկարվող տեսարանը եւ այնքան փոքր են լուսանկարվող առարկաները: Լուսանկարիչը կարող է մոտեցնել կամ հեռացնել լուսանկարչական ապարատը կամ փոխել օբյեկտիվները՝ ցանկալի արդյունքին հասնելու նպատակով: Երբեմն ամենապարզ բանը օբյեկտիվը փոխելն է: Բայց ամեն օբյեկտիվ ունի իր սահմանափակումները, ինչպես նաեւ առավելությունները:

Նորմալ օբյեկտիվ

Նորմալ օբյեկտիվը հաճախ պատրաստվում է օբյեկտիվի առավելագույն բացվածքի հնարավորությամբ, ինչը թույլ է տալիս

նկարահանել լույսի քիչ քանակի առկայության դեպքում: Այս դեպքում հեռու առարկաները փոքր են երեւում: Ուղիղ լուսանկարչի առջեւ 47′ անկյան տակ ընկած առարկաները ժապավենի վրա չեն արտացոլվում:

Երկար օբյեկտիվ

Այս օբյեկտիվով նկարահանելու դեպքում հեռու առարկաների չափերը մեծացվում են, բայց նկարահանվող տեսադաշտը օբյեկտիվի երկարությանը համապատասխան փոքրանում է՝ 85 մմ-ի դեպքում 29′, 200 մմ-ի դեպքում 12′, 1000 մմ-ի դեպքում 2,5′: Բացի այդ ինչքան երկար է կիզակետի երկարությունը, այնքան աղավաղվում է տեսարանի խորությունը: Քանի որ խոշոր պատկերի վրա ազդում է ձեռքի նույնիսկ թեթեւ շարժումը, երբ լուսանկարչական ապարատը ձեռքում բռնած են նկարում, ապա անհրաժեշտ է փականակի արագությունը մեծացնել: Օբյեկտիվի երկարությանը համապատասխան պետք է օգտագործել ավելի մեծ փականակի արագություն՝ հաշվի առնելով, որ 200 մմ օբյեկտիվի դեպքում փականակի արագությունը պետք է լինի 1/250 կամ ավելի արագ:

Կարճ օբյեկտիվներ

Այս օբյեկտիվները հարմար են բազմության մեջ նկարելու համար, որտեղ լուսանկարիչը մոտ է տեսարանին: Ինչքան կարճ է կիզակետի երկարությունը, այնքան մեծ է տեսարանի խորությունը: Լուսանկարիչը կարող է օգտագործել լայնանկյուն օբյեկտիվ եւ համոզված լինել, որ հեռու մարդիկ եւ առարկաները կգտնվեն կիզակետում: Բայց լայնանկյուն օբյեկտիվները մոտ առարկաները անհամապատասխան ավելի մեծ են ցույց տալիս, քան նույն չափի այլ առարկաները, որոնք գտնվում են հետին պլանում:

Այլ օբյեկտիվներ

Լուսանկարիչները բազմաթիվ այլ օբյեկտիվներ են օգտագործում.

Zoom («Զում») - այս օբյեկտիվն իր մեջ պարունակում է տարբեր կիզակետի երկարություն ունեցող օբյեկտիվներ: «Zoom» օբյեկտիվների առավելությունն այն է, որ դրանք օգտագործելիս

կարիք չկա փոխել օբյեկտիվները: Բայց այս օբյեկտիվները պրակտիկ չեն շատ վատ լուսավորման դեպքում:

Macro («Մակրո») - այս օբյեկտիվն օգտագործում են մոտիկից լուսանկարելու համար: «Macro»-ն չի աղավաղում օբյեկտիվին մոտ գտնվող առարկաների պատկերները:

Fisheye («ֆիշայ») - այս օբյեկտիվի տեսողական անկյունը մեծացված է, որոշ օբյեկտիվների մոտ այն հասնում է 180՛-ի: Օբյեկտիվին մոտ կամ հեռու առարկաները աղավաղվում են: Նկարը սովորական քառանկյունու փոխարեն կլոր է ստացվում:

Տարբեր իրադրությունների համար տարբեր օբյեկտիվներ են պետք: Քանի որ երկար օբյեկտիվները սեղմում, փոքրացնում են տարածությունը, տելեֆոտո օբյեկտիվները հաճախ օգտագործվում են առարկաների միջեւ եղած հեռավորությունը փոքրացնելու համար: Եթե լուսանկարվողը մոտ է լուսանկարչական ապարատի օբյեկտիվին, ապա օգտագործման դեպքում պատկերվողի օբյեկտիվին մոտ դիմագծերը (քիթը եւ ճակատը) անհամապատասխանելիորեն մեծ կստացվեն: Միջին երկարության օբյեկտիվները (85-135 մմ) ավելի լավ արդյունք կունենան: Բացի այդ, երկար օբյեկտիվները թույլ են տալիս լուսանկարչին նկարահանվող առարկայից ավելի հեռու լինել, ինչը փոքրացնում է լուսանկարվողի անհանգստությունը:

Տեսարանի խորությունը

Տեսարանի խորությունը հեռավորությունն է ֆոկուսի մեջ գտնվող ամենամոտ եւ ամենահեռու առարկաների միջեւ: Տեսարանի խորության վրա կարող են ազդել լուսանկարչի ձեռքի տակ եղած միջոցներից երեքը.

1. Օբյեկտիվի բացվածքը՝ ինչքան փոքր է «f-ստոպի» թիվը, այնքան կարճ է տեսարանի խորությունը,

2. Կիզակետի երկարությունը՝ ինչքան կարճ է կիզակետի երկարությունը, այնքան մեծ է տեսարանի խորությունը,

3. Օբյեկտիվի եւ առարկայի միջեւ եղած տարածությունը՝ ինչքան հեռու, այնքան մեծ է տեսարանի խորությունը:

Լուսանկարչական ապարատների մեծամասնությունը օբյեկտիվների վրա ունի տեսարանի խորության սանդղակ, որը լուսանկարչին ցույց է տալիս յուրաքանչյուր «f-ստոպի» համար այն տարածությունը, որը կլինի ֆոկուսի մեջ: Օգտագործելով այս սանդղակը՝ լուսանկարիչը կարող է դիտմամբ որոշ տեսարաններ

ֆոկուսից դուրս թողնել, ինչպես ասենք՝ աղավաղելով հետին պլանը, կամ տեսարանի որոշ պահեր ճշգրիտ պատկերել:

Դրեյքի համալսարանի լուսանկարչության դասախոս, «Պուլիտցերյան» մրցանակի հաղթող ֆոտոլրագրող Դոն Ուլտանգը խորհուրդ է տալիս լուսանկարի տարբեր տարրերը պարզ նկարելու նպատակով հարմար հեռավորությունն ընտրելու համար օգտագործել «մեկ երրորդի օրենքը».

1. Մոտավոր հաշվարկեք ամենամոտ եւ ամենահեռու առարկաների միջեւ եղած տարածությունը:

2. Այդ տարածությունը բաժանեք երեք մասի:

3. Այդ թվին ավելացրեք լուսանկարչական ապարատի եւ ամենամոտ առարկայի միջեւ եղած տարածությունը եւ ստացված թիվը տեղադրեք օբյեկտիվի տեսարանի խորության սանդղակի վրա:

Օրինակ՝ եթե ամենամոտ առարկան 5 ֆուտ հեռավորության վրա է, իսկ ամենահեռուն՝ 20, ապա տարբերությունը 15 ֆուտ է: Այն բաժանելով երեքի ստանում ենք 5 ֆուտ: Դրան գումարում ենք ամենամոտ առարկայից մեր հեռավորությունը՝ 5 ֆուտ եւ ստանում ենք 10 ֆուտ: Ուրեմն սանդղակի վրա պետք է տեղադրել 10 ֆուտ հեռավորություն:

Երբ ստիպված եք արագ, առանց նախապատրաստվելու նկարել, Ուլտանգը խորհուրդ է տալիս սանդղակի վրա դնել 12-13 ֆուտ հեռավորություն: Այս «մեկ երրորդի օրենքը» չի գործում, երբ ստիպված եք աշխատել լայն բացվածքով օբյեկտիվով վատ լուսավորվածության պայմաններում:

Ֆիլտրեր

Սեւ ու սպիտակ ժապավենները այնպես չեն արտացոլում գույները, ինչպես մարդու աչքերը: Գեղեցիկ կապույտ երկինքը՝ բաց երկնագույն ամպերով, հաճախ լուսանկարի վրա լվացված սպիտակ գույնի է երեւում:

Այս դեպքում ֆիլտրը ավելի բնական լուսանկար ստանալու հնարավորություն կտա:

Սեւ ու սպիտակ ժապավենների համար նախատեսված ֆիլտրը ուղղում է լուսանկարի կոնտրաստը: Համապատասխան ֆիլտրի՝ դեղինի, գազարագույնի կամ կարմիրի օգտագործումը լուսանկարի վրա կպատկերի ամպերը: Դեղին-կանաչ ֆիլտրը հարմար է դրսում դիմանկարներ նկարելու համար, քանի որ այն բնականին կնմանեցնի մաշկի գույնը եւ դեմքի արտահայտությունը ճիշտ կներկայացնի: Սենյակում լավ լուսավորվածության

դեպքում կանաչ ֆիլտրը նույն կերպով կաշխատի: Ուլտրամանուշակագույն ֆիլտրը օգտագործվում է ծովափին նկարահանումների ժամանակ: Այն կլանում է ուլտրամանուշակագույն ճառագայթները, եւ բնապատկերը մաքուր եւ պարզ է երեւում: Այն նաեւ մառախլապատությունը կվերացնի: Դրամատիկ տպավորության համար կարելի է օգտագործել կարմիր ֆիլտրը, քանի որ այն մուգ ֆոնի վրա սպիտակ գույնը ավելի սպիտակ է ցույց տալիս:

Երբ լուսանկարիչը պարզապես սենսացիա է որոնում, ֆիլտրերն անհրաժեշտ չեն: Բայց երբ կոնկրետ առաջադրանք է դրված եւ բավականին ժամանակ կա այն կատարելու, ֆիլտրերի օգտագործման արդյունքում հետաքրքիր ու դրամատիկ լուսանկարներ կստացվեն:

Ֆոտոժապավեն

Ֆոտոժապավենները տարբերակվում են իրենց արագությամբ՝ լույսի նկատմամբ զգայունակությամբ: Արագ ժապավենները մինչեւ ASA 3200 արագություն ունեն: Ինչքան արագ է ժապավենը, այնքան քիչ ժամանակ եւ լույս է պահանջվում պատկերն արտացոլելու համար: Արագ ժապավենները լուսանկարչին հնավորություն են տալիս լուսանկարել վատ լուսավորված տեղանքում, բայց տպելուց հետո դրանց վրա որոշ հատիկավորություն եւ պատկերի կոնտրաստի ու պարզության պակասություն է լինում: Դանդաղ կամ միջին արագության ժապավենները ավելի շատ մանրամասնություններ են ցույց տալիս:

Որոշ դեպքերում նույնիսկ ամենաարագ ժապավենները բավականաչափ արագ չեն լինում: Լուսանկարիչները կարող են ժապավենի արագությունը հասցնել 12500-ի՝ բարձր լարման երեւակիչ օգտագործելով:

Ֆոտոլրագրողի խորաթափանցությունը

Ժապավեններն ավելի ու ավելի արագ են դառնում, պահանջվում է միայն նշան բռնել եւ նկարել: Ամեն ամիս նոր լուսանկարչական ապարատներ ու նոր օբյեկտիվներ են հայտնվում: Թվում է, թե լուսանկարչության զարգացումը վերջ չունի: Բայց չնայած դրան, ամենահիշարժան լուսանկարների որոշ մասը նկարվել է

ամենապարզ սարքավորումներով, նույնիսկ հին տեսակի լուսանկարչական ապարատներով, որոնց մի մասն այնքան մեծ էր ու ծանր, որ դրանք տեղափոխում էին բեռնակիր կենդանիներով:

Լավ լուսանկարի ամենակարեւոր տարրը, հայտնի է, լուսանկարիչն է: Դեռեւս չի ստեղծվել ոչ մի մեխանիզմ, որը կարողանա ժամանակի իրադարձություններն ու դեմքերը տեսնել այնպիսի պարզությամբ ու որը կարողանա այնպես փոխանցել այդ խորաթափանցությունը, ինչպես մարդիկ:

- Լուսանկարչական ապարատը սարսափելի ներգործություն ունի չարիքը բացահայտելու գործում, - ասում է ժուռնալիստիկայի պատմության մասնագետ Ֆրենկ Լյութեր Մոտը, - այն մեր ժամանակների ամենալավ խաչակիրն է: Մտածեք ցանկացած չարաշահման մասին՝ սոցիալական, տնտեսական կամ քաղաքական, եւ պարզ ու ճշմարիտ լուսանկարները միանգամից կհայտնվեն մեր աչքերի առաջ՝ նկարագրելու այդ չարիքը:

Լուսանկարիչները շարունակում են արտահայտել հասարակության առջեւ դրված խնդիրները: Նրանք նկարագրում են եւ յուրաժամը, եւ հավերժականը:

Կոտրված հայելին

Լուսանկարը նկարագրում են որպես իրականության հայելի կամ հայելի, որը հիշողություն ունի: Բայց նոր տեխնոլոգիաները կարող են ստիպել լուսանկարին ստել:

Լուսանկարիչները համակարգչային գրաֆիկայով եւ թվային շտկմամբ (ռետուշով) կարող են ստանալ իրենց ցանկացած արդյունքը:

«Նեշնլ ջեոգրաֆիկի» կազմի վրա տպագրված նկարի տպավորությունը մեծացնելու նպատակով երկու եգիպտական բուրգեր իրար էին մոտեցվել: «Ռոլինգ Սթոունը» «Մայամի Վայսի» աստղ Դոն Ջոնսոնի լուսանկարի վրայից վերացրել էր ատրճանակը եւ պատյանը: Ամառային օլիմպիադայի նկարների շարքը տպագրելիս «Օրանջ Քաունթի Ռեջիսթր»-ը բոլոր լուսանկարներում երկնքի գույնը փոխեց գրավիչ կապույտի (թերթը 1984 թ. խաղերի լուսանկարներով լավագույն լուսաբանման համար ստացավ «Պուլիտցերյան մրցանակ»): «Մի օր Ամերիկայի կյանքից» լուսանկարների գրքի (որում զետեղված են ԱՄՆ-ում մի օրվա ընթացքում նկարահանված լուսանկարներ) կազմի լուսանկարը ավելի դրամատիկ է դարձվել այն բանի պատճառով, որ պատկերված քովբոյին իր ձիու հետ միասին բարձրացրել էին լեռան գագաթը եւ մե-

ծացրել էին լուսնի չափերը: Իր կազմերից մեկի համար «Փոփյուլար Սայնսը» մի ինքնաթիռի լուսանկարը տեղադրել էր մյուսի հետին պլանում:

Փոփոխությունները հնարավոր են դարձել սքաների օգնությամբ: Սքաներով նկարը հանելուց հետո այն կարող է պահվել համակարգչի հիշողության մեջ եւ հետագայում այն կարելի է տեղադրել մեկ այլ պատկերի վրա կամ կարելի է նրան փոփոխությունների ենթարկել:

Իրականությունը փոփոխելու էթիկան

Որոշ ֆոտոխմբագիրներ պաշտպանում են լուսանկարների փոփոխման պրակտիկան, բայց մյուսները դա համարում են ոչ բարոյական:

- Ես չգիտեմ՝ ճի՞շտ է դա, արդյոք, թե ոչ, - ասում է «Մի օր Ամերիկայի կյանքից» գրքի կազմի լուսանկարը խմբագողը, - ես միայն գիտեմ, որ դրա պատճառով գիրքը ավելի լավ է վաճառվում:

Մյուսներին անհանգստացնում են նոր տեխնոլոգիաները: Ջեք Քորնը՝ «Չիկագո Թրիբյունի» լուսանկարների խմբագիրը, ասում է, թե իր կարծիքով այն, ինչ կատարվում է, բարոյապես սխալ է:

- Այն լուսանկարը, որը մենք ճանաչում ենք որպես փաստի արձանագրություն, երեք կամ հինգ տարի հետո կարող է այլեւս նույնը չլինել, - ասում է «Սաքրամենթո Բիի» լուսանկարների խմբագիր Ջորջ Վեդդինգը:

- Եթե սա է ապագան, - ասում է «Նյու-Յորք Թայմսի» լուսանկարիչ Էնդի Գրյունդբերգը, - ապա թերթերի եւ ամսագրերի ընթերցողները հավանաբար կսկսեն նորությունների լուսանկարները ընդունել որպես պատկերազարդումներ, այլ ոչ թե հաղորդումներ, քանի որ նրանք կհասկանան, որ այլեւս չեն կարող տարբերել բնական նկարը փոփոխվածից:

Ոչ մի վատ բան չկա ապագա քաղաքի պատկերը նկարելու մեջ: Բնական է, որ դա հորինված է: Բայց աննկատելի փոփոխությունները իսկապես սպառնում են ճշմարտությանը, ժուռնալիստիկայի հիմնական տարրին:

- Չպետք է խարդախություն անել միայն այն պատճառով, որ տեխնոլոգիաները մեզ նման հնարավորություն են տալիս, - ասում է «Լոս-Անջելես Թայմսի» գրաֆիկական խմբագիր Բրայան Ստեֆանսը:

Տանը սովորելու նյութեր

Ֆոտոլրագրողները սկսնակներին խորհուրդ են տալիս լուսանկարել սովորելու համար լուսանկարներ ուսումնասիրել: Դեռ քոլեջի ուսանող եղած ժամանակ Մայքլ Օ'Բրայենը ուսումնասիրում էր «Լայֆ» ամսագրի նկարները՝ փորձելով պարզել, թե ինչ խնդիրներ են ունեցել լուսանկարիչները եւ ինչպես են նրանք այդ խնդիրները լուծել: Հետագայում Օ'Բրայենը ինքը դարձավ «Լայֆի» լուսանկարիչը: Մի նկարչության դասատու խորհուրդ է տալիս օգտագործել «Տարեկան լուսանկարներ» («Photography Annual») հանդեսը, որն ամեն տարի տպագրվում է «Փոփյուլար ֆոտոգրաֆի» ամսագրի խմբագիրների կողմից: Նա խորհուրդ է տալիս ուսանողներին նայել լուսանկարներին եւ որոշել, թե ի՞նչ է ուզեցել ասել լուսանկարիչը, արդյոք լուսանկարը նախապես պլանավորվա՞ծ էր, թե՞ ոչ, ի՞նչ լույսի տակ է այն նկարվել, ինչո՞ւ է ընտրվել հենց այս տեղը տվյալ տեսարանը լուսանկարելու համար, ի՞նչ օբյեկտիվ է օգտագործվել եւ ինչո՞ւ: Հանդեսի վերջում լուսանկարիչները նկարագրում են իրենց լուսանկարները՝ սարքավորումները, ֆոտոժապավենը, լուսավորությունը, օբյեկտիվի տվյալները:

Գլուխ 13
Գովազդ

Մուտք

Գովազդը վաճառողին եւ գնորդին հանդիպեցնում է միմյանց: Այն օգնում է վաճառողներին մրցակցել շուկայի մի մասի համար՝ խրախուսելով մարդկանց փորձել նոր արտադրանք, խորհուրդ տալով նրանց գնել նույն արտադրանքը կամ մեկ այլը: Գովազդների մեծամասնությունը արդյունք է մի պրոցեսի, որն իր մեջ ընդգրկում է.

Հետազոտություն՝ դիտարկումներ, հարցազրույցներ, հետազոտվող խմբեր, որոնք օգնում են գովազդողին հասկանալու սպառողի վարքագիծը:

Տեղադրում՝ ունկնդիրների եւ թեմայի կամ կոնցեպցիայի ընտրություն՝ մրցակիցների նկատմամբ արտադրանքի կամ ծառայության առավելությունը ցույց տալու նպատակով:

Տեղեկատվության միջոցի ընտրությունը՝ այն տեղեկատվության միջոցի ընտրությունը, որը դիտում, լսում կամ կարդում է լսարանը, որին ուղղված է գովազդը:

Գովազդի պատրաստումը՝ տնօրենների, սցենարիստների, լուսանկարիչների եւ դերասանների համատեղ աշխատանք:

Գոյություն ունի այսպես կոչված «երեքի օրենքը»՝ գովազդեք գնելու պատրաստ, ցանկացող եւ հնարավորություն ունեցող մարդկանց համար: Օգտագործեք տեղեկատվության միջոցները նրանց գրավելու համար:

Համոզելու արվեստը

Գովազդով եւ հասարակական կապերով զբաղվող անձնակազմերը փորձում են մեզ համոզել ինչ-որ բան անելու՝ գնելու այս ֆիրմայի ջինսը, այն ատամի մածուկը, լավ վերաբերվելու այս թեկնածուին, գնահատելու այն կազմակերպության աշխատանքը եւ այլն:

Չնայած արտաքին նմանությանը, գովազդը եւ հասարակական կապերի ծառայությունը էապես տարբերվում են: Գովազդողը ժամանակ եւ տեղ է գնում՝ հասարակության հետ շփվելու հա-

մար: Հասարակական կապերի ծառայությունն աշխատում է ավելի աննկատ, վարագույրի հետեւում: Մարտին Մեյերը ասում է, թե «գովազդողը պետք է իմանա , թե քանի մարդու հետ է շփվում տեղեկատվության միջոցներով, հասարակական կապերի աշխատողը պետք է իմանա, թե քանի մարդու հետ է շփվում տեղեկատվության միջոցներում»:

Ջեյմս Վեբբ Յանգը՝ գովազդային պիոներներից մեկը, որի կարծիքը մինչեւ այժմ հաշվի է առնվում, ասում է, որ գովազդը հինգ ձեւերով է վաճառողին եւ գնորդին հանդիպեցնում միմյանց.

1. Արտադրանքը կամ ծառայությունը մարդկանց համար ծանոթ դարձնելով:

2. Հիշեցնելով մարդկանց արտադրանքի կամ ծառայության մասին:

3. Մարդկանց շրջանում տարածելով արտադրանքի կամ ծառայության մասին նորությունները:

4. Հավանական սպառողների իներտությունը հաղթահարելով:

5. Արտադրանքին այնպիսի որակում տալով, որն այն չունի (օրինակ՝ սպորտային մեքենան ինքնին գրգռիչ չէ: Բայց եթե ինչ-որ մեկը այն վարելիս գրգռվում է, որովհետեւ դիտել է համապատասխան գովազդը, ապա ստացվում է, որ գովազդը մի որակ է ավելացրել արտադրանքին, որը այն նախկինում չի ունեցել):

Օրաթերթի գովազդի բաժինը

Հաջող գովազդը թիմի ընդհանուր աշխատանքի արդյունք է: Լինի դա Այդահոյի Թվին Ֆոլսի «Թայմս-Նյուս»-ում տպագրված կահույքի խանութի գովազդ, թե հեռուստատեսությամբ տրված «Քենթուկիի Տապակած Ճտի» գովազդ՝ հիմունքները նույնն են:

Այդահոյի օրաթերթում գովազդով զբաղվող անձնակազմը բաժանված է 5 թիմի, եւ յուրաքանչյուր թիմ զբաղվում է մի քանի գործերով: Թիմը բաղկացած է երկու վաճառողներից եւ երկու դիզայներներից: Վաճառողները, որոնց կոչում են գովազդային ներկայացուցիչներ, աշխատում են գովազդը պատվիրողների հետ: Նրանք միասին նախագծում են ամսվա գովազդի ծրագիրը:

- Գովազդը պատվիրողը մեզ գաղափարներ է տալիս, - ասում է գովազդային գործակալ Լինդա Միլլերը, - հետո մենք աշխատում ենք դիզայներների հետ՝ մշակելով գովազդի մոտավոր պատկերը, եւ քննարկում ենք այն գովազդը պատվիրողի հետ: Եթե նրան դուր է գալիս աշխատանքը, նա միանգամից վճարում է:

Աշխատանքը գովազդային գործակալությունում ավելի բարդ է, բայց հիմնականում նույնն է: Եկեք այցելենք աշխարհի ամենամեծ գովազդային գործակալություններից մեկի՝ «Յանգ ընդ Ռուբիքեմ» -ի Նյու Յորքի Մեդիսոն ավենյուի վրա գտնվող գրասենյակը:

Գովազդային գործակալություն

Գովազդային գործակալությունում աշխատանքը բաժանվում է չորս մասի՝ ըստ համապատասխան խմբերի:

Պատասխանատվություն՝ պատվիրատուին գործակալ է կցվում, որը օգնում է նրան որոշել գովազդի նպատակը եւ մշակել գովազդի ծրագիր: Գործակալը գովազդը պատվիրողի եւ գործակալության միջեւ կապող օղակի դեր է կատարում:

Հետազոտում՝ գործակալությունը վերլուծում է սպառողի կամ օգտագործողի բնույթը՝ ուսումնասիրությունների, խմբերի հետ աշխատանքների եւ հետազոտությունների միջոցով:

Ստեղծագործում՝ այս թիմը, որը կազմված է գրողից եւ դիզայներից, մշակում եւ նախագծում է ապագա գովազդը:

Տեղեկատվության միջոց՝ ընտրվում է համապատասխան տեղեկատվության միջոցը:

Գործակալության աշխատողները միասին փնտրում են «Բոզել Էյջընսիի» ռազմավարական նախագծերի տնօրեն Լարրի Չիագորիսի ասած «առաջընթաց գաղափարը»՝ նոր մոտեցում, որը «շուկայում դրական տեղաշարժերի կբերի»:

Պատասխանատվություն

Նյու-Յորքի «Յանգ ընդ Ռուբիքեմ» գործակալության գործակալի օգնական Դեւիդ Ֆլեմիսթրն ասում է, որ իր աշխատանքի հիմնական մասը պատվիրատուին օգնելն է՝ որոշելու մարդկանց այն խումբը, ում ուղղվելու է գովազդը:

- Հնարավոր չէ բոլորին բավարարել ձեր արտադրանքով եւ ծառայություններով, այնպես որ՝ մենք փորձում ենք գտնել այն մարդկանց, ում կհետաքրքրի տվյալ առաջարկը, - ասում է նա:

- Հաճախ պատվիրատուն ձգտում է գտնել դեպի իր արտադրանքի կամ ծառայության վաճառքը տանող ամենակարճ ճանապարհը: Դա հասկանալի է, բայց միշտ չէ, որ դա ամենալավ ճանապարհն է լինում գովազդի համար:

Ֆլեմիսթրը բացատրում է պատվիրատուին, որ արտադրանքը պետք է համապատասխանի գովազդում հնչած իր որակական ցուցանիշներին: Սպառողը կարող է մեկ անգամ փորձել ձեր արտադրանքը, բայց եթե այն չհամապատասխանի տրված խոստումներին, ապա սպառողը նորից կսկսի գնել այն արտադրանքը, որը գնում էր մինչ այդ:

Ֆլեմիսթրն ասում է, որ ինքը գովազդելու համար օգտագործում է նույն մրցակցության փորձը, որն ինքը օգտագործում էր ռեգբի խաղալիս՝ «Դու ստիպված ես կանգնել մրցակիցներիդ առջեւ եւ ցուցադրել քո հնարավորությունները»,- ասում է նա: Պրեզենտացիան այն հետազոտման արդյունքն է, որը որոշում է սպառողներին եւ նրանց բնավորությունը, շուկայում գոյություն ունեցող մրցակցությունը եւ այլ գործոններ:

Հետազոտում

Սովորաբար գնորդները ընտրության հնարավորություն ունեն արտադրանք կամ ծառայություն գնելու հարցում: Փորձեք անցնել սուպերմարքեթի միջով եւ կտեսնեք լվացքի փոշիների շարքեր, մրսածության դեմ պայքարող հազարավոր դեղանյութեր կամ մազերի խնամքի համար նախատեսված արտադրանքի դարակներ: Իրականում այդ արտադրանքները փաթեթավորումից, գնից եւ գովազդի ձեւից բացի այլ հատկանիշներով համարյա չեն տարբերվում:

Վերջին մեկ տարվա ընթացքում հազի եւ մրսածության դեմ դեղամիջոցներ արտադրողները 48 նոր արտադրանք են շուկա հանել: Այս արտադրատեսակները 85 գույնի եւ չափի են եւ ունեն մոտ 2,4 միլիարդ ԱՄՆ դոլարի գին: Այս դեղամիջոցների մեծ մասի բաղադրությունը նույնն է:

Գնորդին հասնելու, արտադրանքը առաջարկելու նպատակով շուկայում իր տեղը գտնելու համար գովազդողները շուկայի հետազոտություններ են կատարում: Նրանք ուսումնասիրում են գնորդին բնորոշ գծերն ու նրա վարքագիծը՝ տարիքը, սեռը, կրթությունը, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը:

Այս հետազոտությունների հիման վրա մշակվում է գովազդային ծրագիրը:

Քրիստին ՄաքՄասթերի համար հետազոտությունը միայն թղթարարություն չէ:

- Վիճակագրական տվյալները, հարցման արդյունքները եւ այլ հետազոտական նյութերը ուսումնասիրելուց բացի ստիպված ես լինում նաեւ աշխատել մարդկանց հետ,- ասում է նա:

Դեմոգրաֆիական եւ գնումներ կատարելու սովորությունները ուսումնասիրելուց բացի նա աշխատում է նաեւ սպառողների վարքը ուսումնասիրելու նպատակով կազմված հատուկ խմբերի հետ (թիրախային խմբեր), ինչը նա նկարագրում է որպես որակական աշխատանք, մինչ վիճակագրական հետազոտությունները, ըստ նրա, քանակական են:

- Որակական աստիճանում մենք կարող ենք կանանց մի խմբի որոշ գովազդներ ցույց տալ: Արդյո՞ք գովազդները ինչ-որ բան են ասում այս կանանց: Արդյո՞ք նրանց հետաքրքրում է այն, ինչ տեսնում են:

Թիրախային խմբերը բաղկացած են այն մարդկանցից, ում համար նախատեսված է տվյալ արտադրանքը կամ ծառայությունը: Թիրախային խմբերի հետ նյութը քննարկելուց բացի ՄաքՄասթերը մանրամասն զրույցներ է ունենում մարդկանց հետ՝ որպես արտադրանքի համար խոստումնալից շուկայի հետազոտման եւ հայտնաբերման աշխատանքի մի մաս: Նրա աշխատանքը օգնում է ստեղծագործական թիմին՝ վերափոխելու խմբերի վրա փորձած գովազդները:

ՄաքՄասթերը Միչիգանի համալսարանը ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է մի փոքր գործակալությունում՝ մինչ «Յանգ ընդ Ռուբիքեմ» տեղափոխվելը:

- Եթե քո աշխատանքը չի ստիպում քեզ արթնանալ առավոտյան ժամը 6-ին՝ աշխատանքի գնալու բուռն ցանկությամբ, ապա դա լավ աշխատանք չէ,- ասում է նա:

Ստեղծագործում եւ տեղեկատվությանմիջոցներ

«Յանգ ընդ Ռուբիքեմ» ընկերության մյուս հարկում Քեւվին Օ'Դոնահյուն աշխատում է ԱՄՆ զինված ուժերի գործի վրա: Նա գործակալության վետերաններից է, աշխատում է այստեղ արդեն 10 տարի: Նա զբաղեցնում է ստեղծագործական տնօրենի պաշտոնը եւ ժամանակին զբաղվել է «Կոդակի», «Ռոլեյդսի» եւ «Քենթուկիի Տապակած Ճտերի» գործերով:

Հեռուստատեսային գովազդների պատրաստման ժամանակ նա համագործակցում է տնօրենի հետ՝ համապատասխանեցնելով տեքստը եւ տեսողական էֆեկտները:

- Ամեն մի գործի համար մենք 20 տարբեր մոտեցումներ ենք մշակում, - ասում է նա, - «Քենթուկիի Տապակած Ճտերի» գովազ-

դի համար մենք նկարահանում ենք մարդկանց, ովքեր ուտում են տապակած ճտերը՝ առանց ուշադրություն դարձնելու դելֆիններ-ի թռիչքներին եւ Մեջիք Ջոնսոնի բասկետբոլ խաղալուն: Միտքն այս էր. մարդիկ այնքան են տարված Քենթուկիի տապակած ճտերը վայելելով, որ հնարավոր չէ շեղել նրանց ուշադրությունը:

- Որոշ գործերի համար մենք օգտագործում ենք հայտնի մարդկանց, հանրահայտ ասացվածքներ կամ հայտնի երգեր: Ո-րոշումը կայացվում է պատվիրատու ֆիրմայի մարքեթինգով զբաղվող պաշտոնյաների կողմից, որոնց հետ, մինչեւ նախագծե-րն իրականացնելը մենք համաձայնեցնում ենք մեր ռազմավա-րությունը,- ասում է նա:

Բանակը գովազդելու ձեւը այն որպես ապագա կարիերա ստեղծելու միջոց ներկայացնելն էր:

- Գովազդը ցույց էր տալիս տանկից դուրս եկող զինվորին, ո-րը բիզնես կոստյում էր կրում,- ասում է Օ'Դոնահյուն:

- Լավագույն գովազդներում,- ասում է Ռիչմոնդի «Մարտին Էյ-ջընսիի» նախագահ Հենրի Ջեկոբսը,- հնարավոր չէ տարբերակել, թե որտեղ է վերջանում ռազմավարությունը եւ որտեղ են սկսվում իրականացման աշխատանքները: Ես հարգում եմ այն մարդ-կանց, ովքեր շուկայական առատ տեղեկատվությունից կարողա-նում են հասարակ ռազմավարություն մշակել: Բայց ինձ իսկա-պես դուր է գալիս, երբ գրողը մի ճիշտ ֆրազով գտնում է այն, ինչ որ պետք է, կամ երբ դիզայնի տնօրենը այնպիսի աշխատանք է կատարում, որը իսկապես կատարյալ է թվում:

Տեղակայում

Օ'Դոնահյուի աշխատանքի մի մասն է կազմում այն թեման կամ հայեցակարգը գտնելը, որը արտադրանքը կամ ծառայությունը հրապուրիչ կդարձնի որոշակի լսարանի համար: Թեմայի եւ լսա-րանի ընտրությունը հայտնի է որպես տեղակայում, եւ որպեսզի տեսնենք, թե ինչպես է դա աշխատում, մենք կայցելենք Քըրք Սիտ-րոնին՝ Սան-Ֆրանցիսկոյի «Հալ Ռայնի ընդ Փարթներսի» ավագ գրողին, որը զբաղվում է տեղակայմամբ:

Սալորաչիրը սեղանին դնելը: Սալորաչիրի առեւտուրը վերջին երեք տասնամյակներում նվազում էր՝ չնայած գովազդային քա-րոզարշավին եւ հեռուստատեսային գովազդներին: Կալիֆոր-նիայի սալորաչիր արտադրողները անհանգստացած էին:

- Մարդիկ կարծում էին, որ չարժե սալորաչիրի վրա փող ծախսել, - ասում է Սիտրոնը, - փաստորեն մենք մարդկանց այնպիսի բան պիտի ասեինք, որ նրանք փոխեին իրենց կարծիքը: Այնպես որ առաջին բանը, որ մենք արեցինք, մարդկանց հետ խոսելն էր, հարյուրավոր մարդկանց հետ: Եվ մենք պարզեցինք, որ մի բան կարող է փոխել դրությունը՝ սալորաչիրի օգուտների մտածված եւ հիմնավորված քննարկումը:

Սիտրոնը իմացավ, որ սալորաչիրը մեծ քանակությամբ օգտակար մանրաթել է պարունակում: Մեր օրերում մանրաթելը անընդհատ մարդկանց ուղեղներում է, քանի որ բժիշկներն ասում են, որ ամենօրյա արագ պատրաստված սնունդը (որը հաճախ քիչ մանրաթելեր է պարունակում) շատ թեթեւ է, իսկ չհավասարակշռված սնունդը քաղցկեղի հիմնական պատճառն է:

- Երբ մենք մարդկանց ասեցինք, որ սալորաչիը ավելի շատ մանրաթել է պարունակում, քան համարյա թե ցանկացած այլ ուտելիք, ապա դա փոխեց մարդկանց կարծիքը սալորաչիրի նկատմամբ,- ասում է Սիտրոնը,- սալորաչիրը ուներ այն, ինչ անհրաժեշտ էր մարդկանց՝ մանրաթել: Այնպես որ արդեն հեշտ էր պատկերացնել, թե ինչ էր պետք ասել գովազդում:

Սիտրոնը որոշեց իր նպատակը՝ նպաստել սալորաչիրի առեւտրի աճին, եւ իր գովազդային քարոզարշավի համար թեմա գտավ՝ սալորաչիրի մեջ մանրաթելերի բարձր պարունակությունը: Փաստորեն Սիտրոնը սալորաչիրի համար տեղ գտավ շուկայում:

Ամեն մի գովազդ ունի իր որոշակի նպատակը՝ գովազդը դիտողի կամ կարդացողի հավանությանն արժանանալ կամ նրան որեւէ քայլի դրդել: Այդ նպատակը իրականացնելու համար ամեն մի գովազդ հիմնվում է իրեն հատուկ գաղափարի կամ թեմայի վրա:

Բավարարել կարիքները: Ընտրված թեման ակնարկում է, որ եթե սպառողը հետեւի գովազդում հնչած խորհուրդներին, ապա այն կբավարարի իր պահանջը: Այդ թեման կարող է լինել տեղական շուկայում մսի ցածր գինը, որը կարող է բավարարվածություն առաջացնել խնայված դրամի պատճառով կամ էլ լվացքի հաճելի բուրմունքը, որը խոստանում է ի ցույց բերել կնոջ սերը իր ընտանիքի նկատմամբ:

Գովազդով զբաղվողներինց ոմանք ասում են, որ իրենք ոչ թե արտադրանք են վաճառում, այլ զգացմունքներ եւ հույզեր:

- Մենք ոչ թե արտադրանք ենք գնում, այլ այն բավարարվածության զգացումը, որը այդ արտադրանքը մեզ կտա: Եվ հենց դա պետք է արտահայտի գովազդը, - ասում է Թեդ Բեյթսը, որը սեփական գործակալություն ունի:

- Մենք օգտագործում ենք հոգեբանական միջոցների մի ամբողջ շարք, մի մասը նոր, մյուսը հին՝ սպառողների եւ ապրանքանիշների միջեւ զգացմունքային կապը հասկանալու համար,- ասում է Պոլ Դրիլլինգը՝ «ՄաքՔանն-Էրիքսոնի» ռազմավարական պլանավորման տնօրենը, - հիմա ավելի, քան երբեք մենք ստիպված ենք վաճառել՝ հենվելով զգացմունքների եւ հույզերի վրա, քանի որ արտադրանքները բոլորը համանման են: Այն օրերը, երբ միայն մրցակցության ոգի եւ հատուկ արտադրանք ունենալը հերիք էր, արդեն անցել են:

- Ապրանքանիշները ընդամենը գովազդային արտադրանք չեն, որ մենք գնում եւ օգտագործում ենք, դրանք նաեւ մեր կյանքի ուղեկիցներն են, - ասում է Ռոզալինդե Ռագոն՝ «Օգիլվի ընդ Մաթեր» գովազդային գործակալության գովազդային հետազոտությունների տնօրենը:

Ավտոմեքենաների գովազդները խոստանում են շարժել հարեւանի նախանձը, օծանելիքների եւ օդեկոլոնների գովազդները խոստանում են գրավել հակառակ սեռի ուշադրությունը, ապահովագրական գովազդները խոստանում են անվտանգության զգացում:

«Նոքսեմա» սափրվելու մածուկը տղամարդկանց համար շատ բաներ է խոստանում: Դրա մի գովազդը չափն անցկացրեց: Այն ցույց էր տալիս մի տղամարդու, որը դուրս է գալիս անտառից եւ տեսնում Ֆարա Ֆոսետին: «Ես ինը տարի է կին չեմ տեսել»,- ասում է նա: Ֆոսետը վերադարձնում է նրա քաղցած հայացքը: Հանկարծ գետինը պատռվում է, դուրս է ժայթքում սափրվելու մածուկը եւ հոսում անտառից դուրս: Քննադատները իհարկե այն եթեր չթողեցին:

Կերպարի (իմիջի) ստեղծումը: Գովազդների համար կարեւոր գործոններ են տեղեկատվությունը եւ կերպարների (իմիջների) ստեղծումը: Երբ «Քեմբել Սուփ Կոմպանին» մտավ սառեցված մթերքի շուկա՝ որի տարեկան առեւտուրը կազմում է 2 միլիարդ դոլար, հանդիպեց լուրջ մրցակցության: «Քեմբելը» որոշեց մասնագիտանալ բարձրորակ սննդամթերքի արտադրությամբ, քանի որ այս շուկան մեծ աճ էր ունեցել՝ կապված սպառողների՝ իրենց սննդի վերաբերյալ ավելի ուշադիր լինելու հետ:

«Քեմբելը» տեղեկացրեց գնորդներին իր արտադրանքի որակի եւ սննդարարության մասին: Նա ցանկանում էր իր արտադրանքի համար այնպիսի իմիջ ստեղծել, որը դուր կգար մտավորական, զարգացած սպառողներին:

Գովազդներից մեկի մեջ հետին պլանում լարային քառյակ էր նվագում, մյուսը նկարահանված էր զբոսանավի վրա: Այս կերպարները մեծապես տարբերվում են սառեցված մթերքի 50-ական թվականների գովազդների ստեղծած կերպարներից, որոնք քանակական ցուցանիշներ էին տալիս: Այդ գովազդները ցուցադրում էին հեռուստացույցների առջեւ նստած ընտանիքների, որոնց անդամներն իրար էին փոխանցում մեծ քանակությամբ սպագետի եւ տապակած ճտեր:

Հենց որ նպատակը եւ թեման պարզվում են, սկսվում է գովազդի վրա աշխատանքը: Ընտրվում են նկարազարդումները, գրվում են տարբերակներ, նկարահանում գովազդը: Հետո գովազդը տեղադրվում ու տարածվում է համապատասխան տեղեկատվության միջոցներով:

Գտնել նոր շուկաներ: Վաճառողները միշտ գնորդների նոր խմբեր են փնտրում: Բայց շատ շուկաներ տասնամյակներով մնում են չհետազոտված: Սեւամորթներին եւ իսպանալեզուներին անտեսում էին, մինչեւ որ հետազոտությունները բացահայտեցին նրանց գնողականությունը:

Ըստ տվյալների՝ երիտասարդները մեծ գումարներ են ծախսում հագուստի եւ երաժշտության վրա՝ տարեկան մոտ 20 մլրդ. դոլար, բայց հետազոտությունները ցույց տվեցին, որ նրանք նաեւ մեծ քանակությամբ մթերքներ են գնում, եւ ոչ միայն համբուրգերներ ու զովացուցիչ ըմպելիքներ, այլ նաեւ ընտանիքի համար մթերքներ:

Մարքեթինգի հետազոտմամբ զբաղվող «Ալերթ Փաբլիշինգ Ինքորփորեյթիդ» ընկերությունը պարզեց, որ չնայած երիտասարդների քանակի նվազմանը նրանք տարեկան մոտ 25 մլրդ. դոլար են ծախսում ուտելիքի վրա: «Թինեյջ Ռիսիրչ Անլիմիթեդը» պարզեց, որ երիտասարդ աղջիկների 57 եւ տղաների 33 տոկոսն առնվազը շաբաթական մեկ անգամ իրենց ընտանիքի համար ուտելիք է պատրաստում: Նրանք նաեւ խմորեղեն են թխում: Երիտասարդ կանանց կեսը եւ տղամարդկանց մեկ հինգերորդը կարկանդակներ, տորթեր, թխվածքներ եւ հաց են թխում առնվազը շաբաթը մեկ անգամ:

Արտադրանքի երիտասարդացում: Ըստ մարքեթինգի խորհրդատուների գնահատման՝ նոր ապրանքանիշի շուկա մտցնելը արժե ամենաքիչը 20 մլն. դոլար: Չնայած այս ներդրումներին, նոր արտադրատեսակների միայն չորրորդ մասն է իրեն արդարացնում: Այս ամենը հանգեցնում է նրան, որ ընկերությունները դրա փոխարեն փորձում են փրկել անկում ապրող հին ապրանքանիշները նոր մարքեթինգային հայեցակարգի միջոցով:

«Չիզ Վիզ»-ի, «Ֆիլիպս Միլկ օֆ Մագնեզիա»-ի, «Բարբասոլ Շեյվինգ Քրիմ»-ի, «Հեյնզի կետչուպ»-ի եւ «Դիփփիդի-Դո» մազերի գելի սպառումներն անկում էին ապրում: Դրանց գովազդի բյուջեն փոքրացնելու եւ այդ արտադրատեսակների արտադրանքը դադարեցնելու փոխարեն, արտադրող ընկերությունները գումարներ եւ մարքեթինգային ծրագրեր ներդրեցին այդ արտադրատեսակները փրկելու համար:

«Չիզ Վիզը» գովազդելու համար «Քրաֆթը» եռապատկեց իր գովազդային բյուջեն՝ հասցնելով այն 6 մլն. դոլարի, եւ սկսեց գովազդել այն որպես միկրոալիքային վառարանի համար իդեալական տեսակ՝ «այս պաստերիզացված պանիրը շատ հարմար է արագ պատրաստվող խորտիկների համար, այն մաքուր է եւ հեշտ է պատրաստվում»:

«Ակվա Վելվան»՝ սափրվելու լոսյոնը, ըստ շուկայագետների էժան եւ միջին որակի համբավ ուներ: «Բիչամ Գրուպը» ձեւափոխեց այն եւ գովազդելու համար հրավիրեց նախկին պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ Դիք Բուտկուսին: Չնայած այդ հոտը որոշ երիտասարդների դուր եկավ, բայց «Բիչամի» մարքեթինգի խումբը նշեց, որ արդյունքը սպասվածից ցածր էր, քանի որ «Շատ երիտասարդներ նույնիսկ հիմա էլ դրա մասին մտածում են որպես իրենց հայրերի կողմից օգտագործվող լոսյոն»:

Ոչ բոլոր գովազդային փոփոխություններն են, որ հին արտադրատեսակներին նոր թափ են հաղորդում: «Ստրոս Բրյուվերին» փորձեց փրկել «Շլից» գարեջուրը կարոտաբաղձության միջոցով՝ նրանց գովազդներում մի երիտասարդ իր 1956 թվականի «Շեվրոլեն» էր լվանում կամ սպորտի սիրահարները նայում էին, թե ինչպես է Վիլլի Մեյսը բեյսբոլ խաղում: Այս ռազմավարությունը արդյունք չտվեց եւ «Շլիցի» սպառումը շարունակեց անկում ապրել:

Լրատվամիջոցի ընտրությունը

Գովազդը պատվիրողը իր արտադրանքը կամ ծառայությունը

գովազդելու համար տեղեկատվության միջոցների լայն ընտրություն ունի: Ուղղակի նամակ ուղարկելը այդ միջոցներից մեկն է: Ամեն տարի փոստով 65 մլն գովազդային նամակներ են ուղարկվում: Օգտագործվում են նաեւ հեռախոսները՝ մոտ 7 մլն. ձայնագրված գովազդներ են ուղարկվում ամեն տարի: Ընկերություններն իրենց գովազդները տեղադրում են գեղարվեստական ֆիլմերում՝ հանրահայտ աստղի սեղանի վրա դրված Կոկո-Կոլայի շիշը ոչ թե ֆիլմի ռեժիսորի, այլ գովազդը պատվիրողի արածն է: «Պինդ ընկույզը-2» ֆիլմում 19 հատ վճարովի գովազդ կար:

Նայեք ցանկացած ֆուտբոլային խաղ:

Երբ դարպասապահը որսում է գնդակը, նրա հետեւում ցուցատախտակների վրա միշտ գովազդներ կան: Բասկետբոլիստի մոտիկից նկարում միշտ կարելի է տեսնել «NIKE» լոգոն նրա մարզակոշիկների վրա՝ որը արդյունք է ֆիրմայի 7 մլն. դոլարի ներդրումներին քոլեջային բասկետբոլի մրցաշարերում:

Կարծիք կա, որ երեխաները եւ երիտասարդները ընտանեկան ծախսերի վրա ազդեցություն ունեն՝ նրանք ավելացնում են այդ ծախսերը տարեկան մոտ 1 մլրդ. դոլարով: Եվ բնական է, որ դասարանները նույնպես գտնվում են գովազդողների հետաքրքրության շրջանակներում: «Վհիթլ Քոմյունիքեյշնսը» 6000 դպրոցների արբանյակային ալեհավաքներ, հեռուստացույցներ եւ տեսաձայնագրիչներ է տվել, որպեսզի իրավունք ստանա նրանց 12 րոպեանոց նորություններ ցուցադրել, որից երկու րոպեն տրամադրված է գովազդներին:

Մինչեւ այսօրվա երիտասարդները դառնան 40 տարեկան, նրանք արդեն դիտած կլինեն ամենաքիչը մեկ միլիոն գովազդ:

Եթե արտադրանքը տանը հաճախ օգտագործվողներից է՝ ցավազրկիչներ, օճառ, ատամի մածուկ, ապա տեղեկատվության միջոց է ընտրվում հեռուստատեսությունը՝ որպեսզի գովազդը ցուցադրվի 72 մլն. ընտանիքի: Եթե ընկերությունը զբաղվում է շրջագայություններով, որոնք իրենց կարող են թույլ տալ միայն խոշոր գումարներ ունեցողները, ապա գովազդողը կարող է ընտրել «Նեշնլ գեոգրաֆիկ» հանդեսը, որի ընթերցողների եկամուտը, ըստ ամսագրի տվյալների, տարեկան կազմում է մոտ 300 մլրդ. դոլար:

Կանացի մոդայիկ հագուստ արտադրողները ցանկանում են իրենց գովազդը տեսնել «Վոգ»-ում: Իրականում այնքան ընկերություններ են իրենց գովազդը «Վոգ»-ում տեղադրում, որ հանդեսը մոտ 800 էջ է զբաղեցնում: Մյուս կողմից «Ջ. Ս. Դեննին» իր ոչ թանկ առօրյա հագուստի գովազդը տեղադրում է տեղա-

կան օրաթերթերում, իսկ «Սիըրսը» իր գովազդը առաքում է փոստով:

Օգտագործված մեքենաների գովազդները հաճախ դրվում են օրաթերթերի սպորտային էջերում, իսկ լվացքի փոշու գովազդները հիմնականում ցուցադրվում են հեռուստասերիալների ընթացքում: Երբ «Յանգ ընդ Ռուբիքեմ»-ը սկսեց իր «Վառարանից՝ սիրով» գովազդային քարոզարշավը «Պիլսբուրիի» միկրոալիքային վառարաններով թխված կամ եփված արտադրանքի՝ տորթերի, եգիպտացորենի փաթիլների, պիցաների եւ այլնի վերաբերյալ, ապա այն ցուցադրվում էր «Միսս Ամերիկա» մրցույթի ժամանակ:

Բովանդակությունը

Ի՞նչ պետք է ասվի գովազդում: Ի՞նչ նկարներով պետք է զարդարվի ուղարկվելիք նյութը: Ի՞նչ պետք է ասի Սերխիո Վալենտեն: Թե՞ նա պարզապես իր ջինսը հագած պետք է շրջի քարքարոտ պեյզաժի ֆոնի վրա:

Ստեղծագործող թիմը պետք է գովազդին կյանք պարգեւի:

«Հել Ռայնի ընդ Փարթներս»-ում Սիտրոնը մտածում էր «Քանի՞ ձեւով կարելի է ասել, որ սալորաչիրը հարուստ է մանրաթելերով»:

- Կհավատա՞ք, մոտ 300: Ահա թե քանիսն էինք մենք գրել: Եվ մենք մոտ մեկ դյուժին գաղափար ունեինք, թե ինչպիսին պիտի լինի ապագա գովազդը: Մենք մարդկանց պետք է տայինք ավելին, քան պարզապես տեղեկատվությունն է: Մենք պետք է գրավեինք նրանց ուշադրությունը եւ ազդեին նրանց ենթագիտակցության վրա:

Սիտրոնը որոշեց, որ տեքստը սովորականից ավելի երկար պետք է լինի: Այն պետք է գնորդին մեծ քանակի տեղեկատվություն տրամադրեր, եւ այն մարդիկ ում ուշադրությանը պիտի արժանանար այս գովազդը, չպետք է ձանձրանային տեքստի երկարությունից, քանի որ այն հետաքրքիր պիտի լիներ:

Մյուս կողմից, եթե գովազդում գեղեցիկ տղամարդ է նկարահանվում, ապա նա ընդամենը պետք է քայլի փողոցով՝ երկու շիկահեր գեղեցկուհիների ուղեկցությամբ, որոնք հմայված նրան են նայում: Նրան նկարահանում են հետեւի կողմից՝ նրա ջինսի հետեւի գրպանին փակցված ապրանքանիշը ցուցադրելու համար:

- Սեքսուալությունը նպաստում է վաճառքին: Դա բոլորը գիտեն, - ասում է արտադրողը:

Արդյունքը

Արդյո՞ք գովազդը արդյունավետ էր: Սիտրոնի համար արդյունքները ապշեցուցիչ էին: Գովազդը սկսելուց հետո սալորաչիրի վաճառքը ամեն ամիս 10, 12, 17 տոկոս աճ էր ունենում:

- «Էդվըրթայզինգ Էյջ» հանդեսը սալորաչիրը հայտարարեց տարվա 10 ամենաշատ վաճառվող արտադրանքներից մեկը,- ասում է նա: Գովազդը նաեւ մի քանի մրցանակների արժանացավ:

«Սփորթսվեստ» ՍՊԸ-ն կանխատեսում էր ամսեկան 2,5 մլն, դոլարի ջինս վաճառել: Բայց երբ գովազդը սկսվեց, ապա 2,5 մլն. դոլարի պատվեր էր ստացվում ամեն շաբաթ: «Սփորթսվեստի» հաջողությունը բերեց այն բանին, որ հեռուստատեսությունը լցվեց այն ջինսերի գովազդներով, որոնց վրա արտադրողն իր ստորագրությունն էր դնում: Ընկերությունները վաճառքից ստացված գումարների 15 տոկոսը ծախսում էին գովազդի վրա:

- Մրցանակը շահում է նա, ով ամենաշատն է ծախսում, - ասում է մի ներդրումային բրոկեր, որի ընկերությունը գործ ունի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների հետ: «Սփորթսվեստի» գործադիր տնօրեն Մարտին Հեյնֆլինգը, որը ստեղծել էր այս ջինսը եւ առաջարկել գեղեցիկ տղամարդու գաղափարը, զարգացնում է այս կարծիքը:

- Մարդիկ որակին ուշադրություն չեն դարձնում, - ասում էր նա «Ուոլ Սթրիթ Ջորնալին» տված իր հարցազրույցում, - այն ամենը, ինչ նրանք ուզում են, այս հեռուստատեսային պատրանքն է:

Հնարավոր է: Բայց իրականում չկա հիմնավոր ապացույց, որ միայն գովազդի շնորհիվ կարելի է արտադրանքը վաճառել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ սպառողները ուշադրություն են դարձնում որակին եւ գնին, եւ եթե նրանք այս երկուսը չստանան, ապա վաղ թե ուշ իրենց ուշադրությունը կուղղեն այլ կողմ:

Բառարան՝ տեքստ գրողների համար

Յեյլի համալսարանի հոգեբանական բաժնի կարծիքով ներքոհիշյալ 10 բառերն ամենահամոզիչն են եւ հոգեհարազատը.

Նոր՝ մարդիկ անընդհատ նորություն են փնտրում:

Խնայողություն՝ բոլորը ցանկանում են ինչ-որ բան խնայել, լինի դա ժամանակ, էներգիա թե փող:

Ապահովություն՝ այս բառը մատնանշում է որակյալ արտադրանքի երկարակեցությունը եւ օգտագործողի առողջությունը:

Ապացույց՝ փաստաթղթերը համոզիչ փաստարկ են:

Սեր՝ բոլորը կարիք ունեն ներքին բավարարվածություն ստանալու, որն այս բառի երկրորդ իմաստն է:

Հայտնաբերում՝ այս բառը խթանում է արկածախնդրության եւ ոգեշնչման զգացումը:

Երաշխիք՝ ներկայիս սպառողները հաճախ որեւէ երաշխիք են պահանջում:

Արդյունք՝ ամեն մի սպառող իր գնումից առավելագույն արդյունք է սպասում:

Դուք՝ սա հավանաբար գովազդի տեքստում օգտագործվող ամենահամոզիչ բառն է:

Առողջություն՝ առողջության պահպանման գիտակցումը կարելի է կիրառել տարբեր տեսակի արտադրանքների գովազդներում:

Երազանքների իրականացմանը նպաստելը

Երբ Մարվին Վալդմանը եւ Մարկ Շափը աշխատում էին «Յունայթեդ Նեգրո Քոլեջ Ֆանդի» հեռուստատեսային գովազդի վրա, նրանք որոշեցին նոր մոտեցում կիրառել: «Յանգ ընդ Ռուբիքեմի» այս ստեղծագործական թիմը որոշեց 20 տարվա գովազդային քարոզարշավի պատմության ընթացքում առաջին անգամ ցույց տալ մի սեւամորթի, որի երազանքը կամ նպատակները չէին իրականացել:

Գովազդում մի տղա իր պապիկին ցույց է տալիս դպրոցում նկարած իր նկարը:

- Շատ լավն է,- ասում է պապիկը,- ահա զարկերակը, աջ եւ ձախ խորշերը եւ սրտի նախախորշերը:

Տղան զարմացած է: Նա հարցնում է իր պապիկին, թե նա չէ՞ր ուզում, արդյոք, բժիշկ դառնալ: Պապիկը խուսափում է պատասխանից: Հետո.

Ձայն կադրի հետեւում. «Մի ժամանակ սեւամորթ լինելը նշանակում էր մոռանալ քո երազանքների մասին: Այսօր «Յունայթեդ Նեգրո Քոլեջ Ֆանդը» այս երազանքներին կյանք է պարգեւում»:

Վերջին կադրերը ցույց են տալիս տղային, որը հարցնում է իր պապիկին.

Տղա. «Պապիկ, իսկ ես կարո՞ղ եմ բժիշկ դառնալ»:

Ձայն կադրի հետեւում. «Պապի՞կ...»:

Վազորդների հետ խոսելը

Երկար տարիներ մարզակոշիկների կրունկի եւ թաթի առանձնահատկությունների մասին պատմելուց հետո «Նայկի» ֆիրման որոշեց փոխել իր կերպարը՝ որպես վազորդների մտածելակերպը եւ զգացմունքները հասկացող ընկերություն հանդես գալով: Մարզակոշիկներ արտադրող ընկերությունը խնդրեց «Վիեդեն ընդ Քենեդի» գովազդային գործակալությանը պատրաստել գովազդներ, որոնք «կխոսեն ուղղակի վազորդների հետ, կուժեղացնեն նրանց հետ զգացմունքային կապը՝ ցույց տալով, որ «Նայկին» գիտի, թե ինչ է նշանակում վազել»:

- Մենք ավելացրեցինք նաեւ, որ գուցե պետք չէ նույնիսկ գովազդում մարզակոշիկներ ցուցադրել: Եվ մենք այդպես էլ արեցինք: Դրա փոխարեն մենք ստեղծեցինք «Ես ուզում եմ լինել այնտեղ» իմիջը եւ ազնիվ սրտամոտ տեքստ,- ասում է Քեթրին Գալիկը:

Գունավոր գովազդային վահանակներից մեկը պատկերում էր լիալուսնի տակ կամրջի վրա մի վազորդ: Տեքստը հետեւյալն էր.

Մայրիկներ, մի խելագար է վազում փողոցներում,
Եվ նա քթի տակ մի երգ է երգում,
Եվ նա գռմռում է շների վրա,
Եվ նա դեռ չորս մղոն էլ ունի վազելու:

Տեքստի հեղինակ Ջերրի Քրոնինը ասում է.

- Գործը բավականին պարզ էր՝ ցույց տալ, որ «Նայկին» հասկանում է վազորդներին:

Նախկինում վազորդ լինելով՝ ես գիտեի, թե ինչպես է իրեն զգում մարդը, որը կարող է վազել որոշակի ուժով եւ արագությամբ: Եվ լինելով նախկին վազորդ, որը այժմ դարձել է գեր,

կազմվածքը կորցրած մի տձեւ էակ, ես ափսոսանքով էի հիշում այդ ամենի մասին: Այնպես որ ինձ համար բավականին հեշտ էր տեքստը գրելը:

Չափազանցությունները այլեւս չեն գործում

Երբ «Սմիրատտի ընդ Պուրիսը» 1980-ականներին գովազդներ էր պատրաստում «BMW» ավտոմեքենաների համար, ապա այդ գովազդներում ցուցադրվում էին թանկ հագնված մարդիկ՝ շքեղ պայմաններում: Նպատակը ցուցադրելն էր, որ «BMW» գնելով դուք նաեւ դիրք եք գնում հասարակության մեջ: 90-ականներն արդեն ուրիշ են:

- 80-ականները «Ես»-ի տասնամյակ էին,- ասում է գործակալության ներկայացուցիչներից մեկը,- 90-ականները «սկեպտիցիզմի» տասնամյակ են: Ծուկայում ամեն ապրանքատեսակի մոտ 40 տեսակ կա, եւ մարդիկ ավելի վստահ են իրենց անհատականության վրա:

Այս հետազոտությունները ստիպեցին «BMW»-ին իր գովազդներում շեշտը դնել մեքենայի տեխնիկական հնարավորությունների վրա:

- Ներկայիս սպառողների վրա չափազանցություններով չես ազդի, - ասում է «Ամիրատտիի» ներկայացուցիչը,- մարդկանց ավելի քան 40 տոկոսը քոլեջ է ավարտել: Նրանք միանգամից նկատում են չափազանցությունը:

«Գեփ ինքորփորեյթիդի» փոխնախագահը հետեւյալ կերպ է նկարագրում 80-ականները.

- Հռչակավոր մարդկանց տասնամյակ, երբ բոլորը հետաքրքրվում էին, թե ով ինչ է անում, եւ ինչ են նրանք ուտում նախաճաշին: Այժմ «Գեփի» հագուստը ավելի պրակտիկ է: Ընկերությունը հռչակավոր մարդկանց չի օգտագործում: Այն ուշադրություն է դարձնում ոճին եւ հարմարությանը:

Քանի որ 90-ականների տնտեսությունը ավելի բարդ է, գովազդները փոխում են իրենց տեսքը, ճոխից եւ թանկից գնալով դեպի ավելի պարզը՝ ավելի մեծ ապրանքանշաններ, գովազդի շատացում, շեշտադրում ոչ թե ապրելակերպի, այլ արտադրանքի վրա:

- Տեղի ունեցավ վերադարձ դեպի պարզությունը, - ասում է «Փրինթի» խմբագիր Մարտին Ֆոքսը, - վերադարձ դեպի դիզայնում մերկ եւ բաց տեսքին:

Ռիսկի դիմելը նվազել է: Քանի որ ծախսերը մեծացել են, ձախողման դեպքում կրելիք վնասները նույնպես մեծացել են:

- Սովորաբար ձախողումից կրած վնասը կազմում էր մոտ 100.000 դոլար, - ասում է «Ֆուտ, Կոն ընդ Բելդինգի» Սան-Ֆրանցիսկոյի մասնաճյուղի ստեղծագործական տնօրենի տեղակալ Ջեոֆ Թոմսոնը, - այժմ վնասը կազմում է 400.000 դոլար:

Որոշ անփոփոխ տարրեր

Չնայած գովազդման գաղափարների փոփոխությունը, տպագիր գովազդներում կան որոշ անփոփոխ տարրեր.

Հիմնական տարր՝ վերնագիրը կամ նկարը գովազդը միանգամից նկատելի են դարձնում: Լուսանկարը սովորաբար գործողություն է պարունակում եւ այնտեղ կարող են պատկերված լինել իրական մարդիկ: Վերնագիրը ասում է ընթերցողին, թե ինչ օգուտ կարող է նա ստանալ՝ կատարելով գովազդի խորհուրդ տված գործողությունը:

Հասարակ նախագիծ՝ օգտագործվում է լայն, սպիտակ տարածություն: Տարբեր տեսակի եւ չափերի դեմքերի քանակը հասցվում է նվազագույնի: Ոճը ստիպում է կարդալ տեքստը:

Բնորոշ գիծ՝ գովազդի ձեւը, դիզայնը եւ նախագիծը տարբերակում են այն մրցակիցների գովազդներից:

Ազնիվ ներկայացում՝ տեղեկատվությունը ճիշտ է եւ ամբողջական:

Կարգավորում

Գովազդները կարգավորվում եւ ստուգվում են բազմաթիվ խմբերի եւ կազմակերպությունների կողմից: Երբ առողջության եւ տնային տնտեսության համար արտադրանք թողարկող «Մայլս ինքորփորեյթիդ»-ն իր գովազդում նշեց, որ իր վիտամինները օդի աղտոտվածությունից հիվանդության հետեւանքների դեմ պայքարելու գործուն մեթոդ են, Նյու Յորքի գլխավոր դատախազը մեղադրեց նրանց, որ գովազդները «սուտ են եւ անհիմն»: «Մայլսը» դադարեցրեց իր գովազդները:

Նահանգային դատախազները սկսեցին ակտիվ դեր կատարել գովազդների կարգավորման հարցում, երբ Ռեյգանի նախագահության օրոք կրճատվեցին Դաշնային առեւտրի հանձնաժողովի (ԴԱՀ) իրավասությունները: Երեք նահանգներ դուրս եկան «Ջենեռալ Միլս»-ի այն հավաստիացումների դեմ, որոնք նշում էին, թե իրենց «Բենեֆիթ» ցորենը պակասեցնում է այն օգտագործողի խոլեստերոլի պարունակությունը, եւ այն գովազդների դեմ, որտեղ նշվում էր, թե հետազոտությունները պարզել են շրջակա միջավայրի համար իրենց արտադրանքի անվտանգությունը:

Որպես արդյունք գովազդողների Ազգային Ասոցիացիան դիմեց ԴԱՀ-ին՝ խորհուրդ տալով նրան այս հարցում ավելի ակտիվ դեր խաղալու, որպեսզի գովազդողները ստիպված չլինեն 50 նահանգների տարբեր օրենսդրությունների հետ համակերպվել:

Բուշի նախագահության օրոք ԴԱՀ-ը սկսեց ակտիվորեն հետապնդել ապատեղեկատվություն տարածող գովազդները: Այլեւս թույլ չէր տրվում կոնֆետները որպես առողջ կերակուր ներկայացնելը:

Երբ ԴԱՀ-ը պատասխան պահանջեց «Ջեներալ ֆուդ»-ից իր այն գովազդի համար, որտեղ նշվում էր, թե «Քրաֆտ Սինգլս» պանրիկները կալցիումի բարձր պարունակություն ունեն, գովազդողները հասկացան, որ գործը լուրջ է: ԴԱՀ-ը նորից մտավ խաղի մեջ: Այն նույնիսկ ավելի առաջ գնաց եւ գովազդային գործակալությանը մեղադրանք ներկայացրեց սխալ տեղեկություններ տարածելու մեջ :

Մթերքի եւ դեղամիջոցների դաշնային նախարարությունը հետեւում էր իր տնօրինության տակ եղած արտադրանքի վերաբերյալ կատարվող կասկածելի հավաստիացումներին: Ալկոհոլի, ծխախոտի եւ զենքի վերահսկման բյուրոն ստիպեց «Ադոլֆ Քուրս Քոմփանիին» դադարեցնել այն գովազդումները, որտեղ նշվում է, թե իրենց արտադրած գարեջուրը պատրաստվում է Ռոքի լեռների մաքուր ջրից, քանի որ գարեջրի կոնցենտրատը բացվում էր տեղական ջրով:

Դատարանները նույնպես վերահսկող մարմինների թվին են պատկանում: Մի գովազդ հավաստիացնում էր, թե «Էքսեդրինը» ավելի ուժեղ ցավազրկիչ է քան «Էքստրա-ուժեղ Թիլենոլը»: Երբ «Թիլենոլը» հայց ներկայացրեց դատարան, «Էքսեդրինը» ստիպված եղավ դադարեցնել իր նոր սկսած գովազդային քարոզարշավը, որը արժեցել էր 10 մլն. դոլար: Դատավորն ասաց, որ «Էքսեդրինի» հետազոտությունները պարզել են, որ նրանց հավաստիացումները իրականությանը չեն համապատասխանում:

Տեղական բիզնես բյուրոները, սպառողների խմբերը եւ օրաթերթերի, հանդեսների ու հեռուստա եւ ռադիոկայանների «թույլատրելիության բաժինները» նույնպես ստուգում են գովազդների հավաստիությունը:

Գլուխ 14
Հասարակական կապեր

Մուտք

Հասարակական կապերի նպատակը հաճախորդի բարյացկամությունը նվաճելն է՝ վերաբերմունք ստեղծելու եւ կազմավորելու միջոցով: Հասարակական կապերով զբաղվողն ուսումնասիրում է այնպիսի տարբեր խմբերի հետաքրքրությունը, շահագրգռվածությունը եւ վերաբերմունքը, որոնց ծառայում է իր հաճախորդը եւ ծրագիր է առաջարկում՝ այդ խմբերի հետ կապ հաստատելու վերաբերյալ: Հասարակական կապերի մասնագետը իր ծրագիրը տարբեր ձեւերով է իրականացնում՝ հայտարարությունների, մամուլի ասուլիսների, նամակների, բրոշյուրների, հրատարակությունների, ելույթների եւ տեսաերիզների միջոցով:

Հասարակական կապերը նոր դարաշրջանում իրենց ամուր տեղի համար պարտական են նորությունների հավաքման եւ ներկայացման մեծ համակարգերի զարգացմանը, որը սկսվել էր դարասկզբին: Դրանք այն կապուղիներն են, որոնցով հասարակական կապերի մասնագետների ուղերձները հասցվում էին հասարակությանը:

Նպատակը՝ փաստաբանություն

- Մենք փաստաբաններ ենք, - ասում է Հարոլդ Բարսոնը՝ աշխարհի ամենամեծ «Բարսոն-Մաստելլեր» հասարակական կապերով զբաղվող ֆիրմայից, որը 21 երկրներում ունի 2000 աշխատող,- մեզ վճարում են, որպեսզի մենք պատմենք իրականությունն այնպես, ինչպես այն տեսնում է մեր հաճախորդը: Մենք վերաբերմունքի փոփոխման եւ կազմավորման գործում ենք եւ չենք հասնի հաջողության, մինչեւ սլաքի ուղղությունը չփոխենք դեպի մեզ հարմար կողմը, չստիպենք մարդկանց ինչ-որ բան ա-

նել: Բայց մենք նաեւ մեր հաճախորդի ինքնագիտակցությունն ենք եւ պետք է անենք այն, ինչ պահանջում են հասարակության շահերը: Ես հասարակության հետ կապերը կսահմանեի որպես կարծիքի, մարդկանց վերաբերմունքի վրա ազդելու ջանքեր: Սա է ամենը: Մենք հասարակական կարծիքի հետ երեք բան կարող ենք անել.

- Մենք կարող ենք փորձել փոխել այն, եթե դա անհրաժեշտ է մեր նպատակին հասնելու համար,
- Մենք կարող ենք փորձել նոր կարծիք ստեղծել, եթե այն չկա,
- Կամ մենք կարող ենք պաշտպանել գոյություն ունեցող կարծիքը:

Հասարակական կապերի գործակալության նախագահ Ջոզեֆ Մաքլաֆլինը իր աշխատանքը հետեւյալ ձեւով է սահմանում.

- Մենք կարող ենք խոսել հասարակության հետ կապերով զբաղվողի դերի մասին, որպես իր հաճախորդի կամ հաճախորդների համար հասարակության եւ իրադարձությունների մեկնաբանի, հասարակական եւ տնտեսական փոփոխությունների իմաստն ու հետեւանքները գնահատողի, ապագա անախորժությունները կանխատեսողի, հաշվենկատ եւ հարուստ երեւակայությամբ այնպիսի ծրագրեր ստեղծողի, որոնք նախատեսված են լուծելու խնդիրները՝ մինչեւ դրանց իր հաճախորդի վրա ամբողջ ուժով ներգործելը, կապող օղակ, որի միջոցով հաճախորդի ուղերձները կփոխանցվեն տարբեր հասարակական խմբերի, եւ այդ խմբերի կարծիքներն իր հաճախորդի ծրագրերի եւ գործունեության մասին հետ կփոխանցվեն նրան: Տարբեր դեպքերում, կապված իր պարտականությունների շրջանակների հետ, նա, անկասկած, կլինի այս ամենը: Բայց նախ եւ առաջ նա փաստաբան է:

«Փաբլիք Ռիլեյշնզ Նյուսը» տալիս է հետեւյալ ձեւակերպումը.

- Հասարակական կապերի ծառայությունը կառավարող գործունեություն է, որը գնահատում է հասարակական վերաբերմունքը, բացահայտում է հասարակական հետաքրքրություն ունեցող անձի կամ կազմակերպության քաղաքականությունը եւ վարքագիծը եւ իրականացնում է գործունեության ծրագիր՝ նվաճելու համար հասարակության համերաշխությունը եւ հավանությունը:

Նպատակը հակիրճ ձեւով ձեւակերպել է Ջոն Վ. Հիլը՝ «Հիլ ընդ Նոուլթոն ինքորփորեյթիդի» հիմնադիրը, որն իր հաճախորդներին ասում էր, թե իր գործը հասարակության վրա այնպես ազ-

դելն է, որ այն լավ կարծիք ունենա իր հաճախորդի վերաբերյալ: Հիլը մի բանաձեւ ուներ, որը նա կոչում էր իր հաճախորդների համար «տեւական եւ էական հաջողություն».

1. Ազնվություն եւ ճշմարտություն: Հասարակական կարծիքը լիազորված է ներկայացնելու հասարակական նշանակության փաստեր,

2. Հասարակական հետաքրքրության տեսանկյունից երեւացող քաղաքականության, որոշումների եւ գործունեության հուսալիություն,

3. Այնպիսի փաստերի օգտագործում, որոնք հասկանալի են, վստահելի եւ երեւակայությամբ ներկայացված:

Կարճ ասած՝ հասարակական կապերի գործընթացը կազմված է չորս մասից.

Հետազոտում՝ որոշելը, թե հասարակությունը ինչ է մտածում վաճառողի՝ անձի կամ կազմակերպության մասին:

Ծրագիր՝ հասարակական կապերի ծրագրի կամ քաղաքանության ընդունում:

Հաղորդակցում՝ համապատասխան միջոցներով դրական տեղեկատվության տարածում:

Պատասխան՝ տարածված նյութի վերաբերյալ կարծիքի գնահատում:

Սկիզբը

Պատմաբան Ալան Նեւինսը կարծում է, որ ամերիկյան հեղափոխականների խումբը, որը անկախություն էր քարոզում, «հասարակական կապերի ամենալավ աշխատանքն է կատարել ամերիկյան ազգի պատմության մեջ», երբ գրել է «Դաշնային Թղթերը» եւ տպադրել դրանք օրաթերթում: Ալեքսանդր Համիլտոնը եւ Ջեյմս Մեդիսոնը՝ հիմնական հեղինակները, կատարեցին այն, ինչ հասարակական կապերի աշխատողները մինչ այժմ փորձում են անել՝ ստեղծեցին հասարակական կարծիք:

Մեդիսոնի եւ Համիլտոնի աշխատանքը կարելի է նկարագրել որպես հասարակական կապեր, բայց ժամանակակից հասարակական կապերը սկսվել են ձեւավորվել 1900 թվականին, երբ երեք նախկին լրագրողներ հիմնադրեցին իրենց «Փաբլիսիթի Բյուրո»-ն: Երկու տարի անց նրանց հետեւեց մեկ այլ լրագրող: Հետո, 1906 թ.-ին, Այվի Լին եւ Ջորջ Ֆ. Պարկերը թողեցին ժուռնալիս-

տիկան՝ համեմատաբար նոր հասարակական կապերի ասպարեզում կարիերա սկսելու համար: Այդ ժամանակներից սկսած հասարակական կապերի գործունեությունը եւ նպատակը չեն փոխվել: Երեւի չի փոխվել նաեւ լրագրողիկան հանուն հասարակական կապերի թողնելու պատճառը: Լին ասում էր, որ նա փոխեց իր գործը լրագրողի ցածր աշխատավարձի եւ ամենօրյա մինչեւ ուշ երեկո աշխատանքի պատճառով:

20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ը արագորեն փոխակերպվեց արդյունաբերական հսկայի: Բայց այդ փոխակերպումը եւս ուներ իր բացասական կողմերը՝ ցածր աշխաավարձեր, տրեստներ եւ մոնոպոլիաներ, երեխաների աշխատանք հանքերում, դաշտերում եւ գործարաններում, օրական 12-ժամյա եւ շաբաթական 7-օրյա աշխատանք, սեփականատերերի դեմ գործադուլների ճնշում՝ նահանգային միլիցիայի, դաշնային զինված ուժերի եւ գործատերերի, մասնավոր խուզարկուների ուժերով:

10-ից 12-ամյա տղաները աշխատում էին օրական 50-60 սենթ աշխատավարձով: Իսկ գործատերերը հսկայական շահույթներ էին ստանում:

Ջոն Դ. Ռոքֆելերը հենց այդ տարիներին հիմնադրեց իր «Ստանդարտ Օյլ» ընկերությունը եւ դարձավ աշխարհի ամենահարուստ մարդը:

Սակայն 1901թ.-ին իր նախընտրական քարոզարշավը սկսեց Թեոդոր Ռուզվելտը: Նրա քարոզարշավի հիմքում ընկած էր հետեւյալ կարգախոսը. «ոչ թե հարուստին ավելի հարստացնել, այլ հնարավորություններ ընձեռել ֆերմերի, բանվորի եւ փոքր բիզնեսով զբաղվողի համար, որոնց ճնշում է մեծ բիզնեսը»:

Իր ընտրվելուց հետո Ռուզվելտը սկսեց կարգավորել մեծ բիզնեսը: Նա օգտագործեց մամուլը՝ նվաճելու համար հասարակության հավանությունը: Նախագահի ժողովրդականությունն արագորեն աճում էր: Հասարակությունն այլեւս չէր հանդուրժում շահագործումը:

Այս քաղաքական անցուդարձերը Ռոքֆելերի նման մարդիկ ճիշտ ըմբռնեցին: Նրանք հասկացան, որ դրությունը փոխվել է:

1911 թ.-ին իր միլիարդները ապահոված Ռոքֆելերը բիզնեսը հանձնեց իր որդուն՝ Ջոն Կրտսերին: Նա փորձում էր մաքրել իր անունը եւ դիմեց Այվի Լիին, որը այդ տարում հիմնադրել էր սեփական հասարակական կապերի ֆիրման այն բանից հետո, երբ հաջողացրել էր իր հաճախորդի՝ «Փենսիլվանիա Ռեյլռոուսդի» համար բարձրացնել երկաթուղային բեռնափոխադրումների գները: Լին սկսեց աշխատել Ռոքֆելերի համար:

Կորպորատիվ մարմինների բժիշկ

Լիի հեղափոխական գաղափարը հասարակության աջակցությունը նվաճելն էր: Կորպորացիաները եւ արդյունաբերական ձեռնարկությունները իրավաբաններ էին վարձում դատարաններում, օրենսդրական մարմիններում եւ Կոնգրեսում իրենց շահերը պաշտպանելու համար: Լին մեծ բիզնեսին առաջարկեց աջակցություն նվաճելու մեկ այլ միջոց:

- Եթե դուք գնաք մարդկանց մոտ, - ասում էր Լին, - եւ համոզեք նրանց հավատալու ձեզ, ապա կարող եք վստահ լինել, որ վերջնական արդյունքում օրենսդրական մարմինները, Կոնգրեսի հանձնաժողովների անդամները եւ մնացած բոլորը նույնպես ձեզ կաջակցեն:

Լին, որն իրեն անվանում էր «կորպորատիվ մարմինների բժիշկ», համոզված էր, որ հասարակության հավանությանը արժանանալը բխում է Ռոքֆելերի շահերից:

Նյու Յորքի նախկին լրագրող Լին մի դժվար խնդիր ուներ. արդարանալ այն լրագրողների մեղադրանքներից, որոնք համարում էին, թե նա իր ազնվության հետ կոմպրոմիսի է գնացել՝ վաճառվել է Ռոքֆելերին:

- Նրանք դիտում էին Լիի նոր գործը որպես «սեւ մոգություն»: Լրագրողները համարում էին, որ հասարակական կապերը փորձ են ցույց տալու իրերը ոչ այնպես, ինչպես դրանք իրականում կան՝ ստիպելու մարդկանց վատը դիտել որպես լավ, - ասում էր Բարսոնը, որը հեռացել էր «Մեմֆիս Քոմերշլ Ափիալ» թերթից եւ հետագայում հիմնեց իր սեփական հասարակական կապերի ֆիրման:

«Հասարակական կապերը» դարձավ բացասական տերմին: Հասարակական կապերով զբաղվողներին «երազողներ» էին կոչում: Նրանցից ոմանք ավելի շատ հենվում էին իրենց երեւակայության, քան թե փաստերի վրա, երբ փորձում էին ներկայացնել իրենց հաճախորդներին: Քննադատությունների որոշ մասին նրանք իսկապես արժանի էին:

«Ռետինե կետեր» եւ «սալյամիի թագուհիներ»

Մամուլը հաճախ էր տպագրում նյութեր այն տարօրինակու-

թյունների մասին, որոնք արդյունք էին հասարակական կապերով զբաղվողների (նրանց հաճախ կոչում էին գովազդի մարդիկ կամ մամլո գործակալներ) հարուստ երեւակայության: Նոր բիզնեսի բացմանը նրանք կարող էին փղի ձագ բերել՝ լրագրողներին գրավելու նպատակով կամ ասենք մսեղեն արտադրողը հայտարարում էր «սալյամիի թագուհու» ընտրություններ, որի հաղթողը կիսամերկ նկարվում էր բոլոր ցանկացողների հետ:

1920 թ.-ին մի մամլո գործակալ հորինեց իր կարծիքով մի հետաքրքիր նորություն՝ գովազդելու համար «Ուորներ Բրազերս»-ի նկարահանած «Նավերով դեպի ծովը» ֆիլմը: Նա Փայկ Պիկի վրա մի ռետինե կետ տեղադրեց եւ հայտարարեց լրագրողներին, որ լեռներում մարդիկ կետ են տեսել: Նա նաեւ մի երիտասարդ էր վարձել, որը նստած կետի մեջքին, ջուր էր ցայտեցնում:

Երբ կինոաստղ Ֆրենսիս Ք. Բուշամի գործակալը փորձում էր նրա համար կինոաստուդիայում աշխատանք գտնել, նա խնդրեց Բուշամին իր հետ ոտքով գնալ կինոընկերության գրասենյակ: Նրանք երկուսն էլ գրպանները լիքը կոպեկներ էին լցրել եւ այդ կոպեկները գետնին էին թափում, որի պատճառով նրանց մեծ ամբոխ էր շրջապատել: Կինոստուդիայի տնօրենները տպավորված էին Բուշամի թվացյալ ժողովրդականությամբ եւ նրան գործի ընդունեցին:

Իրականության որոնում

Ռետինե կետերի եւ այլ չափազանցությունների օրերն անցել են: Լրատվության միջոցների աճի հետ միասին, աճեցին նաեւ հասարակական կապերը: Հասարակական կապերով զբաղվողների աճող հավաստիությունը բերեց նրանց կողմից տրամադրված տեղեկատվության ավելի քան երբեւէ լայն օգտագործմանը լրատվության միջոցների կողմից:

Երբ «AT & T»-ին հրատարակչի որոշմամբ բաժանվեց այսպես կոչված «Բեյբի Բելլ» ընկերությունների, դրանցից մի քանիսը մտան այլ բիզնեսի մեջ: Օրինակ՝ «Սոուսվեսթերն Բելլը» փորձեց իր Դեղին էջերը տպագրել Նյու- Յորքում: Թոմ Բարրիտը «Բարսոն-Մարսթելլերից» դիմեց «Ուոլ-Սթրիթ Ջուրնալին»՝ առաջարկելով այս բիզնես-պատերազմը լուսաբանել՝ իր կողմից խոստանալով հնարավորություն ստեղծել հարցազրույց վերցնելու ընկերության ղեկավարությունից:

«Բարսոն-Մարսթելլերի» մեկ այլ աշխատակից՝ Կայլ Կունցը, հեռուստակայանների համար տեսանորություններ էր պատրաս-

տում Բանակային ռեզերվի մասին: Դրանցից մեկում Բանակային ռեզերվը օգնում էր ջրհեղեղից տուժած էկվադորցիներին: Շատ կայաններ այս տեսաֆիլմերը օգտագործում էին որպես նորություններ:

- Քանի որ հասարակական կապերում ավելի ու ավելի շատ մարդիկ են հայտնվում, որոնք լրագրողի որակավորում ունեն, նրանց նկատմամբ կասկածամտությունը գնալով նվազում է: Քանի որ մենք գիտենք նորության արժեքը, մենք դեմ առ դեմ կարող ենք խոսել լրագրողների հետ, - ասում է Կունցի աշխատակցուհի Մերի Հաչեթը:

Չնայած փոխկապվածությունը, որոշ տեղեկատվության միջոցների աշխատակիցների մեջ դեռեւս կասկած կա հասարակական կապերի վերաբերյալ, եւ Բարսոնը կարծում է, որ հասարակական կապերը դեռեւս մնում են «իրավականության որոնման» փուլում:

Գործունեության շրջանակները

Հասարակական կապերի ծառայությունը տարբեր գործունեությամբ են զբաղվում, որոնք ամենաքիչը 17 են: Դրանց մեջ մտնում են հասարակական տեղեկատվությունը, հասարակական հարաբերությունները, ներդնողների հետ կապերը, կորպորատիվ հաղորդակցությունները, աշխատակիցների հետ հարաբերությունները, մարքեթինգը կամ արտադրանքի ծառայությունները, հաճախորդների հետ հարաբերությունները:

Այս գործունեությունը իրականացվում է հետեւյալ ձեւերով.

- Որպես ընկերության կամ կազմակերպության անձնակազմի գործունեություն: Օրինակ՝ Բարտ Ունգերը վերահսկում է «Մերսեդես Բենց օֆ նորս Ամերիկա Ինքորփորեյթիդի» հասարակական կապերի հրատարակությունները: Նա ամսական տեղեկագիր է կազմում իր ընկերության դիլերների եւ նրանց աշխատակիցների համար: Այս տեղեկագրի տեքստի եւ լուսանկարների մեծ մասը, ինչպես նաեւ դիզայնի ամբողջ աշխատանքը, կատարում են նա եւ իր օգնականը՝ սեղանի հրատարակչական համակարգի օգնությամբ: Մենք հետագայում կքննարկենք նրա աշխատանքը, ինչպես նաեւ կտեսնենք, թե ինչպես է աշխատում համալսարանի կողմից վարձված սպորտային տեղեկատվության տնօրենը: Եվ վերջապես մենք կհետեւենք կառավարության հասարակական կապերի երկու աշխատակիցների աշխատանքին:

- Որպես անկախ կազմակերպություն, որը ծառայում է իր հա-

ճախորդների շահերին: Մենք արդեն հանդիպել ենք նման կազմակերպություններից ամենամեծերից մեկի՝ «Էդելման Փաբլիք Ռիլեյշնս Ուորլդվայդի» հետ: Մենք կտեսնենք թե ինչպես այս կազմակերպությունը օգնեց «Սթարքիսթ Սիֆուդ Քոմփանիին», երբ վերջինս հայտարարեց, որ չի զբաղվի այն ընկերությունների հետ առեւտրով, որոնք թյունոսի որսի ժամանակ վտանգի են ենթարկում դելֆինների կյանքերը:

- Հասարակական կապերի վերաբերյալ խորհուրդներ տվող անհատների միջոցով: Այս մարդկանց որոշ մասը խորհուրդներ է տալիս իմիջի վերաբերյալ: Մի քանի հարյուր դոլար վճարելով՝ հաճախորդը խորհուրդներ է ստանում հագուստի, զարդերի, սանրվածքի, սենյակ մտնելու ձեւերի, ձեռքսեղմումների եւ թեթեւ խոսակցություններ վարելու վերաբերյալ: Իմիջի վերաբերյալ խորհուրդ տալը դարձել է տարեկան 150 մլն. դոլար եկամուտ բերող գործունեություն:

Ինչպիսին էլ լինի գործունեությունը, եւ ինչ ձեւով էլ այն կատարվի, հասարակական կապերի հիմնական խնդիրը անձի կամ կազմակերպության մասին դրական, բարենպաստ տեղեկատվություն տարածելն է: Որոշ հասարակական կապերով զբաղվողներ օժտված են նորությունները գեղեցիկ մատուցելու տաղանդով՝ փոքրամասնությունների ուսման ֆոնդերին կորպորացիաների նվիրատվությունները, ամառվա ընթացքում բռնված ամենամեծ ձկան համար գարեջրի արտադրությամբ զբաղվող ընկերության սահմանած մրցանակը, կինոաստղի այցը տեղական մանկական հոսպիտալ, մայրցամաքի մի ծայրից մյուսը վազքարշավն ընդդեմ միջուկային սպառազինությունների եւ այլն: Այս իրադարձությունները ուղեկցվում են հայտարարություններով, լուսանկարներով, տեսաֆիլմերով եւ իրադարձության խորհրդանիշերով իրերի փոստով առաքմամբ:

Հասարակական կապերի խնդիրը հասարակության հետ կապերը այնպես կարգավորելն է, որ հաճախորդի համբավը ուժեղացվի եւ իմիջը դրական դարձվի: Այս անելու նպատակով հասարակական կապերի խորհրդատուները հետազոտությունների միջոցով ուսումնասիրում են միտումները, նախընտրությունները, զգացմունքները եւ վերաբերմունքը, հաճախորդին ցույց են տալիս այս հետազոտությունների արդյունքները եւ նշանակությունը եւ կազմում են ծրագիր, որը կօժանդակի հաճախորդի շահերին:

Խնդիրները

Հասարակական կապերով զբաղվողների բազմաթիվ խնդիրները կարելի է բաժանել երեք խմբերի.

Տեխնիկական խնդիրներ՝ տեղեկագրեր գրելը, հրատարակություններ պատրաստելը, ինչպիսիք են ընկերության հանդեսները եւ տեղեկագրերը, ելույթներ գրելը, իրադարձությունների նախապատրաստումը տեղեկատվության միջոցների կողմից լուսաբանվելուն, տեսալսողական նյութերի եւ հայտարարությունների պատրաստումը:

Հետազոտական աշխատանք՝ հարցումները, հետազոտությունները եւ սպառողների բնավորությունները ուսումնասիրելը, թիրախային խմբեր ստեղծելը եւ արդյունքները մեկնաբանելը:

Ղեկավարող գործունեության՝ մամուլի ասուլիսների կազմակերպում եւ անցկացում, նորություններով զբաղվողների եւ հասարակության հետ կապերի հաստատում, քաղաքականությունում եւ այլ կարեւոր ոլորտներում սեփական մարդկանց աճեցում, այլ հասարակական կապերով զբաղվողների ղեկավարում:

Եկեք տեսնենք, թե ինչպես են աշխատում այս մարդիկ: Նախ այցելեք Լոնգ Այլենդի համալսարան, ուր մարզական լրատվության տնօրենն է Բոբ Գեսլեյնը:

Մարզական լրատվություն

Դեռ մի ամիս կա մինչեւ տղամարդկանց եւ կանանց բասկետբոլի սեզոնի բացումը, եւ Գեսլեյնը զբաղված է թիմերի վերաբերյալ տեղեկատվության նախապատրաստմամբ: Նա խաղացողների վերաբերյալ տեղեկություններ է հավաքում եւ նախորդ սեզոնում խաղացողների վիճակագրական տվյալներն է նախապատրաստում: Նա նաեւ տեղեկատվություն է հավաքում համալսարանի ֆուտբոլային տեղեկագրի համար: Անցյալ տարվա նրա պատրաստած ֆուտբոլային տեղեկագիրը 56 էջից էր կազմված:

- Սա մեկ մարդու գործ է,- ասում է Գեսլեյնը, - Ես գրում եմ, խմբագրում եւ ձեւավորում: Այս ամենը ուղարկվում է տեղական թերթերին, հեռուստա եւ ռադիո կայաններին, այլ քաղաքային թերթերին: Լավագույն խաղացողների լուսանկարները եւ նրանց մասին տեղեկատվությունը ուղարկվում է նրանց ծննդավայրի թերթերին:

Մինչ խաղն սկսվելը Գեսլեյնը լրագրողների համար մամուլի տեղեկագրեր է պատրաստում, որի մեջ արտացոլվում են խաղացող թիմերի, խաղացողների, մարզիչների, սահմանված ռեկորդների, վիճակագրական եւ այլ տեղեկատվություն: Նա նաեւ նշում է սեզոնի լավագույն եւ վատագույն արդյունքները:

Բոստոնի Հյուսիս-արեւելյան համալսարանում հոկեյը ամենատարածված սպորտաձեւն է: Երբ համալսարանի թիմի երկար տարիների մարզիչ Ֆերն Ֆլեմանը որոշեց թոշակի անցնել, սպորտային տեղեկատվության բյուրոն միանգամից գործի անցավ: Բյուրոյի տնօրեն Ջեք Գրինոլդը գիտեր, որ տեղական մամուլը հնարավորին չափ տեղեկատվություն է պահանջելու:

Գրինոլդը կենսագրական տվյալներ հավաքեց Ֆլեմանի (Ֆլեմանը 15 տարեկան հասակում պայմանագիր էր կնքել «Բոստոն Բրյուինզ» պրոֆեսիոնալ թիմի հետ եւ 15 տարի խաղացել էր Հոկեյի Ազգային Լիգայում), ինչպես նաեւ որպես մարզիչ նրա ունեցած հաջողությունների մասին (19 տարվա ընթացքում նա 250 խաղում հասել էր հաղթանակի եւ նրա գլխավորած թիմերից շատերը խաղացել էին Քոլեջների Ազգային Առաջնության եզրափակիչներում): Այս աշխատանքի վարձատրությունը եղան «Բոստոն Գլոբ»-ում Ֆլեմանի մեծ լուսանկարը եւ նրա մասին հոդվածը:

Մարզական լրատվության գրասենյակները հաճախ վարձում են քոլեջի ուսանողների, եւ Գրինոլդի օգնականը՝ Ջոն Տապերը, որը 21 տարեկան է, արդեն հինգ տարվա աշխատանքային փորձ ունի: Տապերի առաջին աշխատանքը «Հարթֆորդ Կուրանտում» հեռախոսազանգերին պատասխանելն էր եւ տեղական դպրոցների եւ քոլեջների խաղերի արդյունքները լրացնելը: Դպրոցն ավարտելուց հետո նա սկսեց կես դրույքով աշխատել կաբելային հեռուստատեսության մի կայանում, ուր նա գրում, խմբագրում եւ եթեր էր հեռարձակում «Մարզական լուրեր» հաղորդումը:

Տապերի աշխատանքը Հյուսիս-Արեւելյան համալսարանի մարզական լրատվության բաժնում ընդգրկում է հասարակական կապերի բոլոր ձեւերը՝ տեղեկագրերի գրում եւ խմբագրում, թիմերի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքում եւ համալսարանի բասկետբոլի թիմի հետ ճանապարհորդում՝ այլ քաղաքների լրագրողների համար տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Կորպորատիվ հասարակական կապեր

- Կորպորատիվ հասարակական կապերը կարելի է նկարագրել որպես գրասեղան, որի մի ծայրում դրված է «մուտք» մակագրությամբ արկղը, մյուսում «ելք» արկղը եւ կենտրոնում թղթերի մի խառնաշփոթ կույտ, - ասում է Բերտ Ունգերը՝ «Մերսեդես-Բենց օֆ Նորս Ամերիկա ինքորփորեյթիդի» հասարակական կապերի հրատարակությունների տնօրենը:

Մեքենա վաճառելը

Ունգերն ասում է, որ իր ժամանակը բաժանում է «մուտքի» եւ «ելքի» միջեւ, բայց նա հավատացած է, որ «մուտքը» ավելի կարեւոր է:

«Մուտք»- «Իմ օգնականը եւ ես շատ ժամանակ ենք ծախսում թերթեր, ավտոմեքենաների արտադրության վերաբերյալ, սպառողների եւ վաճառողների համար նախատեսված ամսագրեր եւ տեղեկագրեր կարդալու վրա՝ գտնելու համար այն նյութերը, որոնք կհետաքրքրեն ընկերության ղեկավարությանը, նկատելու համար այն սոցիալական եւ տնտեսական միտումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ավտոմեքենաների վաճառքի վրա եւ գտնելու համար մեր արտադրանքին վերաբերվող խնդիրները, որոնք կարող են հասնել տեղեկատվության միջոցներին»: Ամեն օր նրա գրասենյակը մոտ 100 էջ օրաթերթերից հանված նորություններ է ստանում, որոնք պետք է ուսումնասիրվեն՝ կարեւոր նյութերը գտնելու համար: Ունգերը հեռուստատեսային նորություններ է նայում՝ ընկերության անունը նշվելիս անմիջապես տեղեկանալու նպատակով:

«Ելք»- կարեւորագույն 10-20 նյութերը կազմվում եւ ուղարկվում են ընկերության ղեկավարներին, իսկ մեկ էջանոց ամփոփումը՝ միջին ղեկավարությանը եւ նրանց ովքեր խնդրել են այդ տեղեկատվությունը:

Ունգերի աշխատանքի մեծ մասը դիլերներին եւ նրանց աշխատակիցներին ամսական տեղեկագիրն ուղարկելն է:

- Չնայած ես իսկապես տալիս եմ մեքենաների նոր մոդելների մասին տեղեկատվություն, բայց տեղեկագիրը նախատեսված է մարդկանց մասին տեղեկություններ տրամադրելու համար, - ասում է Ունգերը, - այն պարունակում է պաշտոնների բարձրաց-

ման, մահվան, սոցիալական իրադարձությունների մասին նորություններ եւ աշխատակիցների մասին նյութեր:

- Կորպորատիվ հասարակական կապերի պրոֆեսիոնալ աշխատողների մեծ մասը նախկին ազնիվ լրագրողներ են, - ասում է նա, - լավ տեղեկագիր գրելու համար պետք է իմանալ, թե ինչպես է գրվում հոդվածը, եւ լրագրողների հետ աշխատելիս իսկապես օգտակար է ունենալ նույնատիպ մտածելակերպ:

- Իսկ աշխատավարձը մոտավորապես հավասար է մեծ օրաթերթի լրագրողի կամ խմբագրի աշխատավարձին, կան շատ ճանապարհորդություններ եւ իհարկե գոյություն ունեցող ամենալավ մեքենաները վարելու հաճույքը:

Բջջային հեռախոս վաճառելը

Բիզնեսը վերլուծողները ասում են, որ բջջային հեռախոսների արտադրությունը աշխարհի ամենահզոր կոմերցիոն գործունեությունից մեկն է: Վերջին մի քանի տարիների ընթացքում բջջային հեռախոսների օգտագործումը աճում է տարեկան 80 տոկոսով: Վերլուծողներն ասում են, որ բջջային հեռախոսը առեւտրային գործունեության հեռախոսից վերածվել է «անձնական հաղորդակցության միջոցի»:

Հասարակության եւ մամուլի կողմից այս գործընթացը ընկալելուն նպաստում է Տորոնտոյում «Բելլ Սելյուար» ընկերության կորպորատիվ հաղորդակցությունների մասնագետ Քելլի Նորգեյթը: Նորգեյթը սկսել է իր կարիերան որպես հեռուստալրագրող:

- Քարլթոնի համալսարանի Ժուռնալիստիկայի դպրոցն ավարտելուց անմիջապես հետո ես որոշեցի հեռուստալրագրողի կարիերա անել, - ասում է նա: Նրա առաջին գործը հեռուստատեսային առեւտրի ակումբը վարելն էր: Դրանից հետո նա այլեւս հեռուստատեսության նկատմամբ չուներ այն պատկերացումները, ինչ մինչ այդ: Նա մի քանի ամիս աշխատեց «Նորսերն Թելեքոմ» ընկերությունում եւ այնուհետեւ տեղափոխվեց «Բելլ Սելյուար», ուր նա ելույթներ է գրում ղեկավարների համար, զբաղվում է նոր արտադրատեսակների շուկա արտահանմամբ, գրում է տեղեկագրեր, հետեւում է մամուլում իր ընկերությանը վերաբերվող հրապարակումներին, եռամսյակը մեկ կազմում եւ մոտ 200.000 բաժանորդների է առաքում «Կապի մեջ մնալը» տեղեկագիրը, որում փորձում է նշել «Բելլ Սելյուարի» անունը, բնականաբար միայն դրական արտահայտություններով:

Նրա կարեւոր քայլերից մեկը օգտագործվող թղթի փոփոխումն էր:

- Ես նկատեցի, որ առկա է վերամշակված թուղթ օգտագործելու միտումը՝ բնության պահպանության նպատակներից ելնելով: Եվ ինձ թվաց, որ խելացի կլինի մեր ընկերությունը ներկայացնել որպես «բարի, լավ տղա», որը կողմ է բնության պահպանությանը: Որպես հետեւանք այդ թղթի վրա սկսեց տպագրվել ոչ միայն «Կապի մեջ մնալը» տեղեկագիրը, այլեւ ընկերությունը որոշեց իր բոլոր հրատարակությունները տպել 50 տոկոսով վերամշակման ենթարկված կանադական թղթի վրա:

Ահա Նորգեյթի խորհուրդը կորպորատիվ հաղորդակցություններով զբաղվողներին.

- Լրագրողի որակավորումն իհարկե օգնում է: Դուք պետք է լինեք նպատակաուղղված, համբերատար, մանրամասներին ուշադրության դարձնող, ստեղծագործող, կազմակերպված եւ ամենակարեւորը՝ նորամուծություններ մտցնող: Դուք պետք է շատ շփվող լինեք, որովհետեւ ստիպված եք լինելու պարբերաբար գործ ունենալ ձեր ղեկավարության, աշխատակիցների եւ հաճախորդների հետ: Դուք նաեւ պետք է ունենաք լավ գրելու եւ խմբագրելու ունակություններ:

Թյուննոս վաճառելը

Նպատակները պարզ էին՝ շատացնել պակասող առտուրը, վերջ տալ սպառողների բոյկոտին եւ այս ոլորտում առաջատար դիրք գրավել: Ինչպե՞ս հասնել այս նպատակներին:

Պարզ էր, որ պետք էր գործել, սակայն «ՍթարՔիսթ Սիֆուդ Քոմփանիի» ավանդական գովազդային միջոցները ներգործություն չէին ունենում: Բնապահպան կազմակերպությունները երկար տարիների պայքարից հետո վերջապես հասարակական մտահոգություն էին ստեղծել թյուննոս որսացողների կողմից դելֆինների ոչնչացման վերաբերյալ: Կոնգրեսը նույնպես սկսում էր ուշադրություն դարձնել այս հարցին: «ՍթարՔիսթը» լուրջ խնդիրների առջեւ էր կանգնել:

Բայց ի՞նչ քաղաքականություն վարել: «ՍթարՔիսթի» հասարակական կապերի խորհրդատուն՝ «Էդելման Փաբլիք Ռիլեյշնս Վորլդվայդը» սկսեց հետազոտություններ կատարել՝ այս հարցը լուծելու համար: «Էդելմանը» օգտագործեց թիրախային խմբերը, սպառողների տեղյակության ուսումնասիրությունները եւ բնապահպան խմբերի վերլուծությունը:

Մինչ ռազմավարությունն էր որոշվում, դելֆինների ջարդի դեմ ուղարկված նամակները վերածվեցին հեղեղի: Մի բնապահպան իր նավակով դուրս էր եկել ծով, եւ նրա նկարահանած ֆիլմը մահացող դելֆինների մասին ցուցադրվում էր բոլոր հեռուստակայաններով:

Ուղղությունը դարձավ հստակ՝ պետք է ընդունել դելֆիններին փրկողի կեցվածք՝ նվաճելու համար բնապահպանների համակրանքը եւ նույնիսկ ընդգծելու դելֆիններին փրկելու անհրաժեշտությունը: «ՍթարՔիսթը» պետք է դառնար դելֆինների փրկիչ:

Ընկերության դիրքորոշման մասին հասարակությանը տեղյակ պահելու նպատակով՝ «Էդելմանը» կոալիցիա ստեղծեց բնապահպանների եւ կոնգրեսի առաջնորդների միջեւ: «Գրինփիսի», ԱՄՆ-ի «Հյուման Սոսայըթիի» եւ այլ բնապահպան խմբերի հետ խորհրդակցություններ անցկացվեցին եւ կառավարության հետ համաձայնեցվեց, որ պաշտոնական դիտորդները ձկնորսական նավերով ծով դուրս կգան՝ համոզվելու համար, որ «ՍթարՔիսթի» նոր քաղաքականությունը գործում է:

Հաջորդը տեղեկատվության միջոցների վերաբերյալ որոշումն էր: «Էդելմանը» որոշեց, որ գործընթացը երկու փուլից է լինելու բաղկացած՝ առաջինը անվճար (հավաստիության նպատակով) եւ հետո վճարովի (անընդհատ գործը առաջ մղելու նպատակով):

Մինչեւ Վաշինգտոնում նախատեսված մամուլի ասուլիսը սկսելը մի հայտարարություն արվեց, որ «ՍթարՔիսթը» կգնի միայն այն թիւննոսների միսը, որոնք որսացվել են դելֆինների համար ապահով մեթոդներով: Մի սենատոր եւ մի քանի բնապահպաններ խոսեցին եւ իրենց հավանությունն արտահայտեցին այս հարցի վերաբերյալ:

Այս իրադարձությունը դարձավ հասարակական կապերի երազանքների իրականացման օրինակ:

Իրադարձությունը նկարահանվեց եւ տեսաերիզը լայնորեն բաժանվեց: Այդ ասուլիսը դարձավ «ABC»-ի երեկոյան նորությունների գլխավոր թեման եւ լայնորեն լուսաբանվեց «NBC»-ում եւ «CBS»-ում, դրա մասին հոդվածներ գրվեցին «Թայմում», «Նյուսվիքում» եւ 600 այլ թերթերում ու ամսագրերում: Հասարակական կապերի նկարահանած տեսաերիզը հեռուստացույցով դիտեց ավելի քան 81 միլիոն մարդ, ինչը ռեկորդային ցուցանիշ է:

Հասարակական կապերի գործակալության նախագահ Դենիել Ջ. Էդելմանը ասաց, որ «այն, ինչ սպառնում էր դառնալ ֆինանսական աղետ, դարձավ հաջողություն, որովհետեւ «ՍթարՔիսթը» եւ նրա մայր ձեռնարկությունը՝ «Հեյնցը» համաձայնեցին

խնդիրը լուծել ոչ ավանդական եղանակով: «ՍթարՔիսթը» չհրաժարվեց համագործակցությունից»:

Էդելմանն ասում է, որ այսօր հասարակական կապերի աշխատողները հասարակական կարծիքի վերաբերյալ խորհրդատուներ են, ռազմավարություն մշակողներ եւ խնդիրներ լուծողներ: Ըստ նրա, մի ժամանակ հասարակական կապերով զբաղվող ֆիրմաները պարզապես տեղեկագրեր էին պատրաստում: Հետո նրանք խորհուրդ էին տալիս, թե ինչ պետք է ասել: Այսօր նրանք խորհուրդ ենք տալիս, թե ինչ պետք է անել:

Էդելմանի գործակալությունը աշխարհում հասարակական կապերի ամենամեծ մասնավոր ֆիրման է: Այն 450 աշխատող եւ 19 գրասենյակ ունի տարբեր երկրներում:

Հասարակական հարաբերություններ

Պետությունը հասարակական կարծիքի վրա ազդելու գործում նույնպես պասիվ դեր չի կատարում: Բոլորը գիտեն այն հասարակական կապերի ֆիրմաների աշխատանքի մասին, որոնք կառավարությունից սպասում են իրենց հաճախորդի համար բարենպաստ օրենսդրության ընդունում եւ զիջողական կարգավորող համակարգ: Կառավարական հրապարակախոսների գործունեությունը պակաս տեսանելի է, բայց ոչ պակաս եռանդուն:

Իրականում, հասարակական կապերի առաջացման առաջին տարիներին պետական եւ առեւտրային հրապարակախոսները պայքարում էին միմյանց դեմ: Ամենաառաջին հասարակական կապերի գործակալությունը՝ «Փաբլիսիթի Բյուրոն», դուրս եկավ ընդդեմ Թեոդոր Ռուզվելտի, երբ վերջինս որոշեց կարգավորման ենթարկել երկաթգծերի գործունեությունը: Ռուզվելտը, որը մամուլի միջոցով հասարակական կարծիքի վրա ազդելու մասնագետ էր, շահեց այդ պայքարը:

Տասնյակ հազարավոր պետական հրապարակախոսների աշխատանքի մեծ մասը կատարվում է հասարակության աչքից հեռու: Մենք կուսումնասիրենք մեկ պետական հրապարակախոսի աշխատանքը, որը կատարվում է գյուղական վայրում: Հետո կանդրադառնանք մի հրապարակախոսի, որը իր ղեկավարի՝ մի կոնգրեսականի համար բախումների մեջ մտավ արդյունաբերական հսկաների հետ:

Գյուղում

Վերամշակում, ջրի խնայողություն, մեքենաները լվանալու խնայողական հարմարանքներ: Բոլորը, ովքեր կողմ են, թող ձայն հանեն: Քվեարկությունը անցավ միաձայն: Բնության պահպանությանը ոչ ոք դեմ չէ:

Բայց մարդկանց ցանքածածկերի համար տերեւներ հավաքելու, ջուրը խնայելու եւ ամբողջ ընտանիքով աշխատանքի մեկ մեքենայով գնալու համոզելը դժվար գործ է: Եվ այն կատարում է Քերոլ Նեյշնը:

- Ես թանկ ծրագրեր եմ վաճառում, որոնք հաջողության գրավականը քաղաքացիների մասնակցությունն է, - ասում է նա, - եւ իմ գործը կատարելու համար ես նախընտրում եմ ոչ պետական մոտեցումը, որը գովազդային է եւ օգտագործվում է թերթերի կողմից:

- Ես հասկացա, որ թերթ տպագրելու արվեստը՝ տպագրելու ձեւը, ձեւավորումը, գրելու ոճը, օգնում են վաճառելու այս ծրագրերը:

Նա փորձում է իր բրոշյուրները ավելի հետաքրքիր դարձնել եւ ավելի շատ տեղեկատվություն մատուցել: Օրինակ՝ նրան հրահանգվել էր Արլինգտոնի բնակիչներին խրախուսել օգտվելու «Իգլ-քարտ» կոչված կիսաավտոմատ աղբահավաք կոնտեյներներից:

- Ինձ ասացին, որ համանման քարոզարշավները այլ մեծ քաղաքներում հանգեցրել էին բազմաթիվ բախումների, հասարակական լսումների եւ վեճերի, - ասում է Քերոլը, - երբ ես դիտեցի այն գովազդներն ու հրապարակախոսությունները, որոնք արվել էին այդ քաղաքներում, ապա միանգամից նկատեցի, որ այդ նյութերը 100 տոկոսով պաշտոնական են: Բրոշյուրները բարձրորակ թղթի վրա եւ շատ լավ գույներով էին տպված, բայց բոլորի առաջին էջի վրա մեծ աղբի կոնտեյների նկար կար, իսկ մյուս էջերին անպայման կգտնեիր փողոցի երկարությամբ շարված այս հսկա աղբի կոնտեյների լուսանկարները:

- Այդ բրոշյուրներն այն բանի մասին էին, թե ինչ կարող են անել քաղաքացիները այս աղբի հավաքման կոնտեյներների համար, եւ ոչ մի բառ չկար այն բանի մասին, թե ինչ կարող են այս կոնտեյներները անել քաղաքացիների համար, - ասում է նա:

Նա որոշեց երկու մոտեցումով լուծել խնդիրը՝ գործի հետ կապ չունեցող առաջին էջ եւ իրական թեմային շատ զգույշ մոտեցում:

Առաջին էջի վրա նա դրեց իր լուսանկարը, որտեղ պատկերված էր գիշերանոց հագած մի երիտասարդ կին, որը աղբամանը քաշելով տանում էր դեպի կոնտեյները: Եվ հենց առաջին էջի վրա քաղաքացիներին հրավիրում էր մասնակցելու այս ծրագրին՝ հետեւյալ հայտարարությամբ.

Խնայեցեք Ձեր մեջքը:
Այլեւս ծանր աղբամանները քարշ տալու կարիք չկա :

Նեյշնը իր կատարած հետազոտություններով իմացավ, որ մեջքի վնասվածքները երկրում բավականին լուրջ խնդիր են: Մեջքի ցավերը եւ վնասվածքները բնակչությանը տարեկան 81 միլիարդ դոլար են արժենում եւ դառնում են անաշխատունակության եւ կորցրած աշխատաժամերի պատճառ: Որպես հետեւանք, մարդկանց 97 տոկոսը ցանկություն հայտնեց մասնակցելու այս թեթեւ սայլակների փորձարկումներին: Հասարակական ընդդիմություն բացարձակապես չկար:

Նեյշնի բրոշյուրներից մի քանիսը օգտագործվում են հասարակական կապերի դասընթացների ժամանակ, եւ նրա ոչ պաշտոնական մոտեցումը ազդեցություն թողեց պետական հրապարակախոսների վրա:

Մայրաքաղաքում

Իրենց էությամբ լրագրողները թերահավատ են, եթե ոչ ցինիկ, եւ Վաշինգտոնի մամուլը հավանաբար ունի ցինիկ լրագրողների ամենաբարձր տոկոսը: Նրանք ցանկացած լսում, ելույթ, բանավեճ կամ բաժանված տեղեկագիր դիտում են որպես սենսացիա ստեղծելու միջոց: Բայց կառավարությունը հասարակության հետ կապի համար օգտագործում է իր հետ համագործակցող մամուլը:

Համակարգող, բիզնեսի հնարավորությունների եւ էներգետիկայի ենթահանձնաժողովի նախագահ, սենատոր Ռոն Վայդենը ասում է, որ մամուլը Վաշինգտոնի «երկաթյա եռանկյունու» կետերից մեկն է: Յուրաքանչյուր կետ իր դերն է խաղում կառավարության աշխատանքի իրականացման մեջ: Եռանկյունին կազմված է նաեւ հզոր լոբբիից, որը կարող է քվեներ հավաքել եւ ներկայացուցիչների պալատի կամ սենատի հզոր անդամից, որը ղեկավարում է մամուլը եւ լոբբին:

Քաղաքականություն վարելու համար Վայդենը նախ եւ առաջ օգտագործում է մամուլը: Նրա ենթահանձնաժողովի աշխատակազմի ղեկավար Սթիվ Ջեննիգսը այն լրագրողների հետ կապող օղակի դեր է կատարում, ովքեր լուսաբանում են կոնգրեսի աշխատանքը:

- Մամուլին հետաքրքրելու համար պետք է շատ հրապուրիչ նյութ ունենալ,- ասում է Ջեննիգսը:

- Առանց մամուլի մեր կատարած գործերի մեծ մասը շատ ավելի դժվար, եթե ոչ անհնարին կլիներ հասցնել ավարտին: Մենք մամուլը մեզ չենք ենթարկել, ոչ էլ դիտում ենք այն որպես գործընկեր: Իրականում մեր գործը ինքն է խոսում իր մասին, մենք համարյա չենք վերահսկում մամուլի աշխատանքը,- ասում է Ջեննիգսը:

- Վերջերս մենք աշխատում էինք բժշկական մի խաբեության հետազոտման վրա: Լրագրողներին օգնելու համար մենք օգտագործեցինք մեր հնարավորությունները: Որպեսզի նրանք ստիպված չլինեին միայն մեր հայտարարությունը լուսաբանելու, մենք նրանց տեղեկացնում էինք, թե որտեղ են տեղի ունեցել խաբեության դեպքերը, որպեսզի նրանք կարողանային ռեպորտաժներ կազմակերպել նաեւ տեղերից:

Ջեննինգսը նաեւ պահում է հզոր տեղեկատվական գործակալությունների այն լրագրողների ցուցակը, ովքեր զբաղվում են որոշակի ոլորտի լուսաբանմամբ: Այս մասնագետները միշտ տեղյակ են պահվում վերջին իրադարձությունների մասին:

- Այս ամենի համար պետք է հասկանալ, թե ինչպես է լրագրողը աշխատում, նրա համար ժամանակի կարեւորությունը, եւ իմանալ թե որ հարցը կամ իրադարձությունը եւ ինչի համար է արժանի լուսաբանվելու, - ասում է Ջեննինգսը՝ «Ասոշիեյթիդ Փրեսի» նախկին աշխատակիցը:

Լրագրողի տեսակետը

Եկեք դիտենք հասարակական կապերի աշխատանքը այլ տեսանկյունից: Ջեյմս Բ. Միդոուն՝ «Ռոքի Մաունթին Նյուսի» լրագրողը, հասարակական կապերի եւ հրապարակախոսների կողմից մեծ քանակի նյութեր է ստանում, որի մեծ մասը նախնական տեղեկագրեր են:

- Այս հասարակական կապերի գործակալության աշխատակիցների բարեհամբուրության տակ թաքնված է իմ թերթի սյունակում իրենց համար կարեւոր տեղեկատվությունը տեսնելու

ցանկությունը, - ասում է Միդոուն: Նման տեղեկատվությունը օգնում է բարեգործական նպատակներով գումար հավաքողներին իրենց կազմակերպած երեկույթի տոմսերը վաճառելու հարցում: Չնայած Միդոուն իրեն տրված տեղեկատվության մեծ մասը չի հրապարակում իր սյունակում, բայց այդ նախնական տեղեկագրերը օգնում են նրան կազմակերպելու իր աշխատանքը: Հնարավորության դեպքում նա փորձում է գրել այս իրադարձությունների մեծ մասի մասին:

- Իրականում ինձ հարկավոր է միայն իմանալ իրադարձության ժամկետը, որոշակի տեղեկություններ դրա մասին եւ այն մարդու հեռախոսահամարը, որը զբաղվում է այս իրադարձությամբ, որպեսզի ես կարողանամ որոշակի փաստեր ճշտել,- ասում է նա:

- Հրավերները իմ «ջրաղացի աղունն են» եւ դրանք տարբեր ձեւերի եւ չափերի են լինում: Որոշ մասը լինում է գլանաձեւ փաթաթված, որոշը՝ դրված պլաստիկից շշերի մեջ, որոշը՝ պայուսակների մեջ, զարդարված փուչիկներով եւ դրոշակներով: Երբեմն որոշ հրավերների հետ խաղալիքներ են ուղարկում՝ օճառի պղպջակներ, ջուր կրակող հրացան, որը նման է ավտոմատ հրազենի եւ այլն: Դուք կարող եք հարցնել, թե արդյո՞ք դա ծառայում է իր նպատակին: Երբեմն: Բայց միայն այն, որ ես դրանք առաջինն եմ կարդում եւ ժպտում եմ այդ մարդկանց ստեղծարարության վրա, չի նշանակում, որ ես այդ իրադարձությունը իմ սյունակում կնշեմ կամ կայցելեմ այնտեղ եւ կգրեմ դրա մասին,- ասում է Միդոուն:

Նա շատ հրավերներ է ստանում: Եվ նրա ընտրությունը հաճախ կախված է հրավիրվածների ցուցակից:

- Համարյա բոլոր բարեգործական երեկոներին, լինի դա գազանանոցի, հասարակական գրադարանի, բուսաբանական այգու կամ արվեստի եւ պատմության թանգարանների համար, հրավիրում են հայտնի մարդիկ, - ասում է նա, եւ այսպիսով նրա այցելելը այս իրադարձություններին կարեւոր է: Որոշ իրադարձություններ արվում են մեծ չափի գումարներ հավաքելու համար, եւ նա այցելում է դրանք: Նա նաեւ փորձում է անպայման այցելել այն իրադարձություններին, որոնք կազմակերպվում են փոքրամասնությունների խմբերի կողմից: Ըստ նրա, այս խմբերը բավականին երկար ժամանակ անտեսվել են մամուլի կողմից:

Էթիկա

Հասարակական կապերի քննադատները պնդում են, որ հա-

սարակական կապերով զբաղվողները ավելի շատ մտահոգված են իրենց հաճախորդներին ներկայացնելով կամ ծառայությունը վաճառելով, քան թե ճշմարտությունը ասելով: Այս մեղադրանքից պաշտպանվելու համար հասարակական կապերով զբաղվողները պատասխանում են, որ անցյալի չափազանցությունները մնացել են անցյալում եւ այժմ նրանք շարժվում են էթիկայի նորմերով, որը շեշտը դնում է ազնվության եւ շիտակության վրա:

Հասարակական կապերը, անկասկած, աճել են: Դրանց զարգացող բարոյականությունը աճում է բիզնեսով զբաղվողների աստիճանական զարգացմանը համընթաց: Հյուսթոնի համալսարանի մասնագետ Մայքլ Ռայանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասարակական կապերով զբաղվողները համաձայն են այն մտքի հետ, ըստ որի «Հասարակության համար օգտակար ծրագրեր մշակելը լավ բիզնես է եւ այն ընկերությունը, որը պատասխանատվությամբ է մոտենում այս հարցին, ավելի մեծ հաջողությունների է հասնում»:

Հասարակական կապերի կամ գովազդային գործակալությունների աշխատողները հաճախ կապեր չունեն այն մարդկանց հետ, ում ուղղվում են նրանց հաղորդագրությունները, եւ սա կարող է էթիկական խնդիրներ առաջացնել: Եթե այն լսարանի մասին, որին դիմում են, չկա հստակ պատկերացում, ապա հրապարակախոսը կամ գովազդը գրողը կարող են չպատկերացնել իրենց օգտագործելիք լեզվի ազդեցությունը անհատների վրա:

Որոշ գործակալությունների ղեկավարությունը հասկանում է իրական աշխարհից այս մեկուսացման վտանգը, եւ նրանք խորհուրդ են տալիս իրենց աշխատակիցներին՝ զգուշանալ մարդկանց հետ հեռվից խոսելու հետեւանքներից: Նրանք նշում են, որ գրողները պետք է հարգեն այն մարդկանց, ում ուղղված է իրենց աշխատանքը: Առանց այս հարգանքի, որին փորձում են հասնել ղեկավարները, ամենալավ տեղեկագիրը եւ ամենահամոզիչ գովազդը արդյունավետ չեն լինի:

Աշխատանքի ընդունվելը

Հասարակական կապերի եւ գովազդային գործակալությունների մեծ մասը փորձում է աշխատանքի ընդունվել ցանկացողներին: Հարցազրույց վարողը ուսումնասիրում է դիմորդի քոլեջի առաջադիմությունը, աշխատանքի փորձը եւ երաշխավորագրերը: Լրագրողի որակավորումն այս հարցում օգնում է: Խոշոր գործակալություններ աշխատանքի ընդունվելու համար հաճախ անհ-

րաժեշտ է աշխատանքային փորձ ունենալը, բայց սա միշտ չէ որ անհրաժեշտ պայման է: Ինչեւէ, այն դիմորդը, ով այս ասպարեզում փորձ չունի, պետք է ցուցաբերի նվիրվածություն գովազդին, հասարակական կապերին կամ ժուռնալիստիկային:

Մերի Հաչեթը սկսեց աշխատել «Բարսոն-Մարսթելլերում» Օհայոյի համալսարանն ավարտելուց անմիջապես հետո: Չնայած նա չուներ աշխատանքի փորձ, բայց նա կարողացավ ցուցադրել իր նվիրվածությունը այս ասպարեզին. 9-10-րդ դասարաններում նա զբաղվում էր դպրոցի հասարակական կապերով եւ միաժամանակ տեղական թերթի թղթակիցն էր դպրոցում:

Արթուր Վ. Սիերվոն՝ Փենսիլվանիայի նահանգային համալսարանի հասարակական կապերի եւ տեղեկատվության տնօրենը, խորհուրդ է տալիս հասարակական կապերի աշխատանքի ընդունողներին միշտ գրավոր տեստ առաջարկել՝ պարզելու համար դիմորդի ոճը, արագությունը եւ ճշգրտությունը:

Ջոն Ատրոպեուսը՝ «Բարսոն-Մարսթելլերի» խմբագրային տնօրենը, գնահատում է իր գործակալություն աշխատանքի ընդունվել ցանկացողների գրավոր տեստերը: Տեստը բաղկացած է մի քանի մասերից.

- Պարբերության խմբագրում՝ ուղղելու համար տառասխալները, սխալ գրված դերանունները, հանելու համար ոչ անհրաժեշտ բառերը, ուղղելու սխալ օգտագործված բառերը.
- Մի քանի փաստերից ընդհանուր մի պատկեր ստեղծելը,
- Նոր արտադրանքի վերաբերյալ 250 բառից բաղկացած տեղեկագիր գրելը,
- Երկարաբանությունների ուղղում,
- Ելույթի վերաբերյալ հոդված գրելը:

Ելույթի մասին հոդվածներում ամենահաճախ պատահող սխալը հետեւյալ ձեւով լիդը սկսելն է՝ «Այսինչը երեկ այնինչ թեմայով ասաց...»,- ասում է Ատրոպեուսը,- շատ շատերը չգիտեն, թե ինչ է նորությունը եւ ինչ է լիդը:

Սկսնակների այլ պակասությունների վերաբերյալ Ատրոպեուսը ասում է.

- Նրանց որոշ մասը կարծես թե փաստերը ստուգելու եռանդ չունի:

Կարիերայի սանդուղքով դեպի վեր

Ահա այն աշխատավարձերը եւ ժամանակահատվածները, որը աշխատակիցը պետք է անցկացնի մեծ գործակալությունում՝ առաջ ընթանալու համար.

Ներկայացուցիչ՝ 18.000 - 20.000 դոլար; վեց ամսից մինչեւ 1 տարի:

Գործակալի օգնական՝ մինչեւ 25.000 դոլար; մեկ տարի:

Գործակալ՝ 25.000 - 35.000 դոլար; մեկից երկու տարի:

Ավագ գործակալ՝ մինչեւ 40.000 դոլար; սահմանափակում չկա:

Գործի կառավարիչ՝ աշխատավարձի եւ աշխատանքի ժամկետի սահմանափակումներ չկան:

Որպես լրագրող մեկ տարի աշխատելու դեպքում սովորաբար գործակալություններում աշխատանքի են ընդունում որպես գործակալի օգնական:

Մաս 5
Օրենքներ եւ նորմեր

Գլուխ 15
Զրպարտություն, գաղտնիություն, էթիկա եւ ճաշակ

Մուտք

Զրպարտության, գաղտնիության եւ էթիկայի նորմերի վերաբերյալ օրենքները եւ ճաշակի սկզբունքները սահմանափակում են դնում ժուռնալիստիկայի վրա:

Զրպարտությունը՝ այնպիսի նյութի սխալ կամ միտումնավոր հրապարակումն է, որը վնաս է հասցնում անձի հեղինակությանը: Այն անձը, ով կարող է ապացուցել, որ ինքը վնաս է կրել տպագրված նյութի կամ լուսանկարի պատճառով, կարող է դատարանի միջոցով պահանջել իր վնասի փոխհատուցումը: Այն նյութը, որը հիմնված է փաստերի վրա եւ ներկայացված է մանրամասն, ազնիվ եւ անկողմնակալ, չի կարող համարվել զրպարտություն:

Գաղտնիությունն իր մասնավոր կյանքը չհրապարակելու անձի իրավունքն է: Լրագրողը իրավունք չունի ներխուժել որեւէ մեկը տուն կամ տեսախցիկ եւ լսող ու ձայնագրող սարքեր օգտագործել՝ մարդու անձնական կյանք ներխուժելու նպատակով:

Էթիկան՝ հասկացություններ են լրագրողների մոտ՝ լրագրողի ճիշտ պահվածքի վերաբերյալ: Այս հասկացությունների մի մասը ձեւակերպված է էթիկայի նորմերի մեջ: Անձնական կարծիքները եւ լրագրողների ու ժուռնալիստիկայի ավանդույթները նույնպես էթիկական նորմերի բաղադրիչ մասն են կազմում:

Ճաշակը՝ այն է ինչ հասարակությունն ընդունում է որպես լեզվի եւ նյութի ճիշտ օգտագործում: Ճաշակը փոփոխվում է ժամանակի հետ եւ կախված է լսարանի բնույթից եւ նրանից, թե ով է ներգրավված տվյալ իրադարձության մեջ: Ընդհանրապես, նյութը, որը համարվում է գռեհիկ, անպարկեշտ կամ անվայել, թույլատրվում է միայն այն դեպքում, երբ այն բացարձակապես անհրաժեշտ է գրվող հոդվածի համար:

Որոշ խնդիրներ

Նյութը նման էր օրաթերթում տպագրված մեկ դյուժին այլ նյութերի՝ մի տեղացի էր ձերբակալվել՝ հարբած վիճակում մեքե-

նա վարելու համար: Բայց այն հանգեցրեց զրպարտության մեղադրանքով հայցի:

Լրագրողը ուրիշի անվան տակ անդամագրվել էր Կու-Կլուքս-Կլանին, որպեսզի կարողանար մի շարք հոդվածներ գրել այդ կազմակերպության մասին, որը սեւամորթների, հրաների եւ կաթոլիկների միջեւ ատելություն է քարոզում: Որոշ լրագրողների մոտ հավանության չարժանացավ այն մեթոդը, որը նա օգտագործել էր իր հոդվածների համար տեղեկատվություն հայթայթելու նպատակով:

Քլիվլենդի երկու հեռուստակայաններ իրենց երեկոյան նորություններում հաղորդել էին, որ դատաքննիչի հետազոտությունը պարզել էր, որ սպանված կինը իրականում տղամարդ է: Զոհը կանանց դահուկավազքի օլիմպիական նախկին չեմպիոն եւ Քլիվլենդի լեհ-ամերիկյան համայնքի անդամ Ստելլա Ուոլշն էր: Համայնքի անդամները մեղադրեցին երկու կայաններին այս տեղեկատվությունը հրապարակելու համար:

«Նյու-Յորք Թայմսը» հրապարակել էր մի կնոջ անունը եւ նրա մասին տեղեկվատվություն այն բանից հետո, երբ նա բռնաբարության զոհ էր դարձել Ֆլորիդայում: «Թայմսի» անձնակազմը բողոքեց այն բանի դեմ, որ թերթը շեղվել է իր քաղաքականությունից, որն է բռնաբարության զոհերի անունները չհրապարակելը:

Ի՞նչն է սխալ, եթե այն իհարկե կա, այս հոդվածներում: Այս հարցին պատասխանելու համար այս գլխում մենք կուսումնասիրենք.

1. Զրպարտության եւ գաղտնիության մասին օրենքները
2. Լրագրողական էթիկան
3. Ճաշակը:

Զրպարտություն

Հոդվածը հաղորդել էր, որ Վեստերն Ավենյու 536 հասցեով ապրող Լ. Դ. Սիլիվեստրը ձերբակալվել էր անցած գիշեր՝ անսթափ վիճակում մեքենա վարելու համար, եւ նրան ձեռնաշղթաներով տարել էին ոստիկանություն: Մի քանի շաբաթ անց Սիլվեստրի փաստաբանը դատի տվեց թերթին զրպարտության համար: Սիլվեստրն ասաց, որ իրեն երբեք չեն ձերբակալել: Իրականում այդ երեկոյան նա գտնվել էր քաղաքից դուրս:

Խմբագիրը արագ ստուգեց այդ փաստը եւ պարզեց, որ լրագրողը սխալ էր թույլ տվել, նրանք ոչինչ չէին կարող անել, բացի մի

քանի հազար դոլար տուգանք վճարելուց: Օրաթերթը պաշտպանվել չէր կարող: Իրականում այն, ինչ կատարվել էր, շատ պարզ էր: Շտապողականության պատճառով ոստիկանական լրագրողը ոստիկանատանը իր ծոցատետրում արագորեն խզմզել էր ձերբակալվածի անունը եւ հասցեն: Ոչ սթափ վիճակում մեքենա վարելը մեծ իրադարձություն չէ եւ լրագրողը շտապել էր ավելի կարեւոր ձերբակալությունները լուսաբանել:

Գրասենյակ վերադառնալուց հետո, լրագրողը չէր կարողացել վերծանել իր խզբզած անունը եւ հասցեն: Նա կարծել էր, որ իր ծոցատետրում գրված է Լ. Դ. Սիլվեստր, եւ նայել էր հեռախոսագիրքը, ճիշտ հասցեն գտնելու համար: Լրագրողը պարզել էր, որ հասցեն Վեստերն Ավենյու 536-ն է: Հոդվածը հենց այդպես էլ տպագրվել էր: Իրականում ձերբակալված անձնավորությունը Իսթրն Ավենյու 561 հասցեով բնակվող Տ. Դ. Սիլվեստրն էր եղել:

Այս միջադեպը բացահայտում է զրպարտության մեղադրանքով դատարան ներկայացված հայցերի մեծ մասի պատճառը՝ անփույթ լրատվությունը, հավանական վտանգավոր նյութը չստուգելը:

Զրպարտության սահմանումը

Զրպարտությունը այն նյութի հրապարակումն է, որը վնաս է հասցնում անձին՝ նրան պատճառելով՝

1. Ֆինանսական կորուստներ,
2. Վնաս հեղինակությանը,
3. Վիրավորանք, հոգեկան տառապանք եւ տանջանք:

Օրաթերթերը իսկապես տպագրում են հոդվածներ, որոնց հետեւանքով մարդիկ կորցնում են իրենց աշխատանքը, եւ որոնք վնաս են հասցնում նրանց հեղինակությանը եւ նրանց հոգեկան տառապանքներ են պատճառում: Օհայոյի կոնգրեսականը, որն իր սիրուհուն պետական կառույցներում մի աշխատանքի էր տեղավորել, մերկացվեց լրագրողների կողմից եւ պարտություն կրեց վերընտրական արշավում: Այս հոդվածի հետեւանքը դարձավ աշխատանքի կորուստը եւ վարկաբեկված հեղինակությունը: Չնայած այս ամենին, կոնգրեսականը զրպարտության մեղադրանք չներկայացրեց, քանի որ հոդվածը ճիշտ էր: Նա գիտեր, որ չի կարող շահել նման դատավարությունը, քանի որ լրագրողներն ունեին այդ կնոջ հայտարարությունը եւ իրականացված վճարումների ապացույցները:

Ստույգ հոդվածը կարելի է տպագրել կամ հեռարձակել առանց վախենալու: Բայց եթե հոդվածքը ստույգ չէ, ապա կարող են խնդիրներ առաջանալ: Սիլվեստրի ձերբակալման մասին հոդվածը այդ շաբաթվա մոտ մեկ դյուժին ձերբակալումների մասին հոդվածներից միակ սխալն էր: Մյուս հոդվածներում նշված մարդիկ անկասկած տհաճություն էին ապրել իրենց ձեռբակալությունների մասին հոդվածների պատճառով: Սակայն, ի տարբերություն Սիլվեստրի, նրանք չէին կարող զրպարտության մեղադրանք ներկայացնել, քանի որ նրանց ձերբակալությունների մասին հոդվածները ճիշտ էին:

Զրպարտության մեղադրանքից պաշտպանվելը

Զրպարտության մեղադրանքից պաշտպավելու համար երեք հիմնական միջոցներ կան.

1. Ճշմարտություն՝ եթե լրագրողը կարողանա ապացուցել, որ զրպարտող նյութը իրականում ճիշտ է, ապա տուժած անձնավորությունը, եթե նույնիսկ ցանկանա դատական գործ հարուցել, ապա չի կարողանա շահել այն: Բայց լրագրողի համար բավական չէ ասել, որ նա կարծում էր թե նյութը ճիշտ է կամ որ ինչ-որ մեկն ասել էր, որ այն ճիշտ է: Նա պետք է ունենա ապացույց, որ այն ճշմարիտ է: Ճշմարտությունը համարյա միշտ բացարձակ պաշտպանության միջոց է զրպարտության մեջ մեղադրվելու դեպքում:

2. Արտոնություն՝ ցանկացած բան, որ ասվել է հասարակական եւ պաշտոնական օրենսդրական կամ դատական պայմաններում, լինի դա ճիշտ, թե սխալ, կարող է լուսաբանվել: Օրենսդրական մարմիններն են քաղաքային խորհուրդը, գյուղացական հանձնաժողովները, նահանգային օրենսդրական մարմինները եւ կոնգրեսը: Արտոնյալ են համարվում նաեւ դատարանում փաստաբանների, դատավորների եւ վկաների արած հայտարարությունները եւ դատարանի կողմից գրանցված փաստաթղթերը:

3. Անաչառ մեկնաբանություններ եւ քննադատություններ՝ քննադատները կարող են մեկնաբանել այն դերասանների, գրողների, կատարողների, սպորտսմեների աշխատանքները կամ կատարումները, որոնք իրենց ծառայությունն են առաջարկում հասարակությունը: Քննադատությունը պետք է հիմնված լինի փաստերի վրա եւ չպետք է կապ ունենա այն անձնավորության անձնական կյանքի հետ, ում աշխատանքը գնահատվում է: Քննադատությունները չպետք է քինոտ լինեն:

Այս բոլոր դեպքերում լրագրողը կարող է իրեն ապահով զգալ, եթե հոդվածը իրադարձության ամբողջական, ազնիվ, անկողմնակալ եւ ճշգրիտ արտահայտումն է: Եթե հոդվածը այնքան կողմնակալ է, որ հնարավոր է ապացուցել, որ լրագրողը դիտավորյալ կերպով նշել է միայն քննադատական կամ զրպատչական նյութը, ապա հայց ներկայացնելու դեպքում լրագրողը կարող է լուրջ խնդիրների առջեւ կանգնել:

Սալիվանի դատավճիռը

1964 թ.-ին ԱՄՆ Գերագույն դատարանը լրագրողներին որոշակի արտոնություններ տվեց՝ կապված իրենց սխալների հետ: «Նյու Յորք Թայմսը» ընդդեմ Սալիվանի հայտնի գործում դատարանը որոշեց, որ եթե զրպատչական հոդվածի զոհը հասարակական պաշտոնյա է ապա նա պետք է ապացուցի, որ նյութը տպագրվել է «իրական չար դիտավորությամբ»: Իրական չար դիտավորությունը ապացուցելու համար հայցվորը պետք է դատարանում ապացուցի, որ նյութը տպագրվել է.

1. Դրա սխալը լինելու մասին իմացությամբ,

2. Նյութի ճշմարտացիության նկատմամբ անխոհեմ անտարբերությամբ:

Սալիվանի վճիռը առանձին նահանգային դատարանների ձեռքից վերցրեց նրանց վերահսկողությունը զրպարտության գործերի վերաբերյալ: Իր վճռում Գերագույն դատարանը նշեց, որ այստեղ ընդգրկված է Սահմանադրական հարց՝ մամուլի ազատությունը: Այս վճիռը բացատրում է, թե ինչու են այդքան շատ զրպարտության գործերի որոշումներ բողոքարկվում դաշնային դատարաններում:

«Իրական չար դիտավորության» վերաբերյալ Գերագույն դատարանի վճիռը ժամանակավորապես տարածվում էր հասարակական անձանց եւ մասնավոր անհատների վրա, որոնք կապված էին հասարակական կամ պաշտոնական գործունեության հետ:

Ինչեւէ, վերջին դատական որոշումները արգելել են հասարակական անձանց եւ մասնավոր անհատների սահմանումը, այնպես որ այժմ որոշ հասարակական անձանց եւ մասնավոր անհատների հերիք է միայն ապացուցել, որ զրպարտող նյութը տպագրվել կամ հեռարձակվել է անփութության կամ անուշադրության հետեւանքով: Նրանք կարիք չունեն հասնելու այն աստիճանին, որ փորձեն ավելի դժվարը՝ «իրական չար դիտավորությունը» ապացուցեն:

Զրպարտության մեջ մեղադրվելուց խուսափելը

Այն գրավոր նյութի հետ, որը կարող է որեւէ մեկի հեղինակությանը վնաս հասցնել, պետք է զգուշորեն վերաբերվել: Հապճեպ, անզգույշ գրելը վտագավոր է: Ահա այդ առումով որոշ խորհուրդներ.

1. Ստուգեք եւ ճշտեք բոլոր այն նյութերը, որոնք կարող են զրպարտչական լինել: Գրողը պետք է մի քանի անգամ ստուգի այն նյութերը, որոնք.

ա) հարցականի տակ են դնում անձի՝ իր աշխատանքը կատարելու ունակությունը,

բ) պնդում են, որ անձը հանցագործություն է կատարել կամ գործողություն է կատարել, որն իր մեջ հանցանք է պարունակում,

գ) ենթադրում կամ ուղղակիորեն հայտարարում են, որ անձը հոգեկան կամ որեւէ նողկալի հիվանդություն ունի:

2. Համոզվեք, որ կարելի է ապացուցել վիճելի նյութի ճիշտ լինելը:

3. Հատուկ զգուշություն ցուցաբերեք ձերբակալությունների, վնասի փոխհատուցման հայցերի եւ քրեական դատավարությունների մասին հոդվածներ գրելիս: Այս նյութերը ավելի շատ զրպարտության մեջ մեղադրանքների են հանգեցնում քան մյուս բոլորը, եւ համարյա բոլոր հայցերը հետեւանք են անփույթ լրագրության: Ստուգեք անունները, հասցեները, համոզվեք, որ պաշտպանվողի եւ հայցվորի անունները ճիշտ են նշված:

4. Ուշադիր եղեք մեղադրանքների, պնդումների, պահանջների նկատմամբ: Այն բանը, որ ինչ-որ մեկը ինչ-որ բան է ասել, եւ դուք մեջբերել եք նրա ասածը, չի նշանակում, որ դուք անպայմանորեն կխուսափեք զրպարտության մեջ մեղադրանքից: Եթե դատախազը ասում է ձեզ, որ ինքը մի բիզնես է հետաքննում, որի նկատմամբ մի քանի հայցեր են հարուցված, եւ դուք մեջբերում եք նրա ասածը, ապա հնարավոր է, որ դուք մեղադրվեք զրպարտության մեջ եւ պարտվեք դատարանում, եթե բիզնեսի տերը ապացուցի, որ իր նկատմամբ գործ չի հարուցվել: Եթե դատախազը նույն հայտարարությունը անի դատավարության ժամանակ կամ այդ պահին մեղադրանքներ ներկայացնի եւ հայտարարություններ անի, ապա դուք կարող եք օգտագործել այդ նյութը, որովհետեւ այն պաշտպանվում է արտոնյալության պատճառով:

5. Մի փորձեք զրպարտչական նյութ մտցնել հոդվածի մեջ, գրելով այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ «մեջբերելով ...», կամ «ինչպես հայտնել է ...»: Այս բառերը զրպարտության մեջ մեղադրվելիս չեն կարող ձեզ պաշտպանել:

6. Երբ մեղադրանքներ են ներկայացված արտոնյալ իրադրության ժամանակ, ապա լավ կլինի այն ստուգել մեղադրվողի հետ: Այս կրկնակի ստուգումը ցույց կտա ձեր արդարությունը:

7. Ուշադիր եղեք այն բառերի հետ, որոնք դատարանը կարող է զրպարտչական համարել.

Նյութը	**Վտանգավոր բառերը**
Հանցագործություն	Խաբեբա, գող, գանգստեր, ավազակ նախկին հանցագործ
Աշխատանքային կամ մասնագիտական անհամապատասխանություն	Ոչ կոմպետենտ, անհաջողակ, շառլատան, սուտասան, աշխատանքից հոգնած, խարդախ
Հիվանդություններ, որոնց պատճառով տվյալ անձին հասարակությունը չի ընդունի	Հարբեցող, բորոտ, թմրամոլ հիվանդոտ, ՁԻԴԱ-ի զոհ
Անձի ֆինանսական դրությանը հասցված վնաս	Անվստահելի, խաղամոլ, խաբեբա, սնանկ, անհաջողակ
Սեռական վարքը, ներառյալ այլասեռվածությունները	Անբարոյական, պոռնիկ, շնացող, փողոցային, ժիգոլո, կավատ, այլսեռված
Մտավոր ունակությունների պակասություն	Գիժ, ցնդած, տարօրինակ, ոչ կոմպետենտ, խելառ, քառակուսի մտածելակերպ ունեցող
Նկարագրություն, որը արհամարհանք կամ ծիծաղ է առաջացնում	Սուտլիկ, վախկոտ, կեղծավոր, կոմունիստ, ֆաշիստ

8. Հոդվածը կարծիքներով մի գեղեցկացրեք: Ուշադիր եղեք եւ թույլ մի տվեք, որ ձեր էնտուզիազմի պատճառով կորցնեք վերահսկողությունը հոդվածի նկատմամբ:

9. Զգույշ եղեք ոստիկանների կամ դատական մարմինների՝ դատարանից դուրս արած հայտարարություններն օգտագործելիս:

10. Ճշմարտությունը կարող է ձեզ պաշտպանել, բայց բարի մտադրությունները՝ ոչ: Հնարավոր է, դուք մտադրություն չունենաք որեւէ մեկին զրպարտելու, բայց երբ պարզվում է, որ ձեր բարի մտադրություններով գրված հոդվածը ճշմարիտ չէ, ապա ձեր մտադրությունները չեն կարող ձեզ պաշտպանել:

11. Սխալի ընդունումը պաշտպանություն չէ՝ ամենաշատը, այն կարող է պակասեցնել պատժաչափը:

Լրագրողների համար մեկ այլ վտանգավոր ասպարեզ է մասնավոր անձանց անձնական կյանքը: Լրագրողները չեն կարող քիթերը խոթել, ծածուկ հետեւել կամ հետաքննել որեւէ մեկի անձնական գործերին:

Հասարակական պաշտոնյաներ

Ընտրված պաշտոնյաներ՝ քաղաքապետներ, նահանգապետներ, կոնգրեսի անդամներ, օրենսդիրներ, քաղաքային խորհրդի անդամներ,

Քաղաքական թեկնածուներ,

Բարձրաստիճան նշանակովի պաշտոնյաներ՝ վերահսկիչներ, տեսուչներ, բժշկական հետաքննողներ, կառավարության անդամներ,

Ոստիկաններ,

Դատավորներ,

Նշում՝ ոչ բոլոր հասարակական աշխատողներն են համարվում հասարակական պաշտոնյաներ:

Հասարարակական անձինք

Ուժ եւ ազդեցություն ունեցող մարդիկ՝ օրաթերթերի հայտնի լրագրողներ, գրողներ, հեռուստատեսային կամ ռադիոյի հայտնի մեկնաբաններ եւ հաղորդավարներ, հայտնի դերասաններ, արիմիությունների պաշտոնյաներ,

Մարդիկ, որոնք ներգրավված են կարեւոր հասարակական բանավեճերի մեջ եւ ցանկանում են ազդել արդյունքների վրա՝ մարդիկ, որոնք եռանդագին կերպով եւ հրապարակայնորեն դեմ են դորս գալիս կամ պաշտպանում են հանրաքվեները, թեկնածությունները:

Գաղտնիություն

Նորություններ որոնելիս լրագրողները մարդկանց անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ են հավաքում, որոնք կարող են տհաճ լինել նրանց համար: Օրաթեթերը սովորականի պես տպագրում են հիվանդանոց ընկածների, ապահարզաննե-

րի, ձերբակալությունների եւ ճանապարհային կանոնների խախտման մասին հոդվածներ: Լրագրողները գտնում եւ հարցազրույց են վարում վթարների կամ հրդեհների պատճառով զոհված երեխաների ծնողների հետ: Կիրակնօրյա հավելվածները եւ ամսագրերը մանրամասն պատմում են աստղերի սեռական կյանքի եւ մարզիկների ալկոհոլիզմի եւ թմրամոլության մասին: Հեռուստատեսությունը միլիոնավոր ունկնդիրների ցույց է տալիս հանցագործությունների եւ ողբերգությունների մեջ ընդգրկված մարդկանց ամոթը եւ վիշտը:

Այս նյութերը կարող են տպագրվել եւ հեռարձակվել առանց վախենալու վնասի փոխհատուցման հայցերից, քանի որ այդ մարդիկ ընդգրկված են օրինական նորությունների իրադարձություններում: Անսթափ վիճակում մեքենա վարողը գաղտնիություն չի կարող պահանջել, երբ նրան ձերբակալում են: Ապահարզանի գործի մանրամասները կարող են հրապարակվել: Ծերանոցում հրդեհի սարսափները եւ հարազատների վիշտը կարող են ցուցադրվել հեռուստատեսությամբ:

Մի օրաթերթ տպագրեց խղճուկ հագնված մի կնոջ լուսանկարը, որին ոստիկանները դուրս էին բերում բնակարանից, որտեղ նրան պահում էին որպես պատանդ: Այդ կինը հայց ներկայացրեց, նշելով, որ լուսանկարը իր համար տհաճ էր եւ վիրավորական: Նրա փաստաբանը ասաց դատարանում, որ լուսանկարը համապատասխանում է իրականությանը, բայց այն ներխուժում է այդ կնոջ անձնական կյանքի մեջ: Դատարանը համաձայնեց եւ որոշեց, որ այդ կինը որպես փոխհատուցում պետք է ստանա 10 000 դոլար: Սակայն որոշումը բողոքարկվեց եւ բողոքը լսող դատարանը վերանայեց որոշումը: Այն գտավ, որ լուսանկարը օրինական նորության մասն է, եւ դրա հրապարակումը ուղղված չի եղել կախամտածված «էմոցիոնալ վիշտը» ցուցադրելուն:

Ինչեւէ, երբ մամուլը սկսում է փորփրել մարդկանց մասնավոր կյանքը, որի հետ հասարակությունը իրավական կապ չունի, ապա հնարավոր է, որ այն խնդիրների առջեւ կանգնի, եթե նույնիսկ նյութը ճշմարիտ է: Զրպարտության մասին օրենքը պաշտպանում է անձի հեղինակությունը: Գաղտնիության իրավունքը մարդուն հնարավորություն է տալիս գաղտնի պահել իր անձնական կյանքը, քանի դեռ նա չի ընդգրկվել այնպիսի իրադարձություններում, որի լուսաբանումը օրինական է:

Վտանգավոր գործունեություն

Գաղտնիության իրավունքը պաշտպանում է մարդկանց՝ լրագրողների կողմից կատարվող բազում գործողություններից.

1. Անձնական կյանքին վերաբերող նյութի հրապարակումը՝ անձի սեռական կյանքի, առողջության, աշխատանքային հարաբերությունների եւ հասարակական գործունեության մասին սենսացիոն նյութ հրապարակելը կարող է որակվել որպես անձնական կյանքին միջամտություն: Եթե գործողությունը մասնավոր է եւ հասարակությունը օրինականորեն կապ չունի դրա հետ, ապա նման նյութը հրապարակելը վտանգավոր է:

Եթե մարզիկը ժամանակավորապես հեռացել է սպորտից թմրադեղեր օգտագործելու կամ ալկոհոլիզմի պատճառով, ապա դրա մասին տեղեկատվությունը կարող է հրապարակվել: Դատարանները որոշել են, որ նյութը կարող է հրապարակվել, եթե այն կապ ունի հայտնի մարդկանց հետ, մտնում է հասարակության հետաքրքրության շրջանակների մեջ եւ «խելամիտ, նորմալ մտածողություն ունեցող անձի համար շատ վիրավորական չէ»:

Եթե որեւէ իրադարձություն տեղի է ունենում հրապարակային կամ եթե տեղեկատվությունը հրապարակված փաստաթղթի մեջ է պարունակվում, ապա այն կարող է տպագրվել, անկախ այն բանից, թե այն ինչքան սենսացիոն կամ վիրավորական է: Այսինքն, եթե տեղեկատվության միջոցը ցանկանա, ապա կարող է հրապարակել սեռական հանցագործության զոհի անունը:

2. Ներխուժում՝ Եթե լրագրողը տեղեկատվություն հավաքելու նպատակով բռնի ներխուժում է որեւէ մասնավոր վայր, ապա դա կոչվում է ներխուժում: Պարտադիր չէ, որ ներխուժումը ֆիզիկական ուժով կատարվի: Աուդիոձայնագրիչների, տեսախցիկների եւ այլ տեսակի ձայնագրող սարքերի օգտագործումն առանց ձայնագրվողի հանմաձայնության համարվում է ներխուժում, եթե նույնիսկ հավաքված նյութը չհրապարակվի: Եթե լրագրողը տուն մտնելու կամ մասնավոր գործերի մասին խոսակցությունները լսելու նպատակով կեղծ անունով է ներկայանում, դա նույնպես համարվում է ներխուժում:

3. Սխալ տեղեկություններ հրապարակելը՝ երբ լրագրողը փորձում է իրադարձությանը ողբերգական երանգ տալ՝ իր կողմից հորինված նյութ մտցնելով նրա մեջ կամ երբ հեռուստակայանը իրական անձի կամ իրադարձության մասին մտացածին նյութեր է հեռարձակում եւ զրպարտչական նյութեր է օգտագործում, ապա անձը կամ իրադարձությունը կարող են դրվել այնպի-

սի դրության մեջ, որը օրենքը կոչում է «սխալ պատկերացում»: Թմրանյութեր վաճառողների մասին վավերագրական ֆիլմում կարող է ցուցադրվել մի անմեղ մարդ, որը տվյալ պահին անցնելիս է եղել նրանց տան մոտով, ինչը այդ մարդու մասին ոչ դիտավորյալ կերպով կարող է սխալ պատկերացում կազմել տալ:

4. Յուրացում՝ ինչ-որ մեկի անունը կամ լուսանկարը գովազդում, կոմերցիոն նպատակներով կամ անձնական նպատակներով օգտագործելը՝ առանց այդ անձի համաձայնության, համարվում է յուրացում: Սակայն օրինական իրադարձությունը լուսաբանելու համար թույլտվության կարիք չի զգացվում:

Էթիկա

Լրագրողները անընդհատ հետեւում են հասարակական անձանց մասնավոր կյանքին, եւ չնայած նրանց տպագրած կամ հեռարձակած նյութերի մեծ մասը զերծ են իրական խնդիրներից, բայց այստեղ հաշվի են առնվում էթիկայի հարցերը.

- Երբ Գարի Հարտը դրել էր իր թեկնածությունը Դեմոկրատական կուսակցության կողմից նախագահական ընտրություններին մասնակցելու համար, նրա Վաշինգտոնի տան մոտ թաքնված լրագրողները տեսան մի երիտասարդ կնոջ, որը մտնում էր նրա տուն: Այդ կինը մնաց այնտեղ մինչեւ մյուս օրը: Երբ օրաթերթերը լուսաբանեցին նրա արտամուսնական կյանքի մանրամասները, նա ստիպված եղավ հանել իր թեկնածությունը:

- Նախկին առաջին լեդի Նենսի Ռեյգանի կենսագրությունում հաստատվում էր, որ նա Սպիտակ Տանը սերտ հարաբերություններ է ունեցել Ֆրենկ Սինատրայի հետ:

Երկու դեպքում էլ ոչ մի իրավական խնդիր չկար, սակայն բարդ էթիկական խնդիրներ գոյություն ունեին: Ճիշտը եւ սխալը որոշելը լրագրողի կողմից կայացվող ամենադժվար վճիռներից է:

Ծահերի բախում, գրագողություն, անազնվություն

Ի «Ավտոմոբիլ» հանդեսի խմբագիրը տարեկան 20-25 ելույթ է ունենում ավտոմեքենա արտադրողների եւ նրանց գովազդային գործակալությունների լսարանների առջեւ եւ ամեն ելույթի համար 5.000 դոլլար է ստանում:

Ի «Մոթոր Թրենդ» հանդեսի լրագրողը «Նիսանի» համար մեքենաներ է փորձարկում:

- «Մեքենա եւ Վարորդ» հանդեսի լրագրողը մինչեւ աշխատանքի գնալը օգնեց «Սուզուկի Մոթոր Քորփ.»-ի գովազդային գործակալությանը գովազդային նյութեր եւ վաճառողների համար նախատեսված ուսումնական ֆիլմ պատրաստել:
- Լրագրողը, որը հեռուստատեսությանը եւ շաբաթաթերթին ներդրումների վերաբերյալ խորհուրդներ է տալիս, ընդունել է «ՄաքԴոնալդս Քորփ.» ընկերության տնօրենների խորհրդում աշխատելու առաջարկը:

Որոշ լրագրողների համար էթիկական սխալները լուրջ հետեւանքներ են ունենում.

Կալիֆորնիայի «Բյեյդ-Թրիբյուն» օրաթերթի լրագրողը թերթի համար մի նյութ էր գրել, որը համարյա բառ առ բառ կրկնում էր Արտ Բուխվալդի հոդվածը: Լրագրողին խնդրեցին հեռանալ թերթից:

- «Դեյլի Նյուսի» լրագրողը Յուսիսային Իռլանդիայում Բելֆասթի փողոցներում անգլիական զինվորների եւ երիտասարդ իռլանդացիների մի բախումը լուսաբանելիս մտացածին գործող անձինք եւ մեջբերումներ էր մտցրել իր հոդվածի մեջ: Նրանից պահանջեցին հեռանալ թերթից:
- Սան-Դիեգոյի «Իվընինգ Թրիբյունի» սպորտային լրագրողը մի հոդված գրեց, որը պարունակում էր նյութեր «Ինսայդ Սպորտս» ամսագրից: Ամսագրից «որոշակի դարձվածքներ» օգտագործելու պատճառով նա ազատվեց աշխատանքից:
- «Վաշինգթոն Փոստի» լրագրողը հեռացվեց աշխատանքից, երբ պարզվեց, որ ութ տարեկան թմրամոլի մասին նրա գրած հոդվածը, որի համար նա «Պուլիտցերյան» մրցանակ էր ստացել, չի համապատասխանում իրականությանը՝ եւ երեխան, եւ իրադարձությունները մտացածին էին: «Փոստը» վերադարձրեց մրցանակը:

Պրոֆեսիոնալ նորմեր

Այսպիսի իրադրությունները ժուռնալիստական էթիկայի վերաբերյալ հարցեր են բարձրացնում: Սրանցից յուրաքանչյուրը լրագրողի վարքագծի աներեւույթ օրենքների խախտման օրինակ է:

Լրագրողը պետք է լինի ազնիվ, կատարի իր աշխատանքը եւ խուսափի այնպիսի գործողություններից, որոնք կարող են հարցականի տակ դնել նրա ազնվությունը: Այս եւ մյուս էթիկական

հիմնախնդիրները արտացոլված են օրաթերթերի, հեռարձակման կայանների եւ լրագրողների ազգային ասոցիացիաների կողմից ընդունված տարբեր նորմերում: Այս նորմերը ցույց են տալիս լրագրողի պատասխանատվությունը ընթերցողների կամ ունկնդիրների եւ անձնական ճշտապահության, ազնվության եւ կարեկցության առջեւ: «Օրաթերթերի խմբագրերի ամերիկյան ընկերությունը» իր նորմերում էթիկական վարքի վեց սկզբունքներ է նշում.

Պատասխանատվություն՝ լրագրողի խնդիրը համընդհանուր բարեկեցությանը ծառայելն է՝ մարդկանց տեղյակ պահելու միջոցով, որպեսզի նրանք կարողանան իրենց առջեւ ծագած խնդիրների վերաբերյալ կարծիք կազմել: Լրագրողները չպետք է չարաշահեն իրենց ուժը՝ օգտագործելով այն անձնական կամ անարժան նպատակներով:

Մամուլի ազատությունը՝ լրագրողները պետք է համոզված լինեն, որ հասարակությանը վերաբերող գործը հասցրել են հասարակության քննարկմանը, որպեսզի մարդիկ, տեղեկանալով, կարողանան հասարակական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնել: Նրանք պետք է զգոն լինեն նրանց նկատմամբ, ովքեր օգտագործում են մամուլը իրենց նպատակներին հասնելու համար:

Անկախություն՝ լրագրողները պետք է խուսափեն շահերի բախումներից: Նրանք չպետք է որեւէ բան ընդունեն՝ ի փոխհատուցումն իրենց աշխատանքի, ոչ էլ կատարեն որեւէ գործողություն, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել նրանց ազնվությունը:

Ճշմարտություն եւ ճշտապահություն՝ լրագրողը պետք է ձգտի պահապանել ընթերցողի հավատը՝ հավաստիացնելով նրանց, որ նորությունը ճիշտ է, զերծ է կանխակալությունից, եւ որ բոլոր կողմերը արդարացիորեն ներկայացված են:

Անկողմնակալություն՝ լուսաբանված նորությունները եւ կարծիքները պետք է տարբերակվեն: Անպայման պետք է նշել, որ տվյալ հոդվածը արտահայտում է ինչ-որ մեկի կարծիքը:

«Ազնիվ խաղ»՝ լրագրողները պետք է հարգեն նորությունների մեջ ընդգրկված մարդկանց իրավունքները եւ պատասխան տան հասարակության առջեւ իրենց հոդվածների ազնվության եւ ճշտապահության համար: Նորություններում մեղադրված անձանց պետք է հնարավորություն տալ պատասխանելու իրենց դեմ հարուցված մեղադրանքներին:

Անձնական նորմեր

Սակայն նորմերը էթիկական վարքագծի ամբողջական ձեռնարկներ չեն: Արդյոք պե՞տք է հայտնել բռնաբարության կամ ԴԱՎ-ի զոհերի անունները: Սա արդեն լրագրողի ինքնագիտակցությանը կամ նրա ղեկավարի էթիկային վերաբերող հարցեր են: Երբ «NBC»-ին եւ «Նյու Յորք Թայմսը» հայտնեցին այն կնոջ անունը, որը դատարան էր դիմել՝ մեղադրելով Քենեդիների բարեկամներից մեկին իրեն բռնաբարելու մեջ, «Թայմսի» մոտ 300 աշխատակիցներ բողոքեցին դրա դեմ՝ ծաղրելով թերթի ղեկավարության կողմից տրված բացատրությունը:

Արդյո՞ք թաքստոցից հետեւելը ճիշտ է լրագրողի համար: Արդյո՞ք լրագրողը ունի բարոյական իրավունք վարվել այնպես, ինչպես «Մայամի Հերալդի» լրագրողները, երբ նրանք լրտեսում էին սենատոր Հարտին եւ հաղորդեցին, որ մի կին այցելել է նրան եւ նրա տանն է մնացել ամբողջ գիշերը:

Տարբեր լրագրողներ տարբեր պատասխաններ են տալիս: Ոմանք չեն դատապարտում նման գործունեությունը, բայց իրենք նման հանձնարարություններից հրաժարվում են: Այս ընտրությունը տանում է մեզ դեպի էթիկական վարքագծի հիմքերը՝ լրագրողի անձնական նորմերը:

Անձնական նորմերը տարբերվում են, բայց դրանք բոլորը հիմնվում են չորս էթիկական սկզբունքների վրա՝

1. լրագրողների հասարակական պարտականությունն է ճշմարտությունն ասելը,

2. լրագրողները հակադրվում են իշխանություններին,

3. լրագրողները գործում են ճնշվածների, զոհերի եւ տառապողների մասին հոգալու նպատակով,

4. լրագրողները պարտավոր են ստուգել իրենց աշխատանքը եւ դրդապատճառները:

Պատասխանատվություն հասարակության առջեւ

Մենք բոլորս տարբերում ենք ճիշտը եւ սխալը: Մեր բարոյական մտածելակերպը կարող էր ազդեցություն կրել մեր ծնողների, դպրոցների կամ կրոնական ուսուցման կողմից: Մեր մտածելակերպը ձեւավորել է նաեւ այն, ինչ մենք կարդացել ենք: Շատ երիտասարդների համար ընկերները նույնպես հզոր ազդող գործոն են՝

ճիշտը եւ սխալը որոշելու գործում:

Երկու օր շարունակ Կալիֆորնիայի դպրոցներից մեկի 16-ամյա աշակերտը պատմում էր, թե ինչպես է բռնաբարել եւ այնուհետեւ խեղդել իր 14-ամյա ընկերուհուն: Հետո նա իր մի քանի ընկերներին տարել էր նրա մարմինը ցույց տալու: Աղջկա մարմինը տեսել էին ութ տղաներ: Նրանց մի մասը մարմինը ծածկել էր տերեւներով, մեկը քարով խփել էր աղջկա գլխին՝ համոզվելու համար, որ այն իսկապես մարդու մարմին է:

Ընկերներից ոչ մեկը տեղյակ չպահեց ոստիկանությանը:

Միայն նրանցից մեկը աղջկա մարմինը ցույց տվեց մոտակայքում աշխատող մի բանվորի, որն էլ տեղեկացրեց դրա մասին ոստիկանությանը:

Երբ տարածվեցին լուրերը, որ մարմինը հայտնաբերվել է, դպրոցի աշակերտներից ոմանք քննադատեցին այդ բանվորին՝ ոստիկանությանը տեղյակ պահելու համար: Այս վերաբերմունքից հետո բանվորը ասաց, որ ինքը չգիտի, թե արդյո՞ք մյուս անգամ նման դեպքում ինքը նույն կերպ կվարվի:

Սերժանտ Գարի Միքերը այս կապակցությամբ զարմացած էր.

- Ի՞նչ է պատահել այս երեխաներին:

Սերժանտ Ռոն Այսլին կարծում էր, որ ինքը գիտի.

- Սովորաբար երբ մարդիկ վկա են դառնում սպանությանը, նրանք միանգամից դիմում են մեզ, - ասում էր նա, - Բայց գոյություն ունի այսպես կոչված պատվի հասկացողությունը, որն ասում է, որ պետք է մոռանալ այդ աղջկան եւ պաշտպանել ընկերոջը:

Չնայած ընկերական հավատարմությունը պատվարժան հատկանիշ է, բայց մենք պետք է մեր հավատարմության ավելի հզոր պահանջները բավարարենք՝ դա մեր պատասխանատվությունն է հասարակության առջեւ: Լրագրողները կարող են օգտագործել իրենց պատասխանատվության զգացումը հասարակության առջեւ որպես վարքագծի անձնական նորմերի հաստատման հիմք:

Ժուռնալիստիկան հասարակական ծառայություն է: Դրանով զբաղվողները ազատ են որեւէ հատուկ խմբի նկատմամբ պարտականություններից եւ դեպի նրանց ուղղվածությունից: Լրագրողները հասարակության առջեւ իրենց պատասխանատվությունը վեր են դասում իրենց ղեկավարի, կուսակցության կամ ընկերների նկատմամբ հավատարմությունից:

Եթե տեղեկատվության աղբյուրը կամ ընկերը խնդրում է չտպագրել կամ չհեռարձակել որեւէ նյութ, ապա լրագրողը պետք է

այս խնդրանքը համադրի հասարակությանը տեղեկացնելու իր պարտականության հետ: Եթե խմբագիրը, հրատարակիչը կամ նորությունների տնօրենը չհրապարակի նյութը, կամ նյութից որեւէ տեղեկատվություն հանի այն հիմնավորմամբ, որ այն կարող է վնասել թերթի կամ կայանի ընկերների եւ բարեկամների գործին կամ գովազդին, ապա լրագրողը պետք է դեմ դուրս գա սրան՝ ելնելով նույն բարոյական սկզբունքից՝ հասարակությանը ճշմարտությունն ասելու պարտականությունից:

Երկու դեպքում էլ լրագրողի հետագա քայլերը պարզ են՝ հետեւել, որպեսզի տեղեկատվությունը հասնի ընթերցողներին եւ ունկնդիրներին: Որոշ լրագրողներ նախընտրում են կորցնել տեղեկատվության աղբյուրները կամ դուրս գալ աշխատանքից, քան մասնակից դառնալ տեղեկատվությունը թաքցնելուն:

Երբեմն հասարակությանը տեղյակ պահելու պարտականությունը կարող է հասնել լարման գագաթնակետին: Օրինակ, երբ լրագրողը իմանում է մի այնպիսի բան, որը կառավարությունը ցանկանում է գաղտնի պահել՝ ելնելով «ազգային անվտանգության» պահանջներից: Նման դեպքերում լրագրողը կանգնում է երկընտրանքի առջեւ: Ժողովրդավարական կարգերում հասարակությունն իրավունք ունի իմանալու, թե ինչ է անում կառավարությունը: Բայց նաեւ այդ տեղեկատվության հրապարակումը, ըստ կառավարության, սպառնում է երկրի անվտանգությանը:

Ճշմարտությունը որոնելը

Լրագրողների մեծ մասը հասկանում է, որ ինքը պետք է ճշմարտությունն ասի: Բայց ի՞նչ է ճշմարտությունը: Մի կողմից դա տեղեկատվության աղբյուրի հայտնածը ճիշտ ներկայացնելն է: Բայց ճշմարտություն որոնողը ավելին պետք է անի: Կարեւոր գործի դեպքում լրագրողը պարտավոր է փորփրել այն՝ հեռացնելու համար այն ծածկոցները, որոնք կարող են թաքցնել ճշմարտությունը:

Մի շենք է այրվել: Զոհվել է մի մարդ: Լրագրողը մեջբերում է հետաքննողների խոսքերը՝ էլեկտրական լարանցման սխալ համակարգ: Հարեւան շենքերի մի մասը ժամանակին նույնպես տուժել է հրդեհներից: Լրագրողը ինչ-որ կապ է տեսնում, ստուգում է արխիվները, հետեւում անշարժ գույքի առք ու վաճառքին, ստուգում ապահովագրվածությունը: Նա հայտնաբերում է, որ հրդեհների մեծ մասը գրանցված է որպես կասկածելի պատճառ ունե-

ցող, որ շենքերը ապահովագրված են եղել մեծ գումարներով եւ պատկանել են տեղական ոստիկաններին:

Նրա հոդվածը բացահայտում է այս կեղտոտ գործը: Որոշ ոստիկաններ հայց են ներկայացնում՝ նրան զրպարտության մեջ մեղադրելով, սակայն դատարանը մերժում է հայցը, երբ պարզում է, որ տեղեկատվությունը ճիշտ է:

Իշխանությանը հակադրվելը

Լրագրողները ծառայում են իրենց ընթերցողներին եւ ունկնդիրներին՝ իշխանություններին վերահսկելով: Նրանք իշխանությունների հետ ընդդիմական հարաբերությունների մեջ են: Իշխանությունը կարող է լինել դեկանը, կորպորացիայի նախագահը, քաղաքագլուխը կամ երկրի նախագահը: Այս երկրի հիմնադիրներն այնպես են արել, որ լրագրողները ազատ լինեն կառավարության միջամտություններից կամ վերահսկումից, որպեսզի մամուլը կարողանա վերահսկել իշխանությանը:

Եթե մենք վերադառնանք այս գլխի սկիզբը, որտեղ մենք քննարկում էինք զրպարտությունը, ապա դուք կարող եք տեսնել դաշնային դատարանների կողմից լրագրողներին լայն ազատություններ շնորհելու ցանկությունը, նույնիսկ պաշտոնյաներին զրպարտող սխալներ անելու ազատությունը: Սալիվանի դատական վճռում Գերագույն դատարանը ասաց, որ մամուլը պետք է ազատ լինի սահմանափակումներից, որպեսզի կարողանա ապահովել «ազատ քաղաքական քննարկումների հնարավորությունը, որպեսզի կառավարությունն արձագանքի մարդկանց կամքին»:

Լրագրողները եւ նրանց օրաթերթերը հակադրվել են ամենաբարձր մակարդակի իշխանություններին, նույնիսկ պաշտոնյաների ասած «ազգային անվտանգության» ապահովումը խախտելու աստիճանի:

Նման հզորություն ստանալով՝ մամուլը ինքը կարող է անվերահսկելի իշխանություն դառնալ: Եթե կառավարությունը չի վերահսկում մամուլը, ապա այդ դեպքում ի՞նչը կարող է պաշտպանել հասարակությանն իր ուզածն անող, անպատասխանատու մամուլից: Շատ քիչ բան: Ահա թե ինչու են կարեւոր նորմերը եւ ուղեցույցները, լինի դա լրագրողի անձնական կարծիքը, թե գրված ու տրված լինի նրան աշխատանքային կանոնների հետ միասին:

Կարեկցություն

Լրագրողները տանել չեն կարող ցանկացած անձի գործողություն, որը վնասում է մարդկանց: Սա մեր անձնական նորմերի երրորդ կետն է: Լրագրողները պաշտպանում են անազնիվ, անօրեն եւ խտրականության զոհերին: Նրանք նման գործունեությունը համարում են հասարակությունը աղտոտող:

Լրագրողները բացահայտել են ֆերմաներում աշխատող գաղթական բանվորների աշխատանքային խղճուկ պայմանները: Նրանք ցույց են տվել հարուստների եւ աղքատների երեխաների կրթությունների միջեւ եղած անհամապատասխանությունը: Լրագրողները գնացել են բանտեր, հոգեբուժարաններ եւ ծերանոցներ՝ բացահայտելու համար անօգնական մարդկանց նկատմամբ սխալ վերաբերմունքը:

Արկանզասի թերթերից մեկի մի լրագրող ցույց տվեց, թե ինչպես են տեղական պաշտոնյաները դավադրություն կազմակերպել՝ աղքատ սեւամորթ ընտանիքի սեփականությունը վերցնելու նպատակով, երբ պաշտոնյաներն իմացել են, որ նահանգը նախատեսում է այդ հողատարածքի համար բարձր գին վճարել, քանի որ այդտեղով պետք է ճանապարհ անցկացվեր:

4-րդ գլխում մենք տեսանք, թե ինչպես Հեյդի Էվանսը բացահայտեց, որ Նյու-Յորքի քաղաքի առողջապահությամբ զբաղվող պաշտոնյաները տեստ են անցկացրել, որը վտանգի է ենթարկել բազմաթիվ կանանց կյանքերը: Էվանսի աշխատանքը խթանվում էր նրա կարեկցությամբ կանանց նկատմամբ՝ հիմնականում աղքատ ազգային փոքրամասնություններին պատկանող, որոնք անուշադրության զոհ էին դարձել:

Ինքնավերահսկում

Վերջին մի քանի խոսքերը անձնական նորմերը մշակելու վերաբերյալ: Իրադարձությունների քննարկման ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում էթիկային՝ արդյոք ճի՞շտ վարվեց «Թայմսը» հրապարակելով այն կնոջ անունը, որը հայց էր ներկայացրել, որ իրեն բռնաբարել են:

Այս քննարկումների ժամանակ շեշտը սովորաբար դրվում է նպատակադրվածության սխալների վրա: Այս շեշտը բավարար չէ որպես էթիկական ժուռնալիստիկայի հիմք ծառայելու համար: Մենք պետք է նաեւ դիտենք բացթողումների խնդիրը: Արդյո՞ք

լրագրողները եւ նրանց խմբագիրները անում են ամեն հնարավորը: Արդյո՞ք նրանք խորանում են մինչեւ համայնքի բուն էությունը: Թե՞ նրանք գնում են ավելի կարճ ու հեշտ ճանապարհով: Ընթերցողները եւ ունկընդիրները չեն իմանա:

Դերասան Ջեյմս Էրլ Ջոնսը մրցանակների արժանացած մի ներկայացման մասին ասում էր, որ.

- Մենք ճիշտ էինք խաղում ութ ներկայացումից ընդամենը չորսը, բայց պրոդյուսերը ասում էր, որ լսարանը միշտ չէ, որ դա գիտի: Իրականում նրանք, հավանաբար, երբեք չեն իմանում: Բայց մենք դա գիտեինք եւ դա էր էականը:

Այս ձգտումը՝ աշխատանքը հնարավորին չափ լավ կատարել, բարոյական անհրաժեշտություն է:

Եվ՛ ուսանողները, եւ՛ պրոֆեսիոնալ լրագրողները պետք է միշտ իրենք իրենց ստուգեն՝ արդյո՞ք այս հոդվածը ասում է մարդկանց այն, ինչ նրանք պետք է իմանան տվյալ իրադարձության մասին: Չպե՞տք է արդյոք, ես մի տեղ էլ զանգահարեմ, մեկ փաստաթուղթ եւս ստուգեմ: Արդյո՞ք սա է ճիշտ բառը, թե՞ ես մեկ այլ բառ պիտի գտնեմ, որը իրադրությունը ավելի ճիշտ կնկարագրի: Արդյո՞ք ես ազնվորեն եմ գրել հոդվածը եւ ճիշտ եմ այն կառուցել, թե՞ ես շեշտը դրել եմ մի երկրորդական թեմայի վրա, հոդվածն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով: Արդյո՞ք ես լռել եմ, երբ գիտակցությունը եւ պարտքը պահանջում էին, որ ես խոսեմ:

Անձնական էթիկայի նորմերի ուղեցույցներ

Ահա եւս մի քանի հավելյալ կետեր սկսնակ լրագրողների համար՝ անձնական էթիկայի նորմերում ընդգրկելու համար.

1. Սխալներն ընդունելու ցանկություն,

2. Փաստերին հետեւելու նպատակաուղղվածություն, նույնիսկ երբ դրանք տանում են այն ուղղությամբ, որը ձեզ դուր չի գալիս կամ որի հետ դուք համաձայն չեք,

3. Որպես լրագրող աճելու նպատակամղվածություն, որպեսզի ավելի լավ ծառայել նրանց, ում համար լրագրողները աչքեր ու ականջներ են,

4. Գովասանքին, փողի հրապուրանքին, հռչակին եւ իշխանությանը դիմադրելը, եթե սրանցից որեւէ մեկը խանգարում է ճշմարտությունը գրելուն,

5. Հոգեհարազատությունը նրանց հետ, ովքեր տառապում են,

6. Հասարակությունը բոլոր մարդկանց՝ դպրոցականների, հիվանդների, աղքատների, գործազուրկների, հույսը կորցրած տարիքավոր մարդկանց, խտրականություն զոհերի համար ավելի լավը դարձնելու ցանկություն:

Ծպտվելը եւ կեցվածք ընդունելը

Այս գլխի սկզբում մենք նշեցինք մի լրագրողի, որը ուրիշի անվան տակ մտել էր Կու-Կլուքս-Կլանի մեջ՝ նրա գործունեությունը բացահայտելու նպատակով: Ծպտվելը եւ կեցվածք ընդունելը հին եւ հաճախ օգտագործվող միջոցներ են հետաքննություններ վարող լրագրողների համար: «Ուոլ- Սթրիթ Ջորնալի» մի լրագրող աշխատանքի էր անցել Տեխասի մի գործարանում եւ բացահայտել էր բանվորների նկատմամբ ղեկավարության դաժան վերաբերմունքը եւ նրանց հակաարհիմիութենական կանխակալությունը: «Վաշինգտոն փոսթի» մի լրագրող հոգեկան հիվանդ էր ձեւացել, եւ նրան ընդունել էին մի հոգեբուժարան: Նա նկարագրում էր հիվանդների նկատմամբ ոչ համազոր վերաբերմունքը:

Վերջերս օրաթերթերը հարցականի տակ են դնում ընդհատակյա նման գործունեությունը: Նրանք իրենց ազատ չեն զգում քննադատելու ուրիշներին բիզնեսում եւ հասարակական կյանքում անլեգալ գործողությունների համար, եթե իրենք են նման տակտիկա օգտագործում նորություններ հավաքելու համար:

Լրտեսներին եւ ինֆորմատորներին հասարակությունը չի հարգում: Բայց օրաթերթը, որոնց լրագրողները օգտագործում են ծպտվելը եւ կեցվածք ընդունելը, փաստորեն լրտեսում են եւ ներկայացնում են նյութը հասարակությանը: Դա թվում է թե զուրկ է էթիկայից, եւ այդպես էլ կա: Բայց դա որոշ հանգամանքներում կարելի է արդարացնել:

Լրագրողը, որը փորձում է իր համար ձեւավորել անձնական էթիկայի նորմեր, գուցե ցանկություն ունենա հաշվի առնել հետեւյալը՝ եթե ստեղծվում են ծայրահեղ պայմաններ, երբ որեւէ անձի կամ կազմակերպության կողմից վտանգի է ենթարկվում մարդկային կյանքը, լրագրողը կարող է այնպիսի տակտիկա կամ միջոց կիրառել, որը այլ պայմաններում կորակվեր որպես ոչ էթիկական:

Լրագրողը հասարակության առջեւ պարտականություն ունի՝ ծառայելու որպես նրա պահապան շունը եւ երբեմն կարիք է զգացվում արագ գրված հոդվածի՝ նախազգուշացնող հաչոցի: Այլ պայմաններում գուցե կարիք զգացվի ավելի մեծ ուշադրու-

թյուն դարձնել իրավիճակին: Մենք պատժում ենք այն շանը, որն անտեղի կծում է, բայց մենք պարգեւատրում ենք այն պահապան շանը, որը բռնում է զինված մարդու ձեռքը կամ կառչում է գողի կոկորդից:

Կու-Կլուքս-Կլանի անդամները բռնարարքներ էին իրականացրել ազգային փոքրամասնությունների դեմ, եւ նրա որոշ անդամներ ազատազրկման դատապարտվեցին սպանության համար: Այն լրագրողը, որը միացել էր Կլանին, օգտագործելով ուրիշ անուն, կարող է դիտվել որպես մարդ, որը հասարակական ծառայություն էր կատարում:

Երբ ընդհատակյա մեթոդներ են օգտագործվում, ապա դրանց մասին պետք է տեղյակ պահել ընթերցողին կամ ունկնդրին: Եթե լրագրողը ամաչում է գրել կամ հեռարձակել այն մեթոդների նկարագրությունները, որոնք նա օգտագործել է, ապա նա չպետք է դրանք օգտագործի:

Ճաշակ

Երբեմն պատահում է, որ կարդացած նյութը ձեզ անհանգստություն է պատճառում եւ վրդովմունք է առաջացնում: Հանդիպում են նյութեր, որոնք որոշ մարդիկ վիրավորական են համարում՝ մի բառ կամ մի քանի լուսանկարներ, որոնց ճաշակը վիճելի է:

Մարդկանց մեծամասնությանն անհանգստացնում է անպարկեշտ լեզուն եւ մահվան բացարձակ ներկայացումը: Այդ դեպքում ինչո՞ւ են որոշ թերթեր մեջբերումներ անելիս տպագրում հայհոյանքներ, իսկ մյուսները այդ բառերի տեղը բազմակետեր դնում: Եվ ինչո՞ւ Լիբերիայի նախկին պաշտոնյաների մահապատժի նկարները այնքան մեծ հավանության արժանացան Պուլիտցերյան մրցանակը շնորհողների կողմից, որ նրանք լուսանկարչին շնորհեցին մրցանակը, մինչդեռ մյուսները այդ լուսանկարները դիտելիս սարսափած շրջվում են՝ որակելով դրանց հրապարակումը որպես ժուռնալիստիկայի վատ ճաշակի եւ սենսացիոնիզմի օրինակ:

Որովհետեւ նման հարցերը ավելի հեշտ է բարձրացնել, քան դրանց պատասխանել: Շատ մարդիկ, եւ նույնիսկ որոշ խմբագիրներ հայտարարել են, որ «ոչ մի լկտի, անվայել կամ անպարկեշտ բան չպետք է տպագրվի կամ հեռարձակվի»:

Որոշ թերթերի գովազդային բաժիններ անհանգստացած էին, որ Ջեյմս Բոնդի մասին ֆիլմի գովազդը կարող է զայրացնել ընթերցողին: Գովազդում մի կիսամերկ կին էր պատկերված

հետեւի կողմից՝ արբալետը ձեռքին: Որոշ թերթեր կնոջ լուսանկարի վրա կիսավարտիք նկարեցին, իսկ մյուսները պարզապես նրա հետույքը ծածկեցին տեքստով:

Երկակի ստանդարտներ

Եթե նախատեսված է, որ նորությունը հասարակությանը պետք է տա իրականության պատկերը, ապա «ես ոչինչ չեմ տեսել» մոտեցումը զրկում է հասարակությանը կարեւոր տեղեկատվությունից: Դա նաեւ կեղծավորություն է: Որոշ ընթերցողներ եւ ունկնդիրներ (ինչպես նաեւ խմբագիրներ) հանդիմանում են ասեկոսեներ տպագրող լրագրողներին եւ սարսափում են այն լուսանկարից, որտեղ պատկերված է փողոցում պառկած ավտովթարի զոհ դարձած երեխան, բայց միեւնույն ժամանակ նրանք հավանություն են տալիս գեղարվեստական կինոնկարներին եւ հեռուստասերիալներին, որոնցում ամեն օր ցուցադրվում են սպանություններ, մերկ մարմիններ, արյունապղծություն եւ ամուսնական դավաճանություն:

Շատ հեռուստադիտողներ անում են իրենց տնային գործերը եւ տնային աշխատանքը՝ մեկ աչքը այս ամենօրյա ֆիլմերի վրա ուղղած: Քոլեջների ուսանողները դասերը այնպես են պլանավորում, որ դրանք չխանգարեն իրենց սիրելի սերիալները դիտելուն: Իսկ նրանք, ովքեր գնում են հանգստանալու, պահանջում են, որ իրենց քոթեջներում գունավոր հեռուստացույցներ դրված լինեն, որպեսզի իրենք կարողանան դիտել իրենց սիրելի հեռուստասերիալները:

Իհարկե կան բառեր, թեմաներ եւ լուսանկարներ, որոնք չպետք է հրապարակվեն: Բայց ինչպե՞ս որոշել, թե որոնք են դրանք: Արդյո՞ք պետք է հրաժարվել այնպիսի նյութեր օգտագործելուց, որոնք տհաճություն են պատճառում ինչ-որ մեկին, նույնիսկ եթե դրանք կարեւոր են իրադարձության կամ իրավիճակի ամբողջական նկարագրության համար: Բենջամին Ֆրանկլինը ասել է.

-Եթե բոլոր գրամեքենաները այնպես լինեին պատրաստված, որ չտպեին այնպիսի բաներ, որոնք կարող են տհաճություն պատճառել որեւէ մեկին, ապա ընդհանրապես շատ քիչ բան կլիներ տպված:

Մեր ժամանակներում նորության արժանի հոդվածների մեծ մասը պարունակում է տհաճ նյութեր: Հանցագործությունը մեր

հասարակության հիմնախնդիրներից է, եւ հանցագործությունների մեծ մասը, անկասկած, դաժան է: Արդյո՞ք մենք չպետք է հրապարակենք դաժան բռնաբարության, 5 տարեկան երեխայի գլխատման կամ սուպերմարկետի տիրոջ ականջի մեջ ասեղ մտցնող ավազակախմբի մասին:

Ինչեւէ, մենք պետք է ունենանք ղեկավար սկզբունքներ, որոնց համապատասխան էլ պետք է օգտագործենք առօրեական լեզուն, տհաճ տպավորություն թողնող նյութը եւ սարսափելի լուսանկարները:

Առօրեական լեզուն

Մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ սեքսը եւ մարմնի բնական ֆունկցիաները նկարագրող անվայել եւ անպարկեշտ բառերը տհաճ են: Նման լեզվի նկատմամբ թշանամական վերաբերմունքի պատճառը ցանկությունն է թույլ չտալ, որ այն դառնա առօրեական: Ճաշակը՝ ընդունելի լեզվի եւ վարքագծի մասին բազմաթիվ արժեքավոր դատողությունների հանրագումարն է: Եթե երիտասարդները հաճախ են լսում այդ լեզուն, ապա այն դառնում է բառապաշարի մասը եւ, հավանաբար, ազդեցություն կունենա նրանց վարքագծի վրա: Այսպիսով, մեծահասակները, որոնք պատասխանատու են իրենց երեխաների համար արժեքներ հաստատելու գործում, ձգտում են հեռու պահել նրանց անվայել կամ անպարկեշտ բառերից:

Մյուս կողմից, այս լեզուն ամենօրյա կյանքի մի մասն է: Ինչպե՞ս են թերթերը, ռադիոն եւ հեռուստատեսությունը քայլում այս ծայրահեղությունների միջեւ եղած բարակ գծի վրայով առանց այս կամ այն կողմ շեղվելու, առանց տհաճություն պատճառելու մարդկանց կամ ընթերցողին եւ առանց ունկնդիրներին իրականությունից զրկելու:

Լսարան եւ կարեւորություն

Կարճ կարելի է ասել, որ անպարկեշտ եւ անվայել բառերը կարելի է օգտագործել այն դեպքում, երբ դրանք անհրաժեշտ են իրադրությունը ճիշտ նկարագրելու համար, եւ եթե այն լսարանի բնույթը, ում համար նախատեսված է տվյալ նյութը, այնպիսին է, որ այդ բառը չի համարվի վիրավորական կամ տհաճ: Այս արտահայտությունները ընդգծված են, որովհետեւ դրանք կարեւոր ու-

ղեցույցներ են այն հարցում, թե երբ է կարելի նման լեզու օգտագործել:

Քաղաքականություն

Որոշ բառեր տհաճ են միայն որոշակի համատեքստում: Ի՞նչ եք կարծում հետեւյալ վերնագրի եւ առաջնորդողի մասին.

Մարի Օսմոնդը ասում է, թե ինքը կույս է

Ասելով՝ «Իմ մեջ այնքան ցանկասիրություն կա, որքան ցանկացած ուրիշ կնոջ մեջ»՝ Մարի Օսմոնդը հայտարարում է, թե ինքը կույս է եւ պահպանողական հայացքների տեր:

Հայտնի անձնավորությունները բարձրացնում են իրենց անձնական կյանքի ծածկոցները, որպեսզի լրագրողները եւ հասարակությունը կարողանան տեսնել այն: Բայց դա չի նշանակում, որ ամեն մի տեսարան ամեն մի սենյակում պետք է նկարագրվի: Օսմոնդը չի առարկում իր կուսության մասին խոսակցությունների վերաբերյալ, բայց ի՞նչ նպատակների է ծառայում նրա բացահայտումը թերթի համար: Չէ՞ որ այն չի ասում ոչ մի կարեւոր բան, որ մենք կուզենանք իմանալ:

Ուրեմն ո՞րն է նպատակը: Մարի Օսմոնդի կուսությունն օգտագործվում է ընթերցողին գրգռելու համար: Այս դեպքում օրաթերթում տպագրված նման նյութերը իսկապես մրցակցում են ամսագրերի, հեռուստասերիալների եւ գեղարվեստական ֆիլմերի հետ:

Եթե հրատարակիչը ցանկանում է փոխել նորությունների քաղաքականությունն այս ուղղությամբ, ապա խմբագիրները եւ լրագրողները պետք է հետեւեն այս քաղաքականությանը:

Ահա եւ մենք ունենք երրորդ սկզբունքը, որոշելու համար, թե ինչ է պետք օգտագործել. հրատարակչության կամ կայանի քաղաքականությունը:

Սկզբունքները փոխելը

Մինչ այժմ մենք նկատի ունեինք, որ բոլորի կարծիքները տհաճության վերաբերյալ համընկնում են: Բայց այն, ինչ մեկի համար անճաշակ է, մեկ ուրիշը կարող է ընդունելի համարել: Ռեփ-երգչի

եւ քահանայի կարծիքները անպարկեշտության եւ անվայելության ձեւակերպումների վերաբերյալ հավանաբար չեն համընկնի:

Իրականությունն այն է, որ «ճաշակին ընկեր չկա»: Եվ երբեք չի լինի: Ոմանք սիրում են դոնդող, մյուսները այն համարում են գարշելի: Ոմանք ողջ գիշեր կարող են անձրեւի տակ հերթ կանգնել ֆուտբոլի կամ Մադոննայի համերգի տոմս գնելու համար, մինչդեռ մյուսները դա համարում են խելագարություն: Ժուռնալիստական ճաշակի հարցում նույնպես միակարծություն չկա: Ինչեւէ, մենք կարող ենք ասել, որ կարծիքները փոփոխվում են, որ ընդհանրապես այժմ ավելի մեծ հանդուրժողականություն կա այն բաների նկատմամբ, որոնք ժամանակին համարվում էին անվայելուչ եւ անպարկեշտ:

Մարկ Տվենը եւ բարոյականությունը

1905թ.-ին Բրուկլինի հասարակական գրադարանը որոշեց երեխաների ընթերցասրահից դուրս հանել Մարկ Տվենի «Թոմ Սոյերի եւ Հեքլբերի Ֆինի արկածները» գիրքը: Գրադարանավարները որոշել էին, որ գիրքը երեխաների համար վատ օրինակ է ծառայում: Հասարակության բարոյականության պահապանները հաճախ պնդում են, որ իրենց գործողությունները նախատեսված են երեխաներին ապականվելուց պաշտպանելու համար:

Երբ Մարկ Տվենը իմացավ գրադարանավարների այս քայլի մասին, նա ասաց.

- «Թոմ Սոյերը եւ Հեք Ֆինը» ես գրել եմ բացարձակապես մեծահասակների համար եւ ինձ միշտ մտահոգում է, երբ ես տեսնում եմ, որ փոքր աղջիկներին եւ տղաներին թույլ են տալիս կարդալ այն: Եթե միտքը աղտոտվում է փոքրուց, ապա այն հետագայում հնարավոր չի լինի մաքրել: Ես դա գիտեմ իմ սեփական փորձից, եւ մինչեւ այժմ ես անզուսպ դառնություն եմ տածում իմ երիտասարդ կյանքի պահապանների նկատմամբ, որոնք ոչ միայն թույլ էին տալիս, այլ նաեւ ստիպում էին ինձ Ավետարան կարդալ մինչեւ իմ 15 տարեկան դառնալը: Նման բանից հետո ոչ մեկը չի կարող անարատ մնալ...»:

Մարկ Տվենը ծաղրում էր հասարակական բարոյականության մոլեռանդ պահապաններին: «Հեքլբերի Ֆինը» եւ Ջ. Դ. Սելինջերի, Կուրտ Վոնեգուտի եւ այլոց գրքերը անընդհատ հարձակումների են երթարկվում ֆանատիկոսների կողմից: Նման գործերը տարվել են դատարան, որը որոշել է, որ գիրքը արգելելը հակասահմանադրական է:

Տհաճ թեմա

Այն թեման, որ ժամանակին համարվում էր անհարմար ընթերցողին ներկայացնելու համար, այժմ դարձել է ամենօրյա կարդալու նյութ: Նույնիսկ ամենապահպանողական թերթերը տպագրում են դատավարությունների եւ հանցագործությունների մասին տհաճ մանրամասները: «Նյու-Յորք Թայմսը», որն իր հիմնադրման ժամանակ խոստացել էր, որ «չի կեղտոտի ճաշասեղանը», տպագրում է դեռահասների մարմնավաճառության եւ աստղերի նախկին տարօրինակ կյանքի մասին հոդվածներ:

Երկու վեց տարեկան եւ մեկ ութ տարեկան տղաների կողմից յոթ տարեկան աղջնակի բռնաբարության մասին հոդվածը լուսաբանվել իր «Ասոշիեյթիդ Փրես»-ի կողմից եւ տպագրվել բազմաթիվ օրաթերթերում: Սա մի սարսափելի պատմություն է եւ, բնականաբար, տհաճ բոլորի համար: Ուրեմն ինչո՞ւ էր այն տպագրվել: Այն տպագրած օրաթերթերի մեծամասնությունը դա արել էր ոչ իրենց թերթը վաճառելու նպատակով: Նրանք ավելի շուտ փորձել էին մարդկանց ուշադրությունը հրավիրել այն սարսափելի բաների վրա, որոնք կատարվում են հասարակությունում, ուր նրանք ապրում են եւ փորձել էին բոլորին հասկացնել, որ ինչ-որ բան իսկապես սխալ է, եթե երեխաները կարող են այդպես վարվել:

Սա բերում է մեր ուշադրությանը արժանի մեկ այլ սկզբունքի վրա՝ նյութի նախազգուշացնող բնույթը: Այն նյութը, որը նախազգուշացնում է մեզ կամ հետ է պահում որոշակի քայլերից, կարող է օգտագործվել, եթե նույնիսկ այն անճաշակ է: Իսկապես, տհաճ նյութի շոկային արժեքն է, որ ստիպում է մեզ հետեւություններ անել:

Սեքս արդյունաբերություն

Երբ «Քոմերշլ Ափիալ»-ի լրագրող Չարլզ Բերնսենին հանձնարարվեց հոդվածների մի շարք գրել Մեմֆիսի առեւտրային սեքս արդյունաբերության մասին, նա ստիպված էր ականատես լինել, թե ինչ է վաճառվում այդ ասպարեզում: Բերնսենը ստիպված էր գնալ սեքս շոուները դիտելու:

Բերնսենը եւ թերթը ընկել էին երկընտրանքի մեջ: Այս թեման կարող էր վանել շատ ընթերցողների, բայց նյութը պետք էր պատմել առեւտրային սեքսի կարեւորության պատճառով: Բերն-

սենը պարզել էր, որ այս բիզնեսի մեծ մասը վերահսկվում էր կազմակերպված հանցագործության կողմից, որի գործունեությունը ընդգրկում էր «ծեծը, սպանությունները եւ պայթեցումները»: Այն նաեւ մեծ բիզնես էր Մեմֆիսում՝ տարեկան մոտ 10 մլն. դոլարի շրջանառությամբ:

- Նման մեծության բիզնեսի մասին պետք է գրել, - ասում էր Բերնսենը,- բայց դա չի նշանակում, որ պատշաճությունը պետք է դուրս շպրտել պատուհանից: Իմաստ չունի հոդված գրել, եթե ձեր ընթերցողները պիտի նարնջի հյութ խմեն եւ հրաժարվեն այն կարդալուց: Բայց սեռական գրգռվածության բիզնեսը կարելի է ամբողջական եւ ճշտորեն լուսաբանել առանց ընթերցողին գրգռելու:

Այս հոդվածաշարի համար ընդունվել էր հետեւյալ քաղաքականությունը.

- Եթե կարեւոր էր, որ ընթերցողը հասկանար, թե ինչպես է աշխատում սեքս արդյունաբերության որեւէ մասը, մենք նկարագրում կամ բացատրում էինք դա հնարավորին չափ մանրամասն: Եթե դա ավելորդ էր, մենք խուսափում էինք անկեղծ մանրամասներից, որոնք կարող էին տհաճ լինել:

Սա հիշեցնում է լեզվի մասին մեր սկզբունքներից մեկը՝ պատշաճությունը վիճելի նյութի, ինչպես նաեւ լեզվի, չափանիշ է:

Համայնքի բացասական վերաբերմունք

Բայց ո՞րն է պատշաճ նյութը: Այս հարցը ծագեց այն պատմության հետ, որին մենք անդրադարձել էինք այս գլխի սկզբում՝ դահուկավազքի օլիմպիական չեմպիոն եւ Քլիվլենդի լեհ-ամերիկյան համայնքի հայտնի անդամ Ստելլա Ուոլշի սպանությունը:

Այն բանից հետո, երբ երկու հեռուստակայաններ հաղորդեցին դատաքննիչի այն հայտնագործությունը, որ դիահերձումը պարզել է, թե 69-ամյա Ուոլշի մարմինը տղամարդու է, եւ ոչ թե կնոջ, համայնքը զայրացել էր եւ թշնամական դիրք ընդունել: Մարդիկ զանգահարում եւ գրում էին՝ կայանի բացահայտման դեմ բողոքելու համար:

Միակ տեղական հեռուստակայանը, որ չէր նշել դիահերձման արդյունքները, «WIKW-TV»-ն էր, որի նորությունների տնօրենը ասաց, որ չնայած կայանը գիտեր պատմության սեռական ուղղվածության մասին, բայց իրենք դա չէին նշել, որովհետեւ «չէին

կարծում, որ դա պատշաճ էր: Դա իրականում հանցագործության եւ բռնության մասին նյութ էր»:

Քլիվլենդի երկու օրաթերթը համաձայնեցին այս կարծիքի հետ: «Փլեյն Դիլեր»-ի խմբագիրն ավելացրեց, որ թերթը «կարծում է, թե մահվան մեջ պետք է արժանապատվություն լինի»: Այս առարկություններին «WIKW-TV»-ի նորությունների տնօրենի օգնականը պատասխանեց, որ դատաքննիչի հայտնագործությունն էր, որ պետք է մատուցվեր որպես նորություն: Ամբողջ պատմությունը լուսաբանվեց «Ֆիլադելֆիա Ինքուայերեր», «Բոստոն Գլոբ» եւ «Նյու Յորք Թայմս» օրաթերթերի կողմից: Միայն դրանից հետո Քլիվլենդի թերթերը գրեցին գործի մանրամասների մասին:

Անտարակույս, դատաքննիչի հայտնագործությունը կարեւոր էր՝ այն փաստը, որ կանանց ոսկե օլիմպիական մեդալ նվաճողը իրականում տղամարդ էր, արժանի էր լուսաբանվելու: Տեղական թերթերն ու «WIKW-TV»-ն չափազանց նուրբ էին վերաբերվել իրենց լսարանին՝ լեհ-ամերիկյան համայնքին: Նման երկակի դրության մեջ լրագրողը սովորաբար որոշում է լուսաբանել իրադարձությունը, քանի որ ի վերջո նրա աշխատանքը ճշմարտությունն ասելն է, ինչքան էլ այն տհաճ լինի:

Վիճելի լուսանկարներ

Լուսանկարը պարզ էր եւ ողբերգական՝ մի երեխայի մարմին, կիսով չափ վերմակով ծածկված, ընկած էր փողոցում, որտեղ նրան խփել, սպանել էր մի մեքենա:

Հենց որ ընթերցողները ստացան թերթը, սկսվեցին բողոքները: Զանգահարողները, այնուհետեւ նամակ գրողները դժգոհում էին, որ լուսանկարը տպագրելը անպատասխանատու քայլ էր, որ դա սենսացիոն ժուռնալիստիկայի երեւույթ էր: «Կոլումբոս Սիթիզեն-Ջոուրնել»-ի խմբագիր Ռիչարդ Ռ. Քեմբելը ասաց, որ «ամենատարածված մեղադրանքն այն էր, թե լուսանկարը անճաշակ է»:

- Մի ընթերցող մեզ քարսիրտ ու անճաշակ անվանեց եւ խորհուրդ տվեց չմոռանալ խոհեմության եւ կարեկցության մասին,- ասաց Քեմբելը:

- Դուք նվաճեցիք առաջին մրցանակը ժուռնալիստիկայի ամենավատ ճաշակի գծով: Այս նվաճման համար ձեր լուսանկարիչը եւ խմբագիրը, որը հարմար էր գտել այս լուսանկարը տպագրել, արժանացել են անվճար ուղեւորության «Սենսացիաների Քաղաք»,- գրել էր մեկ այլ ընթերցող:

Փաստագրական ակնարկ

Քեմբելն ասաց, որ լուսանկարը տպագրելու որոշումը ինքն էր կայացրել: Ըստ նրա պատճառները հետեւյալն էին.

Չկար ավելի ակնառու միջոց մայրերին, հայրերին եւ երեխաներին, վարորդներին եւ հետիոտներին ցույց տալու անզգույշ կերպով փողոց դուրս գալու վտանգը: Ինչպես ասում է ասացվածքում՝ մեկ նկարը 1000 բառ արժե: Սա հենց այդպիսի նկար էր:

Երկրորդը՝ դա պատմությունը գրելու մեր դերն էր:

Մի մարդ, որը գնահատել էր լուսանկարը տպագրելու մեր նկատառումները, ասաց, որ ինքը ցույց է տվել այն իր փոքրիկ տղաներին՝ ամեն մեկին առանձին, եւ երկուսին էլ բացատրել է, թե ինչ է պատահել այդ փոքրիկ աղջկան եւ ինչու: Ահա թե ինչ էինք մենք ակնկալում լուսանկարը տպագրելիս:

Եթե մենք անդրադառնանք վիճելի ճաշակ ունեցող նյութը տպագրելու ակզբունքներին, ապա կարող ենք տեսնել, որ նման լուսանկարները տպագրելու պատճառներից մեկը այն հույսն է, որ դրանք կծառայեն որպես նախազգուշացում, հետ կպահեն որոշակի գործողություններ կատարելուց: Լուսանկարի սարսափելի բնույթը ավելի լավ, քան ցանկացած բառերով արտահայտած նախազգուշացում, կարող է արտահայտել փողոցում խաղալու կամ փողոց վազելու վտանգները:

Քեմբելը նաեւ նշում է այն փաստը, որ իրադարձությունը տեղական պատմության մի մասն էր: Պատմությունը արտահայտելու ունակությունը լուսանկարները տպագրելու մեկ այլ սկզբունք է: Իհարկե ոչ բոլոր պատահարներն են լուսաբանվում: Մամուլը կամ հեռարձակող կայանը նույնպիսի ընտրություն են կատարում, ինչպես պատմագիրները: Խմբագիրը որոշեց օգտագործել այս լուսանկարը, որովհետեւ այն ամեն մի համայնքի գրաֆիկապես պատկերված պատմության մի մասն է՝ ավտովթարի պատճառով մահվան սարսափելի ժամհարությունը:

- Մենք ընթերցողներին տվեցինք Կոլումբուսի երեքշաբթի օրվա կյանքի մի կտորը, որը նրանք չէին ցանկանում տեսնել,- ասում է մի լրագրող բողոքների մասին, - Հենկ Ռիչարդը վերցրեց այդ զոհված աղջնակի պատկերը եւ շպրտեց այն մեր երեսին, որպեսզի մենք նույնպես նայենք նրան: Հենկը ստիպեց մեզ ցավել, որ աղջնակը մահացել էր, երբ նա չպետք է մահանար, եւ այնպիսի մի տեղում, որտեղ երեխաները չպետք է մահանան: Նա ստիպեց մեզ տառապել:

Այս պատճառների մի մասը կարող են ասվել նաեւ ընթերցողներին տհաճություն պատճառող այլ լուսանկարների վերաբերյալ, ինչպես ասենք Լարրի Ս. Փրայսի՝ Լիբիայի ծովափում կատարված մահապատժի լուսանկարները: Այս լուսանկարները մեզ իսկապես ցույց են տալիս պատմությունը՝ այն իրականանալու պահին, եւ նրանք ցույց են տալիս կյանքի մութ եւ մահաբեր կողմը:

Նորության արժեքը

Մարզական լուսանկարները սովորաբար ճաշակի խնդիրներ չեն առաջացնում: Բայց Հարրի Բաումերտի բասկետբոլի զայրացած մարզիչի լուսանկարը խնդիրներ առաջացրեց «Դե Մոյն Ռեջիստր» թերթի խմբագիրների համար: Լուսանկարում պատկերված էր Այովայի Նահանգային Համալսարանի թիմի մարզիչ Ջոնի Օրը, որը դատավորին անպարկեշտ ժեստեր էր ցուցադրում: Լուսանկարի անունը դրեցին «մատով լուսանկար»:

Չնայած թերթի խմբագիրը թույլատրեց այն տպագրել, սպորտային խմբագիրը հրաժարվեց դա անելուց:

- Չնայած այն լի էր դրամատիզմով, բայց լուսանկարը անկասկած անպարկեշտ էր: Ես չէի համարում, թե լուսանկարն այդքան նորության արժեք ունի, որ հանուն դրա մենք դիմենք մեր ընթերցողների մի մասին վանելու ռիսկին,- եզրակացնում էր սպորտային խմբագիրը:

«Ռեջիստրի» խմբագրի օգնականը որոշեց երկրի խմբագիրների շրջանում հարցում անցկացնել, թե կտպագրեի՞ն արդյոք նրանք այս լուսանկարը թե ոչ: Արդյունքները հետեւյալն էին՝ 129 հոգի ասաց «ոչ», 31 հոգի ասաց «այո» եւ 61 հոգի ասաց «գուցե»:

«Ոչ» ասողներից 32-ը ասացին, որ կտպագրեին նախկին փոխնախագահ Նելսոն Ռոքֆելլերի լուսանկարը, ուր նա նույն ժեստն էր անում ուսանողներին, որոնք անընդհատ ընդհատում էին նրա ելույթը: «Ասոշիեյթիդ Փրես»-ի լուսանկարների նորությունների բաժինը տպագրեց Ռոքֆելլերի լուսանկարը, բայց չտպագրեց մարզիչի լուսանկարը: Ինչու՞:

Ռոքֆելլերը հայտնի մարդ էր, նրա գործունեությունը լուսաբանվում էր մամուլում:

- Մարզիչը, - ասում էր Հալ Բյուելը՝ «Ասոշիեյթիդ փրես»-ի լուսանկարների նորությունների բաժնի գլխավոր տնօրենի օգնականը, - դժվար թե այդ դասին պատկաներ:

- Անհայտ մի մարդու լուսանկարը, որը մեկ ուրիշ անհայտ մարդու ձեռքով ժեստ է անում, իրենից ոչինչ չի ներկայացնում: Այնպես որ մենք չենք տպագրի այն՝ հիմնականում այն պատճառով, որ այն նորության արժեքի պակասություն ունի, - ասում է Բյուելը:

Լուսանկարն օգտագործելու մեր վերջին սկզբունքը նորության արժեքն է:

Ամփոփում

Ահա որոշ սկզբունքներ վիճելի լեզվի, նյութի եւ լուսանկարների համար:

1. Նյութը պետք է կարեւոր լինի ներկայացվող պատմության համար՝ այսինքն առանց նյութի հնարավոր չի լինի գալ եզրահանգման կամ եզրահանգումը համոզիչ չի լինի:

2. Պետք է հաշվի առնվի լսարանը՝ եթե ընթերցողների կամ ունկնդիրների մեծամասնությունը տհաճություն է զգալու, ապա նյութը չպետք է օգտագործվի:

3. Եթե նյութը ծառայում է որպես նախազգուշացում, ապա այն կարող է օգտագործվել՝ հաշվի չառնելով նրա տհաճ բնույթը:

4. Հանցագործությունների, սեռական ակտերի եւ այլ վրդովվեցուցիչ գործողությունների մանրամասները չպետք է օգտագործվեն, եթե չկա բացարձակ անհրաժեշտություն:

5. Եթե իրադարձությունը պատմական կարեւորություն ունի եւ լուսաբանվելու իրավիճակում գտնվող հայտնի մարդու մասին է, ապա այն պետք է օգտագործվի:

Մելվին Մենչեր

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Melvin Mencher

BASIC MEDIA WRITING

Ծավալը՝ տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500

Տպագրվել է